

ԴՈՒ ԿԱՐՈՂ ԵՍ ՀԱՍԿԱՆԱԼ ԱՍՏՎԱԾԱԾՈՒՆՉԸ

**Նոր Ուխտի Գերազանցությունը.
ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻՆ**

ԲՈՒ ԱԹԼԻ

ՀԵՐՄԵՆԵՎՏԻԿԱՅԻ ԴԱՍԱԽՈՍ

(ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ)

ՍԵՐՏՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇԱՐՔ

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ, ՀԱՏՈՐ 10

ԱՍՏՎԱԾԱԾՆՉՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՍԵՐ, ՄԱՐՇԱԼ, ՏԵԽԱՍ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Այս մեկնաբանության գրքում կիրառվող հապավումները.....	1
Հեղինակի խոսքը. Ինչպես կարող է ձեզ օգնել այս մեկնաբանությունը.....	3
Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց. վստահելի ճշմարտության անձնական ուսումնասիրություն.....	5
Մեկնաբանություն	
Երբայեցիների ներածություն.....	2
Երբայեցիների 1.....	17
Երբայեցիների 2.....	32
Երբայեցիների 3.....	50
Երբայեցիների 4.....	68
Երբայեցիների 5.....	77
Երբայեցիների 6.....	83
Երբայեցիների 7.....	94
Երբայեցիների 8.....	104
Երբայեցիների 9.....	110
Երբայեցիների 10.....	124
Երբայեցիների 11.....	146
Երբայեցիների 12.....	157
Երբայեցիների 13.....	170
Հավելված Մեկ. Հունարեն լեզվի քերականական կառուցվածքի համառոտ սահմանումները.....	184
Հավելված Երկու. Տեքստային քննադատություն.....	193
Հավելված Երեք. Բացատրական բառարան.....	196
Հավելված Չորս. Վարդապետական սկզբունքներ.....	205

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Այս և գալիք դարաշրջանները.....	19
Լուսավորում.....	23
Անդրանիկ.....	24
Հավիտյան (հունարեն դարձվածքներ).....	26
Արդարություն.....	26
Օծություն.....	29
Փրկություն (հունարեն բայի ժամանակները).....	30
Երաշխիք.....	34
Աստվածության անունները.....	36
ՅԱՀՎԵԻ հավիտենական փրկության ծրագիրը.....	40
Հեղինակ՝ Չորավար.....	42
ՆԿ սրբությունը՝ սրբացում.....	42
Եկեղեցի (<i>ekklesia</i>).....	43
Անվավեր դարձնել.....	45
Սատանա.....	46
Հիսուսը որպես Քահանայապետ.....	47
Փորձել բառի հունարեն տերմինները և դրանց նշանակությունները.....	48
Կանչված.....	51
Խոստովանություն.....	52
Հույս.....	54
Երրորդություն.....	55
Սիրտ.....	56
Օր.....	57
Տերմիններ Աստծո հայտնության համար.....	60
Աստված նկարագրված որպես մարդ.....	60
Ուխտադրժություն.....	62
Քրիստոնեական վստահություն.....	65
Սկիզբ (<i>archē</i>).....	66
Երկինքները և Երրորդ Երկինքը.....	74
Հարատևության կարիքը.....	75
Հավիտենական (<i>aiōnios</i>).....	86
Նորոգվել.....	88
Սուրբեր.....	90
Հավատացյալի ժառանգություն.....	91
Ավարտ կամ իրականացում.....	97
Ամենդ, անարատ, անհանցանք, առանց նախատիքի.....	100
Ուխտ.....	107
Ուխտի Տապանակ.....	112
Փրկագին / փրկագնել.....	118
Համարձակություն.....	130
Կրակ.....	135
Աստծո Որդի.....	136
Հարատևություն.....	139
Հավատալը, վստահությունը, հավատքը և հավատարմությունը ՀԿ-ում.....	141
Երկու «քաղաքները» Եսայի գրքում.....	151
Ապաշխարությունը ՀԿ-ում.....	165
Աստծո Թագավորությունը.....	168
Հաղորդակցություն (<i>koinōnia</i>).....	176
Հավիտյան (' <i>olam</i>).....	178
Աստծո կամքը (<i>thelēma</i>).....	180
Ամեն.....	181

ԱՅՍ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳՐՔՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԸ

AB	Խարիսիս Աստվածաշունչ (Anchor Bible) մեկնաբանության գիրքը, խմբ. Ուիլյամ Ֆոքսուելի և Դեյվիդ Նոել Ֆրիդմենի կողմից
ABD	Խարիսիս Աստվածաշնչի Բառարան (Anchor Bible Dictionary, 6 vols.), 6 հատոր՝ խմբ. Դեյվիդ Նոել Ֆրիդմենի կողմից
AKOT	Հին Կտակարանի Վերլուծական Բանալի (Analytical Key to the Old Testament) Ջոն Ջոզեֆ Օուենսի կողմից
ANE	Անտիկ Մերձավոր Արևելք (Ancient Near East)
ANET	Մերձ-արևելյան Հնագույն Տեքստեր (Ancient Near Eastern Texts) Ջեյմս Բ. Գրիսչարդ
ASV	Ամերիկյան Ստանդարտ Տարբերակ (American Standard Version)
AV	Լիազորված Տարբերակ (Authorized Version)
BAGD	Նոր Կտակարանի հունարեն-անգլերեն բառարան և վաղ Քրիստոնեական գրականություն, Վոլտեր Բյոներ, երկրորդ խմբագրությունը՝ Ֆ. Վ. Գինգրիչի և Ֆրեդերիկ Դանկերի
BDB	Նոր Կտակարանի եբրայերեն և անգլերեն բառարան Ֆ. Բրաունի, Ս. Ռ. Դրայվերի և Ս. Ա. Բրիգգի կողմից
BHS	Biblia Hebraica Stuttgartensia, GBS, 1997
DSS	Մեռյալ Ծովի Գալարները (Dead Sea Scrolls)
EJ	Հուդայական Հանրագիտարան (Encyclopedia Judaica)
IDB	Մեկնաբանի Աստվածաշնչյան Բառարան, (4 հատոր), (The Interpreter's Dictionary of the Bible), խմբ. Ջորջ Ա. Բաթիքի կողմից
ISBE	Միջազգային Ստանդարտ Աստվածաշնչի Հանրագիտարան, 5 հատոր, խմբ. Ջեյմս Օրրի կողմից (International Standard Bible Encyclopedia)
JB	Երուսաղեմի Աստվածաշունչ (Jerusalem Bible)
JPSOA	Սուրբ Գիրքը ըստ Մասորետիկ Տեքստի՝ Նոր Թարգմանություն, (The Jewish Publication Society of America)
KB	Հին Կտակարանի եբրայերեն և արամերեն բառարան, Լյուդվիգ Կոհլերի և Վոլտեր Բաումգարտների կողմից
KJV	Քինգ Ջեյմս Տարբերակը (King James Version)
LAM	Սուրբ Գիրքը հնագույն արևելյան ձեռագրերից (the Peshitta), Ջորջ Ս. Լամսայի կողմից
LUCIAN	Սիրիայի Անտիոքից LXX-ի Երկրորդ Դարի Սրբագրություն
LXX	Մեպտուլագինտա (հունարեն-անգլերեն) Չոնդերվանի կողմից, 1970
MOF	Աստվածաշնչի Նոր Թարգմանություն, Ջեյմս Մոֆֆատի կողմից

MT	Մասորեակերպ եբրայերեն տեքստը (Masoretic Hebrew Text)
NAB	Նոր Ամերիկյան Աստվածաշնչյան Տեքստ (New American Bible Text)
NASB	Նոր Ամերիկյան Ստանդարտ Աստվածաշունչ (New American Standard Bible)
NCV	Թոմաս Նելսոնի կողմից Նոր Դարաշրջանի Տարբերակը, հրատարակված Harper Collins Christian Publishing կողմից (New Century Version by Thomas Nelson)
NEB	Նոր Անգլերեն Աստվածաշունչ (New English Bible)
NET	Նոր Անգլերեն Թարգմանություն՝ երկրորդ Բեսա հրատարակչություն (New English Translation)
NIDNTT	Նոր Կտակարանի աստվածաբանության նոր միջազգային բառարան, 4 հատոր, խմբ. Քոլին Բրաունի կողմից (New International Dictionary of New Testament Theology)
NIDOTTE	Հին Կտակարանի աստվածաբանության և էզեգեզիկայի նոր միջազգային բառարան, 5 հատոր, խմբ. Ուիլեմ Ա. Վան Գեմերենի կողմից (New International Dictionary of Old Testament Theology and Exegesis)
NIV	Նոր Միջազգային Տարբերակ (New International Version)
NJB	Նոր Երուսաղեմի Աստվածաշունչ (New Jerusalem Bible)
NKJV	Նոր Քինգ Ջեյմս Տարբերակը (New King James Version)
NRSV	Վերանայված Ստանդարտ Նոր Աստվածաշունչ (New Revised Standard Bible)
OTPG	Հին Կտակարանի քերականական վերլուծության ուղեցույց, Թոմաս Ա. Բիլի, Ուիլյամ Ա. Բենկսի և Քոլին Սմիթի կողմից (Old Testament Parsing Guide)
REB	Վերանայված Անգլերեն Աստվածաշունչ (Revised English Bible)
RSV	Վերանայված Ստանդարտ Տարբերակ (Revised Standard Version)
SEPT	Սեպտուագինտան, հունարեն-անգլերեն, Չոնդերվանի կողմից, 1970 (The Septuagint)
TCNT	Քսաներորդ Դարի Նոր Կտակարան (The Twentieth Century New Testament)
TEV	Այսօրվա Անգլերեն Տարբերակ, Աստվածաշնչյան Ընկերությունների Միությունից (Today's English Version)
UBS ⁴	Միացյալ Աստվածաշնչյան Ընկերությունների Հունարեն Նոր Կտակարանի չորրորդ վերանայված խմբագրությունը (United Bible Societies' The Greek New Testament)
YLT	Յանգի Սուրբ Գրքի Բառացի Թարգմանությունը, Ռոբերտ Յանգի կողմից (Young's Literal Translation)
ZPEB	Չոնդերվանի Պատկերազարդ Աստվածաշնչի Հանրագիտարան, խմբ. Մերրիլ Ս. Տեննիսի կողմից (Zondervan Pictorial Encyclopedia of the Bible)

ՀԵՂԻՆԱԿԻ ԽՈՍՔ. ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ Է ՁԵՉ ՕԳՆԵԼ ԱՅՍ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Աստվածաշնչյան մեկնաբանությունը ռացիոնալ և հոգևոր գործընթաց է, որը փորձում է հասկանալ հնադարում ներշնչված գրողին այնպես, որ Աստուծոց ուղարկված պատգամը հասկացվի և կիրառվի մեր օրերում:

Հոգևոր գործընթացը կարևոր է, սակայն դժվար սահմանելի: Այն իր մեջ ընդգրկում է նվիրում և Աստծո առջև բաց վիճակ: Պետք է լինի քաղց (1) Նրա հանդեպ, (2) Նրան ճանաչելու, (3) Նրան ծառայելու: Այս գործընթացը պահանջում է աղոթք, խոստովանություն և ապրելակերպի փոփոխության հոժարակամություն: Սուրբ Հոգին շատ կարևոր է մեկնության այս գործընթացում, սակայն թե ինչու են անկեղծ և աստվածավախ Քրիստոնյաները Աստվածաշունչը այլ կերպ հասկանում՝ հանելուկ է:

Ռացիոնալ գործընթացը ավելի հեշտ է նկարագրել: Մենք պետք է լինենք հետևողական և ազնիվ տեքստի նկատմամբ և մեր անձնական և հարանվանական հակումների ազդեցության տակ չընկնենք: Մենք բոլորս էլ պատմականորեն պայմանական ենք: Մեզանից ոչ ոք օբյեկտիվ կամ չեզոք մեկնաբան չէ: Այս մեկնաբանության գիրքը առաջարկում է մանրամասն ռացիոնալ գործընթաց, որը պարունակում է մեկնության երեք սկզբունքներ, որոնք նախատեսված են օգնելու մեզ հաղթահարելու մեր հակումները:

Առաջին սկզբունքը

Առաջին սկզբունքն է նշել այն պատմական միջավայրը, որում գրվել է աստվածաշնչյան գիրքը և հատուկ պատմական իրավիճակը՝ տվյալ գրքի հեղինակին ճանաչելու համար: Բնագրի հեղինակը ուներ նպատակ՝ պատգամը փոխանցելը: Տեքստն ինքնին ոչինչ չի կարող նշանակել մեզ համար, եթե այն իրականում ոչինչ չի նշանակել բնագրի՝ հնում ներշնչված հեղինակի համար: Կարևորը նրա մտադրությունն է, և ոչ թե մեր պատմական, զգացական, մշակութային, անձնական կամ հարանվանական կարիքը: Կիրառությունը մեկնաբանության անբաժանելի մասն է, սակայն ճիշտ մեկնությունը միշտ պետք է նախորդի կիրառությանը: Այն պետք է ևս մեկ անգամ հիշեցնի, որ յուրաքանչյուր սուրբգրային տեքստ ունի միայն մեկ նշանակություն: Այս նշանակությունը հենց այն է, ինչ բնագրի հեղինակը մտադիր է եղել Սուրբ Հոգու առաջնորդությամբ փոխանցել իր օրերի մարդկանց: Այս միակ նշանակությունը կարող է ունենալ տարբեր հնարավորին կիրառություններ, տարբեր մշակույթների և իրավիճակների համար: Այս կիրառությունները պետք է կապ հաստատեն բնագրի հեղինակի փոխանցած կենտրոնական ճշմարտության հետ: Այդ իսկ պատճառով, այս սերտողության ուղեցույց մեկնաբանության գիրքը կազմված է Աստվածաշնչյան յուրաքանչյուր գրքի համար տրված ներածական մասով:

Երկրորդ սկզբունքը

Երկրորդ սկզբունքը գրական բաժինները տարբերելն է: Աստվածաշնչյան յուրաքանչյուր գիրք միավորված փաստաթուղթ է: Մեկնաբանները իրավունք չունեն առանձնացնելու ճշմարտության մի մասը և անտեսել մյուսները: Ուստի, նախքան առանձին գրական որևէ բաժին մեկնաբանելը մենք պետք է աշխատենք հասկանալ աստվածաշնչյան ամբողջ գրքի իմաստը: Առանձին բաժինները՝ գլուխները, պարագրաֆները կամ համարները, չեն կարող փոխանցել մի այնպիսի իմաստ, որը չի փոխանցում ամբողջ բաժինը: Մեկնությունը պետք է սկսի ամբողջականի դեղուկտիվ մոտեցումից դեպի առանձին մասերի ինդուկտիվ մոտեցում: Ուստի այս մեկնաբանության գիրքը նախատեսված է օգնելու ուսանողին վերլուծելու յուրաքանչյուր գրական բաժնի կառուցվածքը պարագրաֆներով: Բաժանումներն ըստ պարագրաֆների և գլուխների ներշնչված չեն, սակայն դրանք օգնում են մեզ տարբերակելու բաժիններն ըստ մտքի:

Ըստ պարագրաֆի մեկնաբանությունը՝ և ոչ թե ըստ նախադասության, հատվածի, արտահայտության կամ բառային մեկնաբանության, հանդիսանում է աստվածաշնչյան հեղինակի նկատի ունեցած նշանակությանը հետևելու բանալին: Պարագրաֆները հիմնված են ընդհանուր թեմայի վրա, որոնք հաճախ կոչվում են թեմա կամ թեմատիկ նախադասություն: Պարագրաֆի մեջ յուրաքանչյուր բառ, արտահայտություն, հատված և նախադասություն ինչ-որ ձևով կապված է այս ընդհանուր թեմայի հետ: Դրանք կա՛մ սահմանափակում են, ընդլայնում, բացատրում, կա՛մ էլ այն հարցադրում: Ճիշտ մեկնության համար իրական բանալի է հանդիսանում ըստ տարբերության բնագրի հեղինակի մտքին հետևելը՝ առանձին գրական բաժինների միջով, որոնք էլ հենց կազմում են աստվածաշնչյան գիրքը: Այս ուղեցույց հանդիսացող մեկնաբանության գիրքը նախատեսված է օգնելու ուսանողներին այդ անելի համեմատելով ժամանակակից անգլերեն թարգմանությունները: Ընտրված են այս թարգմանությունները, քանի որ դրանք կիրառում են տարբեր թարգմանությունների տեսություններ:

- (ա) Միացյալ Աստվածաշնչյան Ընկերության հունարեն տեքստը վերանայված չորրորդ խմբագրությունն է (The United Bible Society – UBS⁴): Այս տեքստը բաժանվել է պարագրաֆների տեքստային ժամանակակից գիտնականների կողմից:
- (բ) Նոր Քինգ Ջեյմս Տարբերակը (The New King James Version - NKJV) բառ առ բառ գրական թարգմանություն է՝ հիմնված հունարեն ձեռագիր ավանդույթի վրա, որը հայտնի է Textus Receptus անունով: Այս տարբերակի պարագրաֆների բաժանումները ավելի երկար են, քան մյուս թարգմանություններինը: Այսպիսի ավելի երկար ենթաբաժինները օգնում են ուսանողներին տեսնելու ընդհանուր թեմաները:
- (գ) Նոր Վերանայված Ստանդարտ Տարբերակը (The New Revised Standard Version - NRSV) փոփոխված բառ առ բառ թարգմանություն է: Այն միջնապատ է ձևավորում տվյալ երկու ժամանակակից տարբերակների միջև: Այս գրքի պարագրաֆների բաժանումը բավականին օգտակար է թեմաները տարբերակելու համար:
- (դ) Այսօրվա Անգլերեն Տարբերակը (The Today's English Version - TEV) դինամիկ համարժեք տարբերակ է, որը հրատարակվել է Միացյալ Աստվածաշնչյան Ընկերության կողմից: Այն փորձում է Աստվածաշունչը թարգմանել այնպես, որ ժամանակակից անգլիախոս մարդիկ կամ ընթերցասերները կարողանան հասկանալ հունարեն տեքստի իմաստը: Հաճախ, հատկապես Ավետարաններում, պարագրաֆների բաժանումը կատարված է ըստ խոսողի, քան ըստ թեմայի, այնպես ինչպես NIV (New International Version – Նոր Միջազգային Տարբերակ) թարգմանության մեջ: Մեկնաբանողի նպատակների համար այն օգտավետ չէ: Հետաքրքիր է նշել, որ թե՛ UBS⁴ և թե՛ TEV տարբերակները հրատարակվել են նույն անձի կողմից, սակայն դրանց պարագրաֆների բաժանումը տարբերվում են:
- (ե) Երուսաղեմի Աստվածաշունչը (The Jerusalem Bible - JB) դինամիկ համարժեք թարգմանություն է, որը հիմնված է Ֆրանսերեն Կաթոլիկ թարգմանության վրա: Այն շատ օգտակար է համեմատելու համար պարագրաֆների բաժանումը Եվրոպական տեսանկյունից:
- (զ) Տպագրված տեքստը 1995 թ. թարմացված Նոր Ամերիկյան Ստանդարտ Աստվածաշունչն է (New American Standard Bible /NASB/), որը բառ առ բառ թարգմանություն է: Ըստ համարների մեկնաբանությունների ժամանակ օգտագործվում է պարագրաֆային այս բաժանումը:

Երրորդ Սկզբունք

Երրորդ սկզբունքն է Աստվածաշունչը կարդալ տարբեր թարգմանություններով, իմաստը հնարավորինս ամենաբնութայնված շրջանակներում (իմաստաբանական դաշտը), որ կարող են ունենալ աստվածաշնչյան բառերը կամ արտահայտությունները, հասկանալու համար: Հաճախ հունարեն բառը կամ արտահայտությունը կարելի է մի քանի կերպով հասկանալ: Այս տարբեր թարգմանություններից բխում են այլ տարբերակներ, որոնք օգնում են հասկանալու և բացատրելու հունարեն ձեռագրի տարբերակները: Սրանք չեն ազդում վարդապետության վրա, սակայն օգնում են մեզ վերադառնալու հին դարերում ներշնչված հեղինակի կողմից գրված բնագիր տեքստին:

Չորրորդ Սկզբունք

Չորրորդ սկզբունքը գրական ժանրը նշելն է: Բնագրի ներշնչված հեղինակները ընտրում են արձանագրել իրենց պատգամները տարբեր ժանրերում (օր.՝ պատմական իրադարձություն, պատմական դրամա, պոեմ, մարգարեություն, ավետարան [առակ], նամակ, հայտնություն): Այս տարբեր ժանրերը ունեն մեկնաբանության համար հատուկ բանալիներ (տե՛ս՝ Գորդոն Ֆի և Դազ Ստյուարտ, *Բնչալիս կարդալ Աստվածաշունչը իր ամբողջ իմաստով* կամ Ռոբերտ Սթեյն, *Խաղալ Կանոններով*, /Gordon Fee and Doug Stuart, *How to read the Bible for All Its Worth* or Robert Stein, *Playing by the Rules*):

Այս մեկնաբանության գիրքը ուսանողին առաջարկում է իր մեկնությունը ստուգելու արագ միջոց: Այն վերջնական չէ, այլ տեղեկատվական և խորհելու առիթ ընձեռնող: Հաճախ մյուս հնարավորին մեկնաբանությունները օգնում են մեզ ջիներու սահմանափակ, դոգմատիկ և հարանվանական: Մեկնաբանները կարիք ունեն ավելի լայն թարգմանչական շրջանակների, որպեսզի հասկանան, թե որքան անորոշ կարող է լինել հնագույն տեքստը: Ապշեցուցիչ է, թե որքան քիչ համաձայնություն կա Քրիստոնյաների միջև, որոնք պնդում են, որ ճշմարտության իրենց աղբյուրը Աստվածաշունչն է:

Այս սկզբունքներն օգնել են ինձ հաղթահարել շատ պատմական համոզմունքներ, բառացիորեն պարտադրելով ինձ չափազանց ուշադիր վերաբերվել հնագույն տեքստերին և ձեռագրերին: Հույս ունեն, որ այն օրհնություն կլինի նաև ձեր համար:

Բոր Աթի
Արևելյան Տեխասի Մկրտական Համալսարան
Հունիս 27, 1996

Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց. վստահելի ճշմարտության անձնական ուսումնասիրություն

Կարո՞ղ ենք մենք իմանալ ճշմարտությունը: Որտե՞ղ գտնել այն: Կարո՞ղ ենք այն տրամաբանորեն հաստատել: Արդյո՞ք գոյություն ունի վերջնական ապացույց: Արդյո՞ք կան բացարձակ ճշմարտություններ, որոնք կարող են առաջնորդել մեր կյանքը, մեր աշխարհը: Արդյո՞ք կյանքն իմաստ ունի: Ինչո՞ւ ենք մենք այստեղ: Ո՞ւր ենք գնում: Այս հարցերը՝ որոնց շուրջ բոլոր բանական մարդիկ խորհում են, հետապնդել են մարդկային բանականությանը ժամանակի գոյությունից ի վեր (Ժող. 1:13-18; 3:9-11): Ես կարող եմ հիշել իմ անձնական փնտրտուքները կյանքիս ինտեգրման կենտրոնի համար: Ես դարձել եմ Քրիստոնյա հավատացյալ երիտասարդ տարիքում, հիմնականում հիմնվելով իմ ընտանիքում նշանակալի մարդկանց վկայությունների վրա: Երբ հասունացա, հասունացան նաև իմ և ինձ շրջապատող աշխարհի մասին հարցերս: Պարզ մշակութային կամ կրոնական կլիշեները չէին իմաստավորում իմ կարդացած կամ վերապրած փորձառությունները: Դա շփոթության, փնտրտուքի, երազանքների և հաճախ հուսահատության զգացողության ժամանակ էր՝ ի դեմս այս անգամ, բարդ աշխարհի, որտեղ ապրում էի:

Շատերը պնդում էին, որ ունեն այս կարևոր հարցերի պատասխանները, թեև հետազոտելուց և խորհելուց հետո հասկացա, որ նրանց պատասխանները հիմնված էին (1) իրենց անձնական փիլիսոփայության, (2) հին առասպելների, (3) անձնական փորձառության կամ (4) հոգեբանական կանխատեսումների վրա: Ես կարիք ունեի ստույգության որոշակի աստիճանի, վկայությունների, ինչ-որ բանականության, որի վրա կարող էի հիմնել իմ աշխարհայացքը, ինտեգրման կենտրոնը, սարելու իմ նպատակը:

Այս բոլորը ես գտա Աստվածաշնչի իմ ուսումնասիրության մեջ: Մկսեցի փնտրել արժանահավատության փաստեր, որոնք գտա (1) Աստվածաշնչի պատմական հուսալիության մեջ, որը հաստատված է երկրաբանների կողմից, (2) Հին Կտակարանի մարգարեությունների ճշգրտության մեջ, (3) իր ամբողջացվելու համար ավելի քան հազար վեց հարյուր տարի տևած Աստվածաշնչի պատգամի միաբանության մեջ և (4) մարդկանց վկայությունների հիման վրա, որոնց կյանքերը Աստվածաշնչի հետ շփվելու արդյունքում ընդմիշտ փոխվել էին: Քրիստոնեությունը, որպես հավատքի և հավատամքի միավորված համակարգ, կարողանում է աշխատել մարդկային կյանքի բարդ հարցերի հետ: Այն ոչ միայն ապահովեց բանական հիմք, այլ նաև աստվածաշնչյան հավատքի փորձառական առանձնահատակությունը ինձ տվեց ուրախություն և կայունություն:

Ես հասկացա, որ գտել եմ իմ կյանքի ինտեգրման կենտրոնը՝ Քրիստոսին, երբ հասկացա այն Սուրբ Գրքի միջոցով: Դա արբեցնող փորձառություն էր, զգայական ազատագրում: Համենայն դեպս, ես դեռ կարող եմ հիշել այն ցնցումը և ցավը, որ վերապրեցի, երբ հասկացա, թե այս գրքի քանի տարբեր մեկնություններ էին պաշտպանվում, երբեմն նույնիսկ միևնույն եկեղեցիների և միևնույն մտածելակերպի դպրոցների ներսում: Աստվածաշնչի ներշնչված լինելու ու արժանահավատության հաստատումը դեռևս վերջը չէր, այլ միայն սկիզբը: Ինչպե՞ս եմ հիմնավորում կամ հերքում Աստվածաշնչում շատ խորթին հաստատման տարբերվող և իրարամերժ մեկնությունները, որոնք կատարվել են այնպիսի մարդկանց կողմից, որոնք պնդում են դրա հեղինակությունը և արժանահավատությունը:

Այս աշխատանքը դարձավ իմ կյանքի նպատակն ու հավատքի ուխտը: Ես գիտեի, որ Քրիստոսի հանդեպ իմ հավատքը բերել է անսահման խաղաղություն և ուրախություն: Իմ մշակույթի հարաբերականության, իրարամերժ կրոնական համակարգերի դոգմատիզմի և հարանվանական գոռոզամտության մեջ միտքս փափագում էր բացարձակ ճշմարտությունների: Անտիկ գրականության մեկնությանը ճիշտ մոտեցումներ ցուցաբերելու իմ փնտրտուքների մեջ զարմացա, որ հայտաբերեցի իմ իսկ պատմական, մշակութային, հարանվանական և փորձառական շեղումները: Աստվածաշունչը հաճախ ես կարդացել էի միայն իմ սեփական հայացքները հաստատելու համար: Ես օգտագործել էի այն որպես դոգմայի աղբյուր հարձակվելու ուրիշների վրա, մինչ վերահաստատում էի իմ իսկ անհաստատ կողմերն ու թուլությունները: Որքա՞ն ցավալի էր այս գիտակցումն ինձ համար:

Չնայած որ երբեք չեմ կարող լինել օբյեկտիվ, այնուամենայնիվ կարող եմ դառնալ Աստվածաշնչի ավելի լավ ընթերցող: Ես կարող եմ սահմանափակել իմ շեղումները՝ ընդունելով դրանք և դրանց առկայությունը: Ես տակավին չեմ ազատվել դրանցից, սակայն առճակատվել եմ իմ սեփական թերությունների հետ: Հաճախ մեկնաբանը լավ Աստվածաշունչ ընթերցելու ամենավատ թշնամին է:

Թույլ տվեք թվարկել մի քանի նախադրյալներ, որոնք ես ներառում եմ իմ Աստվածաշնչյան սերտորության մեջ, որպեսզի դուք՝ ընթերցողներդ, կարողանաք ինձ հետ միասին դրանք ուսումնասիրել:

I. Նախադրյալներ


1. Ես հավատում եմ, որ Աստվածաշունչը բացառապես ներշնչված՝ միակ ճշմարիտ Աստծո ինքնահայտնությունն է: Ուստի, այն պետք է մեկնաբանվի բնագրի աստվածային հեղինակի (<ոգու) մտադրության լույսի ներքո, որը գրվել է մարդու կողմից՝ հատուկ պատմական միջավայրում:
2. Ես հավատում եմ, որ Աստվածաշունչը գրվել է հասարակ մարդկանց՝ բոլորի համար: Աստված հարմար է գտել պատմական և մշակութային համատեքստում հստակ խոսել մեր հետ: Աստված չի թաքցնում ճշմարտությունը, այլ ուզում է, որ այն հասկանանք: <Ետևաբար, այն պետք է մեկնաբանվի այդ օրերի և ոչ թե մեր օրերի լույսի ներքո: Աստվածաշունչը չպետք է նկատի ունենա մեր համար մի բան, որը նկատի չի ունեցել առաջին անգամ կարդացողների կամ լսողների համար: Այն հասկանալի է միջին հասկացողության տեր մարդկանց համար և կիրառում է նորմալ հաղորդակցության միջոցներն ու տեխնիկաները:
3. Ես հավատում եմ, որ Աստվածաշունչը ունի մի պատգամ և մի նպատակ: Այն ինքն իրեն չի հակասում, թեև պարունակում է խրթին և պարադոքսալ հատվածներ: Այսպիսով, Աստվածաշնչի լավագույն մեկնաբանը հենց ինքը Աստվածաշունչն է:
4. Ես հավատում եմ, որ յուրաքանչյուր հատված (ներառյալ մարգարեությունները) ունի միայն մեկ նշանակություն՝ հիմնված բնագրի ներշնչված հեղինակի մտադրության վրա: Թեև երբեք չենք կարող կատարյալ վստահությամբ ասել, որ գիտենք բնագրի հեղինակի մտադրությունը, սակայն շատ ցուցանիշներ մատնանշում են դա.
 - ա. ժանրը (գրական ձևաչափը), որը ընտրվել է արտահայտելու ուղղերձը
 - բ. պատմական միջավայրը կամ հատուկ իրավիճակը, որը երևան է բերել այդ գրությունը
 - գ. ամբողջական գրքի, ինչպես նաև յուրաքանչյուր գրական բաժնի գրական համատեքստը
 - դ. գրական բաժինների տեքստային կառուցվածքը (ուրվագիծը), երբ դրանք կապ ունեն ընդհանուր ուղղերձի հետ
 - ե. պատգամը փոխանցելու համար կիրառված քերականական առանձնահատկությունները
 - զ. բառերը, որոնք ընտրվել են պատգամը ներկայացնելու համար
 - է. զուգահեռ հատվածները

Այս կետերից յուրաքանչյուրի ուսումնասիրությունը դառնում է տվյալ հատվածի մեր ուսումնասիրության առարկան: Նախքան Աստվածաշնչի լավ ընթերցանության իմ մեթոդը բացատրելը թույլ տվեք պատկերել մի քանի աննպատակահարմար մեթոդներ, որոնք օգտագործվում են այսօր, պատճառ հանդիսանալով մեկնաբանությունների տարբերության, և հետևաբար պետք է դրանցից խուսափել:


II. Աննպատակահարմար մեթոդներ

- Ա. Անտեսելով Աստվածաշնչյան գրքերի գրական համատեքստը և կիրառելով յուրաքանչյուր նախադասություն, ենթանախադասություն կամ նույնիսկ առանձին բառեր որպես ճշմարտության սահմանումներ, որոնք կապ չունեն հեղինակի մտադրության կամ ընդլայնված համատեքստի հետ: Սա հաճախ կոչվում է «տեքստային ապացույց»:
- Բ. Անտեսելով գրքերի պատմական միջավայրը փոխարինելով այն ենթադրյալ պատմական միջավայրով, որը քիչ է պաշտպանվում կամ ընդհանրապես չի պաշտպանվում հենց տվյալ տեքստի կողմից:
- Գ. Անտեսելով գրքերի պատմական միջավայրը և կարդալով այն որպես առավոտյան լրագիր՝ գրված հատուկ միայն արդի Քրիստոնյաների համար:
- Դ. Անտեսելով գրքերի պատմական միջավայրը և տեքստը ներկայացնելով խորհրդապատկերներով որպես փիլիսոփայական, աստվածաբանական ուղղերձ, որն ընդհանրապես կապ չունի այն առաջին անգամ լսողների և բնագրի հեղինակի մտադրության հետ:
- Ե. Անտեսելով բնագիր ուղղերձը, այն փոխարինելով սեփական աստվածաբանությամբ, սիրված վարդապետությամբ կամ ժամանակակից թողարկմամբ, որոնք չեն առնչվում բնագրի հեղինակի նպատակի և արձանագրված ուղղերձի հետ: Այս երևույթը հաճախ հաջորդում է Աստվածաշնչի առաջին ընթերցմանը, որպես միջոց հաստատելու խոստովի հեղինակությունը: Սա հաճախ կոչվում է «ընթերցողի արձագանք» («ինչ է նշանակում տեքստն ինձ համար»):

Առնվազն երեք կապակցված բաղադրիչներ կարելի է գտնել մարդկային բոլոր գրավոր հաղորդակցությունների մեջ.



Նախկինում ընթերցանության տարբեր մեխանիզմներ կենտրոնացել են այս երեք բաղադրիչներից մեկի վրա: Սակայն Սուրբ Գրքի ներշնչանքն ավելի հարմար է հաստատել հետևյալ փոփոխված սխեմայով:



Իրականում բոլոր երեք բաղադրիչները պետք է ընդգրկված լինեն մեկնաբանության գործընթացին: Ստուգելու նպատակով, իմ մեկնաբանությունը կենտրոնանում է առաջին երկուսի վրա՝ բնագրի հեղինակի և տեքստի: Հավանաբար ես արձագանքում եմ այն շահարկումներին, որոնք նկատել եմ (1) տեքստի խորհրդապատկերորեն ներկայացնելու կամ հոգևորացնելու մեջ և (2) «ընթերցողի արձագանքը» մեկնաբանության մեջ (ինչ իմաստ ունի ինձ համար): Շահարկում հնարավոր է յուրաքանչյուր փուլում:

Մենք պետք է միշտ ստուգենք մեր շարժառիթները, հակումները, մեխանիզմները և կիրարկումները: Բայց ինչպե՞ս ենք մենք դրանք ստուգում, եթե մեկնաբանությունների համար սահմաններ և չափանիշներ գոյություն չունեն: Ահա այստեղ է, որ հեղինակի նպատակը և տեքստային կառուցվածքը ապահովում են մի քանի չափանիշներ՝ հնարավորինս սահմանափակելու ճիշտ մեկնաբանության շրջանակը:

Սուրբ Գրքի ընթերցանության այս աննպատակահարմար մեխանիզմների լույսի ներքո, որո՞նք են Աստվածաշունչը լավ կարդալու և մեկնաբանելու համար այն մի քանի հնարավոր կերպերը, որոնք առաջարկում են հիմնավորման և հաստատման աստիճան:

III. Աստվածաշնչյան լավ ընթերցանության հնարավոր կերպեր

Այս պահին ես չեմ քննարկում հատուկ ժանրի պատկանող մեկնաբանության մեխանիզմներ, այլ ընդհանուր հերմենևտիկ սկզբունքներ, որոնք հարմար են աստվածաշնչյան բոլոր տեքստերին: Հատուկ ժանրի վերաբերող լավ գիրք է Գորդոն Ֆիի և Դուգլաս Ստյուարտի «Ինչպես կարդալ Աստվածաշունչը իր ամբողջ իմաստով» Չոնդերվան հրատարակչության (*How To Read The Bible In All Its Worth* Gordon Fee and Douglas Stuart, published by Zondervan):

Իմ մեթոդը կենտրոնանում է առաջնահերթ ընթերցողի վրա, որը թույլ է տալիս Սուրբ Հոգուն լուսավորել Աստվածաշունչը անձնական ընթերցանության չորս ցիկլերի միջոցով: Այս մեթոդը Սուրբ Հոգուն, տեքստը և ընթերցողին դիտարկում է ոչ թե երկրորդական դերում, այլ առաջնային: Այն նաև ընթերցողին պաշտպանում է մեկնաբանների անհարկի ազդեցությունից: Ես լսել եմ, թե ինչպես են ասում. «Աստվածաշունչը շատ լույս է զգում մեկնաբանությունների վրա»: Այս ասելով նպատակ չունեմ թերագնահատել սերտողությանը օգնող մեկնությունները, այլ խնդրել, որ դրանք անպատեհ չկիրառվեն:

Մենք պետք է կարողանանք մեր մեկնությունները հիմնավորել հենց տեքստից: Վեց ոլորտներ ապահովում են առնվազն սահմանափակ հիմնավորումներ.

1. Պատմական միջավայրը
2. Գրական համատեքստը
3. Քերականական կառուցվածքը (շարահյուսություն)
4. Արդի բառապաշարի կիրառությունը
5. Համապատասխան գուգահեռ հատվածները
6. Ժանրը

Մենք պետք է կարողանանք ապահովել մեր մեկնաբանությունների հիմքում ընկած պատճառներն ու տրամաբանությունը: Աստվածաշունչը մեր հավատքի և դրա կիրառման համար միակ աղբյուրն է: Ցավոք Քրիստոնյաները հաճախ համաձայնության չեն գալիս Աստվածաշնչի ուսմունքների և հիմնավորումների շուրջ: Ընթերցանության այս չորս ցիկլերը նախատեսված են ապահովելու հետևյալ մեկնաբանական հասկացությունները՝

1. Ընթերցանության առաջին ցիկլը

- ա. Կարդացեք գիրքը մեկ անգամ նստելով. ևս մեկ անգամ կարդացեք այն այլ թարգմանությամբ, լավագույն դեպքում մեկ այլ թարգմանչական տեսությամբ:
 - (1) բառ առ բառ (NKJV, NASB, NRSV)
 - (2) դինամիկ համարժեքը (TEV, JB)
 - (3) վերապատմված (Living Bible, Amplified Bible)
- բ. Փնտրեք ամբողջ գրքի գլխավոր նպատակը: Գտեք գրքի թեման:
- գ. Առանձնացրեք (եթե հնարավոր է) գրական մի բաժին, պարագրաֆ կամ նախադասություն, որը հստակ արտահայտում է այս գլխավոր նպատակը կամ թեման
- դ. Գտեք գերակշռող գրական ժանրը
 - (1) Հին Կտակարան
 - ա) Եբրայերեն պատմվածք
 - բ) Եբրայերեն պոեզիա (իմաստասիրական գրականություն, սաղմոսներ)
 - գ) Եբրայերեն մարգարեություն (արձակ, պոեզիա)
 - դ) Օրենսգիրք
 - (2) Նոր Կտակարան
 - ա) Պատմվածքներ (Ավետարանները, Գործքը)
 - բ) Առակներ (Ավետարաններ)
 - գ) Նամակներ/թղթեր
 - դ) Հայտնության գրականություն

2. Ընթերցանության երկրորդ ցիկլը

- ա. Վերընթերցեք ամբողջ գիրքը, փորձելով գտնել հիմնական թեմաները կամ նյութերը
- բ. Ընդգծեք հիմնական թեմաները և համառոտ սահմանեք դրանց բովանդակությունը
- գ. Ստուգեք ձեր նպատակի սահմանումը և ընդլայնեք ընդհանուր նկարագրությունը սերտորոշությանը օժանդակող միջոցներով

3. Ընթերցանության երրորդ ցիկլը

- ա. Վերընթերցեք ամբողջ գիրքը, փորձելով գտնել պատմական միջավայրը և հենց Աստվածաշնչի միջից հատուկ իրավիճակներ այդ գիրքը գրելու համար
- բ. Թվարկեք պատմական իրողություններ, որոնք նշված են Աստվածաշնչյան տվյալ գրքում
 - (1) հեղինակը
 - (2) տարեթիվը
 - (3) ստացողները
 - (4) գրի առնվելու հատուկ նպատակը
 - (5) մշակութային միջավայրի առանձնահատկությունները, որոնք կապված են գրքի գրի առնվելու նպատակի հետ
 - (6) պատմական դեպքերի և դեմքերի հետ կապված խոսքերը
- գ. Ընդլայնեք ձեր ուրվագիծը՝ սխեման, պարբերությունների մակարդակի՝ աստվածաշնչյան գրքի տվյալ բաժնի համար, որը մեկնաբանում էք: Միշտ գտեք և ընդգծեք գրական ժանրը: Սա կարող է լինել մի քանի գլուխ կամ պարբերություն: Այն հնարավորություն է տալիս ձեզ հետևելու բնագրի հեղինակի տրամաբանությանն ու տեքստային կառուցվածքին:
- դ. Ստուգեք պատմական միջավայրը սերտորոշությանը օժանդակող միջոցներով

4. Ընթերցանության չորրորդ ցիկլը

- ա. Վերընթերցեք տվյալ գրականական բաժինը մի քանի թարգմանություններով
 - (1) բառ առ բառ (NKJV, NASB, NRSV)
 - (2) դինամիկ համարժեքը (TEV, JB)
 - (3) վերապատմված (Living Bible, Amplified Bible)
- բ. Գտեք գրականական կամ քերականական կառուցվածքը
 - (1) կրկնվող արտահայտությունները, Եփես. 1:6,12,13

- (2) կրկնվող քերականական կառուցվածքները, Հռոմ.8:31
- (3) հակադրվող հասկացությունները
- գ. Թվարկեք հետևյալ կետերը
 - (1) կարևոր տերմինները
 - (2) անսովոր տերմինները
 - (3) կարևոր քերականական կառուցվածքները
 - (4) հատկապես դժվար բառերը, հատվածները և նախադասությունները
- դ. Գտեք համապատասխան գուգահեռ հատվածները
 - (1) թեմայի շուրջ փնտրեք տվյալ ուսմունքի հետ կապ ունեցող ամենահստակ հատվածը, կիրառելով ա) «սիստեմատիկ աստվածաբանության» գրքեր, բ) համագոր հատվածները նշող Աստվածաշնչեր, գ) համաբարբառներ
 - (2) ձեր թեմայի շրջանակներում գտեք հնարավոր պարադոքսալ գույգ: Բազմաթիվ աստվածաշնչյան ճշմարտություններ ներկայացված են բարբառային գույգերով. շատ հարանվանական հակասություններ ծնվում են աստվածաշնչյան լարվածության միայն կեսի համար «տեքստային ապացույց» ներկայացնելու պատճառով: Ամբողջ Աստվածաշունչն է ներշնչված և մենք պետք է փնտրենք դրա ամբողջական պատգամը, որպեսզի մեր մեկնաբանության համար ապահովենք սուրբգրային բալանսը:
 - (3) Գտեք գուգահեռներ նույն գրքի, հեղինակի կամ ժանրի ներսում. Աստվածաշունչը հանդիսանում է իր իսկ լավագույն մեկնաբանը, քանի որ հեղինակը մեկն է՝ Սուրբ Հոգին:
- ե. Օգտագործեք սերտողությանը օժանդակող միջոցներ ստուգելու պատմական միջավայրի և դեպքերի ձեր ուսումնասիրությունները:
 - (1) սերտողության Աստվածաշնչեր
 - (2) աստվածաշնչյան հանրագիտարաններ, ձեռնարկներ և բառարաններ
 - (3) աստվածաշնչյան ներածություններ
 - (4) աստվածաշնչյան մեկնաբանությունների գրքեր (այս դեպքում ձեր սերտողության ընթացքում թույլ տվեք անցյալի ու ներկայի հավաստացյալ համայնքին օգնեն և ուղղեն ձեր անձնական սերտողությունը):

IV. Աստվածաշնչի մեկնաբանության կիրառությունը

Այժմ անցում ենք կատարում կիրառությանը: Դուք ժամանակ տրամադրեցիք հասկանալու տեքստը իր բնագրի միջավայրում: Այժմ պետք է այն կիրառեք ձեր կյանքի, մշակույթի մեջ: Աստվածաշնչի հեղինակությունը ես սահմանում եմ հետևյալ կերպ. «հասկանալ, թե ինչ էր ասում բնագրի հեղինակը իր օրերի համար և կիրառել այդ ճշմարտությունը մեր օրերում»:

Կիրառությունը պետք է հետևի բնագրի հեղինակի՝ թե՛ ժամանակի և թե՛ տրամաբանության մեջ, մեկնաբանության նպատակին: Մենք չենք կարող կիրառել Աստվածաշնչի որևէ պատգամ մեր օրերի համար մինչև չիմանանք, թե ինչ էր դա արտահայտում իր օրերի համար: Աստվածաշնչի պատգամը չպետք է երբևէ փոխի իր իմաստը:

Ձեր կազմած մանրակրկիտ ուրվագիծը՝ ըստ պարբերությունների (ընթերցանության երրորդ ցիկլը) կլինի ձեր ուղեցույցը: Կիրառությունը պետք է կազմվի ըստ պարբերությունների և ոչ թե մի խոսքի հիման վրա: Բառերն իմաստ ունեն միայն համատեքստի ներսում. նախադասության ենթամասերը նույնպես իմաստ են արտահայտում միայն համատեքստի ներսում. նախադասությունները նույնպես իմաստավորվում են համատեքստի ներսում: Միակ ներշնչված անձնավորությունը, որը ներգրավված է մեկնաբանության գործընթացում՝ բնագրի հեղինակն է: Մենք միայն հետևում ենք նրա առաջնորդությանը Սուրբ Հոգու լույսի ներքո: Մակայն լուսավորված լինելը դեռևս ներշնչանք չէ: Որպեսզի ասենք, որ «այսպես է ասում Տերը», մենք պետք է մնանք բնագրի հեղինակի նպատակի մեջ: Կիրառությունը պետք է կապված լինի հատկապես ամբողջ գրքի, գրականական բաժնի և պարբերության մտքի զարգացման ընդհանուր նպատակի հետ:

Թույլ մի տվեք, որ մեր օրերի խնդիրները մեկնաբանեն Աստվածաշունչը. թողեք, որ Աստվածաշունչը խոսի: Հնարավոր է այդ անելու համար մեզնից պահանջվի տեքստից հանել սկզբունքներ: Մա հավաստի կլինի, եթե տեքստը պաշտպանի տվյալ սկզբունքը: Դժբախտաբար, շատ դեպքերում մեր սկզբունքները պարզապես «մերն» են և ոչ թե տեքստինը:

Աստվածաշունչը կիրառելու հարցում կարևոր է հիշել, որ Աստվածաշնչյան տվյալ տեքստի (բացառությամբ մարգարեությունների) համար միայն մեկ նշանակությունն է ճիշտ: Այդ նշանակությունը

կապված է բնագրի հեղինակի մտադրության հետ, երբ նա կիրառում էր իր օրերի որևէ ճգնաժամ կամ կարիք: Հնարավորին շատ կիրառություններ կարող են սերվել այս մեկ նշանակությունից: Կիրառությունը հիմնված կլինի նամակը ստացողների կարիքների հիման վրա, սակայն պետք է կապված լինի բնագրի հեղինակի նպատակի հետ:

V. Մեկնաբանության հոգևոր առանձնահատկությունները

Մինչ այժմ քննարկեցի մեկնաբանության և կիրառության մեջ առկա տրամաբանական և տեքստային գործընթացները: Այժմ թույլ տվեք համառոտ քննարկել մեկնաբանության հոգևոր առանձնահատկությունը: Հետևյալ ստուգազանկը ինձ օգտակար է եղել.

1. Աղոթեք, որ Սուրբ Հոգու օգնի ձեզ (տես՝ 1 Կորնթ.1:26-2:16)
2. Աղոթեք անձնական ներման և ձեզ հայտնի մեղքերից մաքրվելու համար (տես՝ 1 Հովհ.1:9)
3. Աղոթեք Աստծուն ավելի ճանաչելու ցանկության համար (տես՝ Սաղմ.19:7-14; 42:1ա; 119:1ա)
4. Կիրառեք ցանկացած նոր գաղափար անմիջապես ձեր կյանքի համար
5. Մնացեք խոնարհ և պատրաստ սովորելու

Դժվար է պահել տրամաբանական գործընթացի և Սուրբ Հոգու հոգևոր առաջնորդության միջև հավասարակշռությունը: Հետևյալ մեջբերումները օգնել են ինձ բախնասովորելու այս երկուսը.

1. Ջեյմս Վ. Սայր, *Սուրբ Գրքի Աղավաղում*, էջ 17-18, (James W. Sire, *Scripture Twisting*)

«Լուսավորություն գալիս է Աստծո ժողովրդի մտածելակերպի վրա և ոչ թե միայն հոգևոր էլիտայի: Աստվածաշնչյան Քրիստոնեության մեջ գուրու դասակարգում գոյություն չունի, ո՛չ լուսավորյալներ, և ո՛չ էլ մարդիկ, որոնց միջոցով պետք է հատուկ մեկնաբանություններ կատարվեն: Այսպիսով, մինչ Սուրբ Հոգին տալիս է իմաստության, գիտության և հոգևոր զանազանության հատուկ պարզները, Նա չի նշանակում այս պարզներով օժտված Քրիստոնյաներին լինելու Իր Խոսքի միակ հեղինակավոր մեկնաբանները: Իր ժողովրդից յուրաքանչյուրը կարող է սովորել, քննել և զանազանել Աստծո Խոսքը, որը նաև հեղինակություն է հանդիսանում նույնիսկ այն մարդկանց համար, որոնց Աստված հատուկ կարողություններ է տվել: Ամփոփելով, ուզում եմ կիսվել իմ ենթադրությամբ ամբողջ գրքի վերաբերյալ. Աստվածաշունչը Աստծո ճշմարիտ հայտնությունն է ամբողջ մարդկությանը, այն մեր մեծագույն հեղինակությունն է բոլոր այն հարցերում, որոնց մասին խոսվում է այնտեղ. այն ընդհանրապես առեղծվածային չէ և կարող է ցանկացած մշակույթի մեջ ապրող հասարակ մարդու համար լիովին հասկանալի լինել»:

2. Ըստ Կիրկգարդի, տեղ գտած Բերնարդ Ռեմի, *Բողոքական Աստվածաշնչյան Մեկնաբանություն*, էջ 75 գրքում (Bernard Ramm, *Protestant Biblical Interpretation*):

Համաձայն Կիրկգարդի, Աստվածաշնչի քերականական, բառային և պատմական ուսումնասիրությունը անհրաժեշտ է, սակայն առաջնային է Աստվածաշնչի ճիշտ ընթերցանությունը: «Մարդը պետք է կարդա Աստվածաշունչը *որպես Աստծո Խոսք*՝ սիրտն իր բերանի մեջ առած, իր ոտքի ծայրերի վրա կանգնած, ակնկալությամբ և Աստծո հետ հաղորդակցվելով: Աստվածաշունչը անմտությամբ, անուշադրությամբ, ակադեմիկորեն կամ մասնագիտորեն կարդալը դեռ չի նշանակում ընթերցել այն որպես Աստծո Խոսք: Երբ մեկն ընթերցում է այս Գիրքը որպես սիրո նամակ, այն ժամանակ է, որ կարդում է Աստվածաշունչը որպես Աստծո Խոսք»:

3. Հ. Հ. Ռոուլի *Աստվածաշնչի Արդիականությունը*, էջ 19 (H.H. Rowley in *The Relevance of the Bible*):

«Ոչ մի Աստվածաշնչյան լիարժեք գիտելիք չի կարող տիրել նրա բոլոր զանգեղանի: Այն չի հերքում նմանօրինակ գիտելիքները, քանի որ կարևոր են այն լիարժեք հասկանալու համար: Սակայն դա պետք է առաջնորդի այս գրքի հոգևոր զանգեղանի հոգևոր գիտությանը, եթե ուզում եք այն լիարժեք լինի: Իսկ այդ հոգևոր գիտության համար անհրաժեշտ է ավելին, քան ողջամտությունն է: Հոգևոր բաները հոգևորապես են քննվում և Աստվածաշունչն ուսումնասիրողը պետք է ունենա հոգևոր ընկալունակությամբ մոտեցում, Աստծուն գտնելու մեծ փափագ, որպեսզի կարողանա հանձնվել Նրան, եթե ուզում է հասնել գիտական ուսումնասիրություններից վեր՝ բոլոր գրքերից ամենահարաշալի Գրքի ավելի հարուստ ժառանգությանը»:

VI. Այս մեկնաբանության գրքի մեթոդը

Այս *Մերտողության Ուղղացույց Մեկնաբանության Գիրքը* նախատեսված է ձեր մեկնաբանական գործընթացին հետևյալ կերպ աջակցելու համար՝

1. Ամեն գիրք համառոտ ծանոթացնում է պատմական միջավայրի հետ: «Ընթերցանության երրորդ ցիկլը» վերջացնելուց հետո ստուգեք այս տեղեկությունը:
2. Ամեն գլխի սկզբում կան համատեքստային հասկացություններ: Սրանք կօգնեն ձեզ տեսնելու, թե ինչպես է կառուցված գրականական բաժինը:
3. Ամեն գլխի կամ հիմնական գրականական բաժնի սկզբում տրված են մի քանի պարբերության բաժանումներ արդի թարգմանություններից և դրանց պատկերավոր լուսաբանումները.

- ա. Աստվածաշնչի Միացյալ Ընկերության Հունարեն տեքստը, չորրորդ խմբագրություն (UBS⁴)
- բ. Նոր Ամերիկյան Ստանդարտ Աստվածաշունչը, խմբագրված 1995 (NASB)
- գ. Նոր Քինգ Չեյմս Տարբերակը (NKJV)
- դ. Նոր Վերանայված Ստանդարտ Տարբերակը (NRSV)
- ե. Այսօրվա Անգլերեն Տարբերակը (TEV)
- զ. Երուսաղեմի Աստվածաշունչը (JB)

Պարբերությունների բաժանումները ներշնչված չեն և պետք է հիմնավորվեն ըստ համատեքստի: Իրարից տարբերվող թարգմանական տեսություններ և աստվածաբանական տեսանկյուններ մի քանի թարգմանությունների հետ համեմատելով հնարավորություն ենք ունենում վերլուծելու բնագրի հեղինակի մտքերի ենթադրյալ կառուցվածքը: Ամեն պարբերություն ունի մեկ հիմնական ճշմարտություն: Չի կարելի մեկնաբանել, քարոզել կամ սովորեցնել մի պարբերությունից պակաս հատված: Նաև հիշեք, որ ամեն պարբերություն կապված է նախորդ և հաջորդ պարբերության հետ: Այդ իսկ պատճառով այդքան կարևոր է ամբողջ գրքի պարբերությունների բաժանումը: Մենք պետք է կարողանանք հետևել բնագրի ներշնչված հեղինակի կողմից հաղորդած թեմայի տրամաբանական հաջորդականությանը:

4. Բոքի գրառումները հետևում են ըստ համարների մեկնաբանության մոտեցմանը: Սա մեզ ստիպում է հետևել բնագրի հեղինակի մտադրությանը: Այդ գրառումները տեղեկություններ են ապահովում մի քանի ոլորտներից.
 - ա. գրական համատեքստից
 - բ. պատմական, մշակութային հասկացություններից
 - գ. քերականական տեղեկություններից
 - դ. բառային սերտոդություններից
 - ե. համապատասխան գուգահեռ հատվածներից
5. Մեկնաբանության ընթացքում որոշ տեղերում ՆԱՍՍ (NASV, թարմեցված 1995-ին) թարգմանությանը կրթացնեն մի քանի այլ ժամանակակից թարգմանության տարբերակներ.
 - ա. Նոր Քինգ Չեյմս Տարբերակը (NKJV), որը հետևում է “Textus Receptus”-ի տեքստային ձեռագրերին:
 - բ. Նոր Վերանայված Ստանդարտ Տարբերակը (NRSV), որը բառ-առ-բառ վերանայում է Վերանայված Ստանդարտ Տարբերակի Եկեղեցիների Ազգային Խորհրդից:
 - գ. Այսօրվա Անգլերեն Տարբերակը (TEV), որը Ամերիկյան Աստվածաշնչյան Ընկերության համարժեք դինամիկ թարգմանությունն է:
 - դ. Երուսաղեմի Աստվածաշունչը (JB), որը Ֆրանսիական Կաթոլիկ դինամիկ համարժեք թարգմանության վրա հիմնված Անգլերեն թարգմանությունն է:
6. Նրանց, ովքեր չեն կարդում հունարեն, անգլերեն թարգմանությունների համեմատությունները կօգնեն ճանաչելու տեքստում առկա խնդիրները.
 - ա. ձեռագրային փոփոխությունները
 - բ. բառի այլընտրանքային նշանակությունները
 - գ. քերականորեն բարդ տեքստերը և կառուցվածքը
 - դ. խրթին տեքստերը, թեև անգլերեն թարգմանությունները չեն կարող լուծել այս խնդիրները, այլ միայն թիրախավորում են տվյալ հատվածները ավելի խորը և մանրակրկիտ ուսումնասիրության համար
 - ե. Յուրաքանչյուր գլխի վերջում տրված են թեմատիկ քննարկումներ, որոնք փորձում են թիրախավորել այդ գլխի հիմնական մեկնաբանության թեմաները:

ԵՐԲԱՅԵՑԻՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԹՂԹԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

ԲԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԽՈՍՔ

Երբ ուսումնասիրում էի այս գիրքը ավելի ու ավելի ակնհայտ էր դառնում, որ իմ աստվածաբանությունը ճուշակ էր Պողոսի աստվածաբանության հետ: Ինձ համար շատ դժվար է թույլ տալ, որ ՆԿ-յան մյուս տարբեր հեղինակները ներկայացնեն իրենց ներշնչված մտքերը, քանի որ ես հակված եմ դրանք բոլորն էլ դնելու Պողոսյան կատեգորիաների մեջ: Սա հատկապես ակնհայտ է Երբայեցիներում հավատքի մեջ հարատևելու թեմայի շուրջ դրված շեշտադրությամբ: Երբայեցիների գրքում հավատքը դատաիրավական կարգավիճակ չէ (հավատքով արդարացում), այլ մինչև վերջ հավատարմության կյանք (Եբր.11-12):

Վախենում եմ, որ Երբայեցիների գրքից ինձ տանջող հարցերը, երբևէ իր իսկ հեղինակի կողմից չէր էլ հարցադրվում (ոչ էլ Պետրոսի կամ Հակոբոսի կողմից): Երբայեցիների գիրքը բոլոր մյուս ՆԿ-յան գրքերի պես հազվադեպ փաստաթուղթ է: Ես պետք է թույլ տամ, որ հեղինակն ինքը խոսի, անգամ երբ նա ին անհարմար դրության մեջ է դնում, անգամ երբ նա չի օգտագործում իմ ամենասիրելի կատեգորիաները կամ նույնիսկ արմատապես վնասում է այս կատեգորիաներին: Ես չեմ համարձակվում ներշնչված ՆԿ-յան հեղինակի պատգամը փոխարինել իմ սխտեմատիկ աստվածաբանությամբ:

Ես նախընտրում եմ ապաշխարել իմ աստվածաբանական դոգմատիզմից և ապրել ՆԿ-յան լարվածության մեջ, եթե անգամ այն լիարժեք կերպով չեմ հասկանում կամ սիրում: Ես վախենում եմ, որ հանկարծ ՆԿ-ը չդիտարկեմ ժամանակակից ավետարանական, փոխակերպիչ ցանցի միջով: Ես ցանկանում եմ հաստատել աստվածաշնչյան խոստումները՝ Աստծո սիրո, հոգատարության և պահպանման գործության խոստումները, և միաժամանակ ՆԿ-յան հեղինակների հզոր հորդորներով և լիագործությամբ էլ դատապարտված եմ: Ես չափազանց շատ կարիք ունեմ լսելու Երբայեցիներին ուղղված նամակը, սակայն այն շատ ցավոտ է: Ես ուզում եմ ետ մղել լարվածությունը: Ենթադրում եմ, որ իրականում, ես կամենում եմ հաստատել ձրի փրկությունը և Քրիստոնեական կյանքի բարձր արժեքը: Սակայն որտե՞ղ գծեմ այդ սահմանը, երբ իդեալականը հնարավոր չէ տեսնել: Արդյո՞ք Աստծո հետ հավիտենական փոխհարաբերությունը սկզբնական հավատքի արձագանքն է, թե հարատևող հավատքի արձագանքը: Երբայեցիների նամակը հստակ սահմանում է հարատևող հավատքի պատասխանի լիագործությունը: Քրիստոնեական կյանքը դիտարկվում է վերջից և ոչ թե սկզբից:

Այս ասելով այն նկատի չունի գործերի վրա հիմնված փրկություն, այլ գործերի վրա հիմնված հաստատում՝ ապացույց: Հավատքը վկայությունն է և ոչ թե մեխանիզմը՝ միջոցը (որը շնորհքն է): Հավատացյալները գործերով չեն փրկվում, այլ գործերի համար: Գործերը փրկության միջոց չեն, այլ փրկության արդյունք: Աստվածավախ, հավատարիմ, ամենօրյա Քրիստոսակերպության կյանքը ինչ-որ գործ չէ, որ անում ենք, այլ այն է, թո ով ենք մենք Նրա մեջ: Եթե չկա փոխված և փոխող հավատքի կյանքի, ապա չկա մեր փրկության վկայությունը, չկա հավատացյալի համար փրկության երաշխիք: Միայն Աստված գիտի մարդու սիրտը և իրավիճակները: Վստահությունը տրված է հավատքի կյանքի մեջ որպես գործընկեր, և ոչ թե սկզբնական աստվածաբանական հաստատում, որը գուրկ է ապրելակերպի վկայությունից:

Իմ աղոթքն է, որ թույլ տանք ՆԿ-յան այս ներշնչված հեղինակին մեզ հետ պարզ խոսելու և ոչ թե Երբայեցիների գիրքը աստվածաբանական ծանոթագրության համակարգված աստվածաբանության շարքում դնելու, լինի դա Կալվինիստական, թե՛ Հայկական:

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Գիրքը, իր պատգամը փոխանցելու համար կիրառում է ՀԿ տեքստեր՝ մեկնաբանված ռաբբիական հերմենևտիկայի միջոցով: Որպեսզի հասկանանք բնագրի հեղինակի մտադրությունը, այս գիրքը պետք է մեկնաբանվի առաջին դարի ռաբբիական Հուդայականության և ոչ թե արևմտյան մտածելակերպի լույսի ներքո:

Բ. Այս գիրքը սկսում է որպես քարոզ (որը չունի ոչ մի ողջույնի խոսք կամ հատուկ բարևներ) և ավարտվում է նամակի պես (Պողոսին յուրահատուկ փակման խոսքով՝ գլուխ 13): Հնարավոր է, որ ժողովարանի ինչ-որ քարոզիչ այն վերածել է նամակի: Հեղինակն իր գիրքն անվանում է «հորդորանքի խոսք» Եբր.13:22-ում: Այս նույն արտահայտությունը կիրառվում է նաև Գործք 13:15-ում մի քարոզի համար:

Գ. Սա Նոր Կտակարանյան գաղափարական մեկնաբանություն է Մովսիսկան ուխտի շուրջ.
1. ՀԿ-ի բավականին հեղինակավոր դիտարկմամբ

2. Հին և Նոր Կտակարանների համեմատություն
3. Միակ ՆԿ-յան գիրքը, որը Հիսուսին անվանում է Քահանայապետ

Դ. Այս գիրքը լի է ետ նահանջելու («ետ քաշվել» տես՝ Եբր.10:38) կամ նորից Հուդայականության վերադառնալու դեմ զգուշացումներով (այսինքն՝ գլուխներ 2, 4, 5, 6, 10, 12; տես՝ *Ոչ Դյուրին Փրկություն* Ռ. Ս. Գլեյզ, /No Easy Salvation by R. C. Glaze, Jr./ հրատարակված Insight Press կողմից):

Ե. Չնայած որ այն չափազանց ընդհանրացված է, այն օգնում է տեսնել Պողոսին փրկությունը որպես ամենակալ Աստծո ավարտուն գործ շեշտադրելիս (այսինքն՝ հավատքով արդարացումը), որը հաստատում է փրկության վստահությունը որպես սկզբնական ճշմարտություն (այսինքն՝ Հռոմեացիների 4): Պետրոսը, Հակոբոսը և 1 և 2 Հովհաննեսի նամակները շեշտադրում են Նոր Ուխտի շարունակական պատասխանատվությունները և անդում են, որ փրկության վստահությունը ամենօրյա է, որը հաստատվում է փոխված կամ փոխող կյանքի միջոցով: Եբրայեցիների հեղինակը, շեշտադրելով հավատարմության կյանքը (տես՝ գլուխ 11) հիմնավորում է փրկության վստահությունը «մինչև կյանքի վերջ» տեսանկյունից: Մերօրյա արևմտամետ ռացիոնալ մտածելակերպը հակված է բնեռացնելու այս տեսանկյունները, մինչ ՆԿ-յան հեղինակները՝ մեկ աստվածային Հեղինակի միջոցով (այսինքն՝ Սուրբ Հոգու) կամենում են դրանք պահել լարվածության մեջ և հիմնավորել բոլոր երեքն էլ: Վստահությունը երբեք էլ նպատակ չի եղել, այլ Աստծո խոստումների վրա գործող հավատքի արդյունք:

ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Չնայած, որ Եբրայեցիներին ուղղված նամակի հեղինակի հարցը վիճահարույց է, մի քանի գնոստիկ աշխատություններ (այսինքն՝ *Ճշմարտության Ավետարանը*, *Փիլիպպոսի Ավետարանը* և *Հովհաննեսի Այտլորիֆան /Gospel of Truth, Gospel of Philip and The Apocrypha of John/*) այն մի քանի անգամ մեջբերում են, որը ցույց է տալիս, որ այն համարվում էր երկրորդ դարի հեղինակավոր Քրիստոնեական աշխատությունների մի մասը (տես՝ Անդրեա Հեմբոլդի *Նեգ Համմադիի Գնոստիկ տեքստերը և Աստվածաշունչը*, էջ՝ 91 /Andrea Helmbold's *The Nag Hammadi Gnostic Texts and the Bible/*):

Բ. Արևելյան Եկեղեցին (Ալեքսանդրիա, Եգիպտոս) ընդունեց Պողոսի հեղինակ լինելը, որը երևում է վաղ շրջանի P⁴⁶ պապիրուսե ձեռագրում Պողոսի գրքերի ցանկում այն նշելուց: Այս ձեռագիրը կոչվում է Չեսթեր Բիթի Պապիրուս և կրկնօրինակվել է երկրորդ դարի վերջում: Այն Եբրայեցիների գիրքը թվարկում է Հռոմեացիներից հետո: Որոշ ալեքսանդրիացի առաջնորդներ ճանաչել են Պողոսի հեղինակ լինելու հետ կապված գրական խնդիրները:

1. Ալեքսանդրիացի Կլեմենտը (մ. թ. 150-215, Եվսեբիոսի կողմից մեջբերված) ասում է, որ Պողոսը գրեց այն Եբրայերենով, իսկ Ղուկասը թարգմանեց հունարենի:
2. Օրիգանուսը (մ. թ. 185-253) անդում է, որ մտքերը Պողոսինն են, սակայն գրվել է հետագա մի հետևորդի կողմից, ինչպես օրինակ Ղուկասը կամ Հռոմեացի Կլեմենտը:

Գ. Մուրատորիան Կտոր /Փրագմենտ/ կոչվող Արևմտյան Եկեղեցու կողմից որդեգրված Պողոսի նամակների ցանկում այս գիրքը բացակայում է (ՆԿ-յան կանոնավոր գրքերի մի ցանկ Հռոմից, մոտ մ. թ. 180-200 թթ.):

Դ. Ինչ գիտենք հեղինակի մասին

1. Ըստ երևույթին նա եղել է երկրորդ սերնդի հրեա Քրիստոնյա (Եբր.2:3):
2. Նա մեջբերում է ՀԿ-ի հունարեն թարգմանությունից, որը կոչվում է Սեպտուագինտա:
3. Նա կիրառում է հին խորանի ընթացակարգերը, և ոչ թե տաճարի ծիսակարգերը:
4. Նա գրում է, օգտագործելով դասական Հունարենի քերականություն և շարահյուսություն (այս գիրքը պատոնական չէ: Այն կենտրոնանում է ՀԿ-ի վրա և ոչ թե Ֆիլեո սիրո):

Ե. Այս գրքի հեղինակը հայտնի չէ, սակայն նամակը ստացողները լավ ճանաչում էին նրան (տես՝ Եբր.6:9-10; 10:34; 13:7,9):

Զ. Որտեղից են այս կասկածները Պողոսի Եբրայեցիների թղթի հեղինակը լինելու շուրջ

1. Գրելաճը շատ է տարբերվում (բացի գլուխ 13-ից) Պողոսի մյուս գրքերից:
2. Բառապաշարը տարբեր է:

3. Աննկատ տարբերություններ կան բառային և արտահայտման կիրառության և շեշտադրության մեջ:
4. Երբ Պողոսը իր ընկերներին կամ գործընկերներին «եղբայր» է անվանում, առաջին նշում է այդ անձի անունը (տես՝ Հռոմ.16:23; 1 Կորնթ.1:1; 2 Կորնթ.1:1; 2:13; Փիլ.2:25) սակայն Եբր.13:23 գրված է «մեր եղբայր Տիմոթեոսը»:

Է. Հեղինակը հանդիսանալու տեսությունները

1. Ալեքսանդրիացի Կլեմենտը իր *Հայրթիպոզներ* (Clement of Alexandria *Hypotyposes*) գրքում (մեջբերված է Եվսեբիոսի կողմից) հավատում է, որ Ղուկասն է թարգմանել Պողոսի բնագիր նամակը Եբրայերենից հունարեն (նա գերազանց տիրապետում էր Կոյնե Հունարենին):
2. Օրիգենն ասում էր, որ կամ Ղուկասը, կամ էլ Հռոմի Կլեմենտն են գրել այն, սակայն հետևել են Պողոսի ուսմունքին:
3. Ջերոմը և Ավգուստինոսը ընդունում էին, որ հեղինակը Պողոսն էր, միայն թե գիրքը համապատասխաներ Արևմտյան Եկեղեցու կողմից Կանոնի մեջ ընդունվելու համար:
4. Տերտուլիանոսը (*De Pudic.* 20) հավատում էր, որ Բառնաբասն էր (Պողոսին ընկերակցող մի Ղևտացի) գրել այն:
5. Մարթին Լյութերն ասում էր, որ Պողոսին ընկերակցող Ապոդոս անունով Ալեքսանդրիացի մի կիրթ մտավորական է գրել այն (տես՝ Գործք 18:24):
6. Կալվինն ասում էր Հռոմեացի Կլեմենտը (առաջին անգամ մեջբերված է մ.թ. 96-ին) կամ Ղուկասն էր հեղինակը:
7. Ադոլֆ վոն Հարները ասում էր, որ այն գրել են Ալյուդասն ու Պրիսկիլան են (նրանք սովորեցնում էին Ապոդոսին ավետարանը և Պողոսի ու Տիմոթեոսի գործընկերներն էին, տես՝ Գործք 18:26):
8. Պր. Ուիլյամ Ռամսեյը ասում էր, որ Փիլիպոսն էր (ավետարանիչ) այն գրել Պողոսի համար, մինչ Պողոսը Կեսարիայի բանտում էր:
9. Ուրիշներն էլ պնդում էին, որ Փիլիպոսը կամ Շիդան էին (Միվղանոսը):

ՍՏԱՅՈՂՆԵՐԸ

Ա. Վերնագիրը՝ «Եբրայեցիներին» հասցեագրված է Եբրայեցի ազգին, հետևաբար գիրքը գրված է բոլոր հրեաների համար (տես՝ Ալեքսանդրիացի Կլեմենտ, մեջբերված Եվսեբիոսի կողմից՝ *Eccl. Hist.* VI, 14 /Եկեղեցու Պատմություն/):

Բ. Ներքին վկայությունը համաձայն Ռ. Ս. Գլեյզ Կրոստերի՝ *Ոչ Հեշտ Փրկություն* (R. C. Glaze, Jr.'s *No Easy Salvation*) գրքի պնդում է, որ այս գիրքը հասցեագրված է հավատացյալ հրեաների հատուկ մի խմբի կամ ինչ-որ մի ժողովարանի (տես՝ Եբր.6:10; 10:32-34; 12:4; 13:7,19,23):

1. Ըստ գրքում տրված բազմաթիվ ՀԿ-յան մեջբերումների և թեմաների կարծես թե այս մարդիկ հրեա հավատացյալներ էին (տես՝ Եբր.3:1; 4:14-16; 6:9; 10:34; 13:1-25):
2. Նրանք որոշ հալածանքներով էին անցել (տես՝ Եբր.10:32; 12:4): Հռոմեական կառավարության կողմից Հուդայականությունը ճանաչված էր որպես օրինական կրոն, մինչ հետագայում՝ առաջին դարում, Զրիստոնեությունը համարվում էր ապօրինի, երբ այն առանձնացավ սինագոգի պաշտամունքից:
3. Նրանք երկար ժամանակ էր, որ հավատացյալներ էին, սակայն ոչ հասուն (տես՝ Եբր.5:11-14): Նրանք վախենում էին Հուդայականությունից լիովին կտրվելուց (տես՝ 6:1-2):

Գ. Եբր.13:24-ի երկիմաստ տեքստը ակնարկում է, որ այն գրվել է (1) Իտալիայից կամ էլ (2) Իտալիա՝ հավանաբար Հռոմ ուղարկվելու համար:

Դ. Նամակը ստացողների գտնվելու վայրը կապված է հեղինակի վերաբերյալ տարբեր տեսությունների հետ:

1. Ալեքսանդրիա՝ Ապոդոս
2. Անտիոք՝ Բառնաբաս
3. Կեսարիա՝ Ղուկաս կամ Փիլիպոս
4. Հռոմ՝ Հռոմեացի Կլեմենտ և ըստ Եբր.13:24-ում Իտալիայի մասին ակնարկի
5. Իսպանիա՝ սա Լիրացի Նիկողոսի տեսությունն է (մ.թ. 1270-1340):

ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Հռոմեացի Գեներալ (հետագայում Կայսր) Տիտոսի կողմից նախքան Երուսաղեմի կործանումը՝ մ.թ. 70-ին.

1. հեղինակը անվանացի նշում է Պողոսի գործընկեր Տիմոթեոսին (տես՝ Եբր.13:23)
2. հեղինակն անդրադառնում է Տանարում շարունակվող զոհաբերություններին (տես՝ Եբր.8:13; 10:1-2)
3. հեղինակը նշում է հալածանքի մասին, որն ըստ էության համընկնում է Ներոնի օրերի հետ (մ.թ.54-68)
4. հեղինակը քաջալերում է ընթերցողներին չվերադառնալ հուդայականությանն ու դրա ծիսակարգերին

Բ. Մ.թ. 70 թ-ից հետո

1. հեղինակը օգտագործում է խորանի և ոչ թե Հերովդեսի տանարի ծեսերը
2. հեղինակը նշում է հալածանքի մասին՝
ա. հավանաբար Ներոնի օրոք (տես՝ Եբր.10:32-34)
բ. ավելի ուշ՝ հավանաբար Դոմիտիանի օրոք (տես՝ Եբր.12:4-13)
3. հնարավոր է գիրքը վերաբերում է ավելի ուշ առաջին դարում ռաբբիական հուդայականության արթնությանը (Չամնիայից գրքերը)

Գ. Մ. թ. 95-ից առաջ, քանի որ Հռոմի Կլեմենտը մեջբերում է այս գիրքը

ՆՊԱՏԱԿԸ

Ա. Հրեա Քրիստոնյաները քաջալերվում են թողնել ժողովարանը և հրապարակայնորեն (լիարժեք կերպով) միանալ եկեղեցուն (տես՝ Եբր.13:13):

Բ. Հրեա Քրիստոնյաները քաջալերվում են վերցնելու ավետարանի միսիոներական լիազորությունը (տես՝ Մատթ.28:19-20; Ղուկ.24:47; Գործք 1:8):

Գ. Հրեա անհավատները, որոնք կապի մեջ էին այս Քրիստոնյա հրեաների հետ, 6 և 10 գլուխների գլխավոր թեմաներն են: Նկատեք երեք խմբերի առկայությունը՝ «մենք», «դուք» և «նրանք»: Նրանց զգուշացվում է, որ անձամբ արձագանքեն իրենց Քրիստոնյա ընկերների և հավատակիցների կյանքում տեղի ունեցած բազմաթիվ և ակնառու վկայություններին:

Դ. Այս ենթադրյալ պատմական կառուցվածքը վերցված է Ռ. Մ. Գլեյզ Կրոստերի *Ոչ Հեշտ Փրկություն* գրքից.

«Ենդիքը Քրիստոնյա մեծամասնության և ոչ-Քրիստոնյա փոքրամասնության միջև եղած լարվածությունը չէր: Ծիշտ էր հենց հակառակը: Այս համայնքի Հրեա Քրիստոնյաները այն շատ փոխզիջումների էին գնացել իրենց հավատքի և ծառայության զգացողության մեջ, որ այս երկու խմբերը կարող էին միասին երկրպագություն կատարել որպես մեկ համայնք: Խմբերից և ոչ մեկը չէր անհանգստանում մյուս խմբի խղճմտանքի մասին: Այլևս Քրիստոնյա խմբի քարոզչության միջոցով սինագոգում գտնվող չփրկված անդամները հավատքի համոզման կամ որոշման չէին գալիս: Քրիստոնյաները լճացած վիճակում էին, քանի որ չէին կամենում ընդունել համարձակ Քրիստոնեական ապրելակերպի լիարժեք պահանջները: Անհավատները կարծրանում էին մշտապես մերժված լինելու, մինչև իսկ կատարյալ անտարբերության մատնվելու պատճառով: Այս խմբերն այժմ դարձել էին հարմար անկողնակիցներ:

Քրիստոնյա խմբի դժկամությունը «կատարյալին գալու» (6:1) հարցում, երկու երևույթների արդյունքն էին հանդիսանում Հուդայականության ավանդույթները բարձր դասելու և Քրիստոնեությանը հարիւր ապրելակերպի համար լիարժեք գին վճարելու դժկամությունը, որը հետզհետե դառնում էր հեթանոսական շարժում» (էջ 23):

ԵՐԲԱՅԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՈՒՐՎԱԳԻԾԸ

Եբր.1:1-3

Եբր.1:4-2:18

Եբր.3:1-4;13; 4:14-5:10

Եբր.6:13-7:28

Եբր.5:11-6:12

Եբր.8:1-10:18

Որդու գերազանցությունը մարգարեներից

Որդու գերազանցությունը հրեշտակներից

Որդու գերազանցությունը Մովսիսական Ուխտից

Որդու գերազանցությունը Ահարոնի Քահանայությունից

Հավատացյալ հրեաների գերազանցությունը անհավատներից

Որդու գերազանցությունը Մովսիսական Ուխտի օրենքներից

Սա ռաբբիական հերմենևտիկայի մի օրինակ է, որը կոչվում է «Ավելի փոքրից դեպի ավելի մեծը»:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը Ճիշտ Կարդալու Ուղեցույց»)

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Հետևաբար, մեկ անգամ նստելով կարդացեք աստվածաշնչյան ամբողջական գիրքը: Սահմանեք ամբողջ գրքի կենտրոնական թեման ձեր իսկ բառերով:

- 1. Ամբողջ գրքի թեման
- 2. Գրականական ժանրը

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը Ճիշտ Կարդալու Ուղեցույց»)

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Հետևաբար, մեկ անգամ նստելով երկրորդ անգամ կարդացեք աստվածաշնչյան ամբողջական գիրքը: Ընդգծեք հիմնական թեմաները և թեման արտահայտեք մի նախադասությամբ:

- 1. Առաջին գրական բաժնի թեման
- 2. Երկրորդ գրական բաժնի թեման
- 3. Երրորդ գրական բաժնի թեման
- 4. Չորրորդ գրական բաժնի թեման
- 5. Եվ այլն

ԵՔՐԱՅԵՑԻՆԵՐԻ 1

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ*

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Աստված խոսեց Իր Որդու միջոցով	Աստժո գերագանց հայտնությունը	Նախաբան	Աստժո Խոսքը Իր Որդու միջոցով	Մարմնավորված Աստժո Որդու Մեծությունը
1:1-4	1:1-4	1:1-4	1:1-3	1:1-4
Որդին Հրեշտակներից գերագանց է	Որդին հրեշտակներից վեր մեծարված	Քրիստոսի գերագանցությունը հրեշտակներից	Աստժո Որդու Մեծությունը	Որդին հրեշտակներից ավելի մեծ է
		(1:5-2:18)		(1:5-2:18)
1:5-14	1:5-14	1:5-14	1:4-13	1:5-13
			1:14	1:14

*Չնայած որ դրանք ներշնչված չեն, պարբերության բաժանումները բնագրի հեղինակի նպատակը հասկանալու համար կարևոր են: Յուրաքանչյուր ժամանակակից թարգմանություն բաժանել և ամփոփել է պարբերությունները: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ կենտրոնական թեմա, ճշմարտություն կամ գաղափար: Յուրաքանչյուր թարգմանության տարբերակ ընդգրկում է այդ թեման իր առանձնահատկությամբ: Երբ կարդում եք տեքստը, ինքներդ ձեզ հարցրեք, թե որ թարգմանությունն է համապատասխանում տվյալ թեմայի և համարի բաժանման ձեր հասկացողությանը:

Յուրաքանչյուր գլխում մենք պետք է կարդանք առաջին հերթին Աստվածաշունչը և փորձենք հասկանալ դրա թեմաները (պարբերությունները), սպա համեմատենք մեր հասկացածը ժամանակակից թարգմանությունների հետ: Մենք կարող ենք իրապես հասկանալ Աստվածաշունչը

միայն այն ժամանակ, երբ հասկանում ենք բնագրի հեղինակի մտադրությունը՝ հետևելով նրա տրամաբանությանը և ներկայացմանը: Միայն բնագրի հեղինակն է եղել ներշնչված. ընթերցողները իրավունք չունեն փոխելու կամ ձևափոխելու պատգամը: Աստվածաշնչի ընթերցողները պատասխանատվություն են կրում կիրառելու ներշնչված ճշմարտությունը իրենց առօրյայում և կյանքերում:

Նկատել, որ բոլոր տեխնիկական տերմինները և հասկանումները լիարժեք կերպով բացատրվում են հետևյալ բաժիններում՝ Հունարեն Թերականական Կառուցվածքի Համառոտ Սահմանումները, Տերապային Քննադատություն և Տերմինաբանական Բառարան:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու Ուղեցույց»)

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Առաջին պարբերությունը Հիսուսի տիեզերական և փրկարար հաղթանակների վերաբերյալ բանաստեղծական ներկայացում է: Նա է Տերը ամբողջ արարչագործության և հատկապես այս մոլորակի Տերը: Այս ամենը ներկայացվում է յոթ պատկերավոր արտահայտության մեջ: Այն համարվում է ՆԿ-ի բարձրագույն Քրիստոլոգիաներից մեկը (տես՝ Հովհ.1:1-18; Փիլ.2:6-11 և Կող.1:15-17):

1. Հոր արարչագործության ժառանգորդը (Եբր.1:2)
2. Հոր արարչագործության գործակալը (Եբր.1:2)
3. Հոր փառքի արտացոլումը (Եբր.1:3)
4. Հոր էության ստույգ պատկերը (Եբր.1:3)
5. Հոր արարչագործությունը պահողը (Եբր.1:3)
6. Հոր արարչագործության համար ներման միջոցը (Եբր.1:3)
7. Հոր կողմից ուղարկված թագավորական և քահանայական Մեսիան (Եբր.1:3)

Բ. 1-4 համարները հիմնականում ներկայացնում են, թե ինչպես է Աստված խոսել մեզ հետ մի նոր ձևով Իր Որդու՝ Նազովրեցի Հիսուսի միջոցով: Մենք այլևս հայտնությունը չենք ստանում Աստծո ծառաների միջոցով (այսինքն՝ ՀԿ-ի մարգարեների) մաս-մաս, այլ այժմ ստանում ենք ամբողջական հայտնության միջոցով և որպես ընտանիքի անդամ («որդի» տես՝ Եբր.1:2; 3:6; 5:8; 7:28):

Գ. Եբրայեցիների 1:1-3 ներկայացնում է Հիսուսին՝ Օծյալին, որպես ՀԿ-ի բոլոր երեք օծության պաշտոնների իրականացում (այսինքն՝ մարգարե, քահանա և թագավոր):

Դ. Երկրորդ պարբերությունը (Եբր.1:5-14) շարունակում է Հիսուսի գերազանցության թեման: Եբր. 1:1-4-ում Նա ավելի գերազանց հայտնություն է, քան մարգարեները. Եբր.1:5-14-ում Նա ավելի գերազանց միջնորդ է, քան հրեշտակները, որոնք հաստատվում են Մեպտուազինտայից ՀԿ-յան յոթ տարբեր տեքստերի միջոցով (հիմնականում Սաղմոսներից)՝ Սաղմոս 2:7; 2 Թագ.7:14; Սաղմ.97:7; Սաղմ.104:4; Սաղմ.45:6-7; Սաղմ.102:25-27 և Սաղմ.110:1:

Ե. Ուշադրություն դարձրեք, որ հեղինակը շատ զգուշությամբ է շարադրում իր տեքստը: Յոթը կատարելության թիվն է հրեական թվաբանության մեջ (այսինքն՝ Ծննդոց 1-ի յոթ օրերը):

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 1:1-4

¹Աստված, որ շատ անգամներ, շատ կերպերով սկզբից խոսեց մեր հայրերի հետ մարգարեների միջոցով, ²այս վերջին օրերում մեզ հետ խոսեց Իր Որդու միջոցով, Ում ամեն բանի ժառանգ կարգեց, Ում միջոցով նույնպես աշխարհներն ստեղծեց, ³Որն Իր փառքի լույսն ու Իր էության ստույգ արտահայտությունը լինելով և ամենինչ Իր գործության Խոսքով պահելով, երբ Իր անձով մեր մեղքերը քավեց, նստեց բարձունքներում՝ Մեծության աջ կողմում, ⁴հրեշտակներից այնքան ավելի լավ եղավ, որքան նրանցից ավելի գերազանց անուն ժառանգեց:

1:1 «Աստված, որ շատ անգամներ ...խոսեց» «Աստված» բառը Հունարեն նախադասության մեջ առաջինը չէ, հետևաբար այս տեքստը չի շեշտադրում հայտնության վարդապետությունը, այլ անցյալում եղած հայտնության կերպը (առիստ ներգործական դերբայ):

■ **«մարգարեների միջոցով»** Հրեաները հավատում են, որ Սուրբ Գիրքը գրել են մարգարեները: Ահա թե ինչու էր Մովսեսը համարվում որպես մարգարե (տես՝ 2 Օր.18:15) և թե ինչու էին հրեաները Հեսու գրքից մինչև Թագավորացները պիտակել որպես «վաղ մարգարեներ»: Հետևաբար, այս արտահայտությունը չի վերաբերում միայն ՀԿ-յան մարգարեներին, այլ նաև ՆԿ-յան հեղինակներին:

«Մարգարեների միջոցով» արտահայտությունը (հ. 1) զուգահեռվում է «Իր Որդու միջոցով» (հ. 2) արտահայտությանը: Ակնհայտ հակադրություն կա այս երկու հայտնությունների միջև: Մեկը ծառա էր, իսկ մյուսը՝ ընտանիքի անդամ: Առաջինը միայն մասնակի էր, իսկ երկրորդը՝ լիարժեք և կատարյալ (տես՝ Կող.1:15-17):

NASB	«շատ անգամներ, շատ կերպերով»
NKJV	«տարբեր ժամանակներում և տարբեր կերպերով»
NRSV	«շատ և բազմաթիվ կերպերով»
TEV	«շատ անգամներ և շատ կերպերով»
NJB	«անցյալի շատ պահերի և շատ կերպերով»

ՀԿ-յան հայտնությունը իր տեսակով և բովանդակությամբ մաս-մաս էր՝ հատիկ-հատիկ: Այս արտահայտությունը Եբր.1:1 հունարեն տեքստում դրված է նախադասության սկզբնամասում, որպես-

գի արտահայտի հեղինակի շեշտադրությունը: Յուրաքանչյուր ՀԿ հեղինակ ուներ կարևոր, սակայն մասնակի պատգամ:

Աստված Իրեն հայտնեց.

1. Մովսեսին՝ այրվող թփի միջոցով
2. Քահանայապետին՝ Ուրիմի և Թումիմի միջոցով
3. Եղիային՝ հանդարտ, մեղմ ձայնի մեջ
4. Եզեկիելին՝ տեսիլքի մեջ
5. Ովսեային՝ վատ ամուսնության միջոցով
6. Հովնանին՝ ձկան միջոցով

1:2 «այս վերջին օրերում» Այս ժամանակահատվածը մի քանի անուններով է հայտնի՝

1. Վերջին օրեր /օրերի վախճան/, Թվոց.24:14; 2 Օր.8:16; Դան.2:28; 10:14
2. Վերջին օրերում, Երեմ.23:20; 30:24; 49:39; Եզեկ.38:8,16; Ովս.3:5; Հովել 2:28 (Գործք 2:17); Հովհ.6:39,40,44,54; 11:24; 12:48; 2 Տիմ.3:1; Հակ.5:3
3. Վերջին Ժամանակում, 1 Պետ.1:5
4. Ժամանակների վերջում, 1 Պետ.1:20
5. Վերջին Օրերին, 2 Պետ.3:3
6. Վերջին ժամ/ժամանակ, 1 Հովհ.2:18

Վերջին Օրերի վախճանը «Տիրոջ օրն է» (այսինքն՝ «վախճանը» Մատթ.13:39,40; 24:3; 28:20; Եբր.9:26):

Միջաստվածաշնչյան ժամանակաշրջանի հրեաները տեսնում էին երկու դարաշրջաններ՝ իրենց ժամանակի ապստամբության և մեղքի չար դարաշրջանը (սկսած Ծննդոց 3-ից) և գալիք արդարության դարաշրջանը, որը սկիզբ է առնելու Սուրբ Հոգու գործությամբ Մեսիայի գալստյամբ: ՀԿ-ը շեշտադրում է Մեսիայի գալուստը դատաստանով և իշխանությամբ, որպեսզի հաստատի նոր դարաշրջանը: Սակայն նրան չհաջողվեց հստակ տեսնել Հիսուսի առաջին գալուստը որպես (1) «Չարչարվող Ծառայի» Եսայի 53; (2) Չաք.9:9-ում ավանակի վրա հեծնած Խոնարի մեկի և (3) Չաք.12:10-ի խոցվածի: ՆԿ-յան առաջադեմ հայտնության միջոցով այժմ մենք գիտենք, որ Աստված ծրագրել էր Մեսիայի երկու գալուստ: Մեսիայի մարմնավորման (առաջին գալուստը) և երկրորդ գալստյան միջև ժամանակահատվածը ընդգրկում է հրեական երկու դարաշրջանների համընկնումը: Այն կանխասված էր ՆԿ-ում «վերջին օրեր» արտահայտության մեջ: Մենք այս դարաշրջանում ենք արդեն իսկ 2000 տարուց ավելի:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՅՍ ԵՎ ԳԱԼԻՔ ԴԱՐԱՇՐՋԱՆՆԵՐԸ
(SPECIAL TOPIC: THIS AGE AND THE AGE TO COME)**

ՀԿ-ի մարգարեները նայում էին ապագային որպես ներկայի երկարացված տևողություն: Նրանց համար ապագան կլինի այն ժամանակ, երբ աշխարհագրական Իսրայելը կվերականգնվի: Համենայն դեպս, նույնիսկ դա նրանք տեսնում էին որպես նոր օր (տես՝ Ես.65:17; 66:22): Աբրահամի սերունդների կողմից (անգամ գերությունից հետո էլ) Եհովայի շարունակ կամովի մերժված լինելը մի նոր հարացույց ձևավորեց հրեական միջկտակարանյան ապոկալիպտիկ գրականության մեջ (այսինքն՝ 1 Ենովք; 4 Եզրաս; 2 Բարուք): Այս գրքերը սկսեցին գատորոշել երկու դարաշրջանները՝ ներկայիս չար դարաշրջանը, որտեղ տիրում է Սատանան և գալիք արդարության դարաշրջանը, որտեղ տիրում է Հոգին և մուտքը կատարել է Մեսիան (հաճախ որպես ուժեղ պատերազմող):

Աստվածաբանության այս դարում (Էսկատոլոգիայի) ակնհայտ զարգացումներ կան: Աստվածաբանները սա անվանում են «առաջադեմ պրոգրեսիվ հայտնություն»: ՆԿ-ը հաստատում է այս երկու դարաշրջանների նոր տիեզերական իրականությունը (այսինքն՝ ժամանակավոր երկբայությունը /դուալիզմ/):

<u>Հիսուս</u>	<u>Պողոս</u>	<u>Եբրայեցիներ</u>
Մատթեոս 12:32	Հռոմեացիս 12:2	1:2
Մարկոս 10:30	1 Կորնթացիս 1:20; 2:6,8; 3:18	6:5
Դուկաս 16:8	2 Կորնթացիս 4:4	11:3
Դուկաս 18:30	Գաղատացիս 1:4	
Դուկաս 20:34-35	Եփեսացիս 1:21; 2:2,7; 6:12	
	1 Տիմոթեոս 6:17	
	2 Տիմոթեոս 4:10	
	Տիտոս 2:12	

ՆԿ-ի աստվածաբանության մեջ այս երկու հրեական դարաշրջանները մասնակիորեն համընկնում են Մեսիայի երկու գալուստների անսպասելի և անտեսված կանխատեսումների պատճառով: Հիսու-

սի մարմնացումը իրականացրեց նոր դարաշրջանի հանդիսավոր բացման մասին ՀԿ-ի մարգարեությունների մեծ մասը (Դան.2:44-45): Մակայն, ՀԿ-ը Նրա գալուստը տեսնում էր նաև որպես Դատավոր և Հաղթող, մինչդեռ Նա առաջին անգամ եկավ որպես Չարչարվող Ծառա՝ (տես՝ Եսայի 53; Չաբ.12:10), խոնարհ ու հեզ (տես՝ Չաբ.9:9): Նա վերադառնալու է իշխանությամբ, այնպես ինչպես ՀԿ-ում է կանխատեսված (տես՝ Հայտնություն 19): Երկու փուլով այսպիսի իրականացումը պատճառ հանդիսացավ, որ Թագավորությունը լինի ներկայում (հանդիսավոր կերպով բացված), սակայն ապագայում (դեռևս ոչ լիակատար): Սա ՆԿ-ի «արդեն»-ի լարվածությունն է, այլ ոչ թե «դեռևս»-ի:

■ **«Իր Որդու»** Այս անարատ խոսքը՝ „որդի,, չպետք է լիներ մեծատառով, քանի որ այստեղ խոսքը վերաբերում է հայտնության կերպին և ոչ թե Հիսուսի տիտղոսին (տես՝ Եբր.3:5-6; 5:8; 7:28): Հիսուսը Սովսեսի կամ մարգարեների պես ծառա չէր, այլ ընտանիքի անդամ (որդի):

■ **«ում /Նա/ կարգեց»** Սա ԱՈՐԻՍՏ /անորոշ կատարյալ ժամանակ/ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ Ե, որն արտահայտում է անցյալում ավարտված գործողություն (սահմանական եղանակ): Ե՛րբ էր Աստված Հիսուսին ժառանգ կարգել: Արդյո՞ք դա տեղի ունեցավ Իր մկրտության ժամանակ (տես՝ Մատթ.3:17), թե հարության (տես՝ Հռոմ.1:4): Այս հարցը հանգեցրեց «որդեգրության» (տես՝ Տերմինաբանական Բառարանը) հերետիկոսությանը, որն ասում էր, որ Հիսուսը Մեսիա դարձավ ժամանակի մեջ ինչ-որ պահի: Մակայն սա հակասում է Հովհ.1:1-18; 8:57-58; Փիլ.2:6-7 և Կող.1:17: Հիսուսը միշտ էլ Աստված է եղել (տես՝ Հովհ.1:1-2), հետևաբար Նրա ժառանգ լինելը նույնիսկ գոյարանական առումով եղել է Իր մարմնացումից առաջ:

■ **«ամեն բանի ժառանգ»** Որպես «Աստծո Որդի», Աստծո յուրահատուկ՝ բացառիկ որդի (տես՝ Հովհ.3:16), Նա է ժառանգը (տես՝ Մատթ.21:33-46; Սաղմ.2:8): Հրաշալիս այն է, որ մեղավոր մարդկությունը Նրան հավատալու միջոցով բաժին է ունենում Իր ժառանգության մեջ (տես՝ Եբր.1:14; 6:12; Հռոմ.8:17; Գաղ.4:1-7; 1 Պետ.1:4):

■ **«Ում միջոցով նույնպես աշխարհներն ստեղծեց»** Միշտ էլ դժվար է հաստատ հասկանալը, թե ինչպես կարելի է իրար հետ իմաստային կապ ունեցող տերմինները մեկնաբանել: Գոյություն ունի միայն որոշակի իմաստաբանական համընկնում հոմանիշների միջև: Ոչնչից արարչագործություն բառի համար հունարեն տեխնիկական տերմինը *kitizō* է, մինչդեռ այս տեքստում *poieō* է, որը նշանակում էր ստեղծել մի բան նախկինում գոյություն ունեցող ինչ-որ նյութից: Արդյո՞ք հեղինակը կիրառում է այս տերմինները որպես հոմանիշներ, թե հատուկ մտադրված կերպով նշում է դրանց տարբերությունը: Կասկածելի կլիներ, եթե նկատի ունենար տեխնիկական տարբերակը, քանի որ աստվածաբանական համատեքստը (այսինքն՝ Եբր.1:3) նկատի ունի արտաբերված՝ ասված խոսքի միջոցով արարչագործությունը (*ex nihilo*, տես՝ Ծննդ.1:6,9,16,20,24,26, սակայն Եբր.2:7-ում Աստված ստեղծեց մարդուն): Տես Ջոն Ուոլթոնի *Ծննդոց Մեկի Կորած Աշխարհը* (John Walton, *The Lost world of Genesis One*) նոր գիրքը:

«Աշխարհ» տերմինը բառացի «դարեր» է (*aiōnos*): Կարող է վերաբերել երկրին (տես՝ Մատթ.28:20) կամ դարերին (այսինքն՝ ժամանակին): Անշուշտ Հիսուսը այս երկուսի Արարիչն է (տես՝ Հովհ.1:3; Կող.1:16; 1 Կորնթ.8:6): Եբրայեցիների հեղինակը կիրառում է երկու տերմիններն էլ՝ *aiōnos* (Եբր.1:2; 6:5; 11:3) և *kosmos* (տես՝ Եբր.4:3; 9:26; 10:5; 11:7,38), ըստ երևույթին որպես հոմանիշ տերմիններ:

1:3

- NASB** «Նա Նրա փառքի պայծառությունն է»
- NKJV** «որը լինելով Նրա փառքի պայծառությունը»
- NRSV, NJB** «Նա Աստծո փառքի արտացոլումն է»
- TEV** «Նա արտացոլում է Աստծո փառքի պայծառությունը»

«Պայծառություն» բառը (*apaugasma*) ՆԿ-ում միայն այստեղ է կիրառվում: Ֆիլոն իր գրքում այն կիրառում է ՅԱՀՎԵի հետ ունեցած Մեսիայի փոխհարաբերության համար, այն իմաստով, որ *logos*-ը աստվածության արտացոլումն էր: Հույն վաղ եկեղեցու հայրերը այն կիրառում էին Քրիստոսի իմաստով, որպես Աստծո արտացոլումը կամ պայծառությունը՝ փայլը: Ընհանուր իմաստով, կարելի է ասել, տեսնել Հիսուսին նույնն է, ինչ տեսնել Աստծուն (տես՝ Հովհ.14:8-9), որպես մի հայելի, որն արտացոլում է ամբողջ արևի լույսը: Եբրայերենում «փառք» տերմինը (*kadob*) հաճախ կիրառվում էր պայծառության իմաստով (տես՝ Ել.16:10; 24:16-17; Ղևտ.9:6):

Այս արտահայտությունը հնարավոր է կապված է Առակաց 8:22-31-ի հետ, որտեղ «իմաստությունը» (տերմինը թե՛ եբրայերենում և թե՛ հունարենում ԻԳԱԿԱՆ սեռի է) անձնավորված է որպես Աստծո առաջին ստեղծագործություն (տես՝ Միքայի 1:4) և արարչագործությունն իրականացնող՝ գործակալ (տես՝ Սողոմանի Բնաստություն 9:9): Այս նույն հասկացությունը զարգանում է Սողոմանի Բնաստություն

7:15-22ա ապոկրիֆալ՝ անկանոն գրքում: Առակաց 8:22-ում իմաստությունը ինքն է ստեղծում ամեն ինչ: Եբրայեցիների 1:25-ում իմաստությունը Ամենակարողի փառքի հստակ արտացոլումն է: Եբր.1:26-ում իմաստությունը հավիտենական լույսի արտացոլումն է, Աստծո գործերի անբիծ հայելին, իսկ Եբր.1:29-ում իմաստությունը լույսի հետ համեմատած (այսինքն՝ արևի և աստղերի) ավելի գերազանց է:

ՀԿ-ում «փառք» բառի համար ավելի տարածված եբրայերեն տերմինը (*kadob*) սկզբնապես կոմերցիոն՝ առևտային բառ էր (վերաբերում էր երկկողմանի կշեռքին), որը նշանակում էր «ծանրություն՝ ծանր լինել»: Այն ամենը ինչ ծանր էր, արժեքավոր կամ ուներ հատուկ գին: Հաճախ Անապատում Դեզերելու ընթացքում պայծառության գաղափարն էր ավելացվում այդ բառին՝ արտահայտելու Աստծո վեհափառությունը (*Shekinah* – Փառքի Ամպը): Միայն Նա է արժանի պատվի: Նա չափազանց պայծառափայլ է, որպեսզի մեղավոր մարդկությունը կարողանա նայել Նրան: Աստծուն իրականում միայն կարելի է ճանաչել Քրիստոսի միջոցով (տես՝ Մատթ.17:2; Եբր.1:3; Հակ.2:1):

NASB	«Իր էության ստույգ արտահայտությունը»
NKJV	«Նրա անձի ճիշտ պատկերը»
NRSV	«հենց Աստծո էության ճշգրիտ կնիքը»
TEV	«Աստծո սեփական էության ճշգրիտ նմանությունը»
NJB	«կրում է Աստծո սեփական էության կնիքը»

Այս արտահայտությունը ՆԿ-ում միայն այստեղ է գտնվում, սակայն կարելի է այն հաճախ հանդիպել Փիլոյի գրքերում, որը լրացնում և ավելացնում է նախորդող բնութագրությունները: Հունարեն այս տերմինը բնագրում կիրառվում էր փորագրելու գործիքի համար, սակայն հետագայում այն սկսեց ներկայացնել այդ գործիքով փորագրությունը: Հիսուսը ոչ միայն արտացոլում է Աստծուն, Նա նաև կրում է աստվածության բացառիկ կնիքը (տես՝ Հովհ. 14:9):

Գոյություն ունեն հունարեն երկու տերմիններ, որոնք սովորաբար նկարագրում էին Քրիստոսի կապը Հոր հետ. (1) *eikon*, որը նշանակում է պատկեր (տես՝ 2 Կորնթ.4:4; Կող.1:15) և (2) *charaktēr* (տես՝ Եբր.1:3): Նախորդը ավելի շատ կիրառվում է ՆԿ-ում, սակայն երկրորդ տերմինը նշանակությամբ ավելի լեցուն է (տես՝ KJV «ճշգրիտ պատկերը»): Ինչպիսի՞ն է Աստված: Նա հենց Նազովրեցի Հիսուսի նման է, որը աներևույթ Աստծո ամբողջական և կատարյալ հայտնությունն է:

■ **«ամեն ինչ ... պահելով»** Սա տարածված տերմին է, որ նշանակում է «տանել կամ կրել» (*pherō*), սակայն այս համատեքստում այն ունի «պահելու», «պահպանելու» իմաստը: Սա հաղորդում է «Մատակարարման» աստվածաբանական գաղափարը (տես՝ Կող.1:17 և մեկ այլ հնարավոր ակնարկ *Սողոմոնի Բնաստություն* 8:1): Հիսուսը ոչ միայն արարեց տիեզերքը (*pherō* տերմինի մեկ այլ հնարավորին նշանակությունը) արտաբերված խոսքով (տես՝ Ծննդ.1), այլ նաև Նա պահում է այն այդ արտաբերված խոսքով:

■ **«Իր գորության Խոսքով»** Հրեական գաղափարախոսության մեջ Աստծո գորությունը ներկայացվում է արտաբերված խոսքի միջոցով: Էլոհիմը արարում է արտաբերված խոսքով (տես՝ Ծննդ.1:3,6,9, 14,20,24): ՅԱՀՎԵի խոսքը ուներ անկախ ուժ՝ գորություն, Իր կամքը իրականացնելու համար (տես՝ Եսայի 55:11): Հովհաննես 1:1-ում պատահական չէ, որ Քրիստոսը կոչվում է «Խոսքը՝ Բանը»:

■ **«Եբր Իր անձով մեր մեղքերը քավեց»** Սա ԱՈՐԻՍՏ ՉԵՉՈՔ ԴԵՐԲԱՅ է, որը շեշտադրում է ենթական (չեզոք սեռ) և արտահայտում է կատարված գործողություն (ԱՈՐԻՍՏ՝ անորոշ կատարյալ ժամանակը, տես՝ Եբր.7:27; 9:12,28; 10:10): Հիսուսը այս արեց հանուն մեղավոր մարդկության (տես՝ Մարկ.10:45; 2 Կորնթ.5:21):

«Քավություն» տերմինը ՆԿ-ում մի քանի իմաստով է կիրառվում՝

1. ծիսական մաքրությունը՝ լվացումը (տես՝ Դուկ.2:22; 5:14; Հովհ.2:6)
2. ֆիզիկական բժշկությունը (տես՝ Մարկ.1:44)
3. փոխաբերություն հափշտակության համար (տես՝ Եբր.1:3; 2 Պետ.1:9; այսպես է ասում Ուիլյամ Դ. Մաունսը իր *Հունարեն Նոր Կտակարանի Վերլուծական Բառարան* գրքի էջ 257-ում /William D. Mounce *Analytical Lexicon to the Greek New Testament*/):

Անգլերենի “*catharsis*” /այսինքն՝ կաթարսիս/ բառը ստացել ենք այս տերմինից: Ուշադրություն դարձրեք «մեղքերը /անգլ.՝ մեղքերից/» բնութագրական բառին: Գոյություն ունեն այս բառը հասկանալու երկու հնարավոր կերպեր՝ (1) այն հանդիսանում է «մեղքերը» լրացնող՝ լրացուցիչ սեռական հոլով և ոչ թե «մեղքերից» բացառական հոլովը: Հիսուսի մահը լուծեց մեղքերի հիմնահարցը՝ (1) այն հոգնակի է, որը չի վերաբերում մարդկության Ադամական բնությանը՝ «մեղքի պրոբլեմին», այլ անհատապես գործված մեղքերին: Հիսուսը մարդկության ապստամբության հանցանքի հարցերը լուծեց (անցյալի և ներկայի):

Տեքստային այս տարբերակը ընդունվել է UBS⁴ գիտնականների կողմից, սակայն գոյություն ունի ևս մեկ հնարավորին տարբերակ: P⁴⁶-ի կողմից ներկայացված Ալեքսանդրիական տեքստային ընտանիքում տրված է «Իր անձով» (*dia heautou*) արտահայտությունը «Իր» (*autou*) բառի փոխարեն, որը վերաբերում է նախադասության առաջին հատվածին: Չեռագրի նմանատիպ տարբերակ է հայտնաբերվել 1 Հովհ.5:18բ-ում: Հետաքրքիր է, որ այս «Իր անձով» արտահայտությունը բացակայում է Ալեքսանդրիական տեքստային ընտանիքի մյուս ավելի հին տարբերակներում (Ռ և B): Անշուշտ հնարավոր է, որ ուղղափառ դպիրները վախենում էին, որ «Իր անձով մեր մեղքերը քավեց» արտահայտությունը կարող էր գնոստիկ շահարկումների պատճառ դառնալ և ուստի “*di'heautou*” փոխեցին դարձնելով “*autou*”: Ուղղափառ դպիրների հակվածությունների վերաբերյալ ավելի լիարժեք քննարկումների համար կարդացեք Բարտ Դ. Էրմանգի *Ուղղափառների կողմից Սուրբ Գրքի Աղավաղումը*, /Bart D. Ehrman, *The Orthodox Corruption of Scripture*/ Oxford Press, 1993:

■ **«նստեց բարձունքներում՝ Մեծության աջ կողմում»** Սա Հիսուսի կատարած գործը և մեծարումը սահմանող բնութագրող, այլաբանական մի կերպ է՝ փոխաբերություն (տես՝ Սաղմ.110:4; Ղուկ.22:69): Աստված չունի աջ կողմ: Սա աստվածաշնչյան փոխաբերություն է (մարդաբանական) գործության, իշխանության և ամենակալության: Ոչ մի ՀԿ-յան քահանա երբևէ չնստեց Նրա աջ կողմում: Հիսուսի երկրավոր գործը ավարտվեց: Ինչ-որ իմաստով սա թագավորական փոխաբերություն է (տես՝ Սաղմ. 110:4 և Չաքարիա 4): Մեռյալ Ծովի համայնքը սպասում էր երկու Մեսիաների, մեկը՝ քահանայական (այսինքն՝ Ահարոնի սերնդից, Ղևիի ցեղից), իսկ մյուսը՝ թագավորական (այսինքն՝ Հեսեի սերնդից, Հուդայի ցեղից): Հիսուսը իրականացնում է ՀԿ-ի օծության բոլոր երեք պաշտոնները՝ մարգարեի (տես՝ 2 Օր.18:18), քահանայի (տես՝ Սաղմ.110:4) և թագավորի (տես՝ 2 Թագ.7:13,16; Սաղմ.2; 110:1-3):

NASB, NKJV, NRSV «բարձունքներում Մեծությունը»,
TEV «Աստծո՝ Գերագույն Չորության»
NJB «բարձունքներում աստվածային Մեծությունը»

Սա իրականում խուսափողական արտահայտություն է: Հրեաները վախենում էին կիրառել Աստծո անունը, որ հանկարծ այն գուր տեղը չօգտագործվի (տես՝ Ելից 20:7), հետևաբար ներմուծում էին փոխարինող տարբեր տերմիններ և արտահայտություններ (այսինքն՝ «Երկնքի թագավորություն», «գահ», և այլն) կամ Նրան նկատի ունենալիս կիրառում էին կրավորական սեռ:

1:4 Այս համարը կարծես թե Եբր.1:1-3-ից անցում լինի դեպի Եբր.1:5-14: Այսօրվա Անգլերենի Տարբերակը (Today's English Version - TEV) սկսում է հրեշտակներից առավել Հիսուսի գերակայության թեմայի քննարկումը Եբր.1:3-ից: Հիսուսին տրված անունը, որը շատ ավելի բարձր է, քան հրեշտակներինը (տես՝ Հռոմ.8:38-39; Եփես.1:21; Կող.2:15) դա «որդի» անունն է (տես՝ եբր.1:5 [երկու անգամ] և 8) կամ «Տեր» անունը (տես՝ Եբր.1:10 և Փիլ.2:9-11):

«Ավելի լավ» խոսքի համար տես ամբողջական գրառումը Եբր.7:7-ում:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 1:5-14

⁵Քանի որ հրեշտակներից ո՞րին երբևէ ասաց.
 «Դու Իմ որդին ես,
 Ես այսօր ծնեցի քեզ»:
 Եվ դարձյալ.
 «Ես Հայր կլինեմ Նրան,
 Եվ Նա ինձ Որդի կլինի»:
⁶և դարձյալ, երբ Անդրանկին աշխարհ է մտցնում, ասում է.
 «Աստծո բոլոր հրեշտակները թող երկրպագեն Նրան»:
⁷Իսկ հրեշտակների մասին ասում է.
 «Ով Իր հրեշտակներին հոգիներ է անում և Իրեն ծառայողներին՝ կրակի բոց»,
⁸սակայն Որդուն ասում է.
 «Քո գահը, ո՞վ Աստված, հավիտյանս հավիտենից է,
 Քո թագավորության գավազանը՝ արդարության գավազան:
⁹Դու արդարությունը սիրեցիր և անօրինությունը ատեցիր.
 Այս պատճառով, ո՞վ Աստված, Քո Աստվածը ուրախության յուղով օծեց Քեզ ավելի, քան Քո ընկերակիցներին»:
¹⁰Եվ
 «Դու, ո՞վ Տեր, սկզբից երկիրը հիմնեցիր,
 Եվ երկինքները Քո ձեռքի գործն են.

¹¹Պրանք պիտի կորչեն, բայց Դու կմնաս,
 Եվ բոլորը լաթի նման պիտի մաշվեն,
¹²Եվ վերարկուի պես պիտի ոլորես դրանք,
 Ու դրանք պիտի փոխվեն.
 Բայց Դու նույնն ես, և Քո տարիները չեն պակասելու»:
¹³Հրեշտակներից որի՞ն երբևէ ասաց.
 «Նստի՛ր Իմ աջ կողմում,
 Մինչև որ Քո թշնամիներին
 Ոտքերիդ պատվանդան դարձնեն»:
¹⁴Չէ՞ որ նրանք բոլորն էլ սպասավորող հոգիներ են՝ ուղարկված սպասավորություն անելու
 նրանց, ովքեր փրկության ժառանգորդներ պիտի լինեն:

1:5 «Դու Իմ Որդին ես» Սա ՀԿ-յան յոթ հատվածների շարքից առաջինն է, որ մեջբերված է Սեպտուագինտայից հաստատելու Մեսիայի գերազանցությունը հրեշտակներից: Առաջին արտահայտությունը տրված է Սաղմ.2:7-ից, մինչ երկրորդը՝ 2 Թագ.7:14-ից: Այս առաջին արտահայտությունը մի քանի անգամ կիրառվում է Ավետարաններում՝ նկատի ունենալով Քրիստոսին.

1. Իր մկրտության ժամանակ (տես՝ Մատթ.3:17; Դուկ.3:22)
2. Այլակերպության ժամանակ (տես՝ Մատթ.17:5; Մարկ.9:7)
3. Հարության ժամանակ (տես՝ Գործք 13:33; Հռոմ.1:4)

«Որդի» տերմինը, որը կիրառվում է Եբր.1:5-ի երկու մեջբերումների մեջ էլ, վերցված է ՀԿ-ից, որտեղ այն կարող է վերաբերել տարբեր մարդկանց/խմբերի (տես ամբողջական գրառումը Եբր.2:7-ում):

1. Հրեշտակներ (տես՝ Ծննդ.6:2,4; Հոբ 1:6; 2:1; 38:7; Սաղմ.29:1, միշտ հոգնակի թվով)
2. Իսրայելի ազգը (տես՝ Ովսեա 11:1)
3. Իսրայելացի թագավորը (տես՝ 2 Թագ.7:14; Սաղմ.89:27)
4. Մեսիան (տես՝ Սաղմ.2:7)

■ **«Ես այսօր ծնեցի /ծնել եմ/ քեզ»** Հիսուսը միշտ եղել է Աստված (տես՝ Հովհ.1:1-18): Հետևաբար սա չի կարող վերաբերել Նրա էությանը, այլ Նրա ժամանակի մեջ հայտնվելուն՝ դրսևորմանը (մարմնացումը): Որոշ մեկնաբաններ կապում են սա Նրա հարության հետ (տես՝ Հռոմ.1:3-4): Որոշ ռաբբիներ դիտարկում էին Սաղմ.2:7-ը որպես թե Մեսիան կյանքի է կոչվում գերբնական չարչարանքներից հետո (տես՝ Եսայի 53): Բայր կատարյալ ներգործական սահմանական եղանակ է, որը նշանակում է «ծնել եմ»: Հնարավոր է, որ սա ռաբբիների կողմից ակնարկում է Առակ.8:22-31, որտեղ «իմաստությունը» (որը Եբրայերենում իգական սեռով է տրված) Աստծո առաջին ստեղծագործությունն էր և դարձավ Աստծո գործակիցը հետագա արարչագործության մեջ (նաև տես *Սողոմոնի Բնաստությունը* 7:1-8:1): Սա վկայակոչվում է ո՛չ աստվածությանը վերագրելու իգական սեռ և ո՛չ էլ հիմնավորելու, որ Հիսուսը եղել է արարված, այլ հաստատելու, որ Նագովրեցի Հիսուսը Հայր Աստծո գործակիցն էր արարչագործության ընթացքում (տես՝ Եբր.1:10; Հովհ.1:3; 1 Կորնթ.8:6; Կող.1:16, որը նշվում է Եբր.1:2-ում):

■ **«Ես Հայր կլինեմ Նրան»** Սա մի մեջբերում է 2 Թագ.7:14-ից՝ Սեպտուագինտայից, որը սկզբնապես վերաբերում էր Սողոմոնին: Եբրայեցիների հեղինակը այն վերագրում է Հիսուսին: Այս երկակի հատվածները նմանատիպ կերպով կարելի է հանդիպել «կուսական ծննդյան» մարգարեության մեջ՝ Եսայի 7:14-ում: Երկուսն էլ բազմաբովանդակ մարգարեություններ են: ՆԿ-յան հեղինակները ներշնչանքի ներքո կիրառում էին ՀԿ-յան ռաբբիական կերպերը, տիպաբանության ձևերը և բառախաղերը, որոնք հատուկ չէին հետագայի մեկնաբաններին: Տե՛ս ստորև տրված քննարկումը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ
SPECIAL TOPIC: ILLUMINATION

«Աստված անցյալում գործել է մարդկությանը Իրեն պարզորոշ հայտնելու համար: Աստվածաբանության մեջ սա կոչվում է հայտնություն: Նա ընտրել է հատուկ մարդկանց, որոնք արձանագրել և բացատրել են այս ինքնահայտնությունը: Աստվածաբանության մեջ սա կոչվում է ներշնչանք: Նա ուղարկել է Իր Հոգին, որպեսզի օգնի ընթերցողներին հասկանալ Իր Խոսքը: Աստվածաբանության մեջ սա կոչվում է լուսավորում: Խնդիր է առաջանում այն դեպքում, երբ մենք պնդում ենք, որ եթե Հոգին ներգրավված է Աստծո Խոսքը մեզ հասկացնելու մեջ, ապա ինչու այսքան շատ Խոսքի մեկնաբանություններ կան: Խնդրի մի մասը ընկած է ընթերցողի նախնական հասկացողության կամ նրա փորձառությունների հիմքում: Հանախ անձնական օրակարգ են կազմում Աստվածաշունչը տեսքտով ապացուցելու կամ ատոմային եղանակով օգտագործելու մեջ:

Հանախ աստվածաբանական ցանց է պարտադրվում Աստվածաշնչի համար՝ թույլ տալու, որ այն խոսի միայն որոշակի բնագավառներում և հատուկ ընտրված կերպերով: Լուսավորումը հնարավոր չէ պարզապես հավասարեցնել ներշնչանքի հետ, չնայած որ երկուսի դեպքում էլ Սուրբ Հոգին ներգրավված է:

Լավագույն մոտեցումն է փորձել պաշտպանել պարբերության կենտրոնական գաղափարը և ոչ թե մեկնաբանել տեքստում առկա յուրաքանչյուր մանրամասնությունը: Հեղինակի կողմից ներկայացված գլխավոր ճշմարտությունը փոխանցում է թեմատիկ գաղափարը՝ միտքը: Գրքի կամ գրական բաժնի համառոտագրումը՝ կոնսպեկտումը օգնում է հետևել ներշնչված հեղինակի բնագրային նպատակին: Ոչ մի մեկնաբան՝ թարգմանիչ ներշնչված չէ: Մենք չենք կարող վերարտադրել աստվածաշնչյան հեղինակի՝ գրողի մեկնաբանության մեթոդը: Մենք կարող ենք և պարտավոր ենք փորձել հասկանալ, թե ինչ էին նրանք ասում իրենց օրերի համար և հաղորդել այդ ճշմարտությունը մեր օրերին: Աստվածաշնչյան որոշ հատվածներ կան, որոնք դժվարըմբռնելի են կամ փակված են՝ գաղտնի (մինչև մի ինչ-որ ժամանակ): Միշտ էլ կլինեն տարաձայնություններ որոշ տեքստերի կամ թեմաների շուրջ, սակայն մենք պետք է հստակ սահմանենք գլխավոր ճշմարտությունները և բնագրի հեղինակի մտադրության՝ նպատակի սահմաններում թույլ տանք անհատական մեկնաբանությունների ազատություն: Մեկնաբանները պետք է քայլեն իրենց ունեցած լույսի ներքո, մշտապես բաց լինելով Աստվածաշնչից և Հոգուց ավելի շատ լույս ստանալու համար: Աստված մեզ դատելու է համաձայն մեր ունեցած հասկացողության և թե ինչպես ենք ապրել մեր այդ հասկացածը:

1:6

NASB	«և երբ Նա դարձյալ բերում է»
NKJV	«Բայց երբ Նա դարձյալ բերում է»
NRSV	«Եվ դարձյալ, երբ նա բերում է»
TEV	«Բայց երբ Աստված պատրաստվում էր ուղարկել»
NJB	«Դարձյալ, երբ նա բերում է»

Սա չի վերաբերում Որդու երկրորդ գալստյանը: Սա նոր մեջբերումը ծանոթացնելու գրականական միջոց՝ կերպ է (տես՝ Եբր.1:5դ; 2:13; 4:5; 10:30):

Ուշադրություն դարձրեք, որ NASB, NKJV, NRSV և NJB թարգմանությունները տալիս են «բերում է» մինչև TEV թարգմանությունը՝ «ուղարկել» բառն է կիրառում: Առաջինը շեշտադրում է փառավորյալ Քրիստոսի համբարձումը, իսկ երկրորդը՝ նկատի ունի Բեթլեհեմում Նրա մարմնավորմանը: Քանի որ Հայր-Որդի անալոգիան՝ նմանօրինակությունը, սկսվում է Հիսուսի մարմնավորմամբ, ապա TEV տարբերակը լավագույնս է համապատասխանում այս կոնտեքստին:

- «Անդրանիկ» Այս արտահայտությունը կիրառվում է՝
 1. ՀԿ-ում, որտեղ անդրանիկ որդին ստանում էր ժառանգության կրկնակի բաժին, որպեսզի կարողանար հոգ տանել ծնողների համար:
 2. Սաղմ.89:27-ում վերաբերում է Իսրայելի թագավորին
 3. Ռաբբիական Հուդայականության մեջ այն սկսեցին կիրառել որպես նախապատվության հետ կապված արտահայտություն (տես՝ Հռոմ.8:29; Կող.1:15,18; Հայտն.1:5):

Այս արտահայտությունը Արիուս-Աթանասիոսի հակասության սիրտն էր հանդիսանում: Արիուսը պնդում էր, որ Հիսուսը Աստծո ստեղծագործության գլուծգործոցն էր, մեջբերելով այս հատվածը և Սաղմ.89:27-ը: Աթանասիուսը պնդում էր, որ Հիսուսը կատարյալ Աստված էր և մեջբերում էր 2 և 3 համարները:

4. Փոխաբերական իմաստով Քրիստոսը «նոր մարդկության անդրանիկն էր՝ առաջնեկը, որը պետք է փառավորվի, ինչպես որ նրա մեծարված Տերն է փառավորվել... որը եկել է Աստծուց սուրբերի համայնքը ստեղծելու համար» (*Հույն-Անգլերեն Բառարանից* Բոյեր, Արնդ, Գինգրիչ և Դանքեն, էջ՝ 726 /A Greek-English Lexicon by Bauer, Arndt, Gingrich and Danken/):
5. Հունահռոմեական աշխարհում անդրանիկ զավակը համարվում էր՝ վարվում էր, որպես ընտանիքի քահանա (տես՝ *The Vocabulary of the Greek Testament* by Moulton and Milligan, /Հունարեն Կոնսյարանի Բառարան Մուլթոն և Միլիգան, էջ՝ 557/):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՆԴՐԱՆԻԿ
SPECIAL TOPIC: FIRSTBORN
 Այս «անդրանիկ» (*prōtotokos*) բառը Աստվածաշնչում կիրառվում է մի քանի տարբեր իմաստներով:
 1. Բառի ՀԿ-յան ծագումը վերաբերում է՝
 ա. անդրանիկ զավակը պատկանում է ՅԱՀՎԵԻՆ (BDB 114, KB 131, տես՝ Ելից 13:2,12; 22:29; 34:19; Թվոց 3:13)

- բ. ընտանիքում անդրանիկ գավակի նախապատվությանը (տես՝ 2 Օր.21:17; Սաղմ.89:27; Ղուկ.2:7; Հռոմ.8:29; Եբր.11:28)
2. Բառի կիրառությունը Կող.1:15-ում խոսում է Հիսուսի վերաբերյալ որպես առաջին ստեղծագործության, որը հնարավոր է լինի ՀԿ-յան մի մեջբերում Առակ.8:22-31-ից կամ Աստծո գործակիցը՝ օգնականը, արարչագործության ժամանակ (տես՝ Հովհ.1:3; 1 Կորնթ.8:6; Կող.1:15-16; Եբր.1:2)
3. Բառի կիրառությունը Կող.1:15,18; 1 Կորնթ.15:20,23; Հայտն.1:5-ում վերաբերում է մեռելներից անդրանիկը լինելուն
4. Բառի կիրառությունը ՀԿ-ում Մեսիայի անվան հետ կապված (տես՝ Սաղմ.89:27; Եբր.1:6; 12:23). սա մի անուն է, որը համախմբում է Հիսուսի առաջնահերթության և Նրա կենսորոնական դերի մի քանի առանձնահատկությունները:

■ **«աշխարհ»** Սա վերաբերում է Հիսուսի նախագոյությանը, որը միշտ եղել է որպես Աստված, սակայն փրկագործության ծառայության Իր նոր փուլը սկսեց Բեթլեհեմից, երբ Նա հազավ մարդկային մարմին (տես՝ Փիլ.2:6-8ա): Սա ավելի շատ կիրառելի *kosmos* բառը չէ, այլ *oikoumenē* տերմինը, որը օգտագործվում էր երկրի մակերևույթի համար, որը բնակեցվախ է մարդկանցով: Այս տերմինը կիրառվում է նաև Եբր.2:5-ում այլաբանորեն, որպես նոր սերնդի ակնարկ:

■ **«ասում է. «Աստծո բոլոր հրեշտակները թող երկրպագեն Նրան»** Սա մեջբերում է Մեպտուագինտայից՝ կամ 2 Օր.32:43-ից, կամ էլ Սաղմ.97:7-ից: «Հրեշտակներ» բառի համար եբրայերեն տարբերակը Սաղմ.97:7-ում *Elohim* է: Մեռյալ Ծովի Գալարներից #4 Քարանձավից մենք ունենք Մեպտուագինտայից այս թարգմանության հիմնավորումը՝ հաստատումը: *Elohim* տերմինը կարող է վերաբերել Աստծուն, հրեշտակներին, մարդ դատավորներին (տես՝ Ելից 21:6; 22:8-9) կամ նույնիսկ մարդկային հանգուցյալ հոգուն (տես՝ 1 Թագ.28:13):

Այս արտահայտությունը նկատի չունի, թե հրեշտակները նախքան Քրիստոսի մարմնացումը Նրան չէին երկրպագում: Համատեքստում այն մատնանշում է Որդու գերազանցությունը համաձայն այն փաստի, որ հրեշտակները երկրպագում են Նրան:

1:7 «Ով Իր հրեշտակներին հոգիներ /անգլ.՝ քամիներ/ է անում» Այստեղ համեմատական է անցկացվում հրեշտակների, որոնք փոփոխվում էին (տես՝ LXX Սաղմ.104:4) և ի հակադրություն Հիսուսի, որը մշտապես նույնն է և անփոփոխ (տես՝ եբր.1:8,11,12; 13:8): Ռաբբիները, մեջբերելով Ողբ 3:23 կամ Դան.7:10 խոսքերը, ասում էին, որ Աստված ամեն առավոտ հրեշտակներին նորովի է արարում:

1:8 «Քո գահը, ո՛վ Աստված, հավիտյանս հավիտենից է» Այս մեջբերումը Մեպտուագինտայից Սաղմ.45:6-ից է, որը դիմում է Մեսիա Թագավորին: ՀԿ-յան կոնտեքստում դերանունը շատ երկիմաստ է և կարող է վերաբերել Հայր Աստծուն կամ Որդի Աստծուն: Սակայն այս տեքստում, կարծես թե սա համարվում է ամենացայտուն՝ ամենաուժեղ համարը, քան որևէ սուրբգրային այլ համար կարող ենք հանդիպել, որը հաստատում է Քրիստոսի աստվածությունը (տես՝ Հովհ.1:18; 20:28):

Այս հարցում գոյություն ունի հունարեն ձեռագրային մի մեծ հիմնախնդիր: Մի քանի շատ վաղ ձեռագրեր (P⁴⁶, Ռ և B) ունեն դերանուն (*autou*, այսինքն՝ «Նրա գահը»), որը ավելացնում է անորոշությունը: Միացյալ Աստվածաշնչյան Ընկերության չորրորդ խմբագրությունը պաշտպանում է «Քո» տարբերակը “B” գանահատելով (տեքստը գրեթե հաստատ է): Այս ձևը գտնվել է ունցիալ՝ մեծատառերով A և D ձեռագրերում և հանդիսանում են Սաղմ.45:6-ի Մեպտուագինտայից կատարած ճշգրիտ մեջբերում: Հաճախ հին ժամանակներում դպիրները հակված էին տեքստերն ավելի պարզեցնելու, հատկապես եթե դրանք առնչվում էին իրենց օրերի Քրիստոսաբանական տարածայնություններին (տես՝ Բարթ Դ. Էրման *Ուղղախառնների կողմից Սուրբ Գրքի սղախաղումը*, էջ՝ 265 /Bart D. Ehrman *The Orthodox Corruption of Scripture*, Oxford Press, 1993/):

Այս քննարկումը նախատեսված չէ որևէ կերպ հերքելու Քրիստոսի կատարյալ աստվածությունը, այլ ցույց տալու աստվածաբանական և քերականական նկատառումներով վաղ դպիրների կողմից տեքստերի մեջ փոփոխություններ բերելու հակվածությունը: Այդ իսկ պատճառով Տեքստային Քննադատության ժամանակակից ակադեմիական գիտության ճյուղը դատում է ձեռագրային տարբերակները հետևյալ սկզբունքների հիման վրա.

1. ամենաանսովոր գիրքը հավանաբար կլինեք բնագիրը
2. գիրքը, որը կբացատրեր մյուս տարբերակները, հավանաբար կլինեք բնագիրը
3. գիրքը, որը ավելի լայն աշխարհագրական մասշտաբով կներկայանար (ոչ թե միայն մեկ ձեռագրային ընտանիքի ներսում) հավանաբար կլինեք բնագիրը

Բարթ Էրմանի գիրքը նաև ներկայացնում է, որ դպիրները աստվածաբանական նկատառումներով փոփոխություններ էին կատարում հունարեն տեքստում, հատկապես Քրիստոսաբանության և Երրորդության հարցի շուրջ տեղի ունեցող բանավեճերի ժամանակաշրջանում (այսինքն՝ երրորդ և չորրորդ դարերում):

■ **«հավիտյանս հավիտենից»** Սա ակնհայտ է, որ չի վերաբերում հազարամյա թագավորությանը, այլ հավիտենական թագավորությանը (տես՝ Եսայի 9:8; Դան.7:14,18; Դուկ.1:33; 2 Պետ.1:11; Հայտն.11:15):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏՅԱՆ (ՀՈՒՆԱՐԵՆ ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐ)
SPECIAL TOPIC: FOREVER (GREEK IDIOMS)

Հունարեն դարձվածքաբանական արտահայտություններից մեկն է «դարեր շարունակը» (տես՝ Դուկ.1:33; Հռոմ.1:25; 11:36; 16:27; Գաղ.1:5; 1 Տիմ.1:17), որը կարող է արտահայտել եբրայերենի *olam* տերմինը: Տես Ռոբերտ Բ. Գրդլսթոունի, *Հին Կտակարանի Հոմանիշներ*, էջ՝ 319-321, և Հատուկ Թեմա. Հավիտյանս (*Olam*), էջ՝ ... /Robert B. Girdlestone, *Synonyms of the Old Testament*, pp. 319-321, and Special Topic: Forever (*Olam*):

Այս արտահայտության հետ կապ ունեցող խոսքերից են «դարեդարը» (տես՝ Մատթ.21:19; Մարկ.11:14; Դուկ.1:55; Հովի.6:58; 8:35; 12:34; 13:8; 14:16; 2 Կորնթ.9:9) և «բոլոր դարերում» (տես՝ Եփես.3:21): Թե՛ ոչ մի տարբերություն չկա «հավիտյան» բառի հունարեն այս դարձվածքների միջև: «Դարեր» տերմինը կարող է լինել ՀՈԳՆԱԿԻ փոխաբերական իմաստով ըստ ռաբբիական քերականական կառուցվածքի, որը կոչվում է «ՄԵԾԱՓԱՌՈՒԹՅԱՆ ՀՈԳՆԱԿԻՈՒԹՅՈՒՆ» կամ այն կարող է վերաբերել մի քանի «դարերի» հասկացությանը՝ համաձայն հրեական «ամբարշտության դար /ժամանակաշրջան/», «գալիք դար» կամ «արդարության դար» նշանակության (տես՝ Special Topic: This Age and The Age to Come /Հատուկ Թեմա. Այս և Գալիք Դարաշրջաններ/, էջ՝ 21):

■ **1:9 «Դու արդարությունը սիրեցիր և անօրինությունը ստեցիր»** Սա մեջբերում է Սեպտուագիան տայից՝ Մաղմ.45:7-ից, որը առնչվում է Հիսուս Քրիստոսի երկրավոր կյանքի հետ:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ
SPECIAL TOPIC: RIGHTEOUSNESS

«Արդարությունը» այնպիսի կենսականորեն կարևոր թեմա է, որ աստվածաշնչյան յուրաքանչյուր ուսանող այս թեմայի շուրջ պետք է կատարի անձնական մանրակրկիտ սերտողություն:

ՀԿ-ում Աստծո բնավորությունը նկարագրվում է որպես «ուղիղ» կամ «արդար» (BDB 841): Այս Միջագետքի /մեսոպոտամիան/ տերմինը ծագել է գետի եղեգից, որը գործածվում էր որպես շինարարական գործիք՝ ստուգելու պատերի և ցանկապատերի հորիզոնական հարթության ճշգրտությունը: Աստված ընտրեց այս տերմինը փոխաբերական իմաստով՝ Իր սեփական էությունը բնութագրելու համար: Նա ուղիղ է, Ում միջոցով կարելի է բոլոր բաները չափել: Այս հասկացությունը հաստատում է Աստծո արդարությունը, ինչպես նաև դատաստանի մեջ Նրա արդարացիությունը՝ շիտակությունը: Մարդը Աստծո պատկերով ստեղծվեց (տես՝ Ծննդ.1:26-27; 5:1,3; 9:6): Մարդկությունը ստեղծվեց Աստծո հետ փոխհարաբերվելու համար: Ամբողջ արարչագործությունը Աստծո և մարդկության շփման համար հանդիսանում է բեմ կամ հետին տեսարան՝ ֆոն: Աստված կամենում էր, որ Իր գլուխգործոցը՝ մարդը, ճանաչի Իրեն, սիրի Իրեն, ծառայի Իրեն և լինի Իր նման: Մարդու ազնվությունը փորձվեց՝ ստուգվեց (տես՝ Ծննդ.3:15) և առաջին գույգը ձախողեց այս ստուգարքը: Արդյունքում Աստծո և մարդու միջև փոխհարաբերությունը խզվեց (տես՝ Ծննդոց 3; Հռոմ. 5:12-21):

Աստված խոստացավ վերականգնել և վերսկսել այդ փոխհարաբերությունը (տես՝ Ծննդ.3:15): Նա իրականացրեց այն Իր կամքով, Իր իսկ Որդու միջոցով: Մարդիկ անկարող էին վերականգնել այդ ճեղքումը (տես՝ Հռոմ.1:18-3:20):

Մարդու անկումից հետո, Աստծո առաջին քայլը վերականգնման համար եղավ ուխտի գաղափարը՝ հիմնված Իր հրավերի և մարդու գղջացող, հավատարիմ, հնազանդ արձագանքի վրա: Անկման պատճառով, մարդիկ անկարող էին նույնիսկ ճիշտ գործողությունների համար (տես՝ Հռոմ.3:21-31; Գաղատացիների 3): Աստված Ինքը պետք է նախաձեռնությունը վերցնե Իր ձեռքը, որպեսզի վերականգնե ուխտադրույթ մարդկանց: Նա դա արեց՝

1. մարդկությանը հռչակելով արդար՝ Քրիստոսի գործի շնորհիվ (այսինքն՝ դատական արդարություն):
2. մարդկությանը ձիրարար տալով արդարություն՝ Քրիստոսի գործի շնորհիվ (այսինքն՝ վերագրված արդարություն):

3. ապահովելով Սուրբ Հոգու բնակությունը մեր մեջ, որը մարդու մեջ արդարության պտուղն է տալիս (այսինքն՝ Քրիստոսակերպությունը՝ Աստծո պատկերի վերականգնումը):

4. վերականգնելով Եղեմի Պարտեզում ունեցած փոխհարաբերությունը

Այնուամենայնիվ, Աստված պահանջում է կտակին՝ ուխտին համապատասխան արձագանք: Աստված դնում է օրենքները (այսինքն՝ ճիշտ արարած տալիս է) և ապահովում, իսկ մարդիկ պետք է պատասխանեն և շարունակեն պատասխանել՝

1. ապաշխարությամբ
2. հավատքով
3. հնազանդության ապրելակերպով
4. հարատևությամբ

Հետևաբար, արդարությունը Աստծո և Իր արարչագործության գլուխործոցի միջև եղած ուխտի, փոխադարձ գործողություն է: Աստծո բնավորության, Քրիստոսի կատարած գործի և Սուրբ Հոգուց տված կարողության հիման վրա, որին յուրաքանչյուր անհատ պետք է անձնապես և հարատևորեն ճիշտ կերպով արձագանքի: Այս հասկացությունը կոչվում է «հավատքով արդարացում»: Այն արժարժվում է Ավետարաններում, սակայն ոչ այս տերմինաբանությամբ: Հիմնականում այն սահմանվում է Պողոսի կողմից, որը հարյուր անգամից ավելի գործածում է հունարեն «արդարություն» տերմինը իր բազմաթիվ տարբերակներով:

Պողոսը, որպես ուսյալ ռաբբի, գործածում է *dikaioisunē* տերմինը Սեպտուագինտայում կիրառվող եբրայերենի *SDQ* տերմինի միևնույն իմաստով, և ոչ թե հունական գրականությունից: Հունական գրականության մեջ այս տերմինը կապված է այն անձնավորության հետ, որը հարմարվում է Աստվածության և հասարակության սպասումներին՝ ակնկալիքներին: Եբրայերենում այս տերմինը մշտապես հանդիպում ենք ուխտի հետ առնչվող տերմինների գործածությամբ: ՅԱՀՎԵՆ արդար, բարեհամբույր, բարոյական Աստված է: Նա ուզում է, որ Իր ժողովուրդը արտացոլի Իր բնավորությունը: Փրկված մարդը դառնում է մի նոր արարած: Նոր արարած լինելը պատճառ է հանդիսանում աստվածահանո նոր ապրելակերպի համար (արդարացման վերաբերյալ Հռոմեական Կաթոլիկության տված կարևորությունը): Քանի որ Իսրայելը աստվածապետություն էր, գոյություն չունեի հստակ սահմանագատում աշխարհիկի (հասարակական նորմերի) և հոգևորի (Աստծո կամքի) միջև: Այս տարբերությունը արտահայտվում է եբրայերեն և հունարեն տերմինների միջոցով, որոնք թարգմանվում են անգլերենում որպես «արդարացիություն» (հասարակության հետ առնչվող) և «արդարություն» (կրոնի հետ առնչվող):

Հիսուսի Ավետարանը (բարի լուրը) այն է, որ անկում ապրած մարդկությունը Աստծո հետ փոխհարաբերության մեջ վերականգնված է: Սա ի կատար անցրել է Հոր սիրո, ողորմության և շնորհի միջոցով. Որդու կյանքի, մահվան և հարության միջոցով. և Սուրբ Հոգու մեզ հետամուտ լինելու և ավետարանին մոտեցնելու միջոցով: Արդարացումը Աստծո կողմից մեզ տրված ձրի պարգև է, սակայն դրա արդյունքը պետք է լինի աստվածապաշտությունը (սա Օգոստինոսի տեսակետն է, որը ներկայացնում է Ռեֆորմացիայի կողմից ավետարանի ձրի լինելու կարևորումը և Հռոմի Կաթոլիկների կողմից՝ սիրո և հավատարմության փոխված կյանքի կարևորումը): Ռեֆորմատորների համար «Աստծո արդարություն», տերմինը ՕՔՅԵԿՏԻՎ ՍԵՌՎԱՄՆ հոլով է (այսինքն՝ մեղավոր մարդկության Աստծուն ընդունելի դարձնելու գործողությունը /վերջնական արդարացում/), մինչ Կաթոլիկների համար այն ՍՈՒՔՅԵԿՏԻՎ ՍԵՌՎԱՄՆ հոլով է, որը ավելի Աստծո նման դառնալու գործընթաց է /փորձառական պրոգրեսիվ արդարացում/: Իրականում իհարկե դրանք երկուսը միասին են:

Իմ կարծիքով ամբողջ Սուրբ Գիրքը, սկսած Ծննդոց 4 - Հայտնություն 20, Աստծո Եղեմի պարտեզում ունեցած փոխհարաբերության վերականգնման արձանագրություն է: Աստվածաշունչը սկսվում է Աստված և մարդ փոխհարաբերությամբ՝ սկզբնական միջավայրում (տես՝ Ծննդոց 1-2) և վերջանում է միևնույն միջավայրով (տես՝ Հայտնություն 21-22): Աստծո պատկերն ու նպատակը վերականգնվելու է:

Վերը նշված քննարկումները փաստագրելու համար նկատի ունեցեք հետևյալ ՆԿ-յան հատվածները, որոնք լուսարանում են այս տերմինի հունարեն բառախումբը.

1. Աստված արդար է (հաճախ առնչվող Աստծո դատավոր լինելու հետ)
 - ա. Հռոմեացիս 3:26
 - բ. 2 Թեսաղոնիկեցիս 1:5-6
 - գ. 2 Տիմոթեոս 4:8
 - դ. Հայտնություն 16:5
2. Հիսուսն արդար է.
 - ա. Գործք 3:14; 7:52; 22:14 (Մեսիայի անունը)
 - բ. Մատթեոս 27:19
 - գ. 1 Հովհաննես 2:1,29; 3:7

3. Աստծո կամքը Իր արարչագործության համար արդարություն է.
 - ա. Ղևտացիների 19:2
 - բ. Մատթեոս 5:48 (տես՝ 5:17-20)
4. Աստծո միջոցները արդարությունն իրականացնելու և ապահովելու համար.
 - ա. Հռոմեացիներին 3:21-31
 - բ. Հռոմեացիներին 4
 - գ. Հռոմեացիներին 5:6-11
 - դ. Գաղատացիներին 3:6-14
 - ե. Աստծուց տրված՝
 - 1) Հռոմեացիներին 3:24; 6:23
 - 2) 1 Կորնթացիներին 1:30
 - 3) Եփեսացիներին 2:8-9
 - զ. Հավատքով ընդունված՝
 - 1) Հռոմեացիներին 1:17; 3:22,26; 4:3,5,13; 9:30; 10:4,6,10
 - 2) 2 Կորնթացիներին 5:21
 - է. Որդու գործերի միջոցով՝
 - 1) Հռոմեացիներին 5:21
 - 2) 2 Կորնթացիներին 5:21
 - 3) Փիլիպեցիներին 2:6-11
5. Աստծո կամքն է, որ Իր հետևորդները արդար լինեն՝
 - ա. Մատթեոս 5:3-48; 7:24-27
 - բ. Հռոմեացիներին 2:13; 5:1-5; 6:1-23
 - գ. Եփեսացիներին 1:4; 2:10
 - դ. 1 Տիմոթեոս 6:11
 - ե. 2 Տիմոթեոս 2:22; 3:16
 - զ. Հովհաննես 3:7
 - է. 1 Պետրոս 2:24
6. Աստծո կամքն է, որ արդարությամբ դատի աշխարհը՝
 - ա. Գործք 17:31
 - բ. 2 Տիմոթեոս 4:8

Արդարությունը բնորոշ է Աստծուն, որը Քրիստոսի միջոցով ձրի տրվել է մեղավոր մարդկությանը որպես՝

1. Աստծո պատվեր
2. Աստծո պարզև
3. Քրիստոսի գործը
4. ապրելակերպ

Սակայն այն նաև իրենից ներկայացնում է արդար դառնալու գործընթաց, որին պետք է հարատևությամբ և վճռականությամբ հետամուտ լինել, և որը իրականում կավարտվի Երկրորդ Գալստյան ժամանակ: Աստծո հետ փոխհարաբերությունը վերականգնված է փրկությամբ, սակայն զարգանում է մեր ամբողջ կյանքի ընթացքում, որպեսզի դառնա մահվան կամ *Parousia* հետ դեմ-առ-դեմ իրադարձություն:

Այս քննարկումն ամփոփելու համար ահա մի գեղեցիկ մեջբերում: Այն վերցված է *Պողոսի Բառաբանք և Նրա Նամակները* IVP գրքից:

«Կավիինը, ավելի քան Լյութերը, շեշտադրում է Աստծո արդարության ռացիոնալ առանձնահատկությունը: Լյութերի տեսակետը Աստծո արդարության վերաբերյալ կարծես թե պարունակում է արդարացման առանձնահատկությունը: Կավիինը շեշտադրում է Աստծո արդարության մեզ փոխանցելու կամ հաղորդելու զարմանահրաշ բնույթը» (Էջ 834):

Ինձ համար Աստծո հետ հավատացյալի փոխհարաբերությունը ունի երեք կետ.

1. Ավետարանը անձ է (Արևելյան Եկեղեցու և Կավիինի շեշտադրումը)
2. Ավետարանը ճշմարտությունն է (Օգոստինոսի և Լյութերի շեշտադրումը)
3. Ավետարանը փոխված կյանքն է (Կաթոլիկների շեշտադրումը)

Նրանք բոլորն էլ ճիշտ են և պետք է միավորվեն առողջ, ողջամիտ, աստվածաշնչյան Քրիստոնեության համար: Դրանցից որևէ մեկը գերազանահատվելու կամ թերազանահատվելու դեպքում ի հայտ կգան խնդիրներ:

Մենք պետք է Հիսուսին ողջունենք:

Մենք պետք է հավատանք Ավետարանին:

Մենք պետք է հետամուտ լինենք Քրիստոսակերպությանը:

■ «**օձեց Քեզ**» Եբրայերեն «օձեց» (*mashiach*, BDB 603) տերմինը ՀԿ-յան Մեսիա բառի համար օգտագործվող բառն է (*masiah*): ՀԿ-ում մարգարեները, քահանաները և թագավորները օծվում էին ձիթապտղի յուղով, որպես Աստծո ընտրության և նախապատրաստության խորհրդանշան Նրա կողմից տրված առաջադրանքի համար: Այս համատեքստում այն նաև վերաբերում է ուրախության և խնջույքի ժամանակ ձիթապտղի մշակութային կիրառությանը (տես՝ Եսայի 53:11):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՕԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ (BDB 603)
SPECIAL TOPIC: ANOINTING IN THE BIBLE (BDB 603)

- Ա. Կիրառվում էր գեղեցկանալու համար (տես՝ 2 Օր.28:40; Հռուբ 3:3; 2 Թագ.12:20; 14:2; 2 Մնաց. 28:15; Դան.10:3; Անով 6:6; Միք.6:15)
- Բ. Կիրառվում էր հյուրերի համար (տես՝ Սաղմ.23:5; Դուկ.7:38,46; Հովհ.11:2)
- Գ. Կիրառվում էր բժշկության համար (տես՝ Ես.61:1; Երեմ.51:8; Մարկ.6:13; Դուկ.10:34; Հակ. 5:14) [կիրառվեց հիզենիկ նպատակով՝ Եզեկ.16:9]
- Դ. Կիրառվում էր թաղման պատրաստության համար (տես՝ Ծննդ.50:2; 2 Մնաց.16:14; Մարկ. 16:1; Հովհ.12:3,7; 19:39-40)
- Ե. Կիրառվում էր կրոնական նպատակով (առարկաներ օծելու համար, տես՝ Ծննդ.28:18; 31:13 - մի այլու; Ելից 29:26 - գոհասեղանը; Ելից 30:26; 40:9-16; Դևտ.8:10-13; Թվոց 7:1 - խորանը)
- 2. Կիրառվում էր առաջնորդներ նշանակելիս՝
 - 1. Քահանաներ՝
 - ա. Ահարոնը (Ելից 28:41; 29:7; 30:30)
 - բ. Ահարոնի որդիները (Ելից 40:15; Դևտ.7:36)
 - գ. ստանդարտ արտահայտություն կամ տիտղոս (Թվոց 3:3; Դևտ.16:32)
 - 2. Թագավորներ՝
 - ա. Աստծո կողմից (տես՝ 1 Թագ.2:10; 2 Թագ.12:7; 4 Թագ.9:3,6,12; Սաղ.45:7; 89:20)
 - բ. մարգարեների կողմից (տես՝ 1 Թագ.9:16; 10:1; 15:1,17; 16:3,12-13; 3 Թագ.1:45; 19:15-16)
 - գ. քահանաների կողմից (տես՝ 3 Թագ.1:34,39; 4 Թագ.11:12)
 - դ. երեցների կողմից (տես՝ Դատ.9:8,15; 2 Թագ.2:7; 5:3; 4 Թագ.23:30)
 - ե. Հիսուսի համար, որպես Մեսիա Թագավորի (տես՝ Սաղ.2:2; Դուկ.4:18 [Ես.61:1]; Գործք 4:27; 10:38; Եբր.1:9 [Սաղմ.45:7])
 - զ. Հիսուսի հետևորդները (տես՝ 2 Կորն.1:21; 1 Հովհ.2:20,27 [*chrisma*])
 - 3. Հավանաբար մարգարեներ՝ (տես՝ Ես.61:1)
 - 4. Անհավատ գործիքներ աստվածային ազատագրմամբ՝
 - ա. Կյուրոսը (տես՝ Ես.45:1)
 - բ. Տիվրոսի թագավորը (տես՝ Եզեկ.28:14, որտեղ նա կիրառում է Եդեմի պարտեզի փոխաբերությունը)
 - 5. «Մեսիա» տերմինը կամ տիտղոսը նշանակում է «Օծյալ» (BDB 603)

Գործք 10:38-ը մի համար է, որտեղ աստվածության բոլոր երեք անձերն էլ ներգրավված են օծության մեջ: Հիսուսը օծված էր (տես՝ Դուկ.4:18; Գործք 4:27; 10:38): Այս գաղափարը ավելի ընդլայնվում է իր մեջ ներգրավելով բոլոր հավատացյալներին (տես՝ 1 Հովհ.2:27): Օծյալը դարձավ օծյալներ: Սա կարելի է զուգահեռել Հակաքրիստոսի և հակաքրիստոսների (տես՝ 1 Հովհ.2:18): ՀԿ-ում խորհրդանշական ֆիզիկապես օծությունը յուղով (տես՝ Ելից 29:7; 30:25; 37:29) վերաբերում է նրանց, ովքեր Աստծո կողմից կանչված էին և սպառազինված հատուկ առաջադրանքով (այսինքն՝ մարգարեները, քահանաները և թագավորները): «Քրիստոս» բառը եբրայերենի «օծյալ» կամ Մեսիա տերմինի թարգմանությունն է:

■ «**ավելի, քան Քո ընկերակիցներին**» Սա Մեպտուազինտայի Սաղմ.45:6-7-ի մեջբերման շարունակությունն է: Սաղմոսում գետնեղված յուրաքանչյուր մանրամասնություն չպետք է Հիսուսի հետ կապված աստվածաբանական ինչ-որ հիմնավորում ներկայացվի: Արտահայտությունը կարող է կապված լինել Հիսուսի գերազանցության հետ (1) հրեշտակների, (2) Իսրայելի թագավորների, (3) աշխարհիկ իշխանների կամ (4) փրկված մարդկության համեմատությամբ:

1:10 «Դու, ո՛վ Տեր» Միայն Մեպտուազինտայի Սաղմ.102:25-ի թարգմանությունն է, որ ունի «Տեր» բառը, որը վերաբերում է ՅԱՀՎԵին, սակայն այս համատեքստում այն վերաբերում է Հիսուսին: Սա ևս մեկ համատեքստային հիմք է ստելու, որ Եբր. 1:9-ը վերաբերում է Հիսուսին որպես «Աստծո»:

■ **«երկիրը հիմնեցիր, և երկինքները Քո ձեռքի գործն են»** Սա 1:2-ի ակնարկն է այն մասին, որ Հիսուսը Հոր գործակիցն է արարչագործության մեջ: Տե՛ս Հատուկ Թեմա. *Archē* Եբր.3:14-ում:

Ծննդոց 1-ը հիմնավորում է *Elohim*-ի արարչագործությունը խոսված արտաբերված խոսքի միջոցով (տես՝ Ծննդ.1:3,6,9,14,20,24,26), մինչ Ծննդոց 2-ը հաստատում է ՅԱՀՎԵի անմիջական աճնական ներգրավվածությունը, ակնարկելով Նրա «ձեռքերի գործը» Ադամին և Եվային հողից՝ կավից ձևավորելիս (տես՝ Ծննդ.2:7,8,19,22): Այս մեջբերումը (Սաղմ.102:25) տարածվում է անձնական փոխաբերությունից՝ այլաբանությունից մինչև ամբողջ ֆիզիկական արարչագործության վրա:

1:11 «դրանք պիտի կորչեն, բայց Դու կմնաս, և բոլորը լաթի նման պիտի մաշվեն» Սա դարձյալ մատնանշում է Որդու հավիտենական լինելը: ՀԿ-ում մարգարեները հաճախ կիրառում են դատարանի տեսարանը հաղորդելու ՅԱՀՎԵի նողկանքը Իր ապստամբ կնոջ՝ Իսրայելի հանդեպ: Նա տանում է «նրան» (Իսրայելին) ամուսնալուծության դատին և կանչում է պանհանջվող երկու վկաներին (տես՝ 2 Օր.19:15)՝ երկու ամենակայուն վկաներին՝ «երկինքն ու երկիրը», որպեսզի հավաստեն Իր վկայությունը: Նույնիսկ այս երկու հաստատուն՝ կայուն վկաները անցնելու են: Այս մեջբերումը առաջարկում է երկու հնարավոր տեսարաններ. (1) առաջին բայը (*apollumi*) ունի դաժան կորուստ՝ կործանում նշանակությունը (տես՝ 2 Պետ.3:10) և (2) երկրորդ արտահայտությունը վերաբերում է մաշվելուն և փչանալուն՝ մահանալուն, ինչպես մի լաթի կտորը:

Սա ևս մեկ համեմատություն է ստեղծված կարգերի (հրեշտակներ, ստեղծագործություն) և մշտագո ու հաստատուն Աստծո գահի և Որդու միջև:

1:12 «բայց Դու նույնն ես» Սա Սեպտուագինտայից Սաղմ.102:27-ի մեջբերումն է: Այս նույն գաղափարը (անփոփոխելիությունը) գործածվում է Եբր.13:8-ում՝ նկարագրելու Հիսուսի անփոփոխ լինելը: Հրեշտակները փոխվում են, երկինքը և երկիրը փոխվում են, սակայն Հիսուսը չի փոխվում, ահա և մարդկության հույսը (տես՝ Մաղ.3:6; Հակ.1:17):

■ **«Քո տարիները չեն պակասելու»** Ինչպես որ նախորդ արտահայտությունը անդրադառնում է Հիսուսի բնավորության անփոփոխությանը, այս մեկն էլ անդրադառնում է Իր անձի մնայունությանը:

1:13 «Նստի՛ր Իմ աջ կողմում» Սա մեջբերում է Սեպտուագինտայից՝ Սաղմ.110:1: Սա մի հրաշալի Մեսիական Սաղմոս է, որը հաճախակի մեջբերվում և ակնարկվում է Եբրայեցիների գրքում (տես՝ Եբր.1:3,13; 5:6,10; 6:20; 7:3,11,17,21; 8:1; 10:12-13; 12:2): Այն միավորում է Մեսիայի (ինչպես Չաբ.4-ում երկու ձիթենիների պատմության մեջ է) թագավորական (Եբր.1:1-3) և քահանայական (Եբր.1:4-7) ասպեկտները: Ուշադրություն դարձրեք «տեր» բառի երկու ձևերը. առաջինը՝ ՅԱՀՎԵ է, իսկ երկրորդը՝ *Adon* (Տեր): Դավթի Տերը (Մեսիան) նստում է ՅԱՀՎԵի (տիրոջ) գահին՝ իշխանության և գործության տեղում: Սա երբեք, երբեք և երբեք չի պատահում հրեշտակների հետ:

1:14 «Չէ՛ որ նրանք բոլորն էլ սպասավորող հոգիներ են՝ ուղարկված սպասավորություն անելու նրանց, ովքեր փրկության ժառանգորդներ պիտի լինեն» Հրեշտակները ստեղծվել են, որպեսզի ծառայեն Աստծուն և մարդկությանը: Փրկված մարդկությունը ստեղծագործության մեջ հոգևոր ավելի բարձր կարգ-աստիճանի են պատկանում, քան հրեշտակները: Հավատացյալները պետք է դատեն հրեշտակներին (տես՝ 1 Կորնթ.6:3): Հիսուսը չմահացավ, որ փրկի հրեշտակներին (տես՝ Եբր.2:14-16):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՐԿՈՒԹՅՈՒՆ (ՀՈՒՆԱՐԵՆ ԲԱՅԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ)
SPECIAL TOPIC: SALVATION (GREEK VERB TENSES)

Փրկությունը իր չէ, այլ փոխհարաբերություն: Այն չի վերջանում Քրիստոսին վստահելով, այլ միայն սկսվում է (դարպասը, ապա ճանապարհը): Այն հրշեջ ապահովագրական փաստաթուղթ չէ, ոչ էլ երկինք տանող տոմս, այլ Քրիստոսի նմանությանը հասնելու աճման կյանք: Մենք Ամերիկայում ունենք մի այսպիսի ասացվածք, որն ասում է. որքան շատ են զույգերը միասին ապրում, այնքան նմանվում են: Սա՛ է փրկության նպատակը:

ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՎԱՐՏՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ (ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼ /Աորիստ/)

- Գործք 15:11
- Հռոմեացիս 8:24
- 2 Տիմոթեոս 1:9
- Տիտոս 3:5

- Հռոմեացիս 13:11 (ԱՆԴԵՄՆ ԱՊԱՌՆԻԻ հետ համակցված)

ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՎԻՃԱԿ (ՎԱՂԱԿԱՏԱՐ)

- Եփեսացիներին 2:5,8

ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ (ՆԵՐԿԱ)

- 1 Կորնթացիներին 1:18; 15:2
- 2 Կորնթացիներին 2:15
- 1 Պետրոս 3:21

ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՊԱԳԱՅԻ ՎԱԽՃԱՆ (ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿ կամ համատեքստ)

- Հռոմեացիներին 5:9,10; 10:9,13
- 1 Կորնթացիներին 3:15; 5:5
- Փիլիպեցիներին 1:28
- 1 Թեսաղոնիկեցիներին 5:8-9
- Եբրայեցիներին 1:14; 9:28
- 1 Պետրոս 1:5

Հետևաբար, փրկությունը սկսվում է ներքին հավատքի որոշմամբ (տես՝ Հովհ.1:12; 3:16; Հռոմ.10:9-13), սակայն սա պետք է հանգեցնի ապրելակերպ հանդիսացող հավատքին (տես՝ Հռոմ.8:29; Գաղ. 2:19-20; Եփես.1:4; 2:10), որը մի օր տեսանելի կդառնա (տես՝ 1 Հովհ.3:2): Այս վերջնական վիճակը կոչվում է փառավորում: Սա կարող է լուսաբանվել որպես.

1. ներքին փրկություն՝ արդարացում (փրկված մեղքի պատժից)
2. ընթացիկ փրկություն՝ սրբացում (փրկված մեղքի գորությունից)
3. վերջնական փրկություն՝ փառավորում (փրկված մեղքի ներկայությունից)

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ո՞րն է Եբր.1:1-ի շեշտադրումը:
2. Ո՞րն է բնության հայտնության և հատուկ հայտնության միջև տարբերությունը:
3. Թվարկեք հհ.2-3-ում տրված Հիսուսի անձի և գործի յոթ ասպեկտները:
4. Ինչո՞ւ է Հիսուսի վերաբերյալ այս նկարագրությունները այդքան կարևոր նամակը ստացողների համար:
5. Ի՞նչ կապ ունեն հրեշտակները Հիսուսի ծառայության հետ:

ԵՔՐԱՅԵՑԻՆԵՐԻ 2

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Մեծ Փրկությունը	Մի՛ արհամարիեք փրկությունը	Չգուշացում թերանալու դեմ	Մեծ Փրկությունը	Հորդոր
2:1-4	2:1-4	2:1-4	2:1-4	2:1-4
Փրկության նահվիրան	Որդին հրեշտակներից ավելի ցածրացավ	Հիսուսի խոնարհություն ու մեծարումը	Մեզ փրկության առաջնորդողը	Փրկությունը եկավ Քրիստոսով և ոչ թե հրեշտակներով
2:5-9	2:5-9	2:5-9	2:5-10	2:5-8ա
	Շատ որդիների բերեց փառքի մեջ			2:8բ-9
2:10-18	2:10-18	2:10-13	2:11-13	2:10-13
		2:14-18	2:14-18	2:14-18

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու Ուղեցույց») *ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՑԻՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Առաջին և երկրորդ գլուխները գրական բաժիններ են: Երկրորդ գլուխը շարունակում է ՀԿ-յան հայտնության (տես՝ Եբր.1:1-3) և հրեշտակների (տես՝ Եբր.1:4-2:18) համեմատ Հիսուսի գերազանցության թեման:

Բ. Երկրորդ գլխի նոր շեշտադրումն է Հիսուսի կապը Իր ժողովրդի հետ (տես՝ Եբր.2:10-18): Հիսուսը ճշմարտապես նույնականացվում է նրանց հետ և նրանք էլ, որպես արդյունք, բաժնեկից են դառնում Նրա փառքին: Այս ավելի գերազանց ուխտի ամբողջ նպատակն է, որ անկում ապրած մարդկությունը վերականգնվի (տես՝ Եբր.2:9-11, 14-18) ստեղծագործության մեջ իր ունեցած նախապատիվ տեղը գրավելու (տես՝ Սաղմ. 8): Հիսուսը իդեալական մարդ է՝ մեզ համար կատարյալ օրինակ:

Գ. Գլուխ 2-ը առաջինն է զգուշացումների շարքում (Եբր.2:1-4; 3:7-4:11; 5:11-6:12; 10:19-39; 12:14-29): Այս առաջին զգուշացումը վերաբերում է նրանց, ովքեր հնարավոր է արհամարիեն նոր

ուխտի հայտնությունը (ավետարանը): Սա հավանաբար վերաբերում է հրեական ծագմամբ մարդկանց, ովքեր ունեին խորը ակնածանք մովսիսական ուխտի հանդեպ, և ուստի կարիք ունեին համեմատության:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵՐԲԱՅԵՑԻՆԵՐԻ 2:1-4

¹Գրա համար պետք է շատ լուրջ ուշադրություն դարձնենք մեր լսածներին, որպեսզի չլինի թե թերանանք: ²Որովհետև, եթե հրեշտակների միջոցով տրված խոսքը հաստատուն էր, և ամեն հանցանք ու անհնազանդություն իր արդար հատուցումն ստացավ, ³մենք ինչպե՞ս պիտի ազատվենք, եթե անհոգ գտնվենք այնպիսի մեծ փրկության հանդեպ, որ նախ հռչակվեց Տիրոջ կողմից և ապա մեր մեջ հաստատվեց նրանց միջոցով, որ Իրենից էին լսել, ⁴և Աստված Ինքն էլ դա վկայեց և՛ նշաններով ու զորավոր գործերով, զանազան հրաշքներով, և՛ Սուրբ Հոգու պարզևներով՝ Իր կամքի համաձայն:

2:1 «Գրա համար» Սա վերաբերում է առաջին գլխում գետեղված ճշմարտություններին:

■ «/մենք/ պետք է» Սա “dei” տերմինն է, որը նշանակում է բարոյական անհրաժեշտություն: Սա Երբայեցիների գրքում արձանագրված շատ զգուշացումներից առաջինն է (այսինքն՝ Երբ.2:1-4), որը ուղղված է մի խումբ հավատացյալ հրեաների, որոնք դեռ երկրպագում էին ժողովարաններում անհավատ հրեաների հետ միասին: Գրքի որոշ զգուշացումներ ուղղված են այն հավատացյալներին, ովքեր կարիք ունեն քայլ կատարելու՝ միանալու եկեղեցուն և մտնելու ավետարանի աշխարհով մեկ տարածելու առաքելության իրականացման և հասունության մեջ (տես՝ Մատթ.28:19-20; Դուկ.24:47; Գործք 1:8): Մյուս զգուշացումները ուղղված են անմիջապես անհավատ հրեաներին, ովքեր լսել են ավետարանը և տեսել ավետարանի գորությունը իրենց հրեա հավատացյալ ընկերների և երկրպագուների կյանքում, սակայն մերժել են անձնապես ընդունելու Հիսուսին որպես խոստացված Մեսիայի և իրենց ռաբբիական ավանդույթներից էլ ավելի առաջ անցնելու (տես՝ Երբայեցիների 6; 10):

NASB	«շատ ավելի խիստ ուշադրություն դարձնել»
NKJV	«ավելի լուրջ ուշադրություն դարձնել»
NRSV	«ավելի մեծ ուշադրություն դարձնել»
TEV	«ավելի ամուր բռնել»
NJB	«մեր մտքերը ավելի ուշադրությամբ դարձնենք»

Սա խիստ հունարեն ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ և ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ Է, որը նշանակում է կատարյալ ուշադրություն հրավիրել և հոգ տանել ինչ-որ բանի կամ ինչ-որ մեկի համար (տես՝ Գործք 8:6,10; 16:14): Որդու Նոր Ուխտը (ավետարանը) թե՛ թանկագին է և թե՛ վտանգավոր: Աստծո ճշմարտության հետ պետք է պատշաճ կերպով վարվել:

■ «որպեսզի չլինի թե թերանանք» Այս տերմինը ՆԿ-ում միայն այստեղ է կիրառվում: Տառացիորեն այն նշանակում է «հոսել անցնել» կամ «սայթաքել»: Այն կիրառվում է փոխաբերական իմաստով քամու կամ ջրի հոսանքի համար, որի պատճառով ինչ-որ մեկը թշվառ անցնում է ապահով հենարանի մոտով: Այս զգուշացումը սահմանված է որպես ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԴԵՄՋԻ ՀՈԳՆԱԿԻ: Չնշված արտաքուստ անձի կողմից դրված պայմանականության գործոն է առկա այստեղ (ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ) և ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ: Ճշմարտությունից հեռանալը կամ թերանալը իրական հնարավորություն էր: Հնարավոր էր նաև, որ փոխաբերությունը ուղղված է նամակը ստացողներին, որոնք դեռ մնացել են նույն տեղում, մինչ ճշմարտությունը առաջ էր շարժվում: Սա կարող է լինել Սեպտուագինտայի Առակ.3:21-ից ակնարկ, որտեղ կիրառված է միևնույն բայը:

Այս զգուշացումը դիտարկելու երեք հնարավոր կերպեր կան՝

1. որ այն վերաբերում է այն մարդկանց, ովքեր մերժել են արձագանքել ավետարանին (տես՝ Երբ.2:3)
2. որ այն վերաբերում է այն մարդկանց, ովքեր հավատացել էին (տես՝ «պետք է շատ լուրջ ուշադրություն դարձնենք մեր լսածներին»), սակայն հասուն չեն
3. որ այն վերաբերում է այն մարդկանց, ովքեր հավատացել էին և Հիսուսին հավատալու իրենց սկզբնական դավանանքը՝ խոստովանությունը չպահելու վտանգի մեջ էին

Առաջինը հնարավոր է վերաբերում էր անհավատ հրեաներին, մինչ երկրորդը և երրորդը՝ հավատացյալ հրեաներին: ԱՌԱՋԻՆ ԴԵՄՔԻ ՀՈԳՆԱԿԻ թվի կիրառությունը նշանակում է, որ հեղինակն իրեն համարում է այն խմբի մարդկանցից, ում ուղղված էր խոսքը և որոնք ըստ էության հավատացյալներ էին կամ ամռվագն միևնույն ժողովարանից, որտեղ քարոզվում էր ավետարանը (տես՝ Եբր.2:3): Սակայն այս նույն քերականական ՀՈԳՆԱԿԻ թիվը հայտնվում է Եբր.10:26-ում գրականական կիրառությամբ:

2:2 «եթե» Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը ենթադրում է, որ այն ճիշտ է հեղինակի տեսանկյունից կամ իր գրականական նկատառումներից ելնելով: Անգլերենում այն հանախ թարգմանվում է որպես «քանի որ» կամ «որովհետև»:

■ **«հրեշտակների միջոցով տրված խոսքը»** Սա վերաբերում է Մովսիսական Օրենքին: Հրեաները հավատում էին, որ Սինա լեռան վրա ՅԱՀՎԵԻ և ՄՈՎՍԵՍԻ միջև հրեշտակները որպես միջնորդներ էին գործում (տես՝ Ելից 3:2; 14:19; 23:20-23; 32:34; 33:2; Սաղմ.68:17; Գործք 7:38,53; Գաղ.3:19):

NASB	«անփոփոխ էր»
NKJV	«հաստատ էր»
NRSV	«վավեր էր»
TEV	«պարզվում էր, որ ճշմարիտ էր»
NJB	«վստահելի էր»

Աստված հավատարիմ է Իր խոսքին, թե՛ օրհնություններին և թե՛ անեծքներին (տես՝ 2 Օր.27-28):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԱՇԽԻՔ
SPECIAL TOPIC: GUARANTEE

Սա հունարեն *bebaios* տերմինն է, որն ունի երեք նշանակություն՝

1. մի բան, որ հաստատ է, որոշակի կամ որին հնարավոր է վստահել (տես՝ Հռոմ.4:16; 2 Կորնթ.1:7; Եբր.2:20; 3:6,14; 6:19; 2 Պետ.1:10,19):
2. մի գործընթաց, որով ինչ-որ բանի վստահելիությունն է ցուցադրվում կամ հաստատվում (տես՝ Հռոմ.15:8; Եբր.2:2; տես՝ Լու և Նիդա, *Նոր Կտակարանի Հունարեն-Անգլերեն Բառարան*, Հատոր 1, էջ՝ 340, 377, 670 / Louw and Nida, *Greek-English Lexicon of the New Testament*):
3. պապիրուսների մեջ այն դարձավ տեխնիկական տերմին օրինական երաշխավորագրի համար (տես՝ Մուլթոն և Միլիգան, *Հունարեն Նոր Կտակարանի Բառարան*, էջ՝ 107-108 / Moulton and Milligan, *The Vocabulary of the Greek New Testament*):

■ **«ամեն հանցանք ու անհնազանդություն իր արդար հատուցումն ստացավ»** Մովսիսական Ուխտը հիմնված էր հնազանդության վրա: Կամավոր՝ գիտակցաբար անհնազանդությունն ունի հստակ և անմիջական հետևանքներ (տես՝ Եբր.10:28):

Այս երկու տերմինները ձևավորվում են միևնույն ՆԱԽԴԻՐԻ միջոցով *parabasis* և *parakoē*, որոնք հնարավոր է եղել են դիտավորյալ բառախաղեր (կամ ձայնախաղեր):

2:3 «մենք ինչպե՞ս պիտի ազատվենք» Եբրայեցիների գիրքն ունի բազմաթիվ խիստ զգուշացումներ Աստծո ճշմարտությունը արհամարհելու շուրջ (տես՝ Եբր.2:1-4; 3:7-4:11; 5:11-6:12; 10:19-39; 12:14-29):

■ **«եթե անհոգ գտնվենք /արհամարհենք/ այնպիսի մեծ փրկության հանդեպ»** «Անհոգ գտնվել /արհամարհել/» տերմինը (*ameleō*) նշանակում է «ուշադրություն չդարձնել» կամ «անհոգ գտնվել» ինչ-որ բանի կամ ինչ-որ մեկի հանդեպ: ՆԿ-ում այն կիրառվում է (1) Տիմոթեոսին հորդորելու համար, որպեսզի չարհամարհի իր հոգևոր պարզը (տես՝ 1 Տիմ.4:14) և (2) Իսրայելի հանդեպ ՅԱՀՎԵԻ ուշադրության պակասի համար, քանի որ նրանք խախտել էին Նրա ուխտը (տես՝ Եբր.8:9):

Սա այն փաստի հիմնական կետն է, որ եթե Մովսեսի Ուխտն արհամարհելու արդյունքում ունենում էին այդպիսի անավոր հետևանքներ, ապա որքան ավելին դաժան կարող էին լինել հետևանքները Հիսուսի (Որդու) կողմից բերված ավելի լավ և Նոր Ուխտի արհամարհության դեպքում: Պատգամը գիտակցաբար արհամարհելու հետևանքները կապված են պատգամը Տվողի մեծամիտության հետ (այսինքն՝ թագավորական հարսանիքի առակները, տես՝ Մատթ.22:2-14):

Ապա մեկնաբանական հարց է ծագում. «Արդո՞ք սա վերաբերում է (1) նոր ուխտը (ավետարանը) մերժելուն, թե (2) նոր ուխտի հանդեպ անհոգ գտնվելուն՝ արհամարհելուն»: Այս տերմինի ժամանակակից կիրառությունը ակնարկում է #2: Որոշ մեկնաբաններ «մենք» բառի կիրառությունը ավելացնում

են որպես ապացույց այն բանի, որ հեղինակը իրեն նույնականացնում է հավատացյալ այդ խմբի հետ, սակայն Եբր.10:26-ում հեղինակը կիրառում է այս նույն դերանունը (ԱՌԱՋԻՆ ԴԵՄՔԻ ՀՈԳՆԱԿԻ) անհավատ խմբին դիմելիս: Այս լսարանը չէր մերժում ավետարանը, այլ թերագնահատում էր՝ փոքրացնում էր, դրա ազդեցությունը իրենց կյանքերում:

■ **«նախ հոչակվեց Տիրոջ կողմից»** Հիսուսը կոչվեց ՅԱՀՎԵԻ ՀԿ-յան Ուխտի անվամբ «Ես ԵՄ որ ԵՄ» (տես՝ Ելից 3:14, որը հետագայում կարդացվում էր որպես Տեր /adon/): Տես Հատուկ Թեմա Եբր.2:7-ում: Սա ՀԿ-յան հեղինակների կողմից Հիսուս Նագովրեցու աստվածությունը ներկայացնելու կիրառվող կերպերից մեկն էր: ՅԱՀՎԵՆ Ինքն էր վկայություն տալիս Հիսուսի պատգամի՝ խոսքերի ճշմարտացիության համար (տես՝ Եբր.2:4): Տես Հատուկ Թեմա. *Archē* Եբր.3:14-ում:

■ **«նրանց միջոցով, որ Իրենից էին լսել»** Թե՛ Չոն Կավիներ և թե՛ Մարթին Լյութերը ասում էին, որ այս արտահայտությունը վերաբերում է Քրիստոնյաների երկրորդ սերնդին: Ակնհայտ է, որ սա նկատի չունի Պողոսին (տես՝ Գաղ.1:11): Պողոսը Եբրայեցիների մարդկային հեղինակը չէր: Տես Եբր.13:23-ի շուրջ կատարած գրառումները:

2:4 «Աստված Ինքն էլ դա վկայեց /անգլ.՝ վկայում է/ և՛ նշաններով ու գորավոր գործերով, զանազան հրաշքներով» Անշուշտ նշանների ու գորավոր գործերի նպատակն է քաջալերել հավատացյալներին և օգնել անհավատներին ընդունելու ճշմարտությունը (տես՝ Գործք 2:22): Աստված շարունակում է (ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ) վկայություն տալ ավետարանի ճշմարտության մասին: Հիսուսի առաջին գալստյան ժամանակներում թե՛ բարու և թե՛ չարի կողմից կատարվող նշանների ուժգնացում էր տեղի ունենում, որը լինելու է նաև Հիսուսի երկրորդ գալստյան օրերում:

■ **«և՛ Սուրբ Հոգու պարզևներով»** Յուրաքանչյուր հավատացյալ իր դարձի ժամանակ Սուրբ Հոգու կողմից տրված առնվազն մեկ հոգևոր պարզև ունի (տես՝ 1 Կորնթ.12:7,11,18; Եփես.4:11,12): Հավատացյալների այս հոգևոր պարզևներով օժտվածությունը ավետարանի ճշմարտացիության ժամանակակից ապացույցներից մեկն է, որը նամակը ստացողներից մի քանիսը ուրանում էին կամ մերժում:

■ **«Իր կամքի համաձայն»** Հոգին է ընտրում և բաժանում պարզևները (տես՝ 1 Կորնթ.12:7,11,18): Հավատացյալներին պարզևներ չի տրվում անձնական արժանիքների կամ անձնական ընտրության հիման վրա: Եթե հոգևոր պարզևը կապված է բնածին տաղանդի հետ, ապա այն գորացվում է և ուստի ուղորդվում Քրիստոսին պատիվ բերելու համար և ոչ թե անհատ Քրիստոնյային: Բոլոր պարզևները ծառայում են մարմնին: Յուրաքանչյուր հավատացյալ պետք է ապրի մարմնի առողջության և անմահ համար:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 2:5-9
⁵Որովհետև այն գալիք աշխարհը, որի մասին խոսում ենք, Նա հրեշտակներին չենթարկեց:
⁶Սակայն մեկը վկայեց մի տեղ, ասելով.
«ՄԱՐԳՆ ԻՆՉ Է, ՈՐ ՆՐԱՆ ՀԻՇՈՒՄ ԵՄ,
ԿԱՄ ՄԱՐԳՈՒ ՈՐԴԻՆ, ՈՐ ԱՅՑԵԼՈՒՄ ԵՄ ՆՐԱՆ:
⁷ՓՈՔՐ ԻՆՉ ՑԱԾՐ ԱՐԵՑԻՐ ՆՐԱՆ, ԶԱՆ ՀԵՇՏԱԿՆԵՐԻՆ,
ՓԱՌՔՈՎ ԵՎ ՊԱՏՎՈՎ ՊԱՍԿԵՑԻՐ ՆՐԱՆ
ՈՒ ՔՈ ԶԵՌՔԻ ԳՈՐԾԵՐԻ ՎՐԱ ԿԱՐԳԵՑԻՐ ՆՐԱՆ.
⁸ԳՈՒ ԱՄԵՆ ԻՆՉ ՀՆԱԶԱՆԴԵՑՐԻՐ ՆՐԱ ՈՏՔԵՐԻ ՏԱԿ»:
Ամեն ինչ նրան հնազանդեցնելով՝ ոչինչ չթողեց, որ նրան հնազանդված չլինի: Սակայն այժմ դեռ ամեն ինչ չէ, որ նրան հնազանդված ենք տեսնում: ⁹Բայց մենք տեսնում ենք Հիսուսին, որ հրեշտակներից մի քիչ ցածր դասվեց մահվան չարչարանքների պատճառով՝ փառքով և պատվով պսակված, որպեսզի Նա, Աստծո շնորհով, ամենքի համար մահ ճաշակի,

2:5 «Որովհետև այն գալիք աշխարհը... Նա հրեշտակներին չենթարկեց» Ճիշտ է, որ հրեշտակները հիմա գտնվում են հոգևորապես նախապատիվ տեղում (տես՝ 2 Օր.32:8, Մեպտուազինտայում և Դանիելի գրքում՝ գլուխ 10): Սակայն գալիք աշխարհում, մարդկային էակներն են լինելու իշխանության դիրքում՝ իրենց մարմնացած, փառավորված Փրկչի միջոցով: Սա ևս մեկ համեմատություն է կապված Հիսուսի և Իր հետևորդների գերազանցության հետ հրեշտակների վրա, որոնք համարվում էին որպես Մովսիսական Ուխտի մեջ ընդգրկված էակներ (տես՝ Եբր.1:4-14):

2:6 «Սակայն մեկը վկայեց մի տեղ, ասելով» Սա Եբրայերեն մի դարձվածք է ամբողջ ՀԿ-ի ներշնչված լինելու վերաբերյալ, ոչ թե որ հեղինակը կամենում է հիշել, թե որտեղ են գտնվում այս մեջբերումները

տես՝ Եբր.4:4): Այստեղ հաջորդում են իրար մի շարք ՀԿ-յան մեջբերումներ, որը բնորոշ է Եբրայեցիների գրքին:

■ «ՄԱՐԳՆ ԻՆՉ Է, ՈՐ ՆՐԱՆ ՀԻՇՈՒՄ ԵՍ» Սա մեջբերում է Սեպտուագինտայի Սաղմ.8:4-6-ից՝ աստվածաբանորեն հիմնված Ծննդ.1:26,28-ի վրա: Համար 6,7 և 8 չի վերաբերում Մեսիային («Մարդու Որդին»), այլ մարդկությանը: Սաղմոսում «մարդու որդի» տերմինը զուգահեռ կապի մեջ է «մարդ» տերմինի հետ և չպետք է գրվի մեծատառով: Այն եբրայերեն դարձվածք է օգտագործվող մարդու համար, *ben adam*, որը շատ է կիրառվում Եզեկիելի գրքում (տես՝ Եզեկ.2:1; 3:1,3,4,10,17, և այլն):

2:7 «ՓՈՔՐ ԻՆՉ ՑԱԾՐ ԱՐԵՑԻՐ ՆՐԱՆ, ՔԱՆ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻՆ» Սա Սաղմ.8:5-6 մեջբերման շարունակությունն է Սեպտուագինտայից: Թարգմանության և մեկնաբանության մեջ հարց է ծագում, թե ինչպես պետք է հասկացվի եբրայերենի *Elohim* տերմինը:

1. Սեպտուագինտան թարգմանել է Սաղմ.8:5-ը որպես «հրեշտակներ», ինչպես և Արամերենի Թարգում ու Փեշիտա, Վուլգատտա և KJV թարգմանությունները:
2. Ամերիկայի Հրեական Հրատարակչության Ընկերությունը՝ «մի փոքր ցած քան երկնայինը»: Մի քանի անգլերեն թարգմանություններ տալիս են «Աստված» բառը (տես՝ ASV, NASB, RSV, NEB, NRSV, REB, JB, NJB, TEV): Այս տերմինը, երբ ՀԿ-ում կիրառվում է ԵԶԱԿԻ ԲԱՅՈՎ՝ ինչպես օրինակ Ծննդ. 1:1, ապա վերաբերում է Աստծուն: Այս իմաստով Հիսուսը այն կիրառեց Հովի. 10:31-39-ում: Այն նաև կիրառվում է հեթանոս ազգերի «աստվածների» համար: Այն կարող է վերաբերել հրեշտակներին, եթե խոսքը գնում է Աստծո երկնային խորհրդի մասին, որը կազմված է Իրենից և հրեշտակային ծառայող հոգիներից (տես՝ 3 Թագ. 22:19; Դան. 7:10):
3. Նույնիսկ հնարավոր է, որ այն վերաբերում է Իսրայելի Դատավորներին (տես՝ Ելից 21:6; 22:8-9,28; Սաղմ. 82:1,6):

Այս համատեքստում աստվածաբանական իմաստն այն է, որ Հիսուսը և Իր հետևորդները (տես՝ Եբր. 1:14) հրեշտակներից ավելի գերազանց են բարձր:

Եբր.2:7-ի վերջում գոյություն ունի հունարեն ձեռագրային տարբերություն: Մի քանի հինավուրց հունարեն ձեռագրերը (Ⲱ, A, C, D*, P) շարունակում են մեջբերել Սաղմ.8:7-ից, սակայն մյուսները կանգ են առնում «փառքով և պատվով պսակեցիր նրան» խոսքի վրա (P⁶, B, D*, K, L): Չնայած թարգմանությունների այսքան շատ տարբերակների, ոչ մի տարբերություն չկա տեքստի մեկնաբանության մեջ:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ
SPECIAL TOPIC: THE NAMES FOR DEITY

Ա. *El* (BDB 42, KB 48)

1. Աստվածության համար սեռային հնագույն տերմինի բնագիր նշանակությունը անհայտ է, թեև շատ գիտնականներ համարում են, որ այն ծագել է աքքադական «ուժեղ լինել» կամ «գորավոր լինել» արմատից (տես՝ Ծննդ. 17:1; Թվոց 23:19; 2 Օր. 7:21; Սաղմ. 50:1):
2. Քանանացիների պանթեոնում ամենաբարձր աստվածը *El* է (Ռաս Շամրայի տեքստերը):
3. Աստվածաշնչում *El* հաճախ բաղադրվում է այլ տերմինների հետ: Այս համադրությունները դարձան Աստծուն բնութագրելու միջոց:
 - ա. *El-Elyon* («Բարձրյալ Աստված» BDB 42 & 751 II), Ծննդ. 14:18-22; 2 Օր. 32:8; Եսայի 14:41
 - բ. *El-Roi* («Աստված, որ տեսնում է» կամ «Աստված, որ հայտնում է Իրեն» BDB 42 & 909), Ծննդ. 16:13
 - գ. *El-Shaddai* («Ամենակարող Աստված» կամ «բոլոր զթությունների Աստված» կամ «Լեռան Աստված» BDB 42 & 994), Ծննդ. 17:1; 35:11; 43:14; 49:25; Ելից 6:3
 - դ. *El-Olam* («Հավիտենական Աստված» BDB 42 & 761), Ծննդ. 21:33: Այս տերմինը աստվածաբանորեն կապված է Դավթին տրված Աստծո խոստման հետ, 2 Թագ. 7:13,16
 - ե. *El-Berit* («Ուխտի Աստված» BDB 42 & 136), Դատ. 9:46
4. *El* հավասարեցվում է հետևյալ անունների հետ՝
 - ա. YHWH (ՅԱՎՎԵ) Սաղմ. 85:8; Եսայի 42:5
 - բ. *Elohim* Ծննդ. 46:3; Հոր 5:8, «Ես եմ *El-ը*, քո հոր *Elohim-ը*»
 - գ. *Shaddai* Ծննդ. 49:25
 - դ. «նախանձոտ» Ելից 34:14; 2 Օր. 4:24; 5:9; 6:15
 - ե. «ողորմած» 2 Օր. 4:31; Նեեմ. 9:31
 - զ. «հզոր ու ահարկու» (մեծ ու ահեղ) 2 Օր. 7:21; 10:17; Նեեմ. 1:5; 9:32; Դան. 9:4
 - է. «գիտություն» 1 Թագ. 2:3

- ը. «իմ ամուր ասպաստարան» 2 Թագ.22:33
- թ. «իմ վրեժխնդիր» 2 Թագ.22:48
- ժ. «սուրբ» Եսայի 5:16
- ի. «գորություն» Եսայի 10:21
- լ. «իմ փրկություն» Եսայի 12:2
- խ. «մեծ ու հզոր» Երեմ.32:18
- ծ. «հատուցում» Երեմ.51:56

5. ՀԿ-ում Աստծո համար գրված բոլոր անունների համադրությունը գտնվում է Հեսու 22:22-ում (*El, Elohim, YHWH*, կրկնվող)

Բ. *Elyon* (BDB 751, KB 832)

1. Այս բառի հիմնական նշանակությունն է՝ «բարձր», «մեծարված» կամ «բարձրացված» (տես՝ Ծննդ.40:17; 3 Թագ.9:8; 4 Թագ.18:17; Նեեմ.3:25; Երեմ.20:2; 36:10; Սաղմ.18:13)
2. Այն կիրառվել է Աստծո մի քանի այլ անունների՝ տիտղոսների հետ զուգահեռ իմաստով՝
 - ա. *Elohim* (Էլոհիմ) – Սաղմ.47:1-2; 73:11; 107:11
 - բ. *YHWH* (ՅԱՀՎԵ) – Ծննդ.14:22; 2 Թագ.22:14
 - գ. *El-Shaddai* (Էլ-Շադայ) – Սաղմ.91:1,9
 - դ. *El* (Էլ) – Թվոց 24:16
 - ե. *Elah* (Էլահ) – հաճախ օգտագործվում է Դանիել 2-6 և Եզրաս 4-7, կապված *illair* բառի հետ (արամերեն «Բարձրյալ Աստված») Դան.3:26; 4:2; 5:18,21
3. Այն հաճախ կիրառվել է ոչ իսրայելցիների կողմից.
 - ա. Մեքիսեդեկ, Ծննդ.14:18-22
 - բ. Բաղասամ, Թվոց 24:16
 - գ. Մովսեսը, ազգերի մասին 2 Օր.32:8-ում խոսելիս
 - դ. Դուկասի Ավետարանը ՆԿ-ում, գրված հեթանոսներին, այն նույնպես կիրառում է հունարեն *Hupsistos* բառի համարժեքը (տես՝ 1:32,35,76; 6:35; 8:28; Գործք 7:48; 16:17)

Գ. *Elohim* (<ՈԳՆԱԿԻ), *Eloah* (ԵՉԱԿԻ), հիմնականում կիրառված է պոեզիայի մեջ (BDB 43, KB 52)

1. Այս տերմինը ՀԿ-ից դուրս չէր գտնի
2. Այս բառը կարող է բնութագրել Իսրայելի Աստծուն կամ ազգերի աստվածներին (տես՝ Ելից 3:6; 20:3): Աբրահամի ընտանիքը բազմաստված էր (տես՝ Հեսու 24:2)
3. Այն կարող է վերաբերել իսրայելացի դատավորներին (տես՝ Ելից 21:6; Սաղմ.82:6)
4. *Elohim* տերմինը նաև կիրառվում էր այլ հոգևոր էակների համար (հրեշտակներ, դևեր) ինչպես 2 Օր.32:8-ում (LXX); Սաղմ.8:5; Հոր 1:6; 38:7
5. Աստվածաշնչում աստվածության համար սա առաջին անունը կամ տիտղոսն է (տես՝ Ծննդ.1:1): Այն կիրառված է առանձին մինչև Ծննդ.2:4, որտեղ համադրվում է YHWH –ի հետ: Այն հիմնականում (աստվածաբանորեն) վերաբերում է Աստծուն որպես արարչի, պահապանի և այս երկրագնդի վրա կյանք պարզևողի (տես՝ Սաղմ.104):
 Այն *El* բառի հոմանիշն է (տես՝ 2 Օր.32:15-19): Նաև համարժեք իմաստն ունի YHWH-ի, ինչպես Սաղմ.14-ում (*Elohim*, հհ.1,2,5; YHWH, հհ. 2,6; նույնիսկ *Adon*, հ.4):
6. Չնայած այն <ՈԳՆԱԿԻ թվով է և կիրառվում է այլ աստվածների համար, այս տերմինը հաճախ բնութագրում է Իսրայելի Աստծուն, սակայն միաստվածությանը մատնանշելիս սովորաբար կիրառվում է ԵՉԱԿԻ թվով ԲԱՅԸ:
7. Տարօրինակ է, որ Իսրայելի միակ Աստծո ընդհանուր անունը <ՈԳՆԱԿԻ է: Չնայած անհատակությանը, ահա այդ տեսությունները.
 - ա. Եբրայերենը ունի շատ <ՈԳՆԱԿԻՆԵՐ, հաճախ կիրառվող շեշտադրության համար: Հետագայում եբրայերեն քերականական առանձնահատկությամբ այս թեմայի հետ սերտորեն կապ կունենա «մեծության հոգնակին», որտեղ <ՈԳՆԱԿԻՆ կիրառվում է մեծացնելու տվյալ հասկացությունը:
 - բ. Սա կարող է վերաբերել հրեշտակային խորհրդին, որի հետ Աստված հանդիպում է երկնքում և որը կատարում է Նրա հրամանները (տես՝ Հովի.1:3,10; Հռոմ.11:36; 1 Կորնթ.8:6; Կող.1:15; Եբր.1:2; 2:10):
 - գ. Նույնիսկ հնարավոր է, որ սա արտացոլում է ՆԿ-ի այն հայտնությունը, որ Աստված երեք անձ է մեկում: Ծննդ.1:1-ում Աստված արարում է, Ծննդ.1:2-ում՝ Հոգին շարժվում է, իսկ ՆԿ-ում՝ Հիսուսը Հայր Աստծո գործակալն է ստեղծագործության մեջ (տես՝ Հովի.1:3,10; Հռոմ.11:36; 1 Կորնթ.8:6; Կող.1:15; Եբր.1:2; 2:10):

Դ. YHWH (BDB 217, KB 394)

1. Սա այն անունն է, որը պատկերում է աստվածությանը որպես ուխտ կապող Աստծո, փրկիչ Աստծո, ազատագրող Աստծո: Մարդիկ ուխտադրույժ են, սակայն Աստված հավատարիմ է Իր խոսքին, խոստմանը, ուխտին (տես՝ Սաղմ.103):

Այս անունը առաջին անգամ նշվել է *Elohim* բառի հետ համադրված Ծննդ.2:4-ում: Ծննդոց 1-2-ում գոյություն չունեն արարչագործության երկու արձանագրություններ, այլ երկու շեշտադրումներ՝ (1) Աստված որպես տիեզերքի արարիչ (ֆիզիկական) և (2) Աստված որպես մարդկության հատուկ արարիչը: Ծննդոց 2:4-3:24-ը սկսում է մարդկությանը առանձնաշնորհված դիրքի և նպատակի հատուկ հայտնությամբ, ինչպես նաև մեղքի հիմնախնդրով և ապստամբությամբ, որոնք միացան այս բացառիկ դիրքին:

2. Ծննդ.4:26-ում ասվում է «*մարդիկ* սկսեցին կանչել ՏԵՐՈՋ (YHWH) անունը»: Ամեն դեպքում Ելից 6:3 ակնարկում է, որ առաջին ուխտի մարդիկ (Նահապետները և նրանց ընտանիքները) ճանաչում էին Աստծուն միայն որպես Էլ-Շադայ (*El-Shaddai*): YHWH անունը բացատրվում է միայն մեկ անգամ՝ Ելից 3:13-16-ում, հատկապես հ.14: Այնուամենայնիվ Մովսեսի գրքերը հաճախ մեկնաբանում են բառերը հայտնի բառախաղերով և ոչ թե ըստ ստուգաբանության (տես՝ Ծննդ.17:5; 27:36; 29:13-35): Գոյություն են ունեցել մի քանի տեսություններ այս անվան նշանակության հետ կապված (վերցված IDB, հատոր 2, էջ.՝ 409-11):

- ա. Արաբերեն արմատից՝ «կրակոտ սեր ցուցաբերել»
- բ. Արաբերեն արմատից՝ «փչել» (YHWH որպես փոթորկող Աստված)
- գ. Ուզարտիկ (Քանանացիների) արմատից՝ «խոսել»
- դ. Համաձայն Փյունիկյան մակագրության, ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է, որը նշանակում է «Մեկը, որ պահպանում է» կամ «Մեկը, որ հաստատում է»:
- ե. Եբրայերեն *Qal* ձևից՝ «Նա, որ է» կամ, «Նա, որ ներկա է» (ապառնի իմաստով՝ «Նա որ կլինի»)
- զ. Եբրայերեն *Hiphil* ձևից՝ «Նա, որ գոյի պատճառ է հանդիսանում»
- է. Եբրայերեն «ապրել» արմատից (օր.՝ Ծննդ.3:21), որը նշանակում է „հավերժ ապրողը, միակ ապրողը,,
- ը. Ելից 3:13-16 կոնտեքստից ԱՆԿԱՏԱՐ Ժամանակով՝ մի մասը կիրառված ՎԱՂԱԿԱՏԱՐ Ժամանակում, «Ես կշարունակեմ լինելու այն ինչ եղել եմ» կամ «Ես կշարունակեմ լինել այն ինչ միշտ եմ եղել» (տես՝ J. Wash Watts, *A Survey of Syntax in the Old Testament*, p.67 /Ջ. Ուոշ Ուաթս, *Շարահյուսության Ուսումնասիրություն Հին Կտակարանում*, էջ 67):
 - (1) *Yah* (օր.՝ Ալելու – յահ, BDB 219, տես՝ Ելից 15:2; 17:16; Սաղմ.89:8; 104:35)
 - (2) *Yahu* (‘iah’ հայերեն՝ -իա, անունների վերջավորությունը, օր.՝ Եսայիա)
 - (3) *Yo* (‘Jo’ հայերեն՝ Հո-, անունների սկզբնամասը, օր.՝ Հովել)

3. Ավելի ուշ հուդայականության մեջ ուխտի այս անունը դարձավ այնքան սուրբ (քառագիրը), որ հրեաները վախենում էին արտասանել այն, այլապես կխախտեին Ելից 20:7; 2 Օր.5:11; 6:13-ի պատվիրանը: Ուստի նրանք այս բառը փոխարինեցին եբրայերեն «սեփականատեր», «տեր» «ամուսին» տերմիններով – *adon* կամ *adonai* (իմ տեր): Երբ ՀԿ-ի տեքստերը ընթերցելիս հասնում էին YHWH բառին նրանք արտասանում էին «տեր»: Այդ իսկ պատճառով YHWH բառը անգլերեն (հայերեն) թարգմանություններում գրված է ՏԵՐ:

4. Ինչպես *El*, *YHWH* բառերի հետ հաճախ համադրվում են այլ տերմիններ, որպեսզի շեշտադրվեն Իսրայելի Ուխտի Աստծո որոշակի հատկություններ: Չնայած որ կան շատ հնարավոր համադրված տերմիններ, ահա դրանցից մի քանիսը.

- ա. *YHWH – Yireh* (YHWH Եհովա-Իրե՝ Եհովան կհոգա, BDB 217 & 906), Ծննդ.22:14
- բ. *YHWH – Rophekha* (YHWH Եհովա-Ռոֆեխա, Եհովան քո բժիշկն է, BDB 217 & 950, *Qal* ԴԵՐԲԱՅ), Ելից 15:26
- գ. *YHWH – Nissi* (YHWH Եհովա-Նիսի՝ Եհովան իմ դրոշն է, BDB 217 & 651), Ելից 17:15
- դ. *YHWH – Meqaddishkem* (YHWH Եհովա-Մեքադիշկեմ՝ Նա ով հազեցնում է քեզ, BDB 217 & 872, *Piel* ԴԵՐԲԱՅ), Ելից 31:13
- ե. *YHWH – Shalom* (YHWH Եհովա-Շալոմ՝ Եհովան իմ խաղաղությունը, BDB 217 & 1022), Դատ.6:24
- զ. *YHWH – Sabaoth* (YHWH Եհովա-Սաբաովթ՝ զորքերի Եհովան, BDB 217 & 878), 1 Թագ.1:3, 11; 4:4; 15:2; հաճախ Սարգարեններում
- է. *YHWH –Ro’I* (YHWH Եհովա-Ռոյ՝ Եհովան իմ հովիվը, BDB 217 & 944, *Qal* ԴԵՐԲԱՅ), Սաղմ.23:1
- ը. *YHWH –Sidqenu* (YHWH Եհովա-Սիդքենյու՝ Եհովան իմ արդարությունը, BDB 217 & 841), Երեմ.23:6
- թ. *YHWH – Shammah* (YHWH Եհովա-Շամմա՝ Եհովան այնտեղ է, BDB 217 & 1027), Եզեկ.48:35

■ «Փառքով պսակեցիր Նրան» Տե՛ս Եբր.1:3 գրառումը:

2:8 Սա Սաղմ.2:6-ից է, սակայն Ծննդ. 1:26,28-30-ի ակնարկն է: Մարդկությունը, որը ստեղծված է Աստծո պատկերով (տես՝ Ծննդ.1:26-27) պետք է գործեին որպես երկրի վրա Նրա կառավարիչները (որպես Աստծո ներկայացուցիչներ): Սակայն Ծննդոց 3-ում մարդու անկումը խափանեց այս նպատակը (տես՝ Եբր.2:9գ):

2:9 «Բայց մենք տեսնում ենք Հիսուսին /անգլ.՝ Նրան/» NASB թարգմանությունը տալիս է այս ԴԵՐԱՆՈՒՄԸ փառատառով Եբր.2:7 և 8-ում (այսինքն՝ հեղինակը մեջբերում է Սաղմոսը), այսպիսով համեմատելով մարդկությանը իդեալական Մարդու հետ: Աստված մարդկությանը դրել է իշխանության պատվավոր դիրքում, սակայն մարդկությունը մեղանչեց և կորցրեց այդ դիրքը: Հիսուսը՝ մարմնացած Աստված, իրականացնում է մարդկության ճակատագիրը և Իր մահվամբ վերադարձնում է հավատացյալ մարդկությանը իր պատվավոր դիրքին: Հիսուսը իսկապես մարդ էր: Սա ևս մեկ Ադամ-Քրիստոս տիպաբանություն է (տես՝ Հռոմ.5:12-21; 1 Կորնթ.15:21-22,45-49; Փիլ.2:6-11):

■ **«որ հրեշտակներից մի քիչ ցածր դասվեց»** Սա ակնհայտ համեմատություն է համար 6 և 7-ի հետ: Այն խոսում է երկրի վրա Հիսուսի մարմնացման և կյանքի մասին:

■ **«Հիսուս»** Եբրայեցիների հեղինակը հատկանշականորեն կիրառում է «Հիսուս» անունը առանց որևէ հավելյալ նկարագրությունների (տես՝ Եբր.2:9; 3:1; 6:20; 7:22; 10:19; 12:2,24; 13:12): Հնարավոր է, որ սա տիպաբանության ծաղ է Հիսուս անվան հետ կապված որպես նոր Հեսուն: Այս անունները ճիշտ նույնն են: Եբրայեցիների հեղինակը հաճած է կիրառում է Ելիցի նյութերը: Ինչպես որ Հեսուն Աստծո ժողովրդին բերեց Խոստացյալ Երկրի հանգիստը, այնպես էլ, Հիսուսն է բերելու նրանց երկինք (այսինքն՝ յոթերորդ օրվա հանգստին):

■ **«մահվան չարչարանքների պատճառով»** Սա անդրադառնում է Ծննդ.3:15; Սաղմոս 22; Եսայի 53: Փրկագործության մեջ Նա հանդիսանում է Աստծո Գործակալը:

■ **«փառքով և պատվով պսակված»** Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է: Նա եղել է և մնում է այս Պսակվածը: Տես Եբր.1:3 գրառումները:

■ **«Աստծո շնորհով»** Այս թարգմանությունը (*charity Theos*) գտնվում է բոլոր անգլերեն Աստվածաշնչերում և պաշտպանվում է Հունարեն հետևյալ ձեռագրերի կողմից (P⁶⁶, x, A, B, C, D: Սակայն մի հետաքրքիր հատված է տրվում հետագա հնագույն տեքստերում՝ «առանց Աստծո» (*chōris Theos*): Բրյուս Մ. Մետցգերի *Հունարեն Նոր Կտակարանի Տեքստային Մեկնաբանություն* գրքում /Bruce M. Metzger, *A Textual Commentary On The Greek New Testament*/ ասվում է, որ սա բնագրում տրված էր լուսանցքային բացատրական մասում կապված 1 Կորնթ. 15:27-ի հետ, որը սխալ էր հասկացվում որպես "*chariti Theos*" արտահայտության ուղղում (էջ՝ 664):

Միացյալ Աստվածաշնչյան Ընկերության *Եբրայեցիների Նամակի Ձեռնարկ* Փոլ Էլլինգուորթի և Իգեն Ա. Նիդայի /*A Handbook on the Letter to the Hebrews* by Paul Ellingworth and Eugene A. Nida/ կողմից գրված գրքում առաջարկում է մեկ այլ կարծիք՝ վարկած, որ «առանց Աստծո» արտահայտությունը հնարավոր է ակնարկում է Սաղմոս 22-ը, որը Հիսուսը կիրառեց արտահայտելու խաչի վրա Իր կատարյալ մենակ մնալու զգացողությունը (տես՝ Մարկ.15:34) էջ՝ 37: Այս նույն կարծիքը արտահայտել է Մայալ Մ. Բյուրքը իր *Ձեռնարկի Աստվածաշնչյան Մեկնաբանություն* գրքում (էջ՝ 385) /Myles M. Bourke *Jerome Biblical Commentary*/:

Գոյություն ունի նաև երրորդ տարբերակը (վերցված Բարթ Գ. Էռմենգ *Ուղղափառների կողմից Սուրբ Գրքի Աղավաղումը* էջ՝ 146-150, /Bart D. Ehrman's *The Orthodox Corruption of Scripture*, Oxford Press, 1993/), որը դպիրները դիտավորյալ փոխել են «առանց Աստծո» արտահայտությունը աստվածաբանական նկատառումներով, հատկապես գնոստիցիզմի կողմից աստվածաբանական վտանգները կանխելու համար:

Այս տարբերակը հայտնի էր Օրիգենին և Ջերոմին: Նաև «առանց» բառը (*chōris*) տասներեք անգամ կիրառվում է Եբրայեցիների նամակում, որը ցույց է տալիս հեղինակի կողմից այս տերմինը գործածելու հակվածությունը: Նաև համաձայն Էռմանի (էջ՝ 148) այս բառին մշտապես հաջորդում է որևէ ԱՆՀՈՒԴ (առանց ՀՈՒԴ) ԳՈՅԱԿԱՆ:

■ **«Նա ... մահ ճաշակի»** Կարևոր է գիտակցել, որ Հիսուս Քրիստոսի համար չարչարանքները Աստծո կամքի համաձայն էին (տես՝ Ծննդ.3:15; Եսայի 53:4,10; Մարկ.10:45; 2 Կորնթ.5:21): Չարչարանքի այս թեման շարունակվում է երկրորդ գլխի մնացյալ հատվածում ՀԿ-յան մեջբերումներում:

■ «ամենքի համար» Այս համատեքստը վերաբերում է Հիսուս Քրիստոսի փոխանորդական, ուրիշի փոխարեն կատարած քաղությանը (տես՝ Եսայի 53:6; Հռոմ.5:6,8,10,17-19; 1 Կորնթ.15:22; 1 Տիմ.2:4,6; 4:10; Տիտ.2:11; 2 Պետ.3:9): Հիսուսը մահացավ, որպեսզի լուծի մարդկության մեղքի հիմնահարցը: Միակ բանը, որը ամբողջ մարդկությանը ետ է պահում փրկվելուց, դա Հիսուս Քրիստոսի կատարած գործի տեսքով Աստծո ձրի պարգևը նրանց կողմից հավատքով ընդունելու դժկամությունն է (տես՝ Հովհ.3:17-21):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ
SPECIAL TOPIC: YHWH'S ETERNAL REDEMPTIVE PLAN

Ընթերցողներիդ պետք է խոստովանեն, որ այս հարցում ես կողմնակալ եմ: Իմ համակարգված աստվածաբանությունը Կավվինիզմը կամ անջատողականությունը չէ, այլ Մեծ Պատվիրանի ավետարանչականությունը (տես՝ Մատթ.28:18-20; Ղուկ.24:46-47; Գործք 1:8): Ես հավատում եմ, որ Աստված ամբողջ մարդկության համար փրկագործության ծրագիր ունի (օր.՝ Ծննդ.3:15; 12:3; Ելից 19:5-6; Երեմ.31:31-34; Եզեկիել 18; 36:22-39; Գործք 2:23; 3:18; 4:28; 13:29; Հռոմ.3:9-18,19-20,21-31), բոլոր նրանց համար, ովքեր ստեղծված են Նրա պատկերով և նմանությամբ (տես՝ Ծննդ.1:26-27): Ուխտերը Քրիստոսում միավորված են (տես՝ Գաղ.3:28-29; Կող.3:11): Հիսուսը Աստծո խորհուրդն է՝ ստեղծվածը, որ թաքնված էր, սակայն այժմ հայտնված (տես՝ Եփես.2:11-3:13): Սուրբ Գրքի բանալին հանդիսանում է ՆԿ-յան ավետարանը, և ոչ թե Իսրայելը:

Նախնական այս հասկացությունները իմաստավորում են Սուրբ Գրքի իմ բոլոր մեկնաբանությունները: Բոլոր տեքստերը ես կարդում եմ այդ լույսի ներքո: Իհարկե դա կողմնակալություն՝ հակվածություն է (բոլոր մեկնաբաններն էլ դա ունեն), սակայն դա Սուրբ Գրքի միջոցով տեղեկացված ենթադրություն է:

Ծննդոց 1-2 կենտրոնացումը հանդիսանում է ՅԱՀՎԵԻ կողմից մի վայրի արարումը, որտեղ Նա և Իր մեծագույն արարչագործությունը՝ մարդը, կարող են հաղորդակցվել (տես՝ Ծննդ.1:26,27; 3:8): Ֆիզիկական արարչագործությունը այս միջանձնային աստվածային ծրագրի փուլ է:

1. Մբ. Օգոստինոսը այն բնութագրում է որպես Աստծո կողմից յուրաքանչյուր մարդու մեջ դրած դատարկություն՝ խոռոչ, որը միայն հենց Աստված Ինքը կարող է լցնել:
2. Ս. Ս. Լյուիսը այս մոլորակը կոչում է «ձեռք տրված մոլորակ» (այսինքն՝ մարդկության համար Աստծո կողմից պատրաստված):

ՀԿ-ը ունի շատ ակնարկներ այս աստվածային ծրագրի մասին:

1. Ծննդոց 3:15-ը առաջին խոստումն է, որ ՅԱՀՎԵՆ չի թողնի մարդկությանը մեղքի և ապստամբության սարսափելի խառնաշփոթում: Այն չի վերաբերվում Իսրայելին, քանի որ չկա Իսրայել, կամ ուխտի ժողովուրդ, մինչև Աբրահամի կանչը Ծննդոց 12-ում:
2. Ծննդոց 12:1-3 ՅԱՀՎԵԻ Աբրահամի նախնական կանչն է և հայտնությունը, որը կդառնա ուխտի ժողովուրդ՝ Իսրայելը: Բայց նույնիսկ այս նախնական կանչը Աստված կանխատեսել էր ամբողջ աշխարհի համար: Ուշադրություն դարձրեք Ծննդ.12: 3:
3. Ելից 20-ում (2 Օրինաց 5) ՅԱՀՎԵՆ Իր օրենքը տվեց Մովսեսին, որպեսզի առաջնորդի Իր ընտրյալ ժողովրդին: Նկատեք, որ Ելից 19: 5-6-ում ՅԱՀՎԵՆ հայտնում է Մովսեսին, որ կունենա բացառիկ փոխհարաբերություն Իսրայելի հետ: Ինչպես նաև նկատեք, որ նրանք ընտրված էին, ինչպես Աբրահամը, աշխարհը օրհնելու համար (տես Ելից 19: 5, «ամբողջ երկիրը Իմն է»): Իսրայելը պետք է ՅԱՀՎԵՆ ճանաչելու և Նրան հանձնելու համար ազգերի համար մեխանիզմ լինի: Ցավոք, նրանք ձախողեցին (տես Եզ. 36:22-38):
4. 3 Թագ. 8-ում Սողոմոնը տանարը ընծայում է, որպեսզի բոլորը կարողանան գալ ՅԱՀՎԵԻ մոտ (տես՝ 3 Թագ. 8: 43,60):
5. Սաղմոսներում՝ 22:27-28; 66:4; 86: 9 (Հայտ. 15:4)
6. Մարգարեների միջոցով ՅԱՀՎԵՆ շարունակում էր բացահայտել տիեզերական փրկագործության Իր ծրագրերը:
 - ա. Եսայի 2: 2-4; 12: 4-5; 25:6-9; 42: 6,10-12; 45:22; 49: 5-6; 51: 4-5; 56:6-8; 60: 1-3; 66: 18,23
 - բ. Երեմիա - 3:17; 4: 2; 16:19
 - գ. Միքիա 4:1-3
 - դ. Մադաքիա 1:11

Տիեզերական այս շեշտադրումը նպաստում է «նոր ուխտի» առաջացմանը (տես՝ Երեմ. 31: 31-34; Եզեկ. 36:22-38), որը կենտրոնանում է ՅԱՀՎԵԻ ողորմության վրա, այլ ոչ թե մեղավոր մարդկանց գործերի: Կա «նոր սիրտ», «նոր միտք» և «նոր ոգին»: Հնազանդությունը կարևոր է, սակայն դա ներքին օրենք է, և ոչ միայն արտաքին (տես Հռ. 3: 21-31):

ՆԿ-ը հստակ ամրապնդում է տիեզերական փրկագործության ծրագիրը մի քանի ձևով:

1. Մեծ Պատվիրանի՝ Մատթ.28: 18-20; Ղուկ.24:46-47; Գործք 1:8
2. Աստծո հավիտենական ծրագրի (այսինքն՝ նախասահմանության)՝ Ղուկ.22:22; Գործք 2:23; 3:18; 4:28; 13:29
3. Աստված ուզում է, որ բոլոր մարդիկ փրկվեն՝ Հովհ.3:16; 4:42; Գործք 10:34-35; 1 Տիմ.2: 4-6; Տիտոս 2:11; 2 Պետ.3: 9; 1 Հովհ.2: 2; 4:14
4. Քրիստոսը միավորում է ՀԿ և ՆԿ՝ Գաղ. 3: 28-29; Եփ. 2: 11-3: 13; Կող. 3:11: Բոլոր մարդկային խոչընդոտները և տարբերությունները վերացվում են Քրիստոսով: Հիսուսը «Աստծո խորհուրդն է», որը թաքնված էր, բայց հիմա հայտնված է (Եփ.2:11-3: 13):

ՆԿ-ը կենտրոնանում է ոչ թե Իսրայելի, այլ Հիսուսի վրա: Ավետարանն է կարևորը և ոչ թե ազգությունը կամ աշխարհագրական շրջանը: Իսրայելը առաջին հայտնությունն էր, բայց Հիսուսը՝ վերջինը (տես՝ Մատթ.5: 17-48):

Հուսով եմ, ժամանակ կտրամադրեք կարդալու Special Topic: Why Do OT Covenant Promises Seem So Different From NT Covenant Promises? /Հատուկ Թեմա. Ինչու՞ են ՀԿ-յան Ուխտի խոստումները այդքան տարբերվում ՆԿ-յան Ուխտի խոստումներից/: Դուք կարող եք գտնել այն առցանց www.freebiblecommentary.org

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 2:10-13

¹⁰Որովհետև վայել էր, որ Նա, Ում համար է ամեն բան և Որով եղավ ամեն բան, շատ որդիների փառք մտցնելիս՝ նրանց փրկության Չորավարին տառապանքների միջոցով կատարյալ դարձնի: ¹¹Քանի որ թե՛ Սրբողբ և թե՛ սրբվողները, բոլորը Մեկից են, այդ պատճառով էլ Նա չի ամաչում նրանց եղբայրներ կոչել՝ ասելով.

¹²«ՔՈ ԱՆՈՒՆԸ ՊԻՏԻ ՀՈՉԱԿԵՄ ԻՄ ԵՂԲԱՅԵՑԻՆԵՐԻ ՄԵՁ,

ԵԿԵՂԵՑՈՒՄ ՊԻՏԻ ԳՈՎԱԲԱՆԵՄ ՔԵՁ»:

Եվ դարձյալ.

«ԵՍ ՀՈՒՅՍՍ ՆՐԱ ՎՐԱ ՊԻՏԻ ԳՆԵՄ»:

¹³Եվ դարձյալ.

«ԱՀԱՎԱՍԻԿ ԵՍ ԵՎ ԱՅՆ ՉԱՎԱԿՆԵՐԸ, ՈՐՈՆՑ ԱՍՏՎԱԾ ԻՆՁ ՏՎԵՑ»:

2:10 «Որովհետև վայել էր, որ Նա, Ում համար է ամեն բան և Որով եղավ ամեն բան» Դարձյալ, այստեղ ԳԵՐԱՆՈՒՄՆԵՐԸ անորոշ են՝ երկիմաստ: Սա կարող է նկատի ունենալ Հայր Աստծուն (տես՝ Հռոմ.11:36) կամ էլ Որդուն (տես՝ Եբր.1:2,3; Կող.1:15-17): Քանի որ այս համարի վերջին մասերում Հիսուսին դիմում է որպես «հեղինակի», ապա նախորդող ԳԵՐԱՆՈՒՄԸ պետք է, որ վերաբերի Հորը: Սակայն, Հիսուսը ստեղծագործության ժամանակ հանդիսանում էր Հոր գործը կատարողը (տես՝ Եբր.1:2; Հովհ.1:3; 1 Կորնթ.8:6; 15:25-27) ինչպես որ փրկության ժամանակ էր և ինչպես որ դատաստանի ժամանակ է լինելու:

■ **«շատ որդիների փառք մտցնելիս»** Երկրորդ գլխի մնացած հատվածը լիարժեք կերպով հայտնում է նոր ուխտի ընտանեկան ասպեկտը: Ուշադրություն դարձրեք, թե քանի ընտանեկան տերմին է կիրառվում: Նոր ուխտի նպատակն է վերականգնել ընկած մարդկության մեջ Աստծո պատկերը: Այս «շատ» տերմինը չի նշանակում «մի քանի» ի հակադրություն «բոլորի» (տես՝ Եբր.2:9՝ «բոլորը»): «Բոլոր» և «շատերը» տերմինները Աստվածաշնչում կիրառվում են որպես հոմանիշներ (համեմատեք Եսայի 53:6-ը 11,12-ի հետ և Հռոմ.9:18-ը 19-ի հետ): Հետևաբար, Մարկոս 10:45 և 14:24 պետք է որ վերաբերեն «բոլոր»-ին և ոչ թե «մի քանիսին»: Սա չի կարող գործել որպես սպացույց հանդիսացող տեքստ արմատական Կալվինիզմի համար:

- NASB **«կատարելագործի նրանց փրկության հեղինակին»**
- NKJV **«նրանց փրկության հեղինակին կատարյալ դարձնի»**
- NRSV **«նրանց փրկության ռաիվիրային կատարյալ դարձնի»**
- TEV **«Հիսուսին կատարյալ դարձնի»**
- NJB **«կատարյալ դարձնի նրանց փրկության առաջնորդին»**

«Կատարյալ» տերմինը (ԱՆԴԵՄ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԱՆՈՐՈՇ ԳԵՐԲԱՅ) նշանակում է «լիարժեք, հասուն լինել, սպառազինված նշանակված առաջադրանքի համար» (տես՝ Եփես.4:12): Եբրայեցիների հեղինակը Հիսուսին նկարագրելու համար երեք անգամ կիրառում է «կատարյալ» բառը (տես՝ Եբր.2:10; 5:9; 7:28) և երեք անգամ էլ Նրա հետևորդներին նկարագրելու համար (տես՝ Եբր.10:14; 11:40; 12:23): Տես Հատուկ Թեմա Եբր.7:11-ում:

Հիսուսը իսկապես մարդկային էակ էր՝ մարդ էր (տես՝ Ղուկ.2:40,52): Նա անում էր հավատքի և հնազանդության մեջ (տես՝ Ղուկ.2:40,52): Նա փորձվեց հակառակորդի կողմից (տես՝ Եբր.5:8-9): Նա դիմակայեց և հաղթահարեց յուրաքանչյուր հոգևոր խոչընդոտ (տես՝ Եբր.4:15): Նա դարձավ մարդկության համար լավագույն օրինակը (տես՝ 1 Պետ.2:21):

ՀԱՏՈՒՄԻ ԹԵՄԱ. ՀԵՂԻՆԱԿՆ ԶՈՐԱՎԱՐ (archgēos)
SPECIAL TOPIC: AUTHOR/LEADER

«Հեղինակ» կամ «գորավար՝ առաջնորդ» տերմինը հունարենի *archgēos* տերմինն է, որը ծագել է հունարենում «սկիզբ» (*archē*) և «գնալ» կամ «առաջնորդել» (*agō*) բառերից: Այս բաղադրյալ բառը սկսեցին կիրառել իշխանի, արքայազնի կամ առաջնորդի (մարդ կամ հրեշտակ) համար: ՆԿ-ում այս տերմինը կիրառվում է միայն չորս անգամ էլ, որոնք բոլորն էլ վերաբերում են Հիսուսին.

1. Կյանքի իշխան կամ հեղինակ՝ Գործք 3:15
2. Իշխան կամ առաջնորդ և Փրկիչ՝ Գործք 5:31
3. Նրանց փրկության Հեղինակը՝ Եբր.2:10
4. Հավատքի Հեղինակը (կամ առաջնորդը) և կատարողը՝ Եբր.12:2:

Հիսուսը փրկությունը սկսողը, ապահովողը և ավարտին հասցնողն է:

■ **«առապանքների միջոցով»** Մարդկայնորեն ասած, Հիսուսը կատարյալ դարձավ առապանքների միջոցով (տես՝ Եբր.5:8-9): Հիսուսը հաճախ էր խոսում, որ Իր հետևորդները դիմակայելու են փորձություններ և հալածանքներ (տես՝ Մատթ.5:10-12; Հովհ.15:18-19; 17:14):

Վաղ եկեղեցին շատ հակառակության ենթարկվեց հրեաների, հեթանոսների, հռոմեական կառավարության և չարի կողմից, սակայն Աստված այս հակառակությունը վերցրեց և դարձրեց վստահություն և Քրիստոսակերպություն ձևավորելու համար (տես՝ Հռոմ.8:17; Փիլ.1:29; 2 Տիմ.3:12; Հակ.1:2-4 և 1 Պետ.4:12-19): Այս ճշմարտությունը կարելի է լուսաբանել (1) ՀԿ-ից (տես՝ Եբր.11) և (2) Պողոսի ծառայության միջոցով (տես՝ 1 Կորնթ.4:9-12; 6:4-10; 11:24-27):

2:11

NASB, NRSV **«քանի որ թե՛ Սրբողը և թե՛ սրբվողները»**
NKJV **«քանի որ թե՛ Սրբողը և թե՛ նրանք որ սրբվում են»**
TEV **«Նա սրբում է մարդկանց իրենց մեղքերից, և թե՛ Ինքը և նրանք, որ սրբվեցին»**
NJB **«Սրբի և սրբվածների համար»**

Սա բառախաղ է «սուրբ» կամ «սրբված» բառերի հետ (տես՝ Եբր.10:10,14): Առաջին կիրառությունը ՆԵՐԿԱՆ ՆՈՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է (Հիսուսը) և երկրորդը՝ ՆԵՐԿԱՆ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ (Նրա ժողովուրդը, տես՝ Հովհ.17:19): Հիսուսը Իրեն նույնականացնում է Իր ժողովրդի հետ (տես՝ Եբր.1:14 և 2:6-8,9-18):

Հավատացյալները սրբացված են Հոր կողմից (տես՝ Հովհ.17:17; 1 Թեսաղ.5:23)՝ Որդու գործողությունների միջոցով (տես՝ 1 Կորնթ.1:2; Եփես.5:26; Եբր.10:10,14,29; 13:12), այս ասպեկտները միավորվում են Եբր.2:11-ում՝

1. Սուրբ Հայր
2. Սուրբ Որդի
3. Սուրբ հավատացյալներ (տես՝ 1 Պետ.1:13-25)

Սա ճիշտ է թե՛ պաշտոնի, դիրքի առումով և թե՛ փորձառաբար: Մենք սուրբ ենք Քրիստոսի մեջ և մենք կանչված ենք Քրիստոսի պես սուրբ լինելու:

ՀԱՏՈՒՄԻ ԹԵՄԱ. ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՅԱՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆԸ՝ ՍՐԲԱՅՈՒՄ
SPECIAL TOPIC: NEW TESTAMENT HOLINESS / SANCTIFICATION

ՆԿ արձանագրում է, որ երբ մեղավորները ապաշխարությամբ և հավատքով դարձի են գալիս դեպի Հիսուսը, նրանք անմիջապես արդարացվում և սրբացվում՝ սրբվում են: Սա Քրիստոսի մեջ նրանց ունեցած նոր դիրքն է: Նրա արդարությունը վերագրվում է նրանց՝ հավատացյալներին (տես՝ Հռոմեացիներին 4): Նրանք հռչակվում են արդար և սուրբ (Աստուծո ղառական ակտը):

Սակայն ՆԿ-ը նաև հորդորում է հավատացյալներին սրբության կամ սրբացման կյանք ապրելու: Սա հանդիսանում է թե՛ աստվածաբանական դիրք Հիսուս Քրիստոսի ավարտած գործի մեջ և թե՛ կոչ մեր ամենօրյա կյանքում Քրիստոսի պես վերաբերմունք և ապրելակերպ ունենալու: Քանի որ փրկությունը ձրի պարզ է և ամեն բան արժեցող ապրելակերպ, այդպես էլ սրբացումը՝

Սկզբնական պատասխան

Գործք 20:32; 26:18
Հռոմեացիներ 15:16
1 Կորնթացիների 1:2-3; 6:11
2 Թեսաղոնիկեցիների 2:13
Եբրայեցիների 2:11; 10:10,14; 13:12
1 Պետրոս 1:2

Պրոգրեսիվ Քրիստոսակերպություն

Հռոմեացիների 6:19
2 Կորնթացիների 7:1
Եփեսացիների 1:4; 2:10
1 Թեսաղոնիկեցիների 3:13; 4:3-4,7;
5:23
1 Տիմոթեոս 2:15
2 Տիմոթեոս 2:21
Եբրայեցիների 12:14
1 Պետրոս 1:15-16

■ **«բոլորը Մեկից են /մեկ Հորից են/»** Հունարեն տեքստում «Հայր» բառը չկա (տես՝ NASB, NRSV, TEV): «Նա» ԴԵՐԱՆՈՒՄԸ հաջորդ արտահայտության մեջ վերաբերում է Հիսուսին (տես՝ NRSV, TEV, NIV): Հետևաբար, միգուցե NJB թարգմանության՝ «բոլորը միևնույն մատակարարից» կամ NIV թարգմանության՝ «միևնույն ընտանիքից են», լավագույնս են համապատասխանում այս համատեքստին: Եթե այդպես է, ապա այստեղ շեշտադրվում է Հիսուսի մարդեղությունը (տես՝ Եբր.2:14):

■ **«այդ պատճառով էլ Նա չի ամաչում նրանց եղբայրներ կոչել»** Հիսուսը Իրեն լիովին նույնացնում է հավատացյալ մարդկանց հետ: Իր տառապանքների միջոցով Աստծո պատկերը վերականգնված է նրանց մեջ: Հաջորդող ՀԿ-յան մեջբերումները (տես՝ Եբր.2:12-13) թվում է թե ինչ-որ տեղ համատեքստից դուրս են, սակայն դրանք Մեսիական սուրբգրային հաստատմանից են, որոնք գործածում են ռաբբիական բառախաղեր: Եբր.2:10-18-ի համատեքստը Հիսուսին լիովին նույնացնում է Իր հետևորդների հետ.

1. Նրանք երկուսն էլ քարոզում են Հորը
2. Նրանք երկուսն էլ փառաբանում են Հորը
3. Նրանք երկուսն էլ վստահում են Հորը
4. Հիսուսը (տես՝ Եբր.2:13բ «Ես»-ը) և Իր հետևորդները (Եբր.2:13բ «զավակները») կապված են Որդուն Հայր Աստծո կողմից տրված պարգևով
5. Թե՛ Հիսուսը և թե՛ Իր հետևորդները բաժնեկից են իրենց մարդկային բռնությամբ
6. Թե՛ Հիսուսը և թե՛ Իր հետևորդները փորձվում են

2:12-13 ՆԿ-յան մեջբերումների այս շարքը նկարագրում է, թե ինչպես է Հիսուսը նման հավատացյալներին և գործածում է այս ՀԿ-յան տեքստերը:

2:12 «ՔՈ ԱՆՈՒՄԸ ՊԻՏԻ ՀՈՉԱԿԵՄ ԻՄ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ՄԵՉ» Սա Սաղմ.22:22-ից է, որը մարգարեական կապ ունի իսաչելության հետ:

■ **«եկեղեցի /անգլ.՝ համայնք/»**

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵԿԵՂԵՑԻ (EKKLESIA)

SPECIAL TOPIC: CHURCH (EKKLESIA)

Այս հունարեն տերմինը՝ *ekklesia*, բաղկացած է երկու բառից՝ «դուրս» և «կանչված» հետևաբար տերմինը ակնարկում է Աստծո կողմից դուրս կանչված մարդկանց: Վաղ եկեղեցին այս տերմինը վերցրեց աշխարհիկ կիրառությունից (տես՝ Գործք 19:32, 39, 41) և Մեսոպոտամիայում Իսրայելի «համայնքի» համար այս տերմինի գործածության հիման վրա (*Qahal*, BDB 874, տես՝ Թվոց 16:3; 20:4): Նրանք կիրառում էին այս բառը իրենց համար որպես ՀԿ-ի Աստծո Ժողովրդի շարունակություն: Նրանք նոր Իսրայելն էին (տես՝ Հռոմ.2:28-29; Գաղ.6:16; 1 Պետ.2:5,9; Հայտ.1:6), աշխարհի մասշտաբով Աստծո առաքելության կատարողները (տես՝ Ծննդ.3:15; 12:3; Ել.19:5-6; Մատթ.28:18-20; Դուկ.24:47; Գործք 1:8):

Ավետարաններում և Գործքում այս տերմինը գործածված է մի քանի իմաստով.

1. քաղաքի աշխարհիկ ժողովը՝ Գործք 19:32, 39, 41
2. Քրիստոսով Աստծո տիեզերական ժողովուրդը՝ Մատթ.16:18 և Եփեսացիներին
3. Քրիստոսով հավատացյալների տեղական համայնքը՝ Մատթ.18:17; Գործք 5:11 (այս համարներում Երուսաղեմի եկեղեցին)

4. Իսրայելի հավաքական ժողովուրդը՝ Գործք 7:38, Ստեփանոսի քարոզի մեջ
5. Աստծո ժողովուրդը ինչ-որ տարածաշրջանում՝ Գործք 8:3 (Հուդան կամ Պաղեստինը)

Եկեղեցին հավաքված մարդիկ են և ոչ թե կառույցը: Հարյուրավոր տարիներ շարունակ եկեղեցաշենքեր գոյություն չեն ունեցել: Հակոբոսում (ամենավաղ գրված գրքերից մեկը) եկեղեցին նշվում է "synagōgē" (ժողովք) տերմինով: Եկեղեցու համար այս տերմինը կիրառված է միայն Հակարոսի գրքում (տես՝ Հակ.2:2; 5:14):

2:13 «ԵՍ ՀՈՒՅՍՍ ՆՐԱ ՎՐԱ ՊԻՏԻ ԴՆԵՄ» Այս արտահայտությունը մեջբերում է Եսայի 8:17-ից: Այստեղ թույլ տվեք պարզապես մի բառ ավելացնել հեղինակի կողմից Սեպտուագինտայից օգտվել շարունակելու շուրջ, որը տարբերվում է, նույնիսկ երբեմն շատ է տարբերվում Եբրայերեն (Մասորետիկ / Masoretic) տեքստից: Թվում է թե մեր օրերում շատ հակասություններ կան կապված անգլերեն շատ տարբեր թարգմանությունների հետ: Ոմանք մի թարգմանությունը ավելի են գերադասում, քան մյուսը, երբեմն նույնիսկ հարցականի տակ են դրվում թարգմանիչների շարժառիթներն ու նրանց Քրիստոնյա լինելը: Եթե Աստծո Հոգին կարող է ավետարանը մերձավոր արևելքի հնագույն մարդկանց փոխանցելու համար օգտագործել հունարեն թարգմանությունը, Նա հաստատ կարող է օգտագործել իրարից տարբերվող թարգմանություններ նույնը մեր օրերում անելու համար: Հարցը թարգմանության տեսության մեջ չէ, այլ Աստծո կամքի, որ մարդիկ լսեն ու հավատան Քրիստոսի մասին բարի լուրին:

■ **«Ահավասիկ Ես և այն զավակները, որոնց Աստված Ինձ տվեց»** Սա մեջբերում է Սեպտուագինտայի Եսայի 8:18-ից: Ամբողջ նպատակն է շեշտադրել Հիսուսի միաբանությունը Իրեն հավատագողների հետ (տես՝ Եբր.2:17):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 2:14-18

¹⁴Ինչքանով որ զավակները մարմնին և արյանը հաղորդակից եղան, Նա Ինքն էլ ճիշտ նույն ձևով հաղորդակից եղավ նրանց, որպեսզի *Իր* մահով խափանի մահվան իշխանություն ունեցողին, այսինքն՝ Սատանային, ¹⁵և ազատագրի նրանց, ովքեր մահվան վախով իրենց ամբողջ կյանքի ընթացքում կապանքի տակ էին: ¹⁶Արդարև Նա հրեշտակների բնույթը չընդունեց Իր վրա, այլ *Իր* վրա վերցրեց Աբրահամի սերնդին: ¹⁷Ուստի Նա ամեն ինչում պետք է *Իր* եղբայրների նման դառնար, որպեսզի ողորմած և հավատարիմ, Քահանայապետ լինի Աստծո ի վերաբերյալ բաներում՝ ժողովրդի մեղքերը քավելու համար: ¹⁸Հենց նրանով, որ Նա Ինքը փորձություն կրելով չարչարվեց, կարող է օգնել փորձվողներին:

2:14 «Ինչքանով /քանզի/» Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը ենթադրում է, որ այն ճիշտ է հեղինակի տեսանկյունից կամ նրա գրականական մտադրության համար:

■ **«զավակները մարմնին և արյանը հաղորդակից եղան, Նա Ինքն էլ ճիշտ նույն ձևով հաղորդակից եղավ նրանց»** «Հաղորդակից լինել» բայը (*koinōnia*) ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ խոսում է Հիսուսի Քրիստոսի սկզբնական և շարունակական կատարյալ մարդեղության մասին: 14 և 17 համարները շեշտադրում են Հիսուսի իրական մարդեղությունը, որը վաղ գնոստիկ հերետիկոսների համար աստվածաբանական հիմնահարց էր (տես՝ 1 Հովհ.4:1-6):

Հունարենում այս արտահայտությունը տառացիորեն «արյուն ու մարմին» է, որը տվյալ արտահայտության նորմալ կիրառության ճիշտ հակառակն է: Ռաբբիներն այս արտահայտությունը կիրառում էին մարդու անցողիկ լինելու համար: Եբրայեցիների հեղինակը հավանաբար հետադարձել է այս արտահայտությունը ցույց տալու, որ չնայած Հիսուսը մարդ էր, Նրա վրա ազդեցություն չունեին մարդու մեղսալի անկումը (տես՝ Հռոմ.8:3; Փիլ.2:7-8):

Եբրայեցիներին ուղղված նամակը շեշտադրում է թե՛ Հիսուսի աստվածությունը (տես՝ Եբր.1:1-3; 4:14) և թե՛ մարդեղությունը:

1. Եբր.2:14՝ մարդկային բնություն է հազել
2. Եբր.4:15՝ մարդու կողմից կրած բոլոր փորձությունները կրեց
3. Եբր.5:7՝ աղոթեց Հորը՝ բարձրաձայն աղաղակելով և արցունքներով
4. Եբր.5:8-9՝ կատարյալ դարձավ տառապանքով

■ **«Իր մահով»** Հիսուսի մահվամբ մահը մահացավ: Սա գոհաբերության մասին հրեական աստվածաբանություն է (տես՝ Ղևտ. 1-7): Ամմեղ Մեկը մահացավ հանուն բոլորի (տես՝ Հռոմ.5:12-21; 2 Կորնթ.5:14-15,21):

■ «**խափանի մահվան իշխանություն ունեցողին**» Սա հենց այն նույն տերմինն է (*katargeo*), որ King James Version (KJV) թարգմանում է «բնաջնջել», թե՛ այստեղ և թե՛ Հռոմ.6:6-ում: Անկասկած այս տերմինը ունի միևնույն նշանակությունը 2 Թեսաղ.2:8-ում: Հաճախ դժվար է, նույնիսկ համատեքստի մեջ, հասկանալ, թե արդյոք այս բայը պետք է թարգմանվեր «բնաջնջել՝ վերացնել» թե «անվավեր դարձնել» (տես՝ 1 Կորնթ.15:24,26; Եփես.2:15): Այս տերմինը նաև ունի «գրոյի հավասարեցնելու, անվավեր դարձնելու, անգործունակ դարձնելու» իմաստը (տես՝ Հռոմ.3:3,31; 4:14; 6:6; 1 Կորնթ.2:6; 13:8; 2 Կորնթ.1:7):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՆՎԱՎԵՐ ԳԱՐԶՆԵԼ (*katargeō*)
SPECIAL TOPIC: NULL AND VOID (*katargeō*)

Այս (*katargeō*) տերմինը Պողոսի սիրելի տերմիններից է: Նա առնվազն քսանհինգ անգամ գործածել է այն, սակայն այս տերմինն ունի շատ ընդարձակ իմաստաբանական շարք:

Ա. Նրա հիմնական ստուգաբանական արմատը *argos* է, որը նշանակում է.

1. Անգործունակ՝ իներտ
2. Պարսպ՝ դատարկ
3. Անօգտագործելի
4. Անօգուտ
5. Չաշխատող

Բ. Բաղադրյալ բառը *kata* բառի հետ կիրառվում էր արտահայտելու՝

1. Անգործունակություն
2. Անօգտակարություն
3. Անվավեր մի բան
4. Անպետք մի բան
5. Ընդհանրապես չաշխատող մի բան

Գ. Այս տերմինը մի անգամ գործածվում է Ղուկասում, նկարագրելու անպտուղ՝ հետևաբար անօգտակար ծառի (տես՝ Ղուկ.13:7):

Դ. Պողոսը գործածում է այս տերմինը փոխաբերական իմաստով՝ երկու հիմնական կերպերով.

1. Աստված ստեղծում է անգործունակ բաներ, որոնք թշնամի են մարդկությանը
 - ա. Մարդկության մեղավոր էությունը՝ Հռոմ.6:6
 - բ. Մովսիսական օրենքը Աստծո կողմից «սերմի» մասին տրված խոստման հետ կապված՝ Հռոմ.4:14; Գաղ.3:17; 5:4,11; Եփես.2:15
 - գ. Հոգևոր ուժերը՝ 1 Կորնթ.15:24
 - դ. «Անօրենության մարդը»՝ 2 Թեսաղ.2:8
 - ե. Փիզիկական մահը՝ 1 Կորնթ.15:26; 2 Տիմ.1:10 (Եբր.2:14)
2. Աստված փոխարինում է հինը (ուխտը, դարաշրջանը) նորով՝
 - ա. Մովսիսական օրենքի հետ կապված բաներ՝ Հռոմ.3:3,31; 4:14; 2 Կորնթ.3:7,11,13,14
 - բ. Օրենքի վերաբերյալ կիրառված ամուսնության համանմանությունը՝ Հռոմ.7:2,6
 - գ. Այս դարաշրջանի հետ կապված բաները՝ 1 Կորնթ.13:8,10,11
 - դ. Այս մարմինը՝ 1 Կորնթ.6:13
 - ե. Այս դարի առաջնորդները՝ 1 Կորնթ.1:28; 2:6

Այս բառը թարգմանված է շատ տարբեր կերպերով, սակայն դրա հիմնական նշանակությունն է ինչ-որ բան անպիտան, անօգուտ, անգործ, անգոր, անվավեր դարձնելը, սակայն անպայման չէ վերացնելը կամ բնաջնջելը:

■ «**մահվան իշխանություն ունեցողին, այսինքն՝ Սատանային**» Սատանան մահվան վրա բացարձակ իշխանություն չունի (տես՝ Հոբ 2:4-6; 1 Կորնթ.5:5), սակայն նրա ձեռքում է մահվան վախի իշխանությունը (տես՝ Եբր.2:15), որը նա տարածում է ամբողջ մարդկության վրա (տես՝ 1 Կորնթ.15:54-57): Գոյություն ունի չարի անձնական գորություն՝ ուժ, որն այս աշխարհում Աստծո կամքին հակաճառելու և խանգարելու նպատակ է հետապնդում (տես՝ Հովի.12:31; 14:30; 16:11; 2 Կորնթ.4:4; Եփես.2:2; 1 Հովի.4:4; 5:19): Հիսուսը խափանեց մահը (տես՝ 2 Տիմ.1:10) և Նրա մոտ են դժոխքի և մահվան բանալիները (տես՝ Հայտն.1:18):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԱՏԱՆԱ
SPECIAL TOPIC: SATAN

Այս թեման բարդ համարելու համար կան մի քանի պատճառներ.

1. ՀԿ-ը հայտնում է ոչ թե բարու դիտերիմ թշնամուն, այլ ՅԱՀՎԵԻ մի ծառայի, որը մարդկությանը առաջարկում է երկրնտրանք, ինչպես նաև մեղադրում է մարդկությանը անարդարության մեջ: Կա միայն մեկ Աստված (մոնոթեիզմ՝ միաստվածություն), մեկ իշխանություն, ՀԿ-ում միայն մեկ պատճառ՝ ՅԱՀՎԵ:Ն:
2. Աստծո դիտերիմ թշնամու հասկացությունը ձևավորվել է միջաստվածաշնչյան (անկանոն) գրականության մեջ՝ պարսկական դուալիստիկ կրոնի (*Չրադաշտականություն*) ազդեցության ներքո: Սա էլ իր հերթին մեծապես ազդեցություն է թողել ռաբբիական Հուդայականության և Էսսենների համայնքի վրա (այսինքն՝ Մեռյալ Ծովի Գալարները):

3. ՆԿ-ը զարգացնում է ՀԿ-ի թեմաները ամբողջական, սակայն ընտրված կատեգորիաներում: Եթե մեկը չարի մասին ուսումնասիրում է ըստ աստվածաշնչյան պատկերացումների՝ տեսանկյան, (յուրաքանչյուր գիրքը կամ հեղինակը կամ ժանրը առանձին ուսումնասիրելով և ուրվագծելով), ապա ի հայտ են գալիս չարի վերաբերյալ տարբեր տեսանկյուններ:

Սակայն, եթե մեկը չարի մասին ուսումնասիրում է ոչ սուրբգրային մոտեցմամբ կամ աշխարհի ու արևելյան կրոնների հավելյալ աստվածաշնչյան մոտեցմամբ, ապա ՆԿ-ի հիմնական զարգացումները այս թեմայի շուրջ սովորվում են պարսկական դուալիզմով և Հունա-հռոմեական սպիրիտիզմով:

Եթե ինչ-որ մեկը գիտակցաբար վստահում է Սուրբ Գրքի աստվածային հեղինակությանը, ապա ՆԿ-ի զարգացումները պետք է դիտարկվեն որպես պրոգրեսիվ՝ զարգացող հայտնություն: Քրիստոնյաները պետք է զգուշանան հրեական ժողովրդական բանահյուսությունից՝ ֆոլկլորից կամ արևմտյան գրականությունից (Դանթե, Միլթոն), որպեսզի դրանք չհառնվեն այս հասկացության զարգացմանը: Իհարկե որոշակի առեղծված և անորոշություն կա այս բնագավառում հայտնության մեջ: Աստված ընտրել է չհայտնել չարի հետ կապված ամեն ինչ՝ դրա ծագումը, զարգացումը, նպատակը, սակայն հայտնել է դրա պարտությունը:

ՀԿ-ում «աստանա» կամ «գրպարտող» (BDB 966) տերմինը կարող է առնչվել երեք տարբեր խմբերի հետ:

1. մարդ գրպարտողներ՝ մեղադրողներ (տես՝ 1 Թագ.29:4; 2 Թագ.19:22; 3 Թագ.11:14,20,29; Սաղմ.109:6)
2. հրեշտակ գրպարտողներ (տես՝ Թվոց 22:22-23; Հոբ 1-2; Չաբ.3:1)
3. դիվական գրպարտողներ (տես՝ 1 Մնաց.21:1; 3 Թագ.22:21; Չաբ.13:2)

Միայն հետագայում միջաստվածաշնչային ժամանակաշրջանում է, որ Ծննդոց 3-ի օձը նույնացվում է Սատանայի հետ (տես՝ *Ինասաստաիրության Գիրք* 2:23-24; 2 *Ենուլք* 31:3), և նույնիսկ հետագայում սա դառնում է ռաբբիների կողմից նախընտրելի տարբերակ (տես՝ *Սոթ.*9բ և *Մին.*29): Ծննդոց 6-ի „Աստծո որդիները,, դառնում են հրեշտակներ *1 Ենուլք* 54:6-ում: Ես սա նշում եմ ոչ թե հաստատելու դրա աստվածաբանական ճշգրտությունը, այլ ցույց տալու դրա զարգացումը: ՆԿ-ում այս ՀԿ-յան գործերը բնորոշ էին հրեշտակներին, որոնք մարմնավորում էին չարին (տես՝ 2 Կորնթ.11:3; Հայտն.12:9):

Մարմնավորված չարի ծագումը՝ սկիզբը ՀԿ-ից դժվար է կամ անհնար է (կախված ձեր տեսակետից) սահմանել: Սրա պատճառներից մեկը Իսրայելի խիստ միաստվածությունն է (տես՝ 3 Թագ.22:20-22; Ժող.7:14; Ես.45:7; Ամովա 3:6): Ամեն ինչի պատճառահետևանքային դրսևորումները վերագրված են ՅԱՀՎԵին՝ ցույց տալու Նրա յուրահատկությունը և առաջնահերթությունը (տես՝ Ես.43:11; 44:6,8,24; 45:5-6,14,18,21,22):

Տեղեկությունների համար հասանելի աղբյուրներն են՝ (1) Հոբ 1-2, որտեղ Սատանան «Աստծո որդիներից» մեկն է (այսինքն՝ հրեշտակներից) կամ (2) Ես.14 և Եզեկ.28, որտեղ մերձարևելյան հպարտ թագավորները (Բաբելոնի և Տիվոսի) կիրառվում են լուսաբանելու Սատանայի հպարտությունը (տես՝ 1 Տիմ.3:6): Այս մոտեցման մեջ ինչպես երևում է ներգրավված են զգացմունքներ: Եզեկիելը կիրառում է Եդեմի Պարտեզի խորհրդապատկերները ոչ միայն Տիվոսի թագավորի համար որպես Սատանան (տես՝ Եզեկ.28:12-16), այլ նաև Եգիպտոսի թագավորի համար՝ որպես Բարու և Չարի Գիտության ծառը (Եզեկիել 31): Սակայն Եսայի 14՝ մասնավորապես 12-14 համարները, կարծես թե նկարագրում է հպարտության պատճառով հրեշտակների մի ապստամբություն: Եթե Աստված ուզեր մեզ հայտնել Սատանայի ծագումն ու նրա բնավորությունը, սա շատ անսովոր կերպ և տեղ կլիներ դրա համար: Մենք պետք է զգուշանանք սիստեմատիկ աստվածաբանության միտումից, որը վերցնում է փոքր, երկիմաստ՝

կասկածելի հատվածներ տարբեր կտակարաններից, հեղինակներից, գրքերից և ժանրերից և դրանք համադրում որպես մեկ աստվածային գլուխկոտրուկի մասնիկներ:

Ես համամիտ եմ Ալբերտ Էդերշեյմի հետ (Albert Edersheim, *The Life and Times of Jesus the Messiah*, Հիսուս Մեսիայի կյանքը և ժամանակները, հատ.2, հավելվածներ XIII [էջ 748-763] և XVI [էջ 770-776]), որ ռաբբիական Հուդայականությունը մեծապես ազդվել է պարսկական դուալիզմի և դիվական խորհրդածումների կողմից: Այս բնագավառում ռաբբիները չեն կարող հանդիսանալ ճշմարտության լավագույն աղբյուրը: Հիսուսը արմատապես առանձնանում է տարբերվում է, այս բնագավառում Սինագոգների մատուցած ուսմունքից: Ես կարծում եմ, որ ՅԱՀՎԵԻ հրեշտակապետ թշնամու այս հասկացությունը զարգացել է Իրանական դուալիզմի երկու բարձրագույն աստվածներից՝ *Ահիմանից* և *Օրմազայից* (Ahkiman, Ormazd), և ապա ռաբբիների կողմից կատարելագործվել որպես աստվածաշնչյան ՅԱՀՎԵԻ և Սատանայի դուալիզմի:

Անկասկած ՆԿ-ում առկա է աճող՝ առաջադիմական հայտնություն չարի մարմնավորման վերաբերյալ, բայց ոչ այնքան մանրակրկիտ ինչպես ռաբբիների մոտ: Այս տարբերության լավ օրինակներից է «երկնքում պատերազմը»: Սատանայի անկումը տրամաբանական անհրաժեշտություն է, սակայն դրանց մանրամասները տրված չեն: Անգամ այն ինչ տրված է, քողարկված է ապոկալիպտիկ ժանրով (տես՝ Հայտն.12:4,7, 12-13): Չնայած որ Սատանան պարտության մատնվեց Հիսուսի կողմից և գցվեց երկիր, նա դեռևս գործում է որպես ՅԱՀՎԵԻ ծառա (տես՝ Մատթ.4:1; Դուկ.22:31-32; 1 Կորն.5:5; 1 Տիմ.1:20):

Մենք պետք է սանձենք մեր հետաքրքրությունը այս հարցում: Փորձության ու չարիքի անձնական գործությունը առկա է, բայց ամեն դեպքում կա միայն մեկ Աստված և միևնույն է մենք ենք պատասխանատու մեր որոշումների՝ ընտրությունների համար: Գոյություն ունի հոգևոր պայքար, թե՛ փրկությունից առաջ և թե՛ հետո: Հաղթություն կարելի է միայն ունենալ և մնալ դրա մեջ Երրորդության Աստծո օգնությամբ: Չարը արդեն պարտված է և բնաջնջվելու է:

2:16

NASB

«արդարև»

NKJV

«անշուշտ»

NRSV, TEV

«քանի որ հստակ է»

NJB

--բացակայում է--

Լավագույնս իմաստը արտահայտում են NRSV և TEV թարգմանությունները:

■ «Նա չընդունեց ... բնույթը, այլ ...վերցրեց /բնույթը/» Այս երկուսն էլ ՆԵՐԿԱ ԱՆՈՐՈՇ (դեպոնենտ) ՍԱՀՄԱՆԱԿԱՆ են: «Չ» ժխտական մասնիկը շեշտադրության համար հունարենում դրված է առաջին մասում: Բայը *epilambanō* է, որը բխում է *lambanō* արմատից՝ «վերցնել» կամ «հասկանալ» իմաստն ունեն, լինի դա դրական, թե բացասական նկատառումներով: Այս համատեքստում այն վերաբերում է Հիսուսի դրական գործողություններին (տես՝ Եբր.8:9) հավատացյալ մարդկանց համար, որոնք երբևէ ուղղված չեն եղել հրեշտակներին: Դարձյալ Հիսուսը և Իր հետևորդները հակադրվում են հրեշտակային աշխարհի հետ:

■ «Աբրահամի սերնդին» Տառացիորեն սա «Աբրահամի սերմն է»: ՅԱՀՎԵՆ անգավակ Աբրամին խոստացավ, որ նա լինելու է մի մեծ ազգի հայր, շատ ժառանգներով (տես՝ Ծննդ.12:2; 15:2-6; 17:4-7; 18:10,18): «Մերմ» տերմինը կարող է լինել թե՛ ԵԶԱԿԻ և թե՛ ՀՈԳՆԱԿԻ թվով: Հետևաբար, այն վերաբերում է և՛ Իսրայել ազգին, և՛ գալիք Մեսիային: ՆԿ-յան այլ համարներից հասկանում ենք, որ այն կապ ունի հավատքի հետ, ոչ թե ազգության կամ գործերի (տես՝ Հովհ.8:31-59; Գաղ.3:7,9,29; Հռոմ.2:28,29): Աբրահամին տրված խոստումները անպայմանական են (տես՝ հատկապես Ծննդ.15:12-21; Հռոմ.4), մինչդեռ Մովսիսական ուխտը պայմանական է՝ հիմնված հնագանդության վրա:

2:17 «Նա ամեն ինչում պետք է Իր եղբայրների նման դառնար» Մարդկության համար Հիսուսի բարեխոսական գործը կապված է Նրա կողմից մեր էությունը կատարելապես հասկանալու հետ (տես՝ Եբր.2:11, 18; 4:15), որպեսզի կարողանար լինել մեր հրաշալի Քահանայապետը:

■ «որպեսզի ողորմած և հավատարիմ Քահանայապետ լինի»

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԻՍՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՔԱՀԱՆԱՅԱԳԵՏ

SPECIAL TOPIC: JESUS AS HIGH PRIEST

Եբրայեցիների գիրքը յուրահատուկ է ՆԿ-ում Հիսուսին Քահանայապետ անվանելու մեջ: ՀԿ-ում երկու հատվածներ կան, որտեղ Մեսիան նկարագրվում է քահանայական տերմիններով (տես՝ Սաղմ.110:4; Չաբարիա 3-4): Այս թեման յիարժեք կերպով կարծարծվի Եբր.4:14-5:10 և 6:13-7:28:

Երբայեցիների թուղթը նկարագրում է Հիսուսի Քահանայապետական գործը մի քանի կերպերով:

1. Քավություն է կատարում մեղքի համար (տես՝ Եբր.2:17; 7:27; 9:14)
2. Կարողություն է տալիս մեղքով փորձողներին (տես՝ Եբր.2:18)
3. Ծնորիք է տալիս կարիքի ժամանակ (տես՝ Եբր.4:15-16)
4. Բերում է հավիտենական կյանք (տես՝ Եբր.5:9-10)
5. Բարեխոսում է հավատացյալների համար (տես՝ Եբր.7:25; 9:24)
6. Համարձակություն է տալիս Սուրբ Աստծուն մոտենալու համար (տես՝ Եբր.10:19-21)

■ **«ժողովրդի մեղքերը քավելու համար»** «Քավություն» տերմինը Սեպտուագինտայում կիրառվում է Սուրբ Սրբարանում ուխտի տապանակի վրա դրված (կափարիչի) քավության՝ ողորմության գահի համար: Սակայն դրա հունարեն նշանակությունը բարկացած աստվածներին հանգստացնելն էր, հետևաբար «աստվածների» և մարդկանց միջև գոյություն ունեցող արգելքները վերցնելը: Այս տերմինի վերը նշված կիրառության պատճառով ժամանակակից թարգմանությունները անհանգստացած են բառի տվյալ նշանակությունը ՅԱՀՎԵԻն վերագրելու հարցում (տես՝ RSV և NJB) և այն թարգմանում են որպես «քավություն»: Հիսուսը միավորեց ՅԱՀՎԵԻ արդարություն ու ողորմությունը (տես՝ 1 Հովհ.2:2; 4:10): Սակայն մենք չպետք է այն դիտարկենք որպես ՀԿ-յան բարկացած Աստված և սիրառատ Հիսուս: Հայրը ուղարկեց Հիսուսին (տես՝ Հովհ.3:16): Որդին ներկայացնում է և մարմնավորում է Հորը:

2:18 «հենց նրանով, որ Նա Ինքը փորձություն կրելով չարչարվեց» «Նա չարչարվեց» արտահայտությունը ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԿԱՆ է, որն արտահայտում է Հիսուսի կրած շարունակական փորձությունները: «Փորձվել կամ փորձություն կրել» (*peirazō*) ունի կործանման տանող փորձվելու նշանակությունը (տես՝ Եբր.4:15; Մատթ.4:1): Չարը փորձում էր կործանել Նրան Գողգոթայում, սակայն Աստված վերածեց այս փորձությունը փրկագործության մեծ հաղթանակի:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՈՐՁԵԼ ԲԱՌԻ ՀՈՒՆԱՐԵՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆՃԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ SPECIAL TOPIC: GREEK TERMS FOR TESTING AND THEIR CONNOTATIONS

Գոյություն ունեն երկու հունարեն տերմիններ, որոնք ունեն դիտավորյալ ինչ-որ մեկին փորձելու իմաստը.

1. *Dokimazō, Dokimion, Dokimasia*

Այս տերմինը մետաղագործական տերմին է՝ ինչ-որ բանի իսկությունը (այսինքն՝ փոխաբերաբար ինչ-որ մեկին) կրակով փորձելու համար: Կրակը ի հայտ է բերում իրական մետաղը և վառում է (այսինքն՝ մաքրում) մետաղախարամը՝ անպետք մետաղը: Այս ֆիզիկական գործընթացը Աստծո համար /և/, կամ Սատանայի ու մարդկանց համար/ դարձավ միայնակ փորձելիս օգտագործվող գեղեցիկ դարձվածք: Այս տերմինը գործածվում է փորձելու միայն դրական իմաստով, երբ այն ընդունելի է:

ՆԿ-ում այն կիրառվում է, երբ փորձվում են՝

ա. եզները՝ Դուկ.14:19

բ. մենք՝ 1 Կորն.11:28

գ. մեր հավատքը՝ Հակ.1:3

դ. նույնիսկ Աստված՝ Եբր.3:9

Այս փորձերի արդյունքները համարվում էին դրական (տես՝ Հռոմ.1:28; 14:22; 16:10; 2 Կորն.10:18; 13:3,7; Փիլ.2:27; 1 Պետ.1:7), ուստի այս տերմինը փոխանցում է այն գաղափարը, որ մարդը փորձվել է և ճանաչվել՝

ա. արժանի

բ. բարի

գ. անկեղծ

դ. թանկագին

ե. պատվարժան

2. *Peirazō, Peirasmus*

Այս տերմինը հաճախ ունի հանցանքը կամ մերժվածությունը գտնելու նպատակով քննության նշանակություն: Այն հաճախ է գործածվում անապատում Հիսուսի փորձության հետ կապված:

ա. Այն փոխանցում է Հիսուսին թակարդը զգելու փորձի իմաստը (տես՝ Մատթ.4:1; 16:1; 19:3; 22:18, 35; Մարկ.1:13; Դուկ.4:38; Եբր.2:18):

- բ. Այս (*peirazōn*) տերմինը Մատթ.4:3; 1 Թեսաղ.3:5-ում կիրառվում է որպես Սատանայի անունը:
- գ. Կիրառությունը՝
- 1) Այն կիրառում էր Հիսուսը մեզ զգուշացնելով չփորձել Աստծուն (տես՝ Մատթ.14:7; Դուկ.4:12) [կամ Քրիստոսը, տես՝ 1 Կորն.10:9]:
 - 2) Այն նաև արտահայտում է ինչ-որ մի բան անելու փորձ, որը ձախողվել է (տես՝ Գործք 9:20; 20:21; Եբր.11:29):
 - 3) Այն կիրառվում է հավատացյալների փորձությունների և գայթակղությունների իմաստով (տես՝ 1 Կորն.7:5; 10:9, 13; Գաղ.6:1; 1 Թեսաղ.3:5; Եբր.2:18; Հակ.1:2, 13, 14; 1 Պետ.4:12; 2 Պետ.2:9):

■ «կարո՞ղ է օգնել փորձվողներին» Այս նույն ճշմարտությունը կրկնվում է Եբր.4:15-ում: Հիսուսը լիովին նույնացնում է Իրեն կարիքի մեջ գտնվող Իր ժողովրդի հետ (տես՝ Եբր.2:17):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Թվարկեք, թե ինչ կերպերով է նոր ուխտը գերազանց Մովսիսական ուխտից:
2. Ինչո՞ւ է այս հեղինակը այսքան հաճախ մեջբերումներ կատարում Մովսիսական ուխտից:
3. Ո՞ւմ են ուղղված երկրորդ գլխի զգուշացումները:
4. Արդյո՞ք 2:6-8 վերաբերում է մարդկանց, թե՛ Հիսուսին:
5. Ինչո՞ւ պետք է Հիսուսը չարչարվեր և ինչպե՞ս է ներգործում չարչարանքը Քրիստոնյայի վրա:
6. Համաձայն համար 14-ի արդյո՞ք Սատանան մահվան իշխանություն ունի Քրիստոնյայի վրա:
7. Թվարկեք այն պատճառները, թե ինչու Հիսուսը եկավ:

ԵՔՐԱՅԵՑԻՆԵՐԻ 3

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Հիսուսը Մովսեսից գերազանց է	Հավատարիմ Որդին	Քրիստոս Մովսեսից գերազանց է	Հիսուսը ավելի մեծ է Մովսեսից	Քրիստոսը ավելի բարձր է Մովսեսից
3:1-6	3:1-6	3:1-6	3:1-6	3:1-6
Աստծո ժողովրդի համար հանգիստ	Հավատարիմ եղեք	Զգուշացում և հորդոր	Աստծո ժողովրդի համար հանգիստ	Ինչպես հասնել Աստծո հանգստի երկիրը
(3:7-4:13)		(3:7-4:13)	(3:7-4:13)	(3:7-4:13)
3:7-11	3:7-15	3:7-19	3:7-11	3:7-11
3:12-19	Զախողում անապատում դեգերելիս		3:12-15	3:12-19
	3:16-19		3:16-19	

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻՎԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու Ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԵՔՐԱՅԵՑԻՆԵՐԻ 3:1-4:13

Ա. Այս բաժինը առնչվում է Մովսեսական ուխտի մեջ եղբայրներ և Ղևտացիներ հանդիսացող գույգ առաջնորդների՝ Մովսեսի և Ահարոնի վրա ունեցած Հիսուսի գերազանցությանը: Սա մեզ առաջնորդում է Եբր.4:14-7:28-ում արձանագրված Մելքիսեդեկի քահանայության շուրջ գործնական քննարկման:

Բ. Այս բաժինը ռաբբիական բառախաղ է երկու գաղափարների շուրջ՝ (1) «Աստծո տունը»՝ Եբր.3:1-6 (տես՝ Թվ.12:7-8; 2 Թագավորաց 7) և (2) «հանգիստ»՝ Եբր.3:7-4:13 (տես՝ Մաղմ.95:7-11):

- Գ. Արժարժվում են հետևյալ փաստարկները՝
1. Մովսեսը Աստծո տան՝ ընտանիքի մի մասն էր, իսկ Հիսուսը՝ Աստծո տունը, ընտանիքը կառուցողը:
 2. Մովսեսը Աստծո տան մեջ ծառա է, մինչ Հիսուսը՝ ընտանիքի անդամ է:
 3. Մովսեսի մոտ չստացվեց բերելու Աստծո հանգիստը, մինչ Հիսուսի մոտ ստացվեց:

Դ. Գրականական այս բաժնի աստվածաբանական հիմնական նպատակը հնազանդ և հավատարիմ լինելու զգուշացումն է: Հիսուսը հնազանդ էր և հավատարիմ, սակայն: Մովսիսական ուխտը անհնազանդության դեպքում դաժան հետևանքներ ուներ: Ուրեմն որքա՞ն ավելի սոսկալի են նոր ուխտը մերժելու կամ չարաշահելու հետևանքները (տես՝ Եբր.2:1-4):

Ե. Այս բաժինը տիպաբանական է: Այն դիտարկում է ՆԿ-ը որպես նոր, հոգևոր ելից:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 3:1-6
¹Ուստի, սո՛ւրբ եղբայրներ, երկնային կոչման մասնակիցներ, նայեցե՛ք մեր դավանության Առաքյալին և Քահանայապետին՝ Քրիստոս Հիսուսին, ²որ հավատարիմ է Իրեն նշանակողին, ինչպես Մովսեսն էլ *հավատարիմ* էր Նրա ամբողջ տան մեջ: ³Որովհետև Սա ավելի մեծ փառքի արժանի համարվեց, քան Մովսեսը, այնպես, ինչպես տուն շինողն ավելի մեծ պատիվ է ունենում, քան՝ տունը: ⁴Որովհետև ամեն մի տուն կառուցվում է մեկի կողմից, բայց Նա, Ով կառուցեց ամեն ինչ, Աստված է: ⁵Եվ իրապես Մովսեսը հավատարիմ էր Նրա ամբողջ տան մեջ իբրև ծառա՝ վկայելու համար այն ամենը, ինչ հետո պիտի ասվեին, *՛իսկ Քրիստոսը՝ որպես Որդի Իր տան վրա, որի տունը մենք ենք, եթե մինչև վերջ հաստատուն պահենք հույսի վստահությունն ու ուրախությունը:*

3:1
 NASB, NKJV «սո՛ւրբ եղբայրք»
 NRSV «եղբայրներ և քույրեր»
 TEV «իմ Քրիստոնյա ընկերներ»
 NJB «սո՛ւրբ եղբայրներ»

Ո՞ւմ էր ուղղված այս գիրքը: «Եղբայրներ» տերմինը պարբերաբար գործածվում է (տես՝ Եբր.2:11; 3:1,12; 10:19; 13:22), որը (ենթակայի լրացման հետ միասին) վերաբերում է հրեա հավատացյալներին:

■ «երկնային կոչման մասնակիցներ» Այս հասկացությունը Աստվածաշնչում մի քանի կերպ է կիրառվում:

1. Իսրայելը Աստծո կողմից կանչված էր քահանայական թագավորություն լինելու, որպեսզի աշխարհը վերադարձնի Աստծուն (տես՝ Ծննդ.12:3; Ելից 19:5): ՀԿ-ում սա ծառայության կոչ էր, ոչ թե անձնական փրկության, և համընդհանուր կանչ (Իսրայել ազգի համար), որպեսզի կատարեն հանձնարարված առաջադրանքը (համաշխարհային ավետարանչությունը):
2. Անհատ հավատացյալները կանչված են (տես՝ Հովհ.6:44,65) հավիտենական փրկության:
3. Յուրաքանչյուր անհատ Քրիստոնյա կանչված է ծառայելու Քրիստոսի մարմնին հոգևոր պարզևներով (տես՝ 1 Կորնթ.12:7,11):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԿԱՆՉՎԱԾ
SPECIAL TOPIC: CALLED

Միշտ Աստված է նախաձեռնությունը վերցնում հավատացյալներին դեպի Իրեն կանչելու, ընտրելու և հետամուտ լինելու հարցում (տես՝ Հովհ.6:44,65; 15:16; 1 Կորնթ.1:1-2; Եփես.1:4-5,11): «Կոչում» տերմինը մի քանի աստվածաբանական նշանակությամբ է գործածվում:

Ա. ՀԿ-ում «անունը կանչելը» միշտ առկա էր երկրպագության համատեքստում (տես՝ Ծննդ.4:26; 12:8; 21:33; 26:25; Ելից 34:5):

Բ. Մեղավորները փրկության են կանչված Աստծո շնորհքով (այսինքն՝ Ելից 34:6-7) Քրիստոսի կատարած գործի և Հոգու կողմից համոզվելու շնորհիվ (այսինքն՝ *klētos*, տես՝ Հռոմ.1:6-7; 9:24, որը աստվածաբանորեն նման է 1 Կորնթ.1:1-2 և 2 Տիմ.1:9; 2 Պետ.1:10):

Գ. Մեղավորները կանչում են Տիրոջ անունը փրկվելու համար (այսինքն՝ *epikaleō*, տես՝ Գործք 2:21; 22:16; Հռոմ.10:9-13): Այս սահմանումը երկրպագության հրեական դարձվածք է:

- Դ. Հավատացյալները կանչում են Նրա Անունը դժվարությունների և ճնշումների ժամանակ (այսինքն՝ Գործք 7:59):
- Ե. Հավատացյալները կանչված են Քրիստոսակերպ կյանք վարելու (այսինքն՝ *klēsis*, տես՝ 1 Կորնթ. 1:26; 7:20; Եփես. 4:1; Փիլ. 3:14; 2 Թեսաղ. 1:11; 2 Տիմ. 1:9):
- Զ. Հավատացյալները կանչված են ծառայության գործի համար (տես՝ Գործք 13:2; 1 Կորնթ. 12:4-7; Եփես. 4:1):

■ **«նայեցե՛ք ... Հիսուսին»** Սա ԱՈՐԻՍ /Անորոշ Կատարյալ/ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ Է: Դա նշանակում է մանրամասն զննել՝ պատկերացնել (տես՝ Եբր. 12:24): Համատեքստում այն վերաբերում է Նրա անձի ու գործի և Մովսիսական ուխտի առաջնորդների անձի ու գործի համեմատությանը:

■ **«Առաքյալը և Քահանայապետը»** Այս երկու տիտղոսները առնչվում են Հիսուսի գերազանցությանը Մովսեսի վրա՝ որպես պաշտոնական պատգամաբեր և Ահարոնի վրա՝ որպես Ղևտական քահանայապետի: Գլուխ 3 և 4 առնչվում են Հիսուսի գերազանցությանը Ահարոնի հետ համեմատած: Քանի որ հունարեն «պատգամաբեր» և «հրեշտակ» տերմինները նույնն են, ապա «առաքյալ» տերմինը, որը հունարեն «ուղարկել» տերմինն է, կարող է վերաբերել թե՛ Աստծո կողմից ուղարկված հրեշտակներին, որ ծառայեն փրկվողներին (տես՝ Եբր. 1:14) և թե՛ Հիսուսին, որ ուղարկվեց Աստծո կողմից ազատելու նրանց, որ փրկվում են (տես՝ Հովհ. 3:17): Սա ՆԿ-ում միակ տեղն է, որտեղ Հիսուսը կոչվում է «Առաքյալ», չնայած Հովհաննեսը այս բառի ԲԱՅ տեսակը պարբերաբար կիրառում է նկատի ունենալով Նրան որպես Հոր կոմից «ուղարկվածի» (տես՝ Հովհ. 3:17,34; 5:36,38; 6:29,57; 7:29; 8:42; 10:36; 11:42; 17:3,18,21,23,25; 20:21):

■ **«Առաքյալ»** Սա ծագել է «ուղարկել» բայից (տես՝ *Special Topic: Send (apostello) /Հատուկ Թեմա. Ուղարկել (apostello)* և կիրառվում էր ռաբբիների կողմից նկարագրելու մի մարդու, որը ուղարկվել է մեկ ուրիշի կողմից նրան պաշտոնապես ներկայացնելու համար: Մովսեսը Աստծո տան մեջ ծառայեց որպես ծառա, մինչ Հիսուսը «որդի» էր՝ ընտանիքի անդամ: Աստված կանչեց Մովսեսին ծառայելու, սակայն Հիսուսին երկնքից ուղարկեց:

■ **«Քահանայապետ»** Եբրայեցիների գիրքը Աստվածաշնչում միակն է, որ Հիսուսին քահանայապետ է կոչում (տես՝ Եբր. 2:17; 3:1; 4:14,15; 5:5,10; 6:20; 7:26,28; 8:1,3; 9:11; 10:21): Ռաբբիական հսկայական փաստագրություններ են պահանջվում առաջին դարի հրեաներին համոզելու, որ Հիսուսը՝ Հուդայի ցեղից, իսկապես քահանա էր: Մեռյալ Ծովի Գալարների համայնքը սպասում էր երկու Մեսիանների՝ մեկը արքայական (Հուդայի ցեղից) և մյուսը՝ քահանայական (Ղևիի ցեղից, տես՝ Սաղմոս 110; Չաք. 3-4):

■ **«մեր դավանության»** Սա հունարենի *homologia* տերմինն է, որը «ասել» և «նույնը» բառերի բաղադրյալ բառն է: Ընթերցողները Հիսուս Թրիստոսին հավատալու իրենց դավանությունն էին կատարել: Այժմ նրանք պետք է ամուր պահեին այս դավանությունը՝ խոստովանությունը (տես՝ Եբր. 4:14; 10:23): Սա գրքի հիմնական թեմաներից մեկն է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ /դավանություն/
SPECIAL TOPIC: CONFESSION

Ա. Հունարենում խոստովանություն կամ դավանություն տերմինների համար կիրառվող այս նույն արմատից երկու տեսակ գոյություն ունի՝ *homologeō/exomologō*: Այս բաղադրյալ տերմինը կազմված է *homo*՝ միևնույն, *legō*՝ խոսել, և *ex*՝ ինչ-որ բանից դուրս: Հիմնական նշանակությունն է միևնույն բանը ասելը, համաձայնվելը: *Ex*-ը ավելացնում էր հանրորեն հռչակելու՝ հայտարարելու գաղափարը:

Բ. Այս բառախմբի անգլերեն թարգմանություններն են՝

1. փառաբանել
2. համաձայնել
3. հռչակել (տես՝ Մատթ. 7:23)
4. դավանել
5. խոստովանել (տես՝ Եբր. 4:14; 10:23)

Գ. Այս բառախումբն ունի երկու թվացյալ իրար հակասող կիրառություններ՝

1. փառաբանել (Աստծուն)

2. մեղքն ընդունել

Հնարավոր է սա ձևավորվել է մարդկանց կողմից Աստծո սրբության և իրենց մեղավորության հասկացողությունից: Գիտակցել առաջին ճշմարտությունը, նշանակում է գիտակցել երկուսն էլ:

Դ. Այս բառախմբի կիրառությունը ՆԿ-ում հետևյալն է՝

1. խոստանալ (տես՝ Մատթ.14:7; Գործք 7:17)

2. համաձայնել կամ զիջել ինչ-որ բան (տես՝ Հովհ.1:20; Դուկ.22:6; Գործք 24:14; Եբր.11:13)

3. փառաբանել (տես՝ Մատթ.11:25; Դուկ.10:21; Հռոմ.14:11; Եբր.13:15)

4. համաձայնեցնել՝

ա. անձի հետ (տես՝ Մատթ.10:32; Դուկ.12:8; Հովհ.9:22; 12:42; Հռոմ.10:9; Փիլ.2:11; 1 Հովհ.2:23; Հայտ.3:5)

բ. ճշմարտության հետ (տես՝ Գործք 23:8; 1 Հովհ.4:2)

5. հանրության առջև հայտարարել (իրավական նշանակությունը վերածվել է կրոնական հիմնավորման, տես՝ Գործք 24:14; 1 Տիմ.6:13)

ա. առանց մեղքն ընդունելու (տես՝ 1 Տիմ.6:12; Եբր.10:23)

բ. մեղքն ընդունելով (տես՝ Մատթ.3:6; Գործք 19:18; Եբր.4:14; Հակ.5:16; 1 Հովհ.1:9)

3:2 «Որ հավատարիմ է /էր/ Իրեն նշանակողին» Համատեքստում շեշտադրվում է (1) Հոր կողմից Հիսուսի ընտրությունը և սպառազինումը՝ պատրաստությունը փրկագործության առաջադրանքի համար (տես՝ Մարկ.3:14) և (2) Հիսուսի կողմից Հոր հանդեպ գործադրած հավատքը (ՆԵՐԿԱՅԻ ԴԵՐԲԱՅ), ինչպես և հավատացյալները պետք է գործադրեն իրենց հավատքը: Նա իսկապես մարդկության հետ մեկ դարձավ: Սակայն «նշանակել» բառի համար հնարավոր ստուգաբանություն է «ստեղծել» բառը: Արիուսը գործածում է «նշանակված» ԲԱՅԸ Աթանասիոսին հակառակ, պնդելու, որ Հիսուսը Աստծո մեծագույն ստեղծագործությունն էր (տես՝ Առակ.8:22), բայց ոչ Աստված (տես՝ Գործք 2:36; Հռոմ.1:4; Կող.1:15): Չորրորդ դարին բնորոշ այս հակասության արդյունքում ծագեց աստվածային բնության վերաբերյալ հստակ ուսմունքը, սակայն երեք հավիտենական անձնավորությունների դրսևորմամբ՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու (Երրորդությունը): Այս երեք աստվածային անձիք հավիտենապես կազմել են մեկ ճշմարիտ Աստծուն (այսինքն՝ Հովհ.1:1-18): Արիանիզմի շուրջ հետաքրքիր համառոտ քննարկման համար կարդացեք *Քրիստոնեական Աստվածաբանություն* (2րդ խմբ.), Միլարդ Ջ. Էրիքսոնի կողմից, էջ՝ 711-715 /Millard J. Erickson, *Christian Theology*/:

■ **«Նրա ամբողջ տան»** Սա անդրադարձ է Թվոց 12:7,8-ին: Աստծո ժողովուրդը որպես Աստծո տուն Աստվածաշնչում հանախ կրկնվող փոխաբերություն է (տես՝ Եբր.3:6; «տուն», Գաղ.6:10; 1 Տիմ.3:15; «հոգևոր տուն», 1 Պետ.2:5; «Աստծո տուն», 1 Պետ.4:17): «Տուն» բառը այս պարբերության մեջ կիրառված է վեց անգամ, երբեմն կառույցի՝ շինության իմաստով և երբեմն էլ՝ ընտանիքի: Կարծես թե հետևյալ փաստարկն է առաջադրված՝

1. Մովսեսը Աստծո տան՝ ընտանիքի մասն էր կազմում, սակայն Հիսուսն այդ տան շինարարն էր
2. Մովսեսը ծառա էր, մինչդեռ Հիսուսն ընտանիքի անդամ
3. Մովսեսին չհաջողվեց ժողովրդին մտցնել Աստծո հանգիստը, սակայն Հիսուսին կհաջողվի

3:3 «ավելի մեծ փառքի արժանի համարվեց, քան Մովսեսը» Սա ՎԱԴԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Հրեաների համար սա հաստատ ցնցող հայտարարություն էր (տես՝ 2 Կորնթ.3:7-11):

3:4 «Որովհետև ամեն մի տուն կառուցվում է մեկի կողմից» Սա կիրառվում էր Աստծո գոյությունը ապացուցել փորձելիս «հիմնական պատճառի» փիլիսոփայական, աստվածաբանական փաստարկների համար (տես՝ Թոմաս Աքվինաս /Thomas Aquinas/): Սակայն այս կարգի տրամաբանությունը («առաջին պատճառ») չի կարող երբևէ հասնել Աստծո մասին այն հայտնությանը, որ Նա Տեր Հիսուս Բրիստոսի Հայրն է, կամ էլ, որ Աստված մեղավորների ընկերն է:

■ **«բայց Նա, Ով կառուցեց ամեն ինչ, Աստված է»** Հայրը ամեն ինչի արարիչն է (տես՝ Հռոմ.11:36; 1 Կորնթ.15:25-27): Հիսուսը Հոր գործը կատարողն էր արարչագործության ժամանակ (տես՝ Հովհ.1:3; 1 Կորնթ.8:6; Կող.1:16; Եբր.1:2):

3:5-6 «Իսկ Քրիստոսը հավատարիմ էր որպես Որդի Իր տան վրա» Հիսուսը որպես որդի (որոշիչ ՀՈՒՆՆՈՒՄ, տես՝ Եբր.1:2; 3:6; 5:8; 7:28) հակադրվում է Մովսեսի հետ՝ որպես ծառայի (տես՝ Եբր.1:2; 3:5; 5:8; 7:28; Ելից 14:31; Թվոց 12:7): Մովսեսը հավատարիմ ծառա էր (տես՝ Թվոց 12:7), սակայն Հիսուսը՝ ընտանիքի անդամ:

3:5 Մովսեսը Քրիստոսի մասին խոսեց 2 Օր.18:18-19-ում (տես՝ 1 Պետ.1:11): Սա կրկնում է Եբր.1:1-ի ճշմարտությունը:

3:6 «որի տունը մենք ենք» Սա հավատքի ընտանիքն է նկարագրված որպես տուն (տես՝ Գաղ.6:10; 1 Տիմ.3:15; 1 Պետ.2:5; 4:17): Նմանատիպ հավաքական կառույցի փոխաբերություն է կիրառվում, երբ եկեղեցին անվանվում է տաճար (տես՝ 1 Կորնթ.3:16): Շեշտադրումը (1) Հիսուսի սեփականության վրա և (2) Աստծո ժողովրդի վրա՝ որպես հավաքական միավոր:

Անսովոր է եկեղեցու մասին խոսել որպես Հիսուսի տան: Այդ իսկ պատճառով հնագույն հունարեն ձեռագրերը փոխում էին ԴԵՐԱՆՈՒՆԸ այնպես, որ այն վերաբերեր Հորը (տես՝ MSS P⁴⁶ և D*):

■ **«եթե»** Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ է, որը նշանակում է պոտենցիալ՝ հնարավոր գործողություն (*ean* ավելացրած ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ): Սա հայտարարությանը հաղորդում է պայմանականության տարր (տես՝ Եբր.3:14; 4:14; Հռոմ.11:22; 1 Կորնթ.15:2):

■ **«հաստատուն պահենք հույսի վստահությունն ու ուրախությունը /անգլ.՝ պարծանքը/»** «Հաստատուն պահել» արտահայտությունը հարատևությունը շարունակ շեշտադրելն է (ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ, տես՝ Եբր.3:14; 4:14; տես Հատուկ Թեմա Եբր.4:14): Այս գլխի մնացած հատվածը և չորրորդ գլուխը շարունակում է զգուշացնել (1) հրեա հավատացյալներին հասունության հասնելու և (2) նրանց համար, ովքեր լսել են ավետարանը և տեսել դրա գործողությունը իրենց հրեա հավատացյալ ընկերների կյանքում, կատարելապես ընդունեն այդ ավետարանը:

■ **«մեր հույսի վստահությունը»** Հույսի վրա այսպիսի շեշտադրություն կատարելը հատկանշական է Եբրայեցիների գրքին (տես՝ Եբր.3:6; 6:11; 7:19; 10:23; 11:1): Հույսը առնչվում է մեր հավատքի հաստատուն վախճանին՝ ավարտին:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՈՒՅՍ
SPECIAL TOPIC: HOPE

Պողոսը օգտագործում էր այս տերմինը հաճախ մի քանի տարբեր, սակայն կապակցված իմաստներով: Հաճախ այն առնչվում էր հավատացյալի հավատքին (օր.՝ 1 Տիմ.1:1): Սա կարող է արտահայտվել որպես փառք, հավիտենական կյանք, վերջնական փրկություն, Երկրորդ Գալուստ, և այլն: Վախճանը հայտնի է, սակայն ժամանակի տարրը ապագայում է և անհայտ: Այն հաճախ կապվում էր «հավատքի» և «սիրո» հետ (տես՝ 1 Կորնթ.13:13; 1 Թեսաղ.1:3; 2 Թեսաղ.2:16): Ահա Պողոսի կողմից կիրառված ցանկի մի մասը.

1. Երկրորդ Գալուստ, Գաղ. 5:5; Եփես.1:18; 4:4; Տիտ.2:13
2. Հիսուսը մեր Հույսը, 1 Տիմ.1:1
3. Հավատացյալները ներկայանալու են Աստծո առջև, Կող.1:22-23; 1 Թեսաղ.2:19
4. Մեր հույսը երկնքում է, Կող.1:5
5. Վստահություն ավետարանին, Կող.1:23; 1 Թեսաղ.2:19
6. Վերջնական փրկություն, Կող.1:5; 1 Թեսաղ.4:13; 5:8
7. Աստծո փառքը, Հռոմ.5:2, 2 Կորնթ.3:12; Կող.1:27
8. Քրիստոսով հեթանոսների փրկությունը, Կող.1:27
9. Փրկության վստահությունը, 1 Թեսաղ.5:8
10. Հավիտենական կյանքը, Տիտ.1:2; 3:7
11. Քրիստոնեական հասունության արդյունքները, Հռոմ.5:2-5
12. Ամբողջ արարչագործության փրկագործումը, Հռոմ.8:20-22
13. Որդեգրության վախճանը, Հռոմ.8:23-25
14. Աստծո համար տիտղոս, Հռոմ.15:13
15. Պողոսի փափագը հավատացյալների համար, 2 Կորնթ.1:7
16. ՀԿ-ը որպես ուղեցույց ՆԿ-ի հավատացյալների համար, Հռոմ.15:4

■ **«մինչև վերջ հաստատուն»** Այս արտահայտությունը հին հունարեն P⁴⁶ կամ B ձեռագրերում չի հանդիպում և հետևաբար հնարավոր է, որ բնագրում չկա: Սակայն մյուս հին ունեցիլ հունարեն ձեռագրերը (Ռ, A, C, D, K և P) պարունակում են այն: Եբր.3:14-ում նույնպես այն ներառված է և հավանաբար տեղափոխվել է այստեղ ինչ-որ մի դպիրի կողմից հավասարակշռության համար: Անշուշտ այն համապատասխանում է համատեքստի աստվածաբանությանը: Տե՛ս Հատուկ Թեմա Եբր.7:11-ում:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵՐԲԱՅԵՑԻՆԵՐԻ 3:7-19 (ամբողջ պարբերությունը ներառում է 3:7-4:13)

⁷Ուստի, ինչպես Սուրբ Հոգին է ասում.
«ԱՅՍՕՐ, ԵԹԵ ՆՐԱ ՉԱՅՆԸ ԼՍԵՔ,
⁸ՄԻ՛ ԿԱՐԾՐԱՅՐԵՔ ՁԵՐ ՍՐՏԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ԸՄԲՈՍԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՉ,
ՓՈՐՁՈՒԹՅԱՆ ՕՐԸ ԱՆԱՊԱՏՈՒՄ,
⁹ԵՐԲ ՁԵՐ ՀԱՅՐԵՐԸ ՓՈՐՁԵՑԻՆ ԻՆՉ ԵՎ ՔՆՆԵՑԻՆ ԻՆՉ,
ԹԵԵՎ ՔԱՌԱՍՈՒՆ ՏԱՐԻ ՏԵՍԱՆ ԻՄ ԳՈՐԾԵՐԸ:
¹⁰ԴՐԱ ՀԱՄԱՐ ԲԱՐԿԱՅԱ ԱՅԴ ՍԵՐՆԴԻ ՎՐԱ
ԵՎ ԱՍԱՑԻ, «ՍՐՏՈՎ ՄԻՇՏ ՄՈՒՈՐՎԱԾ ԵՆ
ԵՎ ՉՃԱՆԱԶՉԵՑԻՆ ԻՄ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ»:
¹¹ԱՅՆՊԵՍ ՈՐ ԵՐԳՎԵՑԻ ԻՄ ԲԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԵՉ,
ԹԵ ԻՄ ՀԱՆԳԻՍՏԸ ՊԻՏԻ ՉՄՏՆԵՆ»:

¹²Չգո՛ւյշ եղեք, եղբայրներ, չլինի թե ձեզնից որևէ մեկի մեջ անհավատության չար սիրտ լինի՝ կենդանի Աստուծոց հեռանալով: ¹³Այլ ամեն օր հորդորեցե՛ք միմյանց, քանի դեռ Այսօր է կոչվում, որ չլինի թե ձեզնից որևէ մեկը կարծրանա մեղքի խաբեության հետևանքով: ¹⁴Քանզի քրիստոսին հաղորդակից կլինենք, եթե սկզբում ունեցած մեր վստահությունը մինչև վերջ հաստատ պահենք, ¹⁵մինչ ասվում է.

«ԱՅՍՕՐ ԵԹԵ ՆՐԱ ՉԱՅՆԸ ԼՍԵՔ,
ՄԻ՛ ԿԱՐԾՐԱՅՐԵՔ ՁԵՐ ՍՐՏԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ԸՄԲՈՍԱՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ»:

¹⁶Որովհետև ոմանք, երբ լսեցին, բարկացրին. բայց ոչ բոլորը, որ Մովսեսի *միջոցով* Եգիպտոսից դուրս եկան: ¹⁷Իսկ ումի՛ց Նա վշտացավ քառասուն տարի, չէ՞ որ մեղանշողներից, որոնց դիակներն անապատում ընկան: ¹⁸Ու՛մ համար երդվեց, թե Իր հանգիստը պիտի չմտնեն, եթե ոչ նրանց, ովքեր չհավատացին: ¹⁹Այսպես, տեսնում ենք, որ նրանք անհավատության պատճառով չկարողացան մտնել:

3:7 «ինչպես Սուրբ Հոգին է ասում» Այս խոսքը ՀԿ-ի ներշնչվածությունը վերագրում է Սուրբ Հոգուն: Համատեքստում սա շատ կարևոր է, քանի որ Սուրբ Գիրքը Եբր.1:5,13; 2:6,11; 4:3,4; 10:9; 13:5-ում վերագրված է Հորը: Հետևաբար, այս հատվածը Սուրբ Հոգու աստվածության և անձ լինելու վերաբերյալ շատ դիպուկ հատված է (Տե՛ս Special Topic: Personhood of the Spirit /Հատուկ Թեմա. Հոգու անձ լինելը/, տես՝ Եբր.9:8; 10:15):

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԲՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ
SPECIAL TOPIC: THE TRINITY**

Ուշադրություն դարձրեք Երրորդության բոլոր երեք Անձերի գործունեությանը միավորված կոնտեքստներում: «Երրորդություն» տերմինը առաջին անգամ հնարել է Տերտուլիանոսը. այն աստվածաշնչյան բառ չէ, սակայն հասկացությունն ինքնին տարածված է:

- Ա. Ավետարանները
 - 1. Մատթ.3:16-17; 28:19 (և զուգահեռները)
 - 1. Հովհ.14:26
- Բ. Գործք Առաքելոց – Գործք 2:32-33, 38-39
- Գ. Պողոսը
 - 1. Հռոմ.1:4-5; 5:1,5; 8:1-4,8-10
 - 2. 1 Կորն.2:8-10; 12:4-6
 - 3. 2 Կորն.1:21-22; 13:14
 - 4. Գաղ.4:4-6
 - 5. Եփես.1:3-14,17; 2:18; 3:14-17; 4:4-6
 - 6. 1 Թեսաղ.1:2-5
 - 7. 2 Թեսաղ.2:13
 - 8. Տիտ.3:4-6

- Դ. Պետրոս – 1 Պետ.1:2
- Ե. Հուդա – հհ. 20-21

Նաև ՀԿ-ում Աստված բառը ակնարկվում է հոգնակի թվով:

- Ա. Աստված բառի ՀՈԳՆԱԿԻ թվով կիրառությունը

1. *Elohim* անունը ՀՈԳՆԱԿԻ է, սակայն երբ կիրառվում է Աստծո համար, ապա օգտագործվում է ԲԱՅԻ ԵՉԱԿԻ թիվը:

2. Ծննդոց 1:26-27; 3:22; 11:7-ում «Մեզ» /մեր/

Բ. Տիրոջ Հրեշտակը Աստվածության տեսանկյան ներկայացուցիչն էր

1. Ծննդոց 16:7-13; 22:11-15; 31:11,13; 48:15-16

2. Ելից 3:2,4; 13:21; 14:19

3. Դատավորաց 2:1; 6:22-23; 13:3-22

4. Չաքարիա 3:1-2

Գ. Աստված և Իր Հոգին առանձին են, Ծննդ.1:1-2; Սաղմ.104:30; Ես.63:9-11; Եզեկ.37:13-14

Դ. Աստված (YHWH) և Մեսիան (*Adon*) առանձին են, Սաղմ.45:6-7; 110:1; Չաք.2:8-11; 10:9-12

Ե. Մեսիան և Հոգին առանձին են, Չաք.12:10

2. Բոլոր երեքն էլ նշվում են Եսայի 48:16; 61:1-ում

Հիսուսի Աստվածությունը և Հոգու անձ լինելը վաղ շրջանի խիստ, միաստվածության հետևող հավատացյալներին խնդիրների առջև էր կանգնեցրել:

1. Տերտուղիանոսը ստորադասում էր Որդուն Հորից

2. Օրիգենոսը ստորադասում էր Որդու և Հոգու աստվածային էությունը

3. Արիուսը ուրանում էր Որդու և Հոգու Աստվածությունը

4. Վանականություն/միապետականությունը՝ հավատում էր մեկ Աստծո՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու հաջորդական ժամանակագրական դրսևորումներին

Երրորդությունը պատմականորեն զարգացող մի ձևակերպում է, որը ինֆորմացված է աստվածաշնչյան նյութերով:

1. Հիսուսի կատարյալ Աստվածությունը՝ հավասարազոր Հորը, հաստատվեց Նիկիական Խորհրդի կողմից, Ք.Հ.325 թ-ին (տես՝ Հովհ.1:1; Փիլ.2:6; Տիմ.2:13)

2. Հոգու կատարյալ Աստվածությունն ու անձնավորությունը՝ հավասարազոր Հորը, հաստատվեց Կոստանտնուպոլսի Խորհրդի կողմից, Ք.Հ. 381 թ-ին

3. Երրորդության վարդապետությունը միանգամայն արտահայտվում է Օգոստինոսի *De Trinitate* աշխատության մեջ:

Իրականում այստեղ մի առեղծված կա: Սակայն ՆԿ-ը թվում է հաստատում է աստվածության էությունը երեք հավիտենական անձնավորությունների դրսևորմամբ:

■ «ԱՅՍՕՐ ԵԹԵ ՆՐԱ ՉԱՅՆԸ ԼՍԵՔ» 7-11 համարները մեջբերում են Սեպտուագինտայից՝ Սաղմ. 95:7-11, որն անհավատության դեմ զգուշացում է Իսրայելին, երբ նրանք դեգերում էին անապատում: Եբրայեցիների 3:17-ից մինչև 4:13 հիմնված է այս հատվածի բացատրության վրա: Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ է: Նրանք ունեին տեսնելու և լսելու հնարավորություն (տես՝ Եբր.3:9), սակայն ինքնական մերժեցին և խստացրեցին իրենց սրտերը:

3:8 «ՄԻ ԽՍԱՑՅՐԵՔ ՉԵՐ ՍՐՏԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ԸՄԲՈՍԱՅՍԱՆ ՄԵՉ» Պատմական ակնարկ է Իսրայելի անապատում դեգերելու ժամանակաշրջանից: Մասրետիկ Եբրայերեն տեքստը թվարկում է Իսրայելի ապստամբության աշխարհագրական տեղանքները որպես *Մերիբա* (*Meribah*/ տես՝ Ելից 17:7; Թվոց 20:13) և *Մասսա* (*Massah*/ տես՝ Ելից 17:7; 2 Օր.6:16): Սեպտուագինտան այս անունները թարգմանում է իրենց ստուգաբանությամբ (*Meribah* – վիճաբանության վայր և *Massah* – փորձություն, տես՝ Եբր.3:9):

«Միրտ» տերմինը վերաբերում է մարդու ամբողջական էությանը (տես՝ 2 Օր.6:4-5): Այս իսրայելացիները սկզբում հավատք ունեին, սակայն հետագայում հավատքի գործեր չէին կատարում (այսինքն՝ 12 լրտեսների հաշվետվությունը, տես՝ Թվոց 12): Արդյունքում նրանց չթույլատրվեց մտնել Խոստացյալ Երկիրը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԻՐՏԸ SPECIAL TOPIC: THE HEART

Հունարեն *kardia* տերմինը կիրառվում է Սեպտուագինտայում և ՆԿ-ում նկարագրելու եբրայերեն *leb* (BDB 523) տերմինը: Այն օգտագործվում է մի քանի կերպ (տես՝ Bauer, Arndt, Gingrich, *A Greek-English Lexicon*, /Հունարեն-անգլերեն բառարան/ pp.403-404):

1. Ֆիզիկական կյանքի կենտրոնը՝ անձի փոխաբերական իմաստը (տես՝ Գործք.14:17; 2 Կորնթ. 3:2-3; Հակ.5:5):

2. Հոգևոր կյանքի կենտրոնը (այսինքն՝ բարքերը)

ա. Աստված գիտի սիրտը (Ղուկ.16:15; Հռոմ.8:27; 1 Կորն.14:25; 1 Թեսաղ.2:4; Հայտ.2:23):

- բ. Մարդկանց հոգևոր կյանքի իմաստով (տես՝ Մատթ.15:18-19; 18:35; Հռոմ.6:17; 1 Տիմ.1:5; 2 Տիմ.2:22; 1 Պետ.1:22):
3. Մտավոր կյանքի կենտրոնը (այսինքն՝ բանականությունը. տես՝ Մատթ.13:15; 24:48; Գործք 7:23; 16:14; 28:27; Հռոմ.1:21; 10:6; 16:18; 2 Կորն.4:6; Եփես. 1:18; 4:18; Հակ.1:26; 2 Պետ. 1:19; Հայտն.18:7; սիրտը և միտքը ներկայացված որպես հոմանիշներ՝ 2 Կորնթ.3:14-15 և Փիլ. 4:7):
 4. Կամային հատկանիշների կենտրոնը (այսինքն՝ կամքը, տես՝ Գործք 5:4; 11:23; 1 Կորնթ. 4:5; 7:37; 2 Կորնթ.9:7)
 5. Զգացմունքների կենտրոնը (տես՝ Մատթ.5:28; Գործք 2:26,37; 7:54; 21:13; Հռոմ.1:24; 2 Կորնթ.2:4; 7:3; Եփես.6:22; Փիլ.1:7)
 6. Հոգու գործունեության համար եզակի տեղը (տես՝ Հռոմ. 5:5; 2 Կորնթ. 1:22; Գաղ. 4:6 [այսինքն՝ Քրիստոսը մեր սրտերում, Եփես. 3:17])
 7. Միտքը հանդիսանում է ամբողջական անձի փոխաբերությունը (տես՝ Մատթ. 22:37, մեջբերված 2 Օր. 6:5): Մտքերը, նպատակները և գործողությունները, որոնք վերագրվում են սրտին, լիովին հայտնում են անձի անհատականությունը: ՀԿ-ում կան այս տերմինի կիրառության մի քանի զարմանալի օրինակներ՝
 - ա. Ծննդ. 6:6; 8:21, «Աստված տրտմեց Իր սրտում» նաև ստուգեք Ովսեա 11:8-9
 - բ. 2 Օր. 4:29; 6:5, «քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով»
 - գ. 2 Օր. 10:16, «անթափառ սիրտ» և Հռոմ. 2:29
 - դ. Եզեկ. 18:31-32, «մի նոր սիրտ»
 - ե. Եզեկ. 36:26, «մի նոր սիրտ» հակադրված՝ «քարե սրտի» հետ (տես՝ Եզեկ.11:19; Զաք.7:12):

■ **«ԻՆՉՊԵՍ ԱՅՆ ՕՐԸ»** Այստեղ ունենք երբայերեն “yom” տերմինի մի օրինակ, որը կիրառված է փոխաբերական իմաստով (տես՝ Հովի.8:56; Եբր.8:9), և ոչ թե բառացի 24 ժամ տևողությամբ օրվա իմաստով:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՕՐ (YOM, BDB 398, KB 399)
SPECIAL TOPIC: DAY (YOM, BDB 398, KB 399)**

Yom (օր՝ Ծննդոց 1) տերմինի նշանակության տեսությունները, որ վերցված և որդեգրված են Դոկ. Ջոն Հարրիսի /Dr. John Harris/ (Արևելյան Տեխասի Մկրտական Համալսարանի Քրիստոնեական Դասընթացների Դպրոցի դեկան և ՀԿ-ի դասախոս) ՀԿ-ի Ուսումնասիրություն I նշումներից՝

1. Բառացի քսանչորս ժամի տեսությունը

Սա անմիջական՝ ուղղակի մոտեցում է (տես՝ Ելից 20:9-11): Այս մոտեցման արդյունքում հարցեր են առաջանում.

- ա. Ինչպե՞ս կարող էր լույս լինել առաջին օրը, երբ արևը մինչև չորրորդ օրը չէր ստեղծվել:
- բ. Ինչպե՞ս էր հնարավոր մեկ օրից էլ քիչ ժամանակի մեջ բոլոր կենդանիներին (հատկապես նրանց, որոնք աշխարհի այլ վայրերին են բնորոշ) անուն դնել (տես՝ Ծննդ.2:19-20):

2. Օր - Հազարամյակ տեսությունը

Այս տեսությունը փորձում է ներդաշնակության մեջ բերել գիտությունը (հատկապես կենսաբանությունը) Մուրբ Գրքի հետ: Այս տեսությունն ասում է, որ «օրերը» «կենսաբանական դարաշրջաններ» էին իրենց տևողությամբ: Դրանց տևողությունը անհավասար է և նրանք մոտեցնում են համաչափ երկրաբանության մեջ նկարագրված զանազան շերտերը: Գիտնականները հակված են համաձայնելու Ծննդոց 1-ի ընդհանուր զարգացումների հետ. գոլորշի և ջրային զանգված է նախորդել ցամաքի և ծովի բաժանմանը, նախքան երկրի վրա կհայտնվեր կյանքը: Բուսական աշխարհը ստեղծվել է կենդանական աշխարհից առաջ, իսկ մարդը ներկայացրել է ամենավերջին և ամենաբարդ կյանքի տեսակը: Այս մոտեցումն ինքնին հարցեր է առաջ քաշում:

- ա. Ինչպե՞ս են բույսերը գոյատևել «դարեր» շարունակ առանց արևի:
- բ. Ինչպե՞ս էր բուսական աշխարհը վերապրում փոշոտումը, եթե «դարեր» անց նոր հայտնվեցին միջատները և թռչունները:

3. Իրար հաջորդող Հազարամյակ – Օր տեսությունը

Իրականում օրերը քսանչորս ժամ տևողությամբ են, սակայն յուրաքանչյուր օրը մյուսից բաժանվում է հազարամյակներով, որի ընթացքում այն ինչ ստեղծվել էր, զարգանում էր: Հարցեր են ծագում այսպիսի մոտեցումից.

ա. Միևնույն խնդիրներն են ծագում ինչպես և Օր- Հազարամյակ տեսության մեջ է:

բ. Արդյո՞ք տեքստը նշում է «օր» բառը, որպեսզի այն հասկացվի թե՛ քսանչորս ժամերը և թե՛ մի ամբողջ հազարամյակ:

4. Կատարելագործվող Արարչագործություն – Աղետի տեսությունը

Այս տեսությունը հետևյալ կերպ է բացատրվում. Ծննդոց 1:1-ի և 1:2-ի միջև գոյություն ունի մի անորոշ ժամանակահատված, որի ընթացքում երկրաբանական հազարամյակներ են անցել. այս ընթացքում, համաձայն հանաժողովի տված հերթականության ստեղծվել են նախապատմական արարածներ. մոտ 200,000 տարի առաջ մի գերբնական աղետ է տեղի ունեցել և բնաջնջել այս մոլորակի վրա գոյություն ունեցող կյանքի մեծ մասը և շատ կենդանիների վերացրել. դրանից հետո սկսել են Ծննդոց 1-ի օրերը: Այս օրերը ավելի շուտ վերաբերում են վերաստեղծմանը, քան թե սկզբնական արարչագործությանը:

5. Միայն Եդեմ տեսությունը

Ստեղծագործության պատմությունը վերաբերում է միայն Եդեմի Պարտեզի արարչագործությանն ու ֆիզիկական ասպեկտներին:

6. Ճեղքման տեսությունը

Ծննդոց 1:1-ի հիման վրա Աստված ստեղծեց կատարյալ աշխարհ: Ծննդոց 1:2-ի հիման վրա, Արյուսակը (Սատանան) դրվեց պատասխանատու այս աշխարհի վրա և ապստամբեց: Այս Աստված դատեց Արյուսակին և աշխարհը՝ այն ամբողջովին բնաջնջելով: Միլիոնավոր տարիներ շարունակ աշխարհը թողնվեց այդպես և երկրաբանական հազարամյակներն անցան: Ըստ Ծննդոց 1:3-2:3-ի Ք.Ա. 4004 թ-ին տեղի ունեցան վերաստեղծման վեց տառացի քսանչորս ժամյա օրերը: Եպիսկոպոս Աշերը (Bishop Ussher, մ. թ. 1654) կիրառում էր Ծննդոց 5-ի և 11-ի սերնդաբանությունները, որպեսզի հաշվի և թվագրի մարդկության արարումը՝ Ք. Ա. 4004: Սակայն սերնդաբանությունները չեն ներկայացնում ժամանակագրական լիարժեք սանդղակներ:

7. Սուրբ Շաբաթի Տեսությունը

Ծննդոց գրքի հեղինակը կիրառել է օրերի և մեկ շաբաթի հասկացությունը որպես բառացի միջոց արարչագործության մեջ Աստծո գործողությունների սուրբ ուղերձը ներկայացնելու համար: Այսպիսի կառուցվածքը լուսաբանում է Աստծո արարչագործության գեղեցկությունն ու համաչափությունը՝ ներդաշնակությունը:

8. Տիեզերական Տանարի Հանդիսավոր Բացումը

Սա Ջոն Հ. Ուոլթոնի, *Ծննդոց Մեկի Կորստ Աշխարհը*, (John H. Walton, *The Lost World of Genesis One*, IVP, 2009) գրքից վերջին տեսակետն է, որը վեց օրերը դիտարկում է որպես «ֆունկցիոնալ գոյաբանություն և ոչ թե նյութական գոյաբանություն՝ օնտոլոգիա»: Նրանք բնութագրում են Աստծուն որպես մարդկության բարօրության համար գործող տիեզերք ստեղծող կամ կարգադրող: Սա համապատասխանում է մյուս հնագույն տիեզերագիտություններին: Օրինակ, առաջին երեք օրերը ներկայացնում են Աստծուն որպես «եղանակները» (այսինքն՝ ժամանակը), «եղանակը» (այսինքն՝ բերքի համար) և «սնունդը» ապահովողի՝ ստեղծողի: «Բարի է» կրկնվող արտահայտությունը մատնանշում է ֆունկցիոնալ վիճակը:

Յոթներորդ օրը նկարագրում է Աստծուն Իր լիարժեք գործող և բնակեցված «տիեզերական տաճարը» մտնելիս, որպես դրա օրինական սեփականատեր, վերահսկող և տնօրինող: Ծննդոց 1-ը ոչ մի կապ չունի մատերիայի նյութական արարչագործության հետ, այլ այդ մատերիային հրամայելու հետ, որ դառնա Աստծո և մարդկության փոխհարաբերության համար գործնական մի վայր:

«Օրերը» դառնում են գրականական միջոց, որպեսզի հաղորդեն ANE-ի ընդհանուր համաձայնությունը, որ՝

ա. տարբերություն չկա «բնականի» և «գերբնականի» միջև:

բ. Աստված ներգրավված է մեր կյանքի յուրաքանչյուր ոլորտի մեջ: Նրա մեծագույն նպատակը՝ աշխարհայացքը չի եղել Իսրայելի բացառիկությունը, այլ հետևյալը՝

(1) նրա միաստվածությունը

(2) Ստեղծագործությունը մարդկության համար էր և ոչ թե աստվածների

(3) Իսրայելի պատմության մեջ չկա աստվածների միջև կամ աստվածների և մարդկանց միջև բախումներ

Նա ուրիշներից չի վերցրել իր արաչագործության պատմությունը, այլ կիսվել է իրենց ընդհանուր աշխարհայացքը:

«Օր» տերմինը սովորաբար վերաբերում է երկրագնդի պտույտի 24 ժամյա ցիկլին (այսինքն՝ Ելից 20:9-10), սակայն այն կարող է վերաբերել նաև ինչ-որ անորոշ ժամանակի (տես՝ Ծննդ.2:4; 5:2; Հռութ 1:1; Մաղմ.50:15; 90:4; Ժող.7:14; Եսայի 4:2; 11:2; Չաբ.4:10):

3:9 «ՓՈՐՁԵՑԻՆ ԻՆՁ ԵՎ ՔՆՆԵՑԻՆ ԻՆՁ» Եբր.3:8-ում «ապստամբել» տերմինը և «քննել» տերմինը Եբր.3:9-ում Մասրետիկ Տեքստում “*meribah*” և “*massah*” են. երկու աշխարհագրական տեղանքներ, որոնք նշված են Ելից 17:1-7-ում, որտեղ Իսրայելը ապստամբեց Աստծո դեմ:

Հունարեն թարգմանության մեջ կիրառվում են երկու տարբեր տերմիններ «քննել» կամ «փորձել» բառերի համար: Առաջինը (*peirazō*) սովորաբար ունի «փորձել կործանելու նկատառումով» իմաստը, իսկ երկրորդը՝ (*dokimazō*) «փորձել բարելավելու նկատառումով», սակայն այս համատեքստում դրանք հոմանիշներ են: Տես Հատուկ Թեմա Եբր.2:18:

■ **«ՏԵՍԱՆ ԻՄ ԳՈՐԾԵՐԸ»** Զառասուն տարի անապատում դեգերելու տարիների ընթացքում Իսրայելի որդիների հետ Աստծո հրաշքներով լի գործերը նրանց չհասցրեց Իր հանդեպ կատարյալ վստահության: Ղուկաս 16-ում Ղազարոսի և հարուստի մասին առակը միացնելով Մատթ.24:24-ի հետ, ցույց է տալիս, որ հրաշքները անպայման չէ, որ լինեն Աստծուց նշան, ոչ էլ լավագույն միջոցը մարդկանց հավատքի համար շահելու (տես՝ Մատթ.4:3,6-ում Հիսուսի փորձվելը չարի կողմից):

■ **«ՔԱՌԱՍՈՒՄ ՏԱՐԻ»** Աստվածաշնչում այս թիվը հաճախ է կիրառվում: Պետք է որ սա եբրայերեն դարձվածք լինի երկար, անորոշ ժամանակի համար: Իրականում, այս համատեքստում այն վերաբերում է 38 տարվա (տես՝ Թվոց 14:34):

Եբրայեցիների հեղինակը փոփոխել է այս Մաղմոսի թե՛ եբրայերեն և թե՛ հունարեն տեքստերը (օր.՝ Պողոսի մեջբերումը Մաղմ.68:18-ից Եփես.4:8-ում) կապելով «քառասուն տարիները» Իսրայելացիների հետ, որոնք տեսել էին ՅԱՀՎԵԻ հրաշքները անապատում դեգերելու տարիներին: Սակայն Մասրետիկ Տեքստը և Մեպտուազիմտան այս արտահայտությունը կապում են այս ընթացքում մարդկանց հանդեպ ՅԱՀՎԵԻ ունեցած բարկության հետ (տես՝ Մաղմ.95:10): Նոր Կտակարանի հեղինակները ներշնչված լինելով հաճախ մեկնաբանում են ՀԿ-ը ռաբբիական բառախաղերով: Կարծես թե սա ոտնահարում է հեղինակի մտադրության հանդեպ մեր ժամանակակից մոտեցումը, որպես Աստվածաշունչը պատշաճ կերպով մեկնաբանելու կերպ: Մենք պետք է իրավունք տանք ՆԿ-ի հեղինակներին օգտագործելու ՀԿ-ը այնպիսի կերպերով, որոնք մեր ժամանակակից մեկնաբանների համար գուցե և կլինեն անտեղին: Մենք չենք կարող վերարտադրել ներշնչված հեղինակների հերմենևտիկ մոտեցումը:

3:10 «ԲԱՐԿԱՅԱ ԱՅՎ ՍԵՐՆԳԻ ՎՐԱ» ՅԱՀՎԵԻ բարկության և դատաստանի լավ օրինակ կարելի է գտնել Թվոց 14:11,22-23,27-30,35-ում:

■ **«ՃԱՆԱԶԵԼ»** Եբրայերեն տերմինը իր մեջ պարունակում է անձնական փոխհարաբերության տարր (տես՝ Ծննդ.4:1; Երեմ.1:5), ոչ թե միայն փաստեր ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի վերաբերյալ: Աստվածաշնչյան հավատքը ունի թե՛ ճանաչողական տարրեր (ճշմարտություններ) և թե՛ անձնական տարր (վստահություն):

■ **«ԻՄ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ»** Եբրայերենում գոյություն ունեն շատ տարբեր հոմանիշներ, որոնք վերաբերում են Աստծո Օրենքին (տես՝ Մաղմ.19:6-9; 119): Աստծո կամքը նրանց համար հստակ էր (այսինքն՝ ՀԿ-ի իսրայելացիներին), սակայն նրանք կամովի մերժեցին այն: Մա Եբրայեցիներին ուղղված նամակը ստացող անհավատ հրեաների խնդիրն էր: Հիսուսի պատգամը՝ խոսքը փոխել էր «Աստծո ճանապարհները» (այսինքն՝ Մատթ.5:21-48; Մարկ.7:19; 10:5-6): Այս հրեա երկրպագուների համար դժվար էր թողնել Մովսեսին և լիովին վստահել Առաքելական այս «նոր ուխտի» պատգամին (այսինքն՝ Երեմ.31:31-34; Եզեկ.36:22-38) բացարձակապես առանց մարդկային գործերի:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՏԵՐՄԻՆՆԵՐ ԱՍՏԾՈՒ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ (ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱՅՐ և ՍԱՂՄՈՍՆԵՐԸ)
SPECIAL TOPIC: TERMS FOR GOD’S REVELATION (DEUTERONOMY and PSALMS)

- I. «Կանոններ», BDB 349, «օրենք, հրաման կամ կարգադրություն»
 Ա. ԱՐԱԿԱՆ ՍԵՌ, ղո (KB, 346) – 2 Օր.4:1,5,6,8,14,40,45; 5:1; 6:1,24; 7:11; 11:32; 16:12; 17:19; 26:17; 27:10; Սաղմ.2:7; 50:16; 81:4; 99:7; 105:10,45; 148:6
 Բ. ԻԳԱԿԱՆ ՍԵՌ, ղր (KB, 347) – 2 Օր.6:2; 8:11; 10:13; 11:1; 28:15,45; 30:10,16; Սաղմ. 89:31; 119:5,8,12,16,23,26,33,48, 54,64,68,71,80, 83,112,124,135, 145,155,171
- II. «Օրենք» BDB 435, KB 1710, «հրահանգ» – Deut. 1:5; 4:44; 17:11,18,19; 27:3,8,26; 28:58,61; 29:21,29; 30:10; 31:9; Psalm 1:2; 19:7; 78:10; 94:12; 105:45; 119:1,18,29,34,44,51,53,55,61,70,72, 77,85,92,97,109,113,126,136,142,150,153,163,165,174
- III. «Վկայություններ» BDB 730, KB 790, «աստվածային օրենքներ»
 Ա. ՀՈԳՆԱԿԻ ԹԻՎ, ղԾ -Երկրորդ Օրինաց 4:45; 6:17,20; Սաղմ.25:10; 78:56; 93:5; 99:7; 119:22,24,46,59,79,95,119,125,138,146,152,167,168
 Բ. ղԾ կամ ղԾԾ – Սաղմ.19:7; 78:5; 81:5; 119:2,14,31,36,88,99,111,129,144,157
- IV. «Հրահանգներ» BDB 824, KB 959, «հրաման» - Սաղմ.19:8; 103:18; 111:7; 119:4,15,27,40,45,56, 63,69,78,87,93,94,100,104,110,128,134,141,159,168,173
- V. «Պատվիրաններ» BDB 846, KB 622 – 2 Օր.4:2,40; 5:29; 6:1,2,17,25; 8:1,2,11; 10:13; 11:13; 15:5; 26:13,17; 30:11,16; Սաղմ.19:8; 119:6,10,19,21,32,35,47,48, 60,66,73,86,96,98,115,127, 131,143,151, 166,176
- VI. «Դատաստաններ՝ վճիռներ» BDB 1048, KB 651, «որոշումներ» կամ «արդարադատություն» - 2 Օր.1:17; 4:1,5,8,14,45; 7:12; 16:18; 30:16; 33:10,21; Սաղմ.10:5; 18:22; 19:9; 48:11; 89:30; 97:8; 105:5,7; 119:7,13,20,30,39,43,52,62, 75,84,102,106,120,137, 149,156,160,164; 147:19; 149:9
- VII. «Նրա ճանապարհները» BDB 202, KB 231, ՅԱՀՎԵԻ ուղեցույցները Իր ժողովրդի կյանքի համար – 2 Օր.8:6; 10:12; 11:22,28; 19:9; 26:17; 28:9; 30:16; 32:4; Սաղմ.119:3, 5,37,59
- VIII. «Նրա խոսքերը»
 Ա. BDB 182, KB 211 – Deut. 4:10,12,36; 9:10; 10:4; 17:19; 18:19; Psalm 119:9,16,17,25,28,42, 43,49, 57,65,74, 81,89,101,105,107,114,130,139,147, 160,161,169
 Բ. BDB 57, KB 67
 1. «խոսք» - 2 Օր.33:9; Սաղմ.119:11,67,103,162,170,172
 2. «խոստում» - Սաղմ.119:38,41,50,58,76,82,116,133,140,148,154
 3. «հրաման» - Սաղմ.119:158

Բոլոր այս տերմինները վերաբերում են Իսրայելին Իր մասին տրված Աստծո հատուկ հայտնությանը: Դրանք հիմնականում հոմանիշներ են: Տե՛ս Special Topic: Inspiration /Հատուկ Թեմա. Ներշնչանք/:

3:11 «ԱՅՆՊԵՍ ՈՐ ԵՐԿՎԵՅԻ ԻՄ ԲԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԵՉ» Աստծո բարկությունը Սուրբ Գրքի հիման վրա այնքան իրական է, որքան որ Աստծո սերը: Այնուամենայնիվ պետք է ասել, որ երկուսն էլ մարդաբանական փոխաբերություններ են, որոնք կիրառում են մարդկային զգացմունքներ և տերմինաբանություն: Անշուշտ դրանք Աստծուն են նկարագրում, սակայն ոչ վերջնականապես: Աստված մեզ բավարար չափով հայտնել է Իրեն, սակայն այնքան շատ բան կա Աստծո մասին իմանալու, որ մենք պարզապես չենք կարող ընդունել այդ բոլորը, մինչև սպրում ենք այս ժամանակավոր, ֆիզիկական, մեղավոր իրականության մեջ:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾ ՆԿԱՐԱԳՐՎԱԾ ՈՐՊԵՍ ՄԱՐԴ (ՄԱՐԴԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ)
SPECIAL TOPIC: GOD DESCRIBED AS HUMAN (ANTHROPOMORPHISM)

- I. Այսպիսի լեզուն (այսինքն՝ մարդուն առնչվող՝ մարդկային տերմիններով Աստծո բնութագրությունը) շատ տարածված է ՀԿ-ում (մի քանի օրինակներ)
 Ա. Ֆիզիզկական մարմնի մասեր
 1. Աքեր – Ծննդ.1:4,31; 6:8; Ելից 33:17; Թվոց 14:14; 2 Օր.11:12; Չաք.4:10

2. Ձեռքեր – Ելից 15:17; Թվոց 11:23; 2 Օր.2:15
3. Բագուկ – Ելից 6:6; 15:16; 2 Օր.4:34; 5:15
4. Ականջներ – Թվոց 11:18; 1 Թագ.8:21; 4 Թագ.19:16; Սաղմ.5:1; 10:17; 18:6
5. Դեմք – Ելից 33:11; Ղևտ.20:3,5,6; Թվոց 6:25; 12:8; 2 Օր.31:17; 32:20
6. Մատներ – Ելից 8:19; 31:18; 2 Օր.9:10; Սաղմ.8:3
7. Ջայն – Ծննդ.3:9,11,13; Ելից 15:26; 19:19; 2 Օր.26:17; 27:10
8. Ոտքեր – Ելից24:10; Եզեկ.43:7
9. Մարդկային կառուցվածք – Ելից 24:9-11; Սաղմոս 47; Ես.6:1; Եզեկ.1:26
10. Տիրոջ հրեշտակը – Ծննդ.16:7-13; 22:11-15; 31:11,13; 48:15-16; Ելից 3:4,13-21; 14:19; Դատ.2:1; 6:22-23; 13:3-22

Բ. Ֆիզիկական գործողություններ (տե՛ս օրինակներ)

1. Ստեղծագործության մեխանիզմի վերաբերյալ խոսելը – Ծննդ.1:3,6,9,11,14,20, 24,26
2. Քայլելը (այսինքն՝ քայլելու ձայնը) – Ծննդ.3:8; Ղևտ.26:12; 2 Օր.23:14; Ամբ.23:14
3. Նոյի տապանի դուռը փակելը – Ծննդ.7:16
4. Չոհերը հոտոտելը - Ծննդ.8:21; Ղևտ.26:31; Ամովս 5:21
5. Իջնելը - Ծննդ.11:5; 18:21; Ելից 3:8; 19:11,18,20
6. Մովսեսին թաղելը - 2 Օր.34:6

Գ. Մարդկային զգացմունքներ (մի քանի օրինակներ)

1. Չղջում՝ ափսոսանք - Ծննդ.6:6,7; Ելից 32:14; Դատ.2:18; 1 Թագ.15:29,35; Ամովս 7:3,6
2. Բարկություն - Ելից 4:14; 15:7; Թվոց 11:10; 12:9; 22:22; 25:3,4; 32:10,13,14; 2 Օր.6:15; 7:4; 29:20
3. Խանդ՝ նախաձախնդրություն - Ելից 20:5; 34:14; 2 Օր.4:24; 5:9; 6:15; 32:16,21; Հեսու 24:19
4. Չզվելը՝ նողկալը - Ղևտ.20:23; 26:30; 2 Օր.32:19

Դ. Ընտանեկան տերմիններ (մի քանի օրինակներ)

1. Հայր
 - ա. Իսրայելի - Ելից 4:22; 2 Օր.14:1; Եսայի 1:2; 63:16; 64:8; Երեմ.31:9; Ովս.11:1
 - բ. թագավորի - 2 Թագ.7:11-16; Սաղմ.2:7
 - գ. հայրական արարքների փոխաբերություններ – 2 Օր.1:31; 8:5; 32:6-14; Սաղմ. 27:10; Առակ.3:12; Երեմ.3:4,22; 31:20; Ովս.11:1-4; Սաղ.3:17
2. Ծնող - Ովս.11:1-4
3. Մայր - Ես.49:15; 66:9-13 (կերակրող մոր նմանությունը)
4. Երիտասարդ հավատարիմ սիրեցյալ – Ովսեա 1-3

II. Այսպիսի լեզվի կիրառության պատճառները

Ա. Աստծուն անհրաժեշտ է, որ Ինքն Իրեն հայտնի մարդկանց: Չկա մեկ ուրիշ բառապաշար, այլ միայն այս մեղավոր, աշխարհիկ բառապաշարը: Աստծո մասին ամենատարածված հասկացությունը որպես արական սեռի ներկայացուցիչ մարդաստվածության՝ անտրոպոմորֆիզմի օրինակներից մեկն է, քանի որ Աստված հոգի է:

Բ. Աստված վերցնում է մարդկային կյանքի ամենանշանակալի ոլորտները և դրանք կիրառում Իրեն հայտնելու ընկած՝ մեղավոր մարդկությանը (հայր, մայր, ծնող, սիրեցյալ):

Գ. Չնայած որ ժամանակ առ ժամանակ սա անհրաժեշտություն է (այսինքն՝ Ծննդ.3:8), սակայն Աստված չի ուզում սահմանափակվել որևէ ֆիզիկական ձևի՝ կազմվածքի մեջ (տես՝ Ելից 20; 2 Օրինաց 5):

Դ. Ամենամեծ մարդաստվածության օրինակը եղավ Հիսուսի մարմնացումը: Աստված ֆիզիկական, շոշափելի մարմին առավ (տես՝ 1 Հովհ.1:1-3): Աստծո պատգամը դարձավ Աստծո Խոսքը (տես՝ Հովհ.1:1-18):

III. Համառոտ հետաքրքիր քննարկման համար կարդացեք Գ. Բ. Կայերդի, *Աստվածաշնչի լեզուն և Պատկերները*, գլուխ 10, «Մարդաստվածություն», (G. B. Caird, *The Language and Imagery of the Bible*, chapter 10, "Anthropomorphism,") Միջազգային Ստանդարտ Աստվածաշնչի Հանրագիտարանում /The International Standard Bible Encyclopaedia/, էջ՝ 152-154:

3:12

NASB, NRSV, NJB

NKJV

NJB

«Չգո՛ւյշ եղեք, եղբայրներ՝»

«Չգուշացե՛ք»

«ուշադիր եղե՛ք»

Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է, շարունակեք արթուն մնալ: Ոչ միայն հավատքի կյանքի սկիզբն է կարևոր, այլ նաև ավարտը (տես՝ գլուխ 11):

NASB, NKJV
NRSV
NJB

«եղբայր»
«եղբայրներ և քույրեր»
«եղբայրներ»

Տե՛ս Եբր.3:1-ի գրառումները: Այս դիմելիքները կարծես թե վերաբերում է հավատացյալ հրեաներին, չնայած որ այն կարող է մատնանշել էթնիկ հայրությունը:

■ **«անհավատության սիրտ / չհավատացող սիրտ»** Սա նկարագրում է այն հավատացյալին, որը լքում է Աստծուն: Հավատացող սիրտը այն ք, որը շարունակում է մինչև վերջ հաստատ մնալ (տես՝ Եբր.3:14 և գլուխ 11): «Չհավատացող սիրտ» արտահայտությունը արտացոլում է եբրայերենի «անհավատության սիրտ» դարձվածքը (տես՝ Եբր.4:6), ինչպես և «հեռանալ» բառը արտացոլում է Եբրայերենի *shuv* («վերադառնալ» կամ «շրջվել») դարձվածքը:

■ **«կենդանի Աստծուց հեռանալով»** Սա ԱՈՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԱՆՈՐՈՇ է: Այս ԲԱՅԸ անգլերենի “apostasy” (հերձվածողություն) բառի արմատն է: Հաղորդում է զարգացող անհավատություն իմաստը (այն Եբր.3:14-ի հակադարձն է): Ո՛ւմ է վերաբերում այս պատգամը. (1) հավատացյալ հրեաներին, թե (2) անհավատ հրեաներին: Եբր.3:1-ում «եղբայրներ» բառի կիրառությունը և «երկնային կոչման մասնակիցներ» ավելացված արտահայտությունը և Եբր.3:12-ում «եղբայրներ» բառերից հասկանալի են, որ այն վերաբերում է հավատացյալներին:

Ուրեմն ինչի՞ն է վերաբերում զգուշացումը, (1) փրկությանը, թե (2) հավատարմությանը: Համատեքստում կարծես թե հավատարմությանն է վերաբերում. Հիսուսը հավատարիմ էր, նրանք էլ պետք է հավատարիմ լինեն: Եբրայեցիների թուղթը Քրիստոնեական կյանքը դիտարկում է վերջից (տես՝ Եբր.3:14), ոչ թե սկզբից (Պողոսի պես):

Եբր.3:13-ի «հեռանալ» բառը պետք է որ կապված լինի հարատևող հավատքի և հավատարմության հետ: Իսրայելացիները հավատք ունեին, սակայն ոչ գործնական, հնազանդ հավատք: Նրանք մերժեցին Աստծո կողմից տրված կայծ ու մեղր բխող երկրի խոստումը, երբ լսեցին լուսնների տված լուրը (տես՝ Թվոց 13-14), և ոչ թե Աստծո հանդեպ ունեցած իրենց հավատքը: Այս համատեքստում «հեռանալ» չի նշանակում «հավատքից ընկնել», այլ «հավատարմությունից ընկնել»: Սակայն առողջ հավատքի համար այս երկուսն էլ անհրաժեշտ են : Տե՛ս Եբր.3:16-18 գրառումները:

Աստված միշտ մեզ մոտենում է ուխտի փոխհարաբերության միջոցով: Մենք պետք է արձագանքենք հավատքով և հավատարմությամբ: Ամենակալ Աստված թույլ է տվել մեզ մասնակցելու մեր սկզբնական որոշման մեջ և մեր շարունակական աշակերտության մեջ: Եբրայեցիների հեղինակին դժվար է հետևելը, քանի որ.

1. նա կիրառում է ռաբբիական տրամաբանություն և հերմենևտիկա
2. նա դիմում է երկու խմբերի՝
 - ա. հավատացյալ հրեաներին
 - բ. անհավատ հրեաներին
3. նա Քրիստոնեական վստահությունը և հաղթանակը դիտարկում է համաձայն հավատարմության ինչպես նաև հավատքի չափորոշիչների
4. նա կենտրոնանում է մինչև վերջ տևող հավատարմության վրա (տես՝ Եբր.4:14, գլուխ 11): Քրիստոնեական կյանքը նա դիտարկում է ըստ դրա վախճանի և ոչ թե սկզբի:

«Կենդանի Աստված» արտահայտությունը Աստծո ուխտի անվան՝ ՅԱՀՎԵԻ, հետ կապված բառախաղ է, որը ծագել է եբրայերենի «լինել» ԲԱՅԻՑ (տես՝ Ելից 3:14): Տե՛ս Հատուկ Թեմա. Աստծո Անունները, Եբր.2:7: Այս ընթերցողները չէին մերժում ՅԱՀՎԵԻ, սակայն հեզնական այն է, որ Հիսուս Քրիստոսի ավետարանը մերժելը, իրականում ՅԱՀՎԵԻ մերժել է նշանակում (տես՝ Հովհ.5:9-12):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒԽՏԱԳՐԺՈՒԹՅՈՒՆ (APHISTĒMI)
SPECIAL TOPIC: APOSTASY (APHISTĒMI)

Հունարեն այս տերմինը *aphistēmi* ունի մեծ իմաստային հարթակ: Սակայն անգլերեն տերմինը “apostasy” բխում է հենց այս տերմինից և տրամադրում է իր կիրառությունը ժամանակակից ընթերցողներին: Ինչպես միշտ համատեքստն է կարևոր տեղում, և ոչ թե սահմանումը:

Սա բաղադրյալ տերմին է *apo* նախդիրով, որը նշանակում է «-ից» կամ «հեռու –ից» և *histēmi* «նստել» «կանգնել» կամ «ամրապնդել»: Ուշադրություն դարձրեք հետևյալ (ոչ աստվածաբանական) կիրառություններին՝

1. ֆիզիկապես հեռացնել
 - ա. Տանարից, Ղուկ.2:37
 - բ. տնից, Մարկ.13:34
 - գ. մարդուց, Մարկ.12:12; 14:50; Գործք 5:38
 - դ. ամեն ինչից, Մատթ.19:27,29
2. քաղաքական առումով հեռացնել, Գործք 5:37
3. հարաբերականորեն հեռացնել, Գործք 5:38; 15:38; 19:9; 22:29
4. իրավաբանորեն հեռացնել (ամուսնալուծվել), 2 Օրինաց 24:1,3 (LXX) և ՆԿ՝ Մատթ.5:31; 19:7; Մարկ.10:4; 1 Կորնթ.7:11
5. պարտքը հեռացնել, Մատթ.18:24
6. հեռանալով անհոգություն ցուցաբերել, Մատթ.4:20; 22:27; Հովհ.4:28; 16:32
7. չհեռանալով հոգատարություն ցուցաբերել, Հովհ.8:29; 14:18
8. թույլ տալ կամ թույլատրել, Մատթ.13:30; 19:14; Մարկ.14:6; Ղուկ.13:8

Աստվածաբանական նշանակությամբ ԲԱՅԸ ունի լայն կիրառություն՝

1. չեղարկել, ներել, մեղքի հանցավորությանը թողություն տալ, Ելից 32:32 (LXX); Թվոց 14:19; Հոր 42:10 և ՆԿ՝ Մատթ.6:12,14-15; Մարկ.11:25-26
2. մեղքից խուսափել, 2 Տիմ.2:19
3. անտեսել՝ հեռու գնալով
 - ա. Օրենքից, Մատթ.23:23; Գործք 21:21
 - բ. հավատքից, Եզեկ.20:8 (LXX); Ղուկ.8:13; 2 Թեսաղ.2:3; 1 Տիմ.4:1; Եբր.2:13

Մեր օրերի հավատացյալները հարցնում են շատ աստվածաբանական հարցեր, որոնք ՆԿ-յան հեղինակների մտքով անգամ չէր անցնում: Սրա հետևանքներից մեկն այն է, որ մեր օրերում մարդիկ ավելի հակված են հավատքը բաժանել հավատարմությունից:

Աստվածաշնչում կան մարդիկ, որոնք Աստծո ժողովրդի միջից լինելով, նրանց պատճառով ինչ-որ դեպքեր են պատահել:

I. Հին Կտակարան

- Ա. Նրանք, որոնք լսեցին տասներկու (տաս) լրտեսների բերած լուրին. Թվոց 14 (տես՝ Եբր. 3:16-19)
- Բ. Կորխը, Թվոց 16
- Գ. Հեղիի որդիները, 1 Թագավորաց 2,4
- Դ. Մավուդը, 1 Թագավորաց 11-31
- Ե. Սուտ մարգարեները (օրինակներ)
 1. 2 Օր.13:1-5, 18:19-22 (սուտ մարգարեին ճանաչելու կերպերը)
 2. Երեմիա 28
 3. Եզեկիել 13:1-7
- Չ. Սուտ մարգարեուհիները
 1. Եզեկիել 13:17
 2. Նեեմիա 6:14
- Է. Իսրայելի չար առաջնորդները (օրինակներ)
 1. Երեմիա 5:30-31; 8:1-2; 23:1-4
 2. Եզեկիել 22:23-31
 3. Միքիա 3:5-12

II. Նոր Կտակարան

Ա. Այս հունարեն տերմինը բառացի նշանակում է *apostasize*: Թե՛ Հին և թե՛ Նոր Կտակարանները հաստատում են Երկրորդ Գալուստից առաջ չարի և կեղծ ուսմունքների ուժգնացումը (տես՝ Մատթ.24:24; Մարկ.13:22; Գործք 20:29,30; 2 Թեսաղ.2:9-12; 2 Տիմ.4:4): Այս հունարեն բառը հնարավոր է արտացոլում է Հիսուսի Սերմնացանի Առակի խոսքերը, որ գտնվում է Մատթեոս 13; Մարկոս 4 և Ղուկաս 8-ում: Այս կեղծ վարդապետները ակնհայտ է, որ Քրիստոնյաներ չէին, սակայն նրանք ներսի մարդկանցից էին (տես՝ Գործք 20:29-30; 1 Հովհ.2:19), համենայն դեպս նրանք ի զորու են հրապուրելու՝ գայթակղելու հասունություն չունեցող հավատացյալներին (տես՝ Եբր.3:12):

Աստվածաբանական հարցը սրանում է, թե արդյո՞ք այս կեղծ վարդապետները երբևէ եղել են հավատացյալներ: Դժվար է պատասխանել այս հարցին, քանի որ տեղական եկեղեցիներում կային կեղծ վարդապետներ (տես՝ 1 Հովհ.2:18-19): Հաճախ մեր աստվա-

ծաբանական և հարանվանական սովորություններն են պատասխանում այս հարցին առանց նույնիսկ դիմելու Աստվածաշնչյան որևէ հստակ տեքստի (բացառությամբ տեքստով ապացուցելի մեթոդով համատեքստից դուրս որևէ համարի մեջբերման, որը ենթադրաբար ապացուցում է տվյալ մարդու ներկայացրած հակվածությունը):

Բ. Ակնհայտ հավատքի ուխտադրություն

1. Հուդան, Հովհ.17:12
2. Միմոն Մոզը, Գործք 8
3. Մարդիկ, որոնց մասին խոսվում է Մատթ.7:13-23-ում
4. Մարդիկ, որոնց մասին խոսվում է Մատթեոս 13; Մարկոս 4; Դուկաս 8-ում
5. Հովհաննես 8:31-59-ի հրեաները
6. Աղեքսանդրոսն ու Հիմենոսը, 1 Տիմ.1:19-20
7. 1 Տիմ.6:21-ի մարդիկ
8. Հիմենոսն ու Փիղետոսը, 2 Տիմ.2:16-18
9. Դեմասը, 2 Տիմ.4:10
10. Կեղծ վարդապետները, 2 Պետրոս 2:19-22; Հուդա հհ. 12-19
11. հակաքրիստոսները, 1 Հովհ.2:18-19

Գ. Անպտուղ հավատք

1. 1 Կորնթացիների 3:10-15
2. 2 Պետրոս 1:8-11

Մենք հազվադեպ ենք մտածում այս տեքստերի շուրջ, քանի որ մեր սխտեմատիկ աստվածաբանությունը (Կալվինիզմը, Հայկականությունը /Արմենիանիզմը/ և այլն) տալիս է լիազորված պատասխան: Խնդրում են նախորոք մի՛ դատեք ինձ այս թեման բարձրացնելու համար: Իմ նպատակն է ճշգրիտ՝ պատշաճ հերմենևտիկ ընթացակարգը: Մենք պետք է թույլ տանք, որ Աստվածաշունչը խոսի մեզ և չփորձենք ձուլել այն մեր ժամանակի աստվածաբանության հետ: Սա հաճախ ցավոտ և սթափեցնող է, քանի որ մեր աստվածաբանության մեծ մասը հարանվանական, մշակութային կամ փոխհարաբերությունների հետ է կապված (ծնող, ընկեր, հովիվ): Ոմանք, ովքեր Աստծո ժողովրդի մեջ էին, պարզվում է, որ Աստծո ժողովրդից չէին (օրինակ՝ Հռոմ.9:6):

3:13 «Այլ հորդորեցե՛ք միմյանց» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Հավատացյալները պետք է հետամուտ լինեն Սուրբ Հոգուն և Որդուն, քաջալերական հավատքի և հավատարմության մեջ (տես՝ Եբր. 10:24): Սա *paraclete* բառի պես ունի միևնույն արմատը, որը նշանակում է «մեկը, որ կանչված է կողքիդ լինելու որպես օգնական» և կիրառվում է Սուրբ Հոգու (տես՝ Հովհ. 14:16,26; 15:26; 16:7) և Հիսուսի համար (տես՝ 1 Հովհ.2:1):

■ **«Այսօր»** Սաղմոս 95-ում կիրառված «այսօր» բառը ցույց է տալիս, որ Աստծուն վստահելու և Նրա հանգստությունը գտնելու ժամանակը դեռևս բաց էր, ինչպես Դավթի օրերում: Հեղինակը շեշտադրում է, որ հիմա է որոշման ժամանակը, քանի որ ժամանակ կգա, երբ շարունակական մերժման պատճառով նրանց աչքերը կկուրանան և չեն կարողանա տեսնել (այսինքն՝ Ավետարանների մեջ նշված աններելի մեղքը և 1 Հովհաննեսի մեջ տրված մահվան տանող մեղքը):

Ոչ որ չի կարող որոշել այն ժամանակը, թե երբ ինքը կգա Աստծո մոտ (տես՝ Հովհ.6:44,65): Մեր միակ ընտրությունը արձագանքելն է և այն էլ անմիջապես արձագանքելը: Ծարունակ մերժման և կամովի չհավատալու հետևանքով մարդու սիրտը հոգևորապես կարծրանում է (տես՝ ԱՌՐԻՍՍ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ, «կարծրանա մեղքի խաբեության հետևանքով»): Սա Աստծո կամքը չէ, սակայն մերժման անխուսափելի արդյունքը: Աստծո ժողովուրդը, որը հավատքով թողեց Եգիպտոսը, կասկածի տակ դրեց Խոստացյալ Երկիրը ժառանգելու հետ կապված Աստծո խոստումը: Հավատացյալները հաճախ գործադրում են գործնական անհավատություն: Չգուշացեք ձեր սկզբնական հավատքը հետագայում շարունակվող՝ աճող հավատքից առանձնացնելուց (տես՝ Եբր.3:6,14):

■ **«որ չինի թե ձեզնից որևէ մեկը կարծրանա մեղքի խաբեության հետևանքով»** Սա ԱՌՐԻՍՍ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ է: Մեղքը անձնավորված է որպես սրտերը կարծրացնող թշնամի: Նկատեք, թե ինչպես է ներկայացվում ճշմարտությունը.

1. Չգույշ եղե՛ք, եղբայրներ (Եբր.3:12)
2. Չլինի թե ձեզնից որևէ մեկը՝ (Եբր.3:12)
 - ա. անհավատության սիրտ ունենա
 - բ. Աստծուց հեռանա
3. Հորդորեցե՛ք միմյանց (Եբր.3:13)
4. Չլինի թե ձեզնից մեկը կարծրանա մեղքից (Եբր.3:13)
5. Հաղորդակից կլինենք, եթե ... հաստատ պահենք (Եբր.3:14)

Ինչպիսի՜ հզոր քաջալերանք և զգուշացում են ներկայացնում այս համարները:

3:14 «Քրիստոսին հաղորդակից ենք եղել /հայ՝ կլինենք/» Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ժամանակ, ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ սեռ, ՍԱՀՄԱՆԱԿԱՆ եղանակ է: Այն արտահայտում է ավարտված գործընթաց, որի արդյունքում հաստատուն վիճակ է տիրում:

■ **«եթե»** Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ է, որն արտահայտում է պոտենցիալ գործողություն: Սա ևս մեկ զգուշացում է հորոդորելով Քրիստոնյաներին հաստատ պահելու իրենց դավանությունը (տես՝ Եբր.3:6; 4:14; 10:23):

NASB	«եթե սկզբում ունեցած մեր վստահությունը մինչև վերջ հաստատ պահենք»
NKJV	«եթե մինչև վերջ մեր վստահության սկիզբը հաստատ պահենք»
NRSV	«եթե միայն մեր վստահությունը մինչև վերջ հաստատ պահենք»
TEV	«եթե մինչև վերջ սկզբում ունեցած մեր վստահությունը հաստատ պահենք»
NJB	«եթե մինչև վերջ ամուր բռնենք մեր առաջին վստահությունը»

Այս խոսքը շեշտադրում է հարատևությունը: Աստվածաշնչյան այս շեշտադրումը որքան որ ապահովագրված է, այնքան էլ վավեր է: Դրանք պետք է իրար հետ ամուր կապակցված լինեն աստվածաշնչային հավասարակշիռ հեռանկարի համար (տես՝ 3:6; 4:14; Մարկ 13:13; Հռոմ.11:22; 1 Կորնթ.15:2; Գաղ.6:7-9; 1 Հովհ.2:19; Հայտն.2:7,11,17,26; 3:5,12,21; 21:7): Տես Special Topic: Assurance /ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԱՇԽԻՔ / Եբր.2:2-ում: «Մինչև վերջ» խոսքի համար տես Հատուկ Թեմա 7:11:

Աստվածաշնչյան վարդապետությունների մեծ մասը ներկայանում են բարբառային կամ պարադոքսալ զույգերով: Աստվածաշունչը արևելյան գիրք է, որը կիրառում է այլաբանական լեզու՝ ճշմարտությունն արտահայտելով շատ ուժեղ սահմանումներով, սակայն ապա այն բալանսավորում է ուրիշ թվացյալ իրար հակասող սահմանումներով: Հետևաբար ճշմարտությունը գտնվում է սահմանված այս երկու ծայրահեղությունների միջև: Արևմուտքի մարդիկ հակված են կիրառելու պարադոքսի միակողմանի տեքստային ապացույցը և արմատացնելու ճշմարտությունը տառացիորեն և դոգմատիկորեն մեկնաբանելով ճշմարտության մեկ արտահայտությունը և փորձելով ու լինելով բաց դրան հակասող ճշմարտությանը: Ծատ իմաստներով սա է հանդիսանում արևմտյան ժամանակակից հարանվանությունների հիմնական աղբյուրը: Տես հետևյալ Հատուկ Թեման:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՎԱՏԱՀՈՒԹՅՈՒՆ
SPECIAL TOPIC: CHRISTIAN ASSURANCE

Վստահությունը (1) աստվածաշնչյան ճշմարտություն է, (2) հավատացյալի հավատքի փորձառություն և (3) ապրելակերպ:

Ա. Վստահության համար աստվածաշնչյան հիմք է հանդիսանում.

1. Հայր Աստծո բնավորությունը և նպատակը
 - ա. Ելից 34:6-7 (տես՝ Հատուկ Թեմա. Իսրայելի Աստծո բնավորությունը)
 - բ. Նենեմիա 9:17
 - գ. Հովհ.3:16; 10:28-29 (տես՝ Հատուկ Թեմա. ՅԱՀՎԵԻ հավիտենական փրկարար ծրագիրը)
 - դ. Հռոմեացիների 8:38-39
 - ե. Եփեսացիների 1:3-14; 2:5,8-9
 - զ. Փիլիպեցիների 1:6
 - է. 2 Տիմոթեոս 1:12
 - զ. 1 Պետրոս 1:3-5
2. Որդի Աստծո գործը
 - ա. Նրա քահանայական աղոթքը, Հովհ.17:9-24, հատկապես հ.12; Եբրայեցիների 7-9
 - բ. Նրա փոխանորդական գոհը (տես՝ Եսայի 52:13-53:12)
 - 1) Մարկոս 10:45
 - 2) 2 Կորնթացիների 5:21
 - 3) 1 Հովհաննես 2:2; 4:9-10
 - գ. Նրա շարունակվող բարեխոսությունը
 - 1) Հռոմեացիների 8:34
 - 2) Եբրայեցիների 7:25
 - 3) 1 Հովհաննես 2:1

3. Հոգի Աստծո տված կարողությունը
 - ա. Նրա կողմից կանչվելը, Հովհաննես 6:44,65
 - բ. Նրա կողմից կնքվելը
 - 1) 2 Կորնթացիների 1:22; 5:5
 - 2) Եփեսացիների 1:13-14; 4:30
 - գ. Նրա կողմից տրված անձնական վստահությունը
 - 1) Հռոմեացիների 8:16-17
 - 2) 1 Հովհաննես 5:7-13

Բ. Հավատացյալի տված անհրաժեշտ ուխտի արձագանքն է (տես՝ Special Topic: Հատուկ Թեմա. Ուխտ)

1. սկզբնական և շարունակական ապաշխարություն և հավատք (տես՝ Հատուկ Թեմա. Ի՞նչ է նշանակում «Ընդունել», «Հավատալ», «Դավանել՝ խոստովանել» և «Կանչել»)
 - ա. Մարկոս 1:15
 - բ. Հովհաննես 1:12
 - գ. Գործք 3:16; 20:21
 - դ. Հռոմեացիների 10:9-13
2. հիշելը, որ փրկության նպատակը Քրիստոսի պես լինելն է
 - ա. Հռոմեացիների 8:28-29
 - բ. 2 Կորնթացիների 3:18
 - գ. Գաղատացիների 4:19
 - դ. Եփեսացիների 1:4; 2:10; 4:13
 - ե. 1 Թեսաղոնիկեցիների
 - զ. 2 Թեսաղոնիկեցիների 3:13; 4:3; 5:23
 - է. Տիտոս 2:14
 - ը. 1 Պետրոս 1:15
3. հիշելով, որ վստահությունը հիմնավորվում է ապրելակերպով
 - ա. Հակոբոս
 - բ. 1 Հովհաննես
4. հիշելով, որ վստահությունը հիմնավորվում է ակտիվ հավատքի և հարատևության կյանքով (տես՝ Հատուկ Թեմա. Հարատևություն)
 - ա. Մարկոս 13:13
 - բ. 1 Կորնթացիների 15:2
 - գ. Եբրայեցիների 3:14; 4:14
 - դ. 2 Պետրոս 1:10
 - ե. Հուդա 1:20-21

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԿԻՉԲ *ARCHĒ* SPECIAL TOPIC: *ARCHĒ*

Հունարեն *archē* տերմինը նշանակում է «սկիզբ» կամ ինչ-որ բանի «ծագում»:

1. արարված կարգուկանոնի սկիզբը (տես՝ Հովհ. 1:1; Եբր. 1:10)
 2. ավետարանի սկիզբը (տես՝ Մարկ. 1:1; Փիլ. 4:15; 2 Թեսաղ. 2:13; Եբր. 2:3; 1 Հովհ. 1:1)
 3. առաջին ականատեսները (տես՝ Ղուկ. 1:2)
 4. սկզբնական նշանները (հրաշքները, տես՝ Հովհ. 2:11)
 5. սկզբնական սկզբունքները (տես՝ Եբր. 5:12)
 6. սկզբնական վստահությունը՝ ավետարանի ճշմարտությունների հիման վրա (տես՝ Եբր. 3:14)
 7. սկիզբը, Կող. 1:18; Հայտն. 3:14
- Այն սկավեց կիրառվել «կառավարել» կամ «իշխանություն»

1. մարդկային կառավարման պաշտոնյաների համար
 - ա. Ղուկաս 12:11
 - բ. Ղուկաս 20:20
 - գ. Հռոմ. 13:13; Տիտոս 3:1
2. հրեշտակային իշխանության համար
 - ա. Հռոմ. 8:38
 - բ. 1 Կորնթ. 15:24

գ. Եփես. 1:21; 3:10; 6:12

դ. Կող. 1:16; 2:10,15

ե. Հուդա 1:6

Հուդայի գրքի այս սուտ վարդապետները արհամարհում էին ամեն տեսակ իշխանություններին՝ երկրավոր և երկնավոր: Նրանք իրենց և իրենց ցանկությունները դնում էին առաջին տեղում՝ Աստուծուց, հրեշտակներից, քաղաքացիական իշխանություններից և եկեղեցու առաջնորդներից առաջ:

3:15 «եթե» Սա ևս մեկ ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, ինչպես Եբր. 3:14-ը, որն արտահայտում է պոտենցիալ գործողություն: Սա մեջբերում է Սաղմոս 95:7-8-ից, որը գլուխ 3-ի կենտրոնական թեման է:

3:16-18 Այս համարներում կան երեք հռետորական հարցեր (տես՝ Եբր. 3:16,17,18): Եթե այս նմանությունը տառացիորեն է վերցված, ապա թվում է, թե բոլոր նրանք, որ մեռան անապատում (տես՝ Թվոց 14), ինչպես նաև Մովսեսը, Ահարոնը, և Կորիսի ապստամբության ժամանակ հավատարիմ գտնված քահանաները, նրանք բոլորն էլ հոգևորապես հավիտյանս կորսված էին: Սա հնարավոր չէ: Սա «հանգստություն» և «անհնազանդություն» բառերի հետ բառախաղ է: Սրանք այս համատեքստի երկու կարևոր բառերն են: Աստված «հանգիստ» է պատրաստել նրանց համար, ովքեր վստահում են Իրեն (և շարունակում են վստահել), մինչդեռ «անհնազանդության» հետևանքներ գոյություն ունեն՝ թե հավատացյալների և թե անհավատների համար:

3:19 Եբր. 3:19-ի անհավատությունը առնչվում է Իսրայելի Անապատում Դեզերելու Ժամանակաշրջանում նրանց շարունակական անհավատության հետ:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ է Հիսուսը Եբր. 3:1-ում կոչվում «առաքյալ»:
2. Թվարկե՛ք «հանգստություն» բառի տարբեր կիրառությունները:
3. Սահմանե՛ք «սուրբերի համբերությունը՝ հարատևությունը»:

ԵՔՐԱՅԵՑԻՆԵՐԻ 4

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Հանգիստ Աստծո ժողովրդի համար		Չգուշացում և Հորդոր	և Հանգիստ Աստծո ժողովրդի համար	Ինչպես հասնել Աստծո Հանգստյան Երկիրը
(3:7-4:13)	Հանգստի Խոստումը	(3:7-4:13)	(3:7-4:13)	(3:7-4:13)
4:1-11	4:1-10	4:1-11	4:1-7	4:1-11
	Խոսքը մեր վիճակն է բացահայտում		4:8-11	
4:12-13	4:11-13	4:12-13	4:12-13	4:12-13
Հիսուսը Մեծ Քահանայապետ				
	Մեր Գթառատ Քահանայապետը	Քահանայապետ Հիսուսը	Հիսուսը որպես Քահանայապետ	Հիսուսը գթառատ Քահանայապետ
(4:14-5:10)		(4:14-5:14)	(4:14-5:10)	(4:14-5:10)
4:14-16	4:14-16	4:14-16	4:14-16	4:14-16

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու Ուղեցույց») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Հեղինակը պարբերաբար վերադառնում է Հիսուսի գերազանցության և Նրան հարատևորեն վստահելու զգուշացման թեմաներին:

- Բ. Հիսուսի գերազանցությունը (նոր ուխտ) հին ուխտի համեմատ
1. Նա է գերազանց հայտնությունը (մարգարեները, Եբր. 1:1-3)
 2. Նա է գերազանց միջնորդը (հրեշտակներ, Եբր. 1:4-2:18)

3. Նա է գերազանց ծառան (Մովսես, Եբր.3:1-6)
4. Նա է գերազանց քահանան (Ահարոն, Եբր.4:14-5:10; 6:13-7:28)
5. Նա է գերազանց ուխտը (ՀԿ, Եբր.8:1-13; 9:15-22)
6. Նա է գերազանց սրբարանը (տաճար, Եբր.9:1-11, 23-28)
7. Նա է գերազանց գոհը (կենդանիներ, Եբր.9:12-14; 10:1-18)
8. Նա է գերազանց սարը (հին կտակարանը որպես Սինա լեռը և նոր կտակարանը որպես Սիոն սարը, Եբր.11:18-29)

- Գ. Հիսուսի գերազանցության լույսի ներքո տրված են մի շարք զգուշացումներ Նրա ավետարանը մերժելու դեմ (այսինքն՝ Նոր Ուխտը, տես՝ Եբրեմ.31:31-34; Եզեկ.36:22-38) կամ Հուդայականությանը վերադառնալու դեմ (այսինքն՝ Հին Ուխտին):
1. Եբր.2:1-4
 2. Եբր.3:7-4:13
 3. Եբր.5:11-6:12
 4. Եբր.10:19-39
 5. Եբր.12:14-29

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 4:1-13

¹Ուրեմն զգուշ լինենք, որ չլինի թե Նրա հանգիստը մտնելու մեզ արված խոստումից, ձեզնից որևէ մեկը զրկվի: ²Որովհետև մեզ նույնպես ավետարանը քարոզվեց, ինչպես և նրանց, բայց քարոզված Խոսքը նրանց օգուտ չտվեց, քանի որ լսողների մեջ հավատով չընդունվեց: ³Իսկ մենք, որ հավատացինք, մտնում ենք հանգստի մեջ, ինչպես ասաց, թե.

«ԻՆՉՊԵՍ ԵՐԳՎԵՑԻ ԻՄ ԲԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԵՉ,
ԹԵ ԻՄ ՀԱՆԳՍՏԻ ՄԵՉ ՉՊԻՏԻ ՄՏՆԵՆ»,

թեև Իր գործերը աշխարհի հիմնադրումից ավարտված էին: ⁴Որովհետև մի տեղ յոթերորդ օրվա համար այսպես է ասվում. «ԵՎ ԱՍՏՎԱԾ ՅՈՒԹԵՐՈՐԴ ՕՐԸ ՀԱՆԳՍՏԱՅԱՎ ԻՐ ԲՈՒՐՈՒ ԳՈՐԾԵՐԻՑ»: ⁵Եվ այստեղ դարձյալ ասում է, թե՝ «ՉՊԻՏԻ ՄՏՆԵՆ ԻՄ ՀԱՆԳՍՏԻ ՄԵՉ»:

⁶Ուստի տեսնելով, որ ոմանք պետք է մտնեն այնտեղ, և նրանք, որոնց առաջինը քարոզվեց, անհավատության պատճառով չմտան, ⁷դարձյալ Նա մի ուրիշ օր է սահմանում, այնքան երկար ժամանակ հետո, Դավթի մեջ «Այսօր» կոչելով, ինչպես ասված է.

«ԱՅՍՕՐ ԵԹԵ ՆՐԱ ՉԱՅՆԸ ԼՄԵՔ,
ՄԻ ԿԱՐԾՐԱՅՐԵՔ ՉԵՐ ՍՐՏԵՐԸ»:

⁸Որովհետև, եթե Հեսուն նրանց հանգիստ տված լիներ, ապա դրանից հետո Նա ուրիշ օրվա մասին չէր խոսի: ⁹Ուրեմն մի հանգիստ է մնում Աստծո ժողովրդի համար: ¹⁰Որովհետև Նրա հանգիստը մտնողը նույնպես իր գործերից դադարում է, ինչպես Աստված դադարեց Իր գործերից: ¹¹Ուրեմն ջանանք մտնելու այդ հանգստի մեջ, որպեսզի ոչ մեկը, այդ նույն անհավատության օրինակին հետևելով, չընկնի: ¹²Որովհետև Աստծո Խոսքը կենդանի է ու զորավոր, և ամեն մի երկսայրի սրից ավելի կտրուկ, որ թափանցում է մինչև անձի ու հոգու, հողերի և ողնածուծի բաժանման սահմանը և մտքերի ու սրտի խորհուրդների գննողն է: ¹³Եվ չկա մի արարած, որ Նրա առջև հայտնի չլինի, այլ ամեն ինչ մերկ և բաց է Նրա աչքերի առջև, Ում մենք հաշիվ պիտի տանք:

- 4:1**
NASB, NKJV «վախենանք»
NRSV, TEV «հոգ տանենք»
NJB «զգուշ լինենք»

ԲԱՅԸ ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼ (ԱՈՐԻՍ) ԿՐԱՎՈՐԱԿԱՆ (հասարակ՝ դեպոնենտ) ՍՏՈՐԱԴԱՍՏԱԿԱՆ («եկեք վախենանք» անգլերեն թարգմանության մեջ) է: Եբրայեցիների զգուշացումները (տես՝ Եբր.2:1-4; 3:7-13; 4:1-13; 5:11-6:12; 10:26-39 և 12:14-17) սարսափ են առաջացնում (տես՝ Եբր.4:11): Այս զգուշացումները շոշափում են փրկության և փրկության վստահության հիմնական խնդիրները:

■ «Նրա հանգիստը մտնելու մեզ արված խոստումից» Սա պարբերաբար կրկնվող բառախաղ է (այսինքն՝ «Նրա հանգիստը», տես՝ Եբր.4:1,3,5,8,9,10,11), որտեղ հեղինակը կիրառում է ռաբբիական հերմենևտիկ մեթոդաբանություն, որպեսզի խոսի Աստծո ժողովրդի պատմության և հույսի չորս բաժինների վերաբերյալ»

1. Ծննդ.2:2, Աստծո հանգիստը ստեղծագործության յոթերորդ օրը
2. Թվոց 13-14, Հեսուի հանգիստը, որը Խոստացյալ Երկիրն էր
3. Սաղմ.95:7-11, Աստծո հանգիստը դեռևս գործում էր Դավթի օրերում
4. Եբր.4:1; 10-11, Աստծո հետ խաղաղություն ունենալու և Նրա հետ ապրելու հետ կապված հազարի օրը (երկինքը)

NASB, NKJV «պակաս չգտնվի դրանից /չգրկվի դրանից/»
NRSV «չճախողի դրան հասնելուն»
TEV «չճախողի այդ խոստացված հանգիստը ընդունել»
NJB «որ չափազանց ուշ չլինի նրա հանգստյան վայրը մտնելու խոստման համար»

Սա արտացոլում է Եբրայերենի *chatha* («նպատակը կորցնել») տերմինը, որը Սեպտուագինայում թարգմանված է *hamartia*, որ նշանակում է «չհասնել, պակասել» կամ «չհերիքել» (տես՝ Եբր.12:15; Հռոմ.3:23): Համազոր նշանակություններից է նաև «չափազանց ուշ լինել» խոսքը (տես՝ NJB):

4:2 «մեզ նույնպես ավետարանը քարոզվեց» Սա վերաբերում է Հիսուս Քրիստոսի ավետարանին, որը բոլորն էլ կարող են հավատքով ընդունել: Քրիստոսից առաջ այն վերաբերում էր Աստծո Խոսքին, որը ՀԿ-ում տարբեր կերպերով էր նշվում (այսինքն՝ «չուտե՛ք ծառից», «տապանը կառուցի՛ր», «հետևի՛ր Ինձ մինչև այն երկիրը», «պահի՛ր օրենքը», «մտի՛ր՝ Խոստացված Երկիրը» և այլն): Յուրաքանչյուր անձ կամ խումբ պետք է հավատար Աստծուն և հավատքի պատասխան տար՝ արձագանքեր Նրա Խոսքի համեմատ (այսինքն՝ գործով ցույց տար): Ելից գրքում հավատացող մարդիկ Հեսուն և Քաղերն էին: Նրանք հավատացին Խոստացյալ Երկրի վերաբերյալ Աստծո խոստմանը, չնայած որ շատ Իսրայելացիներ չհավատացին:

■ **«ինչպես և նրանց»** Սա վերաբերում է Իսրայելացիներին, որոնք լսեցին տաս լրտեսների բացասական՝ չուսադրող լուրին: Հեսուն և Քաղերը, այնուամենայնիվ, չկասկածեցին Աստծո խոստմանը, որ կգրավեն Ավետյաց Երկիրը (տես՝ Թվոց 13-14), այլ հավատացին, ուստի և կարողացան մտնել Քանան, իսկ նրանց անհավատ ժամանակակիցները չկարողացան:

NASB «որովհետև լսողների կողմից հավատքով չընդունվեց»
NKJV «որովհետև լսողների մեջ հավատքի հետ չիառնվեց»
NRSV «որովհետև նրանք հավատքով չմիաբանվեցին, ովքեր լսեցին»
TEV «նրանք հավատքով չընդունեցին»
NJB «քանի որ նրանք լսողների հետ նույն հավատքը չկիսեցին»

Այս արտահայտության շուրջ կա հունարեն մի ձեռագիր տարբերակ: Լավագույն ընթերցելի տարբերակը ՎԱՂԱԿԱՏԱՐ ժամանակի ԿՐԱՎՈՐԱԿԱՆ սեռի ՀԱՅՑԱԿԱՆ հոլովի ԱՐԱԿԱՆ սեռի ՀՈԳՆԱԿԻ թվի ԴԵՐԲԱՅՈՎ է, որը վերաբերում է Հեսուի և Քաղերի հավատքին (տես՝ NASB, NKJV, NRSV, REB): Մյուս տարբերակը ՎԱՂԱԿԱՏԱՐ ժամանակի ԿՐԱՎՈՐԱԿԱՆ սեռի ՈՒՂՂԱԿԱՆ հոլովի ԱՐԱԿԱՆ սեռի ԵՉԱԿԻ թվի ԴԵՐԲԱՅՈՎ է, որը վերաբերում է լաված պատգամի, խոսքի վրա ունեցած հավատքին (տես՝ TEV, NJB, NIV):

Աստվածաբանական խնդիրը Իսրայելացի տարեց մարդկանց (20 տարեկան և բարձր) հավատքը (փրկության) կամ հավատքի պակասությունն է, այն մարդկանց, ովքեր մաս էին կազմում ելիցում: Արդյո՞ք լրտեսների բերած լուրի հանդեպ նրանց հավատքի պակասությունը նշանակում էր, որ (1) նրանց չթույլատրվեց մտնել Քանան, թե (2) նրանց չթույլատրվեց մտնել երկինք: Այս հարցին հեշտ չէ պատասխանել հեղինակի կողմից «հանգիստ» տերմինի շուրջ բառախաղի պատճառով: Կարծես թե լավագույն տարբերակը ՅԱՀՎԵԻ վրա ունեցած նրանց սկզբնական հավատքի հաստատումն է (այսինքն՝ փրկությունը), սակայն նաև ընդունելը, որ նրանց չհերիքեց Աստծո յուրաքանչյուր խոստումին վստահելու համար հավատք (այսինքն՝ Քանանը վերցնելու՝ գրավելու համար): Այս հարցը նաև առաջանում էր հենց առաջին դարի ընթերցողների մոտ: Արդյո՞ք իրենց կյանքում եղած հարատևության պակասը կարող էր նշան լինել, որ նրանք երբեք էլ փրկված չեն եղել, թե այն հանդիսանում էր նրանց թույլ հավատքի ցուցանիշը: Եբրայեցիներին ուղղված թղթի շուրջ *Նոր Միջազգային Մեկնությունների Շարքեր* մեկնության իր գրքում, Ֆ. Ֆ. Բրյուսն (F. F. Bruce *The New International Commentary Series*) ասում է, որ «Գործնական կիրառությունը հստակ է. միայն ավետարանը լսելը չէ, որ փրկության է առաջնորդում, այլ վերջինիս հավատքով յուրացումը. և եթե այն իրական հավատք է, ապա կհարատևի» (էջ՝ 73):

4:3 «ինչպես /Նա/ ասաց» Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որը պարբերաբար կիրառվում է ներշնչված Սուրբ Գրերի առնչությամբ (տես՝ Եբր. 1:13; 4:3,4; 10:5,9; 13:5), որը կարող է վերաբերել թե՛ Հայր Աստծուն և թե՛ Որդի Աստծուն:

■ Սա մեջբերում է Սաղմ. 95:11-ից (ինչպես և Եբր. 4:5 և 3:11), սակայն նաև ՀԿ-յան հետադարձ ակնարկ Ծննդ. 2:2-ին՝ Աստծո Շաբաթին (ստեղծագործության յոթերորդ հանգստյան օրը):

4:4 «Որովհետև մի տեղ... այսպես է ասում» Սա արտացոլում է ամբողջ ՀԿ-ի ներշնչված լինելու շուրջ ռաբբիական դավանության մի դարձվածք (տես՝ Եբր. 2:6): «Տեղ»-ը (այսինքն՝ տեքստի ճշգրիտ գտնվելու վայրը) այդքան էլ կարևոր չէր որքան Սուրբ Գրքի աստվածային հեղինակությունը: Սա չի նշանակում, որ հեղինակը մոռացել էր, թե ՀԿ-ում այս խոսքը որտեղ էր գտնվում:

■ **«յոթերորդ օր»** Ռաբբիները պնդում էին, որ Աստծո Շաբաթը (այսինքն՝ «Հանգստի Օրը») երբեք էլ չի ծագել Ծննդոց 1-ի տարածված սահմանումից, «և եղավ գիշեր և եղավ առավոտ, օր ... » արտահայտությունը երբեք չի նշվում որպես Ծննդ. 2:2,3-ում ստեղծագործության յոթերորդ օրվա հետ կապ ունեցող խոսք (տես՝ Ելից 20:11):

4:5 Սա մեջբերում է Սաղմ. 95:11-ից:

4:6 «անհնազանդության /հայ.՝ անհավատության/ պատճառով» Անհավատությունը անհնազանդությամբ է արտահայտվում (տես՝ Եբր. 3:18; 4:6,11): Գլուխ 4-ի ավելի ընդարձակ համատեքստը անդրադառնում է Թվոց 13-14-ում արձանագրված դեպքերը, սակայն սուրբգրային յուրահատուկ մեջբերում է կատարված Սաղմ. 95:7-11-ից, որը կապ ունի Մերիբայում Իսրայելի ունեցած փորձառության հետ:

«Անհնազանդություն» տերմինը կարելի է գտնել հնագույն հունարեն ունցիալ ձեռագրերում՝ A, B, D, մինչև «անհավատություն» տերմինը կարելի է գտնել P⁴⁶ պապիրուսե ձեռագրում և հնագույն ունցիալ Տ ձեռագրում:

4:7 «մի ուրիշ օր է սահմանում... Դավթի միջոցով «Այսօր» կոչելով» «Սահմանել / նշանակել» հունարեն տերմինը անգլերենի «հորիզոն» տերմինն է, որը նշանակում է սահմաններ դնել: «Դավթի միջոցով» խոսքը Սաղմ. 95:7-8 եբրայերեն տեքստում գոյություն չունի, սակայն Մեպտուազիստան ճիշտ կերպով մեկնաբանում է և ներառում Սաղմոսների ավանդական հեղինակին՝ Դավթին: Հեղինակը շեշտադրում է այն փաստը, որ Աստծո հանգիստը դեռևս բաց էր նույնիսկ Դավթի կառավարման օրոք:

Սաղմ. 95:7-11 մեջբերվել է 3 և 4 գլուխների համատեքստում մի քանի անգամ: Ամեն անգամ ՀԿ-ի տարբեր հատվածներ են շեշտադրվում (քարոզի նման):

1. Եբր. 3:7-11 շեշտադրում է «մի՛ խստացրեք ձեր սրտերը» - Սաղմ. 95:8-ից
2. Եբր. 3:15 շեշտադրում է «երբ նրանք ապստամբեցին Իմ դեմ» - Սաղմ. 95:9
3. Եբր. 4:3,5 շեշտադրում է «նրանք չեն մտնի Իմ հանգիստը» - Սաղմ. 95:11
4. Եբր. 4:7 շեշտադրում է «այսօր» - Սաղմ. 95:7

4:8 «եթե» Սա ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը հաճախ կոչվում է «փաստին հակառակ»: Հետուի Իսրայելի բոլոր զավակներին չմտցրեց հանգստի մեջ: Այստեղ կիրառված «հանգիստ» տերմինը Քանանի իմաստով չէ, այլ Աստծո հոգևոր հանգստի (տես՝ Եբր. 4:9-10): Եբր. 4:8-10-ից ակնհայտ է, որ Եբրայեցիների հեղինակը օգտագործում է «հանգիստ» բառը պատմական և աստվածաբանական երեք իմաստով՝

1. Քանանի Խոստացյալ Երկիրը (Եբր. 4:8; Հետուի օրոք, Թվոց 13-14)
2. Աստծուն վստահելու հնարավորություն (տես՝ Եբր. 4:9, այսինքն՝ Դավթի օրոք, Սաղմոս 95)
3. Ծննդոց 2 (Եբր. 4:4) Աստծո հանգիստը ստեղծագործության ժամանակ (Եբր. 4:10)
4. Երկինքը (Եբր. 4:1 և 11)

■ **«սրտերը»** Տե՛ս Հատուկ Թեմա Եբր. 3:8-ում:

■ **«Հետու»** Կինգ Ջեյմս թարգմանությունը (King James) այստեղ նշում է «Հիսուս», որին հետևում է Ժնևի և Երեցների Աստվածաշունչ թարգմանություններին (Geneva and Bishops Bibles), սակայն համատեքստը պահանջում է ՀԿ-ի «Հետու» անունը: Երկու անուններն էլ միևնույն կերպով են գրվում (այսինքն՝ Հետու՝ եբրայերեն, Հիսուս՝ արամերեն): Վաղ եկեղեցին հաճախ կիրառում էր Հետու անունը որպես Հիսուս (տես՝ Գործք 7:45; որտեղ թույլ է տրված թարգմանության միևնույն վրիպակը):

■ **«Նա»** Սա իհարկե վերաբերում է Սամոս 95-ի երկնային հեղինակին՝ Աստծուն:

4:9 Սա հեղինակի կողմից Սաղմոս 95-ի բացատրության ամփոփումն է: Կար հանգստի առաջին և սկզբնական խոստում (տես՝ Ծննդ.2:2), կար պատմական երկրորդ իրականացում (Հետու); կար հետագա երրորդ հնարավորությունը (Դավթի օրոք) և դեռևս կա չորրորդ հնարավորությունը բոլոր այն մարդկանց համար, ովքեր կամենում են հավատքով ապրել՝ վստահել Աստծո խոստումներին: Ուշադրություն դարձրեք, որ հեղինակը կիրառում է «Աստծո ժողովուրդ» անունը այն մարդկանց համար, ովքեր հավատում են Քրիստոսին (ոչ միայն հրեաները):

4:10,11 Եբր.4:10-11-ում առկա բոլոր ԲԱՅԵՐԸ ԱՈՐԻՍՏ են, որը կամ (1) արտահայտում է ավարտված գործողություն կամ էլ (2) դիտարկում է ամբողջ կյանքը որպես մեկ ամբողջություն: 10 և 11 համարները հստակեցնում են, որ Եբր.4:11-ի «հանգիստը» վերաբերում է երկնքին: Մի օր ավարտվելու են հավատացյալների ջանքի գործերը (տես՝ Հայտն.14:13), սակայն Եբր.4:11 պարզ հայտարարում է, որ մինչ ֆիզիկական կյանքը շարունակվում է, հավատացյալները պետք է շարունակեն ապրել հավատքի, ապաշխարության, հնազանդության և համբերության կյանքով: Համար 11-ը խիստ զգուշացում է: Փրկությունը Քրիստոսի կատարած գործի շնորհիվ բացարձակապես ձրի է: Այն Հորից շնորհքի պարգև է և Սուրբ Հոգին է մարդկանց համոզում՝ բերում փրկության: Սակայն, ամենակալ Երրորդության Աստվածը ընտրել է մարդկության հետ գործ ունենալ ուխտի փոխհարաբերության միջոցով: Մարդիկ պետք է արձագանքեն և շարունակեն արձագանքել: Փրկությունը երկինք տանող տոմս չէ, ոչ էլ հրեղեհից ապահովագրության փաստաթուղթ, այլ ամենօրյա հավատքի փոխհարաբերություն Աստծո հետ, որի արդյունքում զարգանում է Քրիստոսակերպություն: Ուխտն ունի օգուտներ և պարտավորություններ:

4:11

NASB, NKJV
NRSV
TEV
NJB

«**ջանանք մտնելու այդ հանգստի մեջ**»
«**ամեն ջանք անենք մտնելու այդ հանգստի մեջ**»
«**մեր լավագույնս կատարենք ստանալու այդ հանգիստը**»
«**առաջ շարժվենք մտնելու հանգստի այս վայրը**»

Անգլերենը կարծես ներկայացնում է, որ մարդկային գործերով ենք ձեռք բերում Աստծո հանգիստը, սակայն հունարեն բառը նշանակում է «նախանձավոր լինել», «շտապել» (տես՝ 2 Թեսաղ.2:17; 2 Տիմ.4:9):

■ «**որպեսզի ոչ մեկը այդ նույն անհավատության օրինակին հետևեղով, չընկնի**» Տե՛ս 3:18 և 4:6:

4:12 «Աստծո Խոսքը» 12 և 13 համարները հունարենում մեկ նախադասությունից են կազմված: Խոսք տերմինը (*logos*) անձնապես Հիսուսին չի վերաբերում, ինչպես Հովհաննես 1:1-ում է, այլ Աստծո խոսած խոսքին (տես՝ Եբր.13:7) կամ գրված պատգամին կամ ՀԿ-ի Գրքերի կամ էլ ՆԿ-ի հայտնության միջոցով: Աստծո ինքնահայտնությունը նկարագրվում է երեք կերպ՝

1. անձնավորված է որպես իր իսկ ներսում կյանք ունենալու հատկությամբ
2. նման է սրի ներթափանցող գործողությանը
3. նման է ամենագետ դատավորի (տես՝ Եբր.4:13)

Հ. Բ. Դանան իր *Հրեական Քրիստոնեություն* (H. E. Dana *Jewish Christianity*) գրքում եզիպտական պապիրուսի կիրառության հիման վրա առաջարկում է, որ «խոսք» (*logos*) նշանակում է «հաշիվ տալ» կամ «հաշվետվության կանչել»: Նա հայտարարում է, որ սա համապատասխանում է բնագրի հեղինակի ընդհանուր փաստարկին, որ լինելու է աստվածային հաշվետվություն քննության միջոցով և կիրառում է վիրաբույժի փոխաբերությունը (էջ՝ 227): Հետևաբար, այս տեքստը Աստծո հայտնված Խոսքի նկարագրություն չէ, այլ Աստծո արդար դատաստանի: Սա հետաքրքիր է, սակայն Եբրայեցիների հեղինակը կիրառում էր *logos* բառը հանախ Աստծո Խոսքի համար (տես՝ Եբր.2:2; 4:2; 5:13; 7:28; 13:7) ինչպես նաև խոսված խոսքի համար՝ *rhema* հունարեն տերմինը (տես՝ Եբր.6:5; 11:3):

■ «**կենդանի է, զորավոր և ...կարուկ**» Սա արտացոլում է Աստծո կողմից խոսված խոսքի գործության երբայերեն հասկացությունը (տես՝ Ծննդ.1:1,3,6,9,14,20,24,26; Սաղմ.33:6,9; 148:5; Եսայի 40:8; 45:23; 55:11; Մատթ.5:17-19; 24:35; 1 Պետ.1:23):

■ «**ամեն մի երկսայրի սրից ավելի կարուկ**» Սա խոսում է Աստծո խոսքի ներթափանցող գործության մասին (տես՝ Հովհ.12:48 և Հայտն.1:6; 2:12,16, որտեղ այն կիրառված է Հիսուսի համար):

■ «**անձի /չնչի/ ու հոգու**» Սա գոյաբանական դիխոտոմիա չէ մարդկության մեջ, այլ երկկողմանի կապ թե՛ այս մոլորակի և թե՛ Աստծո հետ: Եբրայերեն բառը՝ *nephesh* Ծննդոցում կիրառվում է թե՛ մարդկանց

և թե՛ կենդանիների համար, մինչ «հոգի» (*ruah*) բառը կիրառվում է բացառապես մարդկության համար: Աստծո խոսքը ներթափանցում է մարդկանց ներաշխարհը՝ ներքին անձի մեջ: Սա ապացույց տեքստ չէ մարդու բնության վերաբերյալ որպես թե երկմաս էակ (դիխոտոմիական) կամ էլ երեքմաս էակ (տրիխոտոմիական) (տես՝ 1 Թեսաղ.5:23): Մարդկությունը Աստվածաշնչում հիմնականում ներկայացված է որպես մեկ միություն (տես՝ Ծննդ.2:7): Մարդը որպես դիխոտոմիական, տրիխոտոմիական կամ մեկ միասնական էակ լինելու տեսությունների շուրջ հետաքրքիր ամփոփման համար կարդացե՛ք Միլարդ Ջ. Էրիկսոնի *Քրիստոնեական Աստվածաբանություն* (երկրորդ խմբագրություն)՝ էջ 538-557 /Millard J. Erickson *Christian Theology*/ և Ֆրենկ Սթեյգի *Մարդու Գոյության Բևեռացումների Ըստ Աստվածաշնչի* (Frank Stagg *Polarities of Man's Existence in Biblical Perspective*):

■ **«և մտքերի ու սրտի խորհուրդների գննողն է»** Եբրայերենում սրտի խորհուրդը ներկայացնում է ամբողջ անձին և նրա ներքին մղումները՝ շարժառիթները: Տե՛ս Հատուկ Թեմա Եբր.3:8-ում: Աստված գիտի իրական և կեղծ հավատքը որն է:

4:13 «այլ ամեն ինչ մերկ և բաց է» Աստված կատարելապես ճանաչում է մեզ (տես՝ 1 Թագ.16:7; Սաղմ.7:9; 33:13-15; 139:1-4; Առակ.16:2;21:2; 24:12; Երեմ.11:20; 17:10; 20:12; Դուկ.16:15; Գործք 1:24; 15:8; Հռոմ.8:27):

NASB	«Նրա աչքերից»
NKJV	«մերկ և բաց»
NRSV	«մերկ և ոտաբոբիկ»
TEV	«բացահայտված և բաց դրված»
NJB	«հայտնի և լիովին բաց դրված»

Այս փոխաբերությունը տառացիորեն նշանակում է «բացել վիզը ծնոտը բարձրացնելով»: Այս ՀԿ-յան փոխաբերությունը զգուշացում էր հանդիսանում դատավորների համար. այստեղ այն վերաբերում է դատաստանի օրը Աստծո հետ դեմ առ դեմ հանդիպելուն, որը կատարելապես ճանաչում է մեր շարժառիթները:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 4:14-16
(ամբողջական գրական բաժինը մինչև 5:10)
¹⁴Տեսնելով, որ մենք մի մեծ Քահանայապետ ունենք երկինքներով անցած, Հիսուսին՝ Աստծո Որդուն, եկե՛ք ամուր պահենք մեր դավանությունը: ¹⁵Որովհետև ոչ թե *այնպիսի* մի Քահանայապետ ունենք, որ չկարողանա մեր տկարություններին կարեկից լինել, այլ *այնպիսին*, որ ամեն կետում փորձվեց *մեզ* նման, սակայն առանց մեղքի: ¹⁶Ուրեմն, համարձակությամբ մոտենանք շնորհաց աթոռին, որպեսզի ողորմություն ընդունենք և շնորհ գտնենք՝ կարիքի ժամանակ մեզ օգնելու:

4:14 «մի մեծ Քահանայապետ» Հեղինակը առաջին անգամ Հիսուսին նշում է որպես Քահանայապետ Եբր.3:1-6-ում: Եբր.3:7-4:13-ի զգուշացումներից և հորդորներից հետո այժմ նա վերադառնում է թեմային: Այս նույն օրինաչափությունը հաջորդում է Եբր.5:11-6:12-ում գետեղված զգուշացումների մեջ և Եբր.6:13-10:39-ում Հիսուսի քահանայական գործերի վերաբերյալ քննարկումների մեջ: Տե՛ս Հատուկ Թեմա Եբր.2:17-ում:

ՆԿ-ում Եբրայեցիների գիրքը միակն է, որտեղ Հիսուսը կոչվում է «քահանայապետ»: Հեղինակի կողմից շարունակվում է Մովսիսական ուխտի և նոր ուխտի համեմատությունը: Երևի թե սա դժվար է եղել հրեաների համար ընդունելն ու հասկանալը: Հիսուսը Դևիի քահանայական ցեղից չէր: Սակայն Հիսուսը կոչվում է «քահանա» Եբր.1:3; 2:17,18; 3:1-ում: ՀԿ-ում Մեսիային վերագրված է քահանա կոչումը միայն երկու համատեքստում՝ Սաղմոս 110 և Չաքարիա 4-ում, որոնցից երկուսն էլ ունեն թե՛ արքայական և թե՛ քահանայական առանձնահատկությունները:

■ **«երկինքներով անցած /անզլ.՝ ով անցել է երկինքներով/»** Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿՈՎ է: Հիսուսը անցել է երկինքների միջով (լինի դա 3 թե 7): Նա վերադարձել է Հոր ներկայության մեջ, և Նրա գալստյան (մարմնացումը) և վերադարձի (համբարձումը) արդյունքը մնում է: Հետևաբար, հավատացյալները այժմ կարող են Նրա օգնությամբ նույնպես անցնել երկինքների միջով: Համաձայն գնոստիկ մտածելակերպի երկինքները հրեշտակային խոչընդոտներ են՝ արգելքներ (ժամանակահատվածներ՝ աեռներ), սակայն ՀԿ-ում դրանք՝

1. Մթնոլորտ են, որտեղ թռնում են թռչունները
2. Երկնքի պատուհաններն են, որտեղից անձրև է գալիս

3. Արևի և լուսնի աստղազարդ երկինքն են
4. Աստծո ներկայությունն է

Ռաբբիների միջև տեղի են ունեցել բազմաթիվ քննարկումներ, թե արդյոք գոյություն ունի երեք, թե՞ յոթ երկինք (տես՝ Եփես.4:10; 2 Կորնթ.12:2): Այս արտահայտությունը նույնպես գործածվել է ռաբբիների կողմից նկարագրելու երկնային խորանը, որը լավագույնս համապատասխանում է այս համատեքստի հետ (տես՝ Եբր.9:23-28):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿԻՆՔՆԵՐԸ ԵՎ ԵՐՐՈՐԳ ԵՐԿԻՆՔԸ
SPECIAL TOPIC: THE HEAVENS AND THE THIRD HEAVEN

ՀԿ-ում «երկինք» տերմինը սովորաբար տրված է ՀՈԳՆԱԿԻ թվով (այսինքն՝ *shamayim*, BDB 1029, KB 1559): Եբրայերեն տերմինը նշանակում է «բարձրություն»: Աստված բնակվում է բարձրերում: Այս գաղափարը արտացոլում է Աստծո սրբությունը և գերազանցությունը:

Ծննդ. 1:1-ում ՀՈԳՆԱԿԻ թվով տրված «երկինքները և երկիրը» դիտարկվում է Աստծո ստեղծած (1) այս մոլորակի շուրջը գտնվող մթնոլորտը կամ (2) լիակատար իրականությունը (այսինքն՝ հոգևոր և ֆիզիկական իրականությունը): Այս հիմնական հասկացության հիման վրա են մյուս տեքստերը մեջբերում երկնքի տարբեր մակարդակները՝ «երկինքների երկինքը» (տես՝ Սաղմ.68:33) կամ «երկինքը և երկինքների երկինքը» (տես՝ 2 Օր.10:14; 3 Թագ.8:27; Նեեմ.9:6; Սաղմ.148:4): Ռաբբիները ենթադրում էին, որ հնարավոր է կան՝

1. Երկու երկինք (այսինքն՝ R. Judah, Hagigah 12b)
2. Երեք երկինք (Ղևի 2-3; Ես.6-7; Միդրաշ Թեհիլիմը՝ Սաղմ.114:1-ի հիման վրա)
3. Հինգ երկինք (3 Բարուքի)
4. Յոթ երկինք (R. Simonb. Lakish; Ascen. Եսայի 9:7)
5. Տաս երկինք (2 Ենովք 20:3բ; 22:1)

Այս բոլորի նպատակն էր ցույց տալ Աստծո ֆիզիկական ստեղծագործությունից զատված լինելը կամ Նրա գերազանցությունը: Ռաբբիական հուդայականության մեջ ամենատարածված թիվը երկինքների համար յոթն էր: Ա. Կոհեն *Բոլորի Թալմուդը* (էջ՝ 30) /A. Cohen, *Everyman's Talmud*/ գրքում ասվում է, որ սա կապ ունի աստղագիտական սֆերաների հետ, սակայն ես կարծում եմ, որ այն վերաբերում է յոթին որպես կատարյալ թվի (այսինքն՝ ստեղծագործության օրերը յոթ թվի հետ կապված, ներկայացնելով Ծննդոց 2:2-ում Աստծո հանգիստը):

Պողոսը 2 Կորնթ.12:2-ում նշում է «երրորդ» երկինք (հունարեն *ouranos*) որպես Աստծո անձնական, փառահեղ ներկայության վայրի նկարագրություն: Պողոսը անձնական հանդիպում էր ունեցել Աստծո հետ:

■ **«Հիսուս»** Հնարավոր է, որ սա Հիսուս անվան հետ կապված տիպաբանական բառախաղ է որպես նոր Հեսու: Նրանց անունները ճիշտ նույնն են (այսինքն՝ Հեսու – Եբրայերենում, Հիսուս – Արամերենում): Եբրայեցիների գրքի հեղինակը հաճախ է անդրադառնում Ելիցում արձանագրված նյութերին: Ինչպես որ Հեսուն Աստծո ժողովրդին բերեց Խոստացյալ Երկրի հանգիստը, այնպես էլ Հիսուսն է նրանց երկինք բերելու:

■ **«Աստծո Որդին»** Սա հանդիսանում է և՛ Աստծո անունը ՀԿ-ում, որը գործածվեց Հիսուս Նազովրեցու համար, և՛ հեղինակի կողմից Հիսուսին շարունակաբար որպես «որդի» շեշտադրում (տես՝ Եբր.1:2; 3:6; 5:8; 7:28): Պտահական չէ, որ Հիսուսի մարդեղությունը և աստվածությունը միասին են շեշտադրվում (տես՝ Եզեկ.2:1 – մարդ; Դան.7:13 - Աստված): Սա Քրիստոսի անձի վերաբերյալ ՆԿ-յան ճշմարտության հիմնասյունն է (տես՝ Հովհ.1:1,14; 1 Հովհ.4:1-6):

■ **«եկեք ամուր պահենք մեր դավանությունը»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ է: Սա հարատևելու անհրաժեշտության վրա պարբերաբար դրվող շեշտադրումն է (տես՝ Եբր.2:1; 3:6,14): Մենք պետք է բալանսի բերենք մեր ներքին որոշումները (տես՝ Հովհ.1:12; 3:16; Հռոմ.10:9-13) շարունակական աշակերտության հետ (տես՝ Մատթ.7:13-27; 28:19-20; Եփես.1:4; 2:10): Երկուսն էլ հույժ կարևոր են: Հավատքը պետք է բխի հավատարմությունից: «Դավանություն» տերմինի շուրջ քննարկման համար տե՛ս Եբր.3:1-ի գրառումը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՐԱՏԵՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔԸ
SPECIAL TOPIC: THE NEED TO PERSEVERE

Աստվածաշնչյան վարդապետությունները, որոնք կապված են Քրիստոնեական ապրելակերպի հետ, դժվար են բացատրել, քանի որ դրանք ներկայացված են տիպիկ արևելյան դիպլոմատիկ գույգերով: Այս գույգերը կարծես թե իրար հակասող են, սակայն դրանք երկուսն էլ աստվածաշնչյան են: Արևմտյան Քրիստոնյաները հակված են ընտրելու մի ճշմարտությունը և անտեսելու կամ թերագնահատելու հակառակ ճշմարտությունը: Ահա մի քանի օրինակներ՝

Ա. Արդյո՞ք փրկությունը Քրիստոսին վստահելու առաջին՝ սկզբնական որոշումն է, թե աշակերտ լինելու ցմահ՝ ամբողջ կյանքի ընթացքում նվիրումը:

Բ. Արդյո՞ք փրկությունը ամենակալ Աստծո շնորհի միջոցով ընտրված լինելն է, թե աստվածային այդ հրավերին՝ առաջարկին հավատքով և գոյումով մարդու կողմից տրված պատասխան:

Գ. Արդյո՞ք փրկությունը, երբ ընդունվում է մարդու կողմից, այլևս անհնար է կորցնել, թե կարիք կա ջանք անել հարատևելու մեջ:

Հարատևության խնդիրը մշտապես առկա է եղել եկեղեցու ամբողջ պատմության ընթացքում: Խնդիրը սկսվում է ՆԿ-ի թվացյալ կոնֆիկտային հատվածներով՝

Ա. փրկության վստահության վերաբերյալ տեքստերը՝

1. Հովհաննեսի ավետարանում Հիսուսի խոսքերը (Հովհ.6:37; 10:28-29)
2. Պողոսի խոսքերը (Հռ.8:35-39; Եփ.1:13; 2:5,8-9; Փիլ.1:6;2:13; 2 Թեսաղ.3:3; 2 Տիմ.1:12; 4:18)
3. Պետրոսի խոսքերը (1 Պետ.1:4-5)

Բ. Հարատևության անհրաժեշտության շուրջ տեքստեր՝

1. Հիսուսի խոսքերը (Մատթ.10:22; 13:1-9,24-30; 24:13; Մարկ. 13:13; Հովհ.8:31; 15:4-10; Հայտն.2:7,17,26; 3:5,12,21)
2. Պողոսի խոսքերը (Հռոմ.11:22; 1 Կորնթ.15:2; 2 Կորնթ.13:5; Գաղ.1:6; 3:4; 5:4; 6:9; Փիլ.2:12; 3:18-20; Կող.1:23; 2 Տիմ.3:2)
3. Եբրայեցիների հեղինակի խոսքերը (2:1; 3:6,14; 4:14; 6:11)
4. Հովհաննեսի խոսքերը (1 Հովհ.2:6; 2 Հովհ.9)
5. Հոր խոսքերը (Հայտն.21:7)

Աստվածաշնչյան փրկությունը բխում է ամենակալ Երրորդության Աստծո սիրուց, ողորմությունից և շնորհից: Ոչ մի մարդ չի կարող փրկվել առանց Սուրբ Հոգու նախաձեռնության (տես՝ Հովհ.6:44,65): Աստված առաջինն է գալիս և սահմանում կարգը, սակայն պահանջում է, որ մարդիկ պատասխանեն հավատքով և ապաշխարությամբ, թե՛ սկզբում և թե՛ հարատևորեն: Աստված աշխատում է մարդկանց հետ ուխտի փոխհարաբերության մեջ: Կան առանձնաշնորհումներ և պատասխանատվություններ:

Փրկությունը առաջարկվում է ամբողջ մարդկությանը: Հիսուսի մահը լուծեց անկում ապրած մարդկության մեղքի հարցը: Աստված պատրաստել է մի ճանապարհ և կամենում է բոլոր նրանք, որ ստեղծված են Իր պատկերով արձագանքեն Իր սիրուն և Հիսուսի մեջ մեզ տրված փրկությանը:

Եթե կամենում եք այս թեմայի շուրջ ավելի շատ իմանալ, կարդացեք՝

1. Դեյլ Մուդի, *Ճշմարտության Խոսքը* (Dale Moody, *The Word of Truth*, Eerdmans, 1981 (էջ՝ 348-365)
2. Հովարդ Մարշալ, *Աստծո Չորությունը Պահված*, (Howard Marshall, *Kept by the Power of God*, Bethany Fellowship, 1969)
3. Ռոբերթ Շանք, *Կյանք Որդու մեջ* (Robert Shank, *Life in the Son*, Westcott, 1961)

Այս ոլորտում Աստվածաշունչը երկու տարբեր խնդիրներ է առաջադրում. (1) փրկության վստահությունը անպտուղ, եսասիրական կյանք ապրելու համար որպես անցաթուղթ օգտագործելը, կամ (2) նրանց, որ ծառայության կամ անձնական մեղքի հետ կապված խնդիրների մեջ են, քաջալերելը: Խնդիրն այն է, որ սխալ խմբեր ընդունում են սխալ պատգամներ և աստվածաշնչյան մի քանի՝ սահմանափակ հատվածների հիման վրա կառուցում են աստվածաբանական համակարգեր: Որոշ Քրիստոնյաներ կարիք ունեն փրկության վստահության, մինչդեռ ոմանց անհրաժեշտ է հարատևության համար խիստ զգուշացումներ: Ո՞ր խմբին եք դուք պատկանում:

4:15 «մեր տկարություններին կարեկից լինել» Ա. Տ. Ռոբերտսոնը /A. T. Robertson/ ներկայացնում է հնարավոր մեկ ուրիշ այլընտրանքային թարգմանություն՝ «մեր տկարությունների հետ չարչարվել» (տես՝ Եբր.2:17-18): Հիսուսը երբեք մեղավոր էություն չի ունեցել և ոչ էլ մեղքին տեղի է տվել, սակայն մարդկության մեղքի պատճառով Նա ենթարկվել է իրական փորձության:

■ **«փորձվեց»** Peirazō տերմինը ունի «կործանման տանելու նպատակով փորձելու» նշանակություն (տես՝ Եբր.2:18; 3:9; 11:37): Այն ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐՔԱՅ է, որն ընդգծում է ավարտված վիճակ՝ արտաքին անձի կամ առարկայի միջոցով՝ ինչպես օրինակ այս դեպքում փորձիչը: Այս տերմինը Սատանայի անուններից է («փորձիչ») Մատթ.4:3-ում (նաև նայեք Մարկ.1:13): Տե՛ս Հատուկ Թեմա Եբր.2:18:

■ **«ամեն կետում... մեզ նման, սակայն՝ առանց մեղքի»** Հիսուսը թե՛ կատարյալ Աստված է և թե՛ կատարյալ մարդ, և չնայած դրան Նա հասկանում է մեզ: Սակայն, Նա մաս չունի անկում ապրած մարդկության ապստամբության և Հորից անկախ ապրելու մեջ (այսինքն՝ անարատ, անմեղ, տես՝ Եբր.2:17-18; 7:26; Ղուկ.23:41; Հովհ.8:46; 14:30; 2 Կորնթ.5:21; Փիլ.2:7-8; 1 Պետ.1:19; 2:22; 3:18; 1 Հովհ.3:5):

4:16 «Ուրեմն մոտենանք» Սա ՆԵՐԿԱ ՉԵՉՈՔ (դեպոնենտ) ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ է, որը շեշտադրում է ենթակայի շարունակական ընդգրկվածությունը, սակայն իր մեջ պարունակելով պայմանականության տարր: Մեպտուազինտայում (LXX) սա տեխնիկական տերմին է, որը կիրառվում է Աստծուն մոտեցող քահանայի համար: Եբրայեցիներում այս տերմինը կիրառվում է մեղավոր մարդկության կողմից Աստծուն մոտենալու հնարավորության համար՝ Հիսուսի գոհի շնորհիվ (տես՝ Եբր.4:16; 7:25; 10:1,22; 11:6): Հիսուսը Իր հետևորդներին դարձրել է «քահանաների թագավորություն» (Ելից 19:5,6; 1 Պետ.2:5,9; Հայտ.1:6):

■ **«համարձակությամբ ... շնորհաց աթոռին»** «Համարձակություն» տերմինը նշանակում է «խիզախորեն խոսելու ազատություն»: Մենք ունենք ազատություն, և հետևաբար, խիզախություն՝ համարձակություն, Հիսուս Քրիստոսի միջոցով մտնելու հենց Աստծո ներկայության մեջ (տես՝ Եբր.10:19,35): Սա նույնն է ինչ Հիսուսի մահվան ժամանակ Երուսաղեմում Հերովդեսի Տաճարի վարագույրի պատռվելը (տես՝ Մատթ.27:51; Մարկ.15:38; Ղուկ.23:45): Հիսուսի միջոցով, մեղավոր մարդիկ կարող են գալ սուրբ Աստծո առջև, որտեղ կստանան ողորմություն և շնորհք, ոչ թե դատապարտություն:

■ **«շնորհաց աթոռին/գահին»** Սա կարող է լինել փոխարինող արտահայտություն Աստծո համար, ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌԻ կիրառման պես: Եբրայեցիների հեղինակը երկինքը դիտարկում է որպես հոգևոր խորան (տես՝ Եբր.9:11,24), սակայն երկնային գահը նույնպես (տես՝ Եբր.1:8; 4:16; 8:1; 12:2):

■ **«կարիքի ժամանակ մեզ օգնելու»** Համատեքստը խոսում է մեր դավանությունը հաստատ չպահելու դեմ զգուշացումների շուրջ: Աստված անկասկած կօգնի մեզ փորձությունների և փորձանքների ժամանակ (1) Հիսուսի միջոցով և (2) Իր իսկ էությանմբ՝ բնավորությամբ:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ է այս գլուխը այսքան դժվարընկալելի:
2. Ինչո՞ւ է «հաստատ պահել» խոսքը այսքան հաճախակի շեշտադրվում Եբրայեցիների գրքում:
3. Եբր.4:4-ում Հիսուսին թե՛ «Հիսուս» և թե՛ «Աստծո Որդի» կոչելու մեջ արդյո՞ք կա որևէ աստվածաբանական կարևորություն:
4. Ի՞նչ է նշանակում «Հիսուսը անցավ երկինքներով»:
5. Ի՞նչ կապ ունի հավատացյալի հարատևությունը նրա փրկության վստահության հետ:

ԵՔՐԱՅԵՑԻՆԵՐԻ 5

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Հիսուսը Մեծ Քահանայապետ		Մեր Քահանայապետ Հիսուսի թեման	Հիսուսը Մեծ Քահանայապետ	Հիսուսը կարեկից Քահանայապետ
(4:14-5:10)	Քահանայապետությանը բնորոշ հատկանիշներ	(4:14-5:14)	(4:14-5:10)	(4:14-5:10)
5:1-4	5:1-4	5:1-6	5:1-6	5:1-10
	Հավիտենական Քահանա			
5:5-10	5:5-11	5:7-10	5:7-10	
Չգուշացում ուխտադրության դեմ			Չգուշացում հավատքը թողնելու դեմ	Քրիստոնեական կյանք և Աստվածաբանություն
(5:11-6:12)			(5:11-6:17)	
5:11-6:8	Հոգևոր Անհատություն 5:12-14	5:11-14	5:11-14	5:11-14

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու Ուղեցույց») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Եբր.3:1-ում Հիսուսին նկարագրող երկու տերմին է ներկայացվում՝ «առաքյալ» և «քահանայապետ»: Երկրորդը բացառիկ կերպով զարգացում է ստանում Եբրայեցիներում (տես՝ Եբր.2:17; 3:1; 4:14-15; 5:5,10; 6:20; 7:26,28; 8:1,3; 9:11; 10:21):

Բ. Եբրայեցիների հեղինակը գիտեր, որ Հիսուսի որպես Մելքիսեդեկի կարգի պես քահանայապետ լինելու հասկացությունը դժվար կլիներ իր հրեա Քրիստոնյա ընթերցողների համար ընդունելը:

Գ. Գրականական այս բաժինը՝ 5:11-6:20, հեղինակի կողմից Մելքիսեդեկի մասին քննարկումների մի միջանկյալ բաժին է, որպեսզի զգուշացնի թե՛ հավատացյալ և թե՛ անհավատ հրեաներին:

- Դ. Եբր.5:11-6:20-ում մենք ունենք երեք կարևոր ԴԵՐԱՆՈՒՄ՝ «մենք» (5:11); «դուք» (5:11-12 – երեք անգամ); և «դրանք, նրանք» (6:4-8): Այս ԴԵՐԱՆՈՒՄՆԵՐԸ ներկայացնում են երեք խումբ.
1. «մենք» և «մեզ», 5:11; 6:1-3, հեղինակը և իր միսիոներական թիմը
 2. «դուք», 5:11-12; 6:9-12, հավատացյալ հրեաները, որոնց ուղղված է այս գրությունը
 3. «դրանք» և «նրանք», 6:4-8, անհավատ հրեաները, որոնք այս նամակը ստացողների հետ երկրպագում էին և նրանց ընկերներն էին:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 5:1-4
¹Որովհետև մարդկանցից ընտրված ամեն մի քահանայապետ մարդկանց համար է կարգված՝ Աստծո *վերաբերյալ* բաների համար, որպեսզի և՛ պատարագներ, և՛ մեղքերի համար զոհեր մատուցի. ²որը կարող է կարեկից լինել տգետների և մոլորվածների նկատմամբ, որովհետև ինքն էլ տկարությամբ լի է: ³Այդ պատճառով ինչպես ժողովրդի, այնպես էլ իր անձի համար պետք է մեղքի պատարագ մատուցի: ⁴Եվ ո՛չ մեկն իր վրա չի վերցնում այս պատիվը, այլ միայն նա, ով կանչված է Աստծո կողմից, ինչպես Ահարոնը:

5:1-4 Այս համարները նկարագրում են ՀԿ-ի Ղևտական քահանայապետներին:

1. Պետք է լինեին մի ցեղից (Ղևիի)
2. Կանգնեին Աստծո առջև մարդկանց համար
3. Մեղքի համար պատարագներ ու զոհեր մատուցեին (տես՝ Եբր. 8:3; 9:9)
4. Չգուշությամբ վարվեին մեղավորների հետ, քանի որ ինքն էլ մեղավոր էր (տես՝ Ղևտ. 16:3,6)
5. Անձնական պատիվ չընդունեին, այլ Աստծո ընտրությամբ և Նրա կողմից օգտագործված լինելով պատիվ ստանային

5:2

NASB, NRSV	«զգուշությամբ»
NKJV	«զթասրտությամբ»
TEV	«բարեհամբույր լինելու կարող»
NJB	«կարեկցելով»

Հունարեն այս տերմինը ՆԿ-ում միայն այստեղ է գործածվում և ընդհանրապես չի հանդիպում Սեպտուագինայում: Այն կիրառվում է *Aristeas 256* -ում, որը առնչվում է չափավորության փիլիսոփայության հետ (տես՝ Մուլթոն և Միլիգան, *Հունարեն Նոր Կտակարանի Բառարանը*, էջ՝ 406 /Moulton and Milligan, *The Vocabulary of the Greek New Testament*):

■ **«տգետներ և մոլորվածներ»** ՀԿ-ում տգիտության և ցանկության մեղքերը ներելի էին միայն զոհաբերության միջոցով (տես՝ Ղևտ. 4:2,22,27; 5:15-18; 22:14; Թվոց 15:22-31), սակայն կանխամտածվածության մեղքերը՝ ոչ (տես՝ 2 Օր. 1:43; 17:12,13; 18:20; Սաղմոս 51):

Բառապատկերները Նոր Կտակարանում, հատոր 5, Ա. Տ. Ռոբերտսոնը /A. T. Robertson *Word Pictures in the New Testament*/ աստվածաբանական կապ է ստեղծում ՀԿ-ի կանխամտածված՝ գիտակցված մեղքերի, որոնց համար զոհերի միջոցով ներում չկար և Եբր. 3:12 և 10:26-ի զգուշացումների միջև: Նրա հայտարարությունն է «դիտավորյալ հերձվածողության համար (3:12; 10:26) ներում չկա» (էջ՝ 368):

Պողոսը հավատում էր, որ Աստծո ողորմածությունը իր վրա էր, ճշմարտության տգիտության պատճառով և ոչ թե ավետարանի դիտավորյալ գիտակից մերժման:

5:3 «Այդ պատճառով ինչպես ժողովրդի, այնպես էլ իր անձի համար պետք է մեղքի պատարագ (անգլ.՝ զոհեր) մատուցի» Մա վերաբերում է քահանայապետի իր համար կատարած քավության արարողակարգին, որը կարելի է գտնել Ղևտ. 9:7-17-ում (սկզբնական սրբացումը; 16:6-19 – Քավության Օրը; և Եբր. 9:7): Եբր. 7:26,27-ից հասկանում ենք, որ Հիսուսը երբեք Իր սեփական մեղքի համար զոհ չի մատուցել, սակայն հասկանում է մեր կարիքը (տես՝ Եբր. 4:15):

5:4 «ո՛չ մեկն իր վրա չի վերցնում այս պատիվը» Աստված ընտրել է հատուկ ցեղ (Ղևիի ցեղը) և հատուկ ընտանիք (Ահարոնի ընտանիքը. տես՝ Ելից 28:1; 1 Մնաց. 23:13) որպեսզի աշխատեն որպես քահանաներ (տես՝ Թվոց 16:40; 18:7; 1 Թագ. 12:9-14; 2 Մնաց. 16:18):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 5:5-10
⁵Այնպես էլ Քրիստոսը, ոչ թե Ինքն Իր անձը փառավորեց, որ քահանայապետ լինի, այլ Նա, Ով Նրան ասաց, թե.
«ԴՈՒ ԻՄ ՈՐԳԻՆ ԵՄ, ԵՄ ԱՅՍՕՐ ՔԵՉ ԾՆԵՑԻ»:
⁶Ինչպես մի ուրիշ տեղ էլ ասում է.
«ԴՈՒ ՀԱՎԻՏՅԱՆ ՔԱՀԱՆԱ ԵՄ ԸՍՏ ՄԵԼՔԻՍԵՂԵԿԻ ԿԱՐԳԻ»:
⁷Ով Իր մարմնի օրերին սաստիկ աղաղակով ու արցունքով աղոթք և աղաչանք մատուցեց Նրան, որ կարող էր Իրեն ազատել մահից, և լավեց Իր երկյուղածության համար: ⁸Թեև Ինքը Որդի էր, բայց Իր չարչարանքների միջոցով հնազանդություն սովորեց, ⁹և կատարյալ դառնալով բոլոր Իրեն հնազանդվողների հավիտենական փրկության Հեղինակը դարձավ ¹⁰ու Աստծո կողմից անվանվեց Քահանայապետ՝ ըստ Մելքիսեղեկի կարգի:

5:5 «Քրիստոսը, ոչ թե Ինքն Իր անձը փառավորեց» Տե՛ս Հովհաննես 8:50,54:

■ **«քահանայապետ լինի»** Պետք է, որ դժվար լիներ համոզել մի խումբ հրեաների, որ Հիսուսը քահանայապետ էր, երբ Նա Ղևիի ցեղից չէր: Սա է հանդիսանում այս լայնածավալ փաստարկների նպատակը (տես՝ Եբր.4:14-5:10; 6:13-7:28) ՀԿ-յան մեջբերումների հիման վրա:

■ **«այլ Նա, ով ասաց»** Հեղինակը հայտարարում է, որ Հայրը հաստատում է Հիսուսի մեծարված պաշտոնը՝ դիրքը, մեջբերելով այս կարևոր թագավորական Սաղմոս 2:7 համարը: Հայրը մեջբերեց հենց այս նույն Սաղմոսը Եսայի 42:1-ի հետ միասին Հիսուսի մկրտության (տես՝ Եբր.3:17) և Նրա այլակերպության ժամանակ (տես՝ Մատթ.17:5):

Արիսուսը /Arius/ (այսինքն՝ մ.թ. չորրորդ դարում) Հիսուսի կատարյալ աստվածության թեմայի շուրջ Աթանասիոսի հետ /Athanasius/ իր աստվածաբանական ընդհարման մեջ գործածեց այս մեջբերման երկրորդ հատվածը, պնդելու, որ Հիսուսը Աստծո առաջին և բարձրագույն ստեղծագործությունն է (տես՝ Առակ.8:22-31), սակայն այս մեջբերման շեշտադրումը Հիսուսի Որդի լինելն է (տես՝ Եբր.1:2; 3:6; 5:8; 7:28): Բնագրային Սաղմոսը հանդիսանում էր Իսրայելի կամ Հուդայի թագավորի համար ամեն տարի կատարվող նորոգության արարողություն:

5:6 «ԴՈՒ ՀԱՎԻՏՅԱՆ ՔԱՀԱՆԱ ԵՄ

ԸՍՏ ՄԵԼՔԻՍԵՂԵԿԻ ԿԱՐԳԻ» Սա մեջբերում է Սաղմ.110:4-ից: Այս Սաղմոսը բացառիկ է իր տեսակի մեջ համաձայն այն փաստի, որ հատուկ կերպով նշում է Մեսիայի թե՛ քահանայական և թե՛ թագավորական պաշտոնները (այսինքն՝ երկու ձիթենիները, տես՝ Չաք.4:3,11-14; և այսինքն՝ Հեսուն որպես ճյուղ, տես՝ Եբր.6:13): Մեռյալ Ծովի Գալարներից մենք իմանում ենք, որ Էսսենները սպասում էին երկու Մեսիայի՝ մեկը թագավոր, իսկ մյուսը՝ քահանա: Հիսուսը կատարեց երկու պաշտոններն էլ: Իրականում Նա կատարեց ՀԿ-ի օծություն կրող երեք պաշտոնները՝ մարգարեի, քահանայի և թագավորի (տես՝ Եբր.1:1-3):

■ **«Մելքիսեղեկ»** Այս թեմայի շուրջ ավելի ամբողջական զարգացումները գլուխ 7-ում են: Լուսաբանումը վերցված է Ծննդ.14:17-20-ից, որտեղ նա Քանանացի քահանա և Սաղեմի թագավոր է (Հեբրու, Երուսաղեմ):

5:7 «Իր մարմնի օրերին» Սա վերաբերում է Հիսուսին, ոչ թե Մելքիսեղեկին: Դա չի նշանակում, որ Հիսուսը այլևս մարդ չէ: Հիսուսը մարմնացավ և հավիտյանս մնում է մարմնացած:

«սաստիկ աղաղակով ու արցունքով աղոթք և աղաչանք» Հնարավոր է, որ սա վերաբերում է Հիսուսի Գեթսեմանի պարտեզում ունեցած փորձառությանը, որն արձանագրված է Մատթ.26:37-ում և Ղուկ.22:44-ում: Հավանական է, որ սա կապ ուներ ռաբբիների աղոթքի երեք մակարդակներին՝ ցույց տալու Հիսուսի զգացողությունների լարվածությունը Գեթսեմանի Պարտեզում կամ Նրա Քահանայապետական աղոթքը Հովհաննես 17-ում՝ Գեթսեմանից առաջ աշակերտների Չատկի ընթրիքի գիշերը:

■ **«Նրան, ով կարող էր Իրեն ազատել մահից»** Արդյո՞ք Հիսուսը վախենում էր մահից: Մարդու համար մահը բնական վախ է և Հիսուսը կատարելապես մարդ էր: Ես կարծում եմ ավելի շատ Հիսուսը վախենում էր Հոր հետ Իր փոխհարաբերության՝ կապի կորստից (տես՝ Մարկ.15:34; մեջբերում Սաղմոս 22-ից): Նա զիտեր, թե ով էր Ինքը և թե ինչու էր եկել (տես՝ Մարկ.10:45; Մատթ.16:21):

Երրորդության բոլոր երեք անձերն էլ ներգրավված էին Հիսուսի հարության ժամանակ, ոչ միայն Հայրը (տես՝ Հոգին՝ Հռոմ.8:11; և Հիսուսը՝ Հովհ.2:19-22; 10:17-18): Սովորաբար ՆԿ-ը հայտարարում է, որ Հայրն էր, որ հարություն տվեց Հիսուսին (տես՝ Գործք 2:24; 3:15; 4:10; 5:30; 10:40; 13:30,33,34,37; 17:31; Հռոմ.6:4,9; 10:9; 1 Կորնթ.6:14; 2 Կորնթ.4:14; Գաղ.1:1; Եփես.1:20; Կող.2:12; 1 Թեսաղ.1:10):

Այս արտահայտությունը կարող է ներկայացնել ՀԿ-յան մի քանի տեքստեր, որոնք հայտարարում են, որ ՅԱՀՎԵՆ ազատելու է Մեսիային ֆիզիկական մահից (տես՝ Սաղմ.33:19; 56:13 կամ Ովս.13:14) կամ հարություն է տալու մեռելներից (տես՝ Սաղմ.16:10; 49:15; 86:13): Եթե այս համատեքստը ներկայացնում է Հիսուսի աղոթքը Գեթսեմանում, ապա #1 տարբերակը լավագույնն է:

NASB	«լավեց Իր բարեպաշտության համար»
NKJV	«և լավեց Իր աստվածավախության համար»
NRSV	«Նա լավեց, քանի որ հարգալից հնազանդություն ցուցաբերեց»
TEV	«Քանի որ Նա խոնարհ էր և նվիրված, Աստված լսեց Նրան»
NJB	«լավելու արժանացավ Իր ականաձանքի շնորհիվ»

Այս արտահայտությունը, Հռոմ.1:4-ի պես, կիրառվեց աստարելու «որդեգրության» աստվածաբանական հերետիկական հասկացությունը, որը պնդում է, որ Աստված վարձատրեց Հիսուս մարդուն Իր բարեպաշտ և հնազանդ կյանքի համար: ՆԿ-ը որպես մի ամբողջություն, ներկայացնում է պարադոքսը, որ Հիսուսը մարմնացած աստվածություն էր և վարձատրվեց Իր լավ ծառայության համար: Ինչ-որ առումով երկուսն էլ ճիշտ են:

Անգլերեն թարգմանություններում տարբերությունները ծագում են երբայերենում «վախ» տերմինի ունեցած մի քանի իմաստների պատճառով, հատկապես, երբ այն գործածվում է Աստծո հետ մարդու փոխհարաբերության հարթակում: Կարծես թե այն նշանակում է «ակնածանք» կամ բարեպաշտություն, և ոչ թե «ահ ու սարսափ»: Դրա հիմնական նշանակությունը «ապահովությանը սպասելն» է՝ Աստծո հայտնի կամքը կատարելու իմաստով:

5:8 «Թեև Ինքը Որդի էր» «Որդի» բառը չպետք է մեծատառով գրվեր: Սա ընտանիքի անդամի և ընտանիքի ծառայի հակադրությամբ ներկայացված մի շարք համեմատություններից մեկն է (տես՝ Եբր.1:2; 3:6; 5:8; 7:28):

■ **«Իր չարչարանքների միջոցով հնազանդություն սովորեց»** Այս ամբողջ հատվածը շեշտադրել է Հիսուսին որպես Աստծո «որդի» (տես՝ Եբր.4:14) և միևնույն ժամանակ որպես մարդ (տես՝ «Իր մարմնի օրերում» Եբր.5:7): Նա փորձվեց, Նա աղոթեց, Նա արտասվեց, Նա չարչարվեց, Նա սովորեց հնազանդություն: Աստվածաբանորեն դժվար է Հիսուսի իրական աստվածությունը և իրական մարդեղությունը ընդունել որպես մեկ ճշմարտություն (մեկ էության մեջ): Եկեղեցու ամբողջ պատմության ընթացքում հերձվածողություններ են ձևավորվել, երբ այս ճշմարտության որևէ մի կողմը թերագնահատվել է՝ անտեսվել (տես՝ 1 Հովհ.4:1-3):

Հավատացյալների համար դժվար է գիտակցել, որ նրանք պետք է հետևեն Հիսուսի օրինակին: Սա էր այս նամակը ստացող հավատացյալների հիմնախնդիրը: Արդյո՞ք նրանք Հիսուսի պես պետք է հետևեին մինչև վերջ, եթե անգամ չարչարանքներ կրեին: Չարչարանքը այս փաթեթի մի մասն է կազմում (տես՝ Եբր.2:10; Մատթ.5:10-12; Հովհ.15:18-21; 16:1-2; 17:14; Հռոմ.8:17; 2 Կորնթ.4:16-18; 1 Պետ.4:12-19):

Ինչպե՞ս կարող էր Հիսուսը կատարելագործվեր, եթե Նա Աստված է: Անշուշտ սա վերաբերում է Նրա մարդկային զարգացմանը (տես՝ Դուկ.2:40,52): Չարչարանքը պատճառ հանդիսացավ զարգացնելու վստահություն, որը ոչ մի այլ բան չէր կարող անել: Եթե ճշմարտություն է, որ Աստծո նպատակը յուրաքանչյուր հավատացյալի համար Քրիստոսակերպությունն է (այսինքն՝ Հռոմ.8:29; Եփես.4:13), ապա ինչո՞ւ են մերօրյա արևմտյան Քրիստոնյաները փախնում հենց այն մեխանիզմից, որը հասունություն է ձևավորում:

5:9 «և կատարյալ դառնալով» Սա ԱՈՐԻՍՏ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ (դեպոնենտ) ԴԵՐԲԱՅ է: «Կատարյալ» բառը նշանակում է «հասուն» կամ «տրված առաջադրանքի համար լիակատար սպառազինված»: Եբրայեցիների գրքում թե՛ Հիսուսի և թե՛ Նրա հետևորդների հասունության կատարելագործումը կենտրոնական գաղափարն է (տես՝ Եբր.2:10; 5:9,14; 6:1; 7:11,19,28; 9:9,11; 10:1,14; 11:40; 12:2,23): Տե՛ս Հատուկ Թեմա Եբր.7:11-ում:

■ **«բոլոր Իրեն հնազանդվողների»** Հնազանդությունը իրական աշակերտության վկայություն՝ ապացույց է (տես՝ Դուկ.6:46): Հիսուսն է մեր օրինակը բոլոր բնագավառներում: Հնազանդությունը տալիս է ճշմարիտ փրկության վկայություն:

5:10 «Աստծո կողմից անվանվեց Քահանայապետ՝ ըստ ... կարգի» Մինչև այս պահը Եբրայեցիների թղթում Հիսուսի համար նշվել են երեք տիտղոսներ՝ անուններ. (1) որդի, (2) առաքյալ և (3) քահանայապետ: Տե՛ս SPECIAL TOPIC: JESUS AS HIGH PRIEST /ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԻՍՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ/ Եբր.2:17-ում:

■ **«Մեքիսեդեկի կարգը»** Ակնարկվում է հենց Մեքիսեդեկը, քանի որ ՀԿ-ում նա միակ մարդն էր, որ եղել է թե՛ քահանա, և թե՛ թագավոր, և որը պատշաճ կերպով կատարել է այս ռաբիիական փաստի բոլոր պարտավորությունները: Մեքիսեդեկը հանդիսանում է Ծննդ.14:17-20-ում և Սաղմ.110:4-ում աղոտ ներկայացված կերպարը, որը սովորաբար նկարագրում է Հիսուսի քահանայության գերազանցությունը Ահարոնի քահանայության համեմատ: Տե՛ս ամբողջական քննարկումը գլուխ 7-ում:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 5:11-14
¹¹Ում մասին շատ բան ունենք ասելու, որ դժվար է մեկնել, որովհետև ձեր լսելիքները բթացած են: ¹²Քանզի ժամանակին նայելով սովորեցնողներ պիտի լինեիք, սակայն պետք է, որ մեկը ձեզ նորից սովորեցնի Աստծո պատգամների առաջին սկզբունքները. կաթի եք կարոտ, ո՛չ թե ուժեղ կերակուրի, ¹³քանի որ ով կաթնակեր է, անհմուտ է արդարության Խոսքում, որովհետև մանուկ է: ¹⁴Իսկ ուժեղ կերակուրը չափահասների համար է, որոնց զգայարանները, օգտագործման հետևանքով, կրթված են զանազանելու բարին ու չարը:

5:11-6:12 Սա հանդիսանում է մեկ գրականական բաժին: Գլուխների և համարների բաժանումները ներշնչված չեն և ավելացվել են հետագայում: Տե՛ս գլուխ 6-ի Համատեքստային Հասկացություններ բաժինը:

5:11 «ուժեղ մասին /անզլ.՝ նրա/» Այս ԴԵՐԱՆՈՒՄԸ կարող է լինել թե՛ ԱՐԱԿԱՆ և թե՛ ՉԵԶՈՔ սեռի: Ես կարծում եմ, որ ՉԵԶՈՔԸ ավելի հարմար է (տես՝ NRSV, TEV, NJB, NIV): Հետևաբար, այն վերաբերում է Հիսուսի Մեքիսեդեկյան քահանայությանը: Եբրայեցիների 5:11-6:20-ը աստվածաբանական միջանկյալ գրառում է փակագծերում: Հեղինակը վերադառնալու է կրկին Մեքիսեդեկին Եբրայեցիների 7-ում:

■ **«մենք»** Սա գրականական ՀՈԳՆԱԿԻ է, և վերաբերում է միայն հեղինակին:

■ **«ձեր լսելիքները բթացած են»** Եբրայեցիներում այս համատեքստը բացառիկ է այն իմաստով, որ կիրառվում են երեք ԴԵՐԱՆՈՒՄԸՆԵՐ՝ «դուք» (Եբր.5:11,12; 6:9-12), «մենք» և «մեզ» (Եբր.5:11; 6:1-3,9), և «նրանց» (Եբր.6:4-8): Տե՛ս Համատեքստային Հասկացություններ - Դ: Սա կարծես թե սատարում է այն ենթադրելի պատմական կառուցվածքին, որ Եբրայեցիների գիրքը ուղղված է մի խումբ հավատացյալ հրեաների, որոնք դեռ բավարարվում էին Աստծուն ժողովարանական միջավայրում անհավատ հրեաների հետ միասին երկրպագելով և երբեք էլ լիովին չէին ընդունում ավետարանի արդյունքները:

Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որը շեշտադրում է հաստատուն իրավիճակ: «Բթացած» տերմինը ՆԿ-ում միայն երկու անգամ է գործածվում՝ այստեղ և Եբր.6:12-ում: Հեղինակը դժվարանում է բացատրել ոչ թե թեմայի, այլ ընթերցողների ոչ հասուն վիճակի պատճառով: Նրանք դարձել էին ծանր լսելու մեջ և ծույլ՝ հոգևոր բաներում:

5:12 «Քանզի ժամանակին նայելով՝ սովորեցնողներ պիտի լինեիք» Չնայած որ այս հավատացյալները արդեն երկար ժամանակ Թրիստոնյաներ էին, նրանք չէին հասունացել: Ժամանակի տևողությունը անմիջականորեն կապ չունի հասունության հետ: Թվում է, թե նրանք շարունակում էին հաղորդակցվել անհավատ հրեաների հետ ոչ հակասական հրեական թեմաների շուրջ (տես՝ Եբր.6:1-2): Հավանաբար սա նրա համար էր, որպեսզի (1) խուսափեին կառավարության կողմից իրականացվող հալածանքներից և/կամ (2) խուսափեին կատարել Թրիստոնյաներից պահանջվող «Մեծ Հանձնարարականը»:

NASB	«տարրական սկզբունքները»
NKJV	«առաջին սկզբունքները»
NRSV	«հիմնական տարրերը»
TEV	«առաջին դասերը»
NJB	«սկզբունքների տարրերը»

Այս տերմինը ունի բազմաթիվ հնարավոր իմաստներ (այսինքն՝ իմաստային լայնածավալ հարթակ):
1. Որևէ թեմայի հիմնական ուսմունքները

2. Որևէ թեմայի ծագումը
3. Հրեշտակային գորությունները (տես՝ Գաղ.4:3,2; Կող.2:8)

Այս համատեքստում #1 տարբերակը կարծես թե լավագույնն է: Հեղինակը հայտարարում է, որ այս ոչ հասուն հավատացյալներին անհրաժեշտ է սովորեցնել Քրիստոնեության հիմնական դրույթները (#1), սակայն Եբր.6:1-ում #2-ի սահմանումը ավելի լավ է համապատասխանում, քանի որ 6:1-2 առնչվում է հրեական ուսմունքների և ոչ թե բացառապես Քրիստոնեական ուսմունքների հետ, որից արդեն նրանք պետք է անցած լինեին: Հունարեն բառն այստեղ *stoichea* է, մինչդեռ Եբր.6:1-ում այն *archē* է (տես՝ Հատուկ Թեմա. *Archē* Եբր.3:14-ում):

■ **«Աստծո պատգամները»** Գործք 7:38 և Հռոմ.3:2-ում այս տերմինը գործածվում է ՀԿ-ի ճշմարտությունների համար:

■ **«կաթ ... ուժեղ կերակուր»** Այս երկուսն էլ Աստծո կողմից են տրված և երկուսն էլ հարմար են իրենց ժամանակին: Սակայն, կաթը հարմար չէ հասուն մարդուն (տես՝ 1 Կորնթ.3:2; 1 Պետ.2:2):

5:13 «արդարության Խոսք» Մեկնաբանական հարց է ծագում, թե այս արտահայտությունը ի՞նչ առնչություն ունի Եբր.5:14-ի «բարու և չարի» հետ: NJB թարգմանությունը առաջինը թարգմանում է որպես թե այն վերաբերում է վարդապետության՝ «փրկարար արդարության վարդապետությունը»: TEV թարգմանությունը դրանք թարգմանում է որպես «ճիշտ և սխալը» (Եբր.5:13) և «բարին ու չարը» (Եբր.5:14) իրար համագոր իմաստով: Առաջին արտահայտությունը առնչվում է անհասության խնդրի հետ, մինչ երկրորդը առնչվում է գործողության՝ փորձառության պակասի խնդրի հետ: Հնարավոր է, որ այս արտահայտությունը Եբր.5:12; 6:1-ի «առաջին՝ տարրական սկզբունքների» հակադրություն է: Ուստի այն կարող է վերաբերել ավետարանին, որն ի հակադրություն Եբր.6:1-2-ի հրեական վարդապետությունների՝ ավելի բարձր է: Արդարության շուրջ բառային սերտողության համար տե՛ս Հատուկ Թեմա Եբր.1:9-ում:

5:14 «հասուն /չափահաս/» Այս տերմինը մինևույն հունարեն արմատից է, որ Եբր.5:9-ում թարգմանվել է որպես «կատարյալ»: *Telos* նշանակում է հասուն, լրիվ պատրաստ՝ սպառազինված նշանակված առաջադրանքի համար: Տե՛ս Հատուկ Թեմա Եբր.7:11-ում: Հիսուսի մարդասիրությունը հավատարմության և հասունության մեջ անելու օրինակ է (տես՝ Եբր.5:8-9), ինչպիսին որ պետք է լինի ընթերցողների կյանքը: Այս հավատացյալ հրեաները որոշակի հալածանքներով էին անցել (տես՝ Եբր.12:4), սակայն նրանք հակված էին նահանջելու (տես՝ «հետ քաշվելու», 10:38) Հուդայականության հարաբերական ապահովության մեջ:

«որոնց զգայարանները օգտագործման հետևանքով կրթված են» Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է, որը խոսում է կրկնվող գործողության մասին, որը ամրապնդվել է որոշակի հաստատուն վիճակում. գործադրությունը կատարելագործում է: Այս նույն ԲԱՅԸ կիրառվում է Եբր.12:11-ում Աստծո աշակերտների համար:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ էր հրեա հավատացյալի համար այդքան դժվար ընդունելը, որ Հիսուսը քահանայապետ էր:
2. Ինչպե՞ս է չարչարանքը կապված հասունության հետ՝ թե՛ Հիսուսի և թե՛ Իր աշակերտների դեպքում:
3. Այս ընթերցողների համար ի՞նչ գործոններ են պատճառ հանդիսացել, որ չհասունանան:

ԵՔՐԱՅԵՑԻՆԵՐԻ 6

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Հավատորացության դեմ զգուշացում			Չզուշացում հավատքը թողնելու դեմ	Հեղինակը բացատրում է իր նպատակը
(5:11-6:12)			(5:11-6:12)	
5:11-6:8	Առաջընթաց չունենալու վտանգը	Հորդոր նպատակի հռչակում	և	
	6:1-8	6:1-8	6:1-3	6:1-8
	Ավելի լավ գնահատական		6:4-8	Հույսի քաջակերանքի խոսքեր
6:9-12	6:9-12	6:9-12	6:9-12	6:9-12
Աստծո հաստատ խոստումը	Աստծո անսասան նպատակը Քրիստոսում		Աստծո հաստատ խոստումը	
6:13-20	6:13-20		6:13-20	6:13-20

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու Ուղեցույց») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզինց յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 5:11-6:12

Ա. Եբր.6:1-3-ում «մենք/մեզ», Եբր.6:4-8-ում «դրանք/դրանց» և Եբր.6:9-12 և 5:11-12-ում «դուք» ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ կիրառման պատճառով ես կարծում եմ, որ 6-րդ գլխում հեղինակը դիմում է երկու տարբեր խմբերի՝ հավատացյալ հրեաներին և անհավատ հրեաներին: Նաև Եբր.6:1-2-ի հիմնական վարդապետությունների հրեական (ոչ Քրիստոնեական) բնույթը պետք է որ մատնանշի ճշմարտություններ, որոնք հուդայականության մեջ են գործում: Այս հատվածում նշվում են երեք խմբեր:

1. Հեղինակը և իր միախոնրական թիմը («մենք» և «մեզ», Եբր.6:1-3,9; 5:11)
2. Անհավատ հրեաները («դրանք» և «դրանց», Եբր.6:4-8)
3. Հավատացյալ հրեաները («դուք», Եբր.6:9-12 և 5:11-12)

Բ. Եղել են մի քանի տեսություններ այն հարցի շուրջ, թե ում է ուղղված այս հատվածը՝

1. Ենթադրական (որը սովորաբար կիրառվում է «եթե» բառով՝ Եբր.6:6)
2. Վերաբերում է հրեա անհավատներին
3. Վերաբերում է իսկական հերձվածողությանը (հրեա հավատացյալներին, ովքեր գրեթե վերադառնում էին ՀԿ-յան հույսին և ծիսակարգերին՝ Հիսուս Մեսիային հավատալ շարունակելու փոխարեն)
4. Վերաբերում է միայն առաջին դարի իրավիճակին (որը դիտարկում է պատմական միջավայրը որպես հավատացյալ և անհավատ հրեաների ժողովարանական միջավայր)
5. Վերաբերում է ՀԿ-յան անհավատության օրինակներին և ոչ թե այդ ժամանակի հավատացյալներին

Գ. Եբր.6:1-12-ի զգուշացումները պետք է որ կապ ունենան նախորդող զգուշացումների հետ՝

1. Չգուշացեք տարուբերվելուց՝ դեպի ապահովությանը դառնալուն, Եբր.2:1
2. Չգուշացեք կամայական անհավատությունից (ՀԿ-յան խրայելացիների պես), Եբր.3:12-19
3. Չգուշացեք ոչ հասուն հավատացյալներ մնալուց, Եբր.5:11-14

Դ. Եկեղեցում ընթացիկ տարածայնությունը «մի անգամ փրկված, ընդմիշտ փրկված», «փրկված, ետ դարձած և նորից փրկված» և «մի անգամ ետ դարձած ուրեմն ընդմիշտ հեռացած» պատվում է՝

1. Մեկուսի՝ գատված տեքստերի կիրառման շուրջ (տեքստային ապացույց)
2. Տրամաբանական դեդուկցիայի կիրառման շուրջ (նպատակի առաջնայնությունը Սուրբ Գրքի խոսքերից առավել)
3. Համակարգված աստվածաբանության ցանցի կիրառման շուրջ (Կավիինիզմ, Արմենիանիզմ, Դիսպանսիզացիա, և այլն)

Ե. Գոյություն ունեն իրենց հավատքի հետ կապված խնդիրներ ունեցող մարդկանց բազմաթիվ աստվածաշնչյան օրինակներ (տես՝ Հատուկ Թեմա Եբր.6:5-ում), սակայն դրանց լուծում տվող մի որևէ հեշտ պատասխան չկա:

1. Հավատացյալները դառնում են ծառայության համար անհամապատասխան՝
 - ա. հեշտասեր Քրիստոնյաները կամ ծույլ Քրիստոնյա առաջնորդները (1 Կորնթ.3:10-15)
 - բ. մանուկ Քրիստոնյաները (Եբր.5:11-14)
 - գ. որակագրկված Քրիստոնյաները (1 Կորնթ.9:27)
 - դ. ուղղափառությունից դուրս Քրիստոնյաները (1 Տիմ.1:19-20)
 - ե. անպտուղ Քրիստոնյաները (2 Պետ.1:8-11)
2. Հավատքի կեղծ դավանությունները՝
 - ա. տարբեր հողերի առակը (Մատթ.13; Մարկոս 4)
 - բ. պտուղներ առանց անձնական փոխհարաբերության (Մատթ.7:21-23)
 - գ. սուտ վարդապետները (1 Հովի.2:18-19; 2 Պետ.2:1-19)
3. Հավանական հերձվածողություն
 - ա. Սավուղը (ՀԿ)
 - բ. Հուդան (ՆԿ)
 - գ. սուտ վարդապետները (2 Պետ.2:20-22)
 - դ. հետագա մեկնաբանողները (Հայտնություն 22:19)

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՏԻՆԵՐԻ 6:1-8

¹Ուստի Քրիստոսի ուսմունքի նախնական գիտելիքները թողնելով՝ զանք կատարյալին՝ առանց կրկին հիմք դնելու մեռած գործերից ապաշխարելուն, Աստծուն հավատալուն, ²մկրտությունների վարդապետությանը, ձեռք դնելուն, մեռելների հարությանը ու հավիտենական դատաստանին: ³Եվ սա պիտի անենք, եթե Աստված թույլ տա: ⁴Որովհետև նրանց համար, որ մեկ անգամ լուսավորվել են, երկնային պարզևր ճաշակել, Սուրբ Հոգուն հաղորդակից եղել, ⁵Աստծո բարի Խոսքի և գալիք աշխարհի գորությունների համն առել, ⁶եթե հեռանան, անհնար է նորից ապաշխարությամբ նորոգվել, որովհետև Աստծո Որդուն իրենց համար վերստին խաչն են հանում և հրապարակորեն խայտառակում: ⁷Քանզի այն հողը, որ իր վրա հաճախակի եկած անձրևը խմում է և շահավետ արդյունք է բերում մշակողներին, Աստծուց օրհնություն է ստանում, ⁸իսկ փուշ ու տատասկ անեցնողը մերժվում է, անեծքի է ենթակա, որի վերջն այրվելն է:

6:1-2 Վարդապետությունների այս ցանկը առնչվում է Հուդայականության և Քրիստոնեության մեջ առկա խնդիրների հետ: Սակայն, դրանք հիմնականում հրեական են (այսինքն՝ լվացումները և ձեռնադրումները): Սրանք այնպիսի հարցեր են, որոնց շուրջ հավատացյալ և անհավատ հրեաները հեշտությամբ համաձայնության էին գալիս: Դրանք Հիսուս Նազովրեցու հետ կապված՝ որպես մարգարեացված Մեսիան, կարևոր աստվածաբանական հարցեր չեն:

Գոյություն ունի մի խելամիտ տեսություն, որ առաջին արտահայտությունը պետք է թարգմանվեր *archē* (տարրական ուսմունքներ) որպես «Մեսիայի սերնդաբանությունը՝ սկիզբը» (տես՝ Ա. Բ. Բրյուս, *Եբրայեցիների Թողթը*, էջ՝ 197 /A. B. Bruce *The Epistle to the Hebrews*): Հնարավոր է, որ մի խումբ հրեաներ հիասթափված էին Քրիստոնեության մեջ աճող հեթանոսական սերուցքից և հարցադրում էին, թե ինչպես կարող էր Հիսուսը իրականացնել ՀԿ-յան մարգարեություններն ու սպասելիքները: Կարո՞ղ էր հրեական վարդապետությունների ցանկը լինել Հիսուսի փոխարեն Մովսիսական ուխտի հնարավոր վերադարձի մասին քննարկում:

6:1

- NASB** «Քրիստոսի մասին տարրական ուսմունքները»
- NKJV** «Քրիստոսի մասին տարրական *սկզբունքների* քննարկումը»
- NRSV** «Քրիստոսի մասին հիմնական ուսմունքները»
- TEV** «Քրիստոնեական պատգամի առաջին դասերը»

Հունարեն *archē* տերմինը ունի ընդարձակ իմաստաբանական հարթակ: Հիմնական շեշտադրումը ինչ-որ բանի սկիզբն է (իշխանության՝ կառավարման առաջին սկզբունքը): Այն հանդիսանում է *teleios* («հասունություն» Եբր.6:1բ) բառի համատեքստային հականիշը:

Այս արտահայտությունը հասկանալու խնդիրն այն է, որ Եբր.6:1-2-ում թվարկված սկզբունքները այնքան էլ չեն առնչվում Մեսիայի հետ, որքան հուդայականության ավանդական ուսմունքների հետ: Սա տեսքստային պատճառներից մեկն է ենթադրելու, որ գիրքը գրվել է հրեական ժողովարանի լսարանի (տես՝ Եբր.10:25) թե՛ հավատացյալ և թե՛ անհավատ հրեաներին (տես՝ Ռ. Ս. Գրեյզ, *Ոչ Դյուրին Փրկություն* /R. C. Graze *No Easy Salvation*):

■ **«գանք»** Սա անգլերենում /let us press on/ ՆԵՐԿԱ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ Է՝ «եկեր կրենք»: Շեշտադրվում է երկնայինի կողմից շարունակական աջակցությունը: Նրանք առաջ կգնան դեպի հասունություն, եթե թույլ տան, որ Սուրբ Հոգին, ազատությունը նրանց մղիչ ուժը լինի: Այս նույն հունարեն տերմինը գործածվում էր Պյուլթագորյան փիլիսոփաների կողմից հասկացողության ավելի բարձր մակարդակի հասնելու համար (տես՝ Ա. Տ. Ռոբերտսոնի *Բառապատկերները Նոր Կտակարանում*, էջ՝ 373 /A. T. Robertson *Word Pictures in the New Testament*):

- NASB, TEV** «հասունություն»
- NKJV, NRSV** «կատարելություն»
- NJB** «լիարժեքություն»

Սա հունարենի *teleios* տերմինի մի ձևն է, որը ՆԿ-ում միայն այստեղ է կիրառվում: Տե՛ս Հատուկ Թեմա Եբր.7:11-ում: Այն հանդիսանում է Եբր.6:1ա-ի *archē* տերմինի համատեքստային հականիշը (հիմնական սկզբունքներ): Այս հավատացյալները պետք է առաջ անցնեն այդ աստվածաբանական թեմաներից, որոնք ընդհանուր էին իրենց հրեա ընկերների և երկրպագուների մոտ:

■ **«ապաշխարել հավատալ»** Սրանք հին և նոր ուխտերի պարտավորություններն են, մեկը բացասական և մյուսը՝ դրական: Ապաշխարությունը դժվար թեմա է, իր իմաստային շփոթության պատճառով: Եբրայերեն տերմինը արտահայտում է գործողության փոփոխություն, մինչ հունարենը՝ մտքի փոփոխություն: Ապաշխարությունը անձնակենտրոն, անձնապաշտ կյանքից դեպի աստվածակենտրոն, աստվածապաշտ կյանքի դառնալն է:

1. Հիսուսը կապում էր ապաշխարության պակասը՝ կարիքը, կործանման հետ (տես՝ Դուկ.13:3,5 և 2 Դեա.3:9)
2. Ապաշխարությունը որպես համագործակից պարտավորություն կապված է հավատքի հետ (տես՝ Մարկ.1:15; Գործք 2:38,41; 3:16; 19; 20:21)
3. Անգամ հիմնավորվում է, որ Աստված Ինքն է ապաշխարության աղբյուրը (տես՝ Գործք 5:31; 11:18; 2 Տիմ.2:25)

6:2 «մկրտություններ /անգլ.՝ լվացումներ/» ՀՈԳՆԱԿԻՆ երբեք չի կիրառվում Քրիստոնեական մկրտության համար, այլ ՀԿ-յան ծիսական լվացումների համար (տես՝ Մարկ.7:4; Եբր.9:10): Վարդապետությունների այս երեք գույգերը բացառապես Քրիստոնեական չեն: Թվում է, թե դրանք հուդայականության հետ ընդհանրություններ ունեն, հատկապես նրանք, որոնք փարիսեցիները կհաւում էին Քրիստոնեության հետ:

■ **«ձեռք դնելուն»** Սա մի քանի իմաստով կիրառվում է թե՛ Հին և թե՛ Նոր Կտակարաններում: Այն արտահայտում է՝

1. Աստծու կողմից նշանակված առաջադրանքի համար առանձնացում (տես՝ Թվոց 27:18,23; 2 Օր.34:9; Գործք 6:6; 13:3; 1 Տիմ.4:14; 5:22; 2 Տիմ.1:6)
2. Չոհի հետ նույնականացում՝
 - ա. քահանան (տես՝ Ել.29:10,15,19; Ղևտ.16:21; Թվոց 8:12)
 - բ. ձեռնադրողները (տես՝ Ղևտ.1:4; 3:2,8; 4:4,15,24; 2 Մնաց.29:23)
3. Քարկոծվող գոհի հետ նույնականացում (տես՝ Ղևտ.24:14)
4. Օրհնության համար աղոթելը (տես՝ Մատթ.19:13,15)
5. Բժկության համար աղոթելը (տես՝ Մատթ.9:18; Մարկ.5:23; 6:5; 7:32; 8:23; 16:18; Ղուկ.4:40; 13:13; Գործք 9:17; 28:8)
6. Սուրբ Հոգին ընդունելու համար աղոթելը (տես՝ Գործք 8:17-19; 19:6)

■ **«հարությանը... հավիտենական դատաստանին»** Փարիսեցիները և Էսսենները (այսինքն՝ Մեռյալ Ճովի Գալարների համայնքը) Քրիստոնեության հետ միասին պահում էին այս էսկատոլոգիական վերջին ժամանակների մասին, վարդապետությունները:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ (aiōnios)
SPECIAL TOPIC: ETERNAL (aiōnios)

Ռոբերտ Բ. Գրդլսթոունը իր *Հին Կտակարանի Հոմանիշները* /Robert B. Girdlestone *Synonyms of the Old Testament*/ գրքում «հավիտենական» բառի շուրջ մի հետաքրքիր մեկնաբանություն է ներկայացնում.

«ՆԿ-ում *aiōnios* ածականը հավիտենական կյանքի համար կիրառվում է ավելի քան քառասուն անգամ, որը մասամբ համարվում է որպես ներկայիս պարզև, մասամբ էլ՝ ապագայի խոստում: Այն նաև կիրառվում է Հռոմ.16:26-ում Աստծո անվերջանալի գոյության համար; Եբր.9:12; 13:20-ում Քրիստոսի քավության անվերջանալի գործության համար; և Հռոմ.16:25; 2 Տիմ.1:9; Տիտոս 1:2-ում՝ անցյալ դարերի համար:

Այս բառը Մատթ.18:8; 25:41; Հուդա 1:7-ում կիրառվում է հավիտենական կրակի իմաստով; Մատթ.25:46-ում՝ հավիտենական պատժի; Մարկ.3:29; Եբր.6:2-ում՝ հավիտենական դատաստանի կամ դատապարտության; 2 Թեսաղ.1:9-ում՝ հավիտենական կորստյան: Տրված հատվածներում այս բառը ակնարկում է վերջնական վիճակ, և ըստ երևույթին կարևորում է, որ երբ այս դատաստանները վրա հասնեն, փորձաշրջանի, փոփոխության կամ մարդու ապագան նորոգելու հնարավորությունը բացարձակապես և հավիտյանս հնարավոր չի լինի: Մենք շատ քիչ բան ենք հասկանում ապագայի վերաբերյալ, մարդու կյանքի և մնացած ամբողջ գոյի հետ կապի մասին, և անհավատության բարոյական կշռի մասին, երբ դրանք դիտարկում ենք հավիտենության լույսի ներքո: Եթե, մի կողմից սխալ է Աստծո Խոսքին որևէ բան ավելացնելը, ապա մյուս կողմից էլ մենք չպետք է որևէ բան պակասեցնենք դրանից. և եթե մենք երերում ենք հավիտենական պատժի վարդապետության ներքո, ինչպես Սուրբ Գրքում է գրված, մենք պետք է գոհանանք, մնալով հավատարիմ Քրիստոսի մեջ Աստծո սիրո Ավետարանին, միառժամանակ գիտակցելով, որ գոյություն ունի մուր կողմն էլ, որը մենք ի գորու չենք հասկանալու» (էջ՝ 318-319):

6:3 «երթե» Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը նշանակում է պոտենցիալ գործողություն: Աստված թույլ կտա, եթե նրանք համագործակցեն:

6:4-6ա «մեկ անգամ լուսավորվել են... ճաշակել են... եղել են... հեռանան» Բոլոր այս ԴԵՐԲԱՅՆԵՐԸ ԱՈՐԻՍ են, մինչ Եբր.6:6ր սկսում է ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ ԲԱՅԵՐԻ մի շարան: Սրանք իրոք ուժեղ հայտարարություններ են: Թվում է, թե նշանակությունը հստակ է. նրանք Աստծուն ինչ-որ չափով ճանաչում էին, սակայն մերժում էին Քրիստոսին կատարելապես հավատալու: Այնուամենայնիվ, այս երկու համատեքստային հարցերն էլ անհրաժեշտ է քննել. (1) երեք խմբերի առկայությունը («մեզ» /հհ. 1-3/, «դրանք» /հհ. 4-8/, «դուք» /հհ. 9-12/) և (2) Եբր.6:1-2-ի

վարդապետությունների հրեական բնույթը: Մրանք մատնացույց են անում ժողովարան, որտեղ հավատացյալ և անհավատ հրեաները միասին երկրպագում և սովորում էին: Անհավատ հրեաները պարզ տեսնում էին ավետարանի գորությունը, փառքը և ճշմարտությունը Սուրբ Գրքում և իրենց հավատացյալ ընկերների վկայության և փոխված կյանքերի մեջ:

Եբրայեցիներում կարծես թե կա երկու զգուշացում. (1) հավատացյալ հրեաներին, որ մնան իրենց դիրքում հավաժվող եկեղեցու կողքին և չնահանջեն՝ կրկին վերադառնալով հուդայականությանը և (2) անհավատ հրեաներին, որպեսզի ընդունեն Քրիստոսին: Առաջին զգուշացումը շատ առումներով բացառիկ է այս գրքի համար, սակայն երկրորդը շատ նման է Ավետարաններում Փարիսեցիների աններելի մեղքին և 1 Հովհաննեսի գրքում տրված սուտ վարդապետների մահացու մեղքին:

6:5 «գալիք աշխարհի գորություններ» Գալիք ժամանակներում կործանվողների մասին մեկ այլ օրինակ է Մատթ.7:21-23-ը: Նրանք ունեին գորություն, սակայն առանց անհրաժեշտ անձնական փոխհարաբերության: Այս նույնը կարելի է ասել Հուդա Իսկարիովտացու համար (Ավետարաններում), Միմոն Մոգի համար (Գործք Առաքելոցում) և սուտ վարդապետների համար (տես՝ 1 Հովհ.2:18-19): Տես Հատուկ Թեմա Եբր.1:2:

■ **«Եթե հեռանան /հեռացել են, հայերենում՝ 6:6/»** Սա ԱՈՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է: Հունարեն նախադասության աստվածաբանական գազաթնակետն է, որը սկսվում է Եբր.6:4-ում: Տես Հատուկ Թեմա. Ուխտադրություն, Եբր.3:12-ում:

6:6

NASB	«իսկ հեռան»
NKJV	«եթե»
NRSV, TEV	«և հեռո»
NJB	«Եվ մինչդեռ չնայած սրա»

Հույն գիտնականների միջև տարաձայնություն կա, թե արդյոք սա թեթև պայմանական կազմությամբ է, թե՛ համար 4-ից սկսած հաստատուն զուգահեռ կազմություն: Նրանք, ովքեր պնդում են պայմանական կազմությունը, պատճառը աստվածաբանական նպատակն է, պնդելու, որ համար 6ա ենթադրելի իրավիճակ է: Ամեն դեպքում, բոլոր այս քերականական ձևերը ակնարկում են, որ բոլորն էլ տեղի են ունեցել:

1. ԱՈՐԻՍՏ ԴԵՐԲԱՅԻ կրկնվող ձևը (լուսավորվել են, ճաշակել են, կիսվել են, համն ամել են և հեռացել)
2. “Kai”(այսինքն՝ *և*) բառի պարբերաբար կրկնվող գործածությունը վերջին երեքի *հեռան*:
3. Միակ ՀԱՅՑԱԿԱՆ ԱՐԱԿԱՆ ՀՈԳՆԱԿԻ ՀՈՂԵ Եբր.6:4-ում, որը կապ ունի 4-6 համարներում բոլոր ԴԵՐԲԱՅՆԵՐԻ հետ:

NASB, TEV, NJB	«անհնար»
NKJV, NRSV	«անհնար»

Այս տերմինը հատնվում է Եբր.6:4-ում, սակայն ավելի ընդարձակ համատեքստով ներկայանում է Եբր.6:6-ում: Սա հունարեն *duantos* (կարող) տերմինն է, ԱԼՖԱ (Ա) ՄԱՄՆԻԿՈՎ (անկարող): Այս երկու տերմինները կիրառվում են այն իմաստով, թե ինչ է անում կամ չի անում Աստված: Այն կիրառվում է Հունարեն Պապիրոսներում, որ գտնվել են Եգիպտոսում (1) տղամարդկանց համար, որոնք ուժեղ չեն աշխատելու համար և (2) վկաների համար, որոնք ի վիճակի չեն վկայություն տալու: Եբրայեցիներում այն կիրառվում է չորսն անգամ.

1. Անհնար է վերադարձնել՝ նորոգել նրանց կրկին դեպի ապաշխարություն (6:4)
2. Աստծո համար անհնար է ստել (6:18)
3. Անհնար է, որ Հ-յան զոհաբերությունները փրկեն (10:4)
4. Առանց հավատքի անհնար է հաճելի լինել Աստծուն (11:6)

Բոլոր տրված դեպքում էլ այս տերմինը նշանակում է անհնար: Հետևաբար, անսպասելի է, որ Լու և Նիդայի *Նոր Կտակարանի Հունարեն Անգլերեն Բառարանում* (Lowe and Nida *Greek English Lexicon of the New Testament*) ասվում է «Եբր.6:4-ում *abunation* տերմինի կիրառությունը թվում է թե չափազանցություն է հավատորացության դեմ զգուշացումների առումով (տես՝ Եբր.5:11-6:12): Հետևաբար մեկը կարող է թարգմանել *abunaton* Եբր.6:4-ում՝ որպես «չափազանց դժվար է դա անելը» (էջ՝ 669): Սա կարծես թե ավելի աստվածաբանական է կամ լեզվաբանական, երբ Եբրայեցիներում այս բառի բոլոր մյուս կիրառությունները պահանջում են «անհնարին»:

Այս տերմինը տառացիորեն չընդունելու դժկամության պատճառն այն է, որ այն տանում է «մեկ անգամ դուրս եկար, ընդմիջտ դուրս եկար» աստվածաբանությանը, եթե սա վերաբերում է իրենց հավատքը թողած հավատացյալներին: Այն հարանվանական խմբերը, որոնք սովորեցնում են ուխտադրժության մասին, նաև քարոզում են ապաշխարություն և վերահաստատում: Տվյալ տեքստը կարծես թե թերագնահատում է այս դիրքորոշումը:

Շատ առումներով պատմական միջավայրը մեկնության բանալին է հանդիսանում.

1. Երկու խմբերը, որոնց դիմում է հեղինակը (հավատացյալ և անհավատ հրեաներ)
2. Մի խումբը (հավատացյալ հրեաները, որոնք չեն անել և հիմա խորհում են Մովսեսին վերադառնալու մասին)

Սա Գաղատացիներում գրված Հուդաիստների պես հերետիկոսության պես է, որոնք փորձվում էին ՀԿ-յան ծեսերին վստահելու մեջ (դրան ավելացրած Քրիստոսը): Պողոսը հաստատում է, որ նրանք հեռացել էին շնորհքից (տես՝ Գաղ.5:4):

■ **«նորոգվել»** Տես հետևյալ Հատուկ Թեման.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՆՈՐՈԳՎԵԼ (*anakainōsis*)
SPECIAL TOPIC: RENEW (*anakainōsis*)

Հունարեն այս տերմինը իր տարբեր ձևերով (*anakainōō, anakainizō*) ունի երկու հիմնական նշանակություն՝

1. «ինչ-որ բան նոր կամ տարբեր դարձնելու պատճառ հանդիսանալ» (այսինքն՝ ավելի լավ) – Հռոմ.12:2; Կող.3:10
2. «դեպի նախկին ավելի նախընտրելի վիճակին վերադառնալու փոփոխության պատճառ հանդիսանալ» - 2 Կորնթ.4:16; Եբր.6:4-6 (վերցված է Լու և Նիդայի *Հունարեն-անգլերեն Բառարանից*, հատոր 1, էջ՝ 157, 594 /Louw and Nida *Greek-English Lexicon*/)

Մուլթոն և Միլիգան, *Հունարեն Կտակարանի Բառարան* /Moulton and Milligan, *The Vocabulary of the Greek Testament*/ գրքում ասում է, որ այս տերմինը (այսինքն՝ *anakkainōsis*) հնարավոր չէ գտնել Պողոսից առաջ գոյություն ունեցած հունարեն գրականության մեջ: Հնարավոր է, որ Պողոսն ինքն է կազմել այս տերմինը (էջ՝ 34):

Փրենկ Սթեգը, *Նոր Կտակարանի Աստվածաբանություն* (Frank Stagg *New Testament Theology*) գրքում տալիս է մի հետաքրքիր մեկնություն.

«Վերածնունդն ու նորոգումը միայն Աստծուն է պատկանում: *Anakkainōsis* բառը «նորոգություն» տերմինի համար, գործողության գոյական է և ամկա է Նոր Կտակարանում բայի տարբեր ձևերի հետ համատեղ՝ նկարագրելու շարունակական նորոգություն, ինչպես Հռոմ.12:2-ում. «Ձեր մտքի նորոգությամբ նորոգվեք» և 2 Կորնթացիների 4:16-ում՝ «Մեր ներքին մարդը նորոգվում է օրեցօր»: Կողոսացիների 3:10-ը նկարագրում է «նոր մարդուն» որպես մեկի, որը «նորոգված է գիտությամբ՝ ըստ իր Արարչի պատկերի»: Այսպիսով «նոր մարդը», «կյանքի նորոգությունը», «վերածնունդը» կամ «նորոգությունը» ինչպես որ նախատեսված է եղել, հանդիսանում է Աստծո կողմից՝ որպես հավիտենական կյանք տվողի և ապահովողի, սկսած և շարունակելի գործը» (էջ՝ 118):

■ **«իրենց համար վերստին խաչն են հանում»** Հունարենի բաղադրյալ (*anastauroō*) կարող է նշանակել «խաչել» (կամ «մեխել», այս ավելի խիստ ձևը կիրառվում է JB, NEB և Moffat թարգմանություններում) կամ «կրկին խաչը հանել» (NASB, NKJV, NRSV, TEV, NJB, NIV): Բյոեր, Արնթ, Գինգրիչ և Դանքերի կողմից *Նոր Կտակարանի Հունարեն-Անգլերեն Բառարան* /Bauer, Arndt, Gingrich and Danker *Greek-English Lexicon of the New Testament*/ գրքում ասվում է. «Հավելյալ աստվածաշնչային հունարենում այս տերմինը միշտ նշանակում է *խաչել*» (էջ՝ 61): Տերտուղիանոսը այս հասկացումը գործածում էր հաստատելու, որ մկրտությունից հետո գործած մեղքերը աններելի են:

Վաղ շրջանի Հույն Հայրերը հասկանում էին այս համատեքստը և *ana* բառի հետ կազմված բաղադրյալը, որը պահանջում էր «կրկին խաչել», որին հետևում են անգլերենի ժամանակակից թարգմանությունները: Աստվածաբանորեն սա ի՞նչ առնչություն ունի հավատուրացության հետ: Այն ակնարկում է հավատացյալներին. թեև, եթե «անձնապես խաչել» խստացված ձևն է հաջորդում, ապա հավանական է, որ այն հղված է անհավատներին: Մեկնաբանները պետք է թույլ տան, որ խոսի տեքստը և ոչ թե իրենց անձնական հակումները կամ աստվածաբանական համակարգերը: Այս տեքստը չափազանց դժվար է

որոշակի կերպով մեկնաբանելու համար: Հաճախ կարծում ենք, թե գիտենք ինչ է այն նշանակում կամ չի նշանակում, նախքան կրախփենք՝

1. Գրքի ամբողջականության հետ
2. Հատկապես չորս զգուշացումների հետ
3. Յուրահատուկ համատեքստի հետ

Այնուամենայնիվ այս տեքստերը մեկնաբանելիս զգուշացումները լուրջ են:

■ **«հրապարակորեն խայտառակում»** Այս տերմինը կիրառվում է Մատթ.1:19-ում Հովսեփի համար, որը չէր ցանկանում հրապարակորեն խայտառակել Մարիամին: Ի՞նչ առնչություն ունի սա համատեքստի հետ: Հնարավոր է այն պարզապես վերաբերում է Հիսուսի խաչելությանը որպես «հանրային» հրապարակավ ամոթ», երբ չի ակնարկվում «դարձյալ» բառը:

6:8 Հնարավոր է այս լուսաբանումը վերցված է Ծննդ.3:17-19 կամ Եսայի 5:1-2 հատվածներից կամ էլ հավանաբար նույնիսկ Մատթեոս 13-ում տարբեր հողերի վերաբերյալ առակից: Պտղաբեր լինելը նորմալ ապացույց է հաստատ դավանության: Պտուղ տալը (տես՝ Հովհ.15:5-6), ոչ թե ծլարձակումն է Բրիտանիայի հետ իրական փոխհարաբերության ապացույցը: Պտուղը ապացույցն է, և ոչ թե միջոցը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 6:9-12
Պիրելիներ, թեև այսպես ենք խոսում, բայց մենք ավելի լավ բաներ ենք ակնկալում ձեզանից, բաներ, որ փրկությանն են ուղեկցում,¹⁰ որովհետև Աստված անարդար չէ, որ մոռանա ձեր գործը և այն սիրո աշխատանքը, որ ցույց տվեցիք Նրա անվան համար, որ ծառայեցիք և ծառայում եք սրբերին: ¹¹Եվ ցանկանում ենք, որ ձեզնից ամեն մեկը նույն փութաջանությունը ցուցաբերի, որպեսզի մինչև վերջ հույսի վստահությունն ունենաք. ¹²որ չծուլանաք, այլ հետևեք նրանց, ովքեր հավատով և համբերատարությամբ խոստումները ժառանգեցին:

6:9 «Սիրելիներ» Այս պարբերությունը արտահայտում է խորը սեր և հոգատարություն, որը հեղինակը տաժում էր իր ընթերցողների հանդեպ: Համար 11-ը նշում է (1) «ցանկություն», որը հնարավոր էր թարգմանել «մեծ ցանկություն» և (2) «ձեզնից ամեն մեկը», որն արտահայտում է անհատական հոգատարություն:

■ **«մենք ավելի լավ բաներ ենք ակնկալում ձեզանից»** Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ՀՈԳՆԱԿԻ է: Հեղինակը վստահ էր, որ ընթերցողների այս խումբը Բրիտանյաններ էին և շարունակելու էին պատշաճ կերպով ապրել: «Ավելի լավ» բառի համար, տե՛ս ամբողջական գրառում Եբր.7:7-ում:

- | | |
|-------------------|--|
| NASB, NKJV | «բաներ, որ փրկությանն են ուղեկցում» |
| NRSV | «բաներ, որ փրկությանն են պատկանում» |
| TEV | «որ ձեր փրկությանն են պատկանում» |
| NJB | «փրկության ճանապարհին» |

Հունարեն այս արտահայտությունը տառացիորեն «փրկություն ունենալ» (ՆԵՐԿԱ ՉԵՉՈՋ ԴԵՐԲԱՅ) է նշանակում, որը սահմանում է Եբր.6:9-ի «ավելի լավ բաները»:

- 6:10 «որ մոռանա ձեր գործը»** Աստված արդարությամբ է դատելու, հիմնվելով
1. Կյանքի գրքի վրա (տես՝ Ել.32:32-33; Սաղմ.69:28; Դան.12:1; Դուկ.10:20; Փիլ.4:3; Եբր.12:23; Հայտն.3:5; 13:8; 17:8; 20:12,15; 21:27)
 2. Գործերի գրքի վրա (տես՝ Սաղմ.56:8; 139:16; Ես.65:6; Սաղ.3:16; Մատթ.25:31-46; Գաղ.6:7)

■ **«սիրո աշխատանքը, որ ցույց տվեցիք Նրա անվան համար, որ ծառայեցիք և ծառայում եք սրբերին»** Չնայած այս հավատացյալ հրեաները Եկեղեցու հետ ամբողջովին մեկ չէին դարձել, սակայն օգնում էին Եկեղեցուն հալածանքների ժամանակ (տես՝ Եբր.10:32-34):

Հիշեք, որ ժողովարանը համարվում էր օրինական, մինչ Եկեղեցին այս շրջանում հռոմեական օրենքով ապօրինի էր:

«Սուրբեր» (*hagioi*) բառը աստվածաբանորեն կապված է ՀԿ-յան «սուրբ» (*kadosh*) տերմինի հետ, որը նշանակում է «Աստծո ծառայության համար առանձնացված՝ զատված» (տես՝ 1 Կորնթ.1:2; 2 Կորնթ.1:1; Հռոմ.1:1; Եփես.1:1; Փիլ.1:1): Այն մշտապես ՀՈԳՆԱԿԻ թվով է ՆԿ-ում, քաջատարությամբ մեկ անգամ Փիլիպեցիների 4:21-ում, որը նույնիսկ այնտեղ կիրառվում է հավաքական համատեքստում: Փրկվել նշանակում է լինել հավատքի ուխտի համայնքի, հավատացյալների ընտանիքի մի մասնիկը:

Աստծո ժողովուրդը սուրբ է Հիսուս Քրիստոսի տված արդարության շնորհիվ (տես՝ Հռոմեացիների 4 և 2 Կորնթ.5:21): Աստծո կամքն է, որ նրանք սուրբ կյանքեր ապրեն (տես՝ Եփես.1:4; 2:10; 4:1; 5:27; Հակ.2:14-26; 1 Պետ.1:16): Հավատացյալները թե՛ հռչակված են սուրբ (պաշտոնական սրբացումը՝ որպես վիճակ, դիրք) և թե՛ կանչված են արքայության ապրելակերպի (կատարելագործվող սրբացում): Սա նման է «Աստծո Արքայության արդեն իսկ»-ի և «Աստծո Արքայության դեռևս ոչ»-ի միջև եղած ՆԿ-յան աստվածաբանական լարվածությանը:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍՈՒՐԲԵՐ
SPECIAL TOPIC: SAINTS**

Սա երբայերենի *kadosh* (BDB 871) բառի հունարեն նույնիմաստ բառն է, որն ունի ինչ-որ մեկի, ինչ-որ բանի կամ ինչ-որ տեղի ՅԱՀՎԵՑի բացառիկ նպատակի համար առանձնացված լինելու նշանակությունը (BDB 871): Այն արտահայտում է «սրբվածներ» /the sacred/ անգլերեն բառի գաղափարը: ՅԱՀՎԵՑ Իր բնությամբ (հավիտենական՝ չարարված Հոգի) և Իր բնավորությամբ (բարոյական կատարելությամբ) առանձնացված է մարդկությունից: Նա է չափանիշը, որի միջոցով բոլորը չափվում են և դատվում: Նա հավիտենական և Սուրբ է:

Աստված ստեղծել է մարդուն հաղորդակցվելու համար, սակայն մարդու անկումը (Ծննդոց 3) Սուրբ Աստծո և մեղավոր մարդկության միջև փոխհարաբերության և բարոյական սկզբունքների անդունդ ստեղծեց: Աստված որոշեց վերականգնել Իր գիտակից արարչագործությանը, ուստի Նա կոչ է անում Իր ժողովրդին «սուրբ» լինելու (տես՝ Ղևտ.11:44; 19:2; 20:7,26; 21:8): ՅԱՀՎԵՑի հետ հավատքի փոխհարաբերությամբ Իր ժողովուրդը սուրբ է դառնում Նրա հետ ունեցած ուխտի մեջ մնալու դիրքով, սակայն նրանք նաև կանչված են սուրբ կյանք ապրելու (տես՝ Մատթ.5:48):

Այս արքայության կյանք ապրելը հնարավոր է, քանի որ հավատացյալները լիովին ընդունված և ներված են Հիսուսի կյանքի, գործի միջոցով և իրենց մտքերում ու սրտերում Սուրբ Հոգու ներկայությամբ: Սա ստեղծում է պարադոքսալ իրավիճակ՝

1. սուրբ լինելու՝ հանուն Քրիստոսի միջոցով մեր վրա հագած արդարության (այսինքն՝ Հռոմ.4)
2. կանչված սուրբ կյանք ապրելու՝ հանուն Սուրբ Հոգու ներկայության (տես՝ Հատուկ Թեմա. Սրբացում)

Հավատացյալները «սուրբեր» են (*hagioi*)՝

1. Սուրբի կամքի համաձայն (Հայր Աստծո. տես՝ Հովի.6:29,40; 1 Պետ.1:15-16)
2. Սուրբ Որդու կատարած գործի շնորհիվ (Հիսուսի. տես՝ 2 Կորնթ.5:21; 1 Պետ.1:18-21)
3. մեր մեջ Սուրբ Հոգու ներկայության շնորհիվ (տես՝ Հռոմ.8:9-11,27)

ՆԿ-ը միշտ դիմում է սուրբերին որպես ՀՈԳՆԱԿԻ (բացառությամբ մեկ տեղի՝ Փիլ.4:21, սակայն նույնիսկ այդտեղ համատեքստը ՀՈԳՆԱԿԻ իմաստով է): Փրկված լինել նշանակում է լինել ընտանիքի, համայնքի, մարմնի, շինության մի մաս: Աստվածաշնչյան հավատքը սկսում է անձնական ընդունելությամբ, սակայն հետևանքը լինում է հավաքական փոխհարաբերությունը: Մենք բոլորս էլ պարզևներ ունենք (տես՝ 1 Կորնթ.12:11) Քրիստոսի մարմնի՝ եկեղեցու, առողջության, աճման և բարեկեցության համար (տես՝ 1 Կորնթ.2:7): Մենք փրկվել ենք ծառայելու համար: Սրբությունը մեր ընտանիքի բնութագրականն է:

Հավատացյալների համար այն դարձավ որպես անուն՝ տխրոս (տես՝ Գործք 9:13,32,41; 26:10; Հռոմ.1:7; 1 Կորնթ.1:2; 2 Կորնթ.1:1; Եփես.1:1; Փիլ.1:1; Կող.1:2) և ուրիշներին ծառայության նշանակելու կերպ (տես՝ Հռոմ.12:13; 16:2; Եփես.1:15; Կող.1:4; 1 Տիմ.5:10; Եբր.6:10): Պողոսը հեթանոս եկեղեցիներից հատուկ մեկանգամյա նվիրատվություն վերցրեց Երուսաղեմի Մայր Եկեղեցու կարիքավորների համար (տես՝ Հռոմ.15:25-26; 1 Կորնթ.16:1; 2 Կորնթ.8:4; 9:1):

6:11 «լիակատար վստահություն» Նկատեք, որ սա առնչվում է ապրելակերպի՝ գործերի հետ (տես՝ Հակոբոս, 1 Պետրոս և 1 Հովհաննես): Վստահությունը առաջին հերթին վարդապետությունն է, որ հիմնավորենք, հաստատենք, այլ ապրելակերպ (տես՝ Մատթ.7):

■ **«մինչև վերջ»** Համբերատարությունը ապահովության համար իրական աստվածաշնչյան վարդապետությունն է: Նրանց պտուղներով կճանաչեք նրանց (տես՝ Մատթ.7; Հակ.2:14-26): Հարատևության վերաբերյալ տե՛ս Եբր.4:14 գրառումը, նաև տե՛ս Հատուկ Թեմա Եբր.7:11-ում:

6:12 «չծուլանանք» Սա Եբր.5:11-ի միևնույն «բթանալ» տերմինն է: Այն գործածվել է Եբր.6:11-ի «փութաջանություն» բառի հակադրությամբ: Հավատացյալները չէին աճում Քրիստոսակերպության մեջ և ո՛չ էլ որպես Մեծ Հանձնարարականի Քրիստոնյաներ, որը պարտավոր էին անել (տես՝ Եբր.12:1-3):

■ **«հետևենք նրանց, ովքեր հավատով և համբերությամբ խոստումները ժառանգեցին»**
Հնարավոր է սա ակնարկում է գլուխ 11-ում հավատարիմների վկայակոչմանը: ՀԿ-յան այս հավատարիմ հավատացյալները անցնելով մեծ փորձությունների և ընդհարումների միջով, մինչև վերջ հաստատ մնացին, հաճախ նույնիսկ ֆիզիկական մահվան ելքով (տես՝ գլուխ 11 և Եբր.12:4): Այս պարբերությունը կենտրոնանում է Աստծո խոստումների վրա՝ 6:13-20: Դրանք հաստատ և հավատարիմ են, քանի որ Նա հաստատ և հավատարիմ է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏԱԳՅԱԼԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ (1 Պետրոս 1-ից)
SPECIAL TOPIC: BELIEVERS' INHERITANCE (from 1 Peter 1)

ՀԿ-ում բացի Ղևիի ցեղից բոլոր ցեղերը որպես ժառանգություն ստացան հողատարածք (տես՝ Հեսու 14-22): Ղևտացիները, որպես քահանաների ցեղ, տաճարի սպասավորներ և տեղական վարդապետներ, համարվում էին որպես հենց ՅԱՀՎԵԻՆ իրենց ժառանգությունը ունեցողներ (տես՝ Սաղմ.16:5; 73:23-26; 119:57; 142:5; Ողբ 3:24): ՆԿ-ը գրողները հաճախ վերցնում էին Ղևտացիների իրավունքները և առանձնաշնորհումները և դրանք կիրարկում բոլոր հավատացյալների համար: Սա նրանց կողմից կիրառվող կերպ էր պնդելու, որ Հիսուսի հետևորդներն են Աստծո իրական ժողովուրդը և հիմա բոլոր հավատացյալները կանչված են ծառայելու որպես Աստծո քահանաներ (տես՝ 1 Պետ.2:5,9; Հայտն.1:6), ինչպես որ ՀԿ-ը պնդում է Իսրայելի համար (տես՝ Ելից 19:4-6): ՆԿ-ը չի շեշտադրում որևէ քահանայի՝ իր յուրահատուկ պարտավորություններով, այլ շեշտում է այն ճշմարտությունը, որ բոլոր հավատացյալներն են քահանաներ, որը պահանջում է միասնական ծառայողական վերաբերմունք (տես՝ 1 Կորնթ.12:7): ՆԿ-յան Աստծո ժողովրդին տրվել էր ՀԿ-ի համաշխարհային ավետարանչության առաջադրանքը (տես՝ Ծննդ.12:3; Ելից 19:5բ; Մատթ.28:18-20; Ղուկ.24:46-47; Գործք 1:8; տես՝ Հատուկ Թեմա. ՅԱՀՎԵԻ Հավիտենական Փրկագործության Ծրագիրը):

Սա Հիսուսի կողմից տրված գաղափար է, որպես ստեղծագործության սեփականատեր, քանի որ ստեղծագործության ժամանակ Նա էր Հոր գործակալը՝ կատարողը (տես՝ Հովի.1:3,10; 1 Կորնթ.8:6; կող.1:16; Եբր.1:2-3): Մենք ժառանգակիցներ ենք, քանի որ Նա է ժառանգորդը (տես՝ Հռոմ.8:17; Գաղ.4:7; Կող.3:24): Սուրբ Գիրքն ասում է, որ հավատացյալները ժառանգելու են (տես՝ Գործք 20:32; 26:18; Եփես.1:4; Կող.1:12; 3:24) շատ բաներ՝ Հիսուսի հետ իրենց ընտանեկան կապի շնորհիվ, Ով ամեն ինչի ժառանգորդն է (տես՝ Եբր.1:2): Ուստի, նրանք հետևյալ բաների ժառանգակիցներն են (տես՝ Հռոմ.8:17; Գաղ.4:7)

1. Թագավորության (տես՝ Մատթ.25:34; 1 Կորնթ.6:9-10; 15:50; Եփես.5:5)
2. Հավիտենական կյանքի (տես՝ Մատթ.19:29; Եբր.9:15)
3. Աստծո խոստումների (տես՝ Եբր.6:12)
4. Ըստ Աստծո խոստումների Նրա պահպանության (տես՝ 1 Պետ.1:4-5)

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 6:13-20

¹³Որովհետև, երբ Աստված Աբրահամին խոստում տվեց, քանի որ չկար ավելի մեծը, որով երգվեր, Իր անձի վրա երգվեց, ¹⁴ասելով. «Հիրավի, օրհնելով պիտի օրհնենք քեզ և բազմացնելով՝ պիտի բազմացնենք քեզ»: ¹⁵Եվ այսպես, համբերատարությամբ խոստմանը հասավ: ¹⁶Արդարև, մարդիկ ավելի մեծով են երգվում, և նրանց համար վավերացնող երգումը ամբողջ վիճաբանության ավարտն է: ¹⁷Ահա թե ինչու Աստված, կամենալով խոստման որդիներին առավել ևս ցույց տալ Իր խորհրդի անփոփոխ լինելը՝ այն երգմամբ հաստատեց. ¹⁸որպեսզի երկու անփոփոխելի բաներով, որոնցով անկարելի է, որ Աստված ստի, մենք հաստատուն մխիթարություն ունենանք. մենք, որ ապաստանի համար մեր առջև դրված հույսից կառչեցինք. ¹⁹այս *հույսը*, որը որպես հոգու խարիսխ ունենք, ապահով և անշարժ, որ մտնում է վարագույրից ներս, ²⁰ուր մեզ համար մտավ մեր նախակարապետը՝ Հիսուսն Ինքը, հավիտենական Քահանայապետ կարգվելով՝ ըստ Մելքիսեդեկի կարգի:

6:13-20 Սա պաշտպանության և հույսի հզոր խոստում է՝ հիմնված Աստծո բնավորության և խոստումների վրա (տես՝ Եբր.6:18ա), եթե միայն պատշաճ կերպով դրան անսանք (տես՝ Եբր.6:18բ):

6:13 «Երբ Աստված Աբրահամին խոստում տվեց» Նշվում է Աբրահամը, քանի որ նա է համարվում հրեա ազգի հայրը, որին ՅԱՀՎԵն ուխտի տարբեր խոստումներ տվեց (տես՝ Ծննդ.12,15,17,18,22), ինչպես նաև Մեքիստեդեկի հետ նրա ունեցած փոխհարաբերության պատճառով (տես՝ Ծննդոց 14): Աստծո հանդեպ նրա ունեցած հավատքը օրենքից առաջ էր և կիրառվում է որպես ՆԿ-յան նմուշ՝ հարա-ցույց բոլոր նրանց համար, ովքեր հավատում են՝ հավատք են գործադրում (տես՝ Հռոմեացիների 4):

Աստվածաբանորեն նաև հավանական է, որ Աբրահամը ընտրվեց, քանի որ Աստծո նրան տված խոստումները հիմնված չէին նրա գործերի, այլ Աստծո ոչ պայմանական խոստման վրա (տես՝ Ծննդ.15:12-21, ինչպես «նոր ուխտն» է, տես՝ Երեմ.31:31-34; Եզեկ.36:22-38), մինչ Մովսեսի հետ կատարած ուխտը հիմնված է հնագանդության վրա՝ պայմանական ուխտ, պայմանագիր է (տես՝ 2 Օրինաց 27-28):

6:14 Եբրայեցիների այս բաժինը պարունակում է հեղինակի կողմից Աբրահամի վերաբերյալ ՀԿ-յան մեջբերումներ: Աստված նրան խոստումներ տվեց, որ Իսահակի միջոցով շատ սերունդներ կտա: Աստվածաբանական խնդիրը կայանում է նրանում, որ Աբրահամի իրական սերունդներից ոչ բոլորն էին ՅԱՀՎԵի հավատարիմ հետևորդները: Նրանք «ուխտի», «ընտրյալ» ժողովուրդն էին, սակայն բոլորը չէին, որ անձնապես հավատք ունեին (տես՝ Եբր.6:18բ):

6:15 Սա չի նկարագրում Աբրահամի կատարյալ հավատքը (նա մի քանի կանանցից ունեցավ զավակներ, երկու անգամ փորձեց Սառային նվիրել ուրիշի, որպեսզի փրկի իր կյանքը) Աստծո Խոսքի հանդեպ, այլ նրա հավատարիմ սիրտն ու հնագանդությունը: Աբրահամը բոլոր մարդկանց պես, հավատքի և վախի, բարու և չարի տարօրինակ մի խառնուրդ է:

6:18 «Երկու անփոփոխելի բաներ» Սա վերաբերում է Աստծո երդմանը (այսինքն՝ Սաղմ.110:4-ը մեջբերված Եբր.5:6; 6:20; 7:17) և Աստծո խոստմանը (տես՝ Եբր.6:14): Աստծո Խոսքը մեր երաշխիքն է (տես՝ Ես.55:11; Մատթ.5:17-18):

■ **«որոնցով անկարելի է, որ Աստված ստի»** Հնարավոր է սա ակնարկ է Թվոց 23:19 կամ 1 Թագ. 15:29-ից: Այս նույն ճշմարտությունը հաստատվում է Պողոսի կողմից 2 Տիմ.2:13 և Տիտոս 1:2-ում: Տե՛ս ամբողջական գրառումը Եբր.6:6-ում:

- **«ապաստան ենք գտել /անգլ./»** Հնարավոր է սա կապված է՝
1. ՀԿ-յան ապաստանի քաղաքների հետ (տես՝ Թվոց 35:6; 2 Օր.4:41-43; Հեսու 20)
 2. Փոթորկի ժամանակ ապահով նավահանգստի փոխաբերության հետ (տես՝ Եբր.2:14; 6:19)
 3. Աստծո հետ, որպես ամուր ամրոցի փոխաբերություն, որի մեջ Նրա ժողովուրդը ապաստարան է գտնում (տես՝ Սաղմ.18:1-2; 31:3; 91:2,9; 94:22; 144:2; Ես.17:10; 25:4; Երեմ.16:19; Հովել 3:16; Նաումի 1:7)

■ **«հաստատուն մխիթարություն ունենանք ... մեր առջև դրված հույսից կառչելով»** Համար 18-ում ունենք աստվածաբանական բալանս մի ուժեղ, վստահելի, ամենակալ Աստծո (տես՝ Եբր.6:18ա), որին մարդիկ պետք է անսան, և շարունակեն մինչև վերջ հավատքով անսալ (տես՝ Եբր.6:18բ):

6:19 «խարխիս» Սա մի հնագույն Քրիստոնեական խորհրդապատկեր է՝ ապահովության, անվտանգության և հույսի: Այն գտնվել է Հռոմեական գետնադամբարանների պատերի վրա: Այս բառը ինձ հիշեցնում է այս օրհներգը՝
«Խաղաղ երկնքում խարխիսել եմ հոգիս,
Չեմ նավարկելու էլ ծովերն կատաղի,
Փոթորիկը քշում է մոլեգնած ալիքները,
Բայց ես ապահով եմ շնորհիվ Հիսուսի»:

■ **«անշարժ»** Տե՛ս Հատուկ Թեմա. Երաշխիք, Եբր.2:2:

■ **«որ մտնում է վարագույրից ներս»** Այստեղ հույսի խարխիսը համեմատվում է Հիսուսի հետ որպես քահանայապետ, որը մտնում է երկնային խորանը (տես՝ Եբր.8:5; 9:23), նույնիսկ Սուրբ Սրբոցը, որը խորհրդապատկերում էր հենց Աստծո ներկայությունը: Հավատացյալների հույսը Աստծո բնավորության և Նրա խոստումների և Հիսուս Քրիստոսի կատարած գործի վրա է: Սա Պատռնիզմ չէ (երկրավոր կերպարները ի հակադրություն երկնավոր գաղափարների), այլ երկնային խորանի նմուշը, որ Սինա լեռան վրա ցույց տրվեց Մովսեսին: Այսպիսի դատողությունը (այսինքն՝

երկնավոր բաների երկրավոր պատճենը) դեռևս սկսվել է հույն փիլիսոփա Պլատոնից առաջ: Այն խոսում է մեր անտեսանելի, սակայն հաստատ հույսի մասին, որ ունենք Քրիստոսի մեջ (տես՝ Եբր.9:23):

6:20 «նախակարապետ» Հունարեն այս տերմինը կիրառվում էր (1) առջևից գնացող հետախույզի համար, որը ուսումնասիրում և նշում է ճիշտ ճանապարհը (այսինքն՝ պիոներ) կամ (2) փոքրիկ նավակի համար, որը ավելի մեծ նավերին ուղղորդում է դեպի ապահով նավահանգիստ: Հիսուսը գնացել էր հավատացյալների առջևից բոլոր անհրաժեշտ կերպերով՝ որպես հաղթող, բարեխոս, փրկիչ, քահանա և կատարյալ անբիծ գոհ:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Արդյո՞ք 2-4 համարները Քրիստոնեական հիմքերի ցանկն է, թե Հուդայականության սկզբունքները:
2. Արդյո՞ք Երբրայեցիների գիրքը սովորեցնում է «շնորհքից նահանջել»: Ինչո՞ւ և ինչու ոչ:
3. Ինչո՞ւ է այս գրքի պատմական միջավայրը այդքան կարևոր պատշաճ մեկնաբանության համար:
4. Արդյո՞ք Աստվածաշունչը սովորեցնում է, որ ճշմարիտ փրկվածները մինչև վերջ հաստատ կմնան, թե նրանք, որ հավատքի մեջ մինչև վերջ հաստատ կմնան՝ փրկվածներ են:
5. Հավատացյալներին, թե՞ անհավատներին է ուղղված 4-6 համարների խոսքը: Ինչո՞ւ:
6. Ինչպե՞ս է Եբր.6:9-ի «դուք» բառը կապված Եբր.6:4-ի «դրանք» բառի հետ:
7. Նկարագրեք հավատացյալների կրած հալածանքը:
8. Որո՞նք են Եբր.6:18-ում նշված երկու անփոփոխելի բաները:
9. Ինչպե՞ս է Եբր.6:18-ում հավասարակշռվում Աստծո ամենակալությունը և մարդու ազատ կամքը:
10. Ինչպե՞ս են փոխկապակցված Եբր.6:13-20-ում Աստծո բնավորությունը և Քրիստոսի կատարած գործը:

ԵՔՐԱՅԵՑԻՆԵՐԻ 7

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Մեքիսեդեկի Քահանայական կարգը	Արդարության Թագավորը	Մեքիսեդեկի Քահանայության և Ղևտական Քահանայության համեմատությունը	Մեքիսեդեկ Քահանան	Մեքիսեդեկ
7:1-3	7:1-3	7:1-3	7:1-3	7:1-3
				Մեքիսեդեկը Աբրահամից տասանորդ ընդունում է
			7:4-10	7:4-10
7:4-10	7:4-10	7:4-10		Ղևտական քահանայությունից Մեքիսեդեկի քահանայություն
	Կարիք կա նոր Քահանայության		7:11-14	7:11-12 7:13-14
7:11-19	7:11-19	7:11-14	7:15-19	Հին Օրենքի խափանումը
		7:15-19		Քրիստոսի Քահանայությունը անփոփոխ է
	Նոր Քահանայի Մեծությունը		7:20-22	7:20-25
			7:23-25	Երկնային Քահանայապետի Կատարելությունը
7:20-25	7:20-28	7:20-25	7:26-28	7:26-28
7:26-28		7:26-28		

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու Ուղեցույց»)
 ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն

կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 7:1-3
¹Քանի որ այս Մելքիսեդեկը Սաղեմի թագավորն էր՝ Բարձրյալ Աստծո քահանան, որ դիմավորեց Աբրահամին, երբ վերադառնում էր թագավորներին կոտորելուց և օրհնեց նրան, ²ուստի Աբրահամը ամեն ինչից տասանորդ տվեց. նախ արդարության թագավոր է թարգմանվում և հետո՝ նույնպես Սաղեմի թագավոր, որ նշանակում է խաղաղության թագավոր, ³առանց հոր, առանց մոր, առանց ազգատոհմի, որ ո՛չ օրերի սկիզբ ունի, ո՛չ էլ կյանքի վերջ. սակայն Աստծո Որդու նման լինելով՝ կմնա որպես մշտնջենական քահանա:

7:1 «Մելքիսեդեկ» Նա հեթանոս թագավոր էր՝ քահանա, քանանացիների մի հինավուրց քաղաքի, որն այդ ժամանակ կոչվում էր Սաղեմ, որը հետագայում դարձավ Հեբրուս և ավելի ուշ՝ Երուսաղեմ: Նրա անունը նշանակում է «արդարության իմ թագավոր» (շատ նման է Հեսու 10:1-ում նշված Երուսաղեմի թագավորի անվանը՝ «իմ տերն արդար է»): Նրա տոհմաձառը երբեք չի նշվում, սակայն Աբրահամը մեծարում է նրան: Ահա թե ինչու է նա համարվում Հիսուս Քրիստոսը ներկայացնող ՀԿ-յան այդքան հարմար կերպար: Նրա մասին նշվում է միայն Ծննդ. 14:18-20 և Սաղմ. 110:4-ում: Նրա ինքնության շուրջ բազմաթիվ քննարկումներ են եղել:

1. Ֆիլոյի համար՝ նա մարդկային հոգու խորհուրդն է
2. Օրիգենի համար՝ նա հրեշտակ է
3. Ամբրոզի համար՝ նա Տիրոջ հրեշտակն է
4. Ուրիշների համար՝ նա Իսրայելի ազգային հրեշտակն է՝ Միքայելը
5. Էպիֆանեսի համար՝ նա Սուրբ Հոգու մարմնացումն է
6. Մելքիսեդեկացիների համար՝ նա ավելի մեծ է, քան Մեսիան և բոլոր աղոթքները վեր են բարձրանում նրա միջոցով
7. Որոշ հրեաների, Չերոմի և Լյութերի համար՝ նա է Սեմը՝ Նոյի որդին

Մելքիսեդեկը կիրառվում է որպես Հիսուսի քահանայության տիպար չորս պատճառներով.

1. Աբրահամը տասանորդ մատուցեց նրան (ստորադասները միշտ տասանորդ են վճարում գերադասներին) և հետևաբար ըստ ռաբբիական հերմենևտիկայի Ղևին նույնպես տասանորդ -:մատուցեց (տես՝ Եբր. 7:4-9)
2. Նրա ծնողները չեն նշվում, ուստի ռաբբիական աստվածաբանությունն ասում էր, որ նա ծնողներ չունեի և հետևաբար հավիտենական էր (տես՝ Եբր. 7:3; Սաղմ. 110:4բ)
3. Նա հետագայում սուրբ Երուսաղեմ կոչվող քաղաքի առաջնորդն էր (Սաղեմ, տես՝ Ծննդ. 14:18)
4. Նա Բարձրյալ Աստծո քահանան էր (այսինքն՝ *El Elyon*, տես՝ Ծննդ. 14:18)
5. Նա թույլ է տալիս հեղինակին առանց Ղևտական Քահանայության հաստատելու օրինավոր քահանայություն:

■ **«թագավոր... քահանա»** ՀԿ-ում նա միակ անձնավորությունն էր, որ համադրում էր թագավորություն ու քահանայությունը (այսինքն՝ Սաղմոս 110):

■ **«և օրհնեց նրան»** Ավելի մեծը օրհնում է ավելի փոքրին, հետևաբար Աբրահամը (և համաձայն ռաբբիական կարծիքների, նրա ժառանգը՝ Ղևին) օրհնվեց Մելքիսեդեկի կողմից (տես՝ Ծննդ. 14:19), որը ցույց է տալիս Ահարոնի քահանայության համեմատ իր գերազանցությունը: Այն նաև ցույց է տալիս, որ Հիսուսը, որը Հուդայի ցեղից էր, կարող էր լինել այլ կարգի քահանա:

7:2 «տասանորդ» Նկատելք, որ տասանորդը (տես՝ Ծննդ. 14:20) եղել է ավելի շուտ, քան Մովսիսական Օրենքը: Սա Ծաբաթի և ամեն ինչի երեխայրու պես մի բան էր, որով արտահայտվում է, որ ամեն ինչի Տերը Աստված է (տես՝ Ծննդ. 14:19գ):

■ «անգլ.՝ *իր անվան թարգմանությամբ*» «Արդարության թագավոր» արտահայտության հստակ ստուգաբանությունը անորոշ է, սակայն նմանատիպ մի անվանում տիտղոս է կիրառվում Մեսիայի համար Երեմ.23:6-ում («Տերը՝ մեր արդարությունը») և 33:16-ում («Տերը՝ մեր արդարությունն է»): Ինչպես նաև, Մեսիան արդար է լինելու և խաղաղություն է բերելու (տես՝ Եսայի 9:6; 26:3,12; 32:17; և 54:10):

■ «Արդարության Թագավոր» «Արդարության» համար տե՛ս Հատուկ Թեմա Երբ.1:9-ում:

■ «Մաղեմ» Հնարավոր է այս քաղաքը իր անվանումը ստացել է եբրայերենի *shalom* տերմինից, որը նշանակում է «խաղաղություն»: Որոշ գիտնականներ կարծում են, որ սա վերաբերում է մի հերուսացի աստվածության: Քաղաքը կոչվում է Մաղեմ Ծննդոց 14-ում, սակայն Մաղմ.76:2-ը այն կապում է Երուսաղեմի հետ (այսինքն՝ Միոնը), որը Քանանացիների ժամանակ կոչվում էր Հերուս:

7:3 Սա ռաբբիական հերմենևտիկա է (*midrash*, տե՛ս Հավելված Երեք) համաձայն այն փաստի, որ Մելքիսեդեկի ծագումնաբանությունը տրված չէ Ծննդ.14:18-20-ում: Բոլոր մարդկանց պես Մելքիսեդեկը ուներ ծնողներ, սակայն նա ծառայում է որպես հավիտենական Մեսիայի մեկ այլ տիպար (տես՝ Երբ.7:8): Այս միտքը զարգանում է Երբ.7:8,12,16,17,21,24,25,28-ում:

■ «սկիզբ» Տե՛ս Special Topic: Archē /Հատուկ Թեմա. *Archē*/ Երբ.3:14-ում:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 7:4-10
⁴Այժմ տեսե՛ք, թե ինչպիսի մեծ մեկն էր նա, որ նրան Աբրահամ նահապետն անգամ ավարից տասանորդ տվեց: ⁵Եվ ճշմարտապես Ղևիի որդիներից նրանք, ովքեր ընդունում են քահանայության պաշտոնը, Օրենքի համաձայն ժողովրդից տասանորդ վերցնելու հրահանգ ունեն, այսինքն՝ իրենց եղբայրներից, թեև նրանք Աբրահամի երանքից էին. ⁶սակայն նա, որի ազգատոհմը նրանից չէր, տասանորդ վերցրեց Աբրահամից և օրհնեց նրան, որը խոստումներն ուներ: ⁷Եվ անառարկելի է, որ նվազը լավագույնից է օրհնվում: ⁸Այստեղ մահկանացու մարդիկ են տասանորդ վերցնում, իսկ այնտեղ՝ նա, որի համար վկայվեց, թե կենդանի է: ⁹Եվ կարող եմ ասել, թե Ղևին էլ, որ տասանորդ է ստանում, Աբրահամի մեջ տասանորդ վճարեց: ¹⁰Որովհետև դեռևս իր հոր երանքի մեջ էր, երբ Մելքիսեդեկը նրան դիմավորեց:

7:5 «**թեև նրանք Աբրահամի երանքից էին**» Սա ռաբբիական տրամաբանություն է, հիմնված այն փաստի վրա, որ Ղևին Աբրահամի երանքում էր դեռ (տես՝ Երբ.7:10): Սա հրեական էզզեզետիկա է և ոչ թե գիտական փաստ:

7:7 «**լավագույն**» Եբրայեցիների գրքի սիրտը՝ կենտրոնը, Մովսիսական ուխտի և Քրիստոսով ունեցած նոր ուխտի համեմատությունն է:

Այս հակադրությունը հաճախ արտահայտվում է «լավագույն»՝ «ավելի մեծ» տերմինով (*kreittōu/kreissōu*) որը նշանակում է «ավելի լավ», «գերազանց», «ավելի գերազանց», «ավելի արժեքավոր», «բարձրակարգ»: Սա Եբրայեցիների գրքում պարբերաբար կրկնվող թեմա է:

1. Ավելի լավ, քան հրեշտակները (տես՝ Երբ.1:4)
2. Ավելի լավ բաներ ձեզանից (տես՝ Երբ.6:9)
3. Նվազը լավագույնից է օրհնվում (տես՝ Երբ.7:7)
4. Ավելի լավ հույս (տես՝ Երբ.7:19)
5. Ավելի լավ ուխտ (տես՝ 7:22; 8:6)
6. Ավելի լավ գոհերով (տես՝ Երբ.9:23)
7. Ավելի լավ ունեցվածք՝ հարստություն (տես՝ Երբ.10:34)
8. Ավելի լավ հարություն (տես՝ Երբ.11:35)
9. Ավելի լավ երկիր (տես՝ Երբ.11:16)
10. Աստված ավելի գերազանց բան նախատեսեց (տես՝ Երբ.11:40)
11. Նրա ցողած արյունը ավելի լավ է խոսում (տես՝ Երբ.12:24)

7:8 «**կենդանի է /այրում է/**» Սա վերաբերում է Մելքիսեդեկի հավերժությանը, քանի որ (1) նրա ծնողները (սերնդաբանությունը) չեն նշվում Ծննդոց 14-ում և ոչ էլ հիշատակվում է նրա մահը, ինչպես նաև (2) Մաղմ.110:4բ-ի հատուկ մեկնաբանությունը («հավիտյան»):

7:9-10 Սա ռաբբիական էզզեզետիկա է: Քանի որ Ղևին՝ Ահարոնի ցեղը, Աբրահամի սերունդն է, ապա անալոգիայի համաձայն, հրեական քահանայությունը (այսինքն՝ նույնիսկ Քահանայապետը) տասա-

նորդ վճարեց Մելքիսեդեկին: Հետևաբար, Մելքիսեդեկը՝ ուստի և Հիսուսը հրեա քահանաներից գերազանց է:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ԵՐԱՅԵՑԻՆԵՐԻ 7:11-22

¹¹Ուստի, եթե կատարելությունը դևտական քահանայությամբ լիներ (որովհետև ժողովուրդը նրա ժամանակ օրենքն ստացավ), այլևս ի՞նչ կարիք կար, որ ըստ Մելքիսեդեկի կարգի մեկ ուրիշ քահանա ելներ և չկոչվեր ըստ Ահարոնի կարգի: ¹²Քահանայության փոփոխման հետ, հարկ էր, որ օրենքն էլ փոխվեր: ¹³Որովհետև նա, ում մասին այս բաներն ասվում են, ուրիշ ցեղի է պատկանում, որից ոչ ոք զոհասեղանին չձառայեց: ¹⁴Հայտնի է, թե մեր Տերը Հուդայի ցեղից եկավ. քահանայության վերաբերյալ այդ ցեղի մասին Մովսեսը ոչ մի բան չի ասել: ¹⁵Առավել ևս հայտնի է, որ Մելքիսեդեկի նման մեկ ուրիշ քահանա է բարձրանում, ¹⁶ով ո՛չ թե ըստ մարմնավոր պատվիրանի եղավ, այլ՝ ըստ անվախճան կյանքի գորության: ¹⁷Որովհետև նա վկայում է, թե՛

«ԴՈՒ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՔԱՀԱՆԱ ԵՍ, ԸՍՏ ՄԵԼՔԻՍԵԴԵԿԻ ԿԱՐԳԻ»:

¹⁸Առաջին պատվերը խափանվում է իր տկարության և անօգուտ լինելու պատճառով, ¹⁹որովհետև Օրենքը ոչ մի բան կատարյալ չդարձրեց, սակայն դա եղավ ավելի լավ հույսի գալով, որի միջոցով մոտենում ենք Աստծուն: ²⁰Եվ ավելին՝ նա առանց երդման քահանա չդարձավ. ²¹(որովհետև այն քահանաներն առանց երդման են դարձել. իսկ Սա երդումով, Նրա միջոցով, որ Իրեն ասաց.

«ՏԵՐԸ ԵՐԳՎՈՒՄ Է

ԵՎ ՉԻ ՉԳՋԱ,

Դու հավիտենական քահանա ես՝ ըստ Մելքիսեդեկի կարգի»):

²²այսբանով Հիսուսն ավելի՛ լավ Ուխտի երաշխիքը դարձավ:

7:11 «Եթե» Սա ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ է, որը կոչվում է փաստին հակառակ: Կեղծ փաստարկ է բերվում, որպեսզի բացատրի նշանակությունը: Դևտական քահանայությունը հոգևոր կատարելություն կամ հասունություն չբերեց:

■ **«կատարելություն»** *Telos* բառի հիման վրա հունարեն տերմինների ընտանիքը հիմնականում նշանակում է «հասցնել ավարտին», «վերջացնել» կամ «հասցնել հասունության»: Այստեղ այն վերաբերում է հարմար և արդյունավետ գործող ներկայացուցչի կամ բարեխոսի:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՎԱՐՏ ԿԱՄ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ (TELOS)

SPECIAL TOPIC: END OR FULL (TELOS)

Հոգևոր երևույթների այս կուլմինացիան՝ զագաթնակետը, Եբրայեցիների գրքում պարբերաբար կրկնվող թեմա է:

1. *telos*, ավարտ, իրականացում (Եբր.3:6,14; 6:8,11)
2. *teleiōō*, «կատարյալ դարձնել»
 - ա. (Հիսուս) նրանց փրկության Չորավարին տառապանքների միջոցով կատարյալ դարձնի (տես՝ Եբր.2:10)
 - բ. (Հիսուս) չարչարանքների միջոցով կատարյալ դարձավ (տես՝ Եբր.5:8-9)
 - գ. Օրենքը ոչ մի բան կատարյալ չդարձրեց (տես՝ Եբր.7:19)
 - դ. Որդուն՝ որ հավիտյան սրբացված է /կատարյալ է դարձված/ (տես՝ Եբր.7:28)
 - ե. Պաշտամունք մատուցողին կատարյալ դարձնել (տես՝ Եբր.9:9)
 - զ. Չոհեր մատուցողներին կատարյալ դարձնել (տես՝ Եբր.10:1)
 - է. Հավիտյան կատարյալ դարձրեց նրանց, որ սրբվեցին (տես՝ Եբր.10:14)
 - ը. Նրանք կատարելության չհասնեն առանց մեզ (տես՝ Եբր.11:40)
 - թ. Կատարյալ դարձած արդարների հոգիներին (տես՝ Եբր.12:23)
3. *teleios*, հասուն (տես՝ Եբր.5:14)
4. *teleios*, ավելի կատարյալ խորան (տես՝ Եբր.9:11)
5. *teleiōtēs*, զանք հասունության՝ կատարյալին (տես՝ Եբր.6:1)
6. *teleiōdis*, եթե կատարելությունը դևտական քահանայությամբ լիներ (տես՝ Եբր.7:11)
7. *teleiōtēs*, հավատի Հեղինակին ու Կատարողին (տես՝ Եբր.12:2)

Հիսուսն է բերում հասունություն և կատարելություն, որը Մովսիսական Ուխտը երբեք էլ չկարողացավ անել:

■ **«ղևտական քահանայությամբ լինելը (որովհետև ժողովուրդը նրա ժամանակ օրենքն ստացավ)»** Ըստ երևույթին սա վերաբերում է (1) Մովսեսին, որ Ղևի ցեղից էր և Աստծո պատգամաբերը Իսրայելին՝ զոհ մատուցելու համակարգը տալու հարցում կամ (2) Ղևտացիներին և քահանաներին, որ ժողովրդին սովորեցնում էին օրենքը:

7:12 «օրենքն էլ փոխվելը» Մովսեսական օրենքի նպատակը երբեք էլ արդարություն բերելը չի եղել, այլ մարդու անկման շարունակական հետևանքներն ու Աստծուն հանեցնելու նրանց անկարողությունը ցույց տալը (տես՝ Գաղ.3:24-25): Սա Մովսեսական Օրենքի համար Աստծո նպատակը հասկանալու գլխավոր ճշմարտությունն է:
Համատեքստում այս արտահայտությունը պետք է որ վերաբերի «նոր ուխտին»:

7:13 «որից ոչ ոք զոհասեղանին չձառայեց» Անգլերենում սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որն ակնարկում է, որ զոհաբերությունների համակարգը շարունակական էր: Եթե այդպես է, ուրեմն Եբրայեցիների գիրքը գրվել է Տիտոսից առաջ՝ մ.թ. 70-ին Երուսաղեմի կործանումից առաջ:
ՀԿ-ում Ղևի ցեղից և Ահարոնի ընտանիքից դուրս ոչ ոք իրավունք չունեի ծառայել որպես քահանա: Սակայն Պաղեստինը գրաված Հռոմեական ժամանակաշրջանում իրավիճակն այսպիսին չէր (այսինքն՝ Աննան, Կայիափան):

7:14 «մեր Տերը Հուդայի ցեղից եկավ» Անգլերենում սա ևս մեկ ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: «եկավ/իջավ» բայը նշանակում է «ծագեց» և կիրառվում է՝
1. Արևը բարձրանալու համար (տես՝ Մատթ.5:45)
2. Մոլորակների շարժման համար
3. Բույսի ծելու համար
4. Փոխաբերական իմաստով, մարդու սերնդաբանության համար (տես՝ Չաբ.6:12; Եսայի 11:1; Երեմ.23:5-6)

Այստեղ այն վերաբերում է Ծննդոց 49-ում իր որդիների վերաբերյալ Հակոբի մարգարեությանը (հսկ.՝ 49:10):

■ **«Հուդա»** Հիսուսը Հուդայի ցեղի Դավթի արքայական ընտանիքից էր (տես՝ Ծննդ.49:8-12; 2 Թագ.7:12-16; Եսայի 9:6,7): Շատ դժվար էր Հրեաներին համոզել, որ Հիսուսը քահանայապետ էր, քանի որ Նա Մովսեսի և Ահարոնի պես Ղևիի ցեղից չէր:

7:15 «եթե» Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը ենթադրում է, որ ճիշտ է հեղինակի տեսանկյունից կամ իր գրականական նկատառումներով: Մեկ ուրիշ քահանա էր եկել և նա Մելքիսեդեկի ընտանիքից՝ կարգից էր:

7:16
NASB **«ոչ թե ֆիզիկական պահանջի օրենքի հիման վրա»**
NKJV **«ոչ թե մարմնավոր պատվիրանի օրենքների համաձայն»**
NRSV **«ոչ թե ֆիզիկական ծագման շուրջ օրինավոր պահանջի միջոցով»**
TEV **«ոչ թե մարդկային կանոններով և օրենքներով»**
NJBբ **«ոչ թե ֆիզիկական ծագման օրենքի արժանիքով»**

Հիսուսի քահանայական իշխանությունը չի հիմնվում այն փաստի վրա, թե որ ցեղից կամ ընտանիքից Նա սերվեց, այլ Նրա հավիտենական, անսպասանացու կյանքի սեփականության վրա (այսինքն՝ Մելքիսեդեկի ծնողները չեն նշվում Ծննդոց 14-ում և Սաղմ.104:4-ում կիրառվում է «հավիտյան» բառը): Հիսուսն ունի Աստծո անվերջանալի կյանքը (ինչպես նաև Աստծո երդումն ու խոստումը):

NASB, NRSV, NJB **«անվախճան կյանք»**
NKJV **«անվերջանալի կյանք»**
TEV **«կյանք, որը վերջ չունի»**

Կարծես թե սա առնչվում է ռաբբիական էզզեգետիկ (*Midrash*) կիրառությանը Սաղմ.110:4բ-ից, որ Մելքիսեդեկը ծնողներ չունեի և հետևաբար հավիտենական էր (տես՝ Եբր.7:6,8):

7:17 «Որովհետև Նա վկայում է, թե» Սա մեջբերում է Սեպտուագիստայից՝ Սաղմ.110:4 (ինչպես որ Եբր.7:21):

7:18

NASB	«կա մի կողմ դնել»
NKJV	«կա անվավերացում»
NRSV	«կա խափանում»
TEV	«մի կողմ է դրված»
NJB	«այսպիսով վերացված է»

Այս տերմինը եզրիպատական պապիրուսի մեջ գտել են (1) «մի կողմ դնելու», (2) «անվավեր դարձնելու» կամ (3) «ամբողջովին վճարված լինելու» իմաստով:

Այս համարը խոսում է պատվիրանը մի կողմ դնելու մասին (հավանաբար քահանայապետի ֆիզիկական ծագումնաբանության վերաբերյալ): Ավելի շատ ապշեցուցիչ է այն փաստը, որ ներշնչված ՀԿ հատվածը (տես՝ Մատթ.5:17-19) հնարավոր է «մի կողմ դնել», չնայած սա հենց Գաղատացիների 3-ում Պողոսի ակնարկածն է ի հեճուկս օրենքի փրկարար նպատակը մի կողմ դնելու: Պողոսը, այնուամենայնիվ, հայտարարում է, որ դա եղավ անկում ապրած մարդու պատճառով (տես՝ Հռոմեացիների 7), և ոչ թե ՀԿ-ի: Եբրայեցիների հեղինակը ցույց է տալիս Հիսուսի գերազանցությունը Մովսեսի համեմատ և «Օրենքը» անվանում է թույլ և անօգուտ (տես՝ Եբր.8:13):

■ **«առաջին պատվերը»** Սա վերաբերում է Ղևտական համակարգին կամ Հին Ուխտին, որը բնութագրվում է Մովսիսական օրենսդրությամբ:

■ **«իր տկարության և անօգուտ լինելու պատճառով»** Հռոմեացիների 7 և Գաղատացիների 3 գլուխները օգնում են մեկնաբանելու այս արտահայտությունը: Աստծո Օրենքը չէր, այլ մարդու անկում ապրած էությունը, որ թույլ էր և Օրենքը իր գորու չէր իրականացնելու վերականգնողական այդ գործը:

7:19 «(որովհետև Օրենքը ոչ մի բան կատարյալ չդարձրեց)» Կարդացե՛ք Գաղատացիների 3 և նայե՛ք Հատուկ Թեմա Եբր.7:11-ում:

■ **«ավելի լավ»** Տես ամբողջական գրառումը Եբր.7:7-ում:

■ **«որի միջոցով մոտենում ենք Աստծուն»** Սա կենտրոնական դեր խաղացող հասկացություն է (տես՝ Եբր.7:25; 4:16; 10:1): Հեղինակը հայտարարում է, որ Մովսիսական Օրենքը՝ իր ղևտական քահանայությամբ և զոհերով հանդերձ, ձախողեց մարդկության Աստծուն մոտեցնելու հարցում, սակայն Հիսուսը՝ մեր քահանայապետը, չձախողեց և չի ձախողելու (տես՝ Եբր.10:22; Հակ.4:7):

Նկատե՛ք, որ Հիսուսը բերում է ավելի լավ ուխտ, սակայն միևնույն է այն մի ուխտ է, որին պետք է անսանձ արձագանքեն մարդիկ, ինչպես քահանաներն էին անում (հավատացյալները հիմա նոր ուխտի քահանաներն են՝ հավաքական իմաստով. տես՝ 2 Պետ.2:5,9; Հայտն.6:13-17):

7:21 Սա ևս մեկ մեջբերում է Սեպտուագիստայից՝ Սաղմ.110:4 (ինչպես Եբր.7:17):

7:22

NASB, NRSV,	
TEV, NJB	«երաշխիքը»
NKJV, ASV	«գրավը»

Եբրայերեն հիմքը հանդիսանում է «ձեռքի մեջ դրված երաշխավորություն», որը ակնարկում է վստահություն: Այն սկսել են կիրառվել հունարեն լեզվում գրավի առարկայի կամ բանտային պարտատոմսի համար: Նաև հռոմեական օրենքում այս բառը կիրառվում էր այն բաների համար, որոնք օրինավոր կերպով ապահովագրված էին: Հիսուսը նոր ուխտի արդյունավետության Հոր կողմից տրված երաշխիքն է:

■ **«ավելի լավ ուխտ»** Եբեմ.31:31-34 խոսում է այս «նոր ուխտի» մասին (տես՝ Եզեկ.36:22-36), որը կենտրոնանում է Մուրբ Հոգո կողմից մոտիվացված և առաջ եկած ներքին օրենքի վրա և ոչ թե արտաքին օրենքի, որը հենվում է մարդկային գործի վրա:

«Ավելի լավ» խոսքի համար տես՝ Եբր.7:7 ամբողջական գրառումը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 7:23-25
²³Եվ արդարև՝ շատ քահանաներ կային, որովհետև նրանք մահվան պատճառով չէին կարող շարունակել: ²⁴Բայց այս Մարդը, քանի որ հավիտենական է, անանցանելի քահանայություն ունի: ²⁵Ուստի և Նա կարող է լիակատար փրկել բոլոր նրանց, ովքեր Իրենով են մոտենում Աստծուն, քանի որ Նա հավիտյան ապրում է՝ նրանց համար բարեխոսելու:

7:23 Սա ևս մեկ համեմատություն է Հիսուսի և ՀԿ-ի քահանաների միջև: Այս մեկն առնչվում է իրենց քանակի և պաշտոնի մեջ ժամանակի հետ:

7:24 Սա ռաբբիական հետևություն է՝ Ծննդոց 14-ի հիման վրա, որտեղ Մելքիսեդեկի ծագումնաբանությունը տրված չէ, և Սաղմոս 110-ի հիման վրա, որն ակնարկում է Մելքիսեդեկին և կիրառում «հավիտյան» տերմինը (տես՝ Սաղմ.110:4բ):

7:25

- NASB «հավիտյան փրկել»
- NKJV «բացարձակապես փրկել»
- NRSV «բոլոր ժամանակներում փրկել»
- TEV «հիմա և ընդմիջտ փրկել»
- NJB «փրկելու իշխանությունը բացարձակ է»

Ինչպես որ վերը տրված անգլերեն թարգմանություններն են ցույց տալիս, այս տերմինը ունի մի քանի նշանակություն: Նա կարող է կատարելապես, բոլորին և հավիտյան փրկել (տես՝ Եբր.10:14), քանի որ Նա շարունակում է մնալ «հավիտյան» ավելի լավ քահանա: Տես Հատուկ Թեմա. Երաշխիք, Եբր.3:14-ում:

■ **«նրանց»** Սա տիեզերական հրավեր է: Ով էլ որ լինի, կարող է գալ (տես՝ Հովհ.1:12; Հռոմ.10:9-13; 1 Տիմ.2:4; 2 Պետ.3:9):

■ **«ովքեր Իրենով են մոտենում Աստծուն»** Հիսուսը Աստծո փրկության ծրագիրն է (տես՝ Հովհ.10:9; 14:6): Ով որ կամենում է, կարող է գալ, սակայն նրանք պետք է գան Նրան հավատալով և շարունակեն Նրան հավատալով (ՆԵՐԿԱ Ժամանակի ԴԵՐԲԱՅ):

■ **«Նա հավիտյան ապրում է՝ նրանց համար բարեխոսելու»** Հիսուսի գործը խաչով չավարտվեց, այլ նույնիսկ այսօր էլ Նա դեռ աղոթում է և բարեխոսում հավատացյալների համար (տես՝ Եբր.9:24; Եսայի 53:12; Հռոմ.8:34; 1 Հովհ.2:1):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 7:26-28
²⁶Որովհետև մեզ ճիշտ այսպիսի քահանայապետ էր վայել՝ սուրբ, անմեղ, անարատ, մեղավորներից զատված և երկինքներից վեր բարձրացած, ²⁷Ով կարիք չունի օրական նախ Իր մեղքերի համար զոհ մատուցելու և ապա՝ ժողովրդի մեղքերի համար, ինչպես անում էին քահանայապետները. քանի որ Նա մեկ անգամ ընդմիջտ կատարեց դա, երբ Իր անձը պատարագ մատուցեց: ²⁸Որովհետև Օրենքը տկարություններ ունեցող մարդկանց է քահանայապետներ կարգում, բայց երդման խոսքը, որ Օրենքից հետո էր, *կարգում է Որդուն՝ Որն հավիտյան սրբացված է:*

7:26 Հավանաբար սա մեջբերում է վաղ շրջանի որևէ օրհներգից կամ բանաստեղծությունից (ինչպես Փիլ.2:6-11; 1 Տիմ.3:16; 2 Տիմ.2:11-13 և միգուցե 1 Տիմ.1:17; 6:15-16): «Սուրբ» տերմինը կարող է նշանակել «ողորմած» LXX-ից (տես՝ Սաղմ.16:10): «Անքիժ» տերմինը զոհերին վերաբերող տերմին է, սովորաբար ՀԿ-ում թարգմանվում է «անարատ»: Սա մի հրաշալի դավանության ամփոփում է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՆՄԵՂ, ԱՆԱՐԱՏ, ՀԱՆՑԱՉՈՒՐԿ, ԱՌԱՆՑ ՆԱԽԱՏԻՆՔԻ
SPECIAL TOPIC: BLAMELESS, INNOCENT, GUILTLESS, WITHOUT REPROACH

Ա. Բացման սահմանումներ

1. Այս հասկացությունը աստվածաբանորեն նկարագրում է մարդու սկզբնական վիճակը (այսինքն՝ Ծննդոց 1, Եղեմի Պարտեզը):

2. Մեղքը և ապստամբությունը թուլացրեցին կատարյալ փոխհարաբերության այս կարգավիճակը (այսինքն՝ Ծննդոց 3):
3. Մարդկությունը (արու և էգ) փափագում է Աստծո հետ իր փոխհարաբերության վերականգնման, քանի որ նրանք ստեղծվել են Նրա պատկերով ու նմանությամբ՝ այսինքն՝ (այսինքն՝ Ծննդ. 1:26-27):
4. Աստված մեղավոր մարդկության հետ գործ ունեցավ մի քանի կերպերով՝
 - ա. աստվածավախ առաջնորդների միջոցով (այսինքն՝ Աբրահամ, Մովսես, Եսայի)
 - բ. զոհաբերության համակարգի միջոցով (այսինքն՝ Ղևտացիների 1-7)
 - գ. աստվածահաճո օրինակների միջոցով (այսինքն՝ Նոյ, Հոբ)
5. Ի վերջո Աստված ուղարկեց Մեսիային՝
 - ա. որպես Իր իսկ կատարյալ հայտնությունը (տես՝ Հովհ. 1:1-14; Կող. 1:13-17; Եբր. 1:2-3)
 - բ. որպես մեղքի համար կատարյալ զոհ (տես՝ Մարկ. 10:45; 2 Կորնթ. 5:21)
6. Քրիստոնյաները անմեղ են դարձնում՝
 - ա. օրինական ճանապարհով՝ Քրիստոսի փոխանորդական արդարությամբ (տես՝ Հռոմ. 4:3,6,8, 11,22,23,24; Հակ. 2:23)
 - բ. աստիճանաբար Սուրբ Հոգու կատարած գործի միջոցով (Հովհ. 16:8-11)
 - գ. Քրիստոնեության նպատակը Քրիստոսակերպությունն է (տես՝ Հռոմ. 8:28-30; 2 Կորնթ. 3:18; Գաղ. 4:19; Եփես. 1:4; 4:13; 1 Թեսաղ. 3:13; 4:3; 5:23; 2 Թեսաղ. 2:13; Տիմ. 2:14; 1 Պետ. 1:15), որը իրականում Ադամի և Եվայի մեջ մարդկության կողմից կորցրած Աստծո պատկերի վերականգնումն է:
7. Երկինքը Եղեմի Պարտեզի կատարյալ փոխհարաբերության վերականգնումն է: Երկինքը Նոր Երուսաղեմն է, որն իջնելու է Աստծո ներկայությունից (տես՝ Հայտն. 21:2) սրբազորված երկիր (տես՝ 2 Պետ. 3:10): Աստվածաշունչը սկսում և ավարտվում է միևնույն թեմաներով:
 - ա. Աստծո հետ մտերմիկ, անձնական փոխհարաբերություն
 - բ. պարտեզի միջավայրում (Ծննդոց 1-2 և Հայտնություն 21-22)
 - գ. մարգարեական խոսքով՝ կենդանիների ներկայությունը և նրանց հետ միասին ապրելը (տես՝ Եսայի 11:6-9)

Բ. Հին Կտակարան

1. Գոյություն ունեն այնքան շատ եբրայերեն բառեր, որոնք կրում են կատարելության, անմեղության, անարատության նշանակությունը, որ դժվար կլինի անվանել և ցույց տալ բոլոր մանրակրկիտ առնչությունները՝ կապերը:
2. Ահա այն հիմնական տերմինները, որոնք կրում են կատարելության, անմեղության կամ անարատության նշանակությունը (համաձայն Ռոբերտ Բ. Գրդլսթոունի, *Հին Կտակարանի Հոմանիքներ*, գրքի, էջ՝ 94-99 /Robert B. Girdlestone, *Synonyms of the Old Testament*/).
 - ա. *shalom* (BDB1022, KB 1532)
 - բ. *thamam* (BDB1070, KB 1743)
 - գ. *calah* (BDB478, KB 476)
3. Մեպտուազինտան (այսինքն՝ առաջին դարի եկեղեցու Աստվածաշունչը) եբրայերեն այս հասկացությունները թարգմանում է Կոյնե Հունարեն տերմինների, որոնք կիրառվում են ՆԿ-ում (տես՝ ցածր Գ. կետը)
4. Հիմնական նշանակությունը կապված է զոհաբերության համակարգի հետ
 - ա. *amōmos* (BDB 1071, տես՝ Ելից 29:1; Ղևտ. 1:3,10; 3:1,6; Թվոց 6:14)
 - բ. *amiantos* և *aspilus* նաև ունեն հեթանոսական նշանակություն

Գ. Նոր Կտակարան

1. Օրինական հասկացությունը
 - ա. Եբրայերենում օրինական հեթանոսական իմաստը թարգմանվում է *amōmos* (BDB 1071, տես՝ Եփես. 5:27; Փիլ. 2:15; 1 Պետ. 1:19)
 - բ. Հունարենում օրինական նշանակությունները (տես՝ 1 Կորնթ. 1:8; Կող. 1:22)
2. Քրիստոսն է անմեղ, անբիժ և անարատը (*amōmos*, տես՝ Եբր. 9:14; 1 Պետ. 1:19)
3. Քրիստոսի հետևորդները պետք է հետամուտ լինեն Նրան (*amōmos*, տես՝ Եփես. 1:4; 5:27; Փիլ. 2:15; Կող. 1:22; 2 Պետ. 3:14; Հուդա 1:24; Հայտն. 14:5)
4. Այս հասկացությունը նաև կիրառվում է եկեղեցու առաջնորդների համար
 - ա. *aneglētos*, «առանց դատապարտության» (տես՝ 1 Տիմ. 3:10; Տիտոս 1:6-7)
 - բ. *anepileptos*, «քննադատությունից վեր» կամ «առանց նախատիների» (տես՝ 1 Տիմ. 3:2; 5:7; 6:14; Տիտոս 2:8)
5. «Անարատ» հասկացությունը (*amiantos*) կիրառվում է՝
 - ա. Քրիստոսի համար (տես՝ Եբր. 7:26)
 - բ. Քրիստոնյայի ժառանգության համար (տես՝ 1 Պետ. 1:4)

6. «Լիարժեքության» կամ «ամբողջականության» հասկացությունը (*holoklēria*) (տես՝ Գործք 3:16; 1 Թեսաղ.5:23; Հակ.1:4)
7. «Առանց մեղադրանքի», «անհանցանք անմեղություն» հասկացությունը փոխանցվում է *amemptos* տերմինի միջոցով (տես՝ Ղուկ.1:6; Փիլ.2:15; 3:6; 1 թեսաղ.2:10; 3:13; 5:23)
8. «Մեղադրանքի ենթակա չլինելու» հասկացությունը փոխանցվում է *amōmētos* (տես՝ 2 Պետ.3:14)
9. «Անբիծ» «անարատ» հասկացությունը հաճախ կիրառվում է այնպիսի հատվածներում, որտեղ կան վերը նշված տերմիններից որևէ մեկը նույնպես (տես՝ 1 Տիմ.6:14; Հակ.1:27; 1 Պետ.1:19; 2 Պետ.3:14)

Գ. Երբայերենում և հունարենում կիրառված բառերի քանակը, որոնք փոխանցում են այս հասկացության իմաստը, ցույց է տալիս դրա կարևորությունը: Աստված հոգացել է մեր կարիքը Քրիստոսի միջոցով և այժմ մեզ կոչ է անում Նրա նման լինելու:

Հավատացյալները պաշտոնապես, իրավաբանորեն՝ դատական կարգով, հռչակված են «ճիշտ», «արդար», «անմեղ» Քրիստոսի գործի շնորհիվ: Այժմ հավատացյալները պետք է գրավեն իրենց դիրքը: «Քայլենք լույսի մեջ, ինչպես Նա է լույսի մեջ» (տես՝ 1 Հովհ.1:7): «Քայլենք մեր կոչմանն արժանի» (տես՝ Եփես.4:1,17; 5:2,15): Հիսուսը վերականգնել է Աստծո պատկերը մեր մեջ: Մտերմիկ փոխհարաբերությունը այժմ հնարավոր է, սակայն հիշեք, որ Աստված ուզում է այնպիսի մարդիկ, որոնք այս կործանվող աշխարհում (այսինքն՝ ազգերի մեջ) կարտացոլեն Իր բնավորությունը, ինչպես Իր Որդին արեց: Մենք կանչված ենք սրբության (տես՝ Մատթ.5:20,48; Եփես.1:4; 1 Պետ.1:13-16), Աստծո սրբությանը, ոչ միայն օրինապես, այլ բացառապես:

■ **«մեղավորներից զատված»** Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է: Այն չի արտացոլում Հիսուսի մարդկությունը (տես՝ Փիլ.2:6-7), այլ խոսում է Նրա անմեղության մասին (տես՝ Եբր.4:15; 9:14; 2 Կորնթ.5:21; 1 Պետ.2:22; 1 Հովհ.2:1; 3:5):

■ **«երկինքներից վեր բարձրացած»** Հնարավոր է սա (1) նախապատվության՝ գերակայության խոսք է, (2) հղում գնոստիկ սուտ վարդապետների այն տեսակետին, որ փրկությունը անցնում է հրեշտակային ուրարների միջով (տես՝ Եբր.4:14), կամ (3) հարությանը՝ համբարձմանը վերաբերող խոսք:

7:27 Ըստ երևույթին սա վերաբերում է Քավության Օրվան (տես՝ Ղևտացիների 16), սակայն այստեղ այն կիրառվում է ամենօրյա զոհաբերությունների իմաստով (ՀԿ-ում պարբերաբար կատարվող): Պատմականորեն և ռաբբիների կողմից հաստատված է, որ ուշ Հուդայականության մեջ քահանայապետը ուղղակիորեն ներգրավված էր ամենօրյա զոհեր մատուցելու մեջ, սակայն հավանական է, ոչ խորանի ժամանակաշրջանում: Տե՛ս **SPECIAL TOPIC: JESUS AS THE HIGH PRIEST** /Հատուկ Թեմա. Հիսուսը որպես Քահանայապետ/, Եբր.2:17:

«Նա մատուցեց» Սա միևնույն տերմինն է, որ կիրառվում է Մեպտուազինտայում՝ Եսայի 53:11-ում (LXX), «կրել»: Ոմանք սա դիտարկում են որպես այն ծուխը, որ բարձրանում էր զոհեր մատուցելիս դեպի վեր՝ Աստծուն:

■ **«Նա մեկ անգամ ընդմիշտ կատարեց դա»** Եբրայեցիների գիրքը շեշտադրում է Հիսուսի մեկ անգամյա զոհաբերական մահվան վերջնական լինելը: Այս մեկ անգամ արված փրկությունը և ներումը իրականացված է հավիտյանս (տես՝ «մեկ անգամ» [*ephapax*], Եբր.7:27; 9:12; 10:10 և «մեկ անգամ բոլորի համար» [*hapax*], Եբր.6:4; 9:7,26,27,28; 10:2; 12:26,27): Սա անընդհատ կատարվող զոհաբերությունների հաստատությունն է:

■ **«Իր անձը պատարագ մատուցեց»** Հիսուսը քահանայապետն է (տես՝ Մաղմ.110:4) և զոհը (տես՝ Եսայի 53:10) երկնային սրբարանի (տես՝ Եբր.9:24): Սա փոխանորդական, ուրիշի փոխարեն արված քավության ՆԿ-յան շեշտադրության սյունն է (տես՝ Մարկ.10:45; Հռոմ.8:3; 2 Կորնթ.5:21):

7:28 «Օրենքը տկարություններ ունեցող մարդկանց է քահանայապետներ կարգում, բայց երդման խոսքը, որ Օրենքից հետո էր» Սա իրենից ներկայացնում է Մովսեսի գրած ծիսակարգերի և Մաղմոս 110:4-ի «երդման» միջև հակադրություն:

■ **«կարգում է Որդուն»** Հիսուսը գերազանց քահանա է, քանի որ Նա Աստծո ընտանիքի մասն է կազմում (այսինքն՝ «որդի», տես՝ Եբր.1:2; 3:6; 5:8): Այս մեջբերումը կարծես թե միացնում է Մաղմոս 2 և Մաղմոս 110, որոնք Թագավորական և Քահանայական Մաղմոսներն են: Նա միավորում է ՀԿ-ի երկու օձված պաշտոնները Իր մեջ Հոր երդումով:

■ «հավիտյան սրբացված է» Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐՔԱՅ է: Նա կատարելագործվել՝ սրբացվել է (մարդկորեն ասած) չարչարանքի միջոցով և այս կատարելությունը շարունակվում է (տես՝ Եբր.2:10; 5:8-9): Տե՛ս Հատուկ Թեմա, Եբր.7:11:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ է հեղինակը այսքան երկար զարգացում տալիս Հիսուսի քահանայապետ լինելու հասկացությանը:
2. Ինչպիսի՞ կապ կա Ղևիի և Մելքիսեդեկի միջև:
3. Ի՞նչ կապ ունի Սաղմոս 110-ը Ծննդոց 14:18-20-ի հետ:
4. Ինչո՞ւ է Մելքիսեդեկը գործածվում որպես Մեսիայի տիպար:
5. Ո՞վ էր Մելքիսեդեկը:

ԵՔՐԱՅԵՑԻՆԵՐԻ 8

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Նոր և ավելի լավ Ուխտի Քահանայապետը	Նոր Քահանայական ծառայությունները	Երկնային Սրբարանը և Նոր Ուխտը	Հիսուսը՝ մեր Քահանայապետը	Նոր Քահանայությունը և Նոր Սրբարանը
8:1-6	8:1-6	8:1-7	8:1-2 8:3-6	8:1-5 Քրիստոսը Ավելի Հրաշալի Ուխտի Միջնորդն է 8:6-13
8:7-13	Նոր Ուխտ 8:7-13	8:8-13	8:7-13	

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու Ուղեգույց»)

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեգույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՑԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԵՔՐԱՅԵՑԻՆԵՐԻ 8:1-13

Ա. Սա ընթերցողի հասունության անհրաժեշտության հետ կապված համակցված համատեքստի մի մասն է: Այս բաժինը սկսվում և շարունակվում է Եբր.5:11-10:18, փակագծերի մեջ տալով Եբր.5:12-6:20 զգուշացումը:

Բ. Մինչ Եբրայեցիների 2-ը զարգանում է կիրառելով Սաղմոս 8-ը, գլուխներ 3 և 4 զարգանում են կիրառելով Սաղմոս 110, իսկ գլուխ 8-ը՝ Եբեմ.31:31-34 (Եբրայեցիների 10 կիրառելու է Սաղմոս 40):

Գ. Երկնքում գտնվող ճշմարիտ խորանի թեման, որը ակնարկվում է Եբր.6:19-20 և 8:2-ում, լիարժեք կերպով չի զարգանալու մինչև գլուխ 9-ը:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ԵՐԱՅԵՑԻՆԵՐԻ 8:1-13

¹Արդ, մեր ասածների բովանդակությունն այս է. մենք ունենք այնպիսի մի Քահանայապետ, որ երկնքում Գերազանցության գահի աջ կողմում է նստած, ²Պաշտոնյա Սրբարանի և ճշմարիտ խորանի, որ Տե՛րը կանգնեցրեց, և ոչ թե մարդը: ³Քանի որ ամեն մի քահանայապետ կարգվում է ընծաներ և զոհաբերություններ մատուցելու համար, ուստի անհրաժեշտ է, որ այս Մեկը նույնպես մատուցելու մի բան ունենա: ⁴Եթե երկրի վրա լինեք, քահանա չէր լինելու, քանի որ կային քահանաներ, որոնք Օրենքի համեմատ պատարագներ էին մատուցում: ⁵որոնք ծառայում են երկնավոր բաների օրինակով և սավերով, ինչպես Աստուծուց պատվիրվեց Մովսեսին, երբ շինելու էր խորանը. «ՏԵՄ, - ասում է Նա, - ՈՐ ԱՄԵՆ ԻՆՉ ԸՍՏ ԱՅՆ ՕՐԻՆԱԿԻ ԾԻՆԵՍ, ՈՐ ՑՈՒՅՑ ՏՐՎԵՑ ՔԵՉ ԼԵՌԱՆ ՎՐԱ»: ⁶Բայց հիմա Նա այնքան ավելի գերազանց պաշտոնի հասավ, որքանով Նա միջնորդն է ավելի լավ մի ուխտի՝ ավելի լավ խոստումների վրա հիմնված: ⁷Եթե առաջինն անթերի լինեք, ապա երկրորդի համար տեղ չէր փնտրվի: ⁸Քանզի նրանց հանդիմանելով ասում է. «ԱՀԱ ՕՐԵՐ ԵՆ ԳԱԼԻՍ, - ԱՍՈՒՄ Է ՏԵՐԸ, - ԵՐԲ ԵՍ ԻՍՐԱՅԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՒՂԱՅԻ ՏԱՆ ՀԵՏ ՆՈՐ ՈՒԽՏ ԵՄ ԱՆԵԼՈՒ. ⁹ԲԱՅՑ ՈՉ ԱՅՆ ՈՒԽՏԻ ՆՄԱՆ, ՈՐ ՆՐԱՆՑ ՀԱՅՐԵՐԻ ՀԵՏ ԿՆՔԵՑԻ ԱՅՆ ՕՐԸ, ԵՐԲ ՆՐԱՆՑ ՁԵՌՔԻՑ ԲՈՆԵՑԻ՝ ԵԳԻՊՏՈՍԻ ԵՐԿՐԻՑ ԴՈՒՐՍ ՀԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ. ԲԱՆԻ ՈՐ ՆՐԱՆՔ ԻՄ ՈՒԽՏԻ ՄԵՉ ՉՄՆԱՅԻՆ, ԵՍ ԷԼ ԱՆՀՈԳ ԵՂԱ ՆՐԱՆՑ ՀԱՆԳԵՊ, - ԱՍՈՒՄ Է ՏԵՐԸ: ¹⁰ԱՅՍ Է ԱՅՆ ՈՒԽՏԸ, ՈՐ ԻՍՐԱՅԵԼԻ ՏԱՆ ՀԵՏ ՊԻՏԻ ԱՆԵՄ ԱՅՆ ՕՐԵՐԻՑ ՀԵՏՈ, - ԱՍՈՒՄ Է ՏԵՐԸ, - ԻՄ ՕՐԵՆՔՆԵՐԸ ՊԻՏԻ ԴՆԵՄ ՆՐԱՆՑ ՄՏՔԻ ՄԵՉ, ՆՐԱՆՑ ՍՐՏՈՒՄ ՊԻՏԻ ԳՐԵՄ ԴՐԱՆՔ, ՈՒ ԵՍ ՆՐԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՍՏՎԱԾ ՊԻՏԻ ԼԻՆԵՄ, ՆՐԱՆՔ ԷԼ ԻՆՉ՝ ԺՈՂՈՎՈՒՐԳ: ¹¹ԵՎ ՆՐԱՆՑԻՑ ՈՉ ՄԵԿԸ ՉԻ ՍՈՎՈՐԵՑՆԵԼՈՒ ԻՐ ԸՆԿԵՐՈՋԸ, Ո՞Չ ԷԼ ՈՐԵՎԷ ՄԵԿՆ՝ ԻՐ ԵՂԲՈՐԸ, ԱՍԵԼՈՎ «ՃԱՆԱԶԻՐ ՏԻՐՈՋԸ», ՈՐՈՎՀԵՏԵՎ ԲՈԼՈՐԸ ՊԻՏԻ ՃԱՆԱԶԵՆ ԻՆՉ՝ ՓՈՔՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵԾԸ. ¹²ՈՐՈՎՀԵՏԵՎ ՆՐԱՆՑ ԱՆԻՐԱՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԻՏԻ ՆԵՐԵՄ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԵՂՔԵՐՆ ՈՒ ԱՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՅԼԵՎՍ ՉՊԻՏԻ ՀԻԾԵՄ»: ¹³Հենց նրանով, որ Նոր ուխտ է կոչում, առաջինը հին է դարձնում: Իսկ ինչ հնանում է և ծերանում, մոտ է անհետանալու:

- 8:1**
NASB, NKJV,
NRSV «կարևոր իմաստը»
TEV «ամբողջ իմաստը»
NJB «հիմնական իմաստը»

Սա հունարենի «գլուխ» տերմինի ձևերից է (*kephalē*), որը այլաբանորեն կիրառվում էր գլուխարի ընդհանուր չափի համար (տես՝ Գործք 22:28): Այս տերմինը ունի հավելյալ փոխաբերական իմաստ (1) մինչ այդ պահը գրքում ներկայացված փաստերի ամենակարևոր կետը կամ (2) արդեն իսկ տրված փաստարկի ամփոփումը:

■ **«քահանայապետ»** Հիսուսի համար գործածվող այս տիտղոսը կարելի է գտնել միայն Եբրայեցիների գրքում (տես՝ Եբր.2:17; 3:1; 4:14-15; 5:10; 6:20; 7:26; 8:1,3; 9:11,25): Մեսիայի քահանայական էությունը հայտնվում է Սաղմոս 110 և Չաքարիա 3 և 4-ում: Նա թե՛ քահանա է և թե՛ զոհ (տես՝ Եսայի 53): Նա կանգնում է Աստծո առջև մարդկության համար և մատուցում Իրեն որպես մեղքի խնդրի լուծում:

■ **«որ նստած է»** Սա Սաղմոս 110-ի շարունակվող կիրարկումն է (այսինքն՝ Եբր.8:2): Այն վերաբերում է Քրիստոսի կատարած գործին: Այնուամենայնիվ, այն ունի թագավորական և ոչ թե քահանայական նշանակություն: Ոչ մի քահանա երբևէ չի նստում, այլ միայն թագավորները (տես՝ Եբր.1:3):

■ **«աջ կողմում»** Սա անտրոպոմորֆիկ արտահայտություն է՝ իշխանության և գորության դիրքի համար (տես՝ Եբր.1:3,13; 8:1; 10:12-13; 12:2; Գործք 2:33-35):

■ **«երկնքում /անգլ.՝ երկինքներում/ Գերազանցության գահի»** Աստված չունի ֆիզիկական գահ, քանի որ Նա հոգի է: Սա անտրոպոմորֆիկ արտահայտություն է, որն Աստծուն նկարագրում է մարդկային տերմիններով և կատեգորիաներով: Սա խուսափողական կամ այլաբանական մի կերպ է Աստծո մասին առանց Նրա անունը նշելու խոսելու (տես՝ Եբր.12:2):

«Երկինքներ» տերմինը ՀՌԳՆԱԿԻ է, ինչպես ՀԿ-ում: Տրված է ՀՌԳՆԱԿԻ թվով, քանի որ վերաբերում է մի քանի մակարդակների՝

1. Երկրի վրա գտնվող մթնոլորտը, որտեղ թռնում են թռչունները և ձևավորվում են ամպերը (տես՝ Ծննդ.1:1)
2. Աստղազարդ երկինքը՝ երկնավոր լուսատուների, արևի, լուսնի, աստղերի և մոլորակների տարածությունը (տես՝ Ծննդ.1:14)
3. Հենց Աստծո ներկայությունը և հրեշտակային թագավորության տարածքը

Ռաբբիները հաճախ բանավիճում էին, թե արդյոք գոյություն ունի երեք երկինք (տես՝ 2 Կորնթ.12:2), թե յոթ (այսինքն՝ ոչ թե Աստվածաշնչից, այլ առաջին դարի ռաբբիական աղբյուրներից): Մի քանի մակարդակների այս գաղափարը կարելի է տեսնել 2 Օր.10:14, 3 Թագ.8:27 և Սաղմ.68:33; 148:4: Գնոստիկները գործածում էին բազմակի երկինքների այս հասկացությունը պնդելու հրեշտակային իշխանության աստիճանները: Ամեն դեպքում, Հիսուսն անցավ դրանց միջով (տես՝ Եբր.4:14): ՀՌԳՆԱԿԻՆ ի հակադրություն ԵՉԱԿԻ թվի *ouranos*-ի (երկինք), կարծես թե աստվածաբանորեն նշանակալի չէ Եբրայեցիների գրքում (տես՝ Եբր.9:23 ի հակադրություն 9:24):

8:2 «խորան» Սա ակնարկում է երկնքում գտնվող կատարյալ խորանին (տես՝ Եբր.6:19-20), որը երբ հայտնվեց Մովսեսին Սինա լեռան վրա և կառուցվեց անապատում դեգերելու ընթացքում (տես՝ Ելից 25-40) պարզապես դրա կրկնօրինակն էր (տես՝ Եբր.9:11,24):

■ **«որ Տերը կանգնեցրեց, և ոչ թե մարդը»** Հնարավոր է սա ակնարկում է Սեպտուագինտայի (LXX) թարգմանության Ելից 33:7 (Աստծուն հանդիպելու հատուկ տեղը) կամ հնարավոր է պարզապես մեկ այլ կերպ է Աստծո կողմից պատրաստված երկնային խորանը նկատի ունենալու (տես՝ Եբր.11:10):

8:3 «մատուցել» Սա շեշտադրում է Քրիստոսի գոհի փոխանորդական քավությունը: Նա մատուցելու էր Իր կյանքը:

8:4 «եթե երկրի վրա լինեք, քահանա չէր լինելու» Սա ԵՐԿՐՈՐԳ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը կոչվում է փաստին հակառակ (տես՝ Եբր.4:8; 7:11; 8:4,7; 10:2; 11:15): Հիսուսը Ղևիի քահանայական ցեղից չէր, այլ Հուդայի թագավորական ցեղից: Հիսուսի քահանայական ծառայությունը վերջին հաշվով իրականացվեց երկնքում:

8:5 «երկնավոր բաների օրինակ և ստվեր» «Օրինակ» և «ստվեր» տերմինների կիրառությունը հիշեցնում են Ալեքսանդրիացի Ֆիլոյի գրությունները՝ մի հրեա գրող և փիլիսոփա, որն ապրել է Ք.Ա.20-Մ.թ.42թ. և եղել է Պլատոնի հետևորդը: Նա ՀԿ-ը ներկայացնում էր ավեզորիկ տեսքով՝ փորձելով այն դարձնել ավելի հասու հույն հասարակության համար և պաշտպանել Պլատոնիզմը որպես ՅԱՀՎԵԻզմի լուսաբանման միջոց:

Սակայն, այս սուրբգրային հատվածը չի պատկերում Ֆիլոյին, այլ հնագույն հրեական այն ավանդույթը, որ Մովսեսին Սինա լեռան վրա տրվեց երկնային սրբարանի կրկնօրինակը՝ անապատում դեգերելու ժամանակաշրջանի խորանը: Այսպիսի դատողությունը առկա է նաև Մեռյալ Ծովի Գալարներում, որը ցույց է տալիս, որ սա հատուկ չէր Պլատոնին (այսինքն՝ հույն փիլիսոփային): Հետաքրքիր է, որ Եբրայեցիների հեղինակը երբեք չի քննարկում Սողոմոնի կամ Հերովդեսի Տաճարները (ոչ էլ դրանց ծիսակարգերը): Սրանք երբեք էլ Աստծո կողմից կարգադրված չէին, ինչպես որ խորանը (տես՝ Ելից 25-40), չնայած որ ըստ 1 Մնաց.28:19-ի կարելի է ասել, որ Սողոմոնի ծրագրերը երկնքից էին ներշնչված:

Հրեական ավանդույթն այն մասին, որ առաջին խորանը երկնքում եղող իրական խորանի կրկնօրինակն էր, կարելի է գտնել (1) Ելից 25:9, 40; (2) Հայտն.11:19; 13:6; 15:5; (3) 2 Բարուքի 4:5; (4) Եսայու մարտիրոսությունը և համբարձումը՝ Եսայի 7:10; (5) Իմաստություն 9:8; (6) Փլավիոս Չոզեֆոսի *Հրեաների Հնությունները* 3:6:1 /Flavius Josephus' *Antiquities of the Jews* 3:6:1/:

Երկնային այս խորանը մի օր այլևս չի լինելու (տես՝ Հայտն.21:22): Այն իր նպատակին ծառայեց այս դարաշրջանում, սակայն դրա անհրաժեշտությունը չի լինի գալիք դարերում՝ աշխարհի վերջից հետո:

■ «ասում է Նա» Սա մեջբերում է Ելից 25:40-ից: Խորանը Մովսեսի ծրագիրը չէր, այլ Աստծո հայտնությունը:

8:6 «Նա այնքան ավելի գերազանց պաշտոնի հասավ» Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Հիսուսի գերազանցության այս նույն նկարագրությունը կիրառվում է Եբր.1:4-ում հրեշտակների հետ կապված:

■ «Նա միջնորդն է ավելի լավ մի ուխտի» Եբր.8:6-ում բոլոր ԲԱՅԵՐԸ ՎԱՂԱԿԱՏԱՐ են: Նախորդի պես, սա էլ ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է:

«Միջնորդ» տերմինը օրինական տերմին է, որը մատնացույց է անում դատամիջնորդի: Ինչպես քահանան է կանգնում սուրբ Աստծո և մեղավոր մարդկության միջև, այդպես էլ Հիսուսն է անում որպես միջնորդ (տես՝ Եբր.9:15; 12:24; 1 Տիմ.2:5): Սա Քահանայապետի գործը մատնանշելու ևս մեկ միջոց է:

■ «ավելի լավ մի ուխտի՝ ավելի լավ խոստումների վրա հիմնված» Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է /անգլերենում/: Մովսեսի ուխտի վրա Հիսուսի իշխանությունը Եբրայեցիների հեղինակի կողմից ներկայացումը հայտնի է «ավելի լավ» տերմինի կիրառմամբ (տես՝ Եբր.7:7-ի գրառումը):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒԽՏ
SPECIAL TOPIC: COVENANT

ՀԿ-ի *berith* (BDB 136) տերմինը՝ ուխտը, այնքան էլ հեշտ չէ սահմանելը: Եբրայերենում չկա դրան համապատասխան ԲԱՅԸ: Բոլոր փորձերը ստուգաբանական կամ համանման սահմանում ստանալու համար համոզիչ չեն ստացվել: Սակայն, այս հասկացության ակնհայտ կարևորությունը ստիպել է աստվածաբաններին հետազոտելու բառի գործածությունը, փորձելու սահմանել դրա գործնական՝ ֆունկցիոնալ իմաստը:

Ուխտը մի միջոց է, որով միակ ճշմարիտ Աստված գործ է ունենում մարդկանց հետ: Ուխտի, դաշնագրի կամ համաձայնագրի գաղափարը կարևոր դեր է խաղում աստվածաշնչյան հայտնությունը հասկանալու մեջ: Աստծո ամենակալության և մարդու ազատ կամքի միջև ընկած լարվածությունը հստակ երևում է ուխտի հասկացության մեջ: Կան ուխտեր, որոնք հիմնված են բացառապես Աստծո բնավորության և գործողությունների վրա:

1. հենց արաչագործությունը (տես՝ Ծննդոց 1-2)
2. Աբրահամի կանչը (տես՝ Ծննդոց 12)
3. Աբրահամի հետ ուխտը (տես՝ Ծննդոց 15)
4. Նոյին պահպանելը և նրան տրված խոստումը (տես՝ Ծննդոց 6-9)

Սակայն ուխտի բնույթը ինքնին պահանջում է պատասխան՝ արձագանք:

1. հավատքով Ադամը պետք է հնազանդվի և չուտի Եդեմի պարտեզի կենտրոնի ծառից
2. հավատքով Աբրահամը պետք է հեռանա իր ընտանիքից, հետևի Աստծուն և հավատա ապագա սերունդներին
3. հավատքով Նոյը պետք է կառուցի մի հսկայական նավ, որը հեռու է ջրից և հավաքի կենդանիներին
4. հավատքով Մովսեսը Իսրայելացիներին հանեց Եգիպտոսից դեպի Սինա լեռը և ստացավ հատուկ ուղեցույցներ կրոնական և սոցիալական կյանքի համար՝ օրհնության և անեծքի խոստումներով (տես՝ 2 Օր.27-28):

Մարդկանց հետ Աստծո փոխհարաբերության մեջ ըղգրկված այս նույն լարվածությունը հաղորդվում է «նոր ուխտի» մեջ: Այդ լարվածությունը կարելի է հստակ տեսնել համեմատելով Եզեկիել 18-ը Եզեկիել 36:27-38-ի հետ (ՅԱՀՎԵԻ գործը): Արդյո՞ք Աստծո ողորմած գործերի վրա հիմնված ուխտը պարտադրում է մարդու արձագանքը: Սա Հին և Նոր Ուխտերի միջև գտնվող վառվող կետն է: Երկուսի նպատակն էլ նույնն են՝

1. YHWH-ի հետ փոխհարաբերության վերականգնումը, որը մարդը կորցրել էր Ծննդոց 3-ում
2. արդար ժողովուրդ բարձրացնելը, որը կարտացոլի Աստծո բնավորությունը:

Երեմ.31:31-34-ի նոր ուխտը լուծում է այս լարվածությունը՝ հեռացնելով մարդկային մասնակցությունը որպես ընդունելության արժանանալու միջոց: Աստծո օրենքը արտաքին օրինապահության փոխարեն դառնում է ներքին ցանկություն: Աստվածավախ, արդար մարդկանց նպատակը մնում է նույնը, սակայն փոխվում է մեթոդը: Անկում ապրած մարդկությունը ապացուցել էր, որ արժանի չէր լինելու Աստծո պատկերի արտացոլանքը: Խնդիրը Աստծո ուխտը չէր, այլ մարդու մեղավորությունը և տկարությունը (տես՝ Հռոմեացիների 7; Գաղատացիների 3):

ՀԿ-ի պայմանական և ոչ պայմանական ուխտերի միջև եղած նույն լարվածությունը մնում է ՆԿ-ում: Փրկությունը բացարձակ ձրի է Հիսուս Քրիստոսի ավարտած գործի շնորհիվ, սակայն այն պահանջում է ասպաշխարություն և հավատք (թե՛ սկզբում և թե՛ շարունակվող՝ հարատև): Այն թե՛ օրենքի հայտարարություն է և թե՛ Քրիստոսի պես լինելու կոչ, որը մատնանշում է, որ Աստծո կողմից ընդունված ես և պատվիրում սրբություն: Հավատացյալները չեն փրկվում իրենց վարքով, այլ հնազանդությամբ (տես՝ Եփես.2:8-10): Աստվածավախ ապրելակերպը դառնում է փրկության վկայությունը, ոչ թե փրկության միջոց (այսինքն՝ Հակոբոս և 1 Հովհաննես): Այնուամենայնիվ հավիտենական կյանքն ունի տեսանելի հատկանիշներ: Այս լարվածությունը հստակ երևում է ՆԿ-ի զգուշացումների մեջ (տես՝ Հատուկ Թեմա. Ուխտադրություն):

8:7 «եթե» Սա ևս մեկ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը կոչվում է փաստին հակառակ (տես՝ Եբր.8:4): Սա տրված փաստարկի կենտրոնական նպատակն է: Այնուհետև կեղծ հայտարարություն է կիրառվում աստվածաբանական նշանակությունը հասցնելու համար: Առաջին ուխտը չտվեց վերականգնման և արդարության ցանկալի արդյունքը:

8:8 «նրանց հանդիմանելով» Ոչ թե Օրենքը, այլ մարդու տկարություն էր խնդիրը (տես՝ Հռոմ.7:12,16; Գաղատացիների 3):

■ **«ասում է Նա»** 8-12 համարները մեջբերումներ են Երեմ.31:31-34: Նկատել, որ «Նա» բառը վերաբերում է ՅԱՀՎԵԻՆ, սակայն Եբր.10:15-ում այս նույն արտահայտությունը ուղղված է Սուրբ Հոգուն: ՀԿ-ի ներշնչանքը երբեմն վերագրվում է Հոգուն և երբեմն էլ՝ Հորը:

■ **«ՆՈՐ ՈՒԽՏ»** Երեմիայում արձանագրված այս հատվածը (տես՝ Երեմ.31:31-34) ՀԿ-ում միակ տեղն է, որտեղ նշվում է «նոր» ուխտը, սակայն այն նկարագրվում է Եզեկիել 36:22-38-ում: Հրեաների համար սա պետք է որ ցնցող լիներ:

■ **«ԻՍՐԱՅԵԼԻ ՏՈՒՆ»** Սա ենթադրում է Աստծո ժողովրդի վերամիավորումը: Միացյալ Միապետության (Մավուդ, Դավիթ, Սողոմոն) բաժանումից հետո Ք.Ա. 922թ-ին, հյուսիսային ցեղերը Հերոբոմի և Կիզիանության ներքո կոչվեցին Իսրայել, իսկ հարավային ցեղերը Ռորովամի իշխանության ներքո՝ Հուդա:

8:9 «ՈՉ ԱՅՆ ՈՒԽՏԻ ՆՄԱՆ» Տարբերությունը բովանդակության կամ նպատակի մեջ չէ, այլ մեթոդաբանության:

■ **«ԱՅՆ ՕՐԸ, ԵՐԲ ՆՐԱՆՑ ԶԵՈՔԻՑ ԲՈՆԵՑԻ»** Սա վերաբերում է ՅԱՀՎԵԻՆ որպես Հայր (տես՝ Ովսեա 11:1-4):

■ **«ԵՍ ԷԼ ԱՆՀՈԳ ԵՂԱ ՆՐԱՆՑ ՀԱՆԳԵՊ»** Սա հետևում է Սեպտուագինտայի (LXX) թարգմանությանը: Մատթեոսի Տեքստը (MT) տալիս է «չնայած որ Ես նրանց համար ամուսին էի»:

8:10 «ՄՏՔԻ» Սա հետևում է Սեպտուագինտային (LXX), սակայն Մատթեոսի Տեքստը (MT) տալիս է «իրենց ներսում»: Ահա թե ինչով է տարբերվում հին ուխտը նոր ուխտից: Հին ուխտը նկարագրվում է Եզեկ.18:31-ով, իսկ նորը՝ Եզեկ.11:19; 36:26-27:

■ **«ՄԻՐՏ»** Սա վերաբերում է ամբողջ անձին (տես՝ 2 Օր.6:6; 11:18; 30:6,14): Տե՛ս Հատուկ Թեմա Եբր.3:8-ում:

■ **«ՈՒ ԵՍ ՆՐԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՍՏՎԱԾ ՊԻՏԻ ԼԻՆԵՄ, ՆՐԱՆՔ ԷԼ ԻՆՁ՝ ԺՈՂՈՎՈՒՐԳ»** Սա ՀԿ-ի ուխտի բանաձևն է:

8:11 Գոյություն ունի մի հունարեն ձեռագիր տարբերակ, որտեղ «քաղաքացի» տերմինը հակադրվում է «ղրացուն»: Եբրայերեն ուխտի մեջ եղող եղբոր գաղափարի յույսի ներքո այս տարբերակը ոչ մի թարգմանչական տարբերություն չի տալիս: Սակայն համաձայն ավելի հին և ավելի վստահելի հունարեն տեքստերի «քաղաքացիներ» տերմինը լավագույն ընտրությունն է (տես՝ P⁴⁶, Ռ, A, B, D, K, L, և ամենավերջին փոքրատառերով գրված ձեռագրերը):

8:12 Սա նոր ուխտի հավասարությունն է (տես՝ Երեմ.31:31-34): Այն նշվում է ՆԿ-ում՝ Ղուկ.22:20; 1 Կորնթ.11:25; 2 Կորնթ.3:6 և Եբր.8:8; 9:15: Այլևս կարիք չի լինելու առաջնորդների, բոլորը ճանաչելու են

Տիրոջը, Նրա կամքն ու ճանապարհները: Մեղքերը, որոնք Աստված ներում է, նաև մոռանում է (խիստ ԿՐԿՆԱԿԻ ԺԽՏԱԿԱՆ): Կատարյալ ներման ՀԿ-յան խոստումները հրաշալի են (տես՝ Մաղմ.103:3,8-14; Եսայի 1:18; 38:17; 43:25; 44:22; Միքիա 7:19):

8:13

NASB

«բայց ինչ հնանում է և ծերանում, պատրաստ է անհետանալու»

NKJV

«Այժմ, այն ինչ հնանում է և ծերանում, պատրաստ է կորչելու»

NRSV

«Եվ այն ինչ հնանում է և ծերանում, շուտով անհետանալու է»

TEV

«Ցանկացած բան, որ հնանում և մաշվում է, շուտով անհետանալու է»

NJB «Եվ ցանկացած հին և ժամանակն անցած բան պատրաստ է անհետանալու»

Այս արտահայտությունը պահանջում է մի քանի մեկնաբանություն: Առաջինը, հիշեք պատմական միջավայրը: Կային մի խումբ մարդիկ, որոնք կառչած էին Մովսեսի Օրենքից և մեկ ուրիշ խմբի մարդիկ, որոնք խորհում էին Մովսեսի Օրենքին վերադառնալու մասին:

Երկրորդը, սա առնչվում է միայն Օրենքի հետ, որպես փրկության միջոց: Անշուշտ ՀԿ-ը եղել է և կա Աստծո հայտնությունը (տես՝ Մատթ.5:17-19): Մովսեսիական Օրենքը դեռևս Աստծո ծրագրի մեջ նպատակ ունի (տես՝ Գաղատացիների 3): Այն մարդկանց բերում է Քրիստոսին, անկում ապրած մարդկությանը ցույց տալով իր մեղավորությունը և փրկության կարիքը: Այն օգնում է մեզ հասկանալու Աստծուն և Նրա ճանապարհները: Այն սերտորեն կապված է նոր ուխտի հետ ինչպես խոստումը իր իրականացմանը: Այն անկարող եղավ փրկություն բերելու՝ մեղավոր մարդկության տկարության և մեղքերի պատճառով:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ է Եբրայեցիների հեղինակը այսքան ուժեղ շեշտադրում Հիսուսի քահանայության գերազանցությունը:
2. Արդյո՞ք Եբրայեցիների գիրքը ենթարկվել է հունական փիլիսոփայության ազդեցությանը (Պատոնիզմին):
3. Ինչո՞ւ է մեջբերվում Երեմիա 31:31-34:
4. Ինչո՞ւ է համար 12-ը այդքան հրաշալի խոստում:
5. Ինչպե՞ս է Մովսեսիական ուխտը կապված նոր ուխտի Քրիստոնյաների հետ:

ԵՔՐԱՅԵՑԻՆԵՐԻ 9

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Երկրային և Երկնային Սրբարանները	Երկրային Սրբարանը	Ղևտական Քահանաների Ճառայությունը	Երկրային և Երկնային պաշտամունք	Քրիստոսը մտնում է Երկնային Սրբարանը
9:1-5	9:1-5	9:1-5	9:1-5	9:1-5
	Երկրային Սրբարանի սահմանափակումները			
9:6-10	9:6-10	9:6-10	9:6-10	9:6-10
	Երկնային Սրբարանը	Քրիստոսի Չոհին բնորոշ հատկությունները		
9:11-14	9:11-15	(9:11-10:18) 9:11-14	9:11-14	9:11-14
				Քրիստոսը Իր Արյամբ կնքում է Նոր Ուխտը
9:15-22	Անիրաժեշտ Միջնորդի մահը	9:15-22	9:15	9:15-28
	9:16-22		9:16-22	
Քրիստոսի Չոհի միջոցով մեղքը հեռացվեց	Քրիստոսի Չոհի Մեծությունը		Քրիստոսի Չոհը հեռացնում է մեղքը	
(9:23-10:18)			(9:23-10:18)	
9:23-28	9:23-28	9:23-28	9:23-28	

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու Ուղեգույց») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեգույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 9:1-5
¹Արդարև, առաջին *mishan* էլ ուներ պաշտամունքի կանոններ և երկրային սրբարան: ²Քանի որ առաջին խորանը պատրաստվեց այսպես. դրա մեջ կային աշտանակը, սեղանը և առաջավորության հացը. սա Սրբություն էր կոչվում: ³Իսկ երկրորդ վարագույրի ետևում այն խորանն էր, որը կոչվում է Սրբություն Սրբոց, ⁴որտեղ էր ոսկե բուրվառը և ուխտի տապանակը՝ բոլոր կողմերից ոսկով պատած, որի մեջ էր մանանան պարունակող ոսկե սափորը, և Ահարոնի գավազանը, որ ծաղկեց և ուխտի տախտակները. ⁵դրա վրա փառաց քերովբեներն էին, որոնք հովանի էին անում քավության վրա, որոնց մասին հիմա չենք կարող մանրամասն խոսել:

9:1 «առաջին» Խորանի հետ կապված գոհաբերության և պաշտամունքի համար կանոնները գտնվում են Ղևտացիների գրքում:

■ **«mishan»** Հունարեն տեքստում սա չկա: Ծատ անգլերեն թարգմանություններ դա ենթադրում են: Սակայն, Հ. Ե. Դանան, իր *Հրեական Քրիստոնեություն* /H. E. Dana *Jewish Christianity*/ էջ՝ 255-ում հավաստում է, որ այն պետք է թարգմանվեր «առաջին ծառայությունը», քանի որ գլուխ 9-ը ներկայացնում է Քրիստոսի գերագանց ծառայության և սմեկ վկայություն՝ ապացույց (տես՝ Եբր.8:6): Նա նաև սանդղակի տեսքով տալիս է էջ 255-ի համեմատությունները.

Առաջին Ծառայությունը	Երկրորդ Ծառայությունը
-----------------------------	------------------------------

<p>Երկրավոր ծառայություն – «այս աշխարհի» Մարդկային սպառազինում – «կառուցված խորան» Արտաքին հետևանքները – «չեն կարող, քանի որ խղճմտանքը շարժելը երկրպագվողին դարձնում է կատարյալ» Էությանը ժամանակավոր – «մինչև շինարարության ժամանակը դրված մարմնավոր կանոններ»</p>	<p>Երկնային ծառայություն – «ոչ այս արարչագործությունից» Աստվածային սպառազինում – «ոչ ձեռագործ» Ներքին հետևանքները – «քո խղճմտանքը մեռած գործերից մաքրելը՝ կենդանի Աստծուն ծառայելու համար» Էությանը մնայուն – «հավիտենական ժառանգության խոստումը»</p>
--	--

9:2 «խորան» Սա վերաբերում է անապատում շարժական խորանին, որը մանրամասն նկարագրվում է Ելից 25-27-ում և կառուցվել է 36-38,40 գլուխներում: Եբրայեցիների հեղինակը ներքին վրանը կոչում է որպես առաջին (արտաքին) խորան (սուրբ վայրը) և երկրորդ (ներսի) խորանը՝ Սրբության Սրբոց:

■ **«աշտանակը»** Սա վերաբերում է մեկ ճրագակալի՝ աշտանակի, յոթ տարաներով, որոնց մեջ այրվում էր ձիթայուղ, և որը գտնվում էր Սրբարանում: Այն ակնարկում է Ելից 25:31-40 և Ղևտ.24:1-4 հատվածները: Այն կոչվում էր *Menorah*, որը «աշտանակ» բառի եբրայերեն տերմինն է: Սողոմոնը մեծացրեց այս աշտանակը դարձնելով տասնանյուղ (տես՝ 3 Թագ.7:49; 2 Մնաց.4:7): Այն խորհրդանշում է ճշմարտության յույսը և հայտնությունը:

■ **«սեղանը և առաջավորության /սուրբ/ հացը»** Սա մի սեղան էր, որ տեղադրված էր Սրբարանում, որի վրա դրված էին տասներկու մեծ (15 lb.) հացի բոքոններ: Դրանք ամեն շաբաթ նորով էին փոխարինվում և դառնում էին Քահանաների համար որպես ուտելիք (տես՝ Ելից 25:23-30; 37:10-16; Ղևտ.24:5-9): Դրանք ներկայացնում են Հակոբի տասներկու ցեղերի համար Աստծո կողմից խոստացված մատակարարումը:

■ **«սրբություն /սրբարան/»** Սա վրանի արտաքին սրահն էր, որտեղ ամեն օր քահանաները ծառայում էին: Դրա տարածքը կազմում էր 20 խորանարդը /1 խորանարդը՝ 44 սմ/ 10 խորանարդի վրա (տես՝ Ելից 25-27): Եբրայեցիների հեղինակը սովորաբար կիրառում է այս տերմինը (*hagia*) ՀՈՂԻ հետ (տես՝ Եբր.9:8,25; 13:11) կիրառում է Սրբության Սրբոց կոչվող (տես՝ Եբր.9:3) սուրբ վրանի ներքին կամ երկրորդ մասի համար, որտեղ տեղադրված էր Ուխտի Տապանակը, սակայն այս համարում բացակայում է ՀՈՂԸ և տերմինը վերաբերում է սուրբ վրանի արտաքին երկու-երրորդ մասին, որը կոչվում էր Սրբություն:

9:3 «Երկրորդ վարագույր» Այս վարագույրը վրանը բաժանում էր երկու մասի (տես՝ Ելից 26:31-35): Երբայեցիներն ունեին երկու հատուկ անուն՝ մեկը առջևի վարագույրի համար, որը սովորաբար մասամբ բաց էր լինում, և մյուսն էլ՝ ներսի վարագույրի համար, որը երբեք բաց չէր լինում: Միայն քահանայապետն էր Քավության Օրը (տես՝ Ղևտ. 16) մտնում այնտեղ (երկու անգամ):

■ **«Սրբության Սրբոց»** Այն 10 խորանարդից բաղկացած կատարյալ խորանարդ էր: Այնտեղ էին գտնվում Ուխտի Տապանակը, որտեղ այլաբանորեն բնակվում էր ՅԱՀՎԵՆ՝ քերովբեների թևերի միջև: Տապանակը հանդիսանում էր անտեսանելի Աստծո ֆիզիկական ներկայության խորհուրդը (Ավետյաց Երկիր մտնելուց հետո):

9:4 «ոսկե բուրվառը» Սա զոհասեզանի տեսքով կահույքի մի կտոր էր, որտեղ Քավության Օրը դրվում էր մեծ քանակությամբ խունկ, որպեսզի առաջացնէր թանձր ծուխ, որը ծածկում էր ՅԱՀՎԵՆ ներկայությունը Ուխտի Տապանակի վրա: Մեր հեղինակը կարծես ոսկե բուրվառը դրել է Սրբության Սրբոցի ներսում: Սա մեկնաբանների համար պատճառ հանդիսացավ, որ այս արտահայտությունը վերագրեն «բուրվառ»-ին, քանի որ հենց այսպես է թարգմանում Սեպտուագինտան այս տերմինը (տես՝ Ղևտ. 16:12; 2 Մնաց. 26:19; Եզեկ. 8:11; 4 Մակ. 7:11): Սակայն Ֆիլոն և Ջոզեֆուսը կիրառում են միևնույն հունարեն բառը խունկի զոհասեղանի համար: ՀԿ-ում զոհասեղանը սերտորեն կապված էր Սրբության Սրբոցի հետ (տես՝ Ելից 30:1-10,37; բայց հատկապես 3 Թագ. 6:22):

Մեծ զոհասեղանից, որը գտնվում էր խորանի դռան մետ, վերցվում էին ածուխի կտորները և դրվում այս փոքր աշտանակի վրա: Ապա այդ ածուխների վրա դրվում էր խունկ, որպեսզի մեծածավալ թանձր ծուխ արձակեր: Այս հրաշալի բուրումնավետ ծուխը մթազնում էր քահանայապետի աչքերը, բացառելով ՅԱՀՎԵՆ տեսնելը, Ով բնակվում էր ուխտի տապանակի վրա՝ քերովբեների թևերի միջև, Սրբության Սրբոցում:

■ **«Ուխտի տապանակը»** Ուխտի Տապանակը նկարագրվում է Ելից 25:10-22 և 37:1-9-ում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒԽՏԻ ՏԱՊԱՆԱԿԸ
SPECIAL TOPIC: THE ARK OF THE COVENANT

I. Կառուցվածքը (Ելից 25:10-22)

Ա. ոսկեգոծ փայտե արկղ (Ելից 25:20-11)

Բ. 2^{1/2} խորանարդը 1^{1/2} խորանարդի և 1/2 խորանարդի վրա (տես՝ Ելից 25:10; «խորանարդի» համար տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԽՈՐԱՆԱՐԴԸ)

Գ. շարժական՝ օղակներով և ձողերով (Ելից 25:12-16)

Դ. տապանակի կափարիչը առանձին էր (Ելից 25:17-21)

1. Պատրաստված ոսկուց և փայտե արկղի չափսերին համապատասխան (Ելից 25:10,21)

2. Կափարիչի վրա կային իրար նայող երկու քերովբեներ (Ելից 25:18-20)

II. Վայրը և նպատակը

Ա. Իսրայելի հետ հանդիպման վայր (Ելից 25:22)

Բ. ՅԱՀՎԵՆ բնակության վայրը (այսինքն՝ Նրա ոտքերի պատվանդանը, տես՝ 1 Մնաց. 28:2; Սաղմ. 132:7; Եսայի 66:1) Իր ժողովրդի հետ, ուխտի տապանակի վրա՝ քերովբեի թևերի միջև (տես՝ Հատուկ Թեմա. Քերովբե)

Գ. մեղքի ներման վայր (այսինքն՝ ողորմության աթոռ) բոլոր ժողովուրդների համար (տես՝ Իսրայել, Ղևտացիների 16 և 3 Թագ. 8:27-30; օտարականներ՝ 3 Թագ. 8:41,43,60)

Դ. Սրբության Սրբոցում վարագույրից ներս գտնվող միակ կահույքը

III. Պարունակությունը

Ա. Ռարբիական ավանդության համաձայն՝

1. Երկու քարե տապանակները, որոնց վրա ՅԱՀՎԵՆ գրեց տաս պատվիրանները (տես՝ Ելից 31:18; 32:15-16)

2. Արծաթե երկու սյուները, որոնք պահում էին տապանակները (սուրբգրային համարներ չկան)
 3. Սկզբնական բնօրինակ երկու տապանակների մասունքները, որոնք Մովսեսը կտրատեց, երբ տեսավ Իսրայելին (Ահարոնին) ոսկե հորթ շինած և երկրպագելիս (տես՝ Ելից 32:19; 2 Օր.9:17; 10:2)
 4. Ամբողջ Թորայի կրկնօրինակը (տես՝ Ելից 25:16)
 5. Հրեական միատիցիզմում՝ Քարալայում ձևավորված Աստծո անունները (տես՝ 3 Թագ.8:29)
- Բ. Պարունակության վերաբերյալ սուրբգրային համարներ (հայտնի չէ, թե արդյոք այս իրերը տապանակի ներսի, թե շուրջը գտնվող պարունակությանն են վերաբերում)
1. Մանանայի սափորը (տես՝ Ելից 16:31-36)
 2. Ահարոնի ծաղկած գավազանը (տես՝ Թվոց 17:4,10; Եբր.9:4)
 3. Փղշտացիների հանցանքի պատարագը (5 ոսկե մուկ և 5 ոսկե թուրք, տես՝ 1 Թագ.6:3-4,8)
 4. Տասը Պատվիրանների կրկնօրինակը (տես՝ 2 Օր.10:4-5; 31:26)
- Գ. Սողոմոնի կառուցած Տանարի նվիրաբերման ժամանակ՝ 3 Թագավորաց 8-ում ասվում է, որ Ուխտի Տապանակը պարունակում էր միայն քարե երկու տախտակները (այսինքն՝ Տաս Խոսքերը՝ Պատվիրանները, տես՝ 3 Թագ.8:9)

IV. Որտե՞ղ է հիմա

Ա. Ըստ պատմական տվյալների՝

1. Տարվել է Եգիպտոս Միսակի կողմից (Ք. Ա. 935-914 թթ.), երբ նա ներխուժեց Հուդա՝ Ռեհորովամի (Սողոմոնի որդու) թագավորության հինգերորդ տարին (Ք. Ա. 926թ.) (տես՝ 3 Թագ.14:25-26; 2 Մնաց.12:9):
2. Տարվել է Եգիպտոս (Չոհան, Թանիս, Ավարիս – Սեթի I-ի դելտա մայրաքաղաքի տարբեր անուններ) Նեքավով II Փարավոնի կողմից, որը նաև գերեվարեց Դավթի սերնդից Հովաքազին (Հովսիայի որդուն) Ք.Ա. 597թ. (տես՝ 4 Թագ.23:31-35; 2 Մնաց.36:1-4)
3. Տարվել է Բաբելոն՝ Մարդուքի տանարը, Նաբուգոդոնոսոր II-ի կողմից, երբ Մեդեկիա թագավորը գերեվարվեց (Ք.Ա. 586թ.) և Տանարը այրվեց (տես՝ 4 Թագ.25:9,13-17; 2 Մնաց.36:18):

Բ. Ըստ հրեական ավանդության

1. Թաքցրած է Նաբովր՝ Պիսղա լեռան վրա Երեսնիայի կողմից, նախքան Երուսաղեմի կործանումը (2 Մակ.2:4-5)
2. 2 Բարուքի անկանոն գիրքն ասում է, որ այն թաքցված է մի հրեշտակի կողմից
3. Թաքցված է անհայտ կերպերով, սակայն նախքան Մեսիայի գալուստը վերադարձվելու է Եդիայի միջոցով (տես՝ Մաղ.4:5):
4. Թաքցված է Քորազիմ (Սյուքեմ) լեռան վրա, որտեղ Սամարացիները կառուցեցին ՅԱՀՎԵի նվիրված իրենց տաճարը:
5. Թաղել են տաճարի տակ (այսինքն՝ Մորիա լեռը), նախքան Նաբուգոդոնոսորը կգրավեր Երուսաղեմը:

■ **«մանանան պարունակող ոսկե սափորը»** Մեպտուազինտան և Ֆիլոն ունեն «ոսկե» ածականը, սակայն Մատթեթական Եբրայերեն Տեքստն այն չունի (տես՝ Ելից 16:31-36): Ջոզեֆուսն ասում է, որ այդ սափորն իր մեջ կրում է 4 պինտ /pints/ մանանա (այսինքն՝ մոտ 1,88 լիտր): Հրաշք էր, որ մանանան չէր փչանում (տես՝ Ելից 16:18-21,22-25):

■ **«Ահարոնի գավազանը, որ ծաղկեց»** Այս գավազանը Կորիսի ապստամբության ժամանակ ՅԱՀՎԵի նշանը դարձավ հաստատելու Մովսեսի և Ահարոնի առաջնորդներ լինելը (տես՝ Թվոց 17:1-11; 20:8-11):

■ **«ուխտի տախտակները»** Սա վերաբերում է տաս պատվիրաններով (տաս խոսքերը) երկու քարե տապանակներին, որոնց վրա հենց Աստծո մատով է գրված (տես՝ Ելից 25:16; 2 Օր.9:9,11,15; 10:3-5; 31:18; 32:15): 2 Օրինաց գիրքը և Հեռու 24 գլուխը հետևում են քեստացիների պայմանագրային օրինակին (Ք. Ա. երկրորդ հազարամյակի): Նրանց կտակները միշտ ունենում էին երկու կրկնօրինակ, մեկը վասալ թագավորի համար, որպեսզի ամեն տարի կարդար, իսկ մյուսը՝ աստծո սրբաբանի համար: Հետևաբար, քարե երկու տախտակները հնարավոր է եղել են միևնույն գրության երկու օրինակ:

9:5 «փառաց քերովբեներ» Սա վերաբերում է երկու հրեշտակային արարածներին՝ ողորմության աթոռի՝ քավության (կափարիչի) յուրաքանչյուր եզրին, որոնք իրենց թևերով քողարկում էին տապանակը (տես՝ Ծննդ.3:24; Ելից 25:18-22; Եզեկ.10:14, բայց ուշադրություն դարձրեք, որ Եզեկ.41:18-ում նրանք ունեն երկու դեմք, ոչ թե չորս): Նոր հավանականություն կա ըստ Պատմական Ալիքի «Ելիցի վերծանումը» տեսանյութի, որը հայտարարում է, որ նրանք փյունիկներ էին: Աստվածաշունչը շատ տեղեկություն չի բացահայտում հրեշտակային աշխարհի վերաբերյալ: Մեր հետաքրքրասիրությունը հաճախ հայտնված ճշմարտությունից շատ ավելի առաջ է ընկնում: «Փառք» տերմինի վերաբերյալ տես՝ Եբր.1:3-ի գրառումները:

■ **«ողորմության աթոռ»** Սա վերաբերում է «ուխտի տապանակ» կոչվող փայտյա արկղի ոսկե կափարիչին: Այն համարվում էր մեղքերը «ծածկելու» հատուկ վայր: Կարծես թե խորհուրդը սրանում էր՝

1. ՅԱՀՎԵՆ բնակվում էր երկու հրեշտակային արարածների թևերի միջև (Ռաբբիներն ասում էին, որ սա Նրա ոտքերի պատվանդանն էր)
2. Արկղը պարունակում էր «տաս խոսքերը» (տաս պատվիրանները)
3. Քահանայապետը Քավության Օրը (տես՝ Ղևտացիների 16) երկու անգամ մտնում էր Սրբության Սրբոցը, որպեսզի արյուն դներ ողորմության աթոռի վրա՝ մի անգամ իր սեփական մեղքի և մյուս անգամ էլ ամբողջ ազգի՝ ժողովրդի անկանխամտածված մեղքերի համար (տես՝ Եբր.9:7):

Օրենքի պահանջները ծածկվում, քողարկվում էին ՅԱՀՎԵԻ աչքերից գոհաբերվող մի անարատ կենդանու արյամբ (կյանքը արյան մեջ է. մեղքը կյանք է պահանջում):

■ **«որոնց մասին հիմա չենք կարող մանրամասն խոսել»** Սա հերքում է: Մեր հեղինակը կիրառում է հին խորանից մանրամասներ, որոնք հիմա անձանոթ են:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 9:6-10
 «Այս ամենն այսպես կարգադրված լինելով, քահանաները միշտ մտնում էին առաջին խորանը՝ պաշտամունք կատարելու: ⁷Բայց երկրորդի մեջ միայն քահանայապետն էր մտնում տարին մեկ անգամ, ո՛չ առանց արյան, որը մատուցում էր իր և ժողովրդի հանցանքների համար: ⁸Սուրբ Հոգին դրանով ցույց էր տալիս, որ Սրբությունների Սրբության ճանապարհը դեռ չի հայտնված, քանի դեռ առաջին խորանը կանգնած է. ⁹դա տվյալ ժամանակի համար պատկեր էր, որտեղ և՛ ընծաներ, և՛ զոհեր են մատուցվում, որոնք խղճմտանքի հարցում չեն կարող պաշտամունք մատուցողին կատարյալ դարձնել, ¹⁰կերակուրների և խմելիքների, տարբեր լվացումների հետ կապված մարմնական ծիսակատարություններ լինելով՝ պարտադիր մինչ վերափոխման ժամանակը:

9:6 «միշտ մտնում էին առաջին խորանը» Քահանաները պետք է լցնեին *menorah* տարաները յուրով (տես՝ Ելից 27:20-21), ամեն շաբաթ փոխեին հացը (տես՝ Ղևտ.24:8-9) և քիչ քանակությամբ խունկ դնեին խունկի պատարագի սեղանին (տես՝ Ելից 30:7-8):

9:7 «քահանայապետը տարին մեկ անգամ» Նա մտնում էր միայն Yom Kippur -ի օրը՝ Քավության Օրը (տես՝ Ղևտ.16): “*Kipper*” նշանակում է «ծածկել»; *Akkadian cognate* նշանակում է «սրբել, մաքրել»: Եբրայեցիների 9-ը ՆԿ-ում ցանկացած այլ գլուխներից առավել կենտրոնանում է Քավության Օրվա ծիսակարգերի վրա:

■ **«անգլ.՝ անգիտակից»** Միայն այն մեղքերը, որոնք կանխամտածված չէին, կարող էին քավվել զոհաբերության համակարգով: Դիտավորյալ՝ գիտակցված մեղքերը կամ «բարձրացված ձեռքի մեղքերը» (KJV) չէին կարող քավվել (տես՝ Ղևտ.4:2; Թվոց 15:24, 27, 30, 31; Սաղմ.51:17): Քավության օրը հիմնականում ծիսականորեն ամնչվում էր ազգի անմաքրություն հետ:

9:8-10 Այս համարները ցույց են տալիս (1) Մովսիսական ուխտի նախնական բնույթը (2) նոր ուխտի գերազանցությունը: Ինչպե՛ս է Քրիստոսի մեջ մեր ունեցած ուխտն ավելի լավը:

1. Հին ուխտի մեջ տարին մեկ անգամ միայն քահանայապետը կարող էր մտնել սրբարան իր մեղքերի և Իսրայելի անկանխամտածված մեղքերի համար (մուտքի սահմանափակ իրավունք և սահմանափակ ներման հնարավորություն)
2. Նոր ուխտի մեջ բոլոր հավատացյալները մոտենում են Աստծուն՝ Հիսուսի անմեղության շնորհիվ և դիտավորյալ և ոչ դիտավորյալ մեղքերի միջև խտրականության հեռացման շնորհիվ (կատարյալ մուտքի իրավունք և կատարյալ ներման հնարավորություն):

Նոր ուխտը (տես՝ Երեմ.31:31-34), որը հիմնված է Քրիստոսի կատարած գործի վրա ունեցած հավատքի և ոչ թե արտաքին օրենքների կատարելու՝ մարդկային արժանիքներ ձեռք բերելու վրա, հավատացյալներին համարձակություն է տվել (նոր սիրտ, նոր հոգի. տես՝ Եզեկ.36:20-27) մոտենալու սուրբ Աստծուն, ոչ թե ծիսական ընթացակարգերով կամ պատարագներով (տես՝ Եբր.6:1-2), այլ ավետարանի միջոցով:

9:8

NASB
NKJV
NRSV
TEV
NJB

«արտաքին խորանը»
«առաջին խորանը»
«առաջին վրանը»
«արտաքին վրանը»
«հին վրանը»

Եբրայեցիների հեղինակը վրանի արտաքին մասը կոչում է «առաջին խորան», նկատի ունենալով «սուրբ վայրը՝ սրբարանը»: Սա ներկայացնում էր Մովսիսական ուխտի պաշտամունքը, որը Աստծուն մոտենալու կատարյալ մուտքի իրավունք չէր տալիս: Հերովդեսի Տանարի վարագույրի պատռվելը վերից վար, երբ Հիսուսը մահացավ (տես՝ Մատթ.27:51) խորհրդանշում է Քրիստոսի միջոցով մուտքի այս նոր իրավունքը:

9:9 «որոնք խղճմտանքի հարցում չեն կարող պաշտամունք մատուցողին կատարյալ դարձնել» Հին ուխտը ի գորու չէր մարդկության խղճմտանքից մաքրել մեղքի հանցանքը (տես՝ Եբր.9:14): ՆԿ-ում խղճմտանքը (ոչ թե ՀԿ-ում) բարոյական ուղեցույց է (տես՝ 1 Պետ.3:21): Միայն վտանգավորն այն է, որ խղճմտանքը կարող է մշակություն պայմանական լինել կամ նույնիսկ լռեցվելու աստիճան չարաշահվել (տես՝ Մատթ.23:25-26): Այն ՆԿ-ում 3 Թագ.19:12-ի «հանդարտ, մեղմ ձայնի» կամ «գեփյուռի ձայնի» հասկացությունն է:

Եբրայեցիներում այս տերմինի կիրառության վերաբերյալ մի շատ հետաքրքիր քննարկում է գտնվում Ռոբերտ Բ. Գրիլսթոունի *Հին Կտակարանի Հոմանիշներ* գրքում /Robert B. Girdlestone *Synonyms of The Old Testament*/.

«Եբրայեցիներին ուղղված թղթում այն հատվածները, որտեղ հանդիպում ենք այս բառին, շատ հետաքրքիր են և կարևոր: Եբր.9:9-ից հասկանում ենք, որ ՀԿ-յան գոհաբերությունները չէին կարողանում մարդուն դարձնել «կատարյալ խղճմտանքի առումով», այսինքն՝ չէին կարողանում հեռացնել մեղքի զգացողությունը, որը մարդուն խանգարում էր Աստծո հետ մեկ դառնալու հարցում: Իրականում դրանք չհեռացրեցին և փաստորեն չէին էլ կարող հեռացնել մեղքը՝ ըստ իրերի բնույթի, քանի որ, եթե Ղևտական ծիսակարգերի արդյունքում մարդիկ կատարյալ դառնային, այսինքն Աստծո հետ մեկ դառնային, ապա կարիք չէր լինի շարունակ գոհաբերություններ կատարել: Եթե երկրպագուները մեկընդմիջտ մաքրվեին, ապա այլևս մեղքերի խղճմտանք չէին ունենա (Եբր.10:2): Սակայն «Քրիստոսի արյունը» մաքրում է մարդու խղճմտանքը մեռած գործերից և կարողություն է տալիս նրան ծառայելու կենդանի Աստծուն (Եբր.9:14), և այսպիսով սիրտը լինում է «մաքրված չար խղճմտանքից» (10:22): Ուրիշ խոսքով, Քրիստոսի զոհը հավատքով ընդունելը հեռացնում է մեղքի զգացողությունը, որը եղել էր Աստծո և մարդու միջև ճաղավանդակ, և մարդուն կարողություն է տալիս այլևս ոչ թե ծառայի պես ապրելու, այլ՝ որդու» (Էջ՝ 73):

■ «կատարյալ» Տե՛ս Հատուկ Թեմա Եբր.7:11-ում:

9:10

NASB
NKJV
NRSV
TEV
NJB

«վերափոխման ժամանակ»
«վերափոխման ժամանակը»
«ուղղելու ժամանակը եկել է»
«ժամանակը, երբ Աստված նոր կարգ կհաստատի»
«ժամանակն է ուղղելու»

Սա վերաբերում է Հիսուսով նոր ուխտի հանդիսավոր բացմանը: Այս արտահայտությունը կիրառվում էր ռաբբիների կողմից վերջին «Հոբեյանական» տարվա մասին, երբ Մեսիան գալու է: Այն կիրառվում է բարոյախրատական իմաստով Երեմ.7:3,5:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 9:11-14

¹¹Բայց Քրիստոսը՝ գալիք բարիքների Քահանայապետը, եկավ ավելի մեծ ու կատարյալ խորանով, անձեռագործ, այսինքն՝ ո՛չ այս կառույցից. ¹²ո՛չ էլ նոխազների և զվարակների

արյունով, հապա Իր արյամբ մե՛կ անգամ ընդմիշտ մտավ սրբարանը՝ մեզ համար հավիտենական փրկություն ապահովելով: ¹³Որովհետև, եթե ցուլերի ու նոխազների արյունը և երինջների մոխրի սրսկումը պղծվածներին մաքրում էր մարմնավոր սրբության համար, ¹⁴հապա որքա՛ն ավելի Քրիստոսի արյունը, որ հավիտենական Հոգու միջոցով Իր անձն անարատ պատարագ մատուցեց Աստծուն, կարբի ձեր խղճմտանքը մեռած գործերից, որպեսզի կենդանի Աստծուն պաշտեք:

9:11 «Բայց Քրիստոսը ... Քահանայապետը, եկավ» Ե՛րբ տեղի ունեցավ սա.

1. Արարչագործությունից առաջ (տես՝ Հայտն.13:8)
2. Գողգոթայի վրա (տես՝ Եբր.9:12)
3. Հոր աջ կողմում համբարձում առնելուց հետո (մտավ երկնքի սրբարանը; տես՝ Եբր.9:24-25)

Արդյո՞ք Հիսուսը իրեն երկու անգամ մատուցեց պատարագ: Եթե այդպես է, ինչո՞ւ է ապա շեշտադրվում «մեկ անգամ ընդմիշտ»: Հավանաբար Նա մատուցեց Իր անձը որպես գոհ Գողգոթայի վրա, սակայն որպես Քահանայապետ գործեց Իր համբարձումից հետո կամ էլ հնարավոր է դա պարզապես (1) աստվածաբանական լուսաբանում է կամ (2) ներշնչված ռաբբիական միստիցիզմ:

■ **«գալիք բարիքների»** Հնագույն հունարեն ձեռագրերը տարբերվում են՝ (1) «գալիք բաներ» Ռ, A (NASB, NKJV, NJB) և (2) «արդեն այստեղ գնվող բաներ» P⁴⁶, B, D* (RSV, NEB, TEV, NIV):

■ **«անձեռագործ»** Ոմանք սա դիտարկում են հավատացյալների հարուցյալ ֆիզիկական մարմիններին (տես՝ 2 Կորնթ.5:1) և Հիսուսի մարմնին վերաբերող խոսք (տես՝ Մարկ.14:58): Սակայն համատեքստը նկատի ունի երկնային տաճարը (տես՝ Եբր.8:2; 9:24):

9:12 «ո՛չ էլ նոխազների և զվարակների արյունով» Նոխազները՝ այծերը, ժողովրդի մեղքի համար էին (տես՝ Ղևտ.16:11) և զվարակները՝ հորթերը, քահանայապետների մեղքի (տես՝ Ղևտ.16:11): ՀԿ-յան զոհաբերությունների համակարգը (տես՝ Ղևտ.1-7) Աստծո գթառատ հոգաձուլությունն էր, որով թույլ էր տալիս (որպես Քրիստոսի մահվան նախատիպ) անարատ՝ անբիծ մի կենդանի վճարեր մարդկության մեղքի մահվան պատիժը (տես՝ Ղևտ.17:11):

■ **«հապա Իր արյամբ»** Հունարեն «*dia*» նախդիրը կարող է նշանակել (1) «միջոցով» (NASB, NIV) կամ (2) «հետ» (NKJV, NRSV, NJB):

■ **«սրբարանը»** Այստեղ այն վերաբերում է երկնային խորանի «Սրբության Սրբոցին»:

■ **«մեկ անգամ ընդմիշտ»** Սա պարբերաբար կրկնվող շեշտադրում է (տես՝ Եբր.7:27; 9:28; 10:10): Այն շեշտադրում է Քրիստոսի կատարած և ավարտած գոհը: Տե՛ս ամբողջական գրառումը Եբր.7:27-ում:

9:12

NASB, NKJV,

NRSV

TEV

NJB

«հավիտենական փրկություն ձեռք բերելով»

«ձեռք բերեց հավիտենական փրկություն»

«ապահովելով հավիտենական փրկություն»

Սա ԱՈՐԻՍՏ ՉԵՉՈՔ ԴԵՐԲԱՅ է, որը մատնանշում է կատարված գործողություն՝ շեշտադրելով ենթակայի մասնակցությունն ու հետաքրքրվածությունը: «Հավիտենական» բառը հնարավոր է կապ ունի (1) իր որակի, «նոր դարաշրջանի կյանքի» կամ (2) իր քանակի՝ տևողության հետ, «անվերջանալի կյանքի»: Եբրայեցիների նամակում այսքան խիստ զգուշացումների հետ հավանաբար #1-ն ամենահարմարն է: Տե՛ս SPECIAL TOPIC: ETERNAL /Հատուկ Թեմա. Հավիտենական/, Եբր.6:2:

■ **«փրկություն»** Այս բառը վերաբերում է այն փրկագնին, որը վճարվում է մտերիմ բարեկամի կողմից ինչ-որ մեկին ազատելու համար: Սա ՀԿ-յան “go’el” բառն է (տես՝ Հռուբ 4; Եսայի 43:1; 44:22, 23; 48:20; 12:9; 63:9; Ովս.13:14):

9:13 «եթե» Սա ԱՌԱՉԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը ենթադրում է ճշմարտացիություն: Նախքան Քրիստոսը Աստված ընդունում էր Մովսիսական զոհաբերության համակարգը որպես մեղքը ծածկելու միջոց:

■ **«Երինջների մոխիր»** Կարմիր երնջի մոխիրը օգտագործվում էր ծիսական մաքրության համար (տես՝ Թվոց 19):

■ **«սրսկում»** Սա Մովսիսական ծեսերի մի մասն էր, որը հեղուկներ էր պարունակում (արյունը կամ կարմիր երնջի մոխիրը ջրի հետ խառնած): Սա հանդիսանում էր սրբություն կամ մաքրող գործողություն փոխանցելու միջոց: Ռոբերտ Բ. Գրդլսթոունը իր *Հին Կտակարանի Հոմանիշներ* գրքում (Robert B. Girdlestone *Synonyms of The Old Testament*) տալիս է մի շատ հետաքրքիր մեկնաբանություն:

«Սրսկումները» կամ ցողումները (*shantismo*) հատկապես Եբրայեցիներին ուղղված նամակում, երկու տեսակ են՝ առաջինը, որը կատարվում էր կարմիր երնջի մոխիրով մարդկանց վրա, որոնք կապ են ունեցել որոշակի պղծության հետ (Եբր.9:13), և երկրորդը, որը կատարվում էր արյամբ, այն մարդկանց և Գրքի վրա, որը Հին Ուխտն էր, նաև խորանի վրա և սուրբ պատարագի հետ առնչվող տարբեր անոթների վրա (Եբր.9:19,21): Բովանդակությունը, որի ստվերներն են հանդիսանում սրանք, Հիսուսի արյան սրսկումն է, որն ավելի լավ բաների մասին է խոսում, քան Աբելինը (Եբր.12:24)» (էջ՝ 152):

9:14 «որքան ավելի» Գրքի թեման է համեմատել այս երկու ուխտերը (տես՝ Եբր.2:1-3; 3:3; 8:6; 10:28-29):

■ **«որ հավիտենական Հոգու միջոցով»** Սա կա՛մ Քրիստոսի նախագոյության հոգու կամ Սուրբ Հոգու մասին է:

Միացյալ Աստվածաշնչյան Ընկերությունների *Եբրայեցիներին ուղղված Նամակի Ձեռնարկ* Էլինգ-ուորթ և Նիդա (*A Handbook on The Letter to the Hebrews* by Ellingworth and Nida) կողմից գրված գրքում թվարկվում են մի քանի պատճառներ, թե ինչու հավանաբար պետք է լիներ փոքրատառ «ի», երբ ժամանակակից թարգմանությունների մեծ մասը (NASB, NKJV, NRSV, TEV, NJB, NIV) գրում են մեծատառով:

1. Տրված չէ ՈՐՈՇԻՉ ՀՈՂ
2. Հեղինակը հաճախ խոսում է «Սուրբ Հոգու» մասին և Նրան դիմում է ամբողջական անվանումով
3. Այս արտահայտությունը կարող է գուցա հեռ՝ համագոր լինել «անվախճան կյանքի գործություն» արտահայտությանը Եբր. 7:16-ում (էջ՝ 196):

Նոր Միջազգային Մեկնաբանությունների Շարք իր գրքում Ֆ. Ֆ. Բրյուսը (*New International Commentary Series*, F. F. Bruce) ներկայացնում է մի հետաքրքիր մեկնաբանություն, որ Հոգու հասկացությունը ակնարկ է Եսայի մարգարեության այն բաժիններից, որտեղ պարունակվում են «ծառայի Երգերը» (40-54 գլուխները): Այս բաժնում, 42:1 ասում է՝ «Ես Իմ Հոգին դրեցի նրա վրա» (էջ՝ 205): Եբրայեցիների պես գրքի համար, որը ՀԿ-ը այսքան ազատությամբ է կիրառում, այս մեկնաբանությունը տրամաբանական է:

■ **«Իր անձը պատարագ մատուցեց»** Սա Քրիստոսի հոժարական քայլն է (տես՝ Հովհ.10:17-18; 2 Կորնթ.5:21; Փիլ.2:8; Եսայի 52:13-53:12): Տե՛ս **SPECIAL TOPIC: JESUS AS HIGH PRIEST** /ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԻՍՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ/ Եբր.2:17-ում:

■ **«անարատ»** Տե՛ս Հատուկ Թեմա Եբր.7:26:

■ **«մեռած գործերից»** Այս նույն արտահայտությունը հանդիպում ենք Եբր.6:1-ում, որտեղ այն վերաբերում է ՀԿ-յան ծեսերին և ընթացակարգերին՝ որպես փրկություն ստանալու միջոց: Ճշմարիտ միջոցը Աստծո Գառան կատարած փոխանորդական քավությունն է (տես՝ Հովհ.1:29; 1 Հովհ.3:5): Ես իրապես գնահատում եմ Մ. Ռ. Վինսենթի մեկնաբանությունը իր *Բառային Սերտողություն Նոր Կտակարանում* /*M. R. Vincent Word Studies in the New Testament*/ գրքում, որը կապում է մեռած գործերը ինքն իրեն արդարացնող օրինապաշտության հետ:

«Այն փոխում է գործերի բնույթը՝ էությունը, դրանք ազատելով մահվան տարրից: Այս տարրը պատկանում է ոչ միայն գործերին, որոնք որպես մեղսալից են ընդունվում և գործվում են մեղավոր մարդկանց կողմից, այլ նաև այն գործերին, որոնք կատարվում են կրոնի անվան տակ, մինչդեռ իրականցվում են միայն օրինապաշտության հոգով: Քիչ թե շատ, քանի որ այն հանդիսանում է հիմնականում հավատքի կրոն, Քրիստոնությունը գործերին ենթարկում է ամենախիստ և ամենաարմատական փորձաքննության: Դասախոս Բրյուսը իրավացի է ասելով, թե «Քրիստոսի փրկելու գործության ամենադաժան փորձությունը օրինապաշտ կրոնից բխող կապերը քանդելու իր կարողությունն էր. կապեր, որոնց միջոցով շատերն են կապված, որոնք փախել են անպարկեշտ, մեղսալից սովորությունների տիրակալությունից» (էջ՝ 1139-1140):

■ **«որպեսզի կենդանի Աստծուն պաշտեք /անգլ.՝ ծառայեք/»** Ուշադրություն դարձրեք, որ հավատացյալները փրկվում են ծառայելու համար (տես՝ Հռոմեացիների 6): Փրկությունը մեղքի բռնակալությունից ազատությունն է, Աստծո տիրակալությանը մեջ մտնելու: Փրկությունը արդյունքը չէ (նախապես գնված տոմս դեպի երկինք կամ հակահեղեղային ապահովագրություն), այլ հավատքի, հնազանդության և ծառայության փոխհարաբերություն՝ կյանք: Բոլոր հավատացյալները Քրիստոսի մարմնի ծառայության (տես՝ 1 Կորնթ. 12:7,12) և շինության համար պարզևներ ունեն (տես՝ Եփես. 4:11-12):

«Կենդանի» ԱՃԱԿԱՆԸ բառախաղ է ՀԿ-յան ուխտի Աստծո անվան՝ ՅԱՀՎԵԻ հետ կապված, որը «լինել» ԲԱՅԻ արմատից է ծագել: ՅԱՀՎԵՆ հավիտյանս կենդանի, միակ կենդանի Աստվածն է: Տե՛ս Special Topic: The Names of Deity /Հատուկ Թեմա. Աստվածության Անունները/ էջ՝ 36:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 9:15-22
¹⁵Այս պատճառով Նա նոր ուխտի Միջնորդն է, որպեսզի առաջին ուխտի տակ գործված հանցանքների քավության համար եղած մահվան միջոցով, նրանք, որ կանչված են, հավիտենական ժառանգության խոստումն ստանան: ¹⁶Քանի որ որտեղ կտակ կա, այնտեղ անհրաժեշտ է նաև, որ կտակարարի մահը լինի: ¹⁷Որովհետև կտակը հաստատվում է կտակարարի մահից հետո, այլապես քանի դեռ կտակ անողը ողջ է կտակն ուժի մեջ չի լինի: ¹⁸Այդ պատճառով առաջին ուխտն էլ առանց արյան չհաստատվեց. ¹⁹երբ Մովսեսն օրենքի բոլոր պատվերները ժողովրդին հայտնեց, վերցրեց ցուլերի և նոխազների արյունը ու ջրով, կարմիր բրդով և գոպայով սրսկեց և՛ գրքի, և՛ ամբողջ ժողովրդի վրա, ²⁰ասելով. «ՄԱ ԱՅՆ ՈՒԽՏԻ ԱՐՅՈՒՆ Է, ՈՐ ԱՍՏՎԱԾ ՁԵՁ ՊԱՏՎԻՐԵՑ»: ²¹Ապա արյունը նույնպես խորանի ու պաշտամունքի բոլոր անոթների վրա սրսկեց: ²²Եվ ըստ Օրենքի գրեթե ամեն ինչ արյունով է սրբվում, և առանց արյուն թափելու թողություն չկա:

9:15 «Միջնորդ» Տե՛ս գրառումներ Եբր. 8:6 (տես՝ Եբր. 12:24; 1 Տիմ. 2:5)

■ **«նոր ուխտ»** Այս տերմինը առաջին անգամ գործածվել է Եբր. 8:8,13-ում, սակայն ակնարկվել է Եբր. 7:22-ից: Այս ցնցող տերմինը կարելի է գտնել ՀԿ-յան միայն մեկ հատվածում (տես՝ Եբրեմ. 31:31-34) և նկարագրվում է Եզեկ. 36:22-38-ում: 15-18 համարները բառախաղ են «ուխտ» բառի երկու նշանակության շուրջ՝ օրինական պայմանագիր կամ համաձայնություն (եբրայերենում) և վերջին կամք և կտակ (հունարենում և լատիներենում):

■ **«որպեսզի առաջին ուխտի տակ գործված հանցանքների քավության համար եղած մահվան միջոցով, նրանք, որ կանչված են, հավիտենական ժառանգության խոստումն ստանան»** Հիշեք, որ Եբրայեցիների գիրքը Հին և Նոր ուխտերի համեմատություն է: Մովսեսական Ուխտը դարձավ մահվան դատավճիռ (տես՝ Եփես. 2:14-16; Կող. 2:14) Աստծո ստեղծագործության գլուխգործոցի համար (մարդկության), քանի որ Ծննդոց 3-ից հետո նրանք ի վիճակի չէին հնազանդվելու և կատարելու Աստծո պատվերները: Առաջին ուխտը ասում էր «կատարի՛ր և կատարես», սակայն ոչ որ չկարողացավ լիարժեք կերպով համապատասխանել այս ուխտի պահանջներին: Հին Ուխտը հայտարարում էր «այն անձը, որ մեղք է գործում՝ մեռնելու է» (տես՝ 4 Թագ. 14:6; Եզեկ. 18:4,20): Աստծո պատասխանը եղավ մի անմեղ, կատարյալ Իսրայելացի, որը վճարելու էր բոլոր ժամանակների ամբողջ մարդկության համար գինը (տես՝ Եսայի 52:13-53:12):

«Նրանք, որ կանչված են» արտահայտությունը վերաբերում է Աստծո կողմից նախաձեռնած կանչին, որ ճանաչեն Իրեն (տես՝ Եբր. 3:1; Հովհ. 6:44,65; Հռոմ. 8:28,30; 9:24): Տե՛ս ամբողջական գրառումները Եբր. 3:1:

«Ժառանգություն» հասկացությունը կապված է ՅԱՀՎԵԻ հետ Ղևտացիների ունեցած բացառիկ փոխհարաբերությանը: Նրանք հանդիսանում էին Նրա ժառանգությունը և Նա էլ նրանցը (ոչ թե մյուս ցեղերի պես՝ հողատարածքները): Նոր ուխտի հավատացյալները այժմ նման են ՀԿ-ի քահանաներին (տես՝ 2 Պետ. 3:5,9; Հայտ. 1:6): Հավատացյալները ունեն հավիտենական ժառանգություն, որը ապահովվեց Քրիստոսի կողմից և պահպանվում է Աստծո կողմից (տես՝ 1 Պետ. 1:3-5):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՐԿԱԳԻՆ/ՓՐԿԱԳՆԵԼ
SPECIAL TOPIC: RANSOM/REDEEM

I. ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ
 Ա. Հիմնականում Եբրայերենում կան երկու օրինական տերմիններ, որոնք փոխանցում են այս հասկացությունը:

1. *Ga'al* (BDB 145 I, KB 169 I), որը սովորաբար նշանակում է «վճարված գնի միջոցով ազատել»: *go'el* տերմինի մի ձևը հավելում է այս հասկացությանը անձնական միջնորդության նշանակություն, սովորաբար ընտանիքի անդամի կողմից (այսինքն՝ հարազատ՝ բարեկամ փրկագնող): Առարկաներ, կենդանիներ, հողատարածք կամ բարեկամներ (տես՝ Հոբ 4:14; Եսայի 29:22) ետ գնելու իրավունքի մշակությամբ այս գործառույթը (տես՝ Ղևտացիների 25,27) աստվածաբանորեն փոխանցված է ՅԱՀՎԵի կողմից՝ Իսրայելին Եգիպտոսի ազատագրումից (տես՝ Ելից 6:6; 15:13; Սաղմ.74:2; 77:15; Երեմ.31:11): Նա դառնում է «Փրկիչը» (տես՝ Հոբ 19:25; Սաղմ.19:14; 78:35; Առակ.23:11; Եսայի 41:14; 43:14; 44:6,24; 47:4; 48:17; 49:7,26; 54:5,8; 59:20; 60:16; 63:16; Երեմ.50:34):
2. *Padah* (BDB 804, KB 911), որը հիմնականում նշանակում է «ազատել» կամ «փրկել»:
 - ա. առաջնեկների ազատումը (Ելից 13:13-15 և Թվոց 18:15-17)
 - բ. ֆիզիկական ազատագրումը՝ հակադրված հոգևոր ազատագրման հետ (Սաղմ. 49:7, 8,15)
 - գ. ՅԱՀՎԵն փրկելու է Իսրայելին իրենց մեղքից և ապստամբությունից (Սաղմ.130:7-8)

Բ. Աստվածաբանական հասկացությունը ներառում է մի քանի փոխկապակցված երևույթներ.

1. Առկա է կարիքը, կապանքը, զրկանքը, բանտարկությունը:
 - ա. ֆիզիկական
 - բ. սոցիալական
 - գ. հոգևոր (տես՝ Սաղմ.130:8)
2. Ազատության, ազատ արձակման և վերականգնման համար պետք է գին վճարվի՝
 - ա. Իսրայել ազգի համար (տես՝ 2 Օր.7:8)
 - բ. անհատի համար (տես՝ Հոբ 19:25-27; 33:28; Եսայի 53)
3. Ինչ-որ մեկը պետք է գործի որպես միջնորդ և օգնական: *ga'al* տերմինում այս մեկը սովորաբար ընտանիքի որևէ անդամ է կամ մտերիմ բարեկամ (այսինքն՝ *go'el*, BDB 145):
4. ՅԱՀՎԵն հաճախ Իրեն բնութագրում է ընտանեկան տերմիններով.
 - ա. Հայր
 - բ. Ամուսին
 - գ. Մտերիմ Բարեկամ Փրկիչ/ Վրեժխնդրության փրկագնումը ապահովվեց ՅԱՀՎԵի անձնական ներգրավվածությամբ, զինը վճարվեց և փրկությունը իրականություն դարձավ:

II. ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Ա. Գոյություն ունեն մի քանի տերմիններ, որոնք փոխանցում են աստվածաբանական նշանակությունը:

1. *Agorazō* (տես՝ 1 Կորնթ.6:20; 7:23; 2 Պետ.2:1; Հայտն.5:9; 14:3-4): Սա առևտրային տերմին է, որն արտահայտում է ինչ-որ բանի համար վճարված գին: Մենք արյամբ գնված ժողովուրդ ենք, և այլևս ինքներս մեր կյանքը չենք վերահսկում: Մենք պատկանում ենք Զրիստոսին:
2. *Exagorazō* (տես՝ Գաղ.3:13; 4:5; Եփես.5:16; Կող.4:5): Սա նույնպես առևտրային տերմին է: Այն արտացոլում է մեզ համար Հիսուսի փոխանորդական մահը: Հիսուսը կրեց գործերով հիմնավորված օրենքի «անեծքը» (այսինքն՝ Մովսիսական Օրենքի, տես՝ Եփես.2:14-16; Կող.2:14), որոնք մեղավոր մարդիկ չկարողացան կատարել: Նա կրեց անեծքը (տես՝ 2 Օր.21:23) մեր բոլորի համար (տես՝ Մարկ.10:45; 2 Կորնթ.5:21): Հիսուսով Աստծո արդարությունը և սերը հասնում են կատարյալ ներման, ընդունելության և մուտքի իրավունքի:
3. *Luō*, «ազատել»
 - ա. *Lutron*, «վճարված գին» (տես՝ Մատթ.20:28; Մարկ.10:45): Մրանք հզոր խոսքեր են, որ հնչել են Հիսուսի բերանից Իր գալստյան նպատակի մասին՝ աշխարհի Փրկիչը լինելու, վճարելով մեղքի պարտքը, որն Իրենը չէր (տես՝ Հովհ. 1:29):
 - բ. *Lutroō*, «ազատ արձակել»
 - (1) Փրկել Իսրայելը (Ղուկաս 24:21)
 - (2) Իր անձը տալ, որպեսզի ազատի և մաքրի մի ամբողջ ժողովրդի (Տիտոս 2:14)
 - (3) Անմեղ փոխանորդ լինել (1 Պետ.1:18-19)
 - գ. *Lutrosis*, «փրկագնում», «ազատագրում» կամ «ազատություն տալ»
 - (1) Չաքարիայի մարգարեությունը Հիսուսի մասին, Ղուկաս 1:68

(2) Աննայի փառաբանությունն Աստծուն Հիսուսի համար, Ղուկաս 2:38

(3) Հիսուսի ավելի լավ և մեկ անգամ մատուցած զոհը, Եբր.9:12

4. *Apologetics*

ա. փրկությունն Երկրորդ գալստյան ժամանակ (տես՝ Գործք 3:19-21)

(1) Ղուկաս 21:28

(2) Հռոմեացիների 8:23

(3) Եփեսացիների 1:14; 4:30

(4) Եբրայեցիների 9:15

բ. Փրկությունը Քրիստոսի մահվան մեջ

(1) Հռոմեացիների 3:240

(2) 1 Կորնթացիների 1:30

(3) Եփեսացիների 1:7

(4) Կողոսացիների 1:14

5. *Antitypon* (տես՝ 1 Տիմ.2:6): Սա շատ կարևոր տեքստ է (ինչպես և Տիտոս 2:14), որը կապում է ազատագրումը խաչի վրա Հիսուսի փոխանորդական մահվան հետ: Նա է միակ և անկրկնելի ընդունելի զոհը, Մեկը, որ մահացավ «բոլորի» համար (տես՝ Հովհ.1:29; 3:16-17; 4:42; 1 Տիմ.2:4; 4:10; Տիտոս 2:11; 2 Պետ.3:9; 1 Հովհ.2:2; 4:14):

Բ. Աստվածաբանական հասկացությունը ՆԿ-ում:

1. Մարդկությունը գերի է դարձել մեղքին (տես՝ Հովհ.8:34; Հռոմ.3:10-18,23; 6:23):

2. Մարդկության մեղքի կապանքը բացահայտվեց ՀԿ-յան Մովսիսական Օրենքի (տես՝ Գաղատացիների 3) և Հիսուսի Լեռան Քարոզի միջոցով (տես՝ Մատթեոս 5-7): Մարդկային գործերը դարձան մահվան դատավճիռ (տես՝ Կող.2:14):

3. Հիսուսը՝ Աստծո անմեղ Գառը, եկել է և մահացել մեր փոխարեն (տես՝ Մարկ.10:45; Հովհ.1:29; 2 Կորնթ.5:21): Մենք գնվել ենք մեղքից, որպեսզի ծառայենք Աստծուն (տես՝ Հռոմեացիների 6):

4. ՅԱՀՎԵԻՆ և Հիսուսին նշելով որպես «մտերիմ բարեկամ», որոնք գործում են մեզ համար: Սա շարունակում է ընտանեկան տերմիններով ներկայացված փոխաբերությունները (այսինքն՝ հայր, ամուսին, որդի, եղբայր, բարեկամ):

5. Փրկությունը՝ փրկագնումը, Սատանային վճարված գին չէր (այսինքն՝ Միջնադարյան աստվածաբանություն), այլ Քրիստոսի մեջ Աստծո խոսքի և Աստծո արդարության հաշտությունը Աստծո սիրո և կատարյալ հոգածության հետ: Խաչի վրա վերականգնվեց խաղաղությունը, մարդկության ապստամբությունը ներվեց, Աստծո պատկերը մարդկանց մեջ հիմա նորից լիարժեք գործում է մտերմիկ փոխհարաբերությամբ:

6. Մինչդեռ գոյություն ունի փրկության ապառնի տեսքը (տես՝ Հռոմ.8:23; Եփես.1:14; 4:30), որը ներառում է մեր հարուցյալ մարմինները և անձնական մտերմությունը Երրորդության Աստծո հետ (տես՝ Հատուկ Թեմա. Երրորդություն): Մեր հարուցյալ մարմինները լինելու են Նրա մարմնի պես (տես՝ 1 Հովհ.3:2): Նա ուներ ֆիզիկական մարմին, սակայն հավելյալ տարածաչափական տեսքով: Դժվար է սահմանել 1 Կորնթ. 15:12-19-ի պարադոքսը 1 Կորնթ.15:35-58-ի հետ: Ըստ երևույթին գոյություն ունի ֆիզիկական, երկրավոր մարմին և լինելու է երկնավոր, հոգևոր մարմին: Հիսուսը երկունս էլ ուներ:

■ «հաստատվել» Տե՛ս Եբր.10:20 գրառումները:

9:19 «նոխագների արյունը ու ջրով, կարմիր բրդով և զոպայով» Կարծես թե հեղինակը կապակցել է Ղևտ.14:6-7-ում բորոտի վրա արյան ցողումով մաքրագործումը Ելից 24:1-9-ում Սինա լեռան վրա Տաս Պատվիրանների սրբագործման հետ: Գլուխ 24-ում խորանը դեռ չկար (տես՝ Ելից 40): Ջոզեֆուն ասում է մեզ, որ արյան ցողումը՝ արսկումը, Ելից 40-ի ծիսակարգի մի մասն էր հանդիսանում:

«Նոխագներ» /այծեր/ բառը որոշ հնագույն հունարեն ձեռագրերում բացակայում է (P⁴⁶, 8^c, K, L) ինչպես նաև Սիրիակ թարգմանության մեջ և Օրիգենի կողմից գործածված հունարեն տեքստում: Այծերը սովորաբար օգտագործվում էին մեղքի պատարագների համար, ոչ թե ուխտի հաստատման՝ վավերացման (չնայած ոչ բացառապես. տես՝ Ծննդ.15:9): Նոխագներ բառը բացակայում է «տասնամատյանի» (Թորայի) հաստատման մեջ՝ Ելից 24:1-8: Հավանաբար «նոխագները» մեկ այլ ակնարկ է Քավության Օրվան՝ Ղևտացիների 16, որտեղ այծերը հանդիսանում են ծիսակարգի մեջ ներգրավված մի մաս:

Մեր ժամանակակից տեսանկյունից դժվար է պնդել, որ Գործք 7-ը (Ստեփանոսի քարոզը) և Եբրայեցիների հեղինակը (հին խորանի վերաբերյալ 9-րդ գլխի նկարագրությունը) ճշգրիտ չեն: Այնքան

շատ բաներ կան, որ հայտնի չեն հենց հնագույն ծեսերի և դրանց հետ կապված մշտապես փոփոխվող ռաբբիական սովորույթների վերաբերյալ:

9:20 Սա մեջբերում է Ելից 24:8-ից:

9:22 «գրեթե ամեն ինչ» ՀԿ-յան համակարգում որոշ բաներ մաքրվում էին առանց արյան. (1) Ղևտ.5:11; (2) Թվոց 16:46; (3) Թվոց 31:22-23; (4) Ելից 19:10; 32:30-32; Ղևտ.15:5; 16:26,28; 22:6; (5) Սաղմոս 51: Տե՛ս հաջորդող գրառումը:

■ **«առանց արյուն թափելու թողություն չկա»** ՀԿ-ում սրբվելը պահանջում էր (1) կրակ, (2) ջուր կամ (3) արյուն: Այս հեղինակը մեղքին լուրջ է վերաբերվում: Թողությունը իրենից նաև ներկայացնում է հանձնված կյանք (տես՝ Ղևտ. 17:11,14): ՀԿ-յան պատարագների՝ զոհերի համակարգը (տես՝ Ղևտացիների 1-7) հարթակ է ստեղծում մեզ համար, որպեսզի հասկանանք Քրիստոսի փոխանորդական մահը (տես՝ Մատթ.26:28; Մարկ.10:45; 1 Կորնթ.11:25; 2 Կորնթ.5:21):

ՀԿ-ում գոյություն ունեին առանց արյան առարկաների, մարդկանց մաքրման մի քանի կերպեր:

1. Կրակով (տես՝ Ղևտ.13:52,55; 16:27; Թվոց 31:23)
2. Ջրով (տես՝ Ելից 19:30; Ղևտ. 15:5; 16:26,28; 22:6; Թվոց 31:24)
3. Այուրի զոհաբերությամբ (տես՝ Ղևտ.5:11-13)
4. Խնկով (տես՝ Թվոց 16:46-48)
5. Բարեխոսությամբ (տես՝ Ելից 32:30-32)
6. Խոստովանության և գոջման աղոթքով (տես՝ Սաղմոս 32 և 51)

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 9:23-28
²³Ուրեմն անհրաժեշտ էր, որ երկնային բաների ընդօրինակությունները սրանցով սրբվեն, սակայն բուն երկնավորները՝ սրանցից ավելի լավ զոհերով: ²⁴Քանզի Քրիստոսը ոչ թե ճշմարիտի ընդօրինակությունը եղող ձեռագործ սրբարանը մտավ, այլ՝ բուն երկինքը, որպեսզի հիմա Աստծո առջև ներկայանա մեզ համար: ²⁵Ո՛չ թե Իր անձը պատարագ մատուցի շատ անգամներ, ինչպես քահանայապետն ամեն տարի Սրբությունների Սրբություն է մտնում ուրիշների արյունով, ²⁶այլապես Նա պետք է շատ անգամներ չարչարվեր աշխարհի սկզբից ի վեր, բայց հիմա՝ ժամանակների վերջում, մեկ անգամ ընդմիջտ հայտնվեց՝ Իր անձի պատարագումով մեղքը ջնջելու համար: ²⁷Եվ ինչպես մարդկանց համար սահմանված է մեկ անգամ մեռնել և որից հետո՝ դատաստան: ²⁸Այնպես էլ Քրիստոսը մեկ անգամ պատարագվեց շատերի մեղքերը կրելու համար: Նրանց համար, ովքեր սպասում են Իրեն, Նա հայտնվելու է երկրորդ անգամ, ոչ թե մեղքի, այլ փրկության համար:

9:23 «երկնային բաների ընդօրինակությունները սրանցով սրբվեն» Մարդկության մեղքի միջոցով երկնային բաների աղտոտված լինելու հասկացությունը այս հեղինակի համար անսովոր է, սակայն ոչ յուրահատուկ (տես՝ Հռոմ.8:18-22): Քավության Օրը, որը շատ հաճախ է ակնարկվում այս գլխի մեջ, իր մեջ ներառում է ամեն տարի խորանի մաքրման ծիսական արարողակարգ (տես՝ Ելից 30:10; Ղևտ. 16:11-20): Հնարավոր է երկինքը աղտոտված է եղել՝

1. Մարդկության անկման պատճառով (տես՝ Հռոմ.8:48-22; Կող.1:20)
2. Սատանայի ներկայությամբ (տես՝ Հոր 12; Չաքարիա 3)
3. Ռաբբիական ավանդույթի մեջ պարզապես մի գաղափար է

9:24 «հիմա Աստծո առջև ներկայանա մեզ համար» Հիսուսի քահանայական գործը կատարվեց երկու մակարդակով՝ (1) որպես երկրի վրա զոհաբերություն և (2) որպես քահանա երկնքում: Այս արտահայտությունը կարելի է երկու իմաստով հասկանալ. ըստ համատեքստի այն վերաբերում է անկում ապրած մարդկության համար Իր պատարագված մահվանը, սակայն կարելի է սա ընկալել որպես Իր շարունակական բարեխոսական ծառայության վերաբերյալ խոսք (տես՝ Եբր.7:25; Հռոմ.8:34; 1 Հովհ.2:1):

«Ներկայանալ» տերմինը *emphanizō* է, որը նշանակում է «հայտնել» (տես՝ Մատթ.27:53): Եբր.9:26-ում «հայտնել» *phaneroō* բառն է կիրառվում (տես՝ 2 Կորնթ.5:10; Կող.3:4; 1 Պետ.5:4; 1 Հովհ.2:28; 3:2), իսկ Եբր.9:28-ում՝ «հայտնել» *optomai* բառը (տես՝ Մատթ.17:3; Ղուկ.1:11; 9:31; 22:43; 24:34; Գործք 2:3; 7:2,30,35; 9:17; 16:9; 26:16):

Չարմանալի է, որ հեղինակը կիրառում է երեք հոմանիշ տերմիններ:

9:25 Այս համարը շարունակում է Եբրայեցիների գրքի այն շեշտադրումը, որ Հիսուսը Իր անձը տվեց «մեկ անգամ» (տես՝ Եբր.7:27; 9:11,25-28; 10:10), ուստի և, Նրա քահանայությունը, զոհը և սրբարանը ՀԿ-յան կրկնորդներից ավելի գերազանց են

9:26

NASB
NKJV
NRSV
TEV
NJB

«այլապես Նա պետք է շատ անգամներ չարչարվեր»
«հապա Նա պետք է որ հաճախ չարչարվեր»
«քանի որ այդ դեպքում Նա կրկին պետք է չարչարվեր»
«քանի որ այդ դեպքում Նա շատ անգամներ պետք է չարչարվեր»
«այլապես Նա պետք է կրկին ու կրկին չարչարվեր»

Իր *Բառապատկերները Նոր Կտակարանում* գրքում Ա. Տ. Ռոբերտսոնը հայտարարում է, որ սա ենթադրական ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է (Հատոր 5, էջ՝ 404), որը ենթադրում է ոչ իրական սահմանում ոչ իրական եզրահանգմամբ: Հիսուսը չարչարվեց միայն մեկ անգամ, և ոչ թե պարբերաբար կատարվող զոհաբերությունների պես:

NASB
NKJV
NRSV
TEV
NJB

«ժամանակների վախճանին»
«ժամանակների վերջում»
«ժամանակի վերջում»
«հիմա, երբ ժամանակները մոտենում են իրենց վերջին»
«վերջին ժամանակի ավարտին»

Գոյություն ունեն մի քանի հունարեն տերմիններ, որ կապված են «ժամանակ», «հավիտենություն» և «դարաշրջան»: Գլուխ 9-ում ժամանակի այս երեք հղումներն էլ կիրառված են.

1. Եբր.9:9, «ներկա ժամանակ», այսինքն՝ Հին Կտակարան
2. Եբր.9:10, «վերափոխման ժամանակ», այսինքն՝ Նոր Կտակարան (նոր դարաշրջանի մեկնարկը)
3. Եբր.9:26, «դարաշրջանների վախճանը», այսինքն՝ արդարության նոր դարաշրջան (նոր դարաշրջանի վախճանը, տես՝ Մատթ.13:39,40,49; 24:3; 28:20)

Ռաբբիները և ՆԿ-յան հեղինակները կանխատեսեցին երկու դարաշրջաններ (հորիզոնական դյուալիզմ). (1) ընթացիկ՝ ներկայիս չար դարաշրջանը, որին հատկանշական է մարդկության ապստամբությունը և Աստծո անեծքը, և (2) գալիք դարաշրջանը՝ բացված Մեսիայի կողմից, արդարության օրը:

ՀԿ-ը կենտրոնանում է որպես Դատավոր և Իշխան Մեսիայի փառավոր, հզոր գալստյան վրա, սակայն ՆԿ-ը հայտնում է, որ Նա երկու անգամ է գալու. մի անգամ որպես չարչարվող ծառա՝ Աստծո Գառ և հետագայում ճիշտ այնպես, ինչպես ՀԿ է կանխասել: Այս երկու առանձին գալուստները պատճառ են հանդիսացել հրեական երկու դարաշրջանների միախլումն: Աստծո Արքայությունը եկել է Հիսուսի ծնունդով, սակայն չի ավարտվելու մինչև Նրա փառավոր վերադարձը: Այսպիսով հավատացյալները դառնում են երկու տերությունների քաղաքացիներ՝ հավիտենական և ժամանակավոր թագավորությունների:

9:27 Այս համարը անշուշտ հերքում է հոգիների վերաբնակեցման՝ *kharma*-ի անիվի կամ նախորդ կյանքերի ցանկացած գաղափարը, պատկերացումը, որը սարսափելի վարդապետություն է մեղավոր և ընկած մարդկության համար: «Մեկ կյանք, ապա դատաստան» Քրիստոնեական աշխարհայացքն է, որ նպաստում է ավետարանչության հրատապությանը, որ ոչնչացնում է ունիվերսալիզմի աստվածաբանական հասկացությունը («բոլոր մարդիկ ժամանակների վախճանին փրկվելու են» գաղափարը), որ պահանջում է Մեծ Հանձնարարականը (տես՝ Մատթ.28:19-20) չվերածել լավ առաջարկի կամ հրաշալի ընտրության:

9:28 «շատերի մեղքերը կրելու համար» Հնարավոր է սա ակնարկ է Եսայի 53:12 (տես՝ 1 Պետ.2:24): «Շատեր» տերմինը բացառիկ չէ (ոմանք), այլ համազոր է 53:6-ի «բոլոր» բառին (տես՝ Հռոմ.5:18, «բոլոր»; 5:19, «շատերը»):

«Կրել» տերմինը նաև կարող է լինել ակնարկ Եսայի 53:4,11,12-ի: Եբրայերեն բայը նշանակում է «կրել» կամ «հեռացնել» (տես՝ 1 Պետ.2:24): «Հիսուսը վճարեց մի պարտք, որն Իրենը չէր. մենք պարտք ունեինք, որը չկարողացանք վճարել»:

■ **«հայտնվելու է երկրորդ անգամ»** Սա հավանաբար վերաբերում է Քրիստոսի Երկրորդ Գալստյանը՝ ՆԿ-ում պարբերաբար կրկնվող թեմա (տես՝ Մատթ.24:3,27,30,37,39,42,44; 26:64; Մարկ.13:20; 14:62; Ղուկ.21:27; Հովհ.14:3; Գործք 1:11; 1 Կորնթ.1:7; 15:23; Փիլ.3:20-21; 1 Թեսաղ.2:19; 3:13; 4:15-16; 5:23; 2 Թեսաղ.1:7,10; 2:1,8; 1 Տիմ.6:14; 2 Տիմ.4:1,8; Տիտոս 2:13; Եբր.9:28; Հակ.5:7-8; 1 Պետ.1:7,13; 2 Պետ.1:16; 3:4,12; 1 Հովհ.2:28): Տե՛ս Հատուկ Թեմա. Փրկության համար հունարեն բայի ժամանակները, Եբր.1:14:

Այնուամենայնիվ, համաձայն համատեքստի հնարավոր է, որ այն վերաբերում է Իր մեծ և հաջողված գոհից հետո Քրիստոսի երկնային խորանը թողնելուն (տես՝ *Նոր Կտակարանի Տրանսլայն Մայքլ Մագիլ*, էջ՝ 846, #32 և 35. /*New Testament Transline by Michael Magill*/):

Այստեղ առկա է Քավության Օրը Սրբության Սրբոցում ՀԿ-ի Քահանայապետի նմանությունը:

NASB	«փրկության համար առանց մեղքի»
NKJV	«առանց մեղքի, փրկության համար»
NRSV, TEV	«մեղքի հետ գործ չունենալու, այլ փրկելու»
NJB	«այլևս մեղք չկա... փրկություն բերելու»

Այս արտահայտությունը կարծես թե ենթադրում է, որ Քրիստոսը առաջին անգամ եկավ լուծելու մարդկության մեղքի հիմնախնդիրը, սակայն Նա վերադառնալու է Իր մոտ հավաքելու (տես՝ 1 Թեսաղ.4:13-18) նրանց, ովքեր վստահել են Իրեն և փափագում են Նրա վերադարձը (տես՝ Հռոմ.8:19,23; 1 Կորնթ.1:7; Փիլ.3:20; Տիտոս 2:13):

■ **«նրանց համար, ովքեր սպասում են Իրեն»** Սա կարող է լինել Քավության Օրվա արարողության հետ կապված ևս մեկ ակնարկ, որտեղ խորալեզուները անհամբեր սպասում էին Քահանայապետին, թե երբ է Սրբության Սրբոցից ողջ և առողջ դուրս գալու, որը խորհրդապատկերում էր, որ ՅԱՀՎԵՆ ընդունել էր նրա մատուցած բարեխոսության ծառայությունը:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ է Եբրայեցիների հեղինակը քննարկում անապատի հին խորանը:
2. Ինչո՞ւ է 9:9 համարը աստվածաբանորեն նշանակալի:
3. Գոյություն ունի՞ արդյոք Երկնքում իրական ֆիզիկական խորան, որտեղ իրականում Քրիստոսը մտավ և գոհ մատուցեց:
4. «Ուխտի» ի՞նչ երկու նշանակություն է կիրառում հեղինակը 15-18 համարներում:

ԵՔՐԱՅԵՑԻՆԵՐԻ 10

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Քրիստոսի զոհով մեղքը հեռացվեց (9:23-10:18)	Անբավարար կենդանական զոհեր	Քրիստոսի զոհի հատկանիշները (9:11-10:18)	Քրիստոսի զոհը վերցնում է մեղքերը (9:23-10:18)	Հին զոհը անարդյունավետ է
10:1-4	10:1-4	10:1-10	10:1-4	10:1-10
	Քրիստոսի մահը կատարում է Աստծո կամքը			
10:5-10	10:5-10		10:5-10	
	Քրիստոսի մահը կատարյալ դարձրեց սրբվածներին			Քրիստոսի զոհի ազդեցությունը
10:11-14 10:15-18	10:11-18	10:11-18	10:11-14 10:15-18	10:11-18
Հորդորներ և զգուշացումներ	Ամուր պահեք ձեր դավանանքը	Հորդորներ և զգուշացումներ	Եկեք մոտենանք Աստծուն	Քրիստոնեական հնարավորություն
10:19-25	10:19-25	10:19-25	10:19-25	10:19-25
	Արդարները հավատքով են ապրում			Հավատուրացության վտանգները
10:26-31	10:26-39	10:26-31	10:26-31	10:26-31
				Համբերատարության դրդապատճառներ
10:32-39		10:32-39	10:32-39	10:32-39

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդայու Ուղեգույժ»)

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեգույժ մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Գրականական բաժինը սկսվում է Եբր.8:1-ում և շարունակվում մինչև Եբր.10:18:

Բ. Սա ակնարկում է ծառայության երեք կերպերի, որոնք Հիսուսի դեպքում Ղևտական քահանաների ծառայությունից ավելի գերազանց են:

1. Հիսուսի գերազանց գոհը (Նրա իսկ արյունը, տես՝ Եբր.9:12-14)
2. Հիսուսի կողմից մեկ անգամ բոլորի համար կատարած պատարագը (տես՝ ամբողջական գրառում Եբր.7:27)
3. Հիսուսի երկնավոր և ոչ թե երկրավոր սրբարանը (տես՝ Եբր.9:11)

Գ. Եբրայեցիներում պարբերաբար կիրառվում է *teleioō* բառը:

1. Եբր.2:10, Հիսուսը կատարյալ դարձավ չարչարանքների միջոցով
2. Եբր.5:9, Հիսուսը կատարյալ դարձավ և եղավ հավիտենական փրկության աղբյուր
3. Եբր.7:19, Մովսիսական Օրենքը ոչինչ կատարյալ չէր դարձնում
4. Եբր.7:28, Հիսուսը կատարյալ դարձած է
5. Եբր.9:9, Մովսիսական ծեսերը չէին կարող պաշտողների խղճմտանքը մաքրել՝ սրբել
6. Եբր.10:1, Մովսիսական ծեսերը անկարող էին պաշտողներին կատարյալ դարձնել
7. Եբր.10:1, Հիսուսի գոհը հավատացյալներին հավիտյան սրբեց
8. Եբր.11:40, ՀԿ և ՆԿ սուրբերը կատարելության հասան միասին
9. Եբր.12:23, արդարների հոգիները կատարյալ դարձան

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 10:1-10

¹Օրենքը գալիք բարիքների ստվերն ունենալով և ոչ թե բաների բուն կերպարանքը՝ երբեք չէր կարող տարեցտարի, շարունակ մատուցվող գոհերով մատուցողներին կատարյալ դարձնել: ²Ապա թե ոչ նրանք չէին դադարի մատուցելուց, որովհետև պաշտողները, մեկ անգամ սրբված լինելով, այլևս մեղքի գիտակցություն չէին ունենա: ³Բայց այդ *գոհեղբույ* ամեն տարի նորից մեղքերի հիշատակում էր լինում: ⁴Որովհետև հնարավոր չէ, որ նոխագների և ցուլերի արյունը կարողանար մեղքերը վերացնել: ⁵Դրա համար էլ Նա աշխարհի մտնելիս ասում է.

«ՉՈՂ ԵՎ ԸՆԾԱ ՉՈՒՉԵՑԻՐ,
ԱՅԼ ԻՆՁ ՄԻ ՄԱՐՄԻՆ ՊԱՏՐԱՍՏԵՑԻՐ.

⁶ՈՂՁԱԿԵՉՆԵՐԻ ԵՎ ՄԵՂՔԻ ՀԱՄԱՐ ԵՂԱԾ ՊԱՏԱՐԱԳՆԵՐԸ ՉՀԱՎԱՆԵՑԻՐ:

⁷«ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՍՏՅԻ. «ԱՀԱ ԳԱԼԻՍ ԵՄ

(ԳՐՔԻ ՀԱՏՈՐ ՄԵՉ ԻՆՁ ՀԱՄԱՐ ԳՐՎԱԾ Է)

ՔՈ ԿԱՄՔԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՈՎ ԱՍՏՎԱԾ»:

⁸Վերևում, երբ ասում է. «ՉՈՂ ԵՎ ՊԱՏԱՐԱԳ, ՈՂՁԱԿԵՉՆԵՐ ԵՎ ՄԵՂՔԻ ՀԱՄԱՐ *գոհեղբույ* ՉՈՒՉԵՑԻՐ ՈՒ *նրանց* ՉՀԱՎԱՆԵՑԻՐ», որոնք Օրենքի համաձայն էին մատուցվում, ⁹ապա ասում է. «ԱՀԱ ԳԱԼԻՍ ԵՄ ՔՈ ԿԱՄՔԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՈՎ ԱՍՏՎԱԾ»: Առաջինը մերժում է, որ երկրորդը հաստատի: ¹⁰Նրա կամքով մենք սրբվեցինք՝ Հիսուս Բրիստոսի մարմնի մեկնողմիշտ պատարագվելով:

10:1 «ստվեր» Մովսիսական օրենսդրությունը («Օրենքը») և ծեսերը Հիսուսի քահանայապետական ծառայության տիպարն ու շուքն էին՝ անձեռագործ երկնային խորանում (տես՝ Եբր.8:5; 9:23-28):

Ջերոմի Աստվածաշնչյան Մեկնաբանություններ /Jerome Biblical Commentary/ գրքում զետեղված է մի հետաքրքիր մեկնաբանություն.

«Այստեղ հեղինակը չի գործածում «ստվերը» ինչպես Եբր.8:5-ում, որտեղ Պատռնյան երկնային-երկրայինի հակադրությունը նպատակային է, այլ Պողոսյան իմաստով, որպես Քրիստոսի միջոցով գալիք բաների ստվեր (տես՝ Կող.2:17)... Ամենամյա կրկնվող Քավության Օրվա գոհաբերությունները չէին կարող հեռացնել մեղքը. դրանք պարզապես քողարկում էին Հիսուսի գոհը» (էջ՝ 399):

■ **«գալիք բարիքներ»** Եբր.9:11-ում սա վերաբերում էր Քրիստոսի քահանայապետական ծառայությանը:

NASB
NKJV
NRSV
TEV
NJB

«ոչ թե բաների բուն ձևը»
«ոչ թե բաների բուն կերպարանքը»
«ոչ թե այս իրականությունների ճշմարիտ ձևը»
«ոչ թե իրական բաների ամբողջական և հավատարիմ օրինակը»
«դրանց անիրական պատկերը»

Սա հունարենի *icon* տերմինն է, որը նշանակում է իրականությանը համապատասխանող մանրակրկիտ վերարտադրություն (տես՝ 2 Կորնթ.4:4; Կող.1:15): Այստեղ այն ժխտական տեսքով է և քերականորեն կապված է «ստվեր» բառի հետ:

■ **«տարեցտարի, շարունակ մատուցվող զոհեր»** Հիսուսը մատուցում է մի արդյունավետ զոհ: Քահանաները մատուցում են նորից ու նորից:

■ **«կատարյալ դարձնել»** Այս տերմինը նշանակում է «ավարտին հասցնել», «լիարժեք կատարել»: Այս բառը (*teleioō* և դրա մյուս ձևերը) ամբողջ գրքում եղել է հակասական թեմա: Տե՛ս Հատուկ Թեմա Եբր.7:11:

Telos տերմինը՝

1. Նշանակում է «վախճան», «նպատակին հասնել» կամ «ավարտ» (տես՝ Եբր.3:6,14; 6:11)
2. Եբր.5:14 *teleios* կիրառվում է հասուն մարդու համար
3. Եբր.6:1-ում *teleiotes* հասունության կոչ է
4. Տերմինները կիրառվում են Մելքիսեդեկի ծառայության և Եբր.7:11 և 9:11-ում երկնային խորանի առնչությամբ

■ **«մատուցողներ»** ՀԿ-ում սա վերաբերում էր պաշտամունքի կամ ծառայության համար ՅԱՀՎԵին մոտեցող քահանաներին: Սակայն այստեղ, նոր ուխտի ներքո (տես՝ Երեմ.31:31-34) այն վերաբերում է բոլոր հավատացյալներին (տես՝ Հակ.4:8), որոնք այժմ Քրիստոսի միջոցով Աստծո մոտ մտերմիկ փոխհարաբերության համար մուտի իրավունք ունեն (տես՝ Եբր.4:16; 7:19,25; 10:1,22)

10:2

NASB, NRSV,
NJB
NKJV
TEV

«այլապես»
«ապա թե ոչ»
«եթե»

Սա ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, հաճախ կոչվող «փաստին հակառակ»: Այս կեղծ հիմնավորումը կատարվել է հարկադրաբար՝ բացատրելու աստվածաբանական նպատակը (տես՝ Եբր.4:8; 7:11; 8:4,7; 10:2; 11:15):

Համարը 2-ը կարելի է թարգմանել որպես՝

1. Հարց, որն ակնկալում է «այո» պատասխան, ինչպես NASB, NRSV, NAB թարգմանություններում
2. Մասնակի հարց, ինչպես NKJV, NIV թարգմանություններում
3. Հայտարարություն, ինչպես TEV, NJB, REB թարգմանություններում

■ **«նրանք չէին դադարի մատուցելուց»** Այստեղից կարելի է ենթադրել (տես՝ Եբր.10:11; 7:28), որ Տաճարը դեռևս գործում էր, հետևաբար Եբրայեցիների նամակը հնարավոր է գրվել է մ.թ. 70-ից առաջ, երբ Տաճարը (և Երուսաղեմը) հիմնահատակ ավերվեց հռոմեացի զենարալ (հետագայում Կայսր) Տիտոսի կողմից:

■ **«որովհետև պաշտողները, մեկ անգամ սրբված լինելով, այլևս մեղքի գիտակցություն չէին ունենա»** Սա Մովսիսական ծեսի հետ կապված խնդիր էր. այն չէր կարող հանցավոր սիրտը և միտքը մաքրել (տես՝ Եբր.9:9,14): Քրիստոսի միջոցով նոր ուխտը տալիս է համարձակությամբ Աստծո մոտ մտնելու իրավունք (մարուր խղճմտանք):

10:3 «ամեն տարի մեղքերի հիշատակում» Կարծես թե սա վերաբերում է Քավության Օրվան (տես՝ Դևտ.16), քանի որ սա գլուխ 9-ի թեման է, սակայն այն կարող է վերաբերել ամբողջ զոհաբերությունների ամբողջական համակարգին: Այն փաստը, որ ամեն տարի անհրաժեշտ էր զոհաբերություններ կատարել, որպեսզի սրբվեր խորանը և ամբողջ ժողովուրդը, շարունակում էր իսրայելացիներին հիշեցնել մարդկային մեղքի և հանցանքի լրջության և մշտապես կրկնվելու մասին (տես՝ Գաղատացիներին 3):

10:4 «որովհետև հնարավոր չէ» Հնարավոր չէ /անգլ.՝ անհնար է/ բառը Եբրայեցիներում մի քանի անգամ կիրառվում է (տես՝ ամբողջական գրառումը Եբր.6:6-ում):

1. Եբր.6:4 (հունարենում, սակայն 6:6 NASB-ի վերադասավորման մեջ): Անհնար է նրանց համար նորից ապաշխարությամբ նորոգվելը
2. Եբր.6:18, անկարելի է /անհնար է/, որ Աստված ստի
3. Եբր.10:4, հնարավոր չէ, որ կենդանիների աղյուներ կարողանար մեղքերը վերացնել
4. Եբր.11:6, առանց հավատքի անհնար է Աստծուն հաճեցնել

Եբրայեցիների հեղինակի համար «անհնար» հունարեն տերմինը չի կարող նշանակել «դժվար»:

10:5

NASB	«Երբ Նա գալիս է աշխարհ, ասում է»
NKJV	«Երբ Նա եկավ աշխարհ, ասաց»
NRSV	«Երբ Քրիստոսը եկավ աշխարհ, ասաց»
TEV	«Երբ Քրիստոսը պատրաստվում էր աշխարհ գալ, Նա ասաց Աստծուն»
NJB	«և ահա թե ինչու նա ասաց իր աշխարհ գալով»

Սա ներկայացնում է մի մեջբերում (տես՝ Եբր.10:5-7) Սաղմոս 40:6-8-ից, որը ցույց է տալիս, որ ՅԱՀՎԵին հաճելի չէր ՀԿ-յան զոհաբերությունները, քանի որ դրանք չէին ուղեկցվում հավատքի կյանքով: Մեր հեղինակը գործածում է Սաղմ.40:7-ը որպես սպասվող Մեսիայի լուսաբանություն, որը կատարելապես հաճեցնելու է Աստծուն:

Այս մեջբերումը նաև ենթադրում է Քրիստոսի նախագոյությունը (տես՝ Հովհ.1:1-2; 8:57-58; 2 Կորնթ. 8:9; Փիլ.2:6-7; 1 Հովհ.1:1): Չի եղել երբևէ մի այնպիսի ժամանակ, երբ Քրիստոսը գոյություն չի ունեցել: Հոր հետ Նրա մեկ լինելը արձանագրված է Հովհ.5:18; 10:30; 14:9; 10:28-ում:

■ **«ԻՆՁ ՄԻ ՄԱՐՄԻՆ ՊԱՏՐԱՍՏԵՑԻՐ»** Այս մեջբերումը հետևում է Մեսիայի լուսաբանության Սաղմոս 40:6-ին: Մատթեոսի տեքստը տալիս է «սկանջ ես փորել ինձ համար»: Մեսիայի համար պատրաստված ֆիզիկական մարմնի մասին հատուկ նշելը առաջին դարի վերջում նաև պետք է գործածվեր կանխելու սկզբնական Գնոստիցիզմը: Հիսուսը իրապես մարդ էր:

10:6 ՀԿ-ում նմանատիպ մի քանի հատվածներ կան (տես՝ 1 Թագ.15:22; Եսայի 1:11-17; Ովսեա 6:6; Ամովս 5:21-27; Միքիա 6:6-8): Դրանք չպետք է մեկնաբանվեն որպես թե Աստված մերժում է զոհաբերությունների համակարգը, որը Իր շնորհքի գործադրումն էր որոշակի սահմանափակ ժամանակի համար մարդկության մեղքի և փոխհարաբերության խնդրի լուծման համար: Սակայն անկում ապրած մարդկությունը ընձեռված ընթացակարգերի առիթից օգտվելով վերածեց դրանք մեխանիկական ծեսերի և պատարագների՝ սրտանց ապաշխարության և հավատքի փոխարեն: Աստված մերժում է կրոնական արարողության մակերեսային իրականացումը պատարագը, որը չի արտացոլում հավատքի կյանքն ու սիրտը (տես՝ Եսայի 1):

10:7 «ԳՐՔԻ ՀԱՏՈՐԻ ՄԵՋ ԳՐՎԱԾ Է» Սա ՎԱՂԱՎԱՏԱՐ ԿՐՎՎՈՐԱԿԱՆ է, որը վերաբերում է Հին Կտակարանին: Սկզբնապես ՀԿ-ը գրվել է բաժիններով, կաշվե մագաղաթների վրա: 1947 թ-ին գտնված Մեռյալ Ծովի Մագաղաթները ունեն Եսայի մարգարեության կրկնօրինակը, որը գրված է մի քսանինը ոտնաչափ երկարությամբ կաշվե մագաղաթի վրա:

■ **«ՔՈ ԿԱՄՔԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՈՎ ԱՍՏՎԱԾ»** Աստծո կամքը նոր ուխտն էր ամբողջ մարդկության հետ, հաստատված Հիսուսի մահվամբ և հարության (տես՝ Մարկ.10:45; 2 Կորնթ.5:21; Եբր.10:9): Երբ կենդանիները մեռնում էին զոհաբերություն մատուցելիս, նրանք այլընտրանք չունեին: Հիսուսը հոժարակամ Իր իսկ կյանքը դրեց զոհասեղանին (տես՝ Հովհ. 10:17-18):

10:8 «ՉՈՀ» Չորս տերմինների այս ցանկը, որ նշված է համար 8-ում, կարծես թե պարփակում է զոհաբերության մատուցման բոլոր տեսակները (տես՝ Ղևտացիների 1-7): «Չոհ» տերմինը տառացի նշանակում է խաղաղության հոժարակամ զոհ:

■ **«ՊԱՏԱՐԱԳՆԵՐ»** Սա վերաբերում է հոժարակամ մատուցվող «սննդի զոհին»:

■ **«ՈՂՋԱԿԵՉՆԵՐ»** Սրանք հոժարակամ մատուցվող ամբողջական տեսքով հրկիզվող զոհերն էին:

■ **«ՄԵՂՔԻ ՀԱՄԱՐ գոհեղ»** Սա Ղևտացիների 4-5 գլուխներում նշված մեկ այլ կարգի պարտադիր գոհաբերության տեսակ էր:

■ **«(որոնք Օրենքի համաձայն էին մատուցվում)»** Հեղինակի նպատակն է ցույց տալ Հիսուսի գոհի գերազանցությունը Ղևտական գոհաբերությունների համեմատ: Նույնիսկ երբ ՀԿ գոհաբերությունները կատարվում էին պատշաճ վերաբերմունքով և ընթացակարգերով, դրանք միայն Քրիստոսի գործի սովերեն էին հանդիսանում:

10:9 «Նա» Այս ԴԵՐԱՆՎԱՆ նախորդող բառն անորոշ է: Այն կարող է վերաբերել Հորը, որպես Մեկի, որը կատարեց ուխտի բացումը: Ինչպես նաև Եբր.10:10-ում «Հիսուս Քրիստոսի մարմինը» արտահայտությունը ենթադրում է, որ Նա ենթական չէ: Այնուամենայնիվ բոլոր ԲԱՅԵՐԸ Մաղմ.40:6-8-ից այս մեջբերման մեջ (Եբր.10:5-7) ունեն Քրիստոսին որպես ենթական:

■ **«առաջինը»** Սա վերաբերում է Մովսիսական ուխտին (տես՝ Կող.2:14):

NASB, NKJV	«հեռացնում է»
NRSV	«վերացնում է»
TEV	«մերժում է»
NJB	«ոչնչացնում է»

Սա «բնաջնջել» (*anaireō*) բառի համար հունարեն խիստ տերմին է: Հարցը նրանում է, թե ինչպես կարելի է հասկանալ այս տերմինը կապված ՀԿ-ի հետ: Որպես Աստծուց տրված հայտնություն, այն հավիտենական է (տես՝ Մատթ.5:17-19): Պողոսը հաճախ է հավատացյալներին հորդորելու համար մեջբերումներ կատարում ՀԿ-ից: Սակայն որպես փրկության կամ մեղքի ներման համար միջոց այն հանդիսանում էր միայն նախնական փուլ (տես՝ Գաղ.3): Այն իրականացավ և կատարելագործվեց ՆԿ-ում Քրիստոսի մեջ: Համատեքստը պետք է թելադրի, արդյոք այս տերմինը պետք է թարգմանվի «հեռացնել» (կատարված), թե՞ «վերացնել» (ոչնչացված):

■ **«երկրորդը»** Վերաբերում է Հիսուսի մեջ Նոր Կտակարանին (տես՝ Երեմ.31:31-34; Եզեկ.36:22-36):

10:10

NASB, NKJV	«Այս կամքի համաձայն մենք սրբվեցինք՝ Հիսուս Քրիստոսի մարմնի մեկընդմիշտ պատարագվելով»
NRSV	«Եվ Աստծո կամքով է, որ մենք սրբվեցինք՝ Հիսուս Քրիստոսի մարմնի մեկընդմիշտ պատարագվելով»
TEV	«Քանի որ Հիսուս Քրիստոսն արեց այն, ինչ Աստված կամենում էր, որ Նա աներ, մենք բոլորս սրբվեցինք մեղքից մեկ անգամ և ընդմիշտ իր իսկ մարմնով կատարած պատարագի միջոցով»
NJB	«Եվ մեզ համար նրա կամքն էր, որ մեզ սուրբ դարձներ Հիսուս Քրիստոսի մարմնի մեկընդմիշտ պատարագով»

Արդյո՞ք «կամք» բառը վերաբերում է Քրիստոսի կամքին (տես՝ Եբր.10:7,9 և NASB, NJB), թե Հոր կամքին (NRSV, TEV): Քանի որ Եբր.10:5-ում խոսողը Հիսուսն է (տես՝ Եբր.10:9), ապա համատեքստը առաջարկում է Նրա կամքը:

■ **«մենք սրբվեցինք»** Սա ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԿԱՏԱՐ ԴԵՐԱՅԷ է: Քրիստոնեության նպատակը արդար ժողովուրդն է: Սա նաև ՀԿ-ի նպատակն էր: Սրբությունը կամ սրբացումը հիմնականում անեծքի և Անկման (տես՝ Ծննդոց 3), մարդկանց մեջ Աստծո պատկերի ապականման հետևանքների հեռացումն է: Նոր Ուխտը այս կարիքին երկու կերպ է դիմում. (1) օրինավոր հոշակագրով, տրված դիրքով (ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) և (2) սրբության կոչով (ՀՐԱՄԱՅԱԿԱՆ): Հավատացյալները արդարանում են և սրբացվում Աստծո կատարած Հիսուսի փրկարար գոհին ապաշխարության հավատքով պատասխանելով: Երբ փրկվում ենք և Սուրբ Հոգին բնակվում է մեր մեջ, մեզ առաջնորդում է մի ներքին օրենք, մի ներքին փափագ (նոր սիրտ և նոր հոգի), որ լինենք Քրիստոսի նման (տես՝ Հռոմ.8:29; Գաղ.4:19; Եփես.1:4): Սրբացումը ազդում է թե՛ Աստծո առջև մեր դիրքի և թե՛ մեր նոր ընտանեկան հատկություններով մեր ամենօրյա ապրելակերպի վրա: Տե՛ս Հատուկ Թեմա Եբր.2:11:

■ **«Հիսուս Քրիստոսի մարմնի պատարագվելով»** Անկում ապրած մարդկությունը չէր փնտրում Աստծուն (տես՝ Եսայի 53:6; Հռոմ.3:10-18). Աստված էր փնտրում նրանց: Նա ամբողջ մարդկության

համար մի ճանապարհի պատրաստեց, որի միջոցով մարդիկ կարող են վերադառնալ Իր հետ հաղորդակցմանը (տես՝ Մարկ. 10:45; 2 Կորնթ. 5:21; Եսայի 53):

■ **«մեկընդմիջտ /անգլ.՝ մեկ անգամ բոլորի համար/»** Սա պարբերաբար կրկնվող ընթացիկ թեմա է (տես՝ Եբր. 7:27; 9:12,28; 10:10, տես ամբողջական գրառումները Եբր. 7:27-ում): Այն ցույց է տալիս Հիսուսի զոհի գերազանցությունը Սովսիսական ուխտի կրկնվող զոհերի համեմատ (տես՝ Եբր. 10:11-12): Ամեն ինչ, որ անհրաժեշտ էր մարդկության փրկության համար, ապահովված է՝ կատարված: Մեզ միայն մնում է պատասխանել Աստծո առաջարկին՝ Զրիստոսի կատարած գործին հավատալու միջոցով: «Ամեն ով որ կամենում է կարող է գալ» (տես՝ Հռոմ. 10):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵՔԲԱՅԵՑԻՆԵՐԻ 10:11-18

¹¹Եվ ամեն մի քահանա ամեն օր կանգնում է պաշտամունք մատուցելու, և նո՛ւյն զոհերը, շա՛տ անգամներ, մատուցում է, որոնք երբեք չեն կարող մեղքեր վերցնել. ¹²բայց այս Մարդը, մեղքերի համար մեկ անգամ պատարագ մատուցելով, հավիտենապես ՆՍՏԵՑ ԱՍՏԾՈ ԱԶ ԿՈՂՄՈՒՄ, ¹³այնուհետև սպասում է, ՄԻՆՉԵՎ ՈՐ ԻՐ ԹՇՆԱՄԻՆԵՐՆ ԻՐ ՈՏՔԵՐԻ ՏԱԿ ՈՐՊԵՍ ՊԱՏՎԱՆՂԱՎՆ ԳՐՎԵՆ: ¹⁴Որովհետև մեկ պատարագով հավիտյան կատարյալ դարձրեց նրանց, որ սրբվեցին: ¹⁵Սուրբ Հոգին էլ է մեզ վկայություն տալիս. որովհետև սկզբում ասածից հետո,

¹⁶«ԱՅՍ Է ԱՅՆ ՈՒԽՏԸ, ՈՐ ԵՍ ՆՐԱՆՑ ՀԵՏ ՊԻՏԻ ԱՆԵՍ ԱՅՆ ՕՐԵՐԻՑ ՀԵՏՈ, - ԱՍՈՒՄ Է ՏԵՐԸ,- ԻՄ ՕՐԵՆՔՆԵՐԸ ՆՐԱՆՑ ՍՐՏԻ ՄԵՉ ՈՒ ՆՐԱՆՑ ՄՏՔԻ ՄԵՉ ՊԻՏԻ ԳՐԵՄ»,

¹⁷Նա ավելացնում է
«ՆՐԱՆՑ ՄԵՂՔԵՐՆ ՈՒ ԱՆՕՐԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՅԼԵՎՍ ՉՊԻՏԻ ՀԻՇԵՄ»:

¹⁸Իսկ որտեղ սրանց թողություն կա, այնտեղ այլևս մեղքի համար *որևէ* պատարագ պետք չէ:

10:11 «ամեն մի քահանա» Հնագույն հունարեն մեծատառերով /ուղնցիալ/ A ձեռագիրը տալիս է «քահանայապետ»: Հեղինակը հաճախ այդ երկու տերմիններն էլ Հիսուսի համար կիրառում է:

■ **«կանգնում է»** Ամեն տարի քահանան կանգնում է զոհեր մատուցելու, սակայն Հիսուսը «նստում է» (Եբր. 10:12):

10:12 «մեղքերի համար մեկ անգամ պատարագ մատուցելով» Հիսուսը լուծեց մարդկային մեղքի խնդիրը: Ոչ ոք այլևս «մեղքի» պատճառով կորած չ: Միակ խոչնդոտը ամբողջ աշխարհի փրկվելու համար անհավատությունն է: Աստված ճանապարհ է պատրաստել բոլորի համար և բոլոր ժամանակների համար:

Հունարեն *diēnekēs* տերմինը, որը թարգմանվում է «հավիտյան» կամ «բոլոր ժամանակների համար», Եբրայեցիներում երեք անգամ է հիշատակվում (տես՝ Եբր. 7:3; 10:12,14): Սովորաբար այն համակցված է լինում իրեն նախորդող տերմինի կամ արտահայտության հետ, որը կապում է այն «մեղքերի համար մեկ զոհ»-ին: Այն չի հանդիսանում իրեն հաջորդող Մաղմ. 110:1 մեջբերման մի մասը:

■ **«ՆՍՏԵՑ ԱՍՏԾՈ ԱԶ ԿՈՂՄՈՒՄ»** Սա կրկնվող ակնարկ է Մաղմ. 110:1ա-ին (տես՝ Եբր. 1:3; 8:1; 12:2): «Աջ կողմը» /անգլ.՝ նաև «աջ ձեռք»/ մարդաբանական փոխաբերություն է արքայական գործության, իշխանության, նախապատվության վայրի համար: Այն նաև հանդիսանում է բարեխոսումության տեղը (տես՝ Հռոմ. 8:34; Եբր. 7:25; 1 Հովհ. 2:1):

Հիսուսը Քահանան (տես՝ Մաղմ. 110:4) և Թագավորն է (տես՝ Մաղմ. 110:1-3) ըստ Մեքսիստեմի կարգի (գլուխ 7), որը մեր առջևից է գնացել, որպեսզի պատրաստի ամեն ինչ, որ հարկավոր է մեզ:

10:13 «ՄԻՆՉԵՎ ՈՐ ԻՐ ԹՇՆԱՄԻՆԵՐՆ ԻՐ ՈՏՔԵՐԻ ՏԱԿ ՈՐՊԵՍ ՊԱՏՎԱՆՂԱՎՆ ԳՐՎԵՆ» Սա մեկ այլ մեջբերում է Մաղմ. 110:1բ-ից: Հոգևոր պատերազմը հաղթությանը է կնքվել (տես՝ Կող. 2:15), սակայն դեռ վախճանին չի հասել:

10:14 Այս համարն արտահայտում է ամբողջ գրքի լարվածությունը վստահության հարցում: Հիսուսի մեկընդմիջտ կատարած զոհը մշտապես կատարյալ է դարձրել (ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ) հավատացյալներին (տես՝ Հատուկ Թեմա Եբր. 7:11-ում): Այդ զոհը կատարյալ և ճշգրիտ էր իր փրկարար առաջադրանքը իրականացնելու համար (ոչ թե Սովսիսական ուխտի նման, տես՝ Եբր. 7:11,19; 9:9):

Հավատացյալները պետք է շարունակեն հավատքով արձագանքել Աստծուն, որը նրանց սրբացնում է (ՆԵՐԿԱ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԳԵՐԲԱՅ): Հարատևող հավատքը անհատի փրկության վստահության բանալին է: Նոր սիրտը և նոր միտքը (տես՝ Եզեկ.36:22-38) հավատացյալներին ոգևորում է ապրելու աստվածահաճո կյանք՝ ի երախտագիտություն ձրի, կատարյալ և սպառիչ համապարփակ փրկության: Այս գրքում Հիսուսի գոհի ճշգրտությունը երբեք չի հարցադրվում, սակայն հարց է առաջանում անհատի արձագանքելու վերաբերյալ՝ առաջին խմբի սկզբնական դավանության և երկրորդը՝ հարատևող դավանության շուրջ:

10:15 «Սուրբ Հոգին» Սա ցույց է տալիս ՀԿ-ի ներշնչանքի վերաբերյալ հեղինակի տեսակետը (տես՝ Մատթ.5:17-19; 2 Տիմ.3:16):

10:16-17 Սա մեջբերում է Երեմ.31:33-34-ից, սակայն փոխված են արտահայտությունների հերթականությունը: Կարծես թե հեղինակը մեջբերում է կատարել ըստ հիշողության, քանի որ այս մեջբերումը տարբերվում է Մատթեոսի Եբրայերեն Տեքստից և Սեպտուագինտայից, ինչպես և այս նույն խոսքը տարբերվում է Եբր.8:10-12-ում (եթե միայն այն մտադրված փոփոխություն չէ):

10:18 Սա հավատացյալների ապացույցի և մեր մեծ հույսի գազաթնակետն է (առաջին միջոցը՝ կերպը անցել է, տես՝ Եբր.8:13):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 10:19-25
¹⁹Հետևաբար, եղբայրներ, համարձակությամբ մտնենք Սրբաբանը Հիսուսի արյամբ, ²⁰նոր ու կենդանի՝ ճանապարհով, որ մեզ համար բացեց վարագույրի միջով, որ Իր մարմինն է. ²¹և Աստծո տան վրա մեծ քահանա *ուներալով*, ²²մոտենանք ճշմարիտ սրտով, հավատքի կատարյալ վստահությամբ, մեր սրտերը մաքրված չար խղճմտանքից և մեր մարմինները լվացված մաքուր ջրով: ²³Անխախտ պահենք *մեր* հույսի դավանանքը, առանց տատանվելու, որովհետև հավատարիմ է Խոստացողը: ²⁴Եվ իրար հո՛գ տանենք՝ սիրո և բարեգործության մղելով: ²⁵Եվ մեկտեղ հավաքվելը չթողնենք, ինչպես ոմանց սովորությունն է, այլ միմյանց հորդորենք. և այնքան ավելի, որքան տեսնում եք, որ օրը մոտենում է:

10:19

NASB, NRSV
NKJV
NJB

«քանի որ *մենք ուներք* համարձակություն»
«համարձակություն ուներալով»
«մենք ուներք ... կատարյալ համարձակություն»

Parrhēsia տերմինը նշանակում է «համարձակություն» կամ «խոսքի ազատություն» (տես՝ Եբր.3:6; 4:16; 10:19,35): Այս տերմինը արտահայտում է Աստծո կեղմից հավատացյալների ընդունված լինելու և Նրա հետ մտերմության մի նոր զգացողություն: Ահա թե ինչ չէր կարող ապահովել Սովսեսի Օրենքը (տես՝ Եբր.9:9): Այս համարձակությունը պետք է հավատքով ամուր պահել (տես՝ Եբր.3:6,14; 4:14): Համարձակությունը հիմնված է Զրիստոսի կատարած գոհաբերության վրա (տես՝ Եփես.2:8-9), և ոչ թե մարդկային գործերի՝ արարքների: Այն պահպանվում է աստվածահաճո կյանք ապրելու շնորհիվ (տես՝ Եփես.2:10):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՄԱՐԶԱԿՈՒԹՅՈՒՆ (PARRHĒSIA)
SPECIAL TOPIC: BOLDNESS (PARRHĒSIA)

Այս տերմինի հունարեն տարբերակը բաղադրյալ բառ է կազմված՝ „բոլոր,, (*pan*) և „խոսք,, (*rēsis*) բառերից: Խոսքի այս ազատությունը կամ համարձակությունը հաճախ ուներ երկրորդ նշանակությունը՝ համարձակություն հակառակության կամ մերժվածության միջավայրում (տես՝ Հովհ.10:24; 1 Թեսաղ.2:2):

Հովհաննեսի գրքերում (գործածված է 13) այն հաճախ արտահայտում է հանրային հայտարարություն (տես՝ Հովհ7:4, նաև Պողոսի թղթերում՝ Կող. 2:15): Սակայն երբեմն այն պարզապես կարող է նշանակել „պարզորեն,, (տես՝ Հովհ.10:24; 11:14; 16:25,29):

Գործքում Առաքյալները Հիսուսի մասին խոսում էին այնպես (համարձակությամբ), ինչպես որ Հիսուսն էր խոսում Հոր մասին, Իր ծրագրերի և խոստումների մասին (տես՝ Գործք 2:29; 4:13,29,31; 9:27-28; 13:46; 14:3; 18:26; 19:8; 26:26; 28:31): Պողոսը նաև խնդրում էր, որ աղոթեն ավետարանը

համարձակությամբ քարոզելու (տես՝ Եփես.6:19; 1 Թեսաղ.2:2) և ավետարանը ապրելու համար (տես՝ Փիլ.1:20):

Հանդերձյալ կյանքի համար հույսը, որ Պողոսն ուներ Քրիստոսի մեջ, նրան համարձակություն և վստահություն էր տվել այս չար ժամանակներում ավետարանը քարոզելու (տես՝ 2 Կորն.3:11-12): Նա նաև վստահություն ուներ, որ Հիսուսի հետևորդները արժանավայել կերպով կապրեն (տես՝ 2 Կորնթ.7:4):

Այս տերմինը ևս մեկ ասպեկտ ունի: Եբրայեցիները այն կիրառում էին Քրիստոսի մեջ ունեցած համարձակության բացառիկ իմաստով՝ Աստծուն մոտենալու և Նրա հետ խոսելու համար (տես՝ Եբր.3:6; 4:16; 10:19,35): Հավատացյալները կատարելապես հրավիրված և ընդունված են Որդու միջոցով Հոր հետ մտերմիկ հարաբերության:

ՆԿ-ում այն կիրառվում է մի քանի կերպ՝

1. վստահության, համարձակության կամ քաջության իմաստով, կապված՝
 - ա. մարդկանց հետ (տես՝ Գործք 2:29; 4:13,31; 2 Կորնթ.3:12; Եփես.6:19)
 - բ. Աստծո հետ (տես՝ 1 Հովհ.2:28; 3:21; 4:12; 5:14; Եբր.3:6; 4:16; 10:19)
2. հստակ, պարզ կամ միանշանակ խոսելու իմաստով (տես՝ Մարկ.8:32; Հովհ.7:4,13; 10:24; 11:14; 16:25; Գործք 28:31)
3. հրապարակավ՝ բացահայտ խոսելու իմաստով (տես՝ Հովհ.7:26; 11:54; 18:20)
4. նմանատիպ բառ (*parrhesiazomai*) կիրառվում է դժվար կացություններում համարձակությամբ քարոզելու դեպքում (տես՝ Գործք 18:26; 19:8; Եփես.6:20; 1 Թեսաղ.2:2):

■ **«մտնել Սրբարանը»** Հիշե՛ք, որ այս գրքի գլխավոր թեմանիերից մեկը Աստծո մոտ մուտքի իրավունքն է՝ մեր համար Քրիստոսի կյանքով և մահվամբ տրված մեր ներման միջոցով: ՀԿ-ի քահանայապետները տարվա մեկ օրը երկու անգամ մտնում էին խորանի Սրբության Սրբոցը (տես՝ Եբր.9:25), և դա Քավության Օրն էր (տես՝ Ղևտացիների 16): Բայց հիմա Քրիստոսի գոհի միջոցով բոլոր հավատացյալները կարող են ունենալ շարունակական մուտքի իրավունք մտերմաբար շփվելու Աստծո հետ (մուտքի իրավունքի ևս մեկ փոխաբերություն է հանդիսանում վարագույրը, որը վերից վար պատռվեց. տես՝ Մատթ.27:51; տես՝ Մարկ.15:38):

■ **«Հիսուսի արյամբ»** Սա կախարդական արյունն է, այլ մարդկային արյուն: Այն ներկայացնում է Հիսուսի զոհաբերական մահը մեղավոր մարդկության փոխարեն (տես՝ Գործք 20:28; Հռոմ.3:25; 5:9; Եփես.1:7; 2:13; Կող.1:20; Եբր.9:12,14; 12:24; 13:12; 1 Պետ.1:2,19; Հայտն.1:5; 5:9):

10:20 «նոր» *Prospatos* տերմինը նշանակում է «թարմ մորթված» և ՆԿ-ում միայն այստեղ է կիրառվում:

■ **«կենդանի ճանապարհ»** Սա հարության հաստատությունն է: Նա մորթվեց, սակայն հիմա ողջ է (տես՝ Հայտն.5:6) հավիտյանս:

NASB	«հանդիսավոր բացեց»
NKJV	«ընծայեց մեր համար»
NRSV, TEV	«նա բացեց մեր համար»
NJB	«բացել է մեր համար»

Սա ԱՈՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Այս «նոր և կենդանի ճանապարհը» կատարված, պատմական, հոգևոր իրականություն է:

Հունարեն-Անգլերեն Բառարանը բառ Ուոլթեր Բյորերի /*Greek-English Lexicon by Walter Bauer*/, որը թարմացվել է Արնոլդ, Գինգրիչ և Դանկերի կողմից, թվարկում է երկու տարբեր թարգմանություններ այս համատեքստում հենց այս տերմինի համար:

1. ճանապարհ բացել (Եբր.10:20)
2. հանդիսավոր կերպով բացել կամ ընծայել պաշտոնական ծեսերով (Եբր.9:18)(էջ՝ 215):

ՆԿ-յան այս հազվադեպ տերմինի տվյալ երկու դեպքերի միջև համատեքստ ինձ ավելի սերտ կապ է առաջարկում: Դարձյալ, ուխտերի համեմատությունն է դիտարկվում. Հիսուսն Իր արյամբ շատ ավելի լավ ճանապարհ բացեց Աստծուն մոտենալու և կապ պահպանելու համար:

■ **«վարագույրի միջով»** Սա վերաբերում է խորանի ներսում՝ սրբարանի և Սրբության Սրբոցի միջև գտնվող վարագույրին (տես՝ Մատթ.27:51): Այստեղ վարագույրը Հիսուսի «մարմինն» էր: Ապա սա հետագայում վերաբերելու էր Հիսուսի մարմնին, որ կտարվեց մեր մեղքերի համար, այդպիսով Աստծո մոտ մտնելու իրավունքն ապահովելով (տես՝ Եսայի 52:13-53:12): Եբրայեցիների հեղինակը սրբարանի արտաքին մասը (սրբարանը) դիտարկում է որպես ֆիզիկական աշխարհի խորհրդապատկերը, իսկ

ներսի սրբարանը (Սրբության Սրբոցը)՝ հոգևոր աշխարհի: Այս լույսի ներքո երկնային խորանը հակադրվում է երկրային օրինակին (տես՝ Եբր.6:19):

10:21 «մեծ քահանա» Տե՛ս Հատուկ Թեմա. Հիսուսը որպես Քահանայապետ, Եբր.2:17-ում:

■ **«Աստծո տան»** Սա վերաբերում է ՀԿ-ի (տես՝ Եբր.3:5) և ՆԿ-ի (տես՝ Եբր.3:6; 1 Տիմ.3:15; 1 Պետ.4:17) հավատացյալներին (տես՝ Եփես.2:11-3:13): Ինչպես Մովսեսը ծառա էր Աստծո տան մեջ, այնպես էլ Հիսուսը Քահանայապետն է ու Որդին:

10:22 «/անգլ.՝ եկեք/ մոտենանք» Սա ՆԵՐԿԱ ՉԵԶՈՔ (դեպոնենտ) ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ է: Հավատացյալների համարձակությունը հիմնված է Հիսուսի կատարած գործի վրա, սակայն այս շահն ու արտոնությունը պետք է ընդունվի: «Մոտենալը» կիրառվում է Աստծուն մոտեցող պաշտողների համար: Ուշադրություն դարձրեք առաջխաղացմանը՝

1. Եկեք մոտենանք անկողծ սրտով (Եբր.10:22)
2. Եկեք ամուր պահենք մեր հույսի դավանությունը (Եբր.10:23)
3. Եկեք իրար հոգ տանենք միմյանց մղելով ... (Եբր.10:24)

Նոր ուխտը (տես՝ Եբեմ.31:31-34) նոր սիրտ և նոր հոգի է, ներքին սեր և արտաքին օրենք, ձրի պարզև Քրիստոսի կատարած գործի մեջ, սակայն այն նաև պահանջներ ունի, ակնկալվող պտուղ, տեսանելի արդյունքներ: Փրկության վստահությունը ծնվում է աստվածահաճո ապրելակերպի արդյունքում: Առաջին հերթին այն որևէ դավանություն չէ, որ պետք է դավանել՝ հաստատել, ոչ էլ աստվածաբանություն, որ պետք է ընդունել, այլ Քրիստոսակերպություն (ոչ անմեղություն), որը բոլորին ակնհայտ երևում է:

Ուշադրություն դարձրեք «մոտենալու» համար պահանջարկների ցանկը՝

1. Անկեղծ սրտով
2. Հավատքի կատարյալ վստահությամբ
3. Մեր սրտերը մաքրված չար խղճմտանքից
4. Մեր մարմինները լվացված մաքուր ջրով

■ **«անկեղծ սիրտ»** Պատշան վերավերմունքը՝ սրտի դիրքը կարևորագույն տեղ է զբաղեցնում հավատքի նոր ուխտի մեջ (հաստատական՝ տես՝ Եզեկ.36:22-36; բացասող՝ Եսայի 29:13): Տե՛ս Հատուկ Թեմա Եբր.3:8:

■ **«հավատքի կատարյալ վստահություն»** Կատարյալ վստահությունը կապված է հավատքի հետ: Վստահությունը հիմնված է՝

1. Հավատքի կյանքի վրա՝ որպես ապաշխարության վկայություն (տես՝ Հակ.2:14-26)
2. Քրիստոսի կատարած գործի վրա (տես՝ 2 Կորնթ.5:21)
3. Հոգու վկայության վրա (տես՝ Հռոմ.8:16)

Մարդկային ջանքերը չեն կարող փրկություն կամ վստահություն բերել: Այնուամենայնիվ, փոխված և փոխող հավատքի կյանքը ապացույց է, որ տվյալ անձը իրապես փրկվել է: Սուրբ Աստծո հետ հանդիպման բնական հետևանքը ծառայության սուրբ կյանքն է:

Աստվածաշնչյան վստահությունը երբեք է նպատակ չի հետապնդել վարդապետություն դառնալու և հաստատվելու հարկ չի ունեցել, այլ այդ վստահության ապրելակերպի համար է եղել: Այն մարդկանց համար, ովքեր պնդում են, թե ճանաչում են Քրիստոսին, սակայն ապրում են մակերեսային, անտարբեր, աշխարհիկ, եսակենտրոն, անպտուղ, անարդյունք, անաստված կյանքով՝ այնտեղ չկա վստահություն: Տե՛ս Հատուկ Թեմա Եբր.3:14-ում:

■ **«մեր սրտերը մաքրված չար խղճմտանքից»** Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է, որը առաջին ուխտի ծիսական բացման ակնարկ է (տես՝ Ելից 24:8; 1 Պետ.1:2): Նոր ուխտի արյան ցողումը շատ ավելի արդյունավետ է մեղավոր մարդկության հանցանքը մաքրելու հարցում (տես՝ Եբր.9:9,14):

■ **«չար խղճմտանքից»** Ահա թե ինչը չէր կարող հեռացնել ՀԿ-ը (տես՝ Եբր.9:9; 10:2): Սակայն, 1 Պետ.3:21 պատկերում է նմանատիպ կապ մկրտության և մաքուր խղճմտանքի միջև:

■ **«մեր մարմինները լվացված մաքուր ջրով»** Սա ՆԵՐԿԱ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է: Հնարավոր է, որ սա մեկ այլ ակնարկ է Քավության Օրը Քահանայապետի գործողությունների վերաբերյալ՝ պատմական անալոգիա ՀԿ-յան ցողելու՝ սրսկելու միջոցով լվացմանը (տես՝ Ղևտ.8:6; 16:4; Ելից 29:4; 30:17-21; Թվոց 19:7-8): Սա չի վերաբերում Քրիստոնեական մկրտությանը:

Սա ևս մեկ ակնարկ է ծիսական լվացմանը: Այն հստակ ցույց է տալիս, որ ջրի ծիսական գործածությունը կարող է վերաբերել (1) մահվանը, թաղմանը և հարությանը (տես՝ Հռոմ.6:1-11 և Կող.2:12) և (2) մեղքից մաքրելուն (տես՝ Գործք 22:16; 1 Կորնթ.6:11; Եփես.5:26; Տիմ.3:5 և 1 Պետ.3:21): Ջուրը ինքնին մեխանիզմը չէ, այլ փոխաբերություն: Քանի որ վաղ եկեղեցին շինություններ չուներ, մարդիկ չէին գալիս կանգնելու հանրության առջև: Քրիստոսի հանդեպ ունեցած իրենց վստահությունը՝ հավատքը դավանելու համար, ինչպես որ հիմա են անում շատ եկեղեցիներում: Նրանց հրապարակավ դավանությունը և խոստովանությունը իրենց մկրտությունն էր: Դա հանդիսանում էր այն իրադարձությունը և դրսևորումը, որով ունենում էին մեղքերի թողություն և ընդունում էին Սուրբ Հոգուն (տես՝ Գործք 2:38) և ոչ թե միջոցը:

10:23 «անխախտ պահենք մեր հույսի դավանանքը, առանց տատանվելու» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ է, կիրառված որպես ՀՐԱՄԱՅԱԿԱՆ: Սա երեք ՆԵՐԿԱ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆՆԵՐԻց երկրորդն է, որն արտահայտում է ակնկալելի հավատքի (սակայն պայմանական) պատասխան:

■ **«հույս»** KJV թարգմանությունը տալիս է «հավատք», սակայն այդ թարգմանությունը չի սատարվում հունարեն ձեռագրով: «Հույս» տերմինը հաճախ վերաբերում է Երկրորդ Գալստյան ժամանակ մեր փառավորմանը (տես՝ Եբր.3:6; 6:11,18; 7:19; 1 Հովհ.3:2):

NASB	«որովհետև Նա, որ խոստացավ հավատարիմ է»
NKJV	«որովհետև Նա, որ խոստացավ հավատարիմ է»
NRSV	«որովհետև նա, որ խոստացել է հավատարիմ է»
TEV	«քանի որ մենք կարող ենք վստահել Աստծուն, որ Իր խոստումը կպահի»
NJB	«քանի որ նա, որ խոստում տվեց՝ վստահելի է»

Միակ ԲԱՅԸ ԱՈՐԻՍ ՉԵՉՈՔ (դեպոնենտ) ԴԵՐԲԱՅ Է՝ «խոստացավ»: Սա Եբր.10:22-24-ի երեք «եկեք...» սահմանումների աստվածաբանական հավասարակշռությունն է: Աստծո կողմից ապահովված, տրված և պահպանված ձրի փրկության այս պարադոքսը պետք է արդյունքում տա մարդկանց կողմից ուխտի մեջ մտնելու պատշաճ պատասխան: Աստծո ամենակալությունն էլ, մարդկության ազատ կամքն էլ աստվածաշնչյան ճշմարտություններ են և պետք է մնան լարվածության մեջ:

Աստծո վստահելիությունը հավատացյալի ամենանորոգելի վստահությունն է (տես՝ Եբր.11:11): Աստծո խոստումները վստահելի են, Աստծո Խոսքը ճշմարտություն է:

10:24 «իրար հոգ տանենք /խորհենք/» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ է: Հեղինակը կիրառում է մի քանի տարբեր բառեր, որոնք առնչվում են աստվածաբանական թեմաների շուրջ մեր մտածելակերպին:

1. Խորհել, *katanoō*, Եբր.1:1; 10:24 (տես՝ Ղուկ.12:24,27)
 2. Նկատել, *theōreō*, Եբր.7:4
 3. Համարել, *analogizomai*, Եբր.12:3
 4. Համարելով, *anatheōreō*, Եբր.13:7
- Հավատացյալները պետք է մտածեն իրենց հավատքի միջոցով՝
1. Ինչու է ճիշտ
 2. Ինչպես գործնականում կիրառել
 3. Ինչպես օգնել ուրիշներին
 4. Որն է գլխավոր նպատակը

■ **«իրար մղելով»** Սա Հունարեն խիստ տերմին է, որը սովորաբար բացասական իմաստ է արտահայտում: Այն միայն երկու անգամ է կիրառվում ՆԿ-ում: Մյուս հատվածը Գործք 15:39-ում Պողոսի և Բառնաբասի վիճաբանություն է: Հնրավոր է այս բառն արտահայտում է հավատացյալ և անհավատ հրեաների միջև եղած լարվածությունը, որոնք պաշտամունք էին մատուցում ժողովարանում, որը լավագույնս բացատրում է Եբրայեցիների 6 գլխի խմբերը («մեզ», «ձեզ» և «նրանց»):

■ **«սիրո և բարեգործության»** Սրանք Քրիստոնեության իրական պտուղներն են:

10:25 24-25 համարները թվարկում են երեք բան, որ պետք է հավատացյալներն անեն:

1. Իրար մղեն սիրելու և բարի գործեր կատարելու
2. Միասին հավաքվեն (արմատը «ժողովարանի» նույն արմատն է, որը ՆԿ-ում օգտագործվում է միայն այստեղ)

3. Իրար քաջալերեն, քանի որ Երկրորդ Գալուստր ճոտենում է Սա ՆԿ-ում միակ տեքստն է, որը հավատացյալների քաջալերում է պաշտամունքի համար միասին հավաքվել: Հնարավոր է սա ներկայացնում է Քրիստոնեության (չհաստատված մի կրոն) հանդեպ ցուցաբերած Հռոմեական հալածանքների պատմական միջավայրը ի հակադրություն Հուդայականության հարաբերական ընդունելության (հաստատված կրոն): Հնարավոր է այն նաև ներկայացնում է պաշտամունքի տարբեր օրերը: Շատ վաղ այն շրջանից հետո, երբ Եկեղեցին դեռ նոր էր սկսել տարածվել հուդայականության ներսում, ռաբբիները (այսինքն՝ փարիսեցիական Հուդայականության արթնությունը Ջամնիայում, մոտ մ.թ. 90-ին) ժողովարանի յուրաքանչյուր անդամի պահանջով կազմեցին «նգովքի» մի երդում, որի բովանդակությունը մերժում էր Հիսուս Նազովրեցուն որպես խոստացյալ Մեսիա: Այդ ժամանակ շատ հավատացյալներ լքեցին ժողովարանը իր Շաբաթի օրակարգով հանդերձ, սակայն շարունակեցին այնտեղ անցկացնել կիրակնօրյա պաշտամունքներ Եկեղեցու հետ: Հակոբոս 2:2 կիրառում է «ժողովարան» տերմինը նկատի ունենալով Քրիստոնեական պաշտամունքի վայրը, ինչպես և Եբր. 10:25-ը:

■ «օրը» Սա վերաբերվում է Երկրորդ Գալստյանը: Դրան հաջորդող համարների լույսի ներքո, այն նաև վերաբերում է Դատաստանի Օրվան:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 10:26-31
²⁶Որովհետև եթե ճշմարտության գիտությունը ընդունելուց հետո դիտավորյալ մեղք գործենք, նրանից հետո այլևս մեղքերի համար զոհ չի մնում, ²⁷այլ՝ դատաստանի զարհուրելի սպասումը և կրակի բարկությունը, որ լափելու է հակառակորդներին: ²⁸Եթե մեկը Մովսեսի օրենքն անարգեր, պետք է մեռներ՝ առանց գթության, երկու կամ երեք վկայի վկայությամբ, ²⁹հապա որքա՞ն ավելի պատժի արժանի պիտի համարենք նրան, ով ոտնահարել է Աստծո Որդուն, անսուրբ բան է համարել Ուխտի արյունը, որով ինքը սրբվել էր, և անարգել շնորհաց Հոգուն: ³⁰Քննադի ճանաչում ենք Նրան, որ ասաց. «ԻՄՆ Է ՎՐԵԺԻՆԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵՍ ՊԻՏԻ ՀԱՏՈՒՑԵՄ, - ասում է Տերը»: Եվ դարձյալ. «ՏԵՐԸ ՊԻՏԻ ԴԱՏԻ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ»: ³¹Ահավոր բան է կենդանի Աստծո ձեռքն ընկնելը:

10:26 «եթե ... մենք» Սա սովորական պայմանական նախադասություն չէ: Հավանաբար նախադասության ՍԵՌԱԿԱՆ ՀՈՒՆՈՎԻ ԱՆԿԱԽ (*hamartanontōn hēmōn*) ենթամասը գործում է որպես ՊԱՅՄԱՆ պարունակող մաս («եթե» հատվածի):

Չարմանալիորեն հեղինակը քերականորեն իրեն դնում է դիտավորյալ կամովի մեղանչողների խմբի մեջ, սակայն սա կարող է լինել գրականական մոտեցում (խմբագրական հոգնակի) ինչպես Եբր. 2:3-ում: Առաջին դեմքի մարդը պարտադիր չէ, որ ինքնաբերաբար իրեն նմանեցնի Եբր. 10:26-29-ում խոսվող խմբի հետ: Նմանատիպ գրականական մոտեցում, որը կիրառում է առաջին դեմք, կարելի է գտնել 1 Կորնթ. 13:1-3-ում:

■ «դիտավորյալ /հոժարական/ մեղք գործել» Շեշտադրության համար հունարենում «հոժարական» բառը գրված է սկզբում: Հնարավոր է բառն ունի ՀԿ-ի «կամայական» մեղքի նմանությունը (տես՝ գրառում Եբր. 5:2): Բայի քերականական ձևը (ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ, ՍԵՌԱԿԱՆ ՀՈՒՆՈՎԻ, ԱՐԱԿԱՆ ՍԵՌԻ, ԱՌԱՋԻՆ ԴԵՄՔԻ, ՀՈԳՆԱԿԻ ԹԻՎ) կիրառվել է ոմանց կողմից ներկայացնելով, որ այս մարդիկ այն հավատացյալներն են, որոնք շարունակում են մեղքի մեջ ապրել: Եթե նրանք դադարեցնեն մեղանչելը, ապա կխուսափեն դատաստանից: Սակայն սա չի համապատասխանում Եբր. 6:1-6 և Եբր. 26-29 սպառնալից համատեքստին: Սա կյանքի և մահվան զգուշացում է. մեկ անգամ հեռանալով ընդմիջտ հեռանալու զգուշացում: Հայտնության պարզ լույսի ներկայության մեջ Հիսուսին մերժելը արդյունքում բերում է հնարավորին ամենամուր ինքնազոհ գիշերվան:

■ «ճշմարտության գիտությունը ընդունելուց հետո» ԲԱՅԸ անգլերենում՝ «ընդունելուց» ԱՌԻՍ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԱՆՈՐՈՇ է: Այս է մեկնաբանական խնդրի դժվարին իրադրությունը: Եթե նրանք մեկ անգամ ընդունեցին իրենց փորձառությամբ ճշմարտության (ՈՐՈՇԻՉ ՀՈՂՈՎ) կատարյալ գիտությունը (*epignōskō*), ապա նրանք հավատացյալներն են: Սա Եբր. 6:4-6-ի միևնույն աստվածաբանական խնդիրն է:

Պետք է ընդունել, որ գոյություն չունի դյուրին, հստակ, ակնհայտ մեկնաբանություն: Ես ինքս վախենում եմ, որ իմ անձնական հակումները կարող են գերիշխել մի որևէ շատ հստակ տեքստի վրա: Ես պետք է դիմակայեմ համակարգված, հարանվանական օրակարգ, որը լռեցնում է այս գորավոր, ներշնչված տեքստը: Խնդիրը մեղանչող հավատացյալները չեն: Խնդիրը հավատացյալներն են, որոնք դադարում են հավատալ: Ես չեմ կարող ընդունել մի աստվածաբանություն, որը (1) փրկությունը դարձնում է մարդկային գործերից կախյալ կամ (2) փրկության վստահությունը վերափոխում է մի

դոգմատիկ հայտարարության, որը ամենևին էլ կապված չէ Քրիստոնեական կյանքի հետ: Ես մերժում եմ կորած, փրկված, կորած, փրկված, կորած, փրկվածի աստվածաբանությունը: Ես նաև մերժում եմ «մեկ անգամ փրկվեցիր՝ ընդմիշտ փրկված ես» աստվածաբանությունը, որը կապ չունի հարատևող հավատքի և հավատքի ապրելակերպի հետ: Հետևաբար, ի՞նչ եմ ես անում: Ես բացատրում եմ տեքստը՝ իր պատմական միջավայրում, իր գրականական համատեքստի սահմաններում, իր քերականական արտահայտությամբ, իր տերմինների ընտրությամբ, իր ժանրի մեջ և իրեն համագոր հաստվածների օգնությամբ: Ես պետք է ընդունեմ, որ եթե ինձ միայն տրված լինեք աշխատելու Եբր.6:4-6 և 10:26-29 հաստվածների հետ, ապա ընտրությունը շատ փոքր կլինեք. հավատացյալները շնորհքից ընկնում են: Սակայն՝

1. Պատմական միջավայրը, հրեական գրքի և հավաճանքների առկայությունը կարևոր հարցեր են
2. Գրականական համատեքստը (տես՝ Եբր.5:11-6:12) և երեք խմբերը (տես՝ «մեզ», «ձեզ» և «նրանք որ») կարծես թե հայտնում են «հրեա հավատացյալների» և «հրեա անհավատների» հրեական միջավայրը, որոնք երկրպագում և հաղորդակցվում էին ժողովարանական միջավայրում
3. Այսպես շատ ՀԿ-յան մեջբերումների կիրառությունը, որոնք կապված են խորանի հետ, ժողովարան տերմինի գործածությունը (տես՝ Եբր.10:25) և հավատքի կոչը, բոլորը մատնացույց են անում ՀԿ-ին քաջատեղյակ ընթերցողի

Հետևաբար, տեքստը մեկնաբանելուց հետո կարծում եմ լավագույն բացատրությունը (զանց չառնելով դրա խնդիրները և ենթադրությունները) Ռ. Ի. Գլեյզի, *Ոչ Դյուրին Փրկություն* գրքի /R. E. Glaze Jr., *No Easy Salvation*, հրատարակված Insight Press, 1966/ ենթադրյալ պատմական վերակազմումն է:

Եբրայեցիները կարծես թե լինի մասնագիտական գիրք ուղղված հատուկ մի խմբի: Արդյո՞ք այստեղից կարող ենք հետևություն անել, որ այն մերօրյա չէ: Այս ներշնչված հեղինակի գաղափարները (Հակոբոսի, Պետրոսի և 1 և 2 Հովհաննեսի հեղինակների հետ միասին) պետք է մղեն հավատացյալներին շարունակելու վազել մրցավազքը (տես՝ Ֆ. Ֆ Բրյուս, *Հարցերի Պատասխաններ*, էջ՝ 124-125 /F. F. Bruce, *Answers to Questions*): Պատասխանն ընկած չէ դյուրին հավատալիքի մեջ, և ոչ էլ վախ ներշնչող օրինականության մեջ, այլ հավատքի աստվածահանո կյանքում սրբության փափագով լցված, որն արդյունք է հավատքով Քրիստոսի միջոցով կատարյալ, ավարտված և վերջնական փրկության հանդեպ երախտագիտության վերաբերմունքի (տես՝ Եբր.10:14):

10:27 «դատաստան» Հեղինակը կրկին ու կրկին շեշտադրել է հրաշալի հույսը, որ Քրիստոսի մեջ ունեն հավատացյալները, սակայն բացասական կողմը նույնքան ազդեցիկ է. դատաստանը մոտենում է և բոլորը կանգնելու են սուրբ Աստծո առջև (տես՝ Եբր.9:27; Գաղ.6:7):

■ **«ԿՐԱԿԻ ԲԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐ ԼԱՓԵԼՈՒ Է ՀԱԿԱՌԱԿՈՐԳՆԵՐԻՆ»** Սա ակնարկ է Եսայի 26:11-ին: Կրակը հաճախ առնչվում է սրբության կամ մաքրության հետ: Աստված բարոյական էություն է. Իր ստեղծագործությունը բարոյական իրականություն է: Մարդիկ չեն խախտում Նրա օրենքները /անգլ.՝ բառացի կոտորում/, այլ իրենք են կոտորվում Նրա օրենքների վրա:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԿՐԱԿ
SPECIAL TOPIC: FIRE

Սուրբ Գրքում կրակը ունի թե՛ դրական և թե՛ բացասական նշանակություն:

Ա. Դրականը

1. տաքացնում է (տես՝ Ես.44:15; Հովհ.18:18)
2. լուսավորում է (տես՝ Ես.50:11; Մատթ.25:1-13)
3. եփում է (տես՝ Ելից 12:8; Ես.44:15-16; Հովհ.21:9)
4. գտնում է (տես՝ Թվոց.31:22-23; Առակ.17:3; Ես.1:25; 6:6-8; Երեմ.6:29; Մաղ.3:2-3)
5. սրբություն (տես՝ Ծննդ.15:17; Ելից 3:2; 19:18; Եզեկ.1:27; Եբր.12:29)
6. Աստծո առաջնորդություն (տես՝ Ելից 13:21; Թվոց 14:14; 3 Թագ.18:24)
7. Աստծուց զորացում (տես՝ Գործք 2:3)
8. Աստծո պաշտպանություն (տես՝ Չաք.2:5)

Բ. Բացասական՝

1. այրում է (տես՝ Հեսու 6:24; 8:8; 11:11; Մատթ.22:7)
2. բնաջնջում է (տես՝ Ծննդ.19:24; Ղևտ.10:1-2)
3. բարկություն (տես՝ Թվոց 21:28; Ես.10:16; Չաք.12:6)
4. պատիժ (տես՝ Ծննդ.38:24; Ղևտ.20:14; 21:9; Հեսու 7:15)

5. կեղծ էսկատոլոգիական նշան (տես՝ Հայտն.13:13)

Գ. Աստծո բարկությունը մեղքի հանդեպ արտահայտվում է կրակի փոխաբերությամբ՝

1. Նրա բարկությունը վառվում է (տես՝ Ովս.8:5; Սոփ.3:8)
2. Նա կրակ է թափում (տես՝ Նավ.1:6)
3. Հավիտենական կրակ (տես՝ Երեմ.15:14; 17:4)
4. Էսկատոլոգիական դատաստան (տես՝ Մատթ.3:10; 13:40; Հովհ.15:6; 2 Թեսաղ.1:7; 2 Պետ.3:7-10; Հայտն.8:7; 16:8)

Դ. Հաճախ աստվածահայտնության ժամանակ հայտնվում է կրակ՝

1. Ծննդ.15:17
2. Ելից 3:2
3. Ելից 19:18
4. Սաղմ.18:7-15; 29:7
5. Եզեկ.1:4,27; 10:2
6. Եբր.1:7; 12:29

Ե. Աստվածաշնչում զետեղված շատ փոխաբերությունների պես (այսինքն՝ թթխմոր, առյուծ, և այլն) ըստ համատեքստի կրակը կարող է լինել օրհնություն կամ անեծք:

10:28

**NASB
NKJV
NRSV
TEV
NJB**

«ամեն որ, որ մի կողմ է դրել Մովսեսի Օրենքը»

«ամեն որ, որ մերժել է Մովսեսի օրենքը»

«ամեն որ, որ չարաշահել է Մովսեսի օրենքը»

«ամեն որ, որ չի հնազանդվում Մովսեսի Օրենքին»

«ամեն որ, որ անարգում է Մովսեսի Օրենքը»

Սա կամայական մերժման շատ ուժեղ բառ է: *Եբրայեցիներին Ուղղված Նամակի Ձեռնարկ* գրքում Էլինգուորթն ու Նիդան /Ellingworth and Nida, *A Handbook on the Letter to the Hebrews*/ ասում են.

«Չեն հնազանդվում տերմինի համար բառը խիստ է, որը կիրառվում է ոչ թե պատահական մեղքերի համար, այլ ամբողջ ուխտը խախտելու դեպքում (Եզեկ.22:26), օրինակ՝ կռապաշտությամբ (2 Օր.17:2-7), սուտ մարգարեությամբ (2 Օր.18:20) կամ հայիոյությամբ (Դևտ.24:13-16)» (էջ՝ 236):

■ **«մեռներ՝ առանց գգթության, երկու կամ երեք վկայի ...»** ՀԿ-ում քրեական դատավարությունը մշտապես պահանջում էր երկու վկա (2 Օր.17:6; 19:15): Անհնազանդությունը ունի հետևանքներ:

10:29 «որքան ավելի խիստ» Սա մի փաստարկ է ավելի փոքրից (Մովսեսի ուխտը) ավելի մեծին տանող (Հիսուսի ուխտը): Այս համեմատությունը Եբրայեցիների հիմնական թեման է:

■ **«ոտնահարել»** Այս պատկերավոր լուսաբանումը նշանակում է արհամարհանքով վերաբերվել (տես՝ Եբր.6:6): Սա ԱՌԻՍ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է, որն արտահայտում է կատարված գործողություն, ինչպես և հաջորդ ԴԵՐԲԱՅԸ:

■ **«Աստծո Որդի»**

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈ ՈՐԴԻՆ
SPECIAL TOPIC: THE SON OF GOD**

Սա ՆԿ-ում Հիսուսին տրված ամենակարևոր անուններից է: Անշուշտ այն ունի աստվածաբանական նշանակություն: Այն Հիսուսին ներկայացնում է որպես «Որդին» կամ «Իմ Որդին», իսկ Աստծուն դիմում է որպես «Հայր»: ՆԿ-ում այն հանդիպում է ավելի քան 124 անգամ: Նույնիսկ, երբ Հիսուսն է Ինքն իրեն անվանում «Մարդու Որդի» Դանիել 7:13-14 հաստվածից, սա ևս ունի աստվածաբանական նշանակություն:

ՀԿ-յան հասկացությամբ «որդի» բառը կարող է վերաբերել չորս հատուկ խմբերի՝

1. հրեշտակներին (սովորաբար ՀՈԳՆԱԿԻ թվով, տես՝ Ծննդ.6:2; Հոր 1:6; 2:1)
2. Իսրայելի Թագավորը (տես՝ 2 Թագ.7:14; Սաղմ.2:7; 89:26-27)

3. Իսրայելի հավաքական ազգին (տես՝ Ելից 4:22-23; 2 Օր.14:1; Ովս.11:1; Մաղ.2:10)

4. Իսրայելի դատավորներին (տես՝ Մաղմ.82:6)

Երկրորդ կիրառությունն է, որ կապ ունի Հիսուսի հետ: Այս կերպով «Դավթի որդի» և «Աստծո որդի» երկու արտահայտություններն էլ կապված են 2 Թագավորաց 7; Մաղմոս 2 և 89-ի հետ:

ՀԿ-ում «Աստծո որդին» երբեք չի օգտագործվել հատուկ Մեսիայի համար, բացառությամբ որպես էսկատոլոգիական՝ գալիք թագավորի համար, որպես Իսրայելի «օծված պաշտոններից» մեկը: Այնուամենայնիվ Մեռյալ Ծովի Գալարներում այս տիտղոսը Մեսիական նշանակությամբ շատ տարածված է (տես՝ հատուկ մեջբերումներ *Հիսուսի և Ավետարանների վերաբերյալ Բառարանում /Dictionary of Jesus and the Gospels/*, էջ՝ 770): Նաև «Աստծո Որդի» տիտղոսը հանդիսանում է Մեսիական տիտղոս երկու հրեական միջաստվածաշնչային հայտնության աշխատություններում (տես՝ 2 Եզրաս 7:28; 13:32,37,52; 14:9 և 1 Ենովք 105:2):

Այս խոսքի ՆԿ-յան հիմքը, որը վերաբերում է Հիսուսին, լավագույնս ամփոփվում է մի քանի կատեգորիաներով՝

1. Նրա մշտագոյության՝ նախքան արարումը գոյություն ունենալը (տես՝ Հովհ.1:1-18)
2. Նրա բացառիկ (կուսական) ծնունդը (տես՝ Մատթ.1:23; Ղուկ.1:31-35)
3. Նրա մկրտությունը (տես՝ Մատթ.3:17; Մարկ.1:11; Ղուկ.3:22: Աստծո ձայնը երկնքից միանում է Մաղմոս 2-ի թագավորին Եսայի 53-ի չարչարվող ծառայի հետ միասին):
4. Սատանայի կողմից Նրա փորձությունը (տես՝ Մատթ.4:1-11; Մարկ.1:12,13; Ղուկ.4:1-13: Նա փորձվում է, որպեսզի կասկածի տակ առնի Իր որդի լինելու փաստը, որ գուցե այդպիսով իր նպատակը կիրականացներ մեկ այլ ճանապարհով՝ առանց խաչի):
5. Անրնդունելի խոստովանողների կողմից Նրա մասին հաստատություններ՝
 - ա. դևերը (տես՝ Մարկ.1:23-25; Ղուկ.4:31-37,41; Մարկ.3:11-12; 5:7)
 - բ. անհավատները (տես՝ Մատթ.27:43; Մարկ.14:61; Հովհ.19:7)
6. Իր աշակերտների կողմից հաստատությունն Իր մասին.
 - ա. Մատթ.14:33; 16:16
 - բ. Հովհ.1:34,49; 6:69; 11:27
7. Իր կողմից հաստատությունը.
 - ա. Մատթ.11:25-27
 - բ. Հովհ.10:36
8. Աստծո մասին Իր կողմից որպես Հոր՝ ընտանեկան փոխաբերության կիրառությունը.
 - ա. Աստծո համար «Աբբա» բառի կիրառությունը Իր կողմից
 - 1) Մարկ.14:36
 - 2) Հռոմ.8:15
 - 3) Գաղ.4:6
 - բ. Պարբերաբար Իր կողմից օգտագործվող Հայր (*patēr*) բառը՝ նկարագրելու աստվածության հետ Իր փոխաբերությունը:

Որպես ամփոփում, «Աստծո Որդի» տիտղոսը աստվածաբանական մեծ նշանակություն էր ներկայացնում իրենից այն մարդկանց համար, ովքեր ՀԿ-ը և դրա խոստումներն ու կատեգորիաները լավ գիտեին, սակայն ՆԿ-ի գրողները անհանգստանում էին տեսնելով այս տիտղոսի կիրառությունը հեթանոսների մեջ, քանի որ համաձայն նրանց հեթանոսական հավատամքի հիմքի «աստվածները» ամուսնանում էին կանանց հետ, որոնցից սերվում էին ժառանգներ՝ «հսկաներ» կամ «տիտաններ»:

■ **«համարել»** Սա նշանակում է փաստերի կշռադատում՝ որոշում կայացնելու ելքով:

■ **«անսուրբ»** Սա վերաբերում է ծիսականորեն անսուրբ բաներին, որոնք չեն համապատասխանում իրենց նախատեսված նպատակի համար:

■ **«Ուխտի արյունը, որով ինքը սրբվել էր»** Հարցը այստեղ կապված է ԲԱՅԻ հետ (ԱՈՐԻՍՏ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ): Արդյո՞ք սա վերաբերում է նոր ուխտը հենց սկզբից մերժելուն, թե նոր ուխտից հեռանալու մասին է խոսվում: Նախորդ արտահայտության մեջ և ապա սրան հաջորդող արտահայտության մեջ ԱՈՐԻՍՏ ԴԵՐԲԱՅՆԵՐԸ ակնարկում են սկզբնական մերժումը:

Այս մեկնաբանության հետ կապված խնդիրը նրանում է, որ Եբրայեցիների բոլոր հատվածներում, որտեղ կիրառվում է «սրբվել» բառը, այն վերաբերում է հավատացյալներին (տես՝ Եբր.2:11; 9:13; 10:10,14; 13:12): Ինձ համար խնդիրը ուխտը պահողն է: Ամենակալ Աստված կապել է մի ուխտ, որն առնչվում է փրկության հետ: Այն ձրի է, բոլորի համար, սակայն այն պետք է ընդունվի (մարդու ազատ կամքը), ոչ թե միայն զգացմունքային պատասխանով (տես՝ Մատթ.13:20-22), և ոչ էլ եկեղեցուն միանալով (տես՝ 1 Հովհ.2:19): Կարևորը հավատալն է: Նրանք, որ հավատում են, վստահում են (*pisteuō*

տերմինի բոլոր հնարավոր թարգմանությունները) փրկված են և ունեն փրկության վստահություն: Եբրայեցիների երկակի գգուշացումն է. (1) ընդունել ավետարանի առաջարկը և (2) քայլել դրա մեջ: Եթե մեկին չի հաջողվում ընդունել՝ ապա դատաստան, եթե մեկը դադարում է հավատալ՝ ապա դատաստան:

■ **«և անարգել շնորհաց Հոգուն»** Նա է համոզում մեզ մեղքի հարցում, բերում Քրիստոսին, մկրտում մեզ Քրիստոսի մեջ և որպես հավատացյալներ մեր մեջ ձևավորում Քրիստոսին (տես՝ Հովհ.16:8-11): Հոգին անարգվում կամ վիրավորվում է այն ժամանակ, երբ անհավատները մերժում են Իր կեղմից նրանց հետամուտ լինելն ու համոզելը: Այս գիրքը ստացող մարդկանցից ոմանք մերժում էին Քրիստոսին ժողովարանի մյուս անդամների կողմից հստակ հայտնության առկայությամբ (տես՝ Ներածություն, Ստացողները):

10:30 «ՎՐԵԺԻՆԴՐՈՒԹՅՈՒՆ» Սա մեջբերում է Սեպտուագինտայի 2 Օր.32:35ա և 36ա: Սա բարկություն չէ, այլ կատարյալ արդարություն՝ ուղղված բոլոր նրանց հանդեպ, ովքեր ներգրավված են:

■ **«ՏԵՐԸ ՊԻՏԻ ԴԱՏԻ ԻՐ ԺՈՂՈՎՐԳԻՆ»** Սա հաջորդող մեջբերումն է Սեպտուագինտայից՝ 2 Օր.32:36ա: Եբրայերեն տեքստում «դատել» բառի փոխարեն տրված է «դատապաշտպանել»: Արդյո՞ք այդ արտահայտությունն ակնարկում է, որ գիտակցաբար մեղանչողները ժամանակին եղել են Աստծո ժողովուրդը: Սովորաբար ՀԿ-յան մեջբերման միայն մեկ ասպեկտն է որոշված: Հավանաբար «դատել» բառն է հանդիսանում այս մեջբերման կիզակետը, ոչ թե այն, որ բնագրային համատեքստում այն վերաբերում էր կռապաշտ Իսրայելին: Հեղինակը ամբողջ գրքի բովանդակությամբ կիրառել է Աստծո կողմից Իր իսկ ժողովրդին դատաստանի մեջ մերժելը որպես գգուշացում:

10:31 «Ահավոր բան է կենդանի Աստծո ձեռքն ընկնելը» Այս արտահայտությունն (տես՝ Եբր.3:12) արտացոլում է Աստծո ուխտի անունը՝ «ՅԱՀՎԵ» (տես՝ Ելից 3:14), եբրայերենի «լինել» ԲԱՅԻՑ (տես՝ Սատթ.16:16): Տե՛ս Հատուկ Թեմա Եբր.2:7: Անհավատությունը հավիտենական հետևանքներ է ունենում:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ԵԲՐԱՅԵՏԻՆԵՐԻ 10:32-39

³²Սակայն հիշեցե՛ք նախկին օրերը, երբ լուսավորվելուց հետո շատ մեծ չարչարանքների տոկացիք՝ ³³մերթ նախատինքների ու նեղությունների առարկա դառնալով և մերթ այդպիսի վիճակներում եղողներին ընկերակցելով. ³⁴քանի որ իմ կապանքների մեջ իմ նկատմամբ կարեկից եղաք ու ձեր ստացվածքի հափշտակությունը ուրախությամբ ընդունեցիք, իմանալով, որ ավելի լավ և մնայուն հարստություն ունեք երկնքում: ³⁵Ուստի մի՛ կորցրեք ձեր վստահությունը, որ մեծ հատուցում ունի: Որովհետև ձեզ համբերություն է պետք, որպեսզի, Աստծո կամքն անելուց հետո, խոստումը ժառանգեք: ³⁶Որովհետև ձեզ համբերություն է պետք, որպեսզի, Աստծո կամքն անելուց հետո, խոստումը ժառանգեք:

³⁷Որովհետև. «ՄԻ ԲԻՉ ԺԱՄԱՆԱԿ ԷԼ, ԵՎ ՆԱ, ՈՐ ԳԱՆՈՒ Է, ՊԻՏԻ ԳԱ ՈՒ ՊԻՏԻ ՉՈՒՇԱՆԱՆ»:

³⁸Եվ «ԱՐԳԱՐԸ ՀԱՎԱՏՈՎ ՊԻՏԻ ԱՊՐԻ»,
Ու «ԵԹԵ ՄԵԿԸ ԵՏ ՔԱՇՎԻ, ԻՄ ՀՈԳԻՆ ՆՐԱՆ ՉԻ ՀԱՎԱՆԻ»:

³⁹Բայց մենք ետ քաշվողներից չենք, որ կորչենք, այլ նրանցից, որ հավատում են հոգիների փրկվելուն:

10:32 «հիշեցե՛ք նախկին օրերը» Սա ՆԵՐԿԱ ՉԵՉՈՔ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է, հավանաբար վերաբերում է Եբր.5:12-ին:

■ **«լուսավորվելուց հետո»** Այս խոսքը գործածվել էր Եբր.6:4-ում անհավատ խմբի մասին խոսելիս: Ես հավատում եմ, որ այստեղ խոսքը ուղղված է երկու տարբեր խմբերի.

1. Այն հրեաներին, ովքեր իրենց հավատացյալ ընկերների կյանքերում և վկայություններում տեսել են Աստծո գորությունը
2. Հավատացյալ հրեաներին, ովքեր դեռևս երկրպագում էին ժողովարաններում

Եբր.10:32-36-ի «դուք» դերանունը հակադրված է Եբր.10:26-31-ի հետ (ինչպես 6:9-12-ն է հակադրված 6:4-8-ի հետ):

■ **«տոկացիք»** Սա փոխաբերություն է վերցված մարգակյան մրցակցությունից (տես՝ Եբր.12:1,2,3,7):

■ **«շատ մեծ չարչարանքներ»** Հավանաբար սա վերաբերում է Եկեղեցու վրահաս հալածանքներին, բայց ոչ ժողովարանի, քանի որ հուդայականությունը օրինապես հաստատված կրոն էր Հռոմի

տիրապետության օրոք, իսկ Քրիստոնեությունը՝ ոչ: Այս պարբերությունը կարծես թե ակնարկում է, որ նրանք օգնում էին ուրիշներին, որոնք անցնում էին հալածանքների միջով և ուստի կիսվում էին իրենց ունեցած որոշակի մոտեցումներով (տես՝ Եբր. 10:33-34; 6:10):

10:34 «անգլ.՝ բանտարկյալներին» Որոշ Քրիստոնյաներ բանտարկվել էին, բայց ոչ այս նամակը ստացողները: Նրանք հավատացյալներ էին, սակայն ամբողջովին չէին միացել եկեղեցուն: Այս բանը կարող է հավաստել այն տեսակետը, որ նրանք հրեա հավատացյալներ էին, որոնք դեռևս հաճախում էին ժողովարան (տե՛ս՝ Ներածություն, Ստացողները):

KJV թարգմանությունը տալիս է (ինչպես նաև մեր հայերեն թարգմանությունը) «իմ կապանքներում» արտահայտությունը, որը շատ մեկնաբաններ գործածել են որպես վկայություն՝ հաստատելու Պողոսի հեղինակ լինելը: Սակայն գոյություն ունեն ձեռագրերի մի քանի հավանական տարբերակներ՝ (1) «կապանքների մեջ» (P¹³, A, D* և Վուլգատտա ու Փեշիտտա թարգմանությունները), (2) «կապանքներով» (P⁴⁶, Ψ և Օրիգենի կողմից օգտագործված հունարեն տեքստը), և (3) «իմ կապանքներով» (x, D², K, L, P և Ալեքսանդրիացի Կլեմենտի կողմից օգտագործված հունարեն տեքստը)»

■ **«ձեր ստացվածքի հափշտակությունը ուրախությամբ ընդունեցիք»** Սա Քրիստոսի մեջ ունեցած մեր հույսի և ժառանգության հաստատուն վկայությունն է (տես՝ Եբր. 9:15; 11:16; 13:14; Մատթ. 5:12; Դուկ. 6:22-23; Հռոմ. 5:3; 8:17):

■ **«ավելի լավ»** Տե՛ս ամբողջական գրառումը Եբր. 7:7-ում:

10:35-36 Այս համարները արձանագրել են, որ հավատացյալ խումբը կարիք ունի (1) չկորցնելու իրենց վստահությունը (տես՝ Եբր. 3:6; 4:16; 10:19) և (2) համբերելու (տես՝ Եբր. 12:1-3): Ծատ կերպերով կարծես թե սա շատ նման է Հայտն. 2-3-ի յոթ եկեղեցիներին ուղղված պատգամին (տես՝ Հայտն. 2:3, 5, 7, 10, 11, 13, 16, 17, 19, 25, 26; 3:2, 3, 5, 10, 11, 12, 20): Ծշմարիտ հավատքը հարատևող է (տես՝ 1 Հովհ. 2:19): Աստծո ուխտի խոստումները պետք է ընդունել և պահել: Տե՛ս Հատուկ Թեմա, Եբր. 4:14-ում:

Վստահության հարցում իրական խնդիրը պայքարների մեջ գտնվող հավատացյալները չեն, այլ ժամանակակից արևմտյան եկեղեցու անդամների բազմությունը, որոնք իրենց կյանքում հավատքի վկայություն չունեն: Դյուրահավատությունը ապահովության վրա իր բազմակի շեշտադրությամբ հանդերձ մեր եկեղեցիները լցրել է լավագույն դեպքում մանուկ Քրիստոնյաներով և վատթարագույն դեպքում՝ Քրիստոնեական հանդերձանքով կորած մարդկանցով: Աշակերտությունը և արմատական սրբության ձգտելու կոչը բացակայում են նյութապաշտ, կապիտալիստական, անկանոն, ժամանակակից արևմտյան մշակույթի մեջ: Փրկությունը վերածվել է ապրանքի (երկնքի տանող տոմս՝ անձնակենտրոն կյանքի ավարտին կամ հակահրդեհային ապահովագրության փաստաթուղթ՝ իրենց կայնքերում շարունակ գործվող մեղքերի դեմ), Աստծո հետ ամեն օր, անող անձնական փոխհարաբերության փոխարեն: Քրիստոնեության նպատակը միայն երկինքը չէ կյանքի ավարտին (ապրանք), այլ հիմա Քրիստոսակերպությունը: Աստված կամենում է մարդկության մեջ վերականգնել Իր պատկերը, որպեսզի կարողանա մեղավոր մարդկանց ձեռք մեկնի Քրիստոսի միջոցով Իր առաջարկված ձրի փրկությամբ: Մենք փրկված ենք ծառայելու: Փրկության վստահությունը ծառայության և աշակերտության կյանքի արդյունք է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՐԱՏԵՎՈՒԹՅՈՒՆ
SPECIAL TOPIC: PERSEVERANCE

Դժվար է բացատրել աստվածաշնչյան այն վարդապետությունները, որոնք կապված են Քրիստոնեական ապրելակերպի հետ, քանի որ դրանք ներկայացված են տիպիկ արևելյան, բարբառային գուգակցությամբ: Այս գուգակցումները կարծես թե հակասական են, սակայն դրանց երկու բևեռներն էլ աստվածաշնչյան են: Արևմտյան Քրիստոնյաները հակված են ընտրելու մի ճշմարտությունը և անտեսելու կամ թերագնահատելու հակառակ ճշմարտությունը: Ահա մի քանի օրինակներ՝

1. Արդյո՞ք փրկությունը Քրիստոսին վստահելու առաջին՝ սկզբնական որոշումն է, թե աշակերտ լինելու ցմահ՝ ամբողջ կյանքի ընթացքում նվիրումը:
2. Արդյո՞ք փրկությունը ամենակալ Աստծո շնորհքի միջոցով ընտրված լինելն է, թե աստվածային այդ հրավերին՝ առաջարկին հավատքով և զոջումով մարդու կողմից տրված պատասխան:
3. Արդյո՞ք փրկությունը, երբ ընդունվում է մարդու կողմից, այլևս անհնար է կորցնել, թե կարիք կա ջանք անել հարատևելու մեջ:

Հարատևության խնդիրը եկեղեցու ամբողջ պատմության ընթացքում մշտապես առկա է եղել: Խնդիրը սկսվում է ՆԿ-ի թվացյալ կոնֆլիկտային հատվածներով՝

1. փրկության վստահության վերաբերյալ տեքստերը՝
 - ա. Հովհաննեսի ավետարանում Հիսուսի խոսքերը (Հովհ.6:37; 10:28-29)
 - բ. Պողոսի խոսքերը (Հռ.8:35-39; Եփես.1:13; 2:5,8-9; Փիլ.1:6;2:13; 2 Թեսաղ.3:3; 2 Տիմ.1:12; 4:18)
 - գ. Պետրոսի խոսքերը (1 Պետ.1:4-5)
2. Հարատևության անհրաժեշտության շուրջ տեքստեր՝
 - ա. Հիսուսի խոսքերը Համանման Ավետարաններում (Մատթ.10:22; 13:1-9,24-30; 24:13; Մարկ. 13:13)
 - բ. Հիսուսի խոսքերը Հովհաննեսի Ավետարանում (Հովհ.8:31; 15:4-10)
 - գ. Պողոսի խոսքերը (Հռոմ.11:22; 1 Կորնթ.15:2; 2 Կորնթ.13:5; Գաղ.1:6; 3:4; 5:4; 6:9; Փիլ.2:12; 3:18-20; Կող.1:23; 2 Տիմ.3:2)
 - դ. Եբրայեցիների հեղինակի խոսքերը (2:1; 3:6,14; 4:14; 6:11)
 - ե. Հովհաննեսի խոսքերը (1 Հովհ.2:6; 2 Հովհ.9; Հայտն.2:7,17,26; 3:5,12,21; 21:7)

Աստվածաշնչյան փրկությունը բխում է ամենակալ Երրորդության Աստծո սիրուց, ողորմություն-նից և շնորհքից: Ոչ մի մարդ չի կարող փրկվել առանց Սուրբ Հոգու նախաձեռնության (տես՝ Հովհ. 6:44,65): Աստված առաջին է գալիս և սահմանում կարգը, սակայն պահանջում է, որ մարդիկ պատասխանեն հավատքով և ապաշխարությամբ, թե՛ սկզբում և թե՛ հարատևորեն: Աստված աշխատում է մարդկանց հետ ուխտի փոխհարաբերության մեջ: Կան առանձնաշնորհումներ և պատասխանատվություններ:

Փրկությունը առաջարկվում է ամբողջ մարդկությանը: Հիսուսի մահը լուծեց մեղավոր մարդկության մեղքի հարցը: Աստված մի ճանապարհ է պատրաստել և կամենում է, որ բոլոր նրանք, որ ստեղծված են Իր պատկերով արձագանքեն Իր սիրուն և Հիսուսի մեջ մեզ տրված փրկությանը:

Եթե կամենում եք այս թեմայի շուրջ ավելի շատ իմանալ, կարդացե՛ք՝

1. Դեյլ Մուդի, *Ճշմարտության Խոսքը* (Dale Moody, *The Word of Truth*, Eerdmans, 1981 (էջ՝ 348-365)
2. Հովարդ Մարշալ, *Աստծո Չորությունը Պահված*, (Howard Marshall, *Kept by the Power of God*, Bethany Fellowship, 1969)
3. Ռոբերտ Շանք, *Կյանք Որդու մեջ* (Robert Shank, *Life in the Son*, Westcott, 1961)

Այս ոլորտում Աստվածաշունչը երկու տարբեր խնդիրներ է մատուցում. (1) փրկության վստահությունը անպտուղ, եսասիրական կյանք ապրելու համար որպես անցաթուղթ օգտագործելը, կամ (2) նրանք, որ ծառայության կամ անձնական մեղքի հետ կապված խնդիրների մեջ են, քաջալերելը: Խնդիրն այն է, որ սխալ խմբեր ընդունում են սխալ պատգամներ և աստվածաշնչյան մի քանի՝ սահմանափակ հատվածների հիման վրա կառուցում են աստվածաբանական համակարգեր: Որոշ Քրիստոնյաներ կարիք ունեն փրկության վստահության, մինչդեռ ոմանց անհրաժեշտ է հարատևության համար խիստ զգուշացում: Ո՞ր խմբին եք դուք պատկանում:

Գոյություն ունի պատմական աստվածաբանական մի հակամարտություն, որի մեջ ներգրավված են Օգոստինոսն ընդդեմ Պելագիոսի և Կալվինն ընդդեմ Արմինիոսի՝ Հայերը (հակա-պելագիան): Խնդրի մեջ առկա է փրկության հարցը. եթե մեկը իրոք փրկված է, պե՞տք է արդյոք հարատևի հավատքի և պտղաբերության մեջ:

Կալվինիստները պաշտպանում են աստվածաշնչյան այն տեքստերը, որոնք ընդունում են Աստծո ամենակալությունն ու պահող գործությունը (Հովհ.10:27-30; Հռոմ.8:31-39; 1 Հովհ.5:13,18; 1 Պետ.1:3-5) և Եփես.2:5,8-ի պես ՎԱՂԱԿԱՏԱՐ ժամանակի ԿՐԱՎՈՐԱԿԱՆ սեռի ԴԵՐԲԱՅՆԵՐԻ ԲԱՅԻ ժամանակները:

Հայերը պաշտպանում են աստվածաշնչյան այն տեքստերը, որոնք զգուշացնում են հավատացյալներին «պահել» «ումուր բռնել» կամ «շարունակել» (Մատթ.10:22; 24:9-13; Մարկ.13:13; Հովհ.15:4-6; 1 Կորնթ.15:2; Գաղ.6:9; Հայտն.2:7,11,17,26; 3:5,12,21; 21:7): Ես անձնապես չեմ հավատում, որ Եբրայեցիներ 6 և 10 գլուխները կիրառելի են, սակայն շատ Հայեր կիրառում են դրանք որպես զգուշացումներ հավատորոացության դեմ: Մատթեոս 13 և Մարկոս 4-ում Սերմնացանի Առակը դիտարկում է տեսանելի՝ ակնհայտ հավատքի հարցը, ինչպես Հովհ.8:31-59-ը: Ինչպես Կալվինիստները ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԲԱՅԵՐԸ են մեջբերում, որոնք կիրառվել են բնութագրելու փրկությունը, այնպես էլ Հայերը մեջբերում են ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ բայերով հատվածները, ինչպիսիք են 1 Կորնթ.1:18; 15:2; 2 Կորնթ.2:15:

Սա հստակ՝ կատարյալ օրինակ է, թե ինչպես են աստվածաբանական համակարգերը չարաշահում մեկնաբանության տեքստային ապացույցով մեթոդը: Սովորաբար հիմք հանդիսացող որևէ սկզբունք կամ հիմնական տեքստ է կիրառվում աստվածաբանական որևէ ցանց կառուցելու համար, որի միջոցով դիտարկվում են բոլոր մյուս տեքստերը: Չգույշ եղե՛ք ցանկացած տեսակի ցանցերից: Դրանք ծագում են արևմտյան տրամաբանությունից և ոչ թե հայտնությունից: Սակայն Աստվածաշունչը արևելյան գիրք է: Այն ներկայացնում է ճշմարտությունը լարվածությամբ լի, թվացյալ պարա-

դոքսալ գուգակցությամբ: Քրիստոնյաները կանչված են հաստատելու դրանք երկուսն էլ և ապրելու այդ լարվածության մեջ: ՆԿ-ը ներկայացնում է թե՛ հավատացյալի ապահովությունը և թե՛ հավատքի և աստվածապաշտության մեջ շարունակելու պահանջը: Քրիստոնեությունը նախ ապաշխարության և հավատքի պատասխան է, որին հաջորդում է ապաշխարության և հավատքի մշտական շարունակ տրվող պատասխանը: Փրկությունը ապրանք չէ (երկինք տանող տոմս կամ հակահրդեհ-հային ապահովագրության փաստաթուղթ), այլ փոխհարաբերություն: Այն որոշում և աշակերտություն է: ՆԿ-ում այն նկարագրվում է ԲԱՅԻ բոլոր ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՎ.

ԱՈՐԻՍ (ավարտված գործողություն), Գործք 15:11; Հռոմ.8:24; 2 Տիմ.1:9; Տիտ.3:5
 ՎԱՂԱԿԱՏԱՐ (ավարտված գործողություն շարունակվող արդյունքներով), Եփես.2:5,8
 ՆԵՐԿԱ (շարունակվող գործողություն), 1 Կորնթ.1:18; 15:2; 2 Կորնթ.2:15
 ԱՊԱՌՆԻ (ապագայի դեպքեր կամ որոշակի՝ հատուկ դեպքեր), Հռոմ.5:8,10; 10:9; 1 Կորնթ.3:15; Փիլ.1:28; 1 Թեսաղ.5:8-9; Եբր.1:14; 9:28

10:36 Այս համարը պարունակում է պայման:

■ **«Աստծո կամքը»** Տե՛ս Հատուկ Թեմա Եբր.13:21-ում:

■ **«խոստումը ընդունեք /հայ.՝ ժառանգեք/»** Սա վերաբերում է Քրիստոսի մեջ մեր ունեցած նոր ուխտի խոստումներին (այսինքն՝ Եբր.9:15):

10:37-38 Սա մեջբերում է Սեպտուագինտայից՝ Ամբ.2:3-4, սակայն շեշտադրման նպատակով վերջին երկու ենթահատվածները տեղերով փոխված:

■ **«ՆԱ, ՈՐ ԳԱՆՈՒ Է»** Եբրայերեն Մասորետիկ տեքստը նշում է «այն», սակայն հունարեն Սեպտուագինտան այն անձնավորում է, որը վերաբերում է Մեսիային:

10:38 «ՀԱՎԱՏՈՎ ՊԻՏԻ ԱՊՐԻ»

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏԱԼՐ, ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆՐ, ՀԱՎԱՏՔՐ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆՐ ՀԿ-ՈՒՄ (ԴՁՑ)
SPECIAL TOPIC: BELIEVE, TRUST, FAITH, AND FAITHFULNESS IN THE OLD TESTAMENT (ԴՁՑ)

I. Բացման հայտարարություն
 Հարկ եմ համարում ասել, որ այս աստվածաբանական տերմինի կիրառությունը, որը չափազանց կարևոր է ՆԿ-ի համար, այնքան էլ հստակ չի սահմանվում ՀԿ-ում: Անշուշտ այս բառը այնտեղ առկա է, սակայն դիտարկվում է բանալի հանդիսացող ընտրված հատվածներում և անձանց մոտ:
 ՀԿ միաձուլում է՝
 Ա. անհատն ու համայնքն իրար հետ
 Բ. անձնական փորձառությունը և ուխտի հնազանդությունը իրար հետ
 Հավատքը թե՛ անձնական փորձառություն է, և թե՛ ամենօրյա ապրելակերպ: Ավելի հեշտ է այն նկարագրել անձի մեջ քան բառապաշարով (այսինքն՝ բառային սերտողությամբ): Այս անձնական ասպեկտը լավագույնս լուսաբանվում է՝
 Ա. Աբրահամի և նրա սերնդի օրինակով
 Բ. Դավթի և Իսրայելի օրինակով
 Այս մարդիկ հանդիպեցին՝ վերապրեցին Աստծուն և նրանց կյանքերը մշտապես փոխվեցին (անկատար, սակայն հարատևող հավատքի կյանքեր): Փորձությունները ի հայտ բերեցին Աստծո հետ իրենց հավատքի վերապրումների տկարություններն ու առավելությունները, սակայն մտերմիկ, վստահության փոխհարաբերությունը շարունակվեց ժամանակի ընթացքում: Այդ հավատքը փորձվեց և զտվեց, սակայն շարունակեց մնալ որպես նրանց նվիրումի և ապրելակերպի ապացույց:

II. Կիրառվող հիմնական արմատը
 Ա. ԴՁՑ (BDB 52)
 1. ԲԱՅ

- ա. *Qal* բխում է՝ աջակցել, սնուցել (այսինքն՝ 4 Թագ.10:1,5; Եսթ.2:7, աստվածաբանական կիրառությունից դուրս)
- բ. *Niphal* բխում է՝ համոզվել կամ հաստատ իմանալ, հաստատել, հիմնավորել, հավատարիմ կամ վստահելի լինել՝
 (1) մարդկանց՝ Եսայի 8:2; 53:1; Երեմ.40:14
 (2) իրերին՝ Եսայի 22:23
 (3) Աստծուն՝ 2 Օր.7:9; Եսայի 49:7; Երեմ.42:5
- գ. *Hiphil* բխում է՝ հաստատ կանգնել, հավատալ, վստահել.
 (1) Աբրահամը հավատաց Աստծուն՝ Ծննդ.15:6
 (2) Եգիպտոսում Իսրայելացիները հավատացին՝ Ելից 4:31; 14:31 (բացասումը՝ 2 Օր.1:32)
 (3) Իսրայելացիները հավատացին, որ ՅԱՀՎԵՆ Մովսեսի միջոցով խոսեց իրենց՝ Ել.19:9; Սաղմ.106:12,24
 (4) Աբազը չվստահեց Աստծուն՝ Ես.7:9
 (5) Ով որ հավատա նրան/դրան՝ Եսայի 28:16
 (6) Հավատալ Աստծո վերաբերյալ ճշմարտություններին՝ Ես.43:10-12
2. ԳՈՅԱԿԱՆ (ԱՐԱԿԱՆ ՍԵՌԻ) – հավատարմություն (այսինքն՝ 2 Օր.32:20; Ես.25:1; 26:2)
3. ՄԱԿԲԱՅ – ճշմարտապես, ճշմարիտ, համամիտ եմ, թող այդպես լինի (տես՝ 2 Օր.27:15-26; 3 Թագ.1:36; 1 Մնաց.16:36; Ես.65:16; Երեմ.11:5; 28:6): Սա եկեղեցական «ամեն» բառի կիրառությունն է ՀԿ-ում և ՆԿ-ում:
- Բ. ռֆ (BDB 54) ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻ ԳՈՅԱԿԱՆ՝ հաստատություն, հավատարմություն, ճշմարտություն
 1. մարդկանց՝ Ես.10:20; 42:3; 48:1
 2. Աստծուն՝ Ելից 34:6; Սաղմ.117:2; Ես.38:18,19; 61:8
 3. Ճշմարտությանը՝ 2 Օր.32:4; 3 Թագ.22:16; Սաղմ.33:4; 98:3; 100:5; 119:30; Երեմ.9:5; Չաբ.8:16
- Գ. ռֆ (BDB 53), հաստատություն, հարատևություն, նվիրվածություն
 1. ձեռքերին՝ Ելից 17:12
 2. Ժամանակներին՝ Ես.33:6
 3. մարդկանց՝ Երեմ.5:3; 7:28; 9:2
 4. Աստծուն՝ Սաղմ.40:11; 88:12; 89:1,2,5,8; 119:138
- III. Այս ՀԿ-յան հասկացության կիրառությունը Պողոսի կողմից՝
 Ա. Պողոսը հիմնավորում է ՅԱՀՎԵՆ և ՀԿ-ի վերաբերյալ իր նոր հասկացությունը Դամասկոսի ճանապարհին Հիսուսի հետ ունեցած իր անձնական փորձառությամբ (տես՝ Գործք 9; 22; 26):
 Բ. Նա ՀԿ-ի երկու կարևոր հատվածներից, որոնք օգտագործում են յճ արմատը, գտավ հիմք իր այս նոր հասկացության համար.
 1. Ծննդ.15:6 – Աստծո կողմից նախաձեռնած Աբրահամի անձնական փորձառությունը (Ծննդոց 12) պատճառ հանդիսացավ հավատքի հնազանդության կյանքի (Ծննդոց 12-22): Պողոսն այս մասին ակնարկում է Հռոմեացիների 4 և Գաղատացիների 3 գլուխներում:
 2. Եսայի 28:16 – նրանք, ովքեր հավատացին դրան (այսինքն՝ Աստծո կողմից փորձված և հաստատված անկյունաքարը) երբեք չեն՝
 ա. Հռոմ.9:33, «մնա ամոթով» կամ «հիասթափվի»
 բ. Հռոմ.10:11, վերը նշվածի պես
 3. Ամբ. 2:4 – ովքեր ճանաչում են հավատարիմ Աստծուն պետք է ապրեն հավատարմության կյանքով (տես՝ Երեմ.7:28): Պողոսն օգտագործում է այս տեքստը Հռոմ.1:17 և Գաղ.3:11-ում (նաև՝ Եբր.10:38):
- IV. Այս ՀԿ-յան հասկացության կիրառումը Պետրոսի կողմից.
 Ա. Պետրոսը համադրում է՝
 1. Ես.8:14 – 1 Պետ.2:8 (գլորման վեմ՝ քար)
 2. Ես.28:16 – 1 Պետ.2:6 (անկյունաքար)
 3. Սաղմ.118:22 – 1 Պետ.2:7 (անարգված քար)
 Բ. Նա դիմում է յուրօրինակ լեզվի, որը նկարագրում է Իսրայելին՝ «ընտրյալ ժողովուրդ, թագավորական քահանայություն, սուրբ ազգ, Աստծո սեփական ժողովուրդ», վերցնելով՝
 1. 1 Օր.10:15; Ես.43:21
 2. Ես.61:6; 66:21
 3. Ելից 19:6; 2 Օր.7:6
 և հիմա այն կիրառում է Քրիստոսի վրա եկեղեցու ունեցած հավատքի համար (1 Պետ.2:5,9):

V. Այս հասկացության կիրառումը Հովհաննեսի կողմից.

Ա. ՆԿ-յան կիրառությունը

«Հավատացին» տերմինը հունարենի (*pisteuō*) տերմինից է, որը կարող է նաև թարգմանվել «հավատալ», «հավատք» կամ «վստահություն»: Օրինակ, ԳՈՅԱԿԱՆԸ Հովհաննեսի Ավետարանում չի հանդիպում, սակայն ԲԱՅԸ հաճախ է օգտագործվում: Հովհաննես 2:23-25-ում Հիսուս Նագովրեցու հանդեպ, որպես Մեսիայի, ամբոխի ցուցաբերած նվիրումի մեջ անկեղծության անորոշություն կա: «Հավատալ» տերմինը մակերեսորեն կիրառելու այլ օրինակներից են՝ Հովհ.8:31-59 և Գործք 8:13, 18-24: Իրական աստվածաշնչյան հավատքը ավելին է, քան ներքին արձագանքը: Դրան պետք է հետևի աշակերտության գործընթացը (տես՝ Մատթ.13:20-22,31-32):

Ա. ՆԱԽԴԻՐՆԵՐՈՎ Կիրառությունը

1. *eis* նշանակում է /դեպի/ «մեջ»: Այս յուրօրինակ քերականական կառուցվածքը շեշտադրում է հավատացյալների հավատքը՝ վստահությունը, որ դնում են Հիսուսի մեջ՝ ա. Նրա անվան մեջ (Հովհ.1:12; 2:23; 3:18; 1 Հովհ.5:13)
բ. Նրա մեջ (Հովհ.2:11; 3:15,18; 4:39; 6:40; 7:5,31,39,48; 8:30; 9:36; 10:42; 11:45, 48; 12:37,42; Մատթ.18:6; Գործք 10:43; Փիլ.1:29; 1 Պետ.1:8)
գ. Իմ մեջ (Հովհ.6:35; 7:38; 11:25,26; 12:44,46; 14:1,12; 16:9; 17:20)
դ. Որդու մեջ (Հովհ.3:36; 9:35; 1 Հովհ.5:10)
ե. Հիսուսի մեջ (Հովհ.12:11; Գործք 19:4; Գաղ.2:16)
զ. Լույսի մեջ (Հովհ.12:36)
է. Աստծո մեջ (Հովհ.14:1)
2. *en* նշանակում է «մեջ», ինչպես Հովհ.3:15; Մարկ.1:15; Գործք 5:14
3. *epi* նշանակում է «մեջ» կամ «վրա» ինչպես Մատթ.27:42; Գործք 9:42; 11:17; 16:31; 22:19; Հռոմ.4:5, 24; 9:33; 10:11; 1 Տիմ.1:16; 1 Պետ.2:6
4. ՏՐԱԿԱՆ ՀՈՒՆՎԸ առանց ՆԱԽԴԻՐԻ, ինչպես Գաղ.3:6; Գործք 18:8; 27:25; 1 Հովհ.3:23; 5:10
5. *hoti*, որը նշանակում է «հավատալ որ» տալիս է այն բովանդակությունը, թե ինչին հավատալ՝
ա. Հիսուսը Աստծո Սուրբն է (Հովհ.6:69)
բ. Հիսուսը ԵՍ ԵՄն է (Հովհ.8:24)
գ. Հիսուսը Հոր մեջ է և Հայրը՝ Նրա մեջ (Հովհ.10:38)
դ. Հիսուսը Մեսիան է (Հովհ.11:27; 20:31)
ե. Հիսուսը Աստծո Որդին է (Հովհ.11:27; 20:31)
զ. Հիսուսը ուղարկվել է Հոր կողմից (Հովհ.11:42; 17:8,21)
է. Հիսուսը Հոր հետ մեկ է (Հովհ.14:10-11)
ը. Հիսուսը Հորից եկավ (Հովհ.16:27,30)
թ. Հիսուսը իրեն հավասարեցրեց Հոր ունեցած Ուխտի անվան հետ՝ «ԵՍ ԵՄ» (Հովհ.8:24; 13:19)
ժ. Մենք նրա հետ ենք ապրելու (Հռոմ.6:8)
ի. Հիսուսը մահացավ և հարություն առավ (1 Թեսաղ. 4:14)

IV. Եզրակացություն.

Աստվածաշնչյան հավատքը պատասխանն է աստվածային խոսքին՝ խոստմանը: Աստված է միշտ նախաձեռնողը (այսինքն՝ Հովհ.6:44,65), սակայն այս աստվածային կապի մի մասը մարդկանց կողմից պատասխանելու անհրաժեշտությունն է՝

Ա. Վստահությամբ

Բ. Ուխտի հնազանդությամբ

Աստվածաշնչյան հավատքը՝

1. անձնական փոխհարաբերություն է (ներքին հավատք)
2. աստվածաշնչյան ճշմարտության հաստատումն է (հավատք Աստծո հայտնության վրա)
3. պատշաճ պատասխան՝ Խոսքի հնազանդությամբ (ամենօրյա հավատք)

Աստվածաշնչյան հավատքը երկնքի տոմս չէ կամ էլ ապահովագրության միջոց: Այն անձնական փոխհարաբերություն է: Սա է արարչագործության և մարդկության Աստծո պատկերով ու նմանությամբ ստեղծված լինելու նպատակը (տես՝ Ծննդ.1:26-27): Ինդիքը «մտերմությունն» է: Աստված ցանկանում է հաղորդակցություն և ոչ թե ինչ-որ աստվածաբանական մոտեցումներ: Բայց սուրբ Աստծո հետ հաղորդակցությունը պահանջում է, որ Աստծո զավակները ցուցաբերեն «ընտանեկան» վարքագիծ (այսինքն՝ սրբություն, տես՝ Ղևտ.19:2; Մատթ.5:48; 1 Պետ.1:15-16): Անկումը (տես՝ Ծննդոց 3) ազդեց մեր ճիշտ կերպով արձագանքելու կարողության վրա: Հետևաբար, Աստված մեր կողմից գործեց (տես՝ Եզեկ.36:27-38), մեզ «նոր սիրտ» և

«նոր հոգի» տալով, որը մեզ հնարավորություն է տալիս Նրա հետ հավատքի և ապաշխարության միջոցով հաղորդակցվել և հնազանդվել:

Բոլոր երեքն էլ կարևոր են: Բոլոր երեքն էլ պետք է պահպանվեն: Նպատակը Աստծուն ճանաչելն է (թե՛ հունարեն և թե՛ եբրայերեն իմաստով) և Նրա բնավորությունը մեր կյանքում արտացոլելը: Հավատքի նպատակը ինչ-որ մի օր երկինք հասնելը չէ, այլ ամեն օր Քրիստոսի նման լինելը:

Մարդկային հավատարմությունը Աստծո հետ փոխհարաբերության հետևանքն է (ՆԿ) և ոչ թե հիմքը (ՀԿ). մարդկության հավատքը Նրա հավատարմությանը, մարդկության վստահությունը Նրա վստահելիությանը: Փրկության վերաբերյալ ՆԿ-ի կենտրոնական կարծիքն այն է, որ մարդիկ պետք է նախաձեռնող Աստծո՝ Քրիստոսի միջոցով ցուցաբերված շնորհքին և ողորմությանը սկզբից պատասխանեն և հարատևեն դրա մեջ: Նա է սիրելի, Նա է ուղարկելի, Նա է ապահովելի, իսկ մենք պետք է պատասխանենք հավատքով և հավատարմությամբ (տես՝ Եփես.2:8-10):

Հավատարիմ Աստվածն ուզում է հավատարիմ ժողովուրդ, որպեսզի Իրեն հայտնի անհավատ աշխարհին և նրանք անձնապես հավատան Իրեն:

■ **«ԻՄ»** Գոյություն ունի հունարեն ձեռագրի շփոթմունք կապված այս անձնական ԴԵՐԱՆՎԱՆԸ նախորդող դերանունի հետ: Սա կապված է կա՛մ «արդարության» կա՛մ էլ «հավատքի» հետ: Մեր հեղինակը օգտագործում է MT և LXX թարգմանությունների երկդիմությունը, որպեսզի շեշտադրի (1) Մեսիայի գալուստը և (2) հավատացյալի հավատարմության անհրաժեշտությունը:

Հնագույն հունարեն մեծատառ A և C ձեռագրերում «իմ» դերանունը կապ ունի արդարության հետ: LXX, Փեչիստա և ms D* ձեռագրերում «իմ» դերանունը կապ ունի հավատքի հետ: P¹³, D^c, H^c, K, P և Տեքստուս Ռիսեպտուս ձեռագրերում «իմ» դերանունը բացակայում է (հետևելով Պողոսի կողմից Ամբ. 2:4-ից Հռոմ. 1:17; Գաղ. 3:1-ում իր մեջբերման մեջ այս դերանվան բացթողմանը):

Այս համարի երկրորդ մասում «եթե»-ն ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որն արտահայտում է պոտենցիալ գործողություն:

10:39 Հեղինակն ամփոփում է ընթերցողների համբերության հարցում իր վստահությունը (Եբր. 6:9-12):

■ **«Ետ քաշվողներից»** Սա ակնարկ է LXX թարգմանության Ամբակումի 2:4-ին «եթե նա ետ քաշվի, իմ հոգին չի հավանի նրան»: Եբրայեցիների գրքում հավատացյալների համար խնդիրը կայանում է մինչև վերջ հավատարմություն ցուցաբերելը: Մեծ վտանգ է «ետ քաշվելը»:

Այս համարում մեկնաբանական թարգմանչական հարց է առաջանում, թե ում է վերաբերում այս «ետ քաշվողներից» արտահայտությունը:

1. Ամբակումի օրերի խարայելացիներին
2. Եբր. 6:1-12-ի երկու խմբերին՝ առաջինը հրեաներին և մյուսը՝ հավատացյալ հրեաներին. անհավատ խումբը ետ էր քաշվել մաքուր ավետարանի վկայությունից դեպի կորուստ
3. Ընդհանրապես հավատացյալներին, ովքեր մինչև վերջ հավատարմությունը չեն պահում

Գրքի համատեքստը որպես մի ամբողջություն և Եբր. 6:9-12-ը սատարում են #2:

■ **«կորուստ /հայ.՝ կորչել/»** Այս տերմինը հաճախ կիրառվում է այն մարդկանց համար, ովքեր չունեն հավիտենական կյանք (տես՝ Մատթ. 7:13; Փիլ. 1:28; 3:19; 2 Թեսաղ. 2:3; 1 Տիմ. 6:9; 2 Պետ. 2:1,3; 3:7): Սա չպետք է հասկացվի որպես անհավատի վերջնական բանջնջումը, այլ ֆիզիկական կյանքի կորուստը: Միևնույն փորաբերության կիրառությամբ լեցուն է ՀԿ-ը: Դժողքի առեղծվածներից և ցավալի կողմերից մեկը դրա հավիտենական լինելու փաստն է (տես՝ Դան. 12:2; Մատթ. 25:46):

NASB «այլ նրանցից, որ հավատում են հոգու հավերժությանը»
NKJV «այլ նրանցից, որ հավատում են հոգու փրկվելուն»
NRSV «այլ նրանց մեջ ենք, ովքեր հավատք ունեն, ուստի և փրկված են»
TEV «փոխարենը, մենք հավատք ունենք և փրկված ենք»
NJB «մենք նրանցից ենք, որ պահում են *հավատքը* մինչ որ մեր հոգիները փրկվեն»

«Ետ քաշվելու» հականիշը հավատարմությունն է: Ամբակումից այս մեջբերումը կիրառված է այլ կերպ, քան այն, որ Պողոսն է կիրառում շեշտադրելով գործերից զատ ներքին հավատքի անհրաժեշտությունը՝ կարիքը (տես՝ Հռոմ. 1:17; Գաղ. 3:11), մինչ Եբրայեցիների գիրքը կիրառում է այն հարատևող՝ շարունակական հավատքի համար: Այս խոսքը հարթակ է պատրաստում 11-րդ գլխում հավատարիմների անվանակոչման համար: Այս անվանակոչումը ցույց է տալիս, որ հավատքը հաճախ պատճառ է հանդիսանում հալածանքների, անգամ մահվան: Այն ընդգծում է, որ ՀԿ-յան այս հավատացյալները,

նույնիսկ մեծ դժվարությունների մեջ (տես՝ Եբր. 10:32-33) շարունակում էին հավատքով ապրել: Եբրայեցիների հեղինակը պաշտպանում է իր այն վստահությունը, որ իր հավատացյալ ընթերցողները նույնպես կշարունակեն մինչև վերջ հավատքով ապրել:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ է այդքան կարևոր, որ Քրիստոսը Իր անձը պատարագեր «մեկ անգամ և բոլորի համար»:
2. Ե՞րբ և ի՞նչ է վերջնական փրկությունը:
3. Մահմանի՞ր ՆԿ-յան «կատարյալ» (*telos*) բառը:
4. Ո՞րն էր Քավության Օրվա նպատակը: Ինչպե՞ս են ՀԿ-յան գոհերը կապված 10:8-ի հետ:
5. Ինչո՞ւ է մեր հեղինակը ՀԿ-յան հատվածները վերագրում Հիսուսին և Սուրբ Հոգուն:
6. Արդյո՞ք մեկ անգամ և բոլորի համար սրբացումը գործողություն է (Եբր.10:10), թե ընթացք (Եբր.10:14):
7. Ինչո՞ւ է 10:18-ը այդքան նշանակալի:
8. ԹՎարկի՞ր Քրիստոսի միջոցով Աստծուն մոտենալու շնորհիվ այն բոլոր գործնական բաները, որ քաջալերվում է մեզ մտցնել մեր կյանք:
9. Արդյո՞ք 26-29 համարները սովորեցնում են հավատուրացություն:
10. Ինչո՞ւ էր այս նամակը ստացողների համար «միասին հավաքվելը» խնդիր:
11. Արդյո՞ք չարչարանքը Աստծո կամքն է (տես՝ Եբր. 10:32-36):

ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 11

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Հավատք	Հավատքով ենք հասկանում	Հերոսների և հերոսուհիների անվանակոչ	Հավատք	Մեր նախահայրերի օրինակելի հավատքը
11:1-2	11:1-3	11:1-3	11:1-2	11:1-2
11:3	Հավատք պատմության արշալույսին		11:3	11:3
11:4-7	11:4-7	11:4-7	11:4 11:5-6 11:7	11:4 11:5-6 11:7
	Հավատարիմ Աբրահամը			
11:8-12	11:8-12	11:8-12	11:8-10 11:11-12	11:8-10 11:11-12
	Երկնային հույսը			
11:13-16	11:13-16	11:13-16	11:13-16	11:13-16
	Նահապետների հավատքը			
11:17-22	11:17-22	11:17-22	11:17-19 11:20 11:21 11:22	11:17-19 11:20-22
	Մովսեսի հավատքը			
11:23-31	11:23-29	11:23-28	11:23 11:24-26 11:27-28	11:23-29
	Հավատքով նրանք հաղթեցին	11:29-31	11:29	
	11:30-40		11:30-31	11:30-31
11:32-38		11:32-38	11:32-35ա 11:35բ-38	11:32-40
11:39-40		11:39-40	11:39-40	

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Մուրը Գիրքը ճիշտ կարդալու Ուղեգույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեգույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո:

Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Գուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՑՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Գլուխ 11 հանդիսանում է ՀԿ-յան այնպիսի մարդկանց օրինակների շարք, որոնք հավատարիմ էին դժվար իրավիճակներում (2 Պետրոս 2 և Հուդայի հակառակը): Այս օրինակների նպատակն է քաջալերել բոլոր տարիքի ընթերցողներին և հավատացյալներին, որպեսզի անկախ ֆիզիկական հանգամանքներից, որոնք նրանք դիմակայում են, մնան հավատարիմ (տես՝ Եբր.10:32-39):

Բ. Նաև ուշադրություն դարձրեք, որ սրանք սկզբնական հավատքի դավանություններ չեն, այլ Հին Ուխտի ժամանակներում ապրած հավատքի կյանքեր: Հավատարիմ վերջաբանը ճշմարիտ մեկնարկի վկայությունն է: Հավատացյալները հավատքով սկսում են, հավատքով շարունակում և հավատքով էլ մեռնում: Երբայեցիների հեղինակը հավատացյալի կյանքը գնահատում է իր հավատարիմ ավարտով, ինչպես նաև իր հավատքի մեկնարկով:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 11:1-7

¹Արդ հավատը հուսացած բաների հաստատումն է և չերևացող բաների ապացույցը: ²Որովհետև նախնիները դրանով վկայություն ընդունեցին: ³Հավատով ենք հասկանում, որ աշխարհներն Աստծո խոսքով ձևավորվեցին, այնպես որ այն բաները, որ տեսնվում են, չեն եղել դրանցից, որ երևում են: ⁴Հավատով Աբելն ավելի գերազանց զոհ մատուցեց Աստծուն, քան Կայենը, որով վկայություն ստացավ, թե արդար է, Աստված վկայեց իր ընծայի մասին. և դրա միջոցով, թեև մահացավ, նա դեռ խոսում է: ⁵Հավատով Ենոքը փոխադրվեց, որ մահ չտեսնի և չէր գտնվում, որովհետև Աստված փոխադրեց նրան. քանի որ փոխադրվելուց առաջ նրա մասին վկայվեց, թե նա հաճեցրեց Աստծուն: ⁶Բայց առանց հավատի անհնար է *Նրան* հաճեցնել. որովհետև Աստծուն մոտեցողը նախ պետք է հավատա, թե Աստված կա, և Նա վարձահատույց է լինում Իրեն փնտրողներին: ⁷Հավատով Նոյը, Աստծուց զգուշացվելով դեռ չերևացող բաների մասին, երկյուղածությամբ պատրաստեց տապանը՝ իր տան փրկության համար, որով դատապարտեց աշխարհին և դարձավ ժառանգորդն այն արդարության, որ հավատով է:

11:1 «հավատ» Սա հավատքի աստվածաբանական սահմանումը չէ, այլ այն կիրառելու գործնական պատկերը: Այս գլխում տվյալ տերմինը կիրառվում է քսանչորս անգամ: ՀԿ-ից այս տերմինի հիմնական գաղափարը «հավատարմությունն» է կամ «վստահելիությունը»: Սա հավատուրացության հակամիջն է: «Հավատք» բառի համար հունարեն տերմինը (*pistis*) թարգմանվում է անգլերենի երեք տերմիններով՝ «հավատք» /faith/, «հավատամք» /belief/ և «վստահություն» /trust/: Հավատքը մարդու կողմից Աստծո հավատարմությանն ու Նրա խոստումներին տրված պատասխանն է: Մենք վստահում ենք Նրա վստահելիությանը և ոչ թե մեր: Գլխավորը Նրա բնավորությունն է՝ էությունը:

- | | |
|------------|--|
| NASB, NRSV | «հուսացած բաների վստահություն» |
| NKJV | «հուսացած բաների հաստատություն» |
| TEV | «մեր հուսացած բաների համար վստահ լինելը» |
| NJB | «մեր հուսացած օրհնությունների երաշխիքը» |

«Երաշխիք» (*hupostasis*) բառի համար հունարեն տերմինը ընդհանրապես նշանակում է «հիմք դնել» կամ «հիմք կանգնեցնել», հետևաբար ինչ-որ մի բանի համար ընդգծված հարթակ կամ հիմք տալու իմաստն է արտահայտում: Ուստի հին աշխարհում այն ուներ բազմաթիվ նշանակություններ:

Հատկապես տարածված էր հունական փիլիսոփայության գրվածքներում մատնանշելու ինչ-որ երևույթի հստակ դրսևորումը: Այն իրականի և ճշմարիտի հայտնությունն է՝ ի հակադրություն անհասկանալի:

1. Եբր.1:3-ում վերաբերում է էությանը
2. Եբր.3:14-ում վերաբերում է հավատացյալի խոստովանության՝ դավանության իրողությանը
3. Եբր.11:1-ում վերաբերում է ավետարանի խոստումներին, որոնք գործում են ներկայում, բայց դեռևս չեն ավարտվել մինչև ապագա:

Այս տերմինը գտնվել է եգիպտական մի պապիրուսի մեջ, որը նշանակում է «մուրհակ» (տես՝ NJB): Այս իմաստով այն արտացոլում է Պողոսի կողմից այս տերմինի կիրառությունը Հոգու համար, որպես «գրավ» (տես՝ 2 Կորնթ.1:22; 5:5; Եփես.1:4):

LXX-ում կիրառված հունարեն տերմինները առաջարկում են սովորական թարգմանված *tōhelet* բառը (*Քենթրիջի Աստվածաշնչի Պատմությունը*, էջ՝ 9 /*The Cambridge History of the Bible*/), որն արտահայտում է «ինչ-որ բանի համար համբերատար և վստահ սպասողական կեցվածք» (այսինքն՝ հույս): Հիշեք, որ ՆԿ-յան հեղինակները եբրայեցի մտավորականներ էին, որոնք գրում էին Կոյնն Հունարենով և օգտագործում էին Սեպտուագինտայի թարգմանչական ավանդույթները:

Ոմանք այս համատեքստում տեսել են Եբր.10:38-ում ՀԿ-յան մեջբերման արտացոլման հստակ նշանակությունները (Ամբ.2:2-4): Գլուխ 11 հանդիսանում է այն մարդկանց օրինակների ցանկը, որոնք «չեն նահանջել»: Այս տեքստը հանդիսանում է հակադրությունն այն բանի, ինչը վտանգավոր էր անել առաջին դարի ընթերցողների համար:

■ **«համոզմունք /հայ.՝ ապացույց/»** ՆԿ-ում այս բառը կարելի է միայն այստեղ հանդիպել: Այն վերաբերում է «ստուգվելու միջոցով ապացույց»-ին: Եբր.11:1-ում երկու արտահայտություններն էլ համագոր են (երկուսն էլ ՆԵՐԿԱ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ են), հետևաբար «հաստատում» և «համոզմունք» բառերը սերտ կապված են իրար և հավատարիմներն իրենց կյանքն ապրում են դրանցով:

■ **«չերևացող բաներ»** Հաջորդող օրինակները այնպիսի մարդկանց կյանքից են, որոնք ապրում էին (1) Աստծո ներկա և ապագա գործերի վրա հուսալով և (2) վստահելով Աստծո հոգևոր խոստումներին (տես՝ Եբր.10:23): Նրանց աշխարհայացքն էր առաջնորդում իրենց ամենօրյա կյանքի որոշումները և ոչ թե իրավիճակները, նյութապաշտությունը կամ եսասիրությունը:

Ֆիզիկական իրողությունը ստորադաս է անտեսանելի հոգևոր իրողությունից (տես՝ Եբր.11:3): Ֆիզիկական իրողությունը ճանաչվում է հինգ զգայարաններով և հավիտենական չէ, այլ վաղանցիկ: Ճշմարիտ, հավիտենական իրողությունը անտեսանելի է (տես՝ Եբր.11:27) և հետևաբար պետք է հավատքով ընդունվի և ոչ թե տեսողությամբ: Սակայն, հավատացյալների համար դա այնքան իրական է և ճշմարիտ, որ այն վերահսկում և պահանջում է նրանց առաջնահերթությունները:

11:2

NASB	«հավանություն ստացան»
NKJV	«բարի վկայություն ստացան»
NRSV	«հավանություն ընդունեցին»
TEV	«Աստծո հավանությանն արժանացան»
NJB	«ճանաչվեցին»

Սա նման է Հռոմ.1:17; Գաղ.3:11-ում Պողոսի կողմից «հավատք» բառի կիրառությանը: Նրանց հավատքի կյանքը նրանց չփրկեց, այլ ապացուցեց, որ Աստծո Հոգին իրենց մեջ էր (տես՝ Հակ.2:14-26):

11:3

NASB, NKJV,	
NRSV	«աշխարհներ»
TEV, NIV	«տիեզերքը»
NJB	«դարերը»

Սա հունարեն երկու տերմիններից մեկն է (*kosmos*, տես՝ Եբր.1:6 և *aiōn*, այստեղ), որը կիրառվում է նկարագրելու ներկայիս ֆիզիկական աշխարհը: Այս *aiōn* տերմինը վերաբերում է հոգևոր ժամերին ու ժամանակներին՝ ներառյալ ֆիզիկական և հոգևոր աշխարհները (տես՝ Եբր.1:2; 6:5; Հռոմ.12:2; 1 Կորնթ.1:20; 2:6,8; 3:18; 2 Կորնթ.4:4; Եփես.1:21; 6:12): Տե՛ս Հատուկ Թեմա Եբր.1:2:

■ **«Աստծո խոսքը»** Սա հունարեն *logos* տերմինը չէ, այլ *rhēma*, որը կիրառվում է արտաբերված խոսքի համար: Ուրեմն, այդ դեպքում սա վերաբերում է *fiat*-ով արտաբերված խոսքով արարչագործությանը

(տես՝ Ծննդ.1:3,6,9,14,20,24; Սաղմ.33:6,9): Եբր.1:2-ից գիտենք, որ Աստծո *logos*-ը հանդիսանում էր ստեղծագործության ժամանակ Հոր գործակիցը (տես՝ Հովհ.1:1,10; 1 Կորնթ.8:6; Կող.1:16):

Հավատքի այս համոզմունքը դառնում է աշխարհընկալում, համաձայն որի հավատացյալներն ապրում են իրենց երկրավոր կյանքը: Սա չի հերքում գիտական հետազոտությունները, այլ դիտարկում է դրանք հավատքի տեսանկյունից: Հավատացյալները թույլ են տալիս, որ գիտությունը ուսումնասիրի արարչագործության կարգուկանոնի մեխանիզմը (բնական հայտնությունը), սակայն հաստատի միայն Աստծո գերազանցությունը (տես՝ Ջոն Լ. Ուոլթոն, *Ծննդոցի Կորած Աշխարհը* /John L. Walton, *The Lost World of Genesis*/), որը հայտնվում է Աստվածաշնչում և առավելագույնս՝ Հիսուս Քրիստոսի մեջ:

■ **«այնպես որ այն բաները, որ տեսնվում են, չեն եղել դրանցից, որ երևում են»** Սա պարտադիր չէ, որ լինի *ex nihilo* (ոչնչից ստեղծագործություն) տեսության հիմնավորում՝ հաստատում, այլ հանդիսանում է իրականության օրինակ ի հակադրություն Եբր.11:1-ի անիրականության: Հավատացյալները պնդում են այն, ինչը որ Աստծո հայտնության հիման վրա նույնիսկ իրենք անձամբ չեն տեսել կամ վերապրել: Սա ոչ այնքան դավանության հետ կապված աստվածաբանություն է, որքան հավատքի կյանքի և հույսի:

11:4 «Աբել» Ադամի և Եվայի երկրորդ որդին էր, որը սպանվեց իր եղբոր՝ Կայենի կողմից (տես՝ Ծննդ.4:3բ):

■ **«գերազանց /ավելի լավ/ զոհ»** Աբելի և Կայենի մատուցած զոհի տեսակը չէր, որը պատճառ հանդիսացավ տարբերություն դնելու, այլ այն վերաբերմունքը (հավատքը), որով այն կատարվեց: Սա չի կարող ապացույց-տեքստ հանդիսանալ արյան զոհի գերազանցության համար:

■ **«թեև մահացավ, նա դեռ խոսում է»** Արձանագրված է Ծննդ.4:10; Եբր.12:24-ում: Համատեքստում սա հավատքի հաստատություն է, որը առճակատվում է մահվան հետ և հաղթում դրան: Ընթերցողները հալածանքների պատճառով նահանջում էին: Նրանց պետք էր Աբելի պես հավատք ունենալ:

11:5 «Ենովքը» Նա անկումից հետո առաջին մարդն էր, որ մահ չճաշակեց (տես՝ Ծննդ.5:24): ՀԿ-ը չի մանրամասնում իրավիճակները, սակայն հայտարարում է, որ նա Աստծո հետ «քայլեց»:

■ **«փոխադրվեց /վերցվեց/»** Սա նշանակում է «փոխադրվեց մեկ այլ տեղ»։ Սա «հարություն» չէ, այլ «փոխադրում», ինչպես եղավ Եղիայի հետ (տես՝ 4 Թագ.2:11): Աստվածաշնչում հստակ տարբերություն կա հետևյալ երևույթների միջև՝

1. Մարդիկ, որոնք կյանքի կոչվեցին՝ վերադարձան (վերակենդանացում)
2. Մարդիկ, որոնք առանց ֆիզիկական մահվան վերցվեցին երկինք (փոխադրում)
3. Հիսուսը, որ ունեցավ հոգևոր նոր մարմին (հարություն)

■ **«նա հաճեցրեց Աստծուն»** Այս տարբերակը հետևում է Սեպտուագինտային, սակայն MT տարբերակը ներկայացնում է «Աստծո հետ քայլեց»:

11:6 «առանց հավատի անհնար է Նրան հաճեցնել» Այս գրական բաժնի ամենակարևոր հայտարարությունը: Աստծուն հաճեցնում է ոչ միայն մեր սկզբնական հավատքը, այլ հարատևող հավատքը: Բոլոր այս օրինակների հերոսները հավատարիմ մնացին մինչև կյանքի վերջ, անկախ այն հանգամանքներից, թե ինչպես եղավ նրանց վախճանը: Հավատքը մարդկանց կողմից Աստծո խոստումներին հավատալու, դրանք ընդունելու, վերցնելու կերպն է: Փրկությունը և աշակերտությունը, երկուսն էլ անհնար են առանց հավատքի: Հավատք անցյալում Աստծո կատարած գործերին (ստեղծագործություն, հայտնություն), հավատք՝ ներկայումս Աստծո ներկայությանը (հալածանքներ, չարչարանք, նույնիսկ մահ); հավատք՝ ապագայում Աստծո խոստացած գործերի վրա (փրկություն, երկինք):

«Անհնար» բառի համար տե՛ս Եբր.6:6-ի ամբողջական գրառումները:

■ **«պետք է հավատա»** Հունարեն *pistis* բառը թարգմանվում է անզերեք երեք տերմինով՝ «հավատք», «հավատալ» և «վստահություն»: Այստեղ միայն չի շեշտադրվում գիտակցական փաստարկները, այլ անձնական վստահությունը Աստծո վստահելիության և հավատքը Նրա հավատարմության վրա: Սա պարզապես հիմնավորում չէ, այլ ապրելակերպ:

«Պետք է» տերմինը ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որը նշանակում է «պարտադիր է», «անհրաժեշտ է»: Հավատքը անհրաժեշտություն է:

■ «Նա վարձահատույց է լինում Իրեն փնտրողներին» Սա վերաբերում է թե՛ սկզբնական հավատքի պատասխանին և թե՛ շարունակվող հավատքի պատասխանին:

11:7 «Աստծուց զգուշացվելով դեռ չերևացող բաների մասին» Ահա հավատքի բանաձևը: ՀԿ-յան այս սրբերը գործում էին Աստծուց իրենց ստացածների հիման վրա: Նրանց գործողությունները վկայում էին իրենց հավատքի մասին, որ դրանք լոկ խոսքեր չէին: Դուք կարո՞ղ եք պատկերացնել այն ծաղր ու ծանակը, որին ենթարկվեց Նոյը, երբ ջրերից շատ հեռու տարածության վրա կառուցում էր այդպիսի մեծ նավ, որպեսզի տեղավորեր կենդանիներին:

■ «տապան» Սա ինչ-որ մանևրելի նավակ չէր, այլ մի անոթ, որի նպատակն էր գերանի պես ջրերի վրա լողալը: Այս տերմինը կիրառվում էր «տախտակի» համար, ինչպես ուխտի տապանակի համար:

■ «որով դատապարտեց աշխարհին» Ինչպե՞ս Նոյը դատապարտեց աշխարհին: Գոյություն ունի երկու հավանական տարբերակ՝ (1) իր հավատքի գործերով և (2) իր քարոզչությամբ (տես՝ 2 Պետ.2:5):

■ «դարձավ ժառանգորդն այն արդարության» Ծննդոց 6-8-ում Նոյը Աստվածաշնչում առաջին մարդն է, որ «արդար» է կոչվում (տես՝ 2 Պետ.2:5): Դա չի նշանակում անմեղություն, այլ որ Նոյը Աստծո վրա ունեցած իր հավատքի և վստահության լույսի մեջ քայլեց: Ինչպես որ Աբրահամի հավատքը հետագայում իրեն արդարություն համարվեց (տես՝ Ծննդ.15:6), այնպես էլ Նոյինը: «Արդարություն» բառի սերտողության համար տե՛ս Հատուկ Թեմա Երբ.1:9:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 11:8-12
⁸Հավատով Աբրահամը հնազանդվեց, երբ կանչվեց գնալու այն վայրը, որ հետագայում որպես ժառանգություն պիտի ստանար, և դուրս գնաց, չիմանալով, թե ուր է գնում:⁹Հավատով պանդուխտ դարձավ ավետյաց երկրում, ինչպես օտարության մեջ, վրաններում բնակվելով Իսահակի ու Հակոբի հետ, որոնք նույն խոստման ժառանգորդներն էին,¹⁰որովհետև նա սպասում էր այն քաղաքին, որ հիմքեր ունի, որի ճարտարապետն ու արարիչն Աստված է:¹¹Հավատով Սառան ինքն էլ որդեծնության սերմն ընդունելու գործություն ստացավ և տարիքն անցած լինելով՝ որդի ծնեց, որովհետև հավատարիմ համարեց Խոստացողին:¹²Հետևաբար մի մարդուց, ում կարելի էր մեռած համարել, առաջ եկավ մի բազմություն՝ երկնքի աստղերի պես անթիվ և ծովափի ավազի պես անհամրելի:

11:8 «Աբրահամը հնազանդվեց» Ինչ-որ իմաստով այս արձանագրությունները իդեալականացված են ներկայացնում հետևյալ մարդկանց կյանքերը: ՀԿ-ը հնագույն գրականության մեջ բացառիկ է իր տեսակով այն բանում, որ արձանագրում է իր կերպարների մասին թե՛ դրականը և թե՛ բացասականը: Աբրահամը վախի ու հավատքի յուրահատուկ մի խառնուրդ էր:

1. Վախ
 - ա. Աստված ասաց, որ թողնի իր ընտանիքը. նա վերցրեց իր հորն ու Դովտին
 - բ. Աստված խոստացավ զավակ. նա փորձեց զավակ ունենալ Սառայի աղախնու միջոցով և հետագայում էլ փորձեց Սառային նվիրել թե՛ եգիպտացի և թե՛ փղշտացի թագավորներին, որպեսզի փրկի սեփական կյանքը
2. Հավատք
 - ա. Նա հեռացավ Ուրից
 - բ. Նա հավատաց, որ Աստված իրեն ժառանգորդ կտա
 - գ. Նա հոժարեց Իսահակին զոհաբերել (տես՝ Ծննդ.22)

Աստված չի փնտրում «սուլեր-սուրբերի», այլ սխալական մարդկանց, որոնք ապաշխարությամբ և հավատքով կարձագանքեն Իրեն և անկախ հանգամանքներից կապրեն Իր համար:

11:9 «պանդուխտ դարձավ /ապրեց/ ավետյաց երկրում» Սա «ժամանակավոր մնալ» տերմինն է, որը նշանակում է, որ նա այդ վայրերում չունեի քաղաքացու իրավունքները (տես՝ Երբ. 11:13):

11:10 «նա սպասում էր» ԱՆԿԱՏԱՐ ՉԵՉՈՔ (հասարակ) ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Նա շարունակ սպասում էր:

■ «քաղաքին» Տարածված աստվածաշնչյան փոխաբերություն է (տես՝ Երբ.11:16; 12:22; 13:14; Հովհ.14:2; Գաղ.4:26; Հայտն.3:12; 21:2), որը դարձյալ վերաբերում է մարդկանց հետ Աստծո բնակության վայրին, ինչպես որ Եդեմի պարտեզում էր:

Աբրահամը իր կյանքը հավատքով ապրեց՝ նայելով ոչ թե իր ժամանակի իրականությանը, այլ խոստացված իրականությանը: Հավատքն ասում է. «Այս աշխարհն իմ տունը չէ», հավատքն ասում է. «Աստծո խոստումները հաստատ են», հավատքն ասում է. «Իրականությունն այն է, ինչ Աստված է ասում, այլ ոչ թե այն, ինչ ես եմ տեսնում»:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿՈՒ «ՔԱՂԱՔՆԵՐԸ» ԵՍԱՅԻ ԳՐԲՈՒՄ
SPECIAL TOPIC: THE TWO “CITIES” IN ISAIAH

Ա. Եսայի 24-27 գլուխները հանդիսանում են գրականական այնպիսի բաժին, որը տեղակայված է Եսայի 13-23 գլուխներում շրջապատող ազգերի դեմ արձանագրված դատաստանի մի շարք մարգարեությունների ամփոփիչ մասում: Դատաստանը վերջին խոսքը չէ: Ողորմության և շնորհքի Աստվածն ունի հավիտենական, բոլորին ներգրավող, փրկության ծրագիր (տես՝ Հատուկ Թեմա. ՅԱՀՎԵԻ Հավիտենական Փրկության Ծրագիրը):

- Բ. Այս ամբողջ բաժինը բառախաղ է երկու քաղաքների շուրջ՝
1. Քաղաքները կազմված են Կայենի մեղավոր զավակներից, որոնք փորձում են իրենց կարիքները հոգալ բացառապես իրենց ուժերով (այսինքն՝ Ծննդոց 4:10-11):
 2. Միոն քաղաքը, որտեղ Աստված է բնակվում (այսինքն՝ Երուսաղեմի տաճարի ներսի Սրբության Սրբոցում ուխտի տապանակի վրա *Քերույքների* թևերի ներքո) և որտեղ Իր հավատարիմ հետևորդները (հրեա և հեթանոս) մոտենում և երկրպագում են Նրան (տես՝ Եսայի 2:2-4; 19:18-25; Եբր. 11:10; 12:22; 13:14; Հայտն. 21:1-2):

Գ. Քաղաքները ներկայացնում են մարդկանց խմբեր, ազգեր:

Մարդկանց Քաղաքները

Ես. 1:7,8, Հուդայի այրված քաղաքները
 Ես. 1:21, հավատարիմ քաղաքը պոռնկացել է
 Ես. 6:11, Հուդայի ամայացած քաղաքները
 Ես. 14:17,21, բոլոր քաղաքները ամայացած են
 Ես. 14:31, Փղշտացիների քաղաքները
 Ես. 17:1-3,9, Սիրիայի ավերված քաղաքները
 Ես. 19:2, Եգիպտոսի իրար բնաջնջող քաղաքները

Ես. 22:2,9, ցնձացող քաղաքը՝ Երուսաղեմը կործանվում է
 Ես. 23, Տիվրոսը բնաջնջվեց
 Ես. 24:1-25:5, քաղաքների համատարած բնաջնջումը
 Ես. 25:10-12, Մովաբը և իր պալատը պաշտպանված
 Ես. 26:5, անսասան քաղաքը՝ գուցե Մովաբը
 Ես. 27:10, պարսպապատ քաղաքներն ընկնում են
 Ես. 29:1, «Արիել» (Երուսաղեմ)
 Ես. 33:2,19, ցնձացող քաղաք (Երուսաղեմ)

Ես. 48:2, սուրբ քաղաք, բայց միայն անունով

Աստծո Քաղաքը

Ես. 1:26, արդարության քաղաք, հավատարիմ քաղաք

Ես. 19:18-22, Եգիպտական քաղաքները Աստծուն են պաշտում
 Ես. 19:23-25, ամբողջ Եգիպտոսը և Ասորեստանը ներառված են Աստծո ժողովրդի մեջ

Ես. 25:6-9, կոչունք Աստծո լեռան վրա (այսինքն՝ քաղաքները ոտնակոխ արեցին Երուսաղեմը)
 Ես. 26:1, վերականգնված հզոր Երուսաղեմ քաղաքը

Ես. 45:13, Իմ քաղաքը (տես՝ Ես. 44:23)

Ես. 52:1-6, սուրբ քաղաք
 Ես. 60:14, Տիրոջ քաղաք
 Ես. 62:12, չքված քաղաք
 Ես. 66:6, աղաղակի ձայն քաղաքից, մի ձայն՝ տաճարից

11:11 «Մառա» Որոշ հնագույն հունարեն ձեռագրեր (P⁴⁶, D) ավելացնում են «անպտուղ»: Հետաքրքիր է, որ նահապետներից և ոչ մեկի կանայք (բացի Լիայից) չէին կարողանում հղիանալ առանց Աստծո միջամտության: Նաև, անդրանիկ զավակներից և ոչ մեկը խոստման ժառանգորդները չէին հանդիսանում: Աստված այդպես էր գործում, որպեսզի ցույց տար, որ Ինքն է վերահսկողը:

Սառան, Աբրահամի պես, վախի ու հավատքի հետաքրքիր մի խառնուրդ էր: Նա իր աղախնուն տվեց Աբրահամին, նաև ծիծաղեց Աստծո խոստման վրա (տես՝ Ծննդ.18:12):

11:12 «երկնքի աստղերի պես անթիվ և ծովափի ավազի պես անհամրելի» Աբրահամին, Իսահակին և Հակոբին տրված Աստծո խոստման մի մասն է (տես՝ Ծննդ. 15:5; 22:17; 32:12): Հիշեք, որ նրանց կանայք (բացի Լիայից) ամուլ՝ անպտուղ էին:

■ **«հավատարիմ համարեց Խոստացողին»** Նա գործեց Աստծո խոստման հիման վրա և ոչ թե իր ժամանակի իրողության: Այս արտահայտությունը նույնն է ինչ Եբր.10:23 (տես՝ Եբր.6:17-18): Ընթերցողները նույնպես պետք է այսպես վարվեին:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 11:13-16
¹³Մրանք բոլորն էլ մահացան հավատի մեջ՝ խոստումները չառած, այլ հեռվից տեսնելով համոզվեցին դրանցով և ընդունեցին ու դավանեցին, թե օտարներ ու պանդուխտներ են երկրի վրա: ¹⁴Որովհետև նման բաներ ասողները հայտնապես հայտարարում են, որ հայրենիք են փնտրում: ¹⁵Իսկապես, եթե նրանք հիշեին այն վայրը, որտեղից դուրս են եկել, կարող էին վերադառնալու առիթ ունենալ: ¹⁶Բայց հիմա մի ավելի լավ երկիր են ցանկանում, այսինքն՝ երկնային. դրա համար Աստված չի ամաչում նրանց Աստվածը կոչվել, որովհետև նրանց համար մի քաղաք է պատրաստել:

11:13 «Մրանք բոլորն էլ մահացան հավատի մեջ՝ խոստումները չառած» Սա հանդիսանում է 11-րդ գլխի ՀԿ-յան հավատքի մարդկանց և այս նամակը ստացող, «նահանջելու» եզրագծին կանգնած հավատացյալ հրեաների հետ համեմատության սիրտը (տես՝ Եբր. 10:38; նաև 2 Պետ.2:20-22):

■ **«տեսնելով... և ընդունեցին ... ու դավանեցին»** Ուշադրություն դարձրեք այս երեք բնութագրական, զուգահեռ արտահայտություններին:

■ **«օտարներ ու պանդուխտներ են երկրի վրա»** Բռնացի, պանդուխտ բնակիչներ, որոնք քաղաքացիության իրավունքներ չունեին (տես՝ LXX Ծննդ.23:4; Սաղմ.39:12; Փիլ.3:20; 1 Պետ.2:11): Ֆիզիկական իրականությունը ճշմարիտ, հավիտենական իրականությունը չէ: Այս աշխարհը նրանց տունը չէր:

11:15 «եթե» Սա ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ նախադասություն է, որ կոչվում է «փաստերին հակառակ»: Նրանք դուրս եկան և ետ չվերադարձան:

11:16 Ճշմարիտ իրականությունը հոգևոր է, ինչպես որ երևում է երկնային քաղաքի փոխարերության մեջ, որի նարտարապետն ու արարիչն Աստված է (տես՝ Եբր.11:10): Աստված պատասխանում է հավատքին և վստահությանը (տես՝ Եբր.2:11; 11:2,39; 13:14): «Երկիրը» և «քաղաքը» (Եբր.11:10) աստվածաբանորեն համագործնող են, որպես Աստծո կողմից Իր հավատքի զավակների համար պատրաստված վայրեր:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 11:17-22
¹⁷Հավատով Աբրահամը, երբ փորձվեց, Իսահակին զոհ մատուցեց. նա, որ խոստումներ էր ստացել, իր մեկ հատիկ որդուն մատուցեց, ¹⁸որի մասին ասվել էր, թե. «Իսահակով քո սերունդը կկոչվի». ¹⁹մտածելով, որ Աստված կարող է նրան նույնիսկ մեռելներից հարություն տալ. որտեղից էլ որպես պատկեր ստացավ նրան: ²⁰Գալիք բաների վերաբերյալ հավատով Իսահակն օրհնեց Հակոբին և Եսավին: ²¹Հավատով Հակոբը, մեռելիս, օրհնեց Հովսեփի յուրաքանչյուր որդուն, և իր գավազանի ծայրին հենվելով՝ երկրպագություն արեց: ²²Հավատով Հովսեփը, մահանալիս, հիշեցրեց Իսրայելի որդիների Եգիպտոսից դուրս գալու մասին. և իր ոսկորների համար պատվեր տվեց:

11:17 «փորձվեց» Եբր համեմատում ենք Ծննդ.22:1-ը և Մատթ.6:13-ը Հակ.1:13-14-ի հետ, թվացյալ հակասություն ենք տեսնում: Այնուհանդերձ, հունարենում գոյություն ունի երկու բառ «փորձել»

տերմինի համար՝ այլ նշանակությամբ: Մեկը փորձելն է կործանման համար (*peiraz o*) և մյուսը՝ փորձել արդարացնելու և զորացնելու նպատակով (*dokimazo*): Տե՛ս Հատուկ Թեմա Եբր.2:18-ում:

Աստված Իր գավակների համար հնարավորություններ է ստեղծում իրենց հավատքը դրսևորելու և անելու դրա մեջ (տես՝ Ծննդ.22:1; Ելից 15:25; 16:4; 20:20; 2 Օր.8:2,16; 13:3; Դատ.2:22; 2 Մնաց.32:31): Փորձությունները կա՛մ դատնում են գայթակղության քար, կա՛մ էլ աստիճանաքար:

■ **«իր մեկ հատիկ որդուն մատուցեց»** Աբրահամի հավատքի աստիճանը ակնհայտ երևում է տասներեք տարի սպասած խոստման գավակին Աստծուն վերադարձնելու իր հոժարակամության մեջ (տես՝ Հակ.2:21):

Իսահակի համար *monogenēs* («մեկ հատիկ, միածին») բառի կիրառությունը չի կարող «միածին» նշանակել, քանի որ Աբրահամը ուրիշ երեխաներ էլ ուներ: Անշուշտ դա նշանակում է «խոստման որդի», «բացառիկ գավակ»: Սա նաև Հովի.3:16-ի նշանակությունն է:

11:18 Սա մեջբերում է Ծննդ.21:12-ից, որը տեղի ունեցավ փորձվելուց առաջ:

11:19 «մեռելներից մարդկանց հարություն տալ» Աբրահամը ակնկալում էր, որ Իսահակը իր հետ վերադառնալու է (տես՝ Ծննդ.22:5): Տեքստը չի նշում, թե ինչպես էր դա տեղի ունենալու: Եբրայեցիների գիրքը հայտարարում է, որ հնարավոր է նա սպասում էր, որ հարություն էր տեղի ունենալու:

■ **«որպես պատկեր»** Հեղինակը ՀԿ-ը գործածում էր որպես ներկայիս իրողության պատկեր կամ սովեր (տես՝ Եբր.9:9; 10:1; 11:19): Այստեղ կարծես թե պատկերը՝ նմուշն այն է, որ ինչպես Աբրահամը խոստման գավակին զոհ մատուցեց, այնպես էլ Աստված Իր Որդուն մատուցեց որպես Իր սիրո, ողորմության և շնորհի դրսևորում:

11:20 Իսահակի կողմից իր որդիների օրհնության արձանագրությունը գտնվում է Ծննդ.27:27-ում, մինչ Հակոբի առաջին օրհնությունը Ծննդ.48:14-ում է, որտեղ նա օրհնում է Հովսեփի որդիներին և հետագայում իր երկրորդ օրհնությունը տալիս է Ծննդոս 49-ում՝ իր մյուս որդիներին: Տրված օրհնությունը այլևս հնարավոր չէր ետադարձել: Սա մի օրինակ է այն բանի, թե ինչպես է հեղինակը հատուկ ընտրությամբ գործ ունենում ՀԿ-յան պատմության հետ (ինչպես Մնացորդացները): Նա նշում է միայն դրական դրույթները:

11:21 «իր գավազանի ծայրին հենվելով» Սա մեջբերված է Մեպտուազինտայից՝ Ծննդ.47:31: Մատթեոսիկ եբրայերեն տեքստը տալիս է «նա խոնարհվեց իր մահճակալի գլխամասին»: Եբրայերեն «անկողին» և «գավազան» բառերը ունեն եբրայերենի միևնույն բաղաձայնները (*mth*), միայն ապագայում ձայնավորների նիշերը դրվելուց հետո տարբերություն եղավ: Ըստ ՀԿ-յան համատեքստի Հակոբը ինչ-որ առումով ընդունում է Հովսեփի երազի իրականացումը (տես՝ Ծննդ.37:5-11), այդպիսով ընդունելով նաև Հովսեփի քաղաքական իշխանությունը մարգարեությամբ կամ ճանաչելով Հովսեփին որպես Աստծո ժողովրդի «ազատարար», ինչպես Մովսեսն ու Հեսուն էին և եկող Մեսիան:

11:22 «իր ոսկորների համար պատվեր տվեց» Դրանք պետք է Եգիպտոսից դուրս բերվեին և ելիցից հետո թաղվեին Ավետյաց Երկրում (տես՝ Ծննդ.50:24-25; Ելից 13:19; Հեսու 24:32):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 11:23-29
²³Հավատով, երբ Մովսեսը ծնվեց, երեք ամիս ծածուկ պահվեց իր ծնողների կողմից, որովհետև տեսան, թե գեղեցիկ երեխա էր և չվախեցան թագավորի հրամանից: ²⁴Հավատով, երբ Մովսեսը մեծացավ, չկամեցավ Փարավոնի աղջկա որդին կոչվել, ²⁵ավելի լավ համարելով Աստծո ժողովրդի հետ չարչարվել, քան կարճ ժամանակի համար մեղքի հաճույքները վայելել, ²⁶Քրիստոսի նախատինքն ավելի մեծ հարստություն համարելով, քան Եգիպտոսի գանձերը. որովհետև վարձատրությանն էր սպասում: ²⁷Հավատով նա Եգիպտոսը թողեց, չվախենալով թագավորի բարկությունից, Անտեսանելուն տեսնողի պես համբերեց: ²⁸Հավատով կատարեց գատիկը և արյան սրսկումը, որպեսզի նա, որ առաջնեկներին կործանեց, իրենց չմոտենա: ²⁹Հավատով Կարմիր ծովից անցան, ինչպես ցամաքից, որը երբ Եգիպտացիները փորձեցին անել, խեղդվեցին:

11:23 «իր ծնողները» Մեպտուազինտան տալիս է «ծնողներ» բառը, մինչ Եբրայերենի Մատթեոսիկ Տեքստը տալիս է միայն «մայր» բառը:

■ **«որովհետև տեսան, թե գեղեցիկ երեխա էր»** Հրեական ավանդույթն ասում է, որ Մովսեսը ֆիզիկապես գեղեցիկ երեխա էր: Իսկ ո՞ր ծնողը չի կարծում, որ իրենց երեխան գեղեցիկ է: Ամեն դեպքում սա աստվածաբանական նկատառում չէ: Այս երեխան հասուն, Աստծո կողմից ուղարկված մանուկ էր:

■ **«չվախեցան թագավորի հրամանից»** Հեղինակն այս արտահայտությունը նշում է աչքի առաջ ունենալով իր ներկայիս ընթերցողներին (տես՝ Եբր.11:27):

11:24 «Փարավոնի աղջկա որդին» Սա եգիպտական պաշտոնական դիրք էր և իշխանության տիրոջ:

11:25-26 Դարձյալ հեղինակը կապ է ստեղծում փորձության հետ, որով անցնում էին իր ընթերցողները: Նրանք պետք է իրենց աչքեր ուղղեին ապագայի վրա, Աստծո հաստատ խոստումների վրա և ոչ թե ներկայիս իրավիճակների: Քրիստոսի հանդեպ հավատարմությունը ամենակարևորն է:

11:27 «Եգիպտոսը թողեց» Սա կարծես թե վերաբերում է դեպի Մադիանի երկիր Մովսեսի փախուստին և ոչ թե Ելիցին (տես՝ Ելից 2:14-15): Դարձյալ հեղինակը տալիս է ավելի շուտ Մովսեսի իդեալականացված նպատակի պատկերը:

■ **«Անտեսանելուն տեսնողի պես»** Իսրայելացիները հավատում էին, որ ՅԱՀՎԵին տեսնելը մահացու էր, Նրա սրբության պատճառով (տես՝ Ծննդ.16:13; 32:30; Ելից 3:6; 33:17-23; Դատ.6:22-23; 13:22; 3 Թագ.19:11-13; Գործք 7:32):

11:28 Սա Ելից 12 գլխի ակնարկ է: Այս վերջին պատուհասը ազդեց ամբողջ Եգիպտոսի վրա՝ ներառյալ Չեսեմի երկիրը: Նույնիսկ երբայեցիները պետք է հնազանդեին Աստծո կարգադրություններին և հավատքով գործեին, որպեսզի մահվան հրեշտակի այցելության ժամանակ նրանց կյանքը խնայվեր:

■ **«առաջնեկ»** Տե՛ս Հատուկ Թեմա Եբր.1:6-ում:

■ **«նա, որ կործանեց»** Վերաբերում է Մահվան Հրեշտակին (տես՝ LXX, Ելից 12:23; 2 Թագ.24:16-17):

11:29 Սա Ելից 14:21բ-ի արձանագրված դեպքի ամփոփում է:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 11:30-31
³⁰Հավատով Երիքովի պարիսպները փլվեցին, երբ յոթ օր դրա շուրջը պտտվեցին:
³¹Հավատով Ռախաբ պոռնիկը չկործանվեց նրանց հետ, որ չհավատացին, երբ լրտեսներին ընդունեց խաղաղությամբ:

11:30 «Երիքովի պարիսպները փլվեցին» (տես՝ Հեսու 6:20; 2 Կորնթ.10:4)

11:31 «Ռախաբ պոռնիկը» Այս քանանացի դարձավ հավատացյալ (Հակոբոս 2:25): Նույնիսկ հավանական է, որ հենց նա է նշվում Մատթ.1:5-ում Մեսիայի ազգաբանության մեջ:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 11:32-38
³²Եվ էլ ի՞նչ ասեմ, որովհետև ժամանակը բավական չէ, որ պատմեմ Գեղեոնի, Բարակի, Մամսոնի, Հեփթայեի, Դավթի, Սամուելի և ուրիշ մարգարեների մասին, ³³որոնք հավատով թագավորությունների հաղթեցին, արդարություն գործեցին, խոստումներ ստացան, առյուծների բերանները փակեցին, ³⁴կրակի կատաղությունը մարեցին, սրի բերնից ազատվեցին, տկարության մեջ ուժ ստացան, կռվում խիզախ եղան, օտարների բանակները նահանջի մատնեցին: ³⁵Հարության միջոցով կանայք իրենց մեռելներին ետ ստացան, ուրիշներ տանջանքի ենթարկվեցին՝ մերժելով ազատություն ձեռք բերել, որպեսզի ավելի լավ հարության հասնեն. ³⁶ուրիշներ նախատինքների և ծեծերի, անգամ կապանքների և բանտերի մեջ փորձվեցին. ³⁷քարկոծվեցին, սողովեցին, փորձության ենթարկվեցին, ոչխարի ու այծի մորթով շրջեցին՝ գրկանք, հալածանք, չարչարանք կրելով ³⁸(որոնց արժանի չէր այս աշխարհը): Անապատներում, լեռներում թափառեցին, քարայրներում, երկրի խորշերում:

11:32 «Գեղեոն» (տես՝ Դատ.6-8)

■ **«Բարակ»** (տես՝ Դատ.4-5)

■ «Հեփթայե» (տես՝ Դատ.11-12)

■ «Դավիթ» (տես՝ 1 Թագ.16:1)

■ «Սամուել» (տես՝ 1 Թագ.1:20)

11:33 «արդարություն» Տե՛ս Հատուկ Թեմա Երբ.1:9-ում:

■ «առյուծների բերանները փակեցին» Մա հնարավոր է վերաբերում է Սամսոնին, Դավթին, Դանիելին, կամ որևէ անհայտ դեպքի:

11:34 «կրակի կատաղությունը մարեցին» Կրակից ազատվելու այս մեջբերումը հնարավոր է վերաբերում է հատուկ Դանիել 3 գլխին կամ որևէ այլ պատմական անհայտ դեպքի: Նույնիսկ հավանականություն կա, որ 1 Կորնթ.13:3-ում նշված է նույն այս կրակից ազատման մասին: Այնուհանդերձ, 1 Կորնթ.13:3-ի հետ կապված գոյություն ունի հունարեն ձեռագրային խնդիր: Հնագույն հունարեն P⁴⁶, 8, A և B ձեռագրերը տալիս են «որ պարծենամ» (*kauchēsōmai*) կամ C, D, F, G, K 7 L ձեռագրերը՝ «որ այրվեմ» (*kauthēsōmai*): Առաջինն ունի (1) ավելի լավ ձեռագրեր և (2) տերմինը հաճախ է կիրառվում Պողոսի կողմից:

■ «տկարության մեջ ուժ ստացան» (տես՝ 2 Կորնթ.12:9)

11:35 «Հարության միջոցով կանայք իրենց մեռելներին *ևս* ստացան» Եթե խոսենք աստվածաբանորեն, ապա սա հարություն չէր, այլ վերակենդանացում (տես՝ 3 Թագ.17:17-23; 4 Թագ.4:31-37): Միայն մեկ հարություն է տեղի ունեցել, որը արդյունքում հազել է հավիտենական մարմին՝ Հիսուսի հարությունը:

NASB, NKJV

NRSV

TEV, NJB

«ավելի լավ հարություն»

«ավելի լավ կյանք»

Այս խոսքը նահատակի մահվան պատվի և հաղթանակի մասին է: Այս ընկած է մեղավոր մոլորակի համար Աստծո ծրագրի և կամքի խորհրդավորության մեջ ոմանք ֆիզիկապես վերակենդանացել են (այսինքն՝ «կանայք իրենց մեռելներին *ևս* ստացան հարության միջոցով»), իսկ ոմանք՝ ոչ: Առաջինը հրաշալի է, սակայն երկրորդը հավատքի անգամ ավելի հզոր վկայություն է՝ հավատք մինչև վերջ:

Հնարավոր է սա կապ ունի հոգևոր վարձքի հետ, բայց եթե այդպես է, ապա կարևորը հավատքի սիրտն է, և ոչ թե անձի մահվան հանգամանքները: Հավատացյալները կանչված են հանուն իրենց հավատքի (ՅԱՀՎԵի և Հիսուսի հանդեպ) ապրել խիզախությամբ: Հաղթանակը նրանց հավատարմությունն է: ՅԱՀՎԵն հավատարիմ է Իր խոստումներին. Հիսուսը հավատարիմ է Իր գործողություններում. հավատացյալները պետք է հավատարիմ լինեն իրենց հավատքի կյանքի մեջ: «Ավելի լավ» խոսքի համար տե՛ս Երբ.7:7-ի ամբողջական գրառումը:

11:36 «նախատինքներ /ծաղր/ և ձեծեր» Մա հավանաբար առնչություն ունի Մակաբայեցիների շրջանի հետ (տես՝ 1 Մակ.1:62-64; 2 Մակ.6:18-20; 7:1-42):

11:37 «քարկոծվեցին» Ավանդույթն ասում է, որ Երեմիան քարկոծվեց Եգիպտոսում՝ հրեաների կողմից: 2 Մնաց.24:20-21; Դուկ.11:51-ում արձանագրված է, որ Չաքարիա անունով մի քահանա (ոչ ՀԿ գրողներից), քարկոծվեց:

■ «սողովեցին» Ավանդույթը (*Եսայա Համբարձումը* 5:1-14) ասում է, որ Եսային Մանասեի հրամանով դրվեց կոճղի մեջ և սողովեց երկու մասի:

■ «փորձության ենթարկվեցին» Մա կարծես թե ավելի ընդհանուր հայտարարություն է այս հատուկ նշված հալածանքների և չարչարանքների օրինակների մեջ: Հնագույն պապիրուսե P⁴⁶ ձեռագրում այս արտահայտությունը բացակայում է: Տեքստային քննադատները ենթադրում են, քանի որ «սողովեցին երկու մասի» (*epristhēsan*) արտահայտությունը շատ նման է «փորձվեցին» (*epeirasthēan*) այս արտահայտությանը, ապա հնարավոր է տեղի է ունեցել դպրական հավելում ավելի շուտ տեքստային ավանդույթների մեջ: Հունարեն ձեռագրերում առկա են բազմաթիվ տարբերակներ (տերմինների հերթականու-

թյունը, ժամանակաձևերը): Միացյալ Աստվածաշնչյան Ընկերությունների հունարեն տեքստի չորրորդ խմբագրությունը բաց է թողնում այս արտահայտությունը:

■ «**թրատվեցին**» /հայերենում բացակայում է/ (այսինքն՝ 3 Թագ. 19:10,14; Երեմ. 2:30; 26:23):

11:38 Սա նկարագրում է Աստծո հետևորդների հալածանքների սարսափելի պատմությունը: Ինչո՞ւ պետք է ներկայիս ընթերցողները զարմանային իրենց հալածանքներով:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ԵՔՐԱՅԵՑԻՆԵՐԻ 11:39-40
³⁹Եվ սրանք բոլորն էլ հավատով լավ վկայված խոստումը չստացան, ⁴⁰որովհետև Աստված մեզ համար ավելի գերազանց բան նախատեսեց, որ նրանք կատարելության չհասնեն առանց մեզ:

11:39 «**լավ վկայված** /անգլ.՝ **հավանություն ստացած**/» Սա հետադարձ կապ է ստեղծում Եբր. 11:2-ի հետ (տես՝ Եբր. 2:11): Հավատքով ապրած կյանքերը, անգամ սարսափելի իրադրություններում, հանեցնում է Աստծուն:

11:40 Աստծո խոստումները միաբանում են ամեն տարիքի, ռասսաների, սոցիալ-տնտեսական և կրթվածության մակարդակի հավատացյալներին (տես՝ Գաղ. 3:28; Կող. 3:11): ՀԿ-յան այս բոլոր անձիք սպասում էին Աստծո նոր օրվան: Այն հասավ Քրիստոսի մեջ Բեթլեհեմում և իր վախճանին կհասնի Քրիստոսի միջոցով՝ արևելքի բաց երկնակամարում երկնքից հայտնվելով: Նրա հարությունը այն հույսն է, որին բոլոր հավատացյալները՝ Նոր և Հին Կտակարանների, սպասում էին հավատքով (տես՝ 1 Հովհ. 3:2):

■ «**ավելի լավ**» Տե՛ս Եբր. 7:7-ի ամբողջական գրառումը:

■ «**կատարելություն**» Տե՛ս Եբր. 10:1-ի ամբողջական գրառումը:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Սահմանե՛ք երբայերեն և հունարեն հավատք բառերը:
2. Ի՞նչ են նշանակում *fiat* և *ex nihilo* բառերը:
3. Արդյո՞ք Աստված փորձում է հավատացյալներին (տես՝ Եբր. 11:17 ի հակադրություն Հակ. 1:13-14):
4. Կա՞ արդյոք հատուկ պատիվ հալածանքների համար: Արդյո՞ք բոլոր Քրիստոնյաներն են հալածվում:
5. Ինչո՞ւ է Եբրայեցիների թղթի հեղինակը գրում հավատքի անվանակոչման այս գլուխը:

ԵՔՐԱՅԵՑԻՆԵՐԻ 12

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Տիրոջ խրատը	Հավատքի ընթացքը	Հորդորներ զգուշացումներ	և Աստված մեր Հայրը	Հիսուս Քրիստոսի օրինակները
12:1-3	12:1-2	12:1-2	12:1-2	12:1-4
	Աստծո խրատը			
	12:3-11	12:3-11	12:3-11	
12:4-11				Աստծո Հայրական Խրատը
				12:5-13
12:12-13	12:12-17	12:12-13	12:12-13	
Չզուշացում Աստծո շնորհք մերժելու դեմ				
12:14-17		12:14-17	12:14-17	12:14-17
	Փառավոր բազմությունը			Երկու Ուխտերը
	12:18-24	12:18-24	12:18-21	12:18-29
12:18-24	Լսեք երկնային ձայնը		12:22-24	
	12:25-29	12:25-29	12:25-27	
12:25-29			12:28-29	

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻԿԼ («Մուրը Գիրքը ճիշտ կարդալու Ուղեգույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեգույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Մուրը Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ԵՔՐԱՅԵՑԻՆԵՐԻ 12:1-2
¹Ուստի մենք էլ, տեսնելով որ շրջապատված ենք վկաների բազմության այսպիսի մեծ ամպով, դեն նետենք ամեն մի ծանրություն և մեզ հեշտությամբ թակարդ գցող մեղք ու համբերատարությամբ վազենք մեր առջև դրված մրցավազքը, ²Հիտուսին նայելով մեր հավատի Հեղինակին ու Կատարողին, որ Իր առջև եղած ուրախության համար խաչը հանձն առավ, ամոթն արհամարհեց ու նստեց Աստծո աթոռի աջ կողմում:

12:1 «Ուստի» Համար 1-ը մի անսովոր եռակի բաղադրյալ (*toigaroun*) նախադասություն է, որը միայն այստեղ և 1 Թեսաղ.4:8-ում կարելի է գտնել: Նախորդող հավատարմության շուրջ օրինակների հիման վրա, ընթերցողները պետք է ապրեն աստվածահանո կյանքով, որը օգնում և քաջակերում է ուրիշներին:

■ **«ամպ»** «Ամպ» բառը հաճախ հունական գրականության մեջ այլաբանորեն է կիրառվում՝ մարդկանց որևէ խմբի համար (տես՝ Հերոդոտոս VIII.109):

■ **«վկաներ»** Այս տերմինը կարող է նշանակել՝

1. Դատարանում օրինավոր վկա
2. Ինչ-որ մեկը, որ պատմում է, թե ինչ են տեսել, գիտեն կամ վերապրել են
3. Ինչ-որ մեկը, որ սպանվել է (նահատակվել) Քրիստոսին հավատալու համար
4. Եբր.11-ոհիմ հավատքի օրինակների փոխաբերական արտահայտություններ

Եբր.11-ի համատեքստի շնորհիվ կարծես թե լավագույն տարբերակը կլինի այս համարը դիտարկել չ թե որպես «նրանք» նայում են մեզ ուսմունք, այլ, որ մենք պետք է նայենք նրանց հավատարմությամբ ապրած կյանքերին, որպես օրինակ հետևելու համար (NASB Մերտողության Աստվածաշունչ /NASB Study Bible/, էջ՝ 1798): Այս համարը կարծում եմ հաճախ սխալ է կիրառվում, պաշպանելով այն տեսակետը, որ մեր մահացած հավատացյալ հարազատները երկնքից նայում են մեր կյանքը երկրի վրա: Հավատացյալները անշուշտ ճանաչելու են միմյանց և Հարության Օրը վերամիավորվելու են նորից իրար հետ ապրելու, սակայն Աստվածաշունչը լռում է մահվան ժամանակ նրանց վերամիավորման շուրջ կամ էլ նրանց ունեցած այն հնարավորության վերաբերյալ, որ կարող են դիտել իրենց հարազատների կյանքը երկրի վրա:

Էլլինգուորթ և Նիդայի *Եբրայեցիներին ուղղված Նամակների Ձեռնարկը* /Ellingworth and Nida *The Handbook on The Letters to the Hebrews*/ գրքում, Միացյալ Աստվածաշնչյան Ընկերությունից, տրված է հակասող մեկնաբանություն, «Միտքն այն է, որ Հին Կտակարանյան հերոսները դիտում են, թե ինչպես է Եբրայեցիների հեղինակը և իր ընթերցողները վազում Քրիստոնեական կյանքում իրենց առջև դրված մրցավազքը, քանի որ նրանց փրկությունը կապված է այդ Քրիստոնյաների հետ (Եբր. 11:40)» (էջ՝ 287):

■ **«եկեք»** /հայ.՝ քերականորեն օգտագործվում է բայի ներսում - *դեն նետենք!* Սա թարգմանվում է որպես ստորադասական, սակայն առաջին բայի ձևը ներկա ներգործական դերբայ է: Ստորադասականը նախքան «եկեք վազենք» բայը առկա չէ:

Նկատել, թե ինչեր պետք է անեն հավատացյալները ՀԿ-յան հավատարիմ վկաների լույսի ներքո.

1. Դեն նետենք ցանկացած ծանրություն, Եբր.12:1
2. Դեն նետենք ամեն մեղք, որ հեշտությամբ պաշարում է մեզ, Եբր.12:1
3. Համբերությամբ վազենք մրցավազքը, Եբր.12:1
4. Մեր աչքերը ուղղենք Հիտուսին, Եբր.12:2

■ **«դեն նետել»** Սա աորիստ չեզոք դերբայ է, որը նշանակում է «հազուստի պես դեն նետել» (տես՝ Գործք 7:58): Այս քերականական ձևը ակնարկում է անձնական (այսինքն՝ չեզոք սեռի), որոշիչ (այսինքն՝ աորիստ ժամանակ) որոշում: Այնուհանդերձ, Պողոսը այս տերմինը գործածում էր էթիկական, փոխաբերական իմաստով (տես՝ Հռոմ.13:12; Եփես.4:22,25; Կող.3:8-9 և «հազնել» բայը՝ Եփես.4:24; Կող.3:10,12,14): Քրիստոնյաները պետք է ակտիվ մասնակցություն ունենան իրենց ձրի փրկության հարցում (տես՝ Փիլ.2:12-13): Մեր առջև դրված մրցուղի կա, որ պետք է վազենք, վկայություն, որ պետք է դառնանք, և պատերազմ, որ պետք է կռվենք (այսինքն՝ Փիլ.3:12-14):

NASB	«ամեն խոչընդոտ»
NKJV, NRSV	«ամեն ծանրություն»
TEV	«ամեն ինչ, որ պատահում է ճանապարհին»
NJB	«ամեն ինչ, որ մեզ ներքև է քաշում»

Այս տերմինը տառացի նշանակում է «գեր» կամ «ծանրություն»: Նրանք, ովքեր մասնակցել են հունական մարզական մրցություններին, վազում են գրեթե մերկ: Այն կիրառվում է՝

1. Տառացի՝ մարմնի գերության համար
2. Կամ մարզական մարզումների ծանրության համար
3. Հունական գրականության մեջ այլաբանորեն որպես հպարտություն
4. Փիլիսոփայական իմաստով որպես զգուշացում «լավից» որպես «լավագույնի» թշնամու:

■ **«մեղքը»** Սա վերաբերում է (1) մեղքի բնությանը, (2) մեղքը պաշարելուն, (3) անհավատությանը, կամ էլ (4) այս յուրահատուկ համատեքստը կարող է փոխանցել հավելյալ նշանակություն «նահանջել» բառին (տես՝ Եբր. 10:38): Այս նամակը՝ գիրքը, քարոզը ուղղված է հրեա հավատացյալներին և անհավատներին:

NASB «այսքան հեշտությամբ մեզ թակարդն է զգում»
NKJV «այսքան հեշտությամբ որոգայթն է զգում»
NRSV, NJB «որ սերտորեն փաթաթվում է»
TEV «որ այնքան ամուր է մեզ բռնում»

Հնագույն պապիրուսե P⁴⁶ ձեռագիրը տալիս է «հեշտությամբ շեղում է»: Այս խոսքը վերաբերում է այն ամեն ինչին, որ մեզ հավատացյալներին գայթակղեցնում է մրցավազքի ժամանակ: Այն կարող է լինել կրկնվող մեղք, անհավասարակշիռ ցանկություն կամ նույնիսկ բազմաթիվ լավ բաների ներկայություն, ցանկացած բան, որ պատճառ է հանդիսանում արհամարհելու Աստծուց ստացած իրենց կոչումը և պարզևները:

■ **«վազել»** Սա ներկա ներգործական ստորադասական է, որը խոսում է շարունակական գործողության մասին, սակայն պատահականության երանգի մեջ: Իհարկե այն համապատասխանում է Քրիստոսից և Ավետարանից «նահանջող» հրեա հավատացյալներին ուղղված չորս զգուշացումների ընդհանուր շեշտադրությանը:

■ **«համբերություն»** Այս գլուխը հնարավոր է ռաբբիների կողմից կիրառված խաղ է «համբերել» բառի շուրջ (գոյական, տես՝ Եբր. 10:32,36), որը նշանակում է «կամավոր, ագրեսիվ (ակտիվ), համբերատար (պասիվ) հարատևություն»: Բայր գտնվում է Եբր. 12:2,3 և 7-ում, իսկ գոյականը՝ Եբր. 12:1-ում: Սա գրքի թեման է հանդիսանում և հատկապես գրքի այս վերջին մի քանի գլուխները. այս մասերը լավ ուսումնասիրեք:

■ **«մրցավազք»** Հունարեն այս *agōna* բառը մարզական տերմին է, որից ստանում ենք անգլերեն “agony” տառապանք տերմինը: Այն հաճախ կիրառվում է մրցավազքի ընթացքի համար:

■ **«/որ/ մեր առջև դրված է/»** Սա ներկա կրավորական (դեպոնենտ՝ հասարակ) դերբայ է: Քրիստոնեական կյանքը հաճախ բնութագրվում է որպես մարզական մրցաշար (տես՝ 1 Կորնթ. 9:25; Փիլ. 1:30; 2 Տիմ. 2:5; մրցավազք՝ 1 Կորնթ. 9:24,26; Գաղ. 2:2; 5:7; Փիլ. 2:16; բռնցքամարտ՝ 1 Կորնթ. 9:26; 1 Տիմ. 1:18; 6:12; 2 Տիմ. 4:7; ըմբշամարտ՝ Եփես. 6:12):

■ **«Հիսուսին նայելով»** Սա ներկա ներգործական դերբայ է, որը նշանակում է «ակնապիշ նայել»: Նկատել, որ մենք նայում ենք Նրան, ոչ թե ամբոխին, ոչ թե հանգամանքներին, ոչ թե մեզ: Սա կարող է այլաբանորեն մշտապես նոր ուխտի (ավետարանի) վրա կենտրոնանալու իմաստն ունենալ:

NASB «հավատի հեղինակին ու կատարողին»
NKJV «մեր հավատի հեղինակին և ավարտողին»
NRSV «մեր հավատի ռահվիրաին /առաջնորդին/ և կատարողին»
TEV
NJB «ով առաջնորդում է մեզ մեր հավատքի մեջ և հասցնում կատարելության»

Այս առաջին տերմինը (*archēgos*) կիրառվում է Եբր. 2:10-ում Հիսուսի համար, որպես փրկության հեղինակի. Գործք 3:15-ում Հիսուսի համար, որպես կյանքի Իշխանի (հեղինակի). Գործք 5:31-ում Հիսուսի համար, որպես Իշխան (առաջնորդ) և Փրկիչ: Տե՛ս Հատուկ Թեմա Եբր. 2:10-ում:

Երկրորդ բառը (*teleiōtēs*) նշանակում է «մեկը, որ կատարում և ավարտին է հասցնում»: Այն վերաբերում է Աստծուց Հիսուսին հանձնարարված առաջադրանքի կատարյալ իրականացմանը: Ինչ-որ առումով այն նման է Ալֆա և Օմեգա տիտղոսին (տես՝ Հայտն. 1:8), Առաջինը և Վերջինը (տես՝ Հայտն.

1:17; 2:8): Այս հեղինակը գրքում շատ անգամներ է կիրառում է «կատարելագործելու» հասկացությունը (տես՝ Եբր.2:10; 5:9; 6:1; 7:11,19,28; 9:9; 10:1,14; 11:40; և այստեղ): Տե՛ս Հատուկ Թեմա Եբր.7:11-ում:

■ **«հավատք» Pistis** կարող է վերաբերել՝

1. Քրիստոսի հետ հավատքի անձնական փոխհարաբերությանը
2. Քրիստոսանման հավատարիմ ապրելակերպին
3. Քրիստոնեական վարդապետությանը (տես՝ Հուդա 1:3,20)

Քրիստոնեությունը անձնավորություն է, որին պետք է ընդունել. ճշմարտություն այդ անձի վերաբերյալ, որին պետք է հավատալ (ավետարանը), և այդ անձնավորության կյանքի պես ապրելակերպ (այսինքն՝ Քրիստոսակերպություն):

■ **«ուրախության համար» Anti** նախդիրը ընդհանրապես նշանակում է «հանուն» կամ «պատճառով», սակայն նաև կարող է նշանակել «փոխարենը»: Առաջինը վերաբերում էր Քրիստոսին, որ թողեց երկինքը (տես՝ Փիլ.2:5-11), երկրորդը՝ Իր կատարած փրկության և Համբարձման ժամանակ ունեցած ուրախությանը (տես՝ Եսայի 53:10-12):

■ **«Իր առջև եղած»** Այս խոսքը հանդիպում է Եբր.12:1-ում, որտեղ վերաբերում է Քրիստոնեական կյանքի պայքարին (մրցավազք): Այժմ այս տերմինը կիրառվում է դարձյալ պայքարի համար, սակայն Հիսուսի, որն Իր կյանքը մեզ համար դրեց: Հեղինակն այսպես հորդորում էր հրեա հավատացյալներին համբերել: Հիսուսն արեց Իր բաժինը. նրանք էլ պետք է կատարեն իրենցը: Եբր Նա ավարտին հասցրեց Իր գործը՝ մեծ ուրախություն եղավ. նույնը կլինի, երբ հավատացյալները ավարտեն իրենց ընթացքը:

■ **«խաչը»** Հիսուսի օրերում խաչը ռաբբիների կողմից համարվում էր Աստծո անեծքը 2 Օր.21:23-ի իրենց մեկնաբանությունների շնորհիվ: Պողոսն ասում է, որ Հիսուսը Օրենքի այս անեծքը մեր համար կրեց (տես՝ Գաղ.3:13):

■ **«ամոթն արհամարհեց»** Խաչը Հոր և Որդու սիրո օբյեկտիվ (շոշափելի, առարկայական) ապացույցն է (տես՝ Հովհ.3:16 և Հռոմ.5:8): Սա հունարեն հզոր բառ է: Հիսուսը նայեց Իր խոնարհվելու փառավոր վերջաբանին (տես՝ Ես.53:10-12): Խաչը հեշտ չէր, փրկությունը էժանագին չէր:

■ **«նստեց /նստել է/»** Սա վաղակատար ներգործական սահմանական է, որը արտահայտում է մնայուն արդյունքներով ավարտված գործողություն: Այստեղ հեղինակը շարունակում է մեջբերում կատարել Սաղմ.110:1 (տես՝ Եբր.1:3,13; 8:1; 10:12):

■ **«Աստծո աթոռի /գահի/»** Մեղավոր մարդիկ միայն կարող են պատկերացնել հոգևոր աշխարհի փառքն ու մեծությունը: Դրանք պետք է ֆիզիկական պատկերավոր խոսքերով արտահայտվեն (ոսկե փողոցներ, մարգարտյա դարպասներ, ապակե՝ ակնվանու ծով): Աստված հոգևոր, հավիտենական, ամենակալ էություն է, և որևէ գահի նստելու համար չափազանց մեծ Իր էությանը (տես՝ 3 Թագ.8:27): Տե՛ս SPECIAL TOPIC: ANTHROPOMORPHIC LANGUAGE TO DESCRIBE GOD /ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. Աստված Նկարագրված Որպես Մարդ (Մարդաստվածություն)/, Եբր.3:11-ում:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 12:3-11
³Մտաբերե՛ք Նրան, որ Իր դեմ մեղավորների այդպիս հակառակությունը կրեց, որպեսզի չլինի թե՛ հոգնե՛ք և ձեր սրտում հուսալքվե՛ք: ⁴Պուք դեռ արյուն թափելու չափ դիմադրություն ցույց չավեցիք մեղքի դեմ պայքարում: ⁵Եվ մոռացաք այն հորդորը, որ ձեզ հետ խոսում է, ինչպես որդիներ հետ.
«Որդյա՛կս, Տիրոջ խրատը մի՛ անարգիր և, Եբր Նրանից հանդիմանվես, մի՛ վիատվիր, ⁶Որովհետև ում Տերը սիրում է, խրատում Եվ ծեծում է ամեն մի գավակի, ում ընդունում է»:
⁷Եթե խրատին դիմանաք, Աստված ձեզ հետ կվարվի ինչպես որդիների հետ, որովհետև այդ ո՛ր գավակին է, որ հայրը չի խրատում: ⁸Իսկ եթե առանց խրատի լինեք, որին բոլորը մասնակից են, ուրեմն դուք խորթ եք, ո՛չ թե որդիներ: ⁹Ավելին, մենք մարմնավոր հայրեր ունենք, որոնք մեզ ուղղում են, և մենք նրանց հարգում ենք. ուրեմն որքա՛ն ավելի պետք է հնազանդվենք հոգիների Հորը և ապրենք: ¹⁰Որովհետև նրանք իրապես մի քանի օրվա համար են մեզ խրատում՝ իրենց լավագույն համարած ձևով, իսկ Նա՛ մեր բարիքի համար, որպեսզի Իր սրբությանը հաղորդակից դառնանք: ¹¹Ճիշտ է, ո՛չ մի խրատ նույն պահին ուրախությամբ չի

ընդունվում, այլ տրամուխայամբ. սակայն հետագայում նրանով կրթվածներին արդարության խաղաղարար պտուղն է տալիս:

12:3 «Մտաբերե՛ք» Մա աորիստ /անորոշ կատարյալ/ չեզոք (դեպոնենտ՝ հասարակ) հրամայական է: Տառացիորեն նշանակում է «դրան ավելացրած» և կիրառվում է շեշտադրելու ինչ-որ բանի մանրակրկիտ վերլուծությունը: Հնում մարդիկ ավելացնում էին թվեր վերևի մասում և վերջնական ստացված թվի վերևում գիծ քաշում:

■ **«Նրան, որ ... կրեց /կրել է/»** Մա վաղակատար ներգործական դերբայ է: Ինչպես որ Հիսուսը հավատացյալների փրկության համար կրեց այսպիսի անոթալի վերաբերմունք, նրանք նույնպես կարիք ունեն սպրելու Նրա և մյուս հավատացյալների համար (տես՝ 1 Հովհ.3:16):

■ **«Իր դեմ ... հակառակություն»** Եզակի թվով այս դերանունը առկա է ժամանակակից բոլոր թարգմանությունների մեջ: Այնուհանդերձ, հնագույն հունարեն ձեռագրերի, տարբերակների և Հայրապետական մեջբերումների մեծ մասը ձևակերպում են հոգնակի թվով: Չնայած որ համատարած ընդունված է տեքստային քննադատության այն հավատամքը (այսինքն՝ տես Հավելված Երկու), որ ամենախրթին, ամենադժվար տեքստը հենց բնագրինն է, այս հոգնակի թիվը ընդհանրապես չի համապատասխանում համատեքստին: Ենթական ակնհայտորեն Հիսուսն է: Հնարավոր է այստեղ տեղի է ունեցել հնագույն դպրական վրիպում՝ պապիրուս տեքստերի մեծ մասի գրվելուց մեկից երկու հարյուրամյակ առաջ:

■ **«որպեսզի չլինի թե հոգներ և ձեր սրտում հուսալքվեք»** Մրանք մարզական տերմիններ են վազորդների համար, որոնք ուշագնաց էին լինում և ընկնում դժվարին մրցուղին վազելուց հետո: Մեր հիդինակը քաջալերում է այս հրեա հավատացյալներին շարունակել մրցավազքը, նույնիսկ եթե դժվար է թվում: Այս գգուշացումը շարունակվում է Եբր.12:15,25-29-ում:

12:4 «դուք դեռ արյուն թափելու չափ դիմադրություն ցույց չտվեցիք» Առաջին ընթերցողները հալածանքներ էին կրում, բայց ոչ մահ (տես՝ Եբր.10:32բ): Հիսուսը մահվան չարչարանքներով անցավ նրանց համար. նրանք պետք է հոժարակամությամբ թե՛ ապրեն և թե՛ մեռնեն Նրա համար:

■ **«մեղքի դեմ պայքարում»** Մա մեկ այլ մարզական տերմին է, ինչպես Եբր.12:1-ում: Անգլերենում տառացիորեն թարգմանվում է որպես «տառապանք»: Ամբողջ գրքի համատեքստում «մեղքը» վերաբերում է՝

1. Անհավատության մեղքին՝ կապված անհավատ հրեաների խմբի հետ
2. Ուխտադրության մեղքին («նահանջելու» Եբր.10:38)՝ հավատացյալ հրեաների խմբի հետ

12:5 «մոռացաք /մոռացել եք/» Մա վաղակատար չեզոք (հասարակ) սահմանական է: Այս տերմինը կիրառվում է Նկ-ում միայն այստեղ: Այն մատնանշում է՝

1. Կատարելապես մոռանալը (այսինքն՝ շեշտադրվում է բայի ժամանակը)
2. Հոժարակամ մոռանալը (այսինքն՝ շեշտադրվում է բայի սեռը)

■ **«մի՛ անարգիր և, երբ Նրանից հանդիմանվես, մի՛ վիատվիր»** Մա մեջբերում է Սեպտուագինտայից՝ Առակ.3:11-12: Այս երկուսն էլ ներկա ժամանակի հրամայականներ են, ժխտական մասնիկով, որը սովորաբար նշանակում է ընթացքի մեջ գտնվող գործողությունը կասեցնել:

■ **«Տիրոջ խրատը»** Այս տերմինը վերաբերում է «երեխային խրատելուն»: Եբր.12:5-11-ում այս տերմինի շուրջ բառախաղ է: Եվս մեկ ընտանեկան փոխաբերություն: Ինչպես որ երկրավոր ծնողներն են խրատում իրենց երեխաներին, այնպես էլ Աստված՝ Իր երեխաներին (տես՝ 1 Կորնթ.11:32; Հայտն.3:19):

12:6 «Որովհետև ում Տերը սիրում է, խրատում է» Ահա, թե ինչու են հավատացյալները չարչարվում հանուն իրենց հավատքի (տես՝ Մատթ.5:10-12; Գործք 8:1բ, 4; 14:22; 2 Թեսաղ.1:4-10):

■ **«և ձեռնում է ամեն մի գավակի, ում ընդունում է»** Մա Սեպտուագինտայի Առակ.3:11-12 մեջբերման շարունակությունն է: Մա այնքան կարևոր է: Հիսուսը մի քանի անգամ կոչվել է «որդի», մինչ ՀԿ-յան հերոսները կոչվում էին «ժառանգներ»: Այժմ ՆԿ-յան հավատացյալները կոչվում են «որդիներ» (տես՝ Եբր.12:7-8): Հայրերը խրատում են որդիներին՝

1. Հոր նպատակի համար

2. Որդու օգտի համար
3. Ամբողջ ընտանիքի օգտի համար

12:7 «Եթե դիմանար» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆԱ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է կամ ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (միևնույն հունարեն ձևաբանությունը): Քանի որ Եբր.12:5 ունի երկու ՆԵՐԿԱ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, հավանաբար սա նույնպես ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Այս բառը նշանակում է «հոժարակամ, հաստատուն համբերություն» (տես՝ Եբր.12:1,2,3; 10:32,36): Այս փորձության արդյունքը ավելի հզոր հավատքն է:

■ **«Աստված ձեզ հետ կվարվի ինչպես որդիների հետ»** Այս թեման՝ Աստված որպես խրատող ծնող, հնարավոր է ակնարկ է 2 Օր.8:5-ից, ինչպես որ Ովսեա 11:1-4-ում է:

Բայը մի տերմինի ներկա կրավորական սահմանական է, որը նշանակում է «ինչ-որ բան Հիսուսին կամ Աստծուն բերել, հաճախ գոհաբերության միջոցով. սակայն աստեղ կրավորական սեռը մատնանշում է Աստծո փափագը մեղավոր մարդկանց կողմից Քրիստոսի գոհի միջոցով մոտենալուն»:

12:8 «Եթե» Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը ենթադրվում է, որ ճիշտ է համաձայն հեղինակի նպատակների: Աստծո բոլոր գավակները վերապրում են խրատ (ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ):

12:9 «Հոգիների Հայրը» Սա ոչ մի կապ չունի «հոգու» ծագման տեսությունների հետ: Այստեղ այն կիրառվում է կյանքի իրական աղբյուրի իմաստով: Աստված ի հակադրություն երկրավոր հայրերի (տես՝ Եբր.12:9-10):

■ **«և ապրենք»** Հոր խրատի արդյունքում ունենում ենք ճշմարիտ կյանք և ոչ թե մահ:

12:10 «Իսկ Նա մեր բարիքի համար է խրատում, որպեսզի Իր սրբությանը հաղորդակից դառնանք» Յուրաքանչյուր հավատացյալ փրկության ժամանակ սրբված է (պաշտոնապես) և կանչված է սրբության կյանքի (տես՝ Հատուկ Թեմա Եբր.2:11): Սա է Աստծո նպատակը բոլոր հավատացյալների համար (տես՝ Մատթ.5:48; Հռոմ.8:28-30; 2 Կորնթ.3:18; 7:1; Գաղ.4:19; Եփես.4:13; 1 թեսաղ.3:13; 4:3,7; 1 Պետ.1:15): Հավատացյալները նախասահմանված են սրբության համար (տես՝ Եփես.1:4): Այն հաճախ տեղի է ունենում միայն դաստիարակության՝ խրատի միջավայրում (տես՝ Եբր.5:8 և Հռոմ.8:17):

12:11 «արդարության խաղաղության պտուղն է տալիս» Քրիստոնեական կյանքը հավատքից հավատք է, հաստատվելուց (հավատքի դավանությամբ) դեպի բնավորություն ձեռք բերել (հավատքի կյանք, տես՝ Հռոմ.5:3-5; Հակ.1:2-4):

«Արդարություն» բառի սերտողության համար տես Հատուկ Թեմա Եբր.1:9-ում:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 12:12-13
¹²Ուստի գորացրե՛ք կախ ընկած ձեռքերը և տկարացած ծնկները, ¹³և ձեր ոտքերի համար ուղիղ ճանապարհներ պատրաստեցե՛ք, որպեսզի ով կաղ է, չգործվի, այլ ընդհակառակը՝ բժշկվի:

12:12 Սա Ես.35:3-ի ակնարկն է, որը կարող է հանդիսանալ գուլի 12-ի ամբողջ քննարկման հիմքը: Հասուն Քրիստոնյաները պետք է գորացնեն թուլյերին (նրանց, որ գրեթե նահանջում են): «Չորացնել» բառը տառացի նշանակում է «ուղղել», որը հաջորդ խոսքի համար բառախաղ է հանդիսանում:

12:13 «ձեր ոտքերի համար ուղիղ ճանապարհներ պատրաստեցեք» Հնարավոր է սա ակնարկում է Առակ.4:26-ը Սեպտուագիանայից (LXX) կամ էլ մի որևէ հայտնի առակի, որը գործածում է «ուղիղ ճանապարհները» որպես արդարության համար ՀԿ-յան փոխաբերություն:

- **«ով կաղ է»** Այս արտահայտությունը կարելի է հասկանալ՝
1. Իր ՀԿ-յան փոխաբերության իմաստով (տես՝ 3 Թագ.18:21), որն արտահայտում է երկու կարծիքների միջև ընտրություն՝ երկընտրանք, ինչպես օրինակ Իսրայելը երկընտրանքի առջև էր ՅԱՀՎԵԻ և Բահաղի միջև:
 2. Հունական գրականության մեջ ճանապարհները վերականգնելու իմաստով, որպեսզի կաղերը չընկնեն և իրենց վնասեն (տես՝ Մ. Ռ. Ուինսենթ *Բառային Սերտողություն Նոր Կտակարանում* /M. R. Vincent *Word Studies in the New Testament*/ էջ՝ 1168):

■ «այլ ընդհակառակը՝ բժշկվի» Միմյանց քաջալերելու արդյունքում տեղի է ունենում վերականգնում (տես՝ Գաղ.6:1; Հակ.5:16):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 12:14-17
¹⁴Խաղաղության հետևեցեք բոլոր մարդկանց հետ և՛ սրբության, առանց որի ո՛չ ոք չի տեսնելու Տիրոջը: ¹⁵Զգուշացե՛ք, չլինի թե մեկը ետ մնա Աստծո շնորհից. չլինի որ մի դառնության արմատ՝ բուսնելով ձեզ նեղի, և դրանով շատերը պղծվեն: ¹⁶Չլինի թե որևէ մեկը շնացող լինի, կամ պիղծ, ինչպես Եսավը, որ մի աման կերակուրի համար իր անդրանիկությունը ծախեց: ¹⁷Գիտե՛ք, որ հետո, երբ ուզեց օրհնությունը ժառանգել, մերժվեց, որովհետև ապաշխարության հնար չգտավ, թեև արտասուքներով խնդրեց այն:

12:14-17 Սա վերջին զգուշացումն է (տես՝ Եբր.2:1-4; 3:7-4:11; 5:11-6:12; 10:19-39; 12:14-17):

12:14 «Խաղաղության հետևեցեք» ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ Է: Համատեքստում՝

1. Հալածանքներ, որից հնարավոր չէ գերծ մնալ
2. Ընկերների մեջ անհավատությունը (անհավատ հրեաները, որոնց հետ դեռևս հավատացյալ հրեաները պաշտում էին Աստծուն)
3. Կասկածի վերաբերյալ («ետ նահանջելու» վտանգը՝ տես Եբր.10:38) այս քննարկման ներսում տիրող խաղաղությունը շատ կարևոր է՝
 - «Խաղաղության» թեմայով կան մի քանի համազոր հատվածներ՝
 1. Մաղմ.34:14, «խաղաղությունն փնտրիր ու նրա հետևից գնա»
 2. Մարկոս 9:50, «խաղաղություն ունեցե՛ք միմյանց հետ»
 3. Հռոմ.12:18, «եթե հնարավոր է (որքան ձեզանից է կախված) բոլոր մարդկանց հետ խաղաղությամբ ապրեցեք»
 4. 1 Կորնթ.7:15, «Իսկ, եթե անհավատը ցանկանում է բաժանվել, թող բաժանվի... բայց Աստված մեզ խաղաղության կանչեց»
 5. 2 Տիմ.2:22, «գնա՛ արդարության, հավատի, սիրո, խաղաղության ետևից՝ նրանց հետ, ովքեր Տիրոջ անունը կանչում են մաքուր սրտով»

■ «և սրբության» Այս «սրբություն» տերմինը պետք է որ կապ ունենա Եբր.12:10-ի հետ և կապված է «խրատի» հետ: Աստված հավատացյալներին խրատում է սրբության համար: Փրկության նպատակը Քրիստոսակերպությունն է:

Սա դիրքային՝ որպես վիճակ (ակնթարթային՝ անմիջապես տեղի ունեցող) սրբությունը չէ, այլ փորձառաքար ձեռք բերվող (աճող) սրբությունը: Ավետարանը ներկայացնում է փրկությունը և Քրիստոնեական կյանքը երկու տարբերակով: Առաջինում այն արդեն կատարված է՝ ավարտուն, Աստծո կողմից ձրի, մեկընդմիջտ բոլորի համար տրված պարգև (սահմանական), սակայն այն նաև հավատքի, հնազանդության, ծառայության և երկրպագության կյանք է (հրամայական): Ծատ հավատացյալներ շեշտադրում են մի տարբերակը և բացառում մյուսը (Օգոստինոսը Պելագիոսի դեմ; Կալվինը Արմինիոսի դեմ): Աստծո հետ հավատացյալների փոխհարաբերությունը սկսվում է ժամանակի մեջ ինչ-որ պահի՝ համոզմունքի մի պահ, որի կուլմինացիան լինում է ապաշխարություն ու հավատքը, բայց դա պետք է ժամանակի միջով անցնի մինչև մահ կամ Հիսուսի Երկրորդ Գալուստը. հավատարմությունը, արդարությունը, համբերությունը ճշմարիտ փրկության կարևոր և կենսական նշանակության վկայություններ են:

Համեմատե՛ք սրբության վերաբերյալ հետևյալ տեքստերը՝

Դիրքային (սահմանական)

Աճող (հրամայական)

- Գործք 26:18
- Հռոմեացիների 15:16
- 1 Կորնթացիների 1:2-3; 6:11
- 2 Թեսալոնիկեցիների 2:13
- Եբրայեցիների 2:11; 10:10,14; 13:12
- 1 Պետրոս 1:2

- Հռոմեացիների 6:19
- 2 Կորնթացիների 7:1
- Եփեսացիների 1:4; 2:10
- 1 Թեսալոնիկեցիների 3:13; 4:3-4,7; 5:2
- 1 Տիմոթեոս 2:15
- 2 Տիմոթեոս 2:21
- Եբրայեցիների 12:14
- 1 Պետրոս 1:15-16

■ «առանց որի ո՛չ ոք չի տեսնելու Տիրոջը» Սա տարակարծիքային է՝ պարադոքսալ. (1) հավատացյալները մի օր տեսնելու են Տիրոջը (տես՝ Հոր 19:25-27; Մաղմ. 17:15; Մատթ.5:8; 1 Հովհ.3:2; Հայտն.22:4)

և (2) հավատացյալները չեն կարող տեսնել Տիրոջը հիմա (տես՝ Ելից 33:20; Հովհ.1:18; 1 Տիմ.6:16; 1 Հովհ.4:12): Սա կարող է վերաբերել մարդու հոգևոր աչքերին՝ ավետարանին արձագանքելու իմաստով: Այս համատեքստում հնարավոր է, որ այն փոխաբերական «հասկանալու» իմաստով է:

12:15 «չլինի թե» Տառացիորեն «տեսեք, քննեք» (*episkopountes*) բառը ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ Է՝ կիրառված ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ձևով: Այս տերմինը կազմված է հովիվ (եպիսկոպոս, *episkopos*, տես՝ Փիլ.1:1; 1 Տիմ.3:2; Տիտոս 1:7 և Հիսուսի համար 1 Պետ.2:25-ում) բառի համար օգտագործվող տարբեր տերմինների ձևերից մեկի հիման վրա: Այստեղ այն կարող է վերաբերել եկեղեցու առաջնորդներին կամ հասուն հավատացյալներին, ովքեր պետք է հոգ տանեին մյուսների համար: Հավատուրացությանը պետք էր հակառակ կանգնել՝ դիմակայել հասունությանը: Հավատացյալների այս խմբից առավելագույնս հասուն վարվելակերպ էր պահանջվում (տես՝ Եբր.5:11-14):

Ոչ մի Քրիստոնյա կղզիացած չպետք է լինի (տես՝ 1 Կորնթ.12:7): Քրիստոնեությունը թիմային մարգաձև է: «Սուրբ» տերմինը միշտ ներկայանում է հոգնակի թվով (բացառությամբ Փիլ.4:21-ում մեկ անգամ, որտեղ այն գործածվում է հավաքական իմաստով): Մենք մեր եղբոր պահապանն ենք: Մենք ոչ մի ջանք չպետք է խնայենք միմյանց քաջալերելու համար: Մեզ տրված են պարզևներ և կոչում բոլորի՝ ամբողջության առողջության համար:

■ **«չլինի թե մեկը ետ մնա Աստծո շնորհից»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ Է, կիրառված ՀՐԱՄԱՅԱԿԱՆ իմաստով, որը նշանակում է «Աստծո շնորհից պակաս գտնվել»: Այս բառը կիրառվում է Եբր.4:1-ում «գրկվել/ ձախողել հասնել՝ ձեռք բերել» իմաստով, սակայն այս համարում «ետ» նախդիրը (*apo*) ձևավորում է մի արտահայտություն, որն ակնարկում է «գրկվել մի բանից, որին հասել ես նախկինում» (տես՝ Եբր.6:4-6; 10:23,38-39; 12:25): Այսպիսի մշակության միջավայրում իրոք հնարավոր էր հավատուրացությունը: Տես՝ SPECIAL TOPIC: APOSTASY (APHISTĒMI) /ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏՈՒՐԱՅՈՒՆԻ ԹՅՈՒՄ (APHISTĒMI)/ Եբր.3:12-ում:

Կամ, ինչպես նշեցի, երկու խումբ կար, որոնց ուղղված էր խոսքը՝ (1) հավատացյալ հրեաները, որոնք վտանգված էին «նահանջելու» (Եբր.12:15) և (2) անհավատ հրեաները, որոնք իրենց ժողովարանի հավատացյալ ընկերների կյանքի և վկայությունների միջոցով հստակ հասկանալով ավետարանը մերժում էին Հիսուսին (Եբր.12:25): Որ տեսությունն էլ որ ճիշտ լինի ճշմարտությունն այն է, որ փրկությունը արդյունք՝ արտադրանք չէ, այլ փոխհարաբերություն: Այն ավելին է, քան առաջին արձագանքը: Չգուշացումները լուրջ են, դժվարին և իրական: Այս համատեքստում սա կոչ է «նահանջելու» վտանգի մեջ հայտնված հավատացյալներին օգնելու (տես՝ Եբր.10:38):

■ **«ոչ մի դառնության արմատ»** Հնարավոր է սա ակնարկ է Սեպտուագինտայի 2 Օր.29:18-ին, որն Աստծո ժողովրդին զգուշացնում էր կռապաշտության վտանգների մասին, թե՛ անհատական և թե՛ հավաքական: Ամբողջ Իսրայելը երբեք Աստծո առջև ուղիղ չգտնվեց, այլ միայն հավատարիմ հավատացյալ մի մնացորդ: 2 Օրինացում «դառնության արմատ» արտահայտությունը համազոր է «որոնց սիրտն այսօր հեռանում է մեր Տեր Աստծուց» խոսքին:

■ **«և դրանով շատերը պղծվեն»** Մի դժգոհ մարդու ներկայությունը ազդում էր ամբողջ խմբի վրա: Մեր հավատամքը, գործողությունները և վերաբերմունքը ազդեցություն են թողնում ուրիշների վրա: Ինչպիսի հրաշալի պատասխանատվություն:

12:16 «Եսավ» Ռաբբիական Հուդայականության ավանդության մեջ նա դարձավ մի շատ չար մարդ (տես՝ *Տններ* 25:1,8 և *Ծննդոց Ռաբբա* 70դ, 72ա /*Jubilees* 25:1,8 and *Genesis Rabba* 70d, 72a): Այնուհանդերձ այս համատեքստը կիրառում է նրան, քանի որ նա գիտեր Աստծո խոստումները, սակայն չսպրեց դրանց համաձայն:

12:17 «օրհնությունը» Նահապետական օրհնությունը հնարավոր չէր ետ վերցնել: Սա իր մեջ պարփակում է խոսված՝ արտասանված խոսքի գործության Եբրայական հասկացությունը (տես՝ Ծննդոց 1 և Ես.55:10-12):

■ **«որովհետև ապաշխարության հնար չգտավ»** ՀԿ-յան տվյալ համատեքստում սա վերաբերում է իր հոր՝ Իսահակի կողմից իր կրտսեր եղբորը՝ Հակոբին օրհնելուց հետո վերապրած վշտին, և այդ օրհնում-ությունը այլևս հնարավոր չէր ետ վերցնել: Հեղինակը սա գործածում է որպես զգուշացում նամակը ստացողների համար: Նա կամենում է, որ նրանք Քրիստոսի համար որոշում կայացնեն այժմ, քանի դեռ կա ժամանակ և ապա հարատևել Քրիստոսի հետ այդ նոր փոխհարաբերության մեջ, քանի որ երկրորդ հնարավորություն չկա (տես՝ Եբր.6:6; 10:26):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ
SPECIAL TOPIC: REPENTANCE IN THE OLD TESTAMENT

Այս հասկացությունը չափազանց կարևոր է, սակայն դժվար է այն սահմանելը: Մեզանից շատերը ունեն տարբեր սահմանումներ, որոնք գալիս են մեր հարանվանական ազդեցություններից: Սակայն ընդհանրապես մի «շարք» աստվածաբանական սահմանումներ հարկադրում են մի քանի Եբրայերեն (և հունարեն) բառերի, որոնք մասնավորապես չեն ենթադրում այս մի «շարք» սահմանումները: Պետք է հիշել, որ ՆԿ-ի հեղինակները (բացի Ղուկասից) եղել են հրեա մտածելակերպի մարդիկ, որոնք գործածում էին Կոինե Հունարեն լեզվի տերմիններ, ուստի մենք կսկսենք հենց Եբրայերեն տերմիններից, որոնցից հիմնականում երկուսն են կիրառվել՝

1. *nacham* (BDB 636, KB 688)
2. *shub* (BDB 996, KB 1427)

Առաջին տերմինը՝ *nacham*, որը բնագրում կարծես նշանակում էր «խորը շունչ քաշել», կիրառվում է մի քանի իմաստով՝

- ա. «հանգիստ» կամ «հարմարավետություն» (օր.՝ Ծննդ. 5:29; 24:67; 27:42; 37:35; 38:12; 50:2; հաճախ գործածվում է անունների մեջ, տես՝ 4 Թագ.15:14; 1 Մնաց.4:19; Նեեմ.1:1; 7:7; Նավումի 1:1)
- բ. «զղջում» (օր.՝ Ծննդ.6:6,7)
- գ. «մտափոխություն» (օր.՝ Ելից 13:17; 32:12,14; Թվոց 23:19)
- դ. «գթասրտություն» (օր.՝ 2 Օր. 32:36)

Նկատելք, որ բոլոր այս բառերի մեջ կան խորը զգացմունքներ: Ահա բանալին՝ խորը զգացմունքներն են, որ դրդում են գործողությունների: Գործողության այս փոփոխությունը հաճախ ուղղված է լինում ուրիշների հանդեպ, բայց նաև Աստծո: Աստծո հանդեպ վերաբերմունքի և արարքների այս փոփոխությունն է, որ այս տերմինին հաղորդում է աստվածաբանական այսպիսի կարևորություն: Սակայն այստեղ պետք է հոգատարություն ցուցաբերվի: Ասվում է, որ Աստված «զղջաց» (տես՝ Ծննդ.6:6,7; Ելից 32:14; Դատ.2:18; 1 Թագ.15:11,35; Սաղմ.106:45), սակայն սա մեղք գործելու կամ սխալ անելու հետևանք չէ, այլ գրականական ձև, որն արտահայտում է Աստծո գթասրտությունն ու հոգատարությունը (տես՝ Թվոց 23:29; 1 Թագ.15:29; Սաղմ.110:4; Երեմ.4:27-28; Եզեկ.24:14): Մեղքի և ապստամբության արժանի պատիժը ներվում է, եթե մեղավորը ճշմարտապես դարձի է գալիս իր՝ իրենց մեղքից և դառնում դեպի Աստծուն: Դա կյանքի արժեքների վերակողմնորոշում է:

Երկրորդ տերմինը՝ *shub*, նշանակում է «ետ դառնալ» (շրջվել ինչ-որ բանից, ետ շրջվել, շրջվել դեպի): *Shub* ԲԱՅԸ (BDB 996, KB 1427) հիմնականում նշանակում է «ետ դառնալ» կամ «վերադառնալ»: Այն կարելի է կիրառել՝

1. Աստծուց ետ դառնալու իմաստով - Թվոց 14:43; Ովս.22:16,18,23,29; Դատ.2:19; 8:33; 1 Թագ. 15:11; 3 Թագ.9:6; Երեմ.3:19; 8:4
2. Դեպի Աստծուն դառնալու իմաստով – 3 Թագ.8:33,48; 2 Մնաց.7:14; 15:4; 30:9; Սաղմ. 51:13; 116:7; Ես.6:10; 10:21,22; 31:6; Երեմ.3:7,12,14,22; 4:1; 5:3; Ովս.3:5; 5:4; 6:1; 7:10,16; 11:5; 14:1,2; Ամովս 4:6,8-11 (հատկապես ուշադրություն դարձրեք Երեմիա 7 և Ամովս 4)
3. ՅԱՀՎԵՆ սկզբից ասել էր Եսայուն, որ Հուդան չի ապաշխարելու՝ չի կարող ապաշխարել (տես՝ Ես.6:10), սակայն գրքում առաջին անգամ այդպես չի ասվում, այլ Նա կոչ է անում նրանց, որ դարձի գան դեպի Իրեն:

Ապաշխարությունը այնքան էլ զգացմունք չէ, որքան Աստծո հանդեպ վերաբերմունք: Այն կյանքի վերակողմնորոշում է սեփական եսից դեպի Աստծուն: Այն արտահայտում է փոխելու և փոխվելու հոժարակամություն: Այն ոչ թե մեղքի լիակատար դադարեցում է, այլ ամենօրյա գիտակցված ապստամբության դադարեցում: Այն Ծննդոց 3-ի Անկման եսակենտրոն հետևանքների ետադարձումն է: Այն մատնացույց է անում, որ Աստծո պատկերը և նմանությունը (Ծննդ.1:26-27) թեև ապականվել էր, սակայն այժմ վերականգնված է: Մեղավոր մարդկության հաղորդակցությունը Աստծո հետ դարձյալ հնարավոր է:

ՀԿ-ում ապաշխարություն հիմնականում նշանակում է «գործողությունների փոփոխություն», մինչ ՆԿ-ում «ապաշխարություն» նշանակում է «մտածելակերպի փոփոխություն» (տես Հատուկ Թեմա. Ապաշխարություն [ՆԿ]): Այս երկուսն էլ անհրաժեշտ են ճշմարիտ աստվածաշնչյան

ապաշխարության համար: Նաև անհրաժեշտ է գիտակցել, որ ապաշխարությունը թե՛ սկզբնական գործողություն է և թե՛ շարունակական ընթացք: Սկզբնական գործողությունը կարելի է տեսնել Մարկ.1:15; Գործք 3:16 և 19; 20:21, մինչ շարունակական ընթացքը՝ 1 Հովհ.1:9; Հայտնություն 2 և 3: Ապաշխարությունը այլընտրանք չէ (տես՝ Ղուկ.13:3,5):

Եթե ճիշտ է, որ ուխտի երկու պահանջներն են «ապաշխարությունը» և «հավատքը» (օր.՝ Մատթ.3:2; 4:17; Մարկ.1:4,15; 2:17; Ղուկ.3:3,8; 5:32; 13:3,5; 15:7; 17:3), ապա *nacham* տերմինը վերաբերում է մարդու իր մեղքը գիտակցելու խորը զգացմունքներին և ետ դառնալուն, մինչ *shub* տերմինը առնչվում է մեղքից շրջվելով դեպի Աստծուն դառնալը (այս երկու հոգևոր գործողությունների օրինակ է Ամոս 4:6-11, «դուք Ինձ չդարձաք» [հինգ անգամ] և Ամոս 5:4,6,14 – «Ինձ փնտրեք...Տիրոջը փնտրե՛ք... փնտրեք բարին և ոչ թե չարը»):

Ապաշխարության գործության առաջին հրաշալի օրինակը Դավթի մեղքն է Բերսաբեի հետ (տես՝ 2 Թագավորաց 12; Սաղմոս 32:51): Դավթի կյանքում, նրա ընտանիքի և Իսրայելի կյանքում այդ մեղքի հետևանքները շարունակվեցին, սակայն Դավթի փոխհարաբերությունը Աստծո հետ վերականգնվեց: Նույնիսկ ամբարիշտ Մանասեն կարող է ապաշխարել և ներվել (տես՝ 2 Մնաց.33:12-13):

Այս երկու տերմինները զուգահեռաբար կիրառվում են Սաղմ.90:13-ում: Պետք է լինի մեղքի ճանաչում՝ ընդունում և դրանից գիտակցաբար, անձնապես ետ դարձ, ինչպես նաև Աստծուն և Նրա արդարությունը փնտրելու փափագ (տես՝ Ես.1:16-20): Ապաշխարությունը ունի գիտակցական, անձնական և բարոյական ասպեկտներ: Բոլոր երեքն էլ պահանջվում են, որպեսզի թե՛ նոր փոխհարաբերություն սկսվի Աստծո հետ և թե՛ այս նոր փոխհարաբերությունը պահպանվի: Չղջման խորը զգացումը վերաժվում է Աստծո հանդեպ և Նրա համար հարատևող նվիրումի:

■ «արտասուքներով» Սա Ծննդոց 27:34 և 38-ից է:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 12:18-24

¹⁸Որովհետև դուք չեք մոտեցել շոշափելի լեռանը, որ վառված էր կրակով, և ո՛չ էլ այն սևությանը, խավարին ու մրրիկին, ¹⁹և փողի հնչելուն ու խոսքերի ձայնին, որ լսողներն աղաչեցին, որ այլևս այդ խոսքերն իրենց չասվեն. ²⁰որովհետև չէին դիմանում այն հրամանին, որ ասում էր. «Եթե նույնիսկ մի անասուն մոտենա լեռանը, պիտի քարկոծվի կամ նետով սպանվի». ²¹Եվ տեսարանն այնպես ահավոր էր, որ Մովսեսն ասաց. «Չարհուրում եմ ու դողում»: ²²Սակայն դուք եկել եք Սիոն լեռանը և կենդանի Աստծո քաղաքին՝ երկնային Երուսաղեմին, և հրեշտակների անհամբերի բազմությանը, ²³երկնքում գրված անդրանիկների ընդհանուր հավաքին և եկեղեցուն, Աստծուն՝ բոլորի Գատավորին, կատարյալ դարձած արդարների հոգիներին, ²⁴Հիսուսին՝ Նոր Ուխտի միջնորդին, սրսկման արյանը, որ Աբելի *արյունից* ավելի լավ բաների մասին է խոսում:

12:18-21 Այս բաժինը Սինա լեռան վրա Մովսեսին Օրենքը հանձնելու իրադարձության նկարագրությունն է (տես՝ Ելից 19:16-25; 2 Օր.4:11-14):

■ «խավարին ու մրրիկին» Սա հավանաբար ակնարկ է 2 Օր.5:22:

12:19 «փողի հնչելը» Աստծո ձայնը հնչում էր փողի ձայնի պես (տես՝ Ելից 19:16,19; 20:18):

■ «որ լսողներն աղաչեցին, որ այլևս այդ խոսքերն իրենց չասվեն» ՅԱՀՎԵԻ հրաշափառ գործունը Սինա լեռան վրա սարսափեցրեց մարդկանց (տես՝ Ելից 20:19; 2 Օր.5:22-27; 18:16):

12:20 «Եթե նույնիսկ մի անասուն մոտենա լեռանը, պիտի քարկոծվի» Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՍԱՆԱԿԱՆ նախադասություն է: Սա ևս մեկ ակնարկ է Աստծո հրաշափառ սրբությանը, որ իջել էր Սինա լեռան վրա (տես՝ Ելից 19:12-13):

12:21 «Չարհուրում եմ ու դողում» Սա մեջբերված է 2 Օր.9:19-ից, որը վերաբերում է Ահարոնի շինած ոսկե հորթին: Ռաբբիական հերմենևտիկական այս արտահայտությունը կիրառում է Սինա լեռան Մովսեսի Աստծուց վախենալու համար:

12:22 «Սակայն դուք եկե՛ք եք» Սա հզոր հակադրություն է: Այս հավատացյալ ընթերցողները չեն վստահում Սինայական ուխտին, այլ նոր ուխտին, երկնային Երուսաղեմին, նոր Սիոնի սարին, նոր քաղաքին: Գաղ.4:21-31-ում Պողոսը կիրառում է միևնույն նույնաբանությունը, կիրառելով ՀԿ-յան լեռները (Սինա լեռը ի հակադրություն Սիոն լեռան):

■ **«Սիոն լեռանը»** Հեղինակը համեմատում է Սինա լեռան վրա կապած առաջին ուխտը նոր ուխտի, նոր երկնային քաղաքի հետ (տես՝ Եբր.11:10,16; 13:14; Հայտն.3:12; 21:2,10):

■ **«Կենդանի Աստծո»** Սա բառախաղ է Աստծո ուխտի անվան՝ ՅԱՀՎԵԻ հետ, որը եբրայերենի «լինել» բայի ձևերից է: ՅԱՀՎԵՆ ամենագոյ, մշտագոյ Աստվածն է: ՀԿ-ում Նա երդվում է Իր անձով՝ «կենդանի Աստծով»: Տե՛ս SPECIAL TOPIC: Names For Deity /Հատուկ Թեմա. Աստվածության Անուններ/, Եբր.2:7-ում:

12:23 «անդրանիկների եկեղեցի» Ելից 4:22-ի պատճառով որոշ մեկնաբաններ այս համարները հասկանում են ՀԿ-յան հավատացյալների համար, սակայն համատեքստը պահանջում է, որ այն ընդունվի հավատքի բոլոր ժողովուրդների համար (տես՝ Եբր.11:40): «Անդրանիկ՝ առաջնեկ» բառը վերաբերում է Զրիստոսին. «անդրանիկը»՝

1. Շատ եղբայրների (Աստծո պատկերը, Հռոմ.8:29)
2. Ամբողջ ստեղծագործության (Աստծո պատկերը, Կող.1:15)
3. Մեռելներից (Կող.1:18 և 1 Կորնթ.15:20,23 [երեխայրին])

Նայեք այն բոլոր միջոցներին, թե ինչպես է ներկայացվում նոր ուխտը այս պարբերության մեջ՝

1. Սիոն լեռ
2. Կենդանի Աստծո քաղաքը
3. Երկնային Երուսաղեմը
4. Բյուրավոր հրեշտակներ

«Եկեղեցու» համար տե՛ս Հատուկ Թեմա Եբր.2:12-ում: «Անդրանկության» համար տե՛ս Հատուկ Թեմա Եբր.1:6-ում:

■ **«գրված» /անգլ.՝ հիշատակագրված/** Աստվածաշունչը խոսում է Աստծո երկու գրքի մասին (տես՝ դան.7:10 և Հայտն.20:12): Մեկը Կյանքի Գիրքն է (տես՝ Ելից 32:32; Սաղմ.69:28; Դան.12:1; Դուկ.10:20; Փիլ.4:3; Հայտն.3:5; 17:8; 20:12,15; 21:27): Մյուսը հիշատակարան է (տես՝ Սաղմ.56:8; 139:16; Ես.65:6; Սաղ.3:16): Այս առաջին գիրքը հավատացյալների համար է, երկրորդը՝ երկուսի (տես՝ Հայտն.14:13): Սրանք Աստծո հիշողության վերաբերյալ փոխաբերություններ են: Տե՛ս ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈՒ ԵՐԿՈՒԲ ԳՐԶԵՐԸ, /SPECIAL TOPIC: THE TWO BOOKS OF GOD/

■ **«Աստծուն՝ բոլորի Դատավորին»** ՀԿ-ը Աստծուն պարբերաբար նկարագրում է որպես Դատավորի (տես՝ Ծննդ.18:25; Սաղմ.50:6; 96:13; 98:9; Ես.2:4; 51:5; Եբեմ.11:20; Ողբ 3:59; Եզեկ.7:3,27): Սպասվող Մեսիան նույնպես բնութագրվում է որպես Դատավոր (տես՝ Ես.11:3-4; 16:5): Հայրն ամբողջ դատաստանը հանձնել է Որդու ձեռքը (տես՝ Հովհ.5:22-23,27; 9:39; Գործք 10:42; 17:31; 2 Տիմ.4:1; 1 Պետ.4:5):

■ **«կատարյալ դարձած արդարների հոգիներին»** Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է, որն ակնարկում է «Աստծո կողմից կատարյալ դարձած լինելու և արդյունքները շարունակվելու» մասին: Եբր.11:40-ի համաձայն հնարավոր է, որ սա վերաբերում է գլուխ 11-ի ՀԿ-յան սուրբերին և Զրիստոսի գալուստից առաջ բոլոր հավատացյալներին:

«Կատարյալ» բառի համար տե՛ս Եբր.10:1:

12:24 «Հիսուսին... Միջնորդին» Հիսուսը՝ մեր քահանայապետը և զոհը (1) կանգնած է Հոր առջև մեզ համար և (2) ավելի լավ ուխտ է կապում (տես՝ Եբր.7:22; 8:6,9-10; 9:15; Եբեմ.31:31-34; Եզեկ.36:22-36):

■ **«սրսկման արյանը»** Այս կերպով էին մատուցվում ՀԿ-յան ուխտերը (տես՝ Եբր.9:19; 10:22; 1 Պետ.1:2):

■ **«ավելի լավ»** Տես ամբողջական գրառում Եբր.7:7-ում:

■ **«Աբելի արյունը»** Աբելի արյունը աղաղակում էր վրեժխնդրության համար. Հիսուսի արյունը աղաղակում է ողորմության, ներման և սիրո համար:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 12:25-29
25 Չգուշացե՛ք, չլինի թե մերժեք Նրան, որ խոսում է: Որովհետև եթե երկրի վրա պատգամ տվողին մերժողները չկարողացան ազատվել, որքան ավելի՝ մենք, եթե երկնքից Խոսողին մերժենք,²⁶ Որի ձայնը այն ժամանակ երկիրը շարժեց, իսկ հիմա խոստացել է՝ ասելով. «Մեկ անգամ ևս պիտի շարժեմ ոչ միայն երկիրը, այլ նաև երկինքը»: ²⁷ Այս «Մեկ անգամ ևս»-ը ցույց է տալիս, թե շարժվող բաները պիտի հեռացվեն, այսինքն՝ արարված բաները, որպեսզի այն բաները, որոնք անասանելի են, մնան: ²⁸ Ուստի մենք, անասան մի թագավորություն ստանալով, եկե՛ք շնորհ ունենանք, որով ընդունելի ձևով ծառայենք Աստծուն՝ անկնածությամբ և աստվածային երկյուղածությամբ: ²⁹ որովհետև մեր Աստվածը սպառող կրակ է:

12:25 «Չգուշացե՛ք» Սա ՆԵՐՎԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Սա Եբր.12:15-ում կիրառված բառից տարբերվող հունարեն բառ է: Այս նույն զգուշացումը կարելի է գտնել Եբր.3:12-ում: Քրիստոսի մեջ նոր ուխտի գերազանցությամբ լուսավորվելուց հետո շատ կարևոր է, որ անձը պատշաճ կերպով պատասխանի՝ արձագանքի: Ճշմարտությունն իմանալու և դրան ոչ համապատասխան գործելու վտանգ կա (հավատացյալների և անհավատների համար էլ):

■ **«չլինի թե մերժեք Նրան»** Սա երկու հիմնական զգուշացումներից մեկն է: Մյուսը «մի նահանջեք /ետ մի՛ քաշվեք/»: Սա ԱՌՐԻՍՏ ՉԵՉՈՔ (հասարակ) ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ է: Մենք պետք է հոժարակամ որոշում կայացնենք: Ինչպե՛ս եք վարվելու Հիսուսի հետ՝ մեր հավատքի հեղինակի և կատարողի:

■ **«եթե»** Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ նախադասություն է, որը ենթադրում է ճշգրտություն՝ ըստ հեղինակի տեսանկյան կամ ըստ նրա գրականական նպատակների: Դարձյալ, այս մեկնաբանության կենտրոնում գերազանց ուխտը և անձը մերժելու մեծ պատասխանատվությունն է:

12:26 «Որի ձայնը երկիրը շարժեց» Սա առնչվում է ավելի շուտ այս գլխում նշված Սինա լեռան վրա Մովսեսին Օրենքը տալու հետ (տես՝ Ելից 19:18-19), սակայն սա Մեպտուագինտայից՝ Անգե 2:6-ից նույն մեջբերումն է բառափոխմամբ: Այս մարգարեությունը խոսում է գերությունից հետո տաճարի հետ կապված երկինքների և երկրի նորից շարժվելու մասին (տես՝ Անգե 2:6-9): Նոր տաճարը փառք է հագնելու: Նոր տաճարը առաջին տաճարից ավելի լավն է լինելու: Նոր տաճարը խաղաղություն է բերելու: Այս նկարագրությունները Հիսուսի մեջ ունեցած նոր ուխտի ստվերն են:

12:27 «Մեկ անգամ ևս» Այս աշխարհը անցնելու է: Կարծում եմ Աստված վերստեղծելու է այն (տես՝ 2 Պետ.3:10), որը շատ նման է լինելու այս մեկին, սակայն առանց Ծննդ.3:14,17; Չար.14:11; Հայտն.22:3-ի անեծքի: Աստվածաշունչը սկսում է Աստծո, մարդու և կենդանիների հետ (տես՝ Ես.11:6-9) մի պարտեզի միջավայրում (տես՝ Ծննդ. 1-2) և նույն կերպ էլ ավարտվում է (տես՝ Հայտն.21-22):

12:28 «անասան մի թագավորություն» Սա վերաբերում է նոր ուխտի հոգևոր առանձնահատկությանը: Այն հանդիսանում է Աստծո և մարդու միջև եղած վերջին և մշտական ուխտը:

■ **«եկե՛ք շնորհ ունենանք, որով ընդունելի ձևով ծառայենք Աստծուն՝ անկնածությամբ և աստվածային երկյուղածությամբ»** Սա նկարագրում է նոր ուխտի հավատացյալների կողմից տրված ճիշտ արձագանքը: Երրորդության Աստծո անգուգական շնորհքի համար երախտագիտությամբ լցված ծառայության կյանք (տես՝ Եբր.13:15,21; Հռոմ.12:1-2): Մենք փրկվել ենք ծառայելու հավատքի ընտանիքին (տես՝ 1 Կորնթ.12:7; Եփես.4:12):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈՒ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
SPECIAL TOPIC: THE KINGDOM OF GOD

ՀԿ-ում ՅԱՀՎԵՆ (YHWH) համարվում էր Իսրայելի Թագավոր (տես՝ 1 Թագ.8:7; Մաղ.10:16; 24:7-9; 29:10; 44:4; 89:18; 95:3; Ես. 43:15; 44:4,6), իսկ Մեսիան՝ իդեալական թագավոր (տես՝ Մաղ.2:6; Ես.9:6-7; 11:1-5): Բեթլեհեմում Հիսուսի ծննդյամբ (մ.թ.ա. 6-4) Աստծո Թագավորությունը նոր իշխանությամբ և փրկությամբ (նոր ուխտ, տես՝ Եբրեմ.31:31-34; Եզեկ.36:27-36) մուտք գործեց մարդկության պատմություն: Հովհաննես Մկրտիչը հռչակում էր այդ թագավորության մոտալուտ լինելը (տես՝ Մատթ.3:2; Մարկ.1:15): Հիսուսը պարզ սովորեցնում էր, որ Թագավորությունը Իր և Իր ուսմունքի մեջ է (տես՝ Մատթ.4:17,23; 9:35; 10:7; 11:11-12; 12:28; 16:19; Մարկ.12:34; Ղուկ.10:9,11; 11:20; 12:31-32; 16:16; 17:21): Մինչդեռ այդ Թագավորությունը նաև ապագա Թագավորություն է (տես՝ Մատթ. 16:28; 24:14; 26:29; Մարկ.9:1; Ղուկ.21:31; 22:16,18):

Մարկոսի և Ղուկասի Սինոպտիկ գուգահեռների մեջ հանդիպում ենք «Աստծո Թագավորություն» արտահայտությունը: Հիսուսի ուսմունքների մեջ մեծ տարածում գտած այս թեման բովանդակում է Աստծո մարդկանց սրտերում տիրելու իմաստը, որը մի օր կտարածվի ամբողջ աշխարհով մեկ: Սա արտացոլվում է Մատթ.6:10-ում Հիսուսի աղոթքի մեջ: Մատթեոսը, գրելով հրեաներին, նախընտրել է մի արտահայտություն, որտեղ չի գործածվում Աստծո անունը (Երկնքի Արքայություն), մինչդեռ Մարկոսն ու Ղուկասը՝ գրելով հեթանոսներին, կիրառել են տարածված անվանումը՝ օգտագործելով աստվածության անունը:

Սա կարևոր արտահայտություն է Սինոպտիկ՝ համանման Ավետարաններում: Հիսուսի առաջին և վերջին քարոզները և Նրա առակների մեծամասնությունը գործ ունենին այս թեմայի հետ: Այժմ այն վերաբերում է Աստծո մարդկանց սրտերում թագավորելուն: Չարմանալի է, որ Հովհաննեսը այս արտահայտությունը գործածում է միայն երկու անգամ (և երբեք չի գործածում Հիսուսի առակների մեջ): Հովհաննեսի Ավետարանում «հավիտենական կյանք» խոսքն է բանալի փոխաբերությունը:

Այս արտահայտության հետ կապված լարվածություն է ստեղծվում Հիսուսի երկու գալստյան պատճառով: ՀԿ-ը կենտրոնանում է միայն Աստծո Մեսիայի մի գալստյան վրա՝ ռազմական, դատաստանի, փառավոր գալստյան, սակայն ՆԿ-ը ցույց է տալիս, որ Նա առաջին անգամ եկավ որպես Եսայի 53-ի Չարչարված Ծառան և Չաբ.9:9-ի խոնարհ Թագավորը: Երկու հրեական դարաշրջանները՝ ամբարշտության դարաշրջանը և արդարության նոր դարաշրջանը, մասամբ համընկնում են: Հիսուսը ներկայումս տիրում է հավատացյալների սրտերում, սակայն մի օր տիրելու է ամբողջ ստեղծագործության վրա: Նա վերադառնալու է ՀԿ-ի կանխատեսության համաձայն: Հավատացյալները ապրում են Աստծո Թագավորության «ներկայումս» ի հակադրություն դրա «ապագայի» (տես՝ Գորդն Դ. Ֆիի և Դուգլաս Ստյուարտի *Ինչպես կարդալ Աստվածաշունչը Իր Ամբողջ Իմաստով*, էջ՝ 131-134 /Gordon D. Fee and Douglas Stuart's *How to Read The Bible For All Its Worth*):

12:29 «սպառող կրակ» Հնարավոր է սա ակնարկում է Սինա լեռը (տես՝ 2 Օր.4:24): Մենք չենք համարձակվի մոռանալ, թե Ում ենք պատասխանում (տես՝ Եբր. 10:31): Կրակը կարող է մաքրել և գտել կամ էլ ամբողջովին բնաջնջել: Նա կա՛մ կլինի մեր Երկնավոր Հայրը, կա՛մ էլ մեր Դատավորը Երկնքից: Այն ինչ անում ենք և շարունակում ենք անել Հիսուսի հետ, դա կլինի որոշիչ: Հավատա՛: Հավատքով շարունակի՛ր:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Թվարկեք գլուխ 11 և 12:18-29-ում ներկայացված մարդկանց հատկանիշները, որոնց պետք է հետամուտ լինենք:
2. Արդյո՞ք համար 1-ը սովորեցնում է, որ մեռած մարդիկ դիտում են ողջերին:
3. Ինչո՞ւ է հեղինակը այս գլխում այդքան շատ մարգական փոխաբերություններ կիրառում:
4. Ամբողջ գրքի նպատակի լույսի ներքո, ո՞րն է այս գլխի նպատակը:
5. Ի՞նչ է Աստծո վերջնական նպատակը մեր կյանքի համար (Եբր. 12:10,28):

ԵՔՐԱՅԵՑԻՆԵՐԻ 13

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Աստծուն հաճելի ծառայություն	Ամփոփոյի բարոյական հրահանգներ	Ամփոփիչ հորդորներ	Ինչպես հաճեցնել Աստծուն	Վերջին հանձնարարություններ
13:1-6	13:1-6	13:1-6	13:1-3 13:4 13:5-6	13:1-6
13:7-16	13:7-17 Ամփոփոյի կրոնական հրահանգներ	13:7-16	13:7-9 13:10-16	13:7-16 Հնազանդություն հոգևոր առաջնորդներին
13:17	Աղոթքի խնդրանք	13:17	13:17	13:17-19
13:18-19	13:18-19	Անձնական ուղերձներ	13:18-19	
Օրհնություն և ողջույնի վերջին խոսքեր	Օրհնություն, վերջին հորդոր, հրաժեշտ	Օրհնություն	Փակման աղոթք	Նորություններ, բարեմաղթանքներ և ողջույնի խոսքեր
13:20-21	13:20-25	13:20-21 Հետգրություն	13:20-21 Վերջին խոսքեր	13:20-21
13:22-25		13:22-25	13:22-23 13:24 13:25	13:22 13:23-25

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու Ուղեցույց»)
 ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՑՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Մի քանի բան չեն համապատասխանում «ենթադրյալ» պատմական միջավայրի հետ:

1. Քրիստոնյա առաջնորդները
2. Խրատները ըստ երևույթին հեթանոսներին և ոչ թե հրեաներին

Բ. Այս վերջին գլխում կան մի քանի Պողոսյան մոտեցումներ:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 13:1-6
¹Եղբայրասիրությունը թող հարատևի: ²Մի՛ մոռացեք հյուրասեր լինել, որովհետև դրա շնորհիվ ոմանք առանց իմանալու հրեշտակներ հյուրընկալեցին: ³Հիշեցե՛ք կապանքների մեջ եղողներին՝ որպես թե դուք էլ իրենց հետ բանտարկյալ եք, և նրանց, որ տառապանքներ են կրում, քանի որ դուք ինքներդ էլ մարմնի մեջ եք: ⁴Ամուսնությունն ըստ ամենայնի պատվական է, և անկողինը՝ անարատ, բայց պոռնիկներին և շնացողներին Աստված պիտի դատի: ⁵Ձեր վարքն առանց դրամասիրության լինի, բավարարվեցեք ձեր ունեցածով, որովհետև Նա ասաց. «Ես քեզ երբեք բաց չեմ թողնի և ոչ էլ կլքեմ»: ⁶Այնպես որ, համարձակորեն կարող ենք ասել. «Տերը իմ օգնականն է, և ես չեմ վախենա: Մարդն ինձ ի՞նչ պիտի անի»:

13:1

NASB	«Եղբայրասիրությունը թող հարատևի»
NKJV	«Թող եղբայրական սերը հարատևի»
NRSV	«Թող փոխադարձ սերը հարատևի»
TEV	«Շարունակեք Քրիստոսյանների պես իրար սիրել»
NJB	«Շարունակեք եղբայրների պես իրար սիրել»

Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է (ոչ թե ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ, ինչպես NASB է թարգմանում), որը նշանակում է «բնակվել» կամ «շարունակել»: Այն ինչի մեջ պետք է հարատևեին ընթերցողները «եղբայրասիրությունն» է (*philadelphia*, տես՝ Հռոմ.12:10; 1 Թեսաղ.4:9; 1 Պետ.3:8): Նրանք անցյալում այդպես են վարվել (տես՝ Եբր.6:10; 10:32-35) և քաջալերվում են այժմ էլ այդպես շարունակելու: Սա հստակ նշան է, որ այդ անձը ճանաչում է Աստծուն (տես՝ Հովհ.13:34-45; 15:12,17; 1 Հովհ.2:10; 3:11,14, 17-24; 4:7-21; 2 Հովհաննես 5; տես՝ SPECIAL TOPIC: "ABIDING" IN JOHN'S WRITINGS /Հատուկ Թեմա. «Կենար» Հովհաննեսի Գրքերում/):

Գոյություն ունեն *philoō* մի քանի բաղադրյալ բառեր՝

1. Եղբայրասիրություն, Եբր.13:1
2. Օտարականի /անձանոթի/ հանդեպ սեր, Եբր.13:2
3. Գրամասիրություն, Եբր.13:5

13:2 «մի՛ մոռացեք հյուրասեր լինել /օտարականներին/» Սա ՆԵՐԿԱ ՉԵՉՈՔ (հասարակ) ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Սա «*phileō*» և «օտարական» բառերից կազմված բաղադրյալ բառ է, այսինքն՝ «սեր օտարականի հանդեպ»: Այդ օրերին պանդոկներ չկային, այլ միայն անբարո մարդկանց համար հյուրանոցներ և դրանք շատ թանկ արժեին: Քրիստոնյաներին կոչ է արվում բացելու իրենց տան դռները թափառաշրջիկ ծառայողների առջև (տես՝ Մատթ.25:35; Հռոմ.12:13; 1 Տիմ.3:2; Տիտոս 1:8; 1 Պետ.4:9; 2 Հովհաննես; Դիդարբ 11:4-6):

■ **«առանց իմանալու հրեշտակներ հյուրընկալեցին»** Սա ակնարկ է Ծննդոց 18-ին, որտեղ Աբրահամը դիմավորում է երեք հրեշտակների, որոնք մարդկային կերպարանքով էին (տես՝ նաև *Թորիթ* գլուխ 4-7): Հրեշտակները նաև Գեղեոնին հայտնվեցին (Դատավորաց 6), Մանուէին (Դատավորաց 13), Ղովտին (Ծննդոց 19), Հազարին (Ծննդոց 21): Սա չի նշանակում, որ հնարավոր է հրեշտակներ այցելեն Քրիստոնյաներին, այլ ինչպես որ հնում մարդիկ օտարականներին օգնում էին և օրհնություն ստանում, այնպես էլ հավատացյալները պետք է անեն:

13:3 «Հիշեցե՛ք կապանքների մեջ եղողներին /բանտարկյալներին/» Սա ՆԵՐԿԱ ՉԵՉՈՔ (հասարակ) ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Այս ընթերցողները հետևել էին Մատթ.25:44-45-ում գրված Քրիստոսի խոսքերին, քանի որ Եբր.10:32-36-ում նրանք օգնել էին այլ հավատացյալների: Նրանց բանտարկությունը չարագործության պատճառով չէր, այլ Քրիստոսին հավատալու (տես՝ 1 Պետ.4:14-15): Բանտարկու-

թյունը բոլոր առաջին դարի հավատացյալների համար հավանականություն էր, ինչպես և այսօր աշխարհում գտնվող շատ հավատացյալների համար:

■ **«քանի որ դուք ինքներդ էլ մարմնի մեջ եք»** Հնարավոր է, որ սա վերաբերում էր (1) ֆիզիկական մարմնին (տես՝ 2 Կորնթ.12:2, միևնույն հունարեն քերականական ձևը), որ ենթակա է հալածանքների և բանտարկության կամ (2) Քրիստոսի մարմնին (չնայած տեքստում ընդհանրապես առկա չէ հունարենում դրվող հոդը), Եկեղեցին, որը հալածանքների էր ենթարկվում:

13:4 «Ամուսնությունն ըստ ամենայնի պատվական է» ԲԱՅ չկա: Եթե մեկն օգտագործում է ՍԱՀՄԱՆԱԿԱՆ «է», ապա հայտարարությունը կեղծ ուսմունքի դեմ է (տես՝ 1 Կորնթ.7:38, որն ամուսնությունը ամուրիությունից բարոյապես ստորադասում է կամ 1 Տիմ.4:3): Եթե մեկը կիրառում է ՀՐԱՄԱՅԱԿԱՆ «Թող...լինի...», ինչպես Եբր. 13:1-ում NASB թարգմանության մեջ, ապա այն հորդորում է հեթանոս մշակույթի մեջ անբարո հակումների դեմ (Եբր. 13:4 այս տարբերակի օրինակներից է):

■ **«ամուսնական անկողինը՝ անարատ պետք է լինի»** Ամուսնությունը Աստծուց պարզ է և բոլորի համար օրինակ (տես՝ Ծննդ.1:28; 9:1,7): Այն մեղք չէ և ոչ էլ ամոթալի է: Ճգնափորության վերաբերյալ հույն փիլիսոփայական այն գաղափարը, տեսակետը, որ մարմինը չար է և որ դրա ցանկությունները և կարիքները ուրանալը դրսևորում է գերհոգևորություն, ազդել էր առաջին եկեղեցու վրա և մինչև օրս էլ ազդում է եկեղեցու վրա: «Անարատ» տերմինը կիրառվում է Եբր.7:26-ում՝ նկարագրելու Հիսուսի՝ մեր քահանայապետի, սեռական մաքրությունը: Այն կիրառվում է Մեպտուազինտայում՝ շնության շուրջ:

Այլասերվածության դեմ այս զգուշացումը անսպասելի է, եթե այս գիրքը գրված է հրեա ժողովրդին: Առաջին դարի հեթանոսական մշակույթին հատկանշական էր սեռական այլասերվածությունը, բայց ոչ հրեա հասարակության մեջ: Գոյություն ունեն շատ անհայտ երևույթներ կապված Եբրայեցիների նամակը ստացողների և պատմական միջավայրի հետ:

■ **«պոռնիկներ»** ՀԿ-ում այս տերմինը նշանակում է երկու չամուսնացած մարդկանց միջև սեռական կապ, սակայն ՆԿ-ում այն ունի սեռական տարբեր տեսակի անբարոյության ավելի լայն նշանակություն: Անգլերենի «պոռնոգրաֆիա» բառը ծագել է հունարեն այս տերմինից:

■ **«շնացողներ»** Սա վերաբերում է երկու մարդկանց սեռական կապին, որոնցից մեկը կամ երկուսն էլ ամուսնացած են այլ մարդու հետ: Առաջին եկեղեցու համար սեռական մեղքերը մեծ մտահոգություն էին հեթանոսական մշակույթի մեջ իշխող անբարոյության և դրա հետ կապված պաշտամունքի արարողությունների (տես՝ Գաղ.5:19-21):

■ **«Աստված պիտի դատի»** Աստծո դատաստանը մարդկանց անպատշաճ սեռական հարաբերությունների համար կարելի է տեսնել Հռոմ.1:24-32; Գաղ.5:19-21; Եփես.4:19; Կող.3:5; Հայտն.21:8; 22:15: Սակայն կան մի քանի այլ հատվածներ էլ ինչպես օրինակ 1 Կորնթ.5:5 և 1 Տիմ.1:9-11, որոնք վերաբերում են այն հավատացյալներին, որոնք կատարում են այս անբարո գործերը: Առաջին եկեղեցին ստիպված էր առերեսվելու հավատացյալների կյանքերում անբարոյության հետ և փորձելու որոշակի կանոններ սահմանել:

1. Նրանք պետք է ապաշխարեն
2. Սյուս հավատացյալները պետք է օգնեն նրանց (տես՝ Գաղ.6:1; Հակ.5:16, 19-20)
3. Հավատացյալները չպետք է անբարո հավատացյալների համար լինեն «լավագույն» ընկերներ (տես՝ 1 Կորնթ.5:9-13):

Բարոյականության, ամուր ընտանիքների, հյուրասիրության և եղբայրասիրության Քրիստոնեական վկայությունը այնքան կարևոր են մեր օրերում, որքան առաջին դարում:

13:5

NASB

NKJV

NRSV, TEV

NJB

«Համոզվեք որ ձեր բնավորությունը զերծ է դրամասիրությունից»

«թող որ ձեր վարքը լինի առանց ազահուության»

«ձեր կյանքերը զերծ պահեք արծաթասիրությունից»

«Ձեր կյանքերից դուրս հանեք ազահությունը»

Կրկին կիրառված է ՀՐԱՄԱՅԱԿԱՆ և առանց բայի: Գոյականը բաղադրյալ բառ է, կազմված՝

1. Ալֆա ժխտական մասնիկով
2. *phileō* (երրորդ բաղադրյալ բառը *phileō* կազմությամբ Եբր.13:1-ից սկսած), սիրել
3. արծաթադրամ

Դա նշանակում է «ոչ դրամասեր»: Խնդիրը դրամը չէ, այլ դրամասիրությունը (տես՝ Ղուկ.12:15; 16:14; 1 Տիմ.3:3; 6:10,17-19; 2 Տիմ.3:2):

■ **«բավարարվեցեք /գոհացեք/ ձեր ունեցածով»** ՆԵՐԿԱ ԿՐԱՎՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է կիրառված հարամայական ձևով: Սա երջանկության համար կարևորագույն հարց է: Այսպիսի մոտեցումը չի կենտրոնանում ֆիզիկականի և անմիջականի վրա: Գոհունակությունը, բավարարվածությունը հրաշալի պարզև է Աստծուց, որը պետք է ամեն օր հավատքով ընդունել և գործադրել (տես՝ 2 Կորնթ.9:8; Փիլ.4:11-12; 1 Տիմ.6:6-10):

■ **«Ես քեզ երբեք չեմ թողնի և ոչ էլ կլքեմ»** Սա չամրագրված մեջբերում է երկու ընդգծված կրկնակի ժխտականներով, որը վերցված է Իր առաջնորդներին և ժողովրդին տրված Աստծո խոստումներից: Աստված մեզ հետ է և մեր կողմից (տես՝ 2 Օր.31:6-7; Հեսու. 1:5; 1 Մնաց.28:20; Ես.41:10,13,14,17): Հավատացյալները չպետք է վախենան ամենօրյա հոգսերից (տես՝ Մատթ.6:19-34):

13:6 «Տերը» Սա մեջբերում է Սեպտուագիանայից՝ Սաղմ.118:6, սակայն այս նույն ճշմարտությունը նաև կարելի է գտնել Սաղմ.56:4,11-ում:

■ **«Տերը իմ օգնականն է»** Սաղմոս 118-ը Աստծո սիրո, ներման, ներկայության և օգնության հանդեպ վստահության գորավոր խոսք է:

«Օգնական» գոյականը ՆԿ-ում միայն այստեղ է կիրառվում (սակայն ԲԱՅԸ Եբր.2:18-ում), սակայն հաճախ է կիրառվում LXX-ում: Սա նշանակում է «օգնություն տալ», «ինչ-որ մեկին փրկության հասնել»:

■ **«Մարդն ինձ ի՞նչ պիտի անի»** Այս հրաշալի ճշմարտությունը (տես՝ Սաղմ.56:4,11; 118:6) նաև սահմանվում է մի փոքր այլ տերմիններով Հռոմ.8:31բ-ում և սպա լուսաբանվում Եբր.8:32-39-ում:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 13:7-16
⁷Հիշեցե՛ք ձեր առաջնորդներին, որոնք Աստծո Խոսքը բերեցին ձեզ. *նրանց* վարքի արդյունքը տեսնելով՝ նրանց հավատին հետևեցե՛ք: ⁸Հիսուս Քրիստոսը նույնն է երեկ, այսօր և հավիտյան: ⁹Տեսակ-տեսակ և օտարոտի ուսմունքներով մի՛ տարվեք, որովհետև լավ է, որ սիրտը շնորհով հաստատվի, ոչ թե կերակուրներով, որոնք ոչ մի օգուտ չեն տվել դրանցով զբաղվողներին: ¹⁰Մենք մի գոհասեղան ունենք, որից իրավունք չունեն ուտելու նրանք, ովքեր խորանին են ծառայում: ¹¹Որովհետև այն անասունների մարմինները, որոնց արյունը քահանայապետի ձեռքով մեղքի համար սրբարան էր տարվում, այրվում էին բանակից դուրս: ¹²Ուստի Հիսուսն էլ, որպեսզի ժողովրդին Իր արյամբ սրբի, դարպասից դուրս չարչարվեց: ¹³Ուրեմն եկե՛ք Իր մոտ գնանք բանակից դուրս՝ Նրա նախատինքը կրելով: ¹⁴Որովհետև մենք այստեղ մնալուն քաղաք չունենք, այլ որոնում ենք այն, որ պիտի գա: ¹⁵Ուստի Նրա միջոցով շարունակ օրհնության պատարագ մատուցենք Աստծուն, Նրա անունը փառաբանող շրթունքների պտուղը: ¹⁶Իսկ բարերարությունն ու բաժնեկցելը մի՛ մոռացեք, որովհետև Աստված այդպիսի պատարագներ է հավանում:

13:7 «Հիշեցե՛ք» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Ակնարկ է աղոթելու առաջնորդների համար և նրանց պատվելու: Սա մեկ այլ, սակայն նմանատիպ խոսք է Եբր.13:3-ից: Հավատացյալները պետք է գիտակցեն իրենց առաջնորդների համար աղոթելու անհրաժեշտությունը և պատվեն Քրիստոսի մարմնին մատուցած նրանց սիրո ծառայությունը (տես՝ Եբր.13:3) և եկեղեցու առաջնորդներին (տես՝ Եբր.13:7,17,24; 1 Թեսաղ.5:12-13):

■ **«ձեր առաջնորդներին»** Համար 17 և 24 առնչվում են այդ ժամանակի առաջնորդների հետ, ուստի Եբր.13:7 պետք է վերաբերի այն առաջնորդներին, ովքեր առաջինը քարոզեցին ավետարանը, սակայն այժմ մահացած են:

■ **«որոնք Աստծո Խոսքը բերեցին /խոսեցին/ ձեզ»** Սա է Քրիստոսի առաջնորդների գործը: Նրանք չեն սովորեցնում կամ քարոզում իրենց հայտնագործությունները կամ անձնական, մշակութային նախասիրությունները, այլ Հիսուս Քրիստոսի ավետարանը: Մրա համար մենք պատվում ենք նրանց, հարգում և աղոթում նրանց համար:

■ **«նրանց վարքի արդյունքը տեսնելով»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է, կիրառված որպես ՀՐԱՄԱՅԱԿԱՆ: Այս առաջնորդները ինչպես Եբրայեցիների 11 գլխում անվանակոչված հավա-

տարիմները, իրենց կյանքի ընթացքում և մինչև մահ հավատարիմ մնացին: Նրանց կյանքերը վկայեցին իրենց պատգամների հավաստիության մասին:

■ **«նրանց հավատին հետևեցե՛ք»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՉԵՉՈՔ (հասարակ) ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Մեր հեղինակը իր ընթերցողներին կոչ է անում նմանակել իրենց առաջնորդների հավատքը: Պողոսը հաճախ է հավատացյալներին քաջալերում նմանակելու՝ հետևելու իր հավատքին (տես՝ 1 Կորնթ.4:16; 11:1-2; Փիլ.3:17; 4:9; 1 Թեսաղ.1:6; 2 Թեսաղ.3:7,9):

13:8 «Հիսուս ... նույնը» Գլուխ 11-ի հերոսները լավ օրինակներ էին. անցյալի և ներկայի առաջնորդները լավ օրինակներ էին. Քրիստոսը մեր մեծագույն օրինակն է: Նրա բնավորությունը և հավատարմությունը երբեք չեն փոխվում (տես՝ Սաղմ.102:26-27, մեջբերված Եբր.1:12-ում): Այս նույն աստվածաբանական հայատարարությունն արվել է ՅԱՀՎԵԻ համար Մաղ.3:6-ում: Աստծո բնավորությունը և ողորմությունը հաստատուն են՝ մշտական են և հետևաբար նաև Հիսուս Քրիստոսինը:

13:9 «մի՛ տարվեք» Սա ՆԵՐԿԱ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է Ժխտական մասնիկով, որը սովորաբար նշանակում է դադարեցնել այն գործողությունը, որն ընթացքի մեջ է: Ունկնդիրներից ոմանք խորհում էին «նահանջելու» մասին (տես՝ Եբր.2:1; 10:38): ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՄԵՌԸ ակնարկում է Սատանայի կամ դիվականի գործողությունները՝ ակտիվությունը:

■ **«տեսակ-տեսակ և օտարոտի ուսմունքներ»** Թե ինչ էր ստույգ բովանդակում սա, իրականում հայտնի չէ, սակայն հրեա և հեթանոս արարողությունների նմանատիպ համադրություն է դատապարտվում Կող.2:16-23-ում:

Կարծես թե գլուխ 13-ի բաժինները Պողոսի փակման խոսքերը լինեն, որոնք ավելացվել են ժողովարանին ուղղված նամակին: Այս գլխի որոշ բաժիններ (այսինքն՝ Եբր.13:4-5) հարմար են տարբեր (խառը) եկեղեցիների միջավայրի և ոչ թե ժողովարանի համար:

- | | |
|-------------|---|
| NASB | «որովհետև լավ է, որ սիրտը շնորհքով գորանա» |
| NKJV | «Որովհետև լավ է, որ սիրտը շնորհքով հաստատվի» |
| NRSV | «որովհետև սրտի համար լավ է շնորհքով գորանալը» |
| TEV | «լավ է Աստծո շնորհքից ներքին ուժ ստանալը» |
| NJB | «ավելի լավ է ներքուստ գորանալու համար ապավինել շնորհքին» |

Սա ՆԵՐԿԱ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԱՆՈՐՈՇ է: Նամակի ընթերցողները կարիք ունեն հաստատվելու ոչ թե ծիսական, կենդանիների զոհաբերության կամ կերակուրների վերաբերյալ օրենքների, այլ Հիսուս Քրիստոսի մեջ ունեցած Աստծո անսահման և անսասան շնորհքի վրա (այսինքն՝ ավետարանի. տես՝ Եբր.13:7): Նրանք վարանում էին Մովսեսի և Հիսուսի միջև: Հիսուսը՝ Հոր անփոփոխ Խոսքը, շատ ավելի գերազանց է առաջին ուխտի խոսքերից և ծիսակարգերից:

Հասկանալով Աստծո անփոփոխ բնավորությունն ու սերը, որոնք շատ հստակ արտահայտվում են Հիսուսի կյանքի, ուսմունքի և մահվան մեջ (ավետարանը), ահա թե ինչն է հավատացյալներին քաջալերում: Հավատացյալների սրտերն ու մտքերը գորանում են ավետարանի գիտության և Մեծ Հովվի հետ անձնական փոխհարաբերության շնորհիվ, ոչ թե արտաքին ծեսերի և կանոնների շնորհիվ (Մովսեսական հին ուխտը):

Հեղինակը հաճախ անդրադառնում է «սրտի» հոգևոր թեմաներին (տես Հատուկ Թեմա Եբր.3:8-ում): Նա մի քանի ՀԿ-յան տեքստեր է մեջբերում՝

1. Եբր.3:8,15; 4:7, «մի՛ խստացրեք ձեր սրտերը» (Սաղմ.95:8)
2. Եբր.3:10, «սրտով մոլորված են» (Սաղմ.95:10)
3. Եբր.8:10, «նրանց սրտում պիտի գրեմ» (Երեմ.31:33)

Ապա այս ճշմարտությունները ամփոփում են Եբր.3:12; 4:12 և 10:22 համարներում: Սիրտը ներկայացնում է մարդկանց մտավոր, զգացմունքային և կամային առանձնահատկությունները: Քրիստոնեությունը աշխատում է մեղավոր մարդկության ներքին կարիքների հետ, մինչդեռ դա հուղայականությունը չկարողացավ անել:

■ **«սիրտ»** Տե՛ս Հատուկ Թեմա Եբր.3:8-ում:

■ **«ոչ թե կերակուրներով, որոնք ոչ մի օգուտ չեն տվել դրանցով զբաղվողներին»** Սա Ղևտացիների 11 գլխի ակնհայտ ակնարկ է: Քրիստոսով կերակուրների օրենքները անցան (տես՝ Մատթ.15:11; Մարկ.7:18-23; Գործք 10; Կող.2:16-23): Դրանք այլևս հավատացյալներին փրկության բեռ չէին (տես՝ Գաղատացիների 3; Գործք 15), սակայն եկեղեցու միջավայրում հավատացյալները դեռևս պետք է

տեղյակ լինելին «ավելի տկար եղբայրների» մասին (տես՝ Գործք 15:19-20; Հռոմ.14:1-15:6; 1 Կորնթա-ցիների 8; 10:23-33) և փորձելին չվիրավորել նրանց տկար հասկացողությունը:

13:10 «Մենք մի գոհասեղան ունենք» Կարծես թե նմանությունը՝ անալոգիան հոգևոր (երկնային) խորանն է, ոչ թե ֆիզիկական գոհասեղանը, հետևաբար սա վերաբերում է հավատացյալների համար Հիսուսի գոհաբերությանը: Սա Քրիստոսի միջոցով Աստծո մոտ մեզ համար մուտքի իրավունքի հզոր փոխաբերություն է:

■ **«իրավունք չունեն ուտելու»** Սա ևս մեկ ակնարկ է Ղևտացիների 16:

13:11 «որպես պատարագ մեղքի համար, այրվում էին բանակից դուրս» Սա մեկ այլ ակնարկ է Ղևտ.16:27-ի՝ Քավության Օրվա ծիսակարգերին:

13:12 «Հիսուսն էլ... դարպասից դուրս չարչարվեց» Սա ռաբբիական բառախաղ է, ինչպես որ ՀԿ-յան զոհերը ճամբարից՝ բանակից դուրս էին տարվում, այնպես էլ Հիսուսը խաչվելու համար դուրս բերվեց Երուսաղեմ քաղաքից:

13:13 «Ուրեմն եկե՛ք Իր մոտ գնանք բանակից դուրս» Սա գրքի կարևորագույն խոսքերից է: Այն ՆԵՐԿԱ ՉԵՉՈՔ (հասարակ) ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ է, որն արտահայտում է շարունակական գործողու-թյուն և ավելացնում է պայմանականության տարր (սա վերջին հորդոր և զգուշացում է «նահանջելու» դեմ): Հավատացյալները անկախ հանգամանքներից պետք է տեսանելի կերպով նմանվեն Նրան և կրեն Նրա նախատիվը: Ահա այն հստակ կոչը, որն ուղղված է այս «պատսպարված» ժողովարանական հավատացյալներին, «մտնել Քրիստոնեության Մեծ Հանձնարարականի կատարյալ լույսի մեջ» (տես՝ Մատթ.28:19-20; Գործք 1:8):

13:14 «քաղաքը» Սա փոխաբերություն է երկնքի համար, որտեղ կիրառվում է Խոստացյալ Երկրի իսրայելական մայրաքաղաքը (տես՝ Եբր.11:10,16; 12:22; Հովհ.14:2): Նմանատիպ մի փոխաբերություն դիտարկվում է Եբր.11:14-ում՝ «մի երկիր»:

13:15 «Նրա միջոցով» Սա վերաբերում է Հիսուսին, որն անվանապես նշվում է Եբր.13:12-ում, ով Երուսաղեմի դարպասից դուրս Իր արյամբ սրբացրեց Իր ժողովրդին: Բոլոր տեսակի հոգևոր օրհնությունները տրվում են Նրա միջոցով:

■ **«շարունակ օրհնության պատարագ մատուցենք»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ է: Պատարագների համակարգը, որը տրվել էր Իսրայելին, մեղքի խնդիրը լուծելով Աստծո հետ փոխհարաբերություն զարգացնելու համար, պարունակում էր հինգ գոհաբերություն:

- Ա. Երկուսը պատվեր էր՝ հրաման.
 1. «մեղքի պատարագը»
 2. «հանցանքի կամ անիրավության» պատարագը
- Բ. Երեքը կամավոր էին.
 1. Ողջակեզ
 2. Յորենի՝ հացահատկի պատարագ
 3. Խաղաղության պատարագ

Այս վերջին երեք պատարագների հետ կապված է նշվում գոհունակության և օրհնության գաղափարը (տես՝ Ղևտ.7:12): Այս պատարագները մանրամասնորեն նկարագրվում են Ղևտացիների 1-7 գլուխներում: Սաղմոսները հաճախ են նշում անուշահոտության այս առանձնահատկությունը (տես՝ Սաղմ.27:6; 50:14; 69:30; 107:22; 116:17): «Օրհնության պատարագ» արտահայտությունը գալիս է Սեպտուագիներ-տայից (տես՝ Ղևտ.7:2,3,5; 2 Մնաց.29:31; 33:16; Սաղմ.49:14,23; 106:22):

■ **«շրթունքների պտուղը»** Այս արտահայտությունն արտացոլում է Ես.57:19 և Ովսեա 14:3-ը Սեպ-տուագիներտայից: Այսպիսի հատվածները գերության մեջ գտնվող իսրայելացիների կողմից կիրառվում էին փոխարինելու կենդանիների գոհաբերության վայրում բառացի փառաբանությանը՝ օրհնումը քանի որ Տաճարը հիմնովին ավերվել էր Նաբուգոդոնոսոր II նեո-բաբելոնական արքայի կողմից, Ք.Ա. 586-ին: Այն դարձյալ ավերվեց Հռոմի կողմից մ. թ. 70-ին: Այս գրքի գրվելու ժամանակն անհայտ է:

NASB «որ գոհություն են մատուցում Նրա անվանը»
NKJV «գոհություն մատուցելով Նրա անվանը»
NRSV «որ դավանում են նրա անունը»

Հավատացյալներին համար Աստծուն փառաբանելը Հիսուսին (Նրա անունը գործածելով ինչպես որ Մատթ.28:19-20 կամ Հռոմ.10:9-13) որպես Տեր (տես՝ TEV, որն արտացոլում է Փիլ.2:6-11) դավանությունն է (*homologeo*):

13:16 «իսկ բարերարությունը մի՛ մոռացեք» Սա ՆԵՐԿԱ ՉԵՉՈՔ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է ժխտական մասնիկով, որը սովորաբար նշանակում է ընթացքի մեջ գտնվող գործողությունը դադարեցնել: Աստծուն հաճելի է, որ Իր երեխաները սիրում և օգնում են միմյանց (տես՝ Փիլ.4:18):

Հրեական համատեքստում այս «բարի գործեր /բարերարություններ/» (*koinōnia*) տերմինը հավանաբար վերաբերում է ողորմություն տալուն (տես՝ Մատթ.6:1), շարաթական դրամական նվիրատվություն ժողովարանի անդամների կողմից, որպեսզի կարիքավորների համար սնունդ գնվեր: Հրեաները այս քայլը համարում էին արդարության գործ:

■ «բաժնեկցել»

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. KOINŌNIA (ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ)
SPECIAL TOPIC: KOINŌNIA (FELLOWSHIP)

«Հաղորդակցություն» տերմինը (*koinōnia*) նշանակում է՝

1. անձի հետ մտերմիկ շփում
ա. Որդու հետ (տես՝ 1 Հովհ.1:6; 1 Կորն.1:9)
բ. Հոգու հետ (տես՝ 2 Կորն.13:13; Փիլ.2:1)
գ. Հոր և Որդու հետ (տես՝ 1 Հովհ.1:3)
դ. Ուխտի մեջ գտնվող այլ եղբայրների և քույրերի հետ (տես՝ 1 Հովհ.1:7; Գործք 2:42; Գաղ.2:9; Փիլիմոն 17)
2. մտերմիկ շփում ինչ-որ բաների կամ խմբերի հետ
ա. ավետարանի հետ (տես՝ Փիլ.1:5; Փիլիմոն 6)
բ. Քրիստոսի արյան հետ (տես՝ 1 Կորն.10:16)
գ. ոչ խավարի հետ (տես՝ 2 Կորն.6:14)
դ. չարչարանքի հետ (տես՝ Փիլ.3:10; 4:14; 1 Պետ.4:13)
3. ընծա կամ նվիրատվություն՝ առատաձեռնությամբ (տես՝ Հռոմ.12:13; 15:26; 2 Կորն.8:4; 9:13; Փիլ.4:15; Եբր.13:16)
4. Քրիստոսի միջոցով Աստծո շնորհքի պարգևը, որը վերականգնում է մարդկության փոխհարաբերությունը Նրա հետ և Իր քույրերի, եղբայրների հետ:
Սա հաստատում է հորիզոնական փոխհարաբերությունը (մարդ - մարդ), որը բխում է ուղղահայաց փոխհարաբերությունից (մարդ-Արարիչ): Այն նաև շեշտադրում է Քրիստոնեական փոխհարաբերության կարիքը և ուրախությունը: Բայի ժամանակը ընդգծում է այս համայնքի փորձառության սկիզբը և ընթացքը (տես՝ 1:3 [երկու անգամ] 6, 7): Քրիստոնեությունը համագործակցություն է:

■ «որովհետև Աստված այդպիսի պատարագներ է հավանում» Ուշադրություն դարձրեք, որ Եբր.13:15-ում ընդունելի պատարագը Քրիստոսի հանդեպ հավատքի դավանությունն էր, իսկ այժմ Քրիստոսի նման ապրելակերպը: Անշուշտ այս երկուսն էլ ավետարանն են:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 13:17
¹⁷Լսեցե՛ք ձեր առաջնորդներին և հնազանդ եղե՛ք նրանց, որովհետև նրանք հսկում են ձեր հոգիների համար՝ որպես մարդիկ, որ հաշիվ պիտի տան, որպեսզի ուրախությամբ գործեն և ոչ թե վշտով, քանի որ դա անօգուտ կլինի ձեզ համար:

13:17 «Լսեցե՛ք ... հնազանդ եղե՛ք» Սա ՆԵՐԿԱ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ (Ա. Տ. Ռոբերտսոնը ներկայացնում է այն որպես ՉԵՉՈՔ ՍԵՌ) ՀՐԱՄԱՅԱԿԱՆ և ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Թեև մարդիկ Քրիստոսի մեջ ազատ են, մենք պետք է մեր անձերը հնազանդեցնենք հոգևոր իշխանությանը՝ մեր հոգևոր աճման և ծառայության համար (տես՝ Եբր.13:7; 1 Կորնթ.16:16; 1 Թեսաղ.5:12-13):

Քրիստոնյա առաջնորդներին ենթարկվելու քաջալերության այս խոսքը մեր օրերում շատ անհրաժեշտ է, երբ ցանկացած տեսակի իշխանությունների հանդեպ ցուցաբերվում է անհարգալից վերաբերմունք, իսկ անհատի իրավունքների և իշխանության վրա չափից ավելի շեշտադրում է կատարվում:

Աստված ոմանց առաջնորդներ է կարգել Իր ժողովրդի վրա (տես՝ Թվոց 16:3-5): Մենք նրանց պատվում ենք իրենց կոչման, սովորեցնելու, նվիրման և ծառայության համար: Այնուհանդերձ գոյություն ունի մի հակառակ «խրամատ»: Աստծո կոչումը շահագործվել է իշխանություն ունեցող որոշ մարդկանց կողմից: Պետք է որ լինի հավասարակշռություն՝ փոխադարձ հարգանք, համագործակցող հոգևոր մթնոլորտ, Աստծո ժողովրդի և Աստծո առաջնորդների միջև: Բոլոր հավատացյալներն էլ կանչված են միմյանց հնազանդության կյանքի՝ ի դեմս Քրիստոսի հանդեպ ունեցած հարգանքի (տես՝ Եփես.5:21):

■ **«նրանք հսկում են»** Այս տերմինը նշանակում է «արթուն լինել», «աչալուրջ» (տես՝ Մարկ.13:33; Ղուկ.21:36; Եփես.6:18), որը փութաջան հսկման և ծառայության փոխաբերություն է (տես՝ Ես.62:6; Եզեկ.3:17; 33:7-9):

■ **«որպես մարդիկ, որ հաշիվ պիտի տան»** Առաջնորդները պատասխանատու են իրենց ծառայության համար և Աստծուն հաշիվ են տալու (տես՝ 1 Կորնթ.3:10-15): Նրանք տնտեսներ են:

■ **«որպեսզի ուրախությամբ գործեն և ոչ թե վշտով»** Համայնքի վերաբերմունքը չի որոշում ծառայությունը, սակայն այդ գործընթացը դարձնում է կա՛մ հաճելի, կա՛մ էլ ցավոտ:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 13:18-19
¹⁸Աղոթեցէք մեզ համար, քանի որ համոզված ենք, թե բարի խիղճ ունենք և կամենում ենք ամեն բանի մեջ ուղիղ ապրել: ¹⁹Սակայն հատկապես աղաչում են, որ սա անեք, որ կարողանամ շուտով վերադառնալ ձեզ մոտ:

13:18 «Աղոթեցէք մեզ համար» Առաջնորդների միջոցով և առաջնորդների համար աղոթելը շատ կարևոր է (տես՝ Եփես.6:18-19; Փիլ.4:6; 1 Թեսաղ.5:25; 1 Տիմ.2:1-2,8): Հոգնակի թիվը հավանաբար վերաբերում է ծառայողական խմբին, ներառյալ Տիմոթեոսը (տես՝ Եբր.13:23):

■ **«քանի որ համոզված ենք, թե բարի խիղճ ունենք և կամենում ենք ամեն բանի մեջ ուղիղ ապրել»** Վերաբերմունքը և ապրելակերպը առաջնորդների համար հիմք են հանդիսանում: Եբրայեցիների հեղինակը մի քանի անգամ նշել է «խիղճ» տերմինը (տես՝ Եբր.9:9,14; 10:2,22; 13:18): Հիսուսի փրկագործության գործությունը և ներբնակվող Հոգին հեռացրել է Աստծո վախն ու անցյալի մեղքերի ամոթը և փոխարինել դրանք ուրախությամբ, խաղաղությամբ, վստահությամբ, ոչ թե մարդկային գործերի միջոցով, այլ ավետարանի: Ավետարանի այս գիտությունը հանդիսանում է փրկության սաղավարտը (տես՝ Եփես.6:17; 1 Թեսաղ.5:8):

Որոշ մեկնաբաններ այս համարը դիտարկել են հեղինակին ուղղված որոշակի մեղադրանքների հետ առնչվող խոսք (1 Կորնթացիներում և Գաղատացիներում Պողոսի իրավիճակի նման):

13:19 Սա ավելի շուտ գաղտնի համար է: Ինչ-որ առումով հեղինակի այցը կապված էր նրանց աղոթքների հետ: Այս խոսքը բնորոշ է Պողոսին (տես՝ Փիլիմոն 22): Աղոթքն արձակում է ծառայության համար պտղաբեր գործություն: Հավատացյալների աղոթքները ազդում են Աստծո և ուրիշների վրա:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 13:20-21
²⁰Արդ, խաղաղության Աստվածը, որ մեռելներից հարուցանեց մեր Տեր Հիսուսին՝ հավիտենական Ուխտի արյան շնորհիվ հոտի Մեծ Հովվին, ²¹թող ձեր մեջ հաստատի ամեն մի բարի գործ՝ Իր կամքը կատարելու համար, ներգործելով ձեր մեջ այն, ինչ Իր առջև հաճելի է Հիսուս Քրիստոսի միջոցով, Ում փառք հավիտյանս հավիտենից: Ամեն:

13:20 «Արդ, խաղաղության Աստվածը» Հայր Աստծո համար այս տիտղոսը՝ անունը, Պողոսի թղթերում միայն այստեղ է կիրառվում (տես՝ Հռոմ.15:33; 16:20; 1 Կորնթ.14:33; 2 Կորնթ.13:11; Փիլ.4:9; 1 Թեսաղ.5:23; «Խաղաղության Տերը»՝ 2 Թեսաղ.3:16):

■ **«որ մեռելներից հարուցանեց»** ՆԿ-ը ընդհանրապես պատկերում է Հայր Աստծուն որպես Հիսուսին մեռելներից հարություն տվողի (տես՝ Գործք 2:24; 3:15; 4:10; 5:30; 10:40; 13:30,33,34,37; 17:31; Հռոմ.6:4,9; 10:9; 1 Կորնթ.6:14; 2 Կորնթ.4:14; Գաղ.1:1; Եփես.1:20; Կող.2:12; 1 Թեսաղ.1:10): Սա ցույց է տալիս Հոր կողմից Հիսուսի կյանքի, ուսմունքների և գոհի հավանությունը՝ ընդունված լինելը: Սակայն գոյություն ունեն այլ տեքստեր, որոնք պնդում են, որ հարության մեջ գործում էր Հոգին (տես՝ Հռոմ.8:11) կամ հենց Ինքը Որդին (տես՝ Հովհ.2:19-22; 10:17-18): Աստվածաբանորեն ասած, Երրորդության բոլոր երեք անձերը գործում էին փրկագործության բոլոր գործողություններում:

■ «Մեծ Հովիվ» «Հովիվ» տերմինը ՀԿ-յան փոխաբերություն է՝

1. ՅԱՀՎԵԻ համար (տես՝ Ծննդ.49:24; Սաղմ.23:1; 78:52; 80:1; Ժող.12:11; Ես.40:11; 63:11; Երեմ.31:10; Եզեկ.34)
2. Իր ժողովրդի առաջնորդների համար (տես՝ Երեմ.10:21; 50:6-7; Եզեկ.34:2-3; Չաք.11:3,5,15,17)
3. Եկող Մեսիայի՝ Դավթի որդու համար (տես՝ Սաղմ.78:70-72; Եզեկ.34:23-24; 37:24; Միք.5:4; 7:14; Չաք.13:7; Հովի.10:2,11,14; 1 Պետ.2:25; 5:4)

Մի քանի անգամ ՀԿ-ում (տես՝ Թվոց 27:17; 3 Թագ.22:17; 2 Մնաց.18:16; Եզեկ.34:5; Չաք.10:2) Աստծո ժողովուրդը նկարագրվում է որպես ցիրուցան եղած և առանց հովվի, սակայն այժմ Մեծ Հովիվը եկել է։ Նա մեզ ազատել է և մեզ հետ է։

■ «արյան շնորհիվ» Մա վերաբերում է Նրա տված կյանքին, որը Նոր Ուխտի սկիզբը դրեց (տես՝ Չաք.9:11; Մարկ.14:24; 1 Կորնթ.11:25):

■ «հավիտենական ուխտ» Դժվար է այլ «հավիտենական» ուխտեր առանձնացնել, քանի որ ինչպես Եբրայեցիների թուղթն է ցույց տալիս, Մովսիսական ուխտը պայմանական էր և մարդու տկարության պատճառով հավիտենական չէր։ ՀԿ-ը արձանագրում է պայմանական և ոչ պայմանական ուխտեր (այսինքն՝ Ելիցը, Ծննդ.15:17-21)։ Աբրահամի հետ ուխտը, ըստ որի բոլոր ազգերը պետք է օրհնվեին, ոչ պայմանական է (այսինքն՝ մշտնջենական ուխտ), և հետևաբար՝ հավիտենական (տես՝ Ծննդ.17:7,13,19; Սաղմ.105:9-10)։ Դավթի հետ ուխտը, որն առաջին անգամ հայտնվեց 2 Թագավորաց 7-ում, Մեսիայի՝ Դավթի որդու շուքն էր, և այս ուխտը ոչ պայմանական է, ուստի և հավիտենական (տես՝ Սաղմ.89:3-4)։ Նոր ուխտը նշվում է որպես խոստացված արդարության նոր օր (Հոգու նոր դարաշրջան) Աստծո ժողովրդի համար (տես՝ Ես.55:3; 59:21; 61:8; Երեմ.31:33; 32:40; 50:5; Եզեկ.16:60; 37:26)։ Բոլորն էլ կարող են տեսնել, թե Հիսուսի օրոք հրեաները ինչպես էին զարմանում Նրա պատգամներով։ Նա միշտ էլ եղել է փրկության համար Աստծո ծրագիրը, սակայն Մովսեսին տրված Աստծո օրենքը Իսրայելի կողմից պահելու ձախողումը ցույց տվեց, որ փրկության համար ոչ թե մարդկային գործեր, այլ մեկ այլ միջոց է անհրաժեշտ (տես՝ Գաղատացիների 3)։ Տես SPECIAL TOPIC: ETERNAL /ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ/ Եբր.6:2-ում։

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏՅԱՆ ('olam)
SPECIAL TOPIC: FOREVER ('olam)

Եբրայերեն 'olam, օլօ (BDB 761, KB 798) տերմինի ստուգաբանությունը անհայտ է (NIDOTTE, հատոր՝ 3, էջ՝ 345)։ Այն կիրառվում է մի քանի նշանակությամբ (սովորաբար որոշվում է ըստ համատեքստի)։ Հետևյալ օրինակները միայն հատընտիր են՝

1. Անցյալի բաներ՝
 - ա. ժողովուրդներ, Ծննդ.6:4; 1 Թագ.27:8; Երեմ.5:15; 28:8
 - բ. տեղանքներ, Ես.58:12; 61:4
 - գ. Աստված, Սաղմ.93:2; Առակ.8:23; Ես.63:16
 - դ. առարկաներ, Ծննդ.49:26; Հոբ 22:15; Սաղմ.24:7,9; Ես.46:9
 - ե. ժամանակներ. 2 Օր.32:7; Ես.51:9; 63:9,11
2. Ապագա ժամանակներում՝
 - ա. մարդու կյանքը, Ելից 21:6; 2 Օր.15:17; 1 Թագ.1:22; 27:12
 - բ. թագավորի հանդեպ հարգանքի չափազանցություն, 1 Թագ.1:31; Սաղմ.61:7; Նեեմ.2:3
 - գ. շարունակական գոյություն
 - (1) Երկիրը, Սաղմ.78:69; 104:5; Ժող.1:4
 - (2) Երկինքները, Սաղմ.148:5
 - դ. Աստծո գոյությունը
 - (1) Ծննդ.21:33
 - (2) Ելից 15:18
 - (3) 2 Օր.32:40
 - (4) Սաղմ.93:2
 - (5) Ես.40:28
 - (6) Երեմ.10:10
 - (7) Դան.12:7
 - ե. ուխտը

- (1) Ծննդ.9:12,16; 17:7,13,19
 - (2) Ելից 31:16
 - (3) Ղևտ.24:8
 - (4) Թվոց 18:19
 - (5) 2 Թագ.23:5
 - (6) Սաղմ.105:10
 - (7) Ես.24:5; 55:3; 61:8
 - (8) Երեմ.32:40; 50:5
- զ. Դավթի հետ հատուկ ուխտը
- (1) 2 Թագ.7:13,16,25,29; 22:51; 23:5
 - (2) 3 Թագ.2:33,45; 9:5
 - (3) 2 Մնաց.13:5
 - (4) Սաղմ.18:50; 89:4,28,36,37
 - (5) Ես.9:7; 55:3
- է. Աստծո Մեսիան
- (1) Սաղմ.45:2; 72:17; 89:35-36; 110:4
 - (2) Եսայի 9:6
- ը. Աստծո օրենքները
- (1) Ելից 29:28; 30:21
 - (2) Ղևտ.6:18,22; 7:34; 10:15; 24:9
 - (3) Թվոց 18:8,11,19
 - (4) Սաղմ.119:89,160
- թ. Աստծո խոստումները
- (1) 2 Թագ.7:13,16,25; 22:51
 - (2) 3 Թագ.9:5
 - (3) Սաղմ.18:50
 - (4) Եսայի 40:8
- ժ. Աբրահամի սերունդները և Ավետյաց Երկիրը
- (1) Ծննդ.13:15; 17:19; 48:4
 - (2) Ելից 32:13
 - (3) 1 Մնաց.16:17
- ի. ուխտի տոները
- (1) Ելից 12:14,17,24
 - (2) Ղևտ.23:14,21,41
 - (3) Թվոց 10:8
- լ. հավիտենություն, հավիտենական
- (1) 3 Թագ.8:13
 - (2) Սաղմ.61:7-8; 77:8; 9:2; 103:17; 145:13
 - (3) Եսայի 26:4; 45:17
 - (4) Դան.9:24
- խ. Ինչ են անելու հավատացյալները հավիտյան, ըստ Սաղմոսների
- (1) գոհանալու են, Սաղմ.30:12; 79:13
 - (2) բնակվելու են Նրա ներկայության մեջ, Սաղմ.41:12; 61:4,7
 - (3) վատահելու են Նրա ողորմությանը, Սաղմ.52:8
 - (4) փառաբանելու են Տիրոջը, Սաղմ.52:9
 - (5) օրհնություն են երգելու, Սաղմ.61:8; 89:1
 - (6) Նրա արդարությունն են պատմելու, Սաղմ.75:7-9
 - (7) փառավորելու են Նրա անունը, Սաղմ.86:12; 145:2
 - (8) օրհնելու են Նրա անունը, Սաղմ.145:1
- ծ. նոր դարաշրջանը նկարագրող կիրառված Եսայի գրքում
- (1) հավիտենական ուխտ, Ես.24:5; 55:3; 61:8
 - (2) ՅԱՀՎԵՆ հավիտենական Ժայռ, Ես.26:4
 - (3) հավիտենական ցնծություն, Ես.35:10; 51:11; 61:7
 - (4) Հավիտենական Աստվածը, Ես.40:28
 - (5) հավիտենական փրկություն, Ես.45:17
 - (6) հավիտենական ողորմություն (Hesed), Ես.54:8
 - (7) հավիտենական նշան, Ես.55:13
 - (8) հավիտենական անուն, Ես.56:5; 63:12,16

(9) հավիտենական լույս, Ես.60:19,20

Հավիտենական բառի կիրառությունը Եսայի մարգարեության մեջ բացասական իմաստով ամբարիշտների պատժի հետ կապված գտնվում է Ես.33:14-ում՝ «հավիտենական կրակ»: Եսային հաճախ կիրառում է «կրակ» բառը բնութագրելու Աստծո բարկությունը (տես՝ Եսայի 9:18,19; 10:16; 47:14), սակայն միայն Ես.33:14-ում այն նկարագրվում է որպես «հավիտենական»:

3. թե՛ ժամանակից առաջ և թե՛ հետո (հավիտենությունից հավիտենություն)

ա. Սաղմ.41:13 (փառաբանություն Աստծուն)

բ. Սաղմ.90:2 (Աստված Ինքը)

գ. Սաղմ.103:17 (Տիրոջ ողորմությունը)

Հիշեք, որ համատեքստն է որոշում տերմինի նշանակության ծավալը: Հավիտենական ուխտերը և խոստումները պայմանական են (այսինքն՝ Երեմիա 7; տես՝ Հատուկ Թեմա. Ուխտ): Զգույշ եղեք ժամանակի վերաբերյալ ձեր ունեցած արդի աշխարհայացքը կամ ՆԿ-յան համակարգված աստվածաբանությունը չկարդալ այս շատ հեղեղուն բառի ՀԿ-յան կիրառության մեջ: Նաև հիշեք ՀԿ-յան այն խոստումները, որոնք կիրառելի են ՆԿ-ում (տես՝ Հատուկ Թեմա. Հին Կտակարանյան Ապագայի Մարգարեությունները ի հակադրություն Նոր Կտակարանյան Մարգարեությունների):

13:21

NASB

«ձեզ սպառազինի ամեն բարի գործի մեջ»

NKJV

«ձեզ կատարյալ դարձնի ամեն բարի գործի մեջ»

NRSV

«ձեզ կատարյալ դարձնի ամեն բարի բանի մեջ»

TEV

«ապահովի ձեզ ամեն տեսակ բարիքներով»

NJB

«պատրաստի ձեզ ... ամեն տեսակ բարի գործերի մեջ»

Այս ԲԱՅՐ (*katartizō*, հազվադեպ ԱՈՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԸՂՁԱԿԱՆ է, որը արտահայտված ցանկություն կամ երազանքն է) նշանակում է ինչ-որ մեկին կամ ինչ-որ բան դարձնել լիարժեք համապատասխան, բավարար կամ որակյալ (տես՝ Ղուկ.6:40; 1 Կորնթ.1:10; 2 Կորնթ.13:11; 1 Թեսաղ. 3:10; 1 Պետ.5:10): Աստվածաբանորեն սա համարժեք է Եփես.2:10: Աստծո կամքն է, որ հավատացյալները նմանվեն Հիսուսին (տես՝ Հռոմ.8:29), որի արդյունքում կապրեն աստվածահաճո կյանքով, որը մեղավոր՝ կորած մարդկանց կգրավի դեպի Թրիստոսը:

■ «Իր կամքը կատարել» Հիսուսը կատարեց Հոր կամքը աշխարհ գալով որպես Չարչարվող Ծառա (տես՝ Եբր.10:7): Այժմ Իր հետևորդներն էլ կանչված են կատարելու Իր կամքը (տես՝ Եբր.10:36):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈՒ ԿԱՄՔԸ (*thelēma*)
SPECIAL TOPIC: THE WILL (*thelēma*) OF GOD

Աստծո «կամքը» բովանդակում է մի քանի կատեգորիաներ՝

ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԸ

- Հիսուսն եկավ կատարելու Հոր կամքը (տես՝ 4:34; 5:30; 6:38)
- վերջին օրը հարություն տալու բոլոր նրանց, ում Հայրը տվեց Որդուն (տես՝ 6:39)
- որ բոլորը հավատան Որդուն (6:29,40)
- Աստծո կամքը կատարելու հետ կապված պատասխանված աղոթք (տես՝ 9:31 և 1 Հովհ.5:14)

ՀԱՄԱՆՄԱՆ ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐԸ

- Աստծո կամքը կատարելը կարևոր է (տես՝ Մատթ.7:21)
- Աստծո կամքը կատարողը դառնում է Հիսուսի բույրը կամ եղբայրը (տես՝ Մատթ.12:50; Մարկ.3:35)
- Աստծո կամքը չէ, որ որևէ մեկը կորչի (տես՝ Մատթ.18:14; 1 Տիմ.2:4; 2 Պետ.3:9)
- Գողգոթան Հիսուսի համար Հոր կամքն էր (տես՝ Մատթ.26:42; Ղուկ.22:42)

ՊՈՂՈՍԻ ԹՂԹԵՐԸ

- բոլոր հավատացյալների հասունությունը և ծառայությունը (տես՝ Հռոմ.12:1-2)
- հավատացյալները ազատվեն այս չար ժամանակներից (տես՝ Գաղ.1:4)
- Աստծո կամքը Նրա փրկարար ծրագիրն էր (տես՝ Եփես.1:5,9,11)
- հավատացյալներ, որոնք կվերապրեն և կապրեն Հոգով լեցուն կյանք (Եփես.5:17-18)
- հավատացյալներ, որոնք լցված կլինեն Աստծո գիտությամբ (տես՝ Կող.1:9)
- կատարյալ և լիարժեք դարձած հավատացյալներ (տես՝ Կող.4:12)
- սրբացված հավատացյալներ (տես՝ 1 Թեսաղ.4:3)
- ցանկացած իրավիճակում գոհունակ սիրտ ունեցող հավատացյալներ (1 Թեսաղ.5:18)

ՊԵՏՐՈՍԻ ԹՂԹԵՐԸ

- օրինապահ հավատացյալներ (քաղաքացիական իշխանություններին ենթարկվող) և ուստի անմիտներին լռեցնող, որով հնարավորություն են ստեղծում ավետարանչության համար (տես՝ 1 Պետ.2:15)
- չարչարվող հավատացյալներ (տես՝ 1 Պետ.3:17; 4:19)
- անձնակենտրոն կյանքով չապրող հավատացյալներ (տես՝ 1 Պետ.4:2)

ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԹՂԹԵՐԸ

- հավիտյան ապրող հավատացյալներ (տես՝ 1 Հովհ.2:17)
- պատասխանված աղոթքի պատճառ հանդիսացող հավատացյալներ (տես՝ 1 Հովհ.5:14):

■ **«Ում փառք հավիտյանս հավիտենից: Ամեն»** Այս արտահայտությունը, որը շատ տարածված է Պողոսի և Պետրոսի գրքերում, անորոշ է իր նշանակությամբ: Երբեմն այն վերաբերում է Հայր Աստծուն (տես՝ Հռոմ.11:36; Եփես.3:21; 1 Պետ.4:11; 5:11; Հուդա 25; Հայտն.1:6; 7:12), երբեմն Որդուն՝ Հիսուսին (տես՝ 2 Տիմ.4:18; 2 Պետ.3:18) և երբեմն էլ՝ երկուսին էլ (տես՝ Հռոմ.16:27; 1 Տիմ.1:17; Հայտն.5:13 և այստեղ): Հաճախ ՆԿ-յան հեղինակները կիրառում են միևնույն անունները, գործողությունները և արտահայտությունները, որպեսզի նկարագրեն Հորը և Որդուն, որպես Հիսուս Նազովրեցու աստվածությունը և Հոր հետ հավասարությունը հաստատելու մի կերպ:

■ **«Ամեն»** Բնագիր եբրայերեն տերմինը նշանակում էր «հաստատ լինել»: Սա կատարելագործվեց ստանալով հավատարմության, կախվածության և վստահելիության փոխաբերական իմաստ (տես՝ Ամբ.2:4): Այն սկսվեց կիրառվել որպես «ես հաստատում եմ» կամ «ես համաձայն եմ» տվյալ հայտարարության հետ:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՄԵՆ
SPECIAL TOPIC: AMEN**

I. ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

Ա. «Ամեն» տերմինը ծագել է Եբրայերեն հետևյալ բառերից՝

1. «ճշմարտություն» (*emeth*, BDB 49)
2. «ճշմարտացիություն» (*emun, emunah*, BDB 53)
3. «հավատք» կամ «հավատարմություն»
4. «վստահություն» (*dmn*, BDB 52)

Բ. Այս տերմինի ստուգաբանությունը նշում է մարդու ֆիզիկական կայուն վիճակը: Դրա հակառակը կլինեն անկայունը, սայթաքելին (տես՝ Սաղմ.35:6; 40:2; 73:18; Երեմիա 23:12) կամ գայթակղիչը (տես՝ Սաղմ.73:2): Այս բառացի կիրառությունից էլ ձևավորվել է հավատարիմ, վստահելի, ազնիվ և հուսալի բառերի լայնիմաստ փոխաբերությունը (տես՝ Եբր.2:4):

- Գ. Հատուկ կիրառությունը (տես՝ Հատուկ Թեմա. Հավատալ, Վստահել, Հավատք և Հավատարմություն տերմինները ՀԿ-ում)
1. Սյուն, 4 Թագ.18:16 (1 Տիմ.3:15)
 2. Վստահություն, Ելից 17:12

3. Կայունություն, Ելից 17:12
 4. Հաստատություն, Ես.33:6
 5. Ճշմարիտ, 3 Թագ.10:6; 17:24; 22:16; Առակ.12:22
 6. Հաստատ, 2 Մնաց.20:20; Եսայի 7:9
 7. Վստահելի (Թորա), Սաղմ.119:43,142,151,160
- Դ. ՀԿ-ում երկու այլ տերմիններ են կիրառվում գործող հավատքի համար՝
1. *batach* (BDB 105), վստահություն
 2. *yra* (BDB 431), վախ, հարգանք, երկրպագություն (տես՝ Ծննդ.22:12)
- Ե. Վստահության կամ վստահելիության իմաստավորումից ձևավորվեց եկեղեցական կիրառությունը, որը գործածվում էր հաստատելու մեկ ուրիշի ճշմարիտ կամ վստահելի հայտարարությունը (տես՝ Թվոց 5:22; 2 Օր.27:15-26; 3 Թագ.1:36; 1 Մնաց.16:36; Նեեմ.5:13; 8:6; Սաղմ.41:13; 72:19; 89:52; 106:48; Երեմ.11:5; 28:6):
2. Այս տերմինի հետ կապված աստվածաբանական բանալին մարդկության հավատարմությունը չէ, այլ ՅԱՀՎԵԻ (տես՝ Ելից 34:6; 2 Օր.32:4; Սաղմ.108:4; 115:1; 117:2; 138:2): Մեղավոր մարդկության միակ հույսը ՅԱՀՎԵԻ և Նրա խոստումների գթառատ, նվիրված, ուխտի հավատարմությունն է: Ովքեր ճանաչում են ՅԱՀՎԵԻ, պետք է լինեն Նրա նման (տես՝ Ամբ.2:4): Աստվածաշունչը մարդկության մեջ Իր պատկերը (տես՝ Ծննդ.1:26-27) վերականգնելու Աստծո պատմությունն ու արձանագրությունն է: Փրկությունը վերականգնում է մարդկության հնարավորությունը Աստծո հետ մտերմիկ հարաբերություն ունենալու: Սա է մեր ստեղծվելու նպատակը:

II. ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

- Ա. «Ամեն» բառի ՆԿ-ում ընդունված է կիրառել որպես հայտարարության ճշմարտացիության ամփոփիչ եկեղեցական հաստատում (1 Կորնթ.14:16; Հայտն.1:7; 5:14; 7:12):
- Բ. ՆԿ-ում այս տերմինը ընդունված է կիրառել որպես աղոթքի փակման բառ (տես՝ Հռոմ.1:25; 9:5; 11:36; 16:27; Գաղ.1:5; 6:18; Եփես.3:21; Փիլ.4:20; 2 Թեսաղ.3:18; 1 Տիմ.1:17; 6:16; 2 Տիմ.4:18):
- Գ. Հիսուսը միակն էր, որ այս տերմինը կիրառեց (կրկնապաիկ անգամ Հովհաննես Ավետարանում՝ 25 անգամ, այսինքն՝ Հովհ.1:51; 3:3,5,11; և այլն) ներկայացնելու կարևորագույն հայտարարությունները (տես՝ Ղուկ.4:24; 12:37; 18:17,29; 21:32; 23:43):
- Դ. Այն Հայտն. 3:14-ում կիրառվում է որպես Հիսուսի անուններից մեկը (նաև ուշադրություն դարձրեք 2 Կորնթ.1:20; հավանաբար ՅԱՀՎԵԻ անուններից՝ Ես.65:16):
- Ե. Հավատարմության կամ հավատքի, վստահելիության կամ վստահության գաղափարն արտահայտվում է հունարեն *pistos* կամ *pistis* տերմինով, որն անգլերենում թարգմանվում է որպես «վստահություն», «հավատք», «հավատալ» (տես՝ Հատուկ Թեմա. Հավատք, Հավատալ կամ Վստահություն):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 13:22-24

²²Աղաչում եմ ձեզ, եղբայրներ, որ լսեք հորդորանքի այս խոսքս, որ մի քանի բառով գրեցի ձեզ: ²³Իմացե՛ք, որ մեր եղբայր Տիմոթեոսը արձակված է. եթե շուտով գա, նրա հետ միասին ձեզ կտեսնեմ: ²⁴Բարևե՛ք ձեր բոլոր առաջնորդներին և բոլոր սրբերին: Բարևում եմ ձեզ նրանք, ովքեր Իտալիայից են:

13:22-24 Փակման խոսքերը՝ 22-24, նման են այն փակման խոսքերի, որոնք առկա են մի դպիրի կողմից գրված Պողոսի թղթերում, որոնց վերջում իրականում Պողոսն էր վերցնում գրիչը և ավելացնում մի փոքրիկ անձնական գրառում և օրհնություն:

■ **13:22 «Աղաչում եմ ձեզ»** Հեղինակը իր գիրքն անվանում է «հորդորանքի խոսք»: Նա հաճախ է աղաչում իր ընթերցողներին (տես՝ Եբր.3:13; 10:25; 12:15; 13:15,22): Նրանք Քրիստոսով եղբայրներ (և քույրեր) են, սակայն պետք է Նրան հարեն, Նրան հետևեն, Նրան ծառայեն:

■ **«լսեք հորդորանքի այս խոսքը»** Սա ՆԵՐԿԱ ՉԵՉՈՔ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է, որը շեշտադրում է ենթակայի ներգրավվածությունը և հրահանգում է շարունակ լսել: «Հորդորանքի խոսք» արտահայտությունը կիրառվում է Գործք 13:15-ում ժողովարանում քարոզի համար: Ծատերը հավատում են, որ Եբրայեցիները թուղթը սկզբնապես հենց այսպիսի բան է եղել, սակայն ձևափոխվելով դարձել է նամակ:

13:23 «եղբայր Տիմոթեոսը» Երբ Պողոսը գործածում է «եղբայր», ընդհանրապես միշտ տվյալ մարդու անունը դնում է սկզբում (տես՝ Հռոմ. 16:23; 1 Կորնթ. 1:1; 16:12; 2 Կորնթ. 1:1; 2:13; Փիլ. 2:25): Սա կարևոր ապացույց է Պողոսի Եբրայեցիների գրքի հեղինակը հանդիսանալու դեմ: Տիմոթեոսին այստեղ նշելը հայտնում է այն ժամանակահատվածը, որում շարադրվել է այս գիրքը՝ Պողոսի կյանքի ընթացքում կամ անմիջապես իր մահից հետո (մ. թ. 68), նախքան Տիմոթեոսի մահը:

■ **«արձակված է/անգլ.՝ արձակվել է/»** Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է: Սուրբ Գրքից կամ որևէ այլ աղբյուրներից մենք ոչինչ չգիտենք Տիմոթեոսի բանտում գտնվելու վերաբերյալ: Ա. Տ. Ռոբերտսոնը իր *Բառապատկերները Նոր Կտակարանում* (A. T. Robertson *Word Pictures in the New Testament*) գրքում էջ 451, պնդում է, որ Տիմոթեոսը բանտարկվեց, երբ եկավ այցելելու Պողոսին՝ արձանագրված 2 Տիմ. 4:11, 21-ում: «Արձակվել» բառը (ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ) կիրառվում է (1) Մատթ. 27:15; Հովհ. 19:10; Գործք 3:13; 4:21, 23; 5:40-ում բանտից արձակվելու համար և (2) Գործք 13:3-ում՝ այլաբանորեն, որպես ծառայության հանձնարարությունից ազատվել, և այստեղ հնարավոր է դա է նշանակում:

■ **«Եթե շուտով գա, ... ձեզ կտեսնեն»** Սա կարող է ակնարկել, որ Եբրայեցիների նամակի հեղինակը աշխատում և ճամփորդում էր Տիմոթեոսի հետ:

13:24 «սուրբեր» Տե՛ս Հատուկ Թեմա Եբր. 6:10-ում:

■ **«բարևում են ձեզ նրանք, որ Իտալիայից են»** Այս արտահայտությունը կարող է նշանակել, որ՝

1. հեղինակը Իտալիայում է
2. հեղինակը Իտալիայից է
3. հեղինակի միսիոներական թիմի մի մասը Իտալիայից էր
4. հեղինակը գրում է Իտալիայի համար

Հ. Ա. Դանան *Հրեական Քրիստոնեություն* (H. A. Dana *Jewish Christianity*) իր գրքում ասում է, որ այս համարն ակնարկում է, որ նամակը գրվել է Հռոմի եկեղեցու հրեական համայնքին: Եբրայեցիների գրքի մասին առաջին անգամ նշել է Հռոմեացի Կլեմենտը մոտ մ. թ. 97-ին (էջ՝ 270): Այնուհանդերձ, ես կարծում եմ, որ այս նամակը ուղարկվել է հրեա ժողովարանի (հավանական է Հռոմում գտնվող), որն ուներ հավատացյալ անդամներ: Զգուշացումները ուղղված են երկու խմբի՝ հրեա հավատացյալների խմբին (գլուխ 6-ի «դուք»), որպեսզի նրանք «չնահանջեն» (տես՝ Եբր. 10:38) և անհավատ խմբին (գլուխ 6-ի «նրանք»), որպեսզի դավանեն՝ խոստովանեն Հիսուսին որպես Մեսիա և երկու խմբերին էլ, որպեսզի կատարելապես ընդունեն Քրիստոնեությունը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 13:25
²⁵Շնորհ ձեզ բոլորիդ: Ամեն

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Եթե Եբրայեցիների գիրքը նամակ է, որը հայտնի է դառնում 13-րդ գլխից, ապա ինչո՞ւ չկա բացման ողջույնի խոսք:
2. Արդյո՞ք գլուխ 13-ն անդրադարձ է կատարում հրեա անհավատներին, թե սուտ վարդապետներին:
3. Ի՞նչ է ասում այս գլուխը Քրիստոնյա «առաջնորդների» մասին:
4. Ինչպե՞ս է ժամանակագրում համար 23-ը Եբրայեցիների գիրքը:

ՀԱՎԵԼՎԱԾ ՄԵԿ

ՀՈՒՆԱՐԵՆ ԼԵԶՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՀԱՄԱՌՈՑ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Կոյնե հունարենը, որը հաճախ կոչվում էր հելլենական հունարեն, Միջերկրական աշխարհում ընդունված բարբառն էր՝ Ալեքսանդր Մակեդոնացու աշակերտներից հետո (Ք. Ա. 336-323) մինչև հաջորդ ութ հարյուր տարիների ընթացքում (Ք. Ա. 300- մ. թ. 500): Այն պարզապես պարզեցված, դասական հունարենը չէր, այլ շատ առումներով հունարենի ավելի մի նոր ձև, որը դարձավ հնագույն Մերձավոր Արևելքի և Միջերկրական աշխարհի երկրորդ լեզուն:

Նոր Կտակարանի հունարենը ինչ որ առումով բացառիկ էր, որովհետև այն գործածողների հիմնական լեզուն՝ բացի Ղուկասի և Եբրայեցիներին ուղղված Թղթի հեղինակի, արամեերենն էր: Ահա թե ինչու նրանց գրքերում առկա էին արամեերենի բարբառային և կառուցվածքային ձևերը: Բացի այդ նրանք կարդում էին և մեջբերում կատարում Սեպտուագինտայից (ՀԿ-ի հունարեն թարգմանությունը), որը նույնպես գրված էր կոյնե հունարենով: Սակայն Սեպտուագինտան նույնպես գրել են հրեա դպիրները, որոնց մայրենին հունարենը չէր:

Սա մեզ հիշեցնում է, որ մենք չենք կարող դիտարկել ՆԿ-ը խիստ քերականական կառուցվածքի տեսանկյունից: Նրա քերականական կառուցվածքը եզակի է, սակայն այն շատ ընդհանրություններ ունի (1) Սեպտուագինտայի հետ, (2) հրեական ստեղծագործությունների հետ, ինչպես օրինակ՝ Ջոզեֆ Ֆլավիոսի գործերն են, ինչպես նաև (3) Եգիպտոսում գտնված պապիրուսների հետ: Ուրեմն ինչպիսի՞ մոտեցում պետք է ունենանք Նոր Կտակարանի քերականական վերլուծությանը:

Կոյնե հունարենի և ՆԿ-յան կոյնե հունարենի քերականական առանձնահատկություններն անկայուն են: Շատ առումներով այն քերականության պարզեցման ժամանակամիջոցն էր: Նախ և առաջ մենք կառաջնորդվենք համատեքստով: Բառերն իմաստավորվում են միայն համատեքստում, հետևաբար քերականական կառուցվածքը կարելի է միայն հասկանալ (1) ըստ հեղինակի հատուկ ոճի և (2) ըստ հատուկ համատեքստի: Հնարավոր չէ տալ հունարենի ձևերի և կառուցվածքների հստակ և վերջնական սահմանումները:

Կոյնե հունարենը գլխավորապես բայերով հարուստ լեզու է: Հաճախ մեկնության բանալին բայաձանցյալների տեսակը և ձևն է: Գլխավոր նախադասությունների մեծամասնությունում բայը դրվում է սկզբում՝ մատնանշելով դրա կարևոր նշանակությունը: Հունարեն բայը վերլուծելիս պետք է նշել երեք կարևոր բան. (1) ժամանակի, սեռի և եղանակի հիմնական շեշտադրությունը (ձևաբանություն), (2) տվյալ բայի հիմնական իմաստը (բառարանագրություն), և (3) համատեքստի էությունն ու զարգացումը (շարահյուսություն):

I. ԺԱՄԱՆԱԿ

Ա. Ժամանակը կամ կերպը ցույց է տալիս բայի հարաբերությունը կատարյալ կամ անկատար գործողությանը: Այն համապատասխանաբար կոչվում է „կատարյալ, և „անկատար, ժամանակ:

1. ԿԱՏԱՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ կենտրոնանում են գործողության կատարման վրա: Ուրիշ որևէ տեղեկություն չի տրվում, այլ միայն այն, որ որևէ բան է տեղի ունեցել: Ոչինչ չի ասվում գործողության սկզբի, դրա ընթացքի կամ զագաթնակետի մասին:
2. ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ կենտրոնանում են գործողության շարունակական ընթացքի վրա: Այն կարող է նկարագրվել իբրև գծային, շարունակական և սաստկացող:

Բ. Ժամանակները կարող են դասակարգվել համաձայն հեղինակի կողմից գործողության ընթացքի դիտարկման:

1. Այն տեղի ունեցավ = ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼ
2. Այն տեղի ունեցավ, իսկ հետևանքները դեռ շոշափելի են = ԿԱՏԱՐՅԱԼ
3. Այն տեղի էր ունեցել անցյալում և հետևանքները շոշափելի են, սակայն ոչ հիմա = ԳԵՐԱԿԱՏԱՐ
4. Այն տեղի է ունենում = ՆԵՐԿԱ
5. Այն տեղի էր ունենում = ԱՆԿԱՏԱՐ

6. Այն տեղի կունենա =ԱՊԱՌՆԻ

Որպես օրինակ, թե ինչպես են այս ժամանակաձևերն օգնում մեկնաբանության մեջ, կվերցնենք „փրկել,, տերմինը: Այն կիրառվում էր մի քանի տարբեր ժամանակներով՝ ցույց տալով թե՛ դրա ընթացքը, թե՛ կուլմինացիան:

1. ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼ - „փրկված,, (տես՝ Հռոմ.8:24)
2. ԿԱՏԱՐՅԱԼ - „փրկված են, և հետևանքը շարունակվում է,, (տես՝ Եփես.2:5,8)
3. ՆԵՐԿԱ - „փրկվում են,, (տես՝ 1 Կորնթ.1:18; 15:2)
4. ԱՊԱՌՆԻ - „կփրկվոն,, (տես՝ Հռոմ.5:9,10; 10:9)

Գ. Ուշադրություն դարձնելով ԲԱՅԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՆ, թարգմանիչները փնտրում են պատճառը, որով բնագրի հեղինակը նախընտրել էր իր մտքերն արտահայտելու համար օգտագործել տվյալ ժամանակաձևը: Ստանդարտ „առանց ավելորդությունների,, ժամանակաձևը՝ ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼԸ էր: Այն սովորական, ոչ կոնկրետ, „աննշան,, կամ „ոչնչով չթուլացող,, ԲԱՅԻ ձև է: Այն կարող է կիրառվել տարբեր կերպերով՝ կախված համատեքստից: Այն պարզապես հաստատում էր, որ ինչ-որ բան էր տեղի ունեցել: Այնցյալ ժամանակաձևն ընդունում էին միայն ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԲԱՅԵՐԸ: Եթե որևէ այլ ժամանակ էր կիրառվում, հեղինակը շեշտադրում էր ավելի կոնկրետ որևէ բան: Բայց ի՞նչ:

1. ԿԱՏԱՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿ. Այն արտահայտում է կատարված գործողություն, որի հետևանքները շոշափելի են: Ինչ-որ առումով դա ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼԻ և ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ գույքողություն է: Սովորաբար շեշտը դրվում է գործողության շոշափելի հետևանքների կամ ավարտման վրա: Օրինակ՝ Եփես.2:5 և 8 „շնորհքով եք փրկված և շարունակում եք փրկվել,,:
2. ԳԵՐԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ. այն նման է ԿԱՏԱՐՅԱԼԻՆ, սակայն շոշափելի հետևանքներն արդեն վերջացել են: Օրինակ՝ „Պետրոսն էլ դռան մոտ կանգնած էր,, (Հովհ.18:16):
3. ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ. Խոսքը վերաբերում է անավարտ կամ անկատար գործողությանը: Սովորաբար շեշտը դրվում է իրադարձության շարունակության վրա: Օրինակ՝ „Ով մնում է Նրա մեջ, մեղք չի գործում,, „Ով որ Աստուծուց է ծնված, մեղք չի գործում,, (1 Հովհ.3:6 և 9):
4. ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ. Այս ժամանակաձևի կապը ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ հետ համեմատական է ԿԱՏԱՐՅԱԼԻ և ԳԵՐԱԿԱՏԱՐԻ միջև կապին: ԱՆԿԱՏԱՐԸ արտահայտում է անավարտ գործողություն, որը տեղի էր ունեցել, բայց դադարել է ներկա պահին կամ էլ անցյալում գործողության հենց սկզբում: Օրինակ՝ „Այդ ժամանակ նրա մոտ էին գնում Երուսաղեմից,, (Մատթ.3:5):
5. ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿ. Այն արտահայտում է մի գործողություն, որը տեղի կունենա ապագայում: Շեշտադրում է առավել պոտենցիալ, քան իրական իրողությունը: Այն հաժախ ցույց է տալիս իրադարձության որոշակիությունը: Օրինակ՝ „Երանի ... նրանք...,, (Մատթ.5:4-9):

II. ՍԵՌ

Ա. ՍԵՌԸ ցույց է տալիս ԲԱՅԻ գործողության և դրա ԵՆԹԱԿԱՅԻ միջև եղած կապը:

Բ. ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԸ նորմալ, սպասված և չշեշտադրված միջոցն է, որը ցույց է տալիս, որ ենթական կատարում է բայի արտահայտած գործողությունը:

Գ. ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌԸ նշանակում է, որ ԵՆԹԱԿԱՆ կրում է ԲԱՅԻ արտահայտած գործողությունը, որը կատարվել է արտաքին գործող անձի կողմից: Գործողությունը կատարող արտաքին գործող անձին էին մատնանշում հետևյալ ՆԱԽԴԻՐՆԵՐԸ և ՀՈՒՆՎՆԵՐԸ հունարեն ՆԿ-ում:

1. Անհատական ուղղակի գործող անձ՝ *hupo* ԲԱՅԱՌԱԿԱՆ ՀՈՒՆՎՈՎ (տես՝ Մատթ.1:22; Գործք 22:30):
2. Անհատական միջնորդ գործող անձ՝ *dia* ԲԱՅԱՌԱԿԱՆ ՀՈՒՆՎՈՎ (տես՝ Մատթ.1:22):
3. Անորոշ գործող անձ՝ սովորաբար կիրառվող *en* ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈՒՆՎՈՎ:
4. Երբեմն անհատական կամ անորոշ գործող անձ միայն ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈՒՆՎՈՎ:

Դ. ՉԵՂՈՔ ՍԵՌԸ նշանակում է, որ ԵՆԹԱԿԱՆ կատարում է ԲԱՅԻ արտահայտած գործողությունը, ինչպես նաև ուղղակիորեն ներգրավված է ԲԱՅԻ գործողության մեջ: Այն հաճախ կոչվում է անձնական սուր հետաքրքրվածության ՍԵՌ: Այս քերականական կառուցվածքը ուժեղացնում է ԵՆԹԱԿԱՅԻ նշանակությունը նախադասության մեջ:

Անգլերենում նման քերականական կառուցվածք գոյություն չունի: Հունարենում այն ունի բազմաթիվ նշանակություններ և թարգմանություններ: Այս ձևի մի քանի օրինակներն են՝

1. ԱՆԴՐԱԴԱՐՁ – ենթակայի ուղղակի գործողությունն ինքն իր վրա: Օրինակ՝ „ինքն իրեն կախեց,, (Մատթ.27:5):
2. ԻՆՏԵՆՍԻՎ – ենթական կատարում է գործողությունն ինքն իր համար: Օրինակ՝ „Սատանան ինքն էլ կերպարանափոխվում է լույսի հրեշտակի,, (2 Կորնթ.11:14):
3. ՓՈԽԱԴԱՐՁ – երկու ԵՆԹԱԿԱՆՆԵՐԻ փոխադեցությունը: Օրինակ՝ „Եվ ծորհուրդ արին իրար հետ...,, (Մատթ.26:4):

III. ԵՂԱՆԱԿ

Ա. Կոյնե հունարենն ունի չորս ԵՂԱՆԱԿ: Դրանք ցույց են տալիս բայի կապը իրականության հետ, սակայն համաձայն հեղինակի սեփական տեսանկյան: Եղանակները բաժանվում են երկու մեծ խմբի՝ իրական գործողություն ցույց տվող (ՍԱՀՄԱՆԱԿԱՆ) և պոտենցիալ գործողություն ցույց տվող (ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ, ՀՐԱՄԱՅԱԿԱՆ և ԸՂՁԱԿԱՆ):

Բ. ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ արտահայտում է ստանդարտ եղանակ, որը ցույց է տալիս առնվազն հեղինակի տեսանկյունից տեղի ունեցած գործողություն: Սա միակ հունարեն եղանակն է, որն արտահայտում է որոշակի ժամանակ, եթե անգամ այդ ասպեկտը երկրորդական է:

Գ. ՍՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆ արտահայտում է հնարավոր գործողություն ապագայում: Ինչ-որ մի բան դեռ տեղի չի ունեցել, բայց հնարավորությունները մեծ են, որ տեղի կունենա: Այն շատ ընդհանրություններ ունի ԱՊԱՌՆԻ ՍԱՀՄԱՆԱԿԱՆԻ հետ: Տարբերությունն այն է, որ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆՆ արտահայտում է որոշ աստիճանի տարակուսանք: Անգլերենում հաճախ այն արտահայտվում է *could, would, may* կամ *might* տերմիններով (կարող էր, կկարողանար):

Դ. ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆ արտահայտում է ցանկություն, որը տեսականորեն կարող է ի կատար ածվել: ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆԻ հետ համեմատած այն դիտարկվում է իրական գործողությունից մի քայլ առաջ: ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆ արտահայտում է գործողության հնարավորությունը որոշ պարագաների ներքո: ՆԿ-ում ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ հազվադեպ է հանդիպում: Այն շատ հաճախ կիրառվում է Պողոսի հայտնի արտահայտության մեջ՝ „քավ լիցի,, որը հանդիպում է ավելի քան տասնհինգ անգամ (տես՝ Հռոմ.3:4,6,31; 6:2,15; 7:7,13; 9:14; 11:1,11; 1 Կորնթ.6:15; Գաղ.2:17; 3:21; 6:14): Մյուս օրինակներն են՝ Դուկ.1:38, 20:16; 8:20 և 1 Թեսաղ.3:11:

Ե. ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ ցույց է տալիս հրաման, որի կատարումը հնարավոր է, սակայն շեշտը դրվում է խոսողի մտադրության վրա: Այն հաստատում է միայն կամային հնարավորությունը և պայմանավորված է մեկ այլ անձի ընտրությամբ: ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ հատկապես օգտագործվում է աղոթքներում և երրորդ անձի խնդրանքներում: ՆԿ-ում այս հրամաններն ունեին միայն ՆԵՐԿԱ և ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼ ժամանակաձևեր:

Զ. Մի քանի լեզուների քերականության մեջ ԱԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅՆԵՐԸ դասակարգվում են որպես առանձին եղանակ: Դրանք շատ են հունարեն ՆԿ-ում և սովորաբար սահմանվում էին որպես ԲԱՅԱԾԱՆՅՅԱԼՆԵՐ: Դրանք թարգմանվում են գլխավոր առնչվելի ԲԱՅԻ հետ միասին: ԱԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅՆԵՐԸ թարգմանելիս հնարավոր էին բազմաթիվ տարբերակներ: Դիտարկվել է յավագույն տարբերակը և հաշվի առնվել Աստվածաշնչյան մի քանի թարգմանություններ: Այս հարցում շատ օգտակար կարող է լինել „Աստվածաշունչը Քսանվեց Թարգմանություններով,, ձեռնարկը, Բեյքերի հրատարակության (*The Bible in Twenty Six Translations, Baker*):

Է. ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼՆ օգտագործվում է որպես գործողության ստանդարտ կամ „աննշան,, միջոց իրողությունն արձանագրելու համար: Ցանկացած այլ ժամանակ, սեռ կամ եղանակ մեկնության համար ուներ որոշակի նշանակություն, որը հեղինակն էր ուզում հաղորդել:

IV. Հետևայալ ձեռնարկները կարող են օգտակար լինել նրանց համար, որոնք չեն տիրապետում հունարենին.

Ա. Բարբարա և Տիմոթի Ֆրայբերգ. „Հունարեն Վերլուծական Նոր Կտակարան,, /Friberg, Barbara and Timothy, *Analytical Greek New Testament*, Grand Rapids: Baker, 1988/:

Բ. Ալֆրեդ Մարշալ, „Նոր Կտակարանի Տողամիջյան Հունարեն-Անգլերեն Թարգմանություն,, /Marshall, Alfred, *Interlinear Gree-English New Testament*, Grand Rapids: Zondervan, 1976/:

Գ. Ուիլյամ Դ. Մաունս, „Հունարեն Նոր Կտակարանի Վերլուծական Բառարան,, /Mounce, William D. *The Analytical Lexicon to the Greek New Testament*, Grand Rapids: Zondervan, 1993/:

Դ. Ռեյ Սամերս, „Նոր Կտակարանի Հունարենի Կարևոր Առանձնահատկություններ,, /Summers, Ray, *Essentials of New Testament Greek*, Nashville: Broadman, 1950/:

Ե. Դուք կարող եք նաև օգտվել կոյնե հունարենի ուսումնասիրության ուսումնական դասընթացներից, որոնք հասանելի են Չիկագոյի Մուդիի Աստվածաշնչյան Ինստիտուտի հետ նամակագրության միջոցով:

V. ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Ա. Շարադասությամբ գոյականները դասակարգվում են ըստ հոլովների: Հոլովը ԳՈՅԱԿԱՆԻ խոնարհվող ձևն է, որը ցույց է տալիս դրա կապը ԲԱՅԻ և նախադասության մյուս անդամների հետ: Կոյնե հունարենում ՆԱԽԴԻՐՆԵՐԸ ցույց էին տալիս հոլովի շատ ֆունկցիաներ: Քանի որ հոլովի ձևը կարող էր վկայել մի քանի տարբեր տեսակի կապերի մասին, ՆԱԽԴԻՐՆԵՐՆ օգնում էին ավելի հստակ սահմանափակել այս հնարավոր ֆունկցիաները:

Բ. Հունարենում գոյություն է ունեցել ութ հոլով.

1. ՈՒՂՂԱԿԱՆ ՀՈՒՈՎՆ օգտագործվում էր առարկաններն անվանելու համար, և այն սովորաբար կատարում էր նախադասության ենթակայի ֆունկցիան: Այս հոլովում կարող էին օգտագործվել նաև բաղադրյալ ԳՈՅԱԿԱՆՆԵՐԸ և ԱՇԱԿԱՆՆԵՐԸ „լինել,, կամ „դառնալ,, օժանդակ ԲԱՅԵՐԻ հետ:
2. ՍԵՌԱԿԱՆ ՀՈՒՈՎՆ օգտագործվում էր նկարագրության համար և սովորաբար մատնանշում էր այն բառի հատկանիշը կամ որակը, որի հետ առնչվում էր: Պատասխանում էր „ի՞նչպիսի,, հարցին: Այն հաճախ արտահայտվում էր անգլերենի “of” նախդիրի օգնությամբ:
3. ԲԱՅԱՌԱԿԱՆ ՀՈՒՈՎՆ ուներ ՍԵՌԱԿԱՆ ՀՈՒՈՎԻ նույն խոնարհված ձևը, սակայն օգտագործվում էր անջատում նկարագրելու համար: Ընդհանրապես այն արտահայտում է ժամանակի, տարածության, աղբյուրի, ծագման կամ աստիճանի անջատում: Անգլերենում այն հաճախ կիրառվում է *from* նախդիրի օգնությամբ (հայերենում -ից վերջածանցով):
4. ՏՐԱԿԱՆ ՀՈՒՈՎՆ օգտագործվում էր անձնական հետաքրքրությունը նկարագրելու համար: Սա կարող էր մատնանշել դրական կամ բացասական ասպեկտը: Հաճախ այն ԱՆՈՒՂՂԱԿԻ ԼՐԱՑՈՒՄՆ էր: Թարգմանվում է անգլերենի *to* նախդիրի օգնությամբ:
5. ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀՈՒՈՎՆ ուներ ՏՐԱԿԱՆԻ նույն խոնարհված ձևը, սակայն նկարագրում էր դիրք կամ տեղանք տարածության, ժամանակի կամ տրամաբանական սահմանների մեջ: Հաճախ թարգմանվում է անգլերեն *in, on, at, among, during, by, upon* և *beside* նախդիրների օգնությամբ:
6. ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈՒՈՎՆ ուներ ՏՐԱԿԱՆ և ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀՈՒՈՎՆԵՐԻ նույն խոնարհված ձևը: Այն նշանակում էր միջոց կամ կապ: Հաճախ թարգմանվում էր անգլերեն *by* և *with* նախդիրների օգնությամբ:
7. ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈՒՈՎՆ օգտագործվում էր գործողության ավարտը նկարագրելու համար: Այն արտահայտում էր սահմանափակում: ԳՈՅԱԿԱՆՆ այս ՀՈՒՈՎՈՒՄ հիմնականում օգտագործվում էր որպես ՈՒՂՂ ԼՐԱՑՈՒՄ: Այն պատասխանում է „որքա՞ն,, „ի՞նչ աստիճանի,, հարցերին:
8. ԿՈՉԱԿԱՆ ՀՈՒՈՎՆ օգտագործվում էր որևէ մեկին ուղղակի դիմելու համար:

VI. ՇԱՂԿԱՊՆԵՐ ԵՎ ԿԱՊԵՐ

Ա. Հունարենը շատ ճշգրիտ լեզու է, քանի որ ունի շատ ԿԱՊԵՐ: Դրանք կապում են մտքերը (նախադասությունները, արտահայտությունները և պարբերությունները): Դրանք այնքան տարածված են, որ դրանց բացակայությունը հաճախ մեկնաբանության համար շատ նշանակալի է լինում: Փաստացի այս շաղկապները և կապերը մատնանշում են հեղինակի մտքի ուղղությունը: Հաճախ դրանք կարևոր են որոշելու, թե ինչ է փորձում հաղորդել հեղինակը:

Բ. Ստորև ներկայացված է որոշ շաղկապների, կապակցող բոռերի և դրանց իմաստների ցուցակը (այս տեղեկությունը հիմնականում հավաքված է Հ. Ի. Դանայի և Ջուլիուս Զ. Մենթեյի „Հունարեն Նոր Կտակարանի Քերականության Ձեռնարկ,, գրքից /H. E. Dana and Julius K. Mantey's *A Manual Grammar of the Greek New Testament*/):

1. ԺԱՄԱՆԱԿԻ ԿԱՊ

ա. *epei, epeid ē, hopote, hōs, hote, hotan* (ստորադասական եղ.) – „երբ,,

բ. *heōs* – „մինչդեռ,,

գ. *hotan, epan* (ստ. եղ.) – „երբ էլ որ,,

դ. *heōs, achri, mechri* (ստ. եղ.) – „մինչև որ,,

ե. *priv* (անորոշ) – „նախքան,,

զ. *hōs* – „ի վեր,, „երբ,, „այն ժամանակ, երբ,,

2. ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՊ

ա. Նպատակ

(1) *hina* (ստ. եղ.), *hopōs* (ստ. եղ.), *hōs* – „որպեսզի,, „որ,,

(2) *hōste* (ԱՆՈՐՈՇԸ ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԴՈՎ) – „որ,,

(3) *pros* (ԱՆՈՐՈՇԸ ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԴՈՎ) կամ *eis* (ԱՆՈՐՈՇԸ ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԴՈՎ) – „որ,,

բ. Հետևանք (նպատակի և հետևանքիքերականական ձևերիկ միջև սերտ կապ կա)

(1) *hōste* (ԱՆՈՐՈՇ, սա ամենատարածվածն է) – „որպեսզի,, „այսպիսով,,

(2) *hiva* (ստ. եղ.) – „այնպես որ,, „որպեսզի,,

(3) *ara* – „այնպես,,

գ. Պատճառ

(1) *gar* (պատճառ-հետևանք կամ պատճառ-եզրահանգում) – „քանի որ,, „որովհետև,,

(2) *dioti, hotiy* – „որովհետև,,

(3) *epei, epeidē, hōs* – „քանի որ,,

(4) *dia* (ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈՒՆՎՈՎ) և (ԱՆՈՐՈՇ ՀՈԴՈՎ) – „որովհետև,,

դ. Եզրակացություն

(1) *ara, poionun, hōste* – „հետևաբար,,

(2) *dio* (ամենաուժեղ ՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ՇԱՂԿԱՊԸ) – „ինչի կապակցությամբ,, „ինչի համար,, „ուստի,,

(3) *oun* – „ուստի,, „այսպիսով,, „այն ժամանակ,, „արդյունքում,,

(4) *toionun* – „համապատասխանաբար,,

ե. Ընդդիմական կամ հակադրություն

(1) *alla* (խիստ ընդդիմական) – „բայց,, „բացառությամբ,,

(2) *de* – „բայց,, „սակայն,, „բայց և այնպես,, „մյուս կողմից,,

(3) *kai* – „բայց,,

(4) *mentoi, oun* – „սակայն,,

(5) *plēn* – „այնուամենայնիվ,, (հիմնականում Ղուկասում)

(6) *oun* – „սակայն,, „համենայն դեպս,,

զ. Համեմատություն

(1) *hōs, kathōs* (ներմուծվում է ստորադասական շաղկապներում)

(2) *kata* (բաղադրյալ բառերում՝ *katho, kathoti, kathōsper, kathaper*)

(3) *hosos* (Եբրայեցիսում)

(4) *ē* – „քան,,

է. Ծարունակական կամ հաջորդական

(1) *de* – „և,, „հիմա,,

(2) *kai* – „և,,

- (3) *tei* – „և,,
 - (4) *hina, oun* – „որ,,
 - (5) *oun* – „այն ժամանակ,, (Հովհաննեսում)
3. Էմֆատիկ (շեշտված) կիրառություն
- a. *alla* – „անշուշտ,, „այո,, „իրականում,,
 - b. *ara* – „իրապես,, „անշուշտ,, „իսկապես,,
 - c. *gar* – „բայց իսկապես,, „անշուշտ,, „իսկապես,,
 - d. *de* – „իսկապես,,
 - e. *ean* – „նույնիսկ,,
 - f. *kai* – „նույնիսկ,, „իսկապես,, „իրապես,,
 - g. *mentoi* – „իսկապես,,
 - h. *oun* – „իրապես,, „ամեն դեպքում,,

VII. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ պարունակում է մեկից ավելի պայմանական ստորադասական նախադասություններ: Այս քերականական կառուցվածքը օգնում է մեկնաբանությանը, քանի որ տալիս է պայմանները կամ պատճառները, թե ինչու է հիմնական բայով արտահայտված գործողությունը տեղի ունենում կամ տեղի չի ունենում: Գոյություն ունի եր ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ չորս տեսակ: Դրանք կարող էին արտահայտել գործողությունների մի ամբողջ սպեկտր՝ նրանք, որոնք իրական էին հեղինակի կամ նրա մտահղացման տեսանկյունից մինչև ցանկալին:

Բ. ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ արտահայտում էր գործողություն կամ վիճակ, որն իրական էր համարվում հեղինակի կամ նրա մտադրության տեսանկյունից, թեև արտահայտվում էր „եթե,, շաղկապով: Որոշ համատեքստերում այդ շաղկապը կարող էր թարգմանվել „քանի որ,, „սպա,, (տես՝ Մատթ.4:3; Հռոմ.8:31): Սակայն սա չի նշանակում, որ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ պարտադիր նկարագրում են իրապես տեղի ունեցած դեպքեր: Դրանք հաճախ կիրառվում էին բանավեճի մեջ տեսակետ արտահայտելու կամ մոլորությունը բացահայտելու համար (տես՝ Մատթ.12:27):

Գ. ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ հաճախ կոչվում է „իրականությանը հակասող,,: Այն արտահայտում էր մի բան, որը չէր համապատասխանում իրականությանը և չէր կարող ապացուցել արտահայտած տեսակետը կամ ընդունվել որպես փաստ: Օրինակներ.

1. „Այս մարդը, եթե մարգարե լիներ (որ չէր), կիմանար (իսկ նա չգիտեր), թե ով և ինչպիսի կին է սա, որ դիպչում է Իրեն, որովհետև նա մեղավոր մեկն է ,, (Ղուկ.7:39):
2. „Քանի որ, եթե դուք Մովսեսին հավատայիք (իսկ դուք չեք հավատում), Ինձ էլ կհավատայիք (իսկ դուք չեք հավատում) (Հովհ.5:46):
3. „Եթե մարդկանց հաճեցնեի (իսկ ես դա չեմ անում), ապա Քրիստոսին ծառա չէի լինի (Գաղ.1:10):

Դ. ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ խոսում է ապագայում հնարավոր գործողության մասին: Հաճախ այն ենթադրում է գործողության հավանականությունը, իսկ սովորաբար ակնարկում է դրա պատահականությունը: Հիմնական ԲԱՅՈՎ արտահայտված գործողությունը պայմանավորված է այնքանով, թե արդյոք տեղի կունենա ստորադասականում նկարագրված գործողությունը: Օրինակ՝ 1 Հովհ.1:6-10; 2:4,6,9,15,20, 21,24,29; 3:21; 4:20; 5:14,16:

Ե. ՉՈՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ամենաշեշտում է գործողության կատարման հնարավորությունից: Այն հազվադեպ է հանդիպում ՆԿ-ում: Փաստացի գոյություն չունի լիարժեք ՉՈՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ, որտեղ գլխավոր և ստորադասական նախադասությունները համապատասխանում են իրենց սահմանմանը: Մասնակի ՉՈՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ օրինակ է 1 Պետ.3:14-ի բացման խոսքը: Մասնակի ՉՈՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ մեկ այլ օրինակ է Գործք 8:31-ի եզրափակիչ խոսքը:

VIII. ԱՐԳԵԼՔՆԵՐ

Ա. ՆԵՐԿԱ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ *ՄԵՒ* ՄԱՍՆԻԿԻ հետ հաճախ (բայց ոչ միայն) շեշտադրում է արդեն տեղի ունեցող գործողության դադարը: Որոշ օրինակներ են՝ „ձեզ համար գանձեր մի՛ դիզեք երկրի վրա...», (Մատթ.6:19); „հոգս մի՛ արեք ձեր կյանքի համար...», (Մատթ.6:25); „և ձեր անդամները անիրավության գործիք մի՛ ընծայեք մեղքին...», (Հռոմ.6:13); „և մի՛ տրտմեցրեք Աստծո Սուրբ Հոգին...», (Եփես.4:30); „և մի՛ արբենաք գինով...», (Եփես.5:18):

Բ. ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼԸ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ *ՄԵՒ* ՄԱՍՆԻԿԻ հետ շեշտադրում է, որ „նույնիսկ մի սկսեք կատարել որոշակի գործողություն,»: Մի քանի օրինակներից են՝ „Մի՛ կարծեք ...», (Մատթ.5:17); „հոգս մի՛ արեք ...», (Մատթ.6:31); „ամոթ մի՛ համարիր...», (2 Տիմ.1:8):

Գ. ԿՐԿՆԱԿԻ ԺԵՏՈՒՄԸ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ հետ շատ խիստ ժխտում է՝ „երբեք, ոչ երբեք, կամ „ոչ մի դեպքում,»: Մի քանի օրինակներից են՝ „Նա մահ չի տեսնի հավիտյան,» (Հովհ.8:51); „ես հավիտյան միս չեմ ուտի,» (1 Կորնթ.8:13):

IX. ՀՈԴ

Ա. Կոյնե հունարենում որոշիչ հոդն ունի նույն իմաստը, ինչ անգլերենի որոշիչ հոդը: Դրա հիմնական ֆունկցիան բառի, անվանման կամ արտահայտության վրա ուշադրություն հրավիրելու միջոց հանդիսանալն է կամ դրանք „մատնացույց,» անելը: Նոր Կտակարանի տարբեր հեղինակներ տարբեր կերպերով են այն կիրառում: Որոշիչ հոդը կարող էր կատարել նաև հետևյալ ֆունկցիան.

1. որպես առանձնացում, ըստ հակասության սկզբունքի, ինչպես որ ցուցական ԴԵՐԱՆՈՒՆԸ
2. որպես նշան, ավելի վաղ հիշատակված ԵՆԹԱԿԱՅԻ կամ անձի
3. որպես միջոց, նախադասության մեջ որոշելու ենթական իր հետ կապված ԲԱՅԻ հետ: Օրինակներ՝ „Աստված Հոգի է,» Հովհ.4:24; „Աստված լույս է,» 1 Հովհ.1:5; „Աստված սեր է,» 4:8,16:

Բ. Կոյնե հունարենը չի ունեցել ԱՆՈՐՈՇ ՀՈԴ, ի տարբերություն անգլերենի: ՈՐՈՇԻՉ ՀՈԴԻ բացակայությունը կարող էր նշանակել.

1. առարկայի առանձնահատկությունների կամ որակի շեշտադրություն
2. առարկայի դասակարգման շեշտադրություն

Գ. Նոր Կտակարանի հեղինակները տարբեր կերպերով էին կիրառում հոդը:

X. ՀՈՒՆԱՐԵՆ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ ԾԵՇՏԱԴՐՈՒՄՆԵՐԸ

Ա. Շեշտադրման տեխնիկան տարբեր է ՆԿ-ի տարբեր հեղինակների մոտ: Ամենահետևողական և խիստ հեղինակները Դուկասը և Եբրայեցիս թղթի հեղինակն էր:

Բ. Ավելի շուտ նշեցինք, որ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼԸ ստանդարտ է և չի շեշտադրվում, մինչ ցանկացած այլ ժամանակաձև, սեռ կամ եղանակ մեկնության համար իրենց նշանակությունն ունեն: Իհարկե դա չի նշանակում, որ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼԸ հաճախ չէր կիրառվում որպես կարևոր քերականական ձև: Օրինակ՝ Հռոմ.6:10 (երկու անգամ):

Գ. Բառային հաջորդականությունը կոյնե հունարենում

1. Կոյնե հունարենը ճկուն լեզու էր, որ ի տարբերություն անգլերենի կախված չէր բառային հաջորդականությունից: Հետևաբար հեղինակը կարող էր փոխել բառերի ստանդարտ հերթականությունը, որպեսզի արտահայտեր՝
 - ա. ինչ էր ուզում հեղինակը ընդգծել ընթերցողի համար
 - բ. ինչը կարող էր ըստ հեղինակի զարմացնել ընթերցողին
 - գ. հեղինակի համար թանկ և կարևոր բաները

2. Բառային ստանդարտ հաջորդականությունը հունարենում դեռևս անլուծելի խնդիր է: Սակայն, ենթադրվում է, որ բառային ստանդարտ հաջորդականությունը սա է՝
 - ա. Կապող ԲԱՅԵՐԻ համար
 - (1) ԲԱՅ
 - (2) ԵՆԹԱԿԱ
 - (3) ԼՐԱՑՈՒՄ
 - բ. անցողիկ ԲԱՅԵՐԻ համար
 - (1) ԲԱՅ
 - (2) ԵՆԹԱԿԱ
 - (3) ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ
 - (4) ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ
 - (5) ՆԱԽԴԻՐՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ
 - գ. ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ համար
 - (1) ԳՈՅԱԿԱՆ
 - (2) ՈՐՈՇԻՉ
 - (3) ՆԱԽԴԻՐՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ
3. Բառային հաջորդականությունը կարող է մեկնաբանության համար խիստ կարևոր լինել: Օրինակներ՝
 - ա. „Աջ ձեռք տվեցին ինձ և Բառնաբասին հաղորդակցության համար,, (Գաղ.2:9 /հունարենի հաջորդականությամբ/): „Աջ ձեռք հաղորդակցության համար,, արտահայտությունը կիսվել է և դրվել սկզբում և վերջում, ցույց տալու դրա կարևորությունը:
 - բ. „Քրիստոսի հետ,, (Գաղ.2:19) դրված էր առջում /հունարենում՝ „Ես Քրիստոսի հետ խաչված եմ,,/: Նրա մահը կենտրոնական իրադարձությունն էր:
 - գ. „Շատ մասերով և շատ կերպերով,, (Եբր.1:1) առջևում էր դրված: Շեշտադրվում էր այն, թե ինչպես Աստված հայտնեց Իրեն, ոչ թե հենց հայտնության փաստը:

Գ. Սովորաբար շեշտադրման համար նաև կիրառվում էր՝

1. ԴԵՐԱՆՎԱՆ կրկնությունը, որն արդեն առկա էր ԲԱՅԻ խոնարհված ձևում: Օրինակ՝ „Ես Ինքս ձեզ հետ եմ...,, /հայ.՝ „Եվ ահա Ես ձեզ հետ եմ,,/ (Մատթ.28:20):
2. Սպասված ՇԱՂԿԱԳԻ կամ մեկ այլ ԿԱՊԵՐԻ, արտահայտությունների կամնախադասությունների միջև բացակայությունը: Սա կոչվում է անշաղկապություն (,,չկապված,,): Սպասվում էր, որ ՇԱՂԿԱԳԸ պետք է լիներ, հետևաբար դրա բացակայությունը կարող էր ուշադրություն գրավել իր վրա: Օրինակներ՝
 - ա. Երանելիները, Մատթ.5:3 և այլն (շեշտադրվում էր հերթականությունը)
 - բ. Հովհ.14:1 (նոր թեմա)
 - գ. Հռոմ.9:1 (նոր բաժին)
 - դ. 2 Կորնթ.12:20 (շեշտադրվում է հերթականությունը)
3. Տրված համատեքստում առկա բառերի և արտահայտությունների կրկնությունը: Օրինակներ՝ „Իր փառավոր շնորհքի գովասանքի համար,, (Եփես.1:6,12 և 14): Այս արտահայտությունն օգտագործվում էր շեշտադրելու Սբ. Երրորդության յուրաքանչյուր անձի գործը:
4. Բարբառային արտահայտությունների կամ բառախաղերի կիրառությունը
 - ա. Մեղմասությունները թաքույի ենթարկված բառերի փոխարինող բառերն են, ինչպիսիք են՝ „ննջել,, մահ բառի փոխարեն (Հովհ.11:11-14) կամ „ոտքեր,, տղամարդու սեռական օրգանի փոխարեն (Հռոմ 3:7-8; 1 Թագ.24:3):
 - բ. Շրջաբանությունները Աստծո անվանը փոխարինող բառեր են, ինչպես օրինակ՝ „Երկնքի թագավորություն,, (Մատթ.3:21) կամ „ձայն Երկնքից,, (Մատթ.3:17):
 - գ. Փոխաբերություններ
 - (1) անվանական չափազանցություններ (Մատթ.3:9; 5:29-30; 19:24)
 - (2) մեղմ չափազանցություններ (Մատթ.3:5; Գործք 2:36)
 - (3) անձնավորում (1 Կորնթ.15:55)
 - (4) հեգնանք (Գաղ.5:12)
 - (5) բանաստեղծական հատվածներ (Փիլ.2:6-11)
 - (6) բառախաղ
 - (ա) „եկեղեցի,,
 - (i) „եկեղեցի,, (Եփես.3:21)
 - (ii) „կոչում,, (Եփես.4:1,4)

(iii) „կանչված,, (Եփես.4:1,4)

(բ) „ազատ,,

(i) „ազատ կին,, (Գաղ.4:31)

(ii) „ազատություն,, (Գաղ.5:1)

(iii) „ազատել,, (Գաղ.5:1)

դ. Բարբառային լեզու՝ մի լեզու որը բնորոշ է տվյալ մշակույթին կամ լեզվին:

(1) „Կերակուր,, բառի փոխաբերական կիրառությունը (Հովհ.4:31-34)

(2) „Տաճար,, բառի փոխաբերական կիրառությունը (Հովհ.2:19; Մատթ.26:61)

(3) Կարեկցանքի երբայերեն բարբառը „ատել,, է (Ծննդ.29:31; 2 Օր.21:15; Ղուկ.14:36; Հովհ.12:25; Հռոմ.9:13):

(4) „Ամենքս,, բառն՝ ի համեմատություն „շատերը,, բառի: Համեմատություն՝ Եսայի 53:6 („ամենքս,,), իսկ 53:11 և 12 („շատերը,,): Այս տերմինները հոմանիշներ են, ինչպես ցույց են տալիս Հռոմ.5:18 և 19:

5. Մեկ բառի փոխարեն լիակատար լեզվաբանական արտահայտության կիրառություն: Օրինակ՝ „Տեր Հիսուս Քրիստոս,,

6. *autos* բառի կիրառումը՝

ա. հողի հետ (որոշիչ) այն թարգմանվում էր որպես „նույն,,

բ. առանց հողի (ստորագյալ) այն թարգմանվում էր որպես ուժգնացող անդրադարձ դերանուն՝ ինքն իրեն:

Ե. Աստվածաշունչ ընթերցողը, որը չգիտի հունարեն լեզուն, կարող է գտնել շոշոտադրված տեղերը հետևյալ կերպ.

1. Օգտվելով վերլուծական բառարանից և հունարեն-անգլերեն տեքստի տողամիջյան թարգմանությունից:

2. Համեմատելով անգլերեն թարգմանությունները, հասկապես նրանք, որոնք հիմնված են թարգմանության տարբեր տեսությունների վրա: Օրինակ՝ կարելի է համեմատել „բառացի,, թարգմանությունները (KJV, NKJV, ASV, NASB, RSV, NRSV) „համարժեք դիմամիկ,, թարգմանությունների հետ (Williams, NIV, NEB, REB, JB, NJB, TEV): Ձեզ նաև մեծապես կօգնի „Աստվածաշունչը Քսանվեց Թարգմանություններով,, Բեյքերի հրատարակության գիրքը (*The Bible in Twenty-Six Translations*, Baker):

3. Օգտվելով Չոզեֆ Բրայանթ Ռոթերհեմի գրքից՝ „Հատուկ Ծեշտադրումն Աստվածաշնչում,, (*the Emphasized Bible*, Joseph Bryant Rotherham /Kregel/, 1994):

4. Օգտվելով Աստվածաշնչի հետևյալ բառացի թարգմանություններից.

ա. „Ամերիկյան Ստանդարտ Տարբերակ,, (*The American Standard Version*, 1901):

բ. „Աստվածաշնչի Բառացի Թարգմանություն Ըստ Յանգի,, (*Young's Literal Translation of the Bible* /Gardian Press/, 1976):

Քերականություն ուսումնասիրելը հոգնեցուցիչ է, բայց անհրաժեշտ է ճիշտ մեկնաբանության համար: Այս համառոտ սահմանումները, մեկնաբանությունները և օրինակները նպատակ ունեն քաջալերելու և սպառազինելու հունարեն չիմացող անձանց, որպեսզի օգտվեն այս գրքի քերականական բացատրություններից: Անշուշտ, այս սահմանումները չափազանց պարզեցված են: Դրանք չպետք է կիրառել դոգմատիկ և ոչ ճկուն կերպով, այլ որպես մի քայլ ՆԿ-յան շարահյուսությունն ավելի լավ հասկանալու ուղղությամբ: Հուսով ենք, որ այս սահմանումները կօգնեն նաև ընթերցողներին հասկանալու մյուս ուսումնական ձեռնարկների մեկնաբանությունները, ինչպիսիք են՝ ՆԿ-ի հատուկ սերտողությունները:

Մենք պետք է կարողանանք ստուգել մեր մեկնությունն աստվածաշնչյան տեքստերի տեղեկատվության հիման վրա: Հասկանալ քերականությունը ծայրահեղ կարևոր է, սակայն մեզ նաև օգնում են պատմական և գրական համատեքստերը, ինչպես նաև բառերի ժամանակակից օգտագործման և գուգահեռ տեքստերի կիրառման մասին իրազեկությունը:

ՀԱՎԵԼՎԱԾ ԵՐԿՈՒ ՏԵՔՍԱՅԻՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Մենք այս թեման կնայենք այնպես, որ բացատրենք տեքստային ծանուցումները՝ բերված այս մեկնաբանության մեջ: Մենք կհետևենք հետևյալ պլանին՝

- I. Անգլերեն Աստվածաշնչի տեքստային աղբյուրները
 - Ա. Հին Կտակարան
 - Բ. Նոր Կտակարան
- II. Խնդիրների և «ցածր քննադատության» կամ այսպես կոչված «տեքստային քննադատության» տեսությունների համառոտ բացատրությունը:
- III. Գրքեր լրացուցիչ ընթերցանության համար:

I. Անգլերեն Աստվածաշնչի տեքստային աղբյուրները

Ա. Հին Կտակարան

1. Մագորեթիկ տեքստ (MT) – Սա հին հրեական կոնսոնանտ (բաղաձայն տառերով գրված) տեքստ էր խմբագրված ռաբբի Աքիբայի կողմից մ. թ. 100-ին: Չայնավոր հնչյունները, շեշտերը, լուսանցքի նշումները, կետադրությունը և ապարատային նշանները սկսեցին ավելացվել 6-րդ դարում և վերջնականապես ձևավորվել 9-րդ դարում: Դա արվեց հայտնի հրեա գիտնականների կողմից, ովքեր մագորեթներ էին: Տեքստը, որը նրանք օգտագործեցին, նույնն էր ինչ որ Միշնան, թալմուդը, Թարգումները, Փեշիթան և Վուլգատան:
2. Մեպտուագինտա (LXX) – Ավանդույթն ասում է, որ Մեպտուագինտան կազմվել է 70 հրեա գիտնականների կողմից 70 օրվա ընթացքում, Ալեքսանդրիան գրադարանի համար Պտղոմեոս II թագավորի հովանավորությամբ (Ք. Ա. 285-246): Ենթադրվում է, որ թարգմանությունը կատարվել է Ալեքսանդրիայում ապրող մի հրեա առաջնորդի խնդրանքով: Այս ավանդույթը հիմնված է «Արիստեոսի ուղերձի» վրա: LXX հաճախ հիմնվում էր եբրայերեն այլ տեքստային ավանդության վրա, համեմատվելով ռաբբի Աքիբայի (MT) տեքստի հետ:
3. Մեռյալ Ծովի մագաղաթները (DSS) - Մեռյալ Ծովի մագաղաթները գրվել են Հռոմում (Ք. Ա. 200- մ. թ. 70) հրեա անջատողական խմբավորման կողմից, որոնք կոչվում էին «Էսսեններ» (սրանք փարիսեցիների նախահայրերն էին): Մեռյալ Ծովի տարմեր մասերից գտնված եբրայերեն ձեռագրերը պատկանում են եբրայերեն ուրիշ տեքստային ընտանիքի՝ չտարբերվելով MT և LXX:
4. Ահա մի քանի հստակ օրինակներ, թե ինչպես են այս տեքստերի համեմատությունները օգնել մեկնաբանել Հին Կտակարանը հասկանալու համար.
 - ա. LXX օգնել է թարգմանիչներին և գիտնականներին հասկանալ MT
 - (1) LXX, Ես.52:14, «Ինչպես որ շատերը ապշեցին ՆԲԱ վրա»
 - (2) MT, Ես.52:14, «Ինչպես որ շատերը ապշեցին ՔԵՉ վրա»
 - (3) դատելով Ես.52:15-ից ճիշտ տարբերակը LXX-ն է
 - (ա) LXX, «նույնպես պիտի շատ ազգեր ապշեն Նրանով»
 - (բ) MT, «այնպես շատ ազգերի Նա զարմացնում է»
 - բ. DSS օգնել են թարգմանիչներին և գիտնականներին հասկանալ MT
 - (1) DSS, Ես.21:8, «հետո տեսանողը աղաղակեց, դիտարանի վրա եմ կանգնել Ես...»
 - (2) MT, Ես. 21:8, «Առյուժ, ո՛վ Տերս, ցերեկը շարունակ կանգնում եմ դիտանոցի վրա»
 - գ. LXX և DSS օգնել են հասկանալ Ես.53:11-ը
 - (1) LXX և DSS, «Իր անձի աշխատությունից հետո նա կտեսնի լույսը և կբավարարվի»
 - (2) MT, «Իր անձի աշխատության պտուղը պիտի տեսնի ու պիտի բավարարվի»

Բ. Նոր Կտակարան

1. Գոյություն ունեն հունարեն ամբողջական Նոր Կտակարանի կամ նրա մասերի ավելի քան 5300 ձեռագրեր: Մոտավորապես 85 գրված են պապիրուսների վրա, իսկ 268 ձեռագրեր գրված են բոլորը մեծատառերով (ունցիալներ): Ավելի ուշ, մոտավորապես մ. թ. 9-րդ դարում հայտնվեցին գրչագիր՝ ձեռագրերը (փոքրատառերը միջնադարյան ձեռագրերում): Հաշվվում է մոտ 2700 հունարեն ձեռագրեր: Մենք նաև ունենք Մուրբ Գրքի մոտ 2100 օրինակներ, որոնք օգտագործվել են պաշտամունքների ժամանակ, որոնք կոչվում են բնագրի տարբերակներ:
2. Մոտ 85 հունարեն ձեռագրեր, պարունակելով ՆԿ-ի առանձին հատվածներ, գրված պապիրուսների վրա, գտնվում են թանգարաններում: Նրանցից մի քանիսը պատկանում են մ. թ. 2-րդ դարին, սակայն մեծամասնությունը մ. թ. 3-րդ և 4-րդ դարերին: Այս ձեռագրերից ոչ մեկը չի պարունակում ՆԿ-ն ամբողջությամբ: Եվ չնայած, որ նրանք հանդիսանում են ՆԿ-ի ամենահին օրինակները, դա ինքնըստինքյան չի նշանակում, որ նրանցում քիչ տարբերակներ կան: Այդ

- օրինակներից շատերը արվել են հապճեպ՝ տեղական օգտագործման համար, որոնց վրա այդ-քան էլ ուշադրություն չեն դարձրել: Այդ իսկ պատճառով նրանց մեջ կան շատ տարբերակներ:
3. Մինայական հին ձեռագրերի ժողովածու (Codex Sinaiticus), որը հայտնի է երբայերեն *α* (*aleph*) տառով կամ (01), գտնվել է Թիաշենդորֆի կողմից Մինա լեռան վրա գտնվող Սուրբ Եկատերինայի վանքից: Այն պատկանում է մ. թ. 4-րդ դարին և պարունակում է LXX թե՛ Հին Կտակարանի և թե՛ հունարեն ՆԿ-ի թարգմանությունը: Այս տեքստը «ալեքսանդրիան տեսակի» է:
 4. Ալեքսանդրիան հին ձեռագրերի ժողովածուն (Codex Alexandrinus), որը հայտնի է որպես «A» կամ (02), 5-րդ դարի հունարեն ձեռագիր է, գտել են Եգիպտոսի Ալեքսանդրիայում:
 5. Վատիկանյան հին ձեռագրերի ժողովածուն (Codex Vaticanus), որը հայտնի է որպես «B» կամ (03), գտել են Հռոմի Վատիկանի գրադարանում և պատկանում է մ. թ. 4-րդ դարի կեսերին: Այն պարունակում է LXX թե՛ Հին Կտակարանի և թե՛ հունարեն Նոր Կտակարանի թարգմանությունը: Այս տեքստը «ալեքսանդրիան տեսակի» է:
 6. Եփրեմի հին ձեռագրերի ժողովածուն (Codex Ephraemi), որը հայտնի է որպես «C» կամ (04), 5-րդ դարի հունարեն ձեռագիր է, որը մասամբ ոչնչացվել է:
 7. Բիզայի հին ձեռագրերի ժողովածուն (Codex Bezae), որը հայտնի է որպես «D» կամ (05), 5-րդ կամ 6-րդ դարի հունարեն ձեռագիր է: Սա հանդիսանում է «Արևմտյան Տեքստ» կոչվող ձեռագրի հիմնական տարբերակը: Այն պարունակում է բազմաթիվ հավելումներ և հանդիսացել է հիմնական հունարեն ձեռագիրը անգլերենի KING JAMES թարգմանության ժամանակ:
 8. Նոր Կտակարանի ձեռագրերը կարող են բաժանվել երեք, հնարավոր է նաև չորս ընտանիքների, որոնք ունեն որոշակի առանձնահատկություններ.
 - ա. Ալեքսանդրիան տեքստը Եգիպտոսից
 - (1) P⁷⁵, P⁶⁶, (մոտ մ.թ. 200), պարունակում են Ավետարանները
 - (2) P⁴⁶ (մոտ մ.թ. 225), պարունակում է Պողոսի նամակները
 - (3) P⁷² (մոտ մ.թ. 225-250), պարունակում է Պետրոսի և Հուդայի նամակները
 - (4) Հին ձեռագրերի ժողովածու B, որը կոչվում է Վատիկանյան (մոտ մ.թ. 325), ընդգրկում է ՀԿ և ՆԿ ամբողջությամբ
 - (5) Օրիգենի մեջբերումը այս տեսակի տեքստից
 - (6) ուրիշ MSS ձեռագրեր, որտեղ այս տեսակի տեքստ են ներկայացնում, հետևյալն են՝ ,*α*, C, L, W, 33
 - բ. Արևմտյան տեքստ՝ Հյուսիսային Աֆրիկայից
 - (1) հյուսիս-աֆրիկյան եկեղեցու հայրերի՝ Տերտուլիանոսի, Կիպրիանոսի մեջբերումները և հին լատիներեն թարգմանությունը
 - (2) Իրենեոսի մեջբերումները
 - (3) Տացիանոսի մեջբերումները և հին սիրիական թարգմանությունը
 - (4) Հին ձեռագրերի ժողովածու „D“, Բիզայի՝ այս տեսակի տեքստ
 - գ. Արևելյան բյուզանդական տեքստ Կոնստանդնուպոլսից
 - (1) Այս տեսակի տեքստը ներկայացված է 5300 ձեռագրերից ավելի քան 80%-ի մեջ
 - (2) Սիրիայի Անտիոքի եկեղեցու հայրերի մեջբերումները՝ Կապադոկյացիներ, Ոսկեբերան և Թերողորեթ
 - (3) Հին ձեռագրերի ժողովածու A (Codex A), միայն Ավետարաններում
 - (4) Հին ձեռագրերի ժողովածու E (Codex E), 8-րդ դար՝ ամբողջ ՆԿ-ը
 - դ. Չորրորդ հնարավոր տեսակը «Կայսերական» է Պաղեստինից
 - (1) հիմնականում հանդիպում է միայն Մարկոս Ավետարանում
 - (2) մասամբ կարելի է գտնել P⁴⁵ և W ձեռագրերում

II. «Ցածր քննադատության» կամ «տեքստային քննադատության» խնդիրներն ու տեսությունները

Ա. Ինչպե՞ս են հայտնվել տարբերակները

1. ոչ դիտավորյալ կամ պատահական (շատ դեպքերում՝ մեծամասամբ)

ա. Վրիպակ, երբ երկու միանման բառեր (կամ նույնանման վերջավորություն ունեցող բառը) իրար կողք կողքի դրված, արտագրողը նայել է երկրորդին և բաց է թողել այդ երկուսի միջև գտնվող ամբողջ տեքստը (հոմեոտելետոն - homoioteleuton)

- (1) աչքի վրիպում, երբ բաց է թողնվել նույն տառերով բառի մի մասը կամ ամբողջ արտահայտությունը (հապլոգրաֆիա - haplography)
- (2) հունարեն տեքստի արտահայտության կամ տողի կրկնություն (դիտոգրաֆիա - dittography)

- բ. լսողական վրիպում. տեքստը թելադրության միջոցով արտագրելու ժամանակ, բառերի գրելաձևի վրիպում (իտացիզմ - itacism): Հաճախ գրվել է նույնանման հնչողությամբ հունարեն բառի մեկ այլ տարբերակ:
- գ. Շատ հին հունարեն տեքստերում գլուխների և համարների բաժանումները չկան, գրեթե բացակայում է կետադրությունը և բառերը իրարից առանձնացված չեն: Տեքստը կարելի է բաժանել տարբեր մասերում, որի արդյունքում ստացվում են նոր բառեր:

2. Դիտավորյալ

- ա. Արտագրված տեքստի քերականական բարելավման համար արվել են փոփոխություններ
- բ. Տեքստը աստվածաշնչյան այլ տեքստերի հետ համաձայնեցնելու համար արվել են փոփոխություններ (գուգահեռ տեքստերի համաձայնեցում)
- գ. Ընթերցանության երկու կամ ավելի տարբերակներից մեկ երկար կապակցված տեքստ ստանալու համար կատարվել են փոփոխություններ (միաձուլում)
- դ. Անհասկանալի թվացող տեքստը ուղղելու համար կատարվել են փոփոխություններ (տես՝ 1 Կորնթ.11:27 և 1 Հովհ.5:7-8):
- ե. մի արտագրող լրացուցիչ տեղեկություն է մտցրել պատմական կոնտեքստի կամ տեքստի ճիշտ մեկնաբանության վերաբերյալ լուսանցքներում, իսկ մյուս արտագրողը դա մտցրել է հենց տեքստի մեջ (տես՝ Հովհ.5:4):

Բ. Տեքստային քննադատության հիմնական սկզբունքները (տրամաբանական միջոցներ՝ տեքստի բնագրի ընթերցանությունը որոշելու համար, երբ կան տարբերակներ)

1. ամենատարօրինակ կամ անսովոր քերականական տեքստը ավելի շուտ բնագիրն է
2. ամենակարճ տեքստը ավելի շուտ բնագիրն է
3. ավելի հին տեքստին ավելի շատ արժեք է տրվում՝ նրա պատմականորեն բնագրին մոտ լինելու համար, իսկ մնացած ամեն ինչում հավասար են
4. ձեռագրեր, որոնք աշխարհագրական առումով բաժանված են, սովորաբար մոտ են բնագրին
5. վարդապետորեն ավելի թույլ տեքստեր, հատկապես ձեռագրերի փոփոխության ժամանակաշրջանում մեծ աստվածաբանական քննարկումներին վերաբերող, ինչպես օրինակ Երրորդության թեման 1 Հովհ.5:7-8-ում
6. գերադասելի է այն տեքստը, որն օգնում է բացատրել այլ տարբերակների գոյությունը
7. երկու մեջբերումներ, որոնք օգնում են ցույց տալու բալանսը այսպիսի խորին տարբերակներում

ա. Ջ. Հարոլդ Գրինլի «Նոր Կտակարանի տեքստային քննադատության ներածություն» (J. Harold Greenlee's book, *Introduction to New Testament Textual Criticism*) էջ՝ 68. «Ոչ մի Զրիստոնեական վարդապետություն չի հիմնվում վիճելի տեքստի վրա և ՆԿ-ը ուսումնասիրող յուրաքանչյուր անձ պետք է զգուշանա իր տեքստը ավելի ուղղափառ կամ վարդապետական դարձնելուց, քան ներշնչված բնագիրն է»:

բ. Ու. Է. Կրիստելին ասում էր Գրեգ Գարիսոնին «Բիրմինգհեմ Նյուզ»-ից, որ նա՝ Կրիստելը, չի հավատում, որ Աստվածաշնչի յուրաքանչյուր բառ ներշնչված է, «համենայն դեպս, ոչ ամեն բառ, որը հասել է ժամանակակից հրատարակման՝ թարգմանիչների բազմադարյա գործունեությունից հետո»: Եվ ավելացրեց, - «Ես հավատում եմ տեքստային քննադատությանը: Եվ որպես այդպիսին, կարծում եմ, որ Մարկոսի Ավետարանի 16-րդ գլխի երկրորդ կեսը հերետիկոսություն է, այն ներշնչված չէ, այլ ակնհայտ հորինվածք է... Եթե համեմատենք հին ձեռագրերը, կտեսնենք, որ Մարկոսի Ավետարանը այդպիսի վերջաբան չունի: Ինչ-որ մեկը այն ավելացրել է...»:

SBC (“Southern Baptist Convention”) անսխալականության հետազոտողներից այս նախահայրը նաև պնդում է, որ «ինտերպոլացիա» նաև ակնհայտ է Հովհաննես 5-ում, Բեթհեզդայի ավազանի մոտ Հիսուսի պատմության մեջ: Խոսելով Հուդայի ինքնասպանության հետ կապված երկու տարբեր պատմությունների մասին (տես՝ Մատթեոս 27 և Գործք 1), Կրիստելին ասում էր, - «Սա պարզապես ինքնասպանությունը դիտարկելու մեկ այլ ձև է: Եթե դա այդպես է Աստվածաշնչում, ապա ունի բացատրություն: Իսկ Աստվածաշնչում կա երկու պատմություն Հուդայի ինքնասպանության մասին»: Կրիստելին ավելացրեց, - «Տեքստային քննադատությունը ինքնին հիանալի գիտություն է: Այն անցողիկ և անհեթեթ չէ, այլ դիմամիկ է և շատ կարևոր...»:

III. Ձեռագրերի խնդիրները (տեքստային քննադատություն)

Ա. Հետագա ընթերցանության համար գրքեր.

1. *Biblical Criticism: Historical, Literary and Textual*, by R. H. Harrison (Ռ. Հ. Հարիսոն, «Աստվածաշնչյան քննադատություն՝ պատմական, գրական և տեքստային»):

2. *The Text of the New Testament: Its Transmission, Corruption and Restoration* by Bruce M. Metzger (Բրյուս Մ. Մեցգեր, «Նոր Կտակարանի Տեքստը՝ ձեռագրերի ավանդությունը, խեղաթյուրումը և բնագրի վերականգնումը»):
3. *Introduction to New Testament Textual Criticism*, by J. H. Greenlee (Ջ. Հ. Գրինլի, «Նոր Կտակարանի տեքստային քննադատության ներածություն»)

ՀԱՎԵԼՎԱԾ ԵՐԵՔ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Ալեքսանդրիան դպրոց. Աստվածաշնչյան մեկնաբանության այս մեթոդը զարգացել է Եգիպտոսի Ալեքսանդրիայում մ. թ. 2-րդ դարում: Այնտեղ օգտագործվում է Ֆիլոյի հիմնական մեկնաբանական սկզբունքները, որը Պլատոնի հետևորդն էր: Հաճախ այն կոչվում է այլաբանական մեթոդ: Մինչև Բարեփոխությունը եկեղեցին ընդունում էր այս մեթոդը: Սրա ամենաուժեղ կողմնակիցները եղել են Օրիգենը և Օգոստինոսը: Տե՛ս Սիլվա Մայիսեյի «*Եկեղեցին ճիշտ չի՞ կարդացել Աստվածաշունչը*» գիրքը (Moises Silva, *Has The Church Misread The Bible*) (հրատ. Academic, 1987):

Ալեքսանդրիան հին ձեռագրերի ժողովածու. սա 5-րդ դարի հունարեն ձեռագիր է, գտել են Ալեքսանդրիայում, Եգիպտոս, որը պարունակում է ՀԿ-ը, Անկանոն Գրքերը և ՆԿ-ից շատ գրքեր: Սա հանդիսանում է ամբողջ հունարեն ՆԿ-ի գլխավոր օրինակներից մեկը (բացի Մատթեոսից, Հովհաննես Ավետարանից և 2 Կորնթացիներից որոշ մասերի): Գիտնականներից շատերը շատ դեպքերում համարում են, որ երբ այս ձեռագիրը, որը հայտնի է որպես «A» համընկնում է «B» (Վատիկանյան) ձեռագրի հետ, ուրեմն տեքստը բնագիր է:

Այլաբանություն. սա Աստվածաշնչի մեկնաբանության տեսակ է, որը սկիզբ է առել ալեքսանդրիան հուդայականության մեջ: Այն հանրաճանաչ է դարձել Փիլոնոմ Ալեքսանդրիացու կողմից: Սրա հիմնական յուրահատկությունն է Մուրբ Գիրքը հարմարեցնել որևէ մեկի մշակությանը կամ փիլիսոփայական համակարգին, անտեսելով Աստվածաշնչի պատմական և/կամ գրական համատեքստը: Նրա մեջ փնտրում են թաքնված հոգևոր իմաստ յուրաքանչյուր սուրբգրային տեքստի ետևում: Պետք է խոստովանել, որ Հիսուսը, Մատթ.13-ում, և Պողոսը, Գաղ.4-ում, օգտագործել են այլաբանություն՝ ճշմարտությունը փոխանցելու համար: Դա, ինչևէ, սիմվոլիկ լեզու էր, և ոչ թե խիստ այլաբանություն:

Աշխարհի պատկերը և աշխարհայացքը. սրանք համախոհ տերմիններ են: Այս երկու փիլիսոփայական գաղափարները կապված են արարչագործության հետ: «Աշխարհի պատկեր» տերմինը վերաբերում է «ինչպես» է ստեղծվել աշխարհը հարցին, մինչ «աշխարհայացքը» թե «Ով» է ստեղծել այն: Այս տերմինները կարևոր են Ծննդ.1-2 գլուխները մեկնաբանելու համար, որտեղ խոսքը գնում է, նախ և առաջ այն մասին, թե Ով է ստեղծել երկիրը, և թե ինչպես է այն ստեղծվել:

Անտիոքյան Դպրոց. Աստվածաշնչյան մեկնաբանության այս մեթոդը զարգացել է Սիրիայի Անտիոքում, մ.թ. 3-րդ դարում որպես պատասխան Եգիպտոսի Ալեքսանդրիայի այլաբանական մեթոդին: Նրա հիմնական գաղափարն էր ուշադրություն դարձնել Աստվածաշնչի պատմական նշանակությանը: Այս դպրոցը թարգմանեց Աստվածաշունչը որպես սովորական, մարդկային գրականություն: Այն ներգրավվեց բանավեճի մեջ, թե արդյոք Քրիստոսն ուներ երկու բնություն (նեստորականություն), թե մեկ (լրիվ Աստված և լրիվ մարդ): Հռոմի կաթոլիկ եկեղեցին հռչակեց դա հերետիկոսություն և նրա ներկայացուցիչները բնակություն հաստատեցին Պարսկաստանում, սակայն քիչ ազդեցություն ունեին: Այս դպրոցի հիմնական հերմենևտիկական սկզբունքները ավելի ուշ սկսեցին օգտագործվել դասական բողոքական Ռեֆորմատորների կողմից (Լյութեր և Կալվին):

Ապոկալիպտիկ գրականություն. առավելապես, գուցե և բացառապես, հրեական ժանր էր: Գրելաոնի գաղտնի տեսակ էր, որը հրեաները օգտագործում էին օտար աշխարհակալների կողմից նվաճումների ու զավթումների ժամանակ: Ենթադրվում էր, որ անձ հանդիսացող Փրկիչ Աստվածը ստեղծել և վերահսկում է աշխարհի իրադարձությունները, և որ Աստված հատուկ ուշադրություն և խնամք է ցուցաբերում Իսրայելի հանդեպ: Այս գրականությունը Աստծո ժողովրդին խոստանում է վերջնական հաղթանակ Աստծո հատուկ ջանքերի շնորհիվ:

Սա շատ խորհրդավոր և ֆանտաստիկ ժանր է՝ բազմաթիվ հանելուկային տերմիններով: Այստեղ ճշմարտությունը հաճախ արտահայտվում է գույների, թվերի, տեսիլքների, երազների, հրեշտակների, գաղտնագրերի տեսքով, հաճախ կա նաև սուր դուռալիզմ չարի և բարու միջև: Այս ժանրի մի քանի օրինակներ (1) Հին Կտակարանում՝ Եզեկիել (36-48 գլուխները), Դանիել (7-12 գլուխները), Չաքարիա; և (2) Նոր Կտակարանում՝ Մատթեոս 24; Մարկոս 13; 2 Թեսաղոնիկեցիներին 2 և Հայտնություն:

Ապոլոգետ (ապոլոգետիկա / հավատքի պաշտպանություն). Տերմինը առաջացել է հունարեն «օրինական պաշտպանություն» բառի արմատից: Աստվածաբանության մեջ սա հատուկ կարգուկանոն է, որը ձգտում է ներկայացնել ապացույցներ և ռացիոնալ փաստարկներ քրիստոնեական հավատքի օգտին:

Արիսականություն. Արիսը Եգիպտոսի Ալեքսանդրիայի եկեղեցու երեցն էր, 3-րդ և 4-րդ դարի սկզբին: Նա պնդում էր, որ Հիսուսը հավիտենական էր, բայց ոչ Աստված (Հոր նույն էությունը չուներ), հնարավոր է հենվելով Առակաց 8:22-31-ի վրա: Նրան մարտահրավեր է նետում Ալեքսանդրիայի եպիսկոպոսը և վեճը սկսում է (մ.թ. 318), որն էլ շարունակվում է երկար տարիներ: Արիսականությունը դարձավ նույնիսկ հավատքի պաշտոնական խորհրդանիշը արևելքի եկեղեցում: Մ.թ. 325-ին Նիկիայի Ժողովը դատապարտեց Արիսին և հռչակեց Հոր և Որդու աստվածության լիարժեք հավասարությունը:

Արիստոսել. Հին հունական փիլիսոփաներից էր, Պլատոնի աշակերտը և Ալեքսանդր Մակեդոնացու ուսուցիչը: Նրա ներգործությունը մինչև այսօր զգացվում է ժամանակակից ուսումնասիրությունների շատերի մեջ, քանի որ նա շեշտը դնում էր հետազոտության և դասակարգման միջոցով կատարվող գիտության վրա: Սա գիտական մեթոդների սկզբունքներից մեկն է:

Աստվածաշնչյան հեղինակություն. Այս տերմինը օգտագործվում է շատ մասնագիտացված նշանակությամբ: Այն սահմանվում է որպես մի հասկացողություն, թե իր օրերում բնագրի հեղինակն ինչ է ասել և մեր օրերում այդ ճշմարտությունը ինչպես կիրառել: Աստվածաշնչյան հեղինակությունը սովորաբար սահմանվում է որպես Աստվածաշունչը դիտարկելու ձև, որպես մեր միակ հեղինակավոր ուղեցույց: Ինչևէ, լայն տարածում գտած, սխալ մեկնաբանությունների լույսի ներքո, ես սահմանափակել եմ Աստվածաշնչի գաղափարը թարգմանված պատմական-քերականական մեթոդով:

Անհատական կարծիքի հաստատում աստվածաշնչյան տեքստի միջոցով. Սուրբ Գրքի մեկնության կիրառություն, երբ մեջբերվում է որևէ համար առանց ուշադրություն դարձնելու անմիջական տեքստին կամ գրական հատվածի ընդհանուր կոնտեքստին: Արդյունքում մոռացվում են բնագրի հեղինակի մտադրությունները և հաճախ փորձ է կատարվում հաստատելու որևէ անձնական կարծիք իր աստվածաշնչյան հեղինակությամբ:

Բնագրի հեղինակը. Սա վերաբերում է Սուրբ Գրքի իրական հեղինակներին՝ գրողներին:

Բնագրեր. Սա Աստվածաշնչի բնօրինակի գրվածքներին տրված անունն է: Այս բնագիր, ձեռագիր մատյանները բոլորն էլ կորել են: Միայն օրինակների օրինակներն են մնացել: Սա երբայերեն և հունարեն ձեռագրերի և հին տարբերակների շատ տեքստային տարբերակների աղբյուրն է:

Բիզայի հին ձեռագրերի ժողովածու. 6-րդ դարի հունարեն և լատիներեն ձեռագիր է, որը հայտնի է որպես «D»: Պարունակում է բոլոր Ավետարանները և Գործք Առաքելոցը, ինչպես նաև մի քանի թղթեր: Այն պարունակում է շատ լրացումներ, որոնք արվել են դպիրների կողմից: Սա հիմք է հանդիսացել «Textus Receptus» հիմնական հունարեն ձեռագրի համար, որն էլ իր հերթին հիմք է հանդիսացել անգլերենի King James Նոր Կտակարանի թարգմանության համար:

Բարձր քննադատություն. Աստվածաշնչյան մեկնության ընթացակարգը, որը կենտրոնանում է աստվածաշնչյան առանձին գրքի պատմական կոնտեքստի և գրական կառուցվածքի վրա:

Բառացի թարգմանություն. Սա սերտողության միջոց է, որը թույլ է տալիս մարդկանց, որոնք չեն տիրապետում աստվածաշնչյան լեզվին, վերլուծել նրա նշանակությունը և կառուցվածքը: Սա բառացի թարգմանություն է, որը գրվում է աստվածաշնչյան լեզվով անմիջապես բնագրի տեքստի տակ: Այս ձևը, ինչպես նաև վերլուծական բառարանը, մեզ տալիս է Աստվածաշնչի հին երբայերեն և հունարեն տեքստի հիմնական նշանակությունները և ձևերը:

Բառացի ընթերցանություն. Եվս մեկ անուն հերմենևտիկական պատմական և կենտրոնացած տեքստի մեթոդի համար, որը զարգացել է Անտիոքում: Սա նշանակում է, որ մեկնաբանությունը ներառում է մարդկային լեզվի սովորական և ակնհայտ իմաստ, չնայած ընդունում է պատկերավոր լեզվի առկայությունը:

Բնական հայտնություն. Մարդու համար Աստծո հայտնության կատեգորիաներից մեկն է: Այն ներառում է բնության երևույթների հաջորդականությունը (Հռոմ.1:19-20) և բարոյական խղճմտանքը (Հռոմ.2:14-15): Այդ մասին խոսվում է Սաղմ.19:1-6 և Հռոմ.1-2: Այն տարբերվում է հատուկ հայտնությունից, որը Աստծո հատուկ հայտնությունն է Աստվածաշնչում և ամենակարևորը՝ Հիսուս Նազովրեցու մեջ:

Այս աստվածաբանական կատեգորիան կրկին վերընդգծվել է «հին աշխարհ» քրիստոնյա գիտնականների շարժման կողմից (օր.՝ Հյու Ռոսի գրվածքները /Hugh Ross/): Նրանք կիրառում են այս կատեգորիան, որպեսզի հաստատեն, որ ցանկացած ճշմարտություն Աստծուց է բխում: Բնությունը բաց դուռ է Աստծո մասին գիտություն ունենալու համար. այն տարբերվում է հատուկ հայտնությունից (Աստվածաշունչ): Այդպիսով ժամանակակից գիտությունը կարող է հետազոտել բնության երևույթների հաջորդականությունը: Իմ կարծիքով, սա նոր հիմնալի հնարավորություն է վկայելու Աստծո մասին ժամանակակից արևմտյան գիտական աշխարհում:

Գնոստիցիզմ. Այս հերետիկոսության՝ աղանդի մասին ունեցած մեր իմացության մեծ մասը գալիս է 2-րդ դարի գնոստիկ գրվածքներից: Սակայն համապատասխան գաղափարներ գոյություն են ունեցել դեռևս առաջին դարում (և դրանից առաջ):

2-րդ դարի գնոստիկներ Վալենտինայի և Կերնիթիանի որոշ հաստատված հավատամքներ այսպիսիներն են՝ (1) նյութն ու հոգին հավասարապես հավիտենականն են (օնթոլոգիական դյուալիզմ): Նյութը չար է, հոգին՝ բարի: Աստված, որ Հոգի է, չի կարող ուղղակիորեն ներգրավված լինել մեղավոր նյութի ձևավորման գործընթացում: (2) Աստծո և նյութի միջև կան էմանացիաներ (*eons* կամ հրեշտակային մակարդակներ): Դրանցից վերջինը կամ ամենացածրը ՀԿ-ի Եհովան էր, որ ստեղծեց տիեզերքը (*kosmos*): (3) Հիսուսը էմանացիա էր, ինչպես Եհովան, բայց ավելի բարձր մակարդակի վրա, ավելի մոտ ճշմարիտ Աստծուն: Ոմանք Նրան ամենաբարձրն էին համարում, բայց Աստծուց ցածր, և անշուշտ ոչ մարմնացած Աստված (տես՝ Հովհ.1:14): Քանի որ նյութը չար է, Հիսուսը չէր կարող ունենալ մարդկային մարմին և Աստված լինել: Նա հոգևոր ուրվական էր (տես՝ 1 Հովհ.1:1-3; 4:1-6); և (4) փրկությունը հասնում է Հիսուս Քրիստոսին հավատալով, գումարած հատուկ գիտություն, որն ունեն միայն հատուկ մարդիկ: Գիտությունը (ծածկագրեր) անհրաժեշտ էր, որպեսզի անցնեիր երկնային ոլորտների միջով: Հրեական օրինապաշտությունը նույնպես անհրաժեշտ էր՝ Աստծուն փնտրելու համար:

Գնոստիկ սուտ վարդապետները երկու հակադիր էթիկական համակարգերի կողմնակիցներ էին. (1) ոմանք կարծում էին, որ մարդու ապրելակերպը ոչ մի բանով կապ չունի փրկության հետ: Նրանց համար փրկությունն ու հոգևորությունը սահմանափակվում էին գաղտնի գիտությամբ (ծածկագրեր), որը կատարվում էր հրեշտակային մարմինների միջոցով (*eons*), կամ (2) ուրիշների համար էլ ապրելակերպը խիստ անհրաժեշտ էր փրկության համար: Նրանք համարում էին, որ ասկետիկ ապրելակերպը ապացույց էր ճշմարիտ հոգևորության:

Գրական ժանր. Հատուկ ձևեր, որոնք կարող են ինֆորմացիա փոխանցել մարդկային հասարակությանը, ինչպես օրինակ՝ պոեզիան կամ պատմական արձակը: Գրականության յուրաքանչյուր տեսակ մեկնաբանվում է հատուկ հերմենևտիկական սկզբունքների վրա, ընդհանուր սկզբունքների հիման վրա, որոնք վերաբերում են ցանկացած գրավոր գրականությանը:

Գրական բաժին. Սա վերաբերում է աստվածաշնչյան գրքի գլխավոր մտքի բաժանումներին: Այն կարող է կազմված լինել մի քանի համարներից, պարբերություններից կամ գլուխներից: Այն ինքնաբավ տեքստ է կենտրոնական թեմայով:

Դեդուկտիվ. Տրամաբանելու, դատողականության մեթոդ, որը ընդհանուր սկզբունքներից գնում է դեպի առանձին կիրառվումներ: Սա հակառակ է ինդուկտիվ դատողությանը, որն արտահայտում է գիտական մեթոդը, որը առանձին դեպքերի դիտարկումներից անցում է կատարում դեպի ընդհանուր եզրահանգումներ (տեսություններ):

Դիալեկտիկական. Տրամաբանելու, դատողականության մեթոդ, որտեղ թվացյալ հակասությունները կամ պարադոքսները գտնվում են լարվածության մեջ՝ փնտրելով համաձայնեցված պատասխան, որն իր մեջ ամփոփում է պարադոքսի երկու կողմերն էլ: Աստվածաշնչյան շատ վարդապետություններ ունեն դիալեկտիկական՝ բարբառային գույգեր. նախասահմանություն - ազատ կամք, ապահովություն - հարատևություն, հավատք - գործեր, Աստծուն ընդունելու որոշում - աշակերտ լինել, Քրիստոնեական ազատություն - Քրիստոնեական պատասխանատվություն:

Դինամիկ համագոր. Սա Աստվածաշնչի թարգմանության տեսություն է: Աստվածաշնչի թարգմանությունը կարող է դիտվել որպես շարունակություն «բառ-առ-բառ» համապատասխանության, որտեղ յուրաքանչյուր եբրայերեն կամ հունարեն բառին համապատասխանում է թարգմանված բառը, և որպես «բառափոխում» որին տրվում է իմաստ, որոշ չափով ուշադրություն դարձնելով վերափոխությանը կամ բնագրի բառերին: Այս տեսությունների միջև գոյություն ունի «դինամիկ համագորի» տեսությունը, որը լրջորեն է մոտենում բնագրի տեքստին, սակայն թարգմանության ժամանակ օգտագործվում է ժամանակակից քերականական ձևեր և դարձվածքներ: Տարբեր տեսությունների շուրջ

իրոք լավ քննարկում կարելի է գտնել Գորդոն Ֆիի և Դուգլաս Ստյուարտի «*Ինչպես կարդալ Աստվածաշունչը իր ամբողջական իմաստով*» (Fee and Stuart's *How to Read the Bible For All Its Worth*), էջ՝ 35 և Ուոլթեր Բրեյտչերի «*Ժամանակակից անգլերեն Աստվածաշնչի թարգմանության ներածությունը*» գրքում (Robert Bratcher's *Introduction to the TEV*):

ԵՀՌՎԱ. Հին Կտակարանում սա Աստծո Ուխտի անունն է: Սահմանումը գտնվում է Ելից 3:14-ում: Այն երբայերեն «լինել» բայի ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ձևն է: Հրեաները վախենում էին արտասանել այդ անունը, որ զուր տեղը չլիներ, ուստի այն փոխարինեցին երբայերեն *Adonai*, «Տեր» բառով: Ահա, թե ինչպես է թարգմանվում այս ուխտի անունը շատ լեզուներում:

Երկիմաստություն. Տեքստի անհասկանալի մասեր, որտեղ գրավոր փաստաթղթում կամ ընթերցանության երկու կամ ավելի հնարավորություններ կամ երբ երկու կամ ավելի բաներ են առկա միառժամանակ: Հնարավոր է, որ Հովհաննեսը դիտավորյալ օգտագործել է երկիմաստ արտահայտություններ:

Չուզահեռ հատվածներ. Սրանք մաս ենկազմում այն գաղափարի, որ ամբողջ Աստվածաշունչը ներշնչված է և, ուստի, ինքն է լավագույնս օգնում մեզ իրեն մեկնաբանելու և բալանսի բերելու պարահոգալ ճշմարտությունները: Այն նաև օգտակար է, երբ մեկը փորձում է մեկնաբանել անհասկանալի կամ բազմիմաստ հատվածները: Նրանք նաև օգնում են գտնել տվյալ թեմայի շուրջ ամենահստակ հատվածները, ինչպես նաև բոլոր մյուս սուրբգրային հատվածները նույն թեմայի վերաբերյալ:

Էլզեգետիկա. Էլզեգետիկայի հակադարձը: Եթե Էլզեգետիկան հիմնված է հեղինակների միտումների փնտրտուքի վրա, ապա Էլզեգետիկան ենթադրում է տեքստի մեջ այնպիսի մտքի կամ կարծիքի ներմուծում, որը խորթ է հեղինակին:

Էկզեգետիկա. Հատուկ տերմին է, որը նշանակում է որոշակի հատվածի տեքստի մեկնաբանություն, բառացի՝ այդ հատվածի իրական մտքի պեղում. այսինքն հասկանալի հեղինակի մտադրությունները պատմական իրավիճակի, գրական համատեքստի՝ հատվածի, սինտաքսիսի՝ քերականության և բառերի նշանակությունների լույսի ներքո:

Էկլեկտիկա. Այս տերմինի կիրառությունը պայմանավորված է տեքստի քննադատության հետ: Այն ենթադրում է տեքստերի ընթերցանությունից տարբեր ձեռագրերի ավանդույթների հետ կապված տարբերակների դուրսբերում, որպեսզի ի հայտ գա այն տեքստը, որն ավելի մոտ կգտնվի բնագրին: Այս դեպքում հերքվում է այն կարծիքը, որ հունարեն ձեռագրերի ամեն խումբ ունի մի բնօրինակ:

Էթիմոլոգիա. Բառերի ուսումնասիրման ոլորտ, որտեղ ի հայտ է բերվում բառի սկզբնական նշանակությունը: Մեկնաբանության ժամանակ բառերի էթիմոլոգիան ամենակարևորը չէ, ավելի կարևոր է նրանց նշանակությունը և կիրառությունը որոշակի դարաշրջանի համար:

Թալմուդ. Գրքերի ժողովածուի անվանումն է, որտեղ շարադրված է հրեական բանավոր ավանդույթը: Հրեաները հավատում են, որ այն բանավոր կերպով տրվել է Աստծո կողմից Մովսեսին Սինա լեռան վրա: Իրականում սրանք հրեա վարդապետների իմաստուն ասացվածքներն են, որոնք հավաքվել են տարիների ընթացքում: Գոյություն ունեն Թալմուդի երկու տարբեր գրավոր ավանդույթներ՝ Բաբելոնյանը և ավելի կարճը՝ թերի մնացած Պաղեստինյանը:

Թեմապետություն/Parochialism. Սա վերաբերում է այն հիմքերին, որոնք միացվում են տեղական աստվածաբանական, մշակութային համատեքստին: Սրանք չեն ընդունում աստվածաշնչյան ճշմարտության կամ նրա կիրառության միջմշակութային բնությունը:

Թորա. Երբայերեն տերմին է, որը նշանակում է «ուսուցում, ուսմունք»: Այսպես պաշտոնական կոչվել են Մովսեսի գրքերը (Ծննդոցից մինչև 2 Օրինաց): Հրեաների համար սա երբայական կանոնի ամենահեղինակավոր մասն է հանդիսանում:

Թույլ քննադատություն. Տե՛ս «Տեքստային քննադատություն»:

Ժանր. Փրանսերեն տերմին, որը նշանակում է գրական ատեղծագործության տարբեր տեսակներ: Աստվածաշնչյան գրական ձևերը բաժանվում են մի քանի կատեգորիաների, որոնք ունեն ընդհանուր առանձնահատկություններ՝ պատմական արձակ, պոեզիա, առակներ, ապոկալիպտիկ՝ վախճանաբանական և օրենսդրություն:

Իդիոմա (դարձվածք). Արտահայտություն, որը տվյալ մշակույթին համապատասխան ունի հատուկ նշանակություն, որը կապ չունի առանձին վերցրած բառերի սովորական իմաստի հետ: Ժամանակակից օրինակներ՝ «դա սարսափելի լավն էր» կամ «դու պարզապես սպանում ես ինձ»: Աստվածաշունչը նույնպես պարունակում է այս տեսակի արտահայտություններ:

Իմաստային դաշտ. Սա վերաբերում է իմաստի ամբողջ ոլորտին, կապված կոնկրետ բառի հետ: Հիմնականում սրանք տարբեր համատեքստերի մեջ բառի ունեցած իմաստային երանգներն են:

Իմաստասիրական գրականություն. Գրական ժանր, տարածված հին Մերձավոր Արևելքում (և ժամանակակից աշխարհում): Նպատակն է երիտասարդ սերնդին պոեզիայի, առակի կամ ակնարկի միջոցով սովորեցնել կյանքի իմաստությունը: Այն ավելի ուղղված է առանձին անհատների, քան խմբային համայնքի: Հիմնված չէ պատմական ակնարկների վրա, այլ կյանքի փորձառությունների և դիտարկումների վրա: Աստվածաշնչում Հոբից մինչև Երգ Երգոցը ենթադրվում է ԵՀՈՎԱՅԻ ներկայությունը և Նրան երկրպագությունը, սակայն կրոնական աշխարհայացքը հստակ չի արտահայտվում:

Որպես ժանր, այն արտացոլում է ընդհանուր ճշմարտությունները: Բայց այս ժանրը չի կարող օգտագործվել ցանկացած կոնկրետ իրավիճակում: Դրանք ընդհանուր մտքեր են, որոնք միշտ չէ, որ համապատասխանում են անհատական իրավիճակներին:

Իմաստունները համարձակվել են բարդ հարցեր տալ կյանքի վերաբերյալ: Հաճախ նրանք մարտահրավեր են նետել ավանդական կրոնական հայացքներին (Հոր և Ժողովող): Այդպիսով նրանք հավասարակշռություն և լարվածություն են ստեղծում կյանքի ողբերգությունների հետ կապված հեշտ պատասխանների միջև:

Ինդուկտիվ. Տրամաբանական դատողության մեթոդ է, որը մասնավորից տանում է դեպի ընդհանուր: Այն ժամանակակից գիտության էմպիրիկական փորձով հաստատված մեթոդ է: Հիմնականում սա Արիստոտելի մոտեցումն է:

Լուսավորում. Սա այն հասկացության անունն է, որով Աստված խոսում է մարդկանց: Այս հասկացության լիարժեք նշանակությունը արտահայտվում է երեք տերմինների միջոցով՝ 1. հայտնություն՝ Աստված գործել է և շարունակում է ակտիվորեն գործել մարդկության պատմության մեջ, 2. Ներշնչանք՝ Նա տվել է Իր գործերի և դրանց նշանակության ճշգրիտ մեկնությունը ընտրյալ մարդկանց, որպեսզի արձանագրեն դրանք մարդկության համար, և 3. լուսավորում՝ Նա ուղարկեց Իր Հոգին, որպեսզի օգնի մարդկությանը հասկանալու Աստծո հայտնությունը Իր մասին:

Կանխակարծիք. Որևէ թեմայի շուրջ նախօրոք ձևավորված պատկերացում: Հաճախ մենք ունենք կարծիքներ կամ դատողություններ ինչ որ հարցերի շուրջ մինչև Մուրբ Գրքին անդրադառնալու: Այս կանխակարծիքը հայտնի է նաև որպես հակվածություն, պնդում, իսկ կանխա- նախօրոք ձևավորված կարծիք:

Կանոն. Տերմինը օգտագործվում է այն գրվածքների համար, որոնք անկասկած համարվում են ներշնչված: Այն թե՛ Հին և թե՛ Նոր Կտակարանի գրքերի համար է:

Հակադիր. Երեք բնութագրական տերմիններից մեկն է, որը ցույց է տալիս երրայերեն պոեզիայի տողերի միջև գոյություն ունեցող կապը: Այն վերաբերում է պոեզիայի տողերին, որոնք իմաստային առումով իրար հակադիր են (տես՝ Առակ.10:1; 15:1):

Համաբարբառ. Աստվածաշունչը ուսումնասիրելու միջոց: Աստեղ իրականում տրված են Հին և Նոր Կտակարաններից յուրաքանչյուր բառ: Սա օգնում է մեզ (1) սահմանել երրայերեն կամ հունարեն բառը, որն ընկած է հատուկ բառի թարգմանության ետևում, (2) համեմատել հատվածները, որտեղ օգտագործվում են նույն երրայերեն կամ հունարեն բառը, (3) ի հայտ բերել հատվածներ, երբ երկու տարբեր երրայերեն կամ հունարեն տերմիններ թարգմանվում են նույն բառով, (4) տեսնել տարբեր բառերի կիրառությունը տարբեր գրքերում կամ տարբեր հեղինակների մոտ, (5) Աստվածաշնչում գտնել որոշակի անհրաժեշտ հատված (տես՝ Ուոլթեր Բլարքի «*Ինչպես օգտագործել հունարեն Նոր Կտակարանի օժանդակ ձեռնարկը*» /Walter Clark's *How to Use New Testament Greek Study Aids*/):

Հայտնություն. Սա այն հասկացության անունն է, որով Աստված խոսում է մարդկանց: Այս հասկացության լիարժեք նշանակությունը արտահայտվում է երեք տերմինների միջոցով՝ 1. Հայտնություն՝ Աստված գործել է և շարունակում է ակտիվորեն գործել մարդկության պատմության մեջ, 2. Ներշնչանք՝ Նա տվել է Իր գործերի և դրանց նշանակության ճշգրիտ մեկնությունը ընտրյալ մարդ-

կանց, որպեսզի արձանագրեն դրանք մարդկության համար և 3. Լուսավորում՝ Նա ուղարկեց Իր Հոգին, որպեսզի օգնի մարդկությանը հասկանալու Աստծո հայտնությունը Իր մասին:

Հերմենևտիկա. Սկզբունքներ նշանակող հատուկ տերմին, որն օգտագործում են մեկնաբանության ժամանակ: Սա թե՛ յուրահատուկ ուղեցույցների շարք է և թե՛ արվեստ, պարզև: Աստվածաշնչյան հերմենևտիկան սովորաբար բաժանվում է երկու կատեգորիաների՝ ընդհանուր սկզբունքներ և հատուկ սկզբունքներ: Նրանք կապված են Աստվածաշնչում եղած գրական տարբեր տեսակների հետ: Յուրաքանչյուր տեսակ (ժանր) ունի իր հատուկ սկզբունքը, բայց մեկնաբանության մի քանի ընդհանուր ենթադրությունների և ընթացակարգերի հիման վրա:

Հոմանիշ. Սա վերաբերում է այն բառերին, որոնք իմաստով նույնն են կամ համընկնում են (չնայած իրականում երկու բառերի իմաստաբանական մասը երբեք ամբողջությամբ չեն համընկնում): Նրանք իմաստով այնքան մոտ են իրար, որ կարող են նախադասության մեջ իրար փոխարինել՝ իմաստը չկորցնելով: Այս տերմինը նաև կիրառվում է հին եբրայերեն պոետիկ գուգահեռների երեք տեսակներից մեկի համար: Այս իմաստով, այն նշանակում է երկու պոետիկ տող, որոնք արտահայտում են նույն ճշմարտությունը (տես՝ Սաղմ.103:3):

Ձեռագիր. Այս տերմինը վերաբերում է հունարեն Նոր Կտակարանի տարբեր օրինակներին: Սովորաբար դրանք բաժանվում են տարբեր տեսակների՝ (1) նյութը, ինչ վրա որ գրվել են (պապիրուս, կաշի), կամ (2) գրության ձև (բոլորը մեծատառերով կամ սահուն ձեռագիր): Հակիճ կոչվում է "MS" (եզակի) կամ "MSS" (հոգնակի):

Մագորեթիկ տեքստ. Հին Կտակարանի եբրայերեն ձեռագիր է (9-րդ դար): Դա արվել է հայտնի հրեա գիտնականների կողմից, որը պարունակում է ձայնավոր հնչյուններ և այլ տեքստային նշումներ: Դրանք հիմք են հանդիսանում Հին Կտակարանի թարգմանության համար: Նրա տեքստը պատմականորեն հաստատված է եղել հին եբրայերեն ձեռագրերով, հատկապես Եսայի մարգարեությունը, հայտնի որպես Մեռյալ Ծովի գլանաձև մագաղաթներ: Հապավումն է՝ "MT":

Մարդակերպություն. Ունի «մարդկային էության հետ առնչվող առանձնահատկությունների» իմաստը: Այս տերմինը կիրառվում է նկարագրելու Աստծո մասին արտահայտվող մեր կրոնական լեզուն: Տերմինն առաջացել է հունարեն մի բառից, որը նշանակում է մարդկություն: Սա նշանակում է, որ մենք խոսում ենք Աստծո մասին որպես մարդու: Աստված նկարագրվում է որպես ֆիզիկական, սոցիոգիական և հոգեբանական այնպիսի տերմիններով, որոնք առնչվում են մարդկանց հետ և հասկանալի են մարդու համար (տես՝ Ծննդ.3:8; 3 Թագ.22:19-23): Իհարկե, սա միայն համանմանություն է: Այնուամենայնիվ մարդկային տերմիններից և կատեգորիաներից զատ ուրիշ ոչինչ չէր կարող մեզ համար կիրառելի լինել: Հետևաբար Աստծո մասին ունեցած մեր գիտությունը չնայած ճիշտ է, բայց և սահմանափակ:

Մեկնաբանություն. Աստվածաշունչը ուսումնասիրող հատուկ գիրք: Այն ներկայացնում է աստվածաշնչյան գրքի ընդհանուր համատեքստը: Այս բացատրում է գրքի յուրաքանչյուր բաժնի նշանակությունը: Որոշ մեկնաբանություններ հատուկ ուշադրություն են դարձնում ճշմարտության կիրառությանը, ուրիշներն էլ տեքստը դիտարկում են տարբեր հատուկ հարցերի օգնությամբ: Այս գրքերը օգտակար են, սակայն պետք է կիրառվեն միայն ինքնուրույն ընդհանուր սերտողությունից հետո: Մեկնաբանի մեկնությունները երբեք չպետք է ընդունվեն առանց քննադատության: Սովորաբար օգտակար է համեմատել մի քանի մեկնություններ, որոնց հեղինակները ունեն աստվածաբանական տարբեր տեսանկյուններ:

Մեռյալ Ծովի մագաղաթները. Սա վերաբերում է մի շարք եբրայերեն և արամերեն հին տեքստերի, որոնք գտնվել են Մեռյալ ծովի մոտակայքից 1947թ-ին: Դրանք պատկանում էին առաջին դարի հուդայական աղանդավորների կրոնական գրադարաններին: Հռոմի տիրապետության ճնշումը և 60-ականների կրոնական պատերազմները պատճառ հանդիսացան, որ նրանք մագաղաթները հերմետիկ տեղավորեցին գլանաձև կավե ամանների մեջ և թաքցնեցին քարանձավներում ու հորերում: Այս մագաղաթները օգնել են մեզ հասկանալու առաջին դարի պատմական իրադրությունը Պաղեստինում և հաստատել են Մագորեթիկ ձեռագիրը, որպես շատ ստույգ փաստաթուղթ, համեմատած մեր դարասկզբի հետ: Հապավումն է՝ "DSS":

Մուրատորիան հատվածներ. Սա ՆԿ-ի կանոնի գրքերի ցանկն է: Գրվել է Հռոմում մինչև մ.թ.200: Պարունակում է նույն 27 գրքերը, ինչպես Բաղորդական ՆԿ-ում: Այն պարզ ցույց է տալիս, որ հռոմե-

ական կայսրության տարբեր տեղերում գտնվող տեղական եկեղեցիները „փորձնականում,, կանոն են որոշել մինչև 4-րդ դարի գլխավոր եկեղեցական խորհուրդը:

Նախատիպ. Մեկնաբանության յուրահատուկ ձև է: Մովորաբար պարունակում է ՆԿ-յան ճշմարտություն, որը գտնվում է ՀԿ-յան հատվածներում նույնատիպ խորհրդապատկերով: Հերմենևտիկայի այսպիսի տեսակը Ալեքսանդրիան մեթոդի գլխավոր տարրն է եղել: Եվ քանի որ մեկնաբանության այսպիսի մեթոդը հեշտ է աղավաղել, պետք է սահմանափակել դրա կիրառությունը կոնկրետ օրինակներով՝ արձանագրված ՆԿ-ում:

Նեստորականություն. 5-րդ դարում Նեստորը Կոնստանդնուպոլսի նախահայրերից էր: Նա սովորել է Միրիայի Անտիոքում և պնդել է, որ Հիսուսն ուներ երկու բնություն՝ լիարժեք մարդ և լիարժեք Աստված: Այդ կարծիքը տարբերվում էր Ալեքսանդրիան դպրոցի՝ միայն մեկ բնություն, ուղղափառ կարծիքից: Նեստորի հիմնական մտահոգությունը Մարիամին տրված «Աստվածամայր» տիտղոսն էր: Նեստորի ուսմունքը հակասում էր ալեքսանդրիացի Կիրիլին և ըստ էության, իր իսկ սեփական Անտիոքյան դպրոցի ուսմունքին: Անտիոքը աստվածաշնչյան մեկնաբանության պատմա-քերականական-տեքստային մոտեցման կենտրոնն էր, իսկ Ալեքսանդրիան՝ մեկնաբանության քառապատիկ (+ այլաբանական) դպրոցը: Նեստորը պաշտոնագուրկ է լինում և վտարվում:

Ներշնչանք. Աստված խոսել է մարդու հետ աստվածաշնչյան հեղինակների միջոցով, ովքեր հստակ և ստույգ արձանագրել են Իր հայտնությունը: Մովորաբար ամբողջ գաղափարը արտահայտվում է երեք տերմինով՝ 1. հայտնություն՝ Աստված գործել է և շարունակում է ակտիվորեն գործել մարդկության պատմության մեջ, 2. ներշնչանք՝ Նա սվել է Իր գործերի և դրանց նշանակության ճշգրիտ մեկնությունը ընտրյալ մարդկանց, որպեսզի արձանագրեն դրանք մարդկության համար, 3. Լուսավորում՝ Նա ուղարկեց Իր Հոգին, որպեսզի օգնի մարդկությանը հասկանալու Աստծո հայտնությունն Իր մասին:

Նկարագրող/պատկերավոր/լեզու. Կիրառվում է դարձվածքների հետ, որոնց օգնությամբ գրվել է ՀԿ: Այն խոսում է մեր աշխարհի մասին այնպես, ինչպես ընկալվում է մեր հինգ զգայարաններով: Դա գիտական նկարագրություն չէ և չպետք է լինի:

Ծարահյուսություն /Syntax/. Հունարեն տերմին է, որը վերաբերում է նախադասության կառուցվածքին, թե ինչպես են վերջինիս տարբեր մասերը ավարտուն միտք ստանալու համար միացված իրար:

Ծեղություն/հակվածություն. Ուժեղ հակվածություն որոշակի կարծիքի կամ տեսակետի հանդեպ: Մտածելակերպ, որն անհնարին է դարձնում կոնկրետ թեմայի կամ դիրքորոշման խտրականությունը:

Ոգեշնչում. Տեքստին խորհրդանշական իմաստ տալը: Աստվածաշնչի այլաբանական մեկնության հոմանիշն է, քանի որ այստեղ նույնպես անտեսվում է հատվածի պատմական և գրականական համատեքստը, իսկ մեկնաբանությունը հիմնվում է այլ չափանիշների վրա:

Որդեգրություն. Աստծո և Հիսուսի միջև եղած կապի վերաբերյալ վաղ կարծիքներից մեկն էր: Այն պնդում էր, որ Հիսուսը սովորական մարդ էր բոլոր առումներով և հատուկ որդեգրվել էր Աստծո կողմից Իր մկրտության պահին (տես՝ Մատթ.3:17; Մարկ.1:11) կամ հարության ժամանակ (տես՝ Հռոմ.1:4): Հիսուսն այնպիսի օրինակելի կյանքով ապրեց, որ Աստված ինչ-որ պահի (մկրտություն, հարություն) որոշեց որդեգրել Նրան որպես Իր «որդի» (տես՝ Հռոմ.1:4; Փիլ.2:9): Սա վաղ եկեղեցու և 8-րդ դարի մարդկանց փոքրաքանակ զանգվածի տեսակետն էր: Ոչ թե Աստված մարդ դարձավ (մարմնացում) այլ ընդհակառակը՝ մարդը դարձավ Աստված:

Դժվար է ասել, որ Հիսուսը՝ Որդի Աստվածը, Հավիտենական Աստվածը, վարձատրվեց կամ փառավորվեց Իր օրինակելի կյանքի համար: Եթե Նա արդեն Աստված էր, ինչպես կարող էր Նա վարձատրվել: Եթե Նա ուներ հավիտենական աստվածային փառք, ինչպես կարող էր ավելի մեծ պատվի արժանանալ: Չնայած դժվար է մեզ համար սա հասկանալը, Հայրը ինչ-որ կերպով պատվեց Հիսուսին այն ժամանակ, երբ Հիսուսը կատարելապես կատարեց Հոր կամքը:

Պապիրոս. Նյութի մի տեսակ, որի վրա գրում են. կիրառվել է Եգիպտոսում: Այն պատրաստում էին գետի եղեգից: Այդ նյութի վրա գրվել են հունարեն ՆԿ-ի հնագույն օրինակները:

Պարադոքս. Վերաբերում է այն ճշմարտություններին, որոնք թվում է, թե իրար հակասող են, սակայն երկուսն էլ ճշմարտություն են, չնայած նրանց միջև կա ներքին լարվածություն: Պարադոքսը փոխանցում է ճշմարտությունը՝ ներկայացնելով դրա երկու կողմերն էլ: Ծատ աստվածաշնչյան ճշմարտու-

թյուններ ներկայացված են պարադոքսալ (կամ բարբառային) զույգերով: Աստվածաշնչյան ճշմարտությունները առանձին աստղեր չեն, այլ համաստեղություններ, որոնք ձևավորել են առանձին պատկեր:

Պարբերություն. Սա արձակի հիմնական մեկնաբանության գրական բաժինն է: Ունի մի կենտրոնական միտք և դրա զարգացումը: Եթե մնանք այդ կենտրոնական մտքին հենված, ապա չենք փոքրացնի, մեծացնի կամ բաց թողնի բնագրի հեղինակի մտադրությունը՝ նպատակը:

Պատոհմ. Հին Հունաստանի փիլիսոփաներից մեկն է: Նրա փիլիսոփայությունը մեծ ազդեցություն է թողել վաղ եկեղեցու վրա Ալեքսանդրիայի և Եգիպտոսի գիտնականների միջոցով, իսկ ավելի ուշ Օգոստինոսի միջոցով: Պատոհմը պնդում էր, որ երկրի վրա ամեն ինչ երևակայական է և հանդիսանում է հոգևոր աշխարհի բնօրինակը: Աստվածաբանները հետագայում Պատոհմի «գաղափարները՝ ոճը» հավասարեցնում էին հոգևոր արքայությանը:

Ռաբբիական Հուդայականություն. Շրջան, որը սկսվել է բաբելոնյան գերության ընթացքում (Ք. Ա. 586-538): Երբ քահանաների և Տաճարի ազդեցությունը դադարեց, հրեաների կյանքը սկսեց ձևավորվել տեղական ժողովարանների շուրջ: Հրեական մշակույթի, հաղորդակցության, երկրպագության և աստվածաշնչյան ուսմունքների այս կենտրոնները դարձան ազգային կրոնական կյանքի կենտրոնը: Հիսուսի օրոք «դպիրների այս կրոնը» հավասարազոր էր քահանաների կրոնին: Մ. թ. 70-ի Երուսաղեմի անկումից հետո, դպիրների կրոնը, որտեղ գերիշխում էին փարիսեցիները, սկսեց վերահսկել Հրեաների կրոնական կյանքը: Բնորոշվում է Թորայի գործնական, օրինապաշտական մեկնաբանությամբ, ինչպես որ բացատրում է բանավոր ավանդույթը (Թալմուդը):

A priori Սա հիմնականում «կանխակարծիք» տերմինի հոմանիշն է: Այն ենթադրում է նախապես ընդունված սահմանումների, սկզբունքների կամ դիրքերի հիման վրա քննարկում, որոնք ընդունվում են որպես ճշմարտություն: Սա այն է, ինչն ընդունվում է առանց քննելու և վերլուծության:

Սեպտուագինտա. Այսպես է կոչվում եբրայերեն ՀԿ-ի հունարեն թարգմանությունը: Ավանդույթն ասում է, որ այն գրվել է 70 օրում, 70 հրեա գիտնականների կողմից Եգիպտոսի Ալեքսանդրիական գրադարանի համար: Գրվելու ընդունված տարեթիվը Ք. Ա. 250 (իրականում թարգմանության համար, ավելի շուտ, պահանջվել է ավելի քան հարյուր տարի): Այս թարգմանությունը ունի մեծ նշանակություն, քանի որ (1) մեզ է տալիս հին տեքստը, որը կարող ենք համեմատել Մագորեթիկ եբրայերեն տեքստի հետ, (2) մեզ ցույց է տալիս հրեական մեկնաբանության վիճակը Ք. Ա. 3-րդ և 2-րդ դարերում, (3) մեզ է տալիս հրեական մեսիական հասկացողություն՝ նախքան Հիսուսին կներժեհին: Հապավումն է «LXX»:

Սինայական հին ձեռագրերի ժողովածու /Codex Sinaiticus/. Մ.թ. 4-րդ դարի հունարեն ձեռագիր է: Այն գտնվել է գերմանացի գիտնական Թիստենդորֆի կողմից Ջերեկ Մուսա լեռան վրա գտնվող Մուրբ Եկատերինայի վանքից, որն ըստ ավանդության համընկում է Սինա լեռան հետ: Այս ձեռագիրը հայտնի է եբրայերեն այբուբենի առաջին *aleph* տառով: Նրա մեջ ընդգրկված են թե՛ Հին Կտակարանը և թե՛ ամբողջ Նոր Կտակարանը: Մեր ունեցած ամենահին ունցիալ՝ մեծատառերով գրված ձեռագիրն է:

Սինթետիկ. Եբրայերեն պոեզիայի տեսակներին պատկանող երեք տերմիններից մեկն է: Այս տերմինը վերաբերում է պոեզիայի տողերին, որոնք ընդհանուր առմամբ կառուցվում են մեկը մյուսի վրա. երբեմն այսպիսի պոեզիան անվանում են «կուլմինացիոն» (տես՝ Մադմ. 19:7-9):

Սիստեմատիկ աստվածաբանություն. Սա մեկնաբանության մի փուլ է, որը փորձում է աստվածաշնչյան ճշմարտությունները իրար հետ համակցել ավելի միահյուսված և ռացիոնալ կերպով: Ունի ավելի տրամաբանական, քան թե պատմական բնույթ, և ներկայացնում է Քրիստոնեական աստվածաբանությունը ըստ դասակարգման (Աստված, մարդ, մեղք, փրկություն և այլն):

Սուրբ Գրքի համանմանություն. Սա նշանակում է, որ ամբողջ Աստվածաշունչը ներշնչված է, հետևաբար, նրա տարբեր տեքստերը չեն հակասում միմյանց, այլ լրացնում են: Այս նախապայամանը հիմք է աստվածաշնչյան տեքստը մեկնաբանելու համար օգտագործելու զուգահեռ հաստատումներ:

Սփյուռք. Հատուկ հունարեն տերմին է, որն օգտագործում էին Պաղեստինի հրեաները այն հրեաների համար, ովքեր ապրում էին Խոստացյալ Երկրի աշխարհագրական սահմաններից դուրս:

Վատիկանյան հին ձեռագրերի ժողովածու (Codex Vaticanus). Մ.թ. 4-րդ դարի հունարեն ձեռագիր է: Գտել են Հռոմի Վատիկանի գրադարանում: Սկզբում պարունակել է ամբողջ ՀՎ-ը, անկանոն գրքերը և ՆԿ-ը: Սակայն որոշ մասեր անհետացել են (Ծննդոց, Մաղմուսներ, Եբրայեցիներին ուղղված թուղթը, Հովվական թղթերը, Փիլիմոն և Հայտնություն): Ծատ օգտակար ձեռագիր է հեղինակային բնագրերը ճանաչելու համար: Այն նշվում է «B»:

Վերափոխում. Սա Աստվածաշնչի թարգմանության տեսություն է: Աստվածաշնչի թարգմանությունը կարող է դիտվել որպես շարունակություն, որտեղ յուրաքանչյուր երբայերեն կամ հունարեն բառին համապատասխանում է թարգմանված բառը, և որպես «բառափոխում», որին տրվում է իմաստ, քիչ ուշադրություն դարձնելով վերափոխմանը կամ բնօրինակի բառերին: Այս տեսությունների միջև գոյություն ունի «դիմամիկ համագործի» տեսությունը, որը լրջորեն է մոտենում բնօրինակի տեքստին, սակայն թարգմանության ժամանակ օգտագործվում է ժամանակակից քերականական ոճեր և դարձվածքներ: Թարգմանության տարբեր տեսությունների վերաբերյալ հետաքրքիր քննարկում կարող եք գտնել Գորդոն Ֆիի և Դուգլաս Ստյուարտի «*Բնչպես կարդալ Աստվածաշունչը իր ամբողջական իմաստով*» գրքում (Fee and Stuart's *How to Read the Bible For All Its Worth*), էջ՝ 35:

Վերլուծական բառարան. Սա ուսումնասիրություն անելու միջոց է, որը թույլ է տալիս որոշել ՆԿ-ում առկա բոլոր հունարեն ձևերը: Այն հանդիսանում է հիմնական սահմանումների ժողովածու՝ հունարեն այբբենական կարգով: Բառացի թարգմանության հետ միասին օգնում է հունարեն չիմացող հավատացյալին վերլուծելու ՆԿ-ի հունարեն քերականական և շարահյուսական ձևերը:

Վուլգատա. Ջերոմի կողմից թարգմանված Աստվածաշնչի լատիներեն թարգմանությունն է: Հռոմի Կաթոլիկ եկեղեցու հիմնական թարգմանությունն է և կատարվել է մ.թ. 380-ականներին:

Տեքստային քննադատություն. Աստվածաշնչի ձեռագրերի ուսումնասիրություն: Տեքստային քննադատությունը անհրաժեշտ է, որովհետև բնագրերը մեզ չեն հասել, իսկ արտագրությունները տարբերվում են միմյանցից: Մենք փորձում ենք բացատրել տարբերակներն ու հնարավորինս մոտենալ Հին և Նոր Կտակարանների հեղինակների բնագրերին: Այն հաճախ կոչվում է «թույլ քննադատություն»:

Textus Receptus. Անվանումը վերցված է Էլզևիրի հունարեն ՆԿ-ի խմբագրված տարբերակից, մ.թ. 1633: Հիմնականում հունարեն ՆԿ-ի այս տարբերակը հիմնված է հունարենի մի քանի ավելի ուշ ձեռագրերի վրա և Երասմոսի (1510-1535), Ստեփանոսի (1546-1559) և Էլզևիրի (1624-1678) լատիներեն թարգմանությունների վրա: Ա. Թ. Ռոբերթսոնը («Նոր Կտակարանի տեքստային քննադատության ներածությունը» գրքում) ասում է, որ «բյուզանդական տեքստը իրականում Textus Receptus-ն է»: Բյուզանդական տեքստը հնագույն առաջին հունարեն ձեռագրերի երեք ընտանիքների միջից ամենաքիչ արժեքավորն է (արևմտյան, պեքսանդրիան և բյուզանդական): Այն պարունակում է սխալներ, որոնք հարյուրամյակներ շարունակ արել են արտագրողները: Համենայնդեպս, Ա. Թ. Ռոբերթսոնը նաև ասում է, որ «Textus Receptus տեքստը մեզ է հասել հիմնականում ճշգրիտ տեքստով» (էջ՝ 21): Այս հունարեն ձեռագիր ավանդական տարբերակը (հատկապես Երասմոսի 1522 թ-ի երրորդ խմբագրությունը) հիմք է հանդիսանում King James անգլերեն թարգմանության համար, 1611 թ.:

Փոխանություն (Metonymy). Սա պատկերավոր լեզու է, երբ ինչ-որ մի բանի անունը օգտագործվում է մեկ այլ բան ներկայացնելու համար: Օր.՝ «թեյնիկը եռում է» այնինչ թեյնիկի միջի ջուրն է եռում և ոչ թե թեյնիկն ինքը:

Քրիստոսակենտրոն. Այս տերմինը ընդգծում է Քրիստոսի կենտրոնական դերը: Ես այն կիրառում եմ կապված այն գաղափարի հետ, որ Հիսուսը Տերն է ամբողջ Աստվածաշնչի: ՀՎ-ը մատնանշում է Նրան. Նա է կատարողն ու նպատակը ՀՎ-ի (տես՝ Մատթ.5:17-48):

Օրինականություն. Այս մոտեցմանը բնորոշ է կանոններին կամ ձեռնարկին հետևելու խիստ շեշտադրումը: Այն հակված է ապավինելու մարդու կողմից որոշակի կանոններ և օրենքներ պահելուն, որպես Աստծո կողմից ընդունված լինելու միջոց: Օրինականությունը հակված է թերագնահատելու փոխաբերությունները և մեծարելու գործերը, երբ երկուսն էլ իհարկե կարևոր են սուրբ Աստծո և մեղավոր մարդու միջև եղած ուխտի փոխհարաբերության մեջ:

ՀԱՎԵԼՎԱԾ ՉՈՐՍ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ՄԿՉԲՈՒՆՔՆԵՐ

Ինձ այնքան էլ չեն մտահոգում հավատքի հանգանակները կամ դավանությունները: Ես նախընտրում եմ հռչակել հենց Աստվածաշունչը: Սակայն գիտակցում եմ, որ հստակ ձևավորված հավատքի դավանությունները այն մարդկանց, ովքեր չեն ճանաչում ինձ, թույլ կտան գնահատելու իմ վարդապետական հայացքները: Մեր օրերում աստվածաբանական այնքան շատ սխալներ ու շփոթություններ կան, որ կարևոր եմ համարում առաջարկել իմ աստվածաբանության հետևյալ համառոտ վերլուծությունը:

1. Աստվածաշունչը՝ թե՛ Հին և թե՛ Նոր Կտակարանը, ներշնչված, անսխալական, հեղինակային, հավիտենական Աստծո Խոսքն է: Այն Աստծո ինքնահայտնությունն է, արձանագրված մարդկանց կողմից՝ Իր գերբնական առաջնորդությամբ: Այն մեր միակ Աստծո և Նրա նպատակների հստակ ճշմարտության աղբյուրն է: Այն նաև մեր հավատքի միակ աղբյուրն է և Իր եկեղեցու ուղեցույցը:
2. Կա միայն մեկ Հավիտենական Աստված, Արարիչ և Փրկիչ: Նա է Արարիչն ամեն ինչի՝ տեսանելի և անտեսանելի: Նա Իրեն հայտնել է որպես սիրող և գթառատ Աստված, չնայած որ Նա նաև արդար է և սուրբ: Նա Իրեն հայտնել է Երեք տարբեր Անձերով՝ Հայրը, Որդին և Սուրբ Հոգին: Նրանք տարբեր անձիք են, սակայն միևնույն էության մեջ:
3. Աստված ակտիվորեն վերահսկում է այս աշխարհը: Նա Իր արարչագործության համար հավիտենական ծրագիր ունի, որն անփոփոխ է և այնպես է գործում յուրաքանչյուր անհատի համար, որ թույլ է տալիս մարդուն ունենալու ազատ կամք: Ոչինչ առանց Աստծո գիտության և թույլտվության տեղի չի ունենում, սակայն Նա թույլ է տալիս թե՛ հրեշտակներին և թե՛ մարդկանց կատարել իրենց սեփական ընտրությունը: Հիսուսը Հայր Աստծո Ընտրյալ Մարդն է, և մենք բոլորս էլ պտտենցիալ ընտրյալներ ենք: Դեպքերի վերաբերյալ Աստծո կանխագիտությունը չի նշանակում, որ մարդիկ պետք է ամեն բան անեն այնպես, ինչպես կանխատեսված է եղել: Մենք բոլորս պատասխանատու ենք մեր մտքերի և գործերի համար:
4. Մարդկությունը չնայած ստեղծվեց Աստծո պատկերով և առանց մեղքի, գերադասեց ըմբոստանալ Աստծո դեմ: Չնայած Ադամին ու Եվային փորձեց մի գերբնական արարած, միևնույն է նրանք պատասխանատու էին իրենց հոժարական անձնակենտրոն վարքի համար: Նրանց ըմբոստությունը ազդեց մարդկության և ամբողջ արարչագործության վրա: Մենք բոլորս Աստծո ողորմության և շնորհքի կարիքն ունենեք, թե՛ Ադամի վիճակի մեջ մեր բաժինն ունենալու և թե՛ հոժարական ըմբոստանալու համար:
5. Աստված հոգացել է մեղավոր մարդկության ներման և վերահաստատման միջոցը: Հիսուս Թրիստոսը՝ Աստծո Միածին Որդին, մարդացավ, ապրեց անմեղ կյանքով և Իր փոխանորդական մահով վճարեց բոլոր մարդկանց մեղքերի համար: Նա է Աստծո հետ հաղորդակցության վերականգնման միակ ճանապարհը: Նրա կատարած գործին հավատալուց զատ ուրիշ փրկության միջոց չկա:
6. Մեզինք յուրաքանչյուրն անձամբ պետք է ընդունի Աստծո կողմից առաջարկվող ներումը և Հիսուս Թրիստոսի մեջ ունեցած վերստին ծնունդը: Սա տեղի է ունենում Հիսուսի միջոցով Աստծո խոստումներին հոժարական վստահելու և մեղքից հրաժարվելու միջոցով:
7. Մենք լիարժեք ներում ենք ստանում և վերահաստատվում Թրիստոսի վրա ունեցած մեր վստահության մեջ և մեղքից ապաշխարության մեջ: Սակայն այս նոր փոխհարաբերության կյանքի ապացույցը մեր վերափոխված և վերափոխող կյանքն է: Աստծո համար մարդկության նպատակը միայն երկինքը հասնելը չէ, այլ հիմա Թրիստոսի պես լինելը: Նրանք, ովքեր իրոք փրկված են, թեև երբեմն մեղանչեն, կշարունակեն հավատքի և ապաշխարության մեջ ապրել իրենց ամբողջ կյանքի ընթացքում:
8. Սուրբ Հոգին «երկրորդ Հիսուսն» է: Նա ներկա է այս աշխարհում, կորած մարդկանց Թրիստոսին առաջնորդելու և փրկվածների մեջ Թրիստոսի կերպարը ձևավորելու համար: Հոգու պարզևները տրվում են փրկության ժամանակ: Պարզևները Թրիստոսի կյանքի և ծառայության իմաստն են, որոնք բաժանված են Իր ամբողջ մարմնով մեկ՝ եկեղեցում: Պարզևները, որոնք հիմնականում Հիսուսի վարքն ու շարժառիթներն են, պետք է գործադրվեն Սուրբ Հոգու պտուղներով: Հոգին գործում է մեր օրերում ճիշտ այնպես, ինչպես գործում էր աստվածաշնչյան ժամանակներում:
9. Հայրը հարուցյալ Հիսուս Թրիստոսին դրել է ամեն բանի Դատավոր: Նա վերադառնալու է երկիր դատելու ամբողջ մարդկությանը: Հիսուսին հավատացողները, որոնց անունները գրված են Գառան Կյանքի Գրքում, Նրա վերադարձի ժամանակ կատանան իրենց հավիտենական փառավորյալ մարմինները: Նրանք հավիտյան Նրա հետ կլինեն: Սակայն նրանք, որ մերժել են արձագանքել Աստծո ճշմարտությանը, հավիտյան բաժանված կլինեն Երրորդություն Աստծո հետ ջերմ հաղորդակցության բերկրանքից: Նրանք կդատապարտվեն Սատանայի և նրա հրեշտակների հետ միասին: Անշուշտ սա ամբողջը չէ, սակայն հուսով եմ, որ այն ձեզ կտա իմ սրտի աստվածաբանական համն ու հոտը: Ես սիրում եմ այս արտահայտությունը:

«Կարևոր բաներում՝ միաբանություն, երկրորդականում՝ ազատություն, իսկ ամեն ինչում՝ սեր»: